

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2 (28)
2 0 2 5

Գյումրի 2025

«Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուն հիմնադրվել է 1998թ.
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտխորհրդի որոշմամբ:
Ընդգրկված է ՀՀ ԿԳՄՄՆ ԲՈԿ-ի կողմից ընդունված պարբերականների ցանկում:

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316-2025.28.2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ՄԵՐԳՈ՝ (գլխավոր խմբագիր) բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԱԿՈՂՈՎ ԱՐԿԱՐԻ՝ (գլխ. խմբագրի տեղակալ), պատմ. գիտ..թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ԲԱԶԵՑԱՆ ԿԱՌԻՆԵ՝ (պատ. քարտուղար) պատմ.գիտ. թեկն., ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ

ԱՈՒԶԵԼԼԻ ՖՐԱՆՉԵՍԿՈ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, Միլան, ԻՏ, Հունան, ՉԺՀ
ԲԱՂԱՅԱՆ ՍԵՐԳԵՅ՝ բան. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԲԱԼՅԱՆ ԿԱՐԵՆ՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր, IAAM թղթակից անդամ Մոսկվա, ՌԴ
ԳՐԻԳՈՐՅԱՆ /Հայկազուն/ ԱՇՈՏ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՃԱԹԻ, Երևան, ՀՀ
ԴԵՎԵՆԴԵՐ ԿՈՒՄԱՐ՝ բան. գիտ. դոկտոր PhD, ԲՀՀ, Կուրուկչետրա, Հնդկաստան
ԽԱՉՏԱՉՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ՝ բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՎՊՀ, Վանաձոր, ՀՀ
ԽԵՍՉՅԱՆ ԷՍԹԵՐ՝ բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՀԱԻ, Երևան, ՀՀ
ԽՈՍՐՈՆԵԿԱ ԱՆԱՀԻՏ՝ պատմ. գիտ. թեկնածու, Լորթ Փարք համալսարան, Չիկագո, ԱՄՆ
ԿԱՆՈՐ ՌՈՒՍԼԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՄՊՀ, Մայկոպ, ՌԴ
ԿԱՎԵԼԻՇՎԻԼԻ ՌՈՒՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ՍԶՊՀ, Ախալցխա, Վրաստան
ԿՐՑՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀԿԴՀ, Ստավրոպոլ, ՌԴ
ՀԱՅՐԱՊԵՏՑԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵՊԿ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՀՈՒՍԿԱ ՖԱԹԻՄԵՏ՝ բան. գիտ., թեկնածու, ՄՊՏՀ, Վորոնեժ, ՌԴ
ՂԱԶԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ՝ աստվածաբանության դոկտոր, ԱՊՀ, Աթենք, Հունաստան
ՄԱՀԵ ԺԱՆ - ՊԻԵՐ՝ հայագետ, ԱԳԱ անդամ, Փարիզ, Ֆրանսիա
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԱՔՍ՝ արվ. թեկնածու, դոցենտ ԵԳԱ ԳՄ, Գյումրի, ՀՀ
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՊԻ, Երևան, ՀՀ
ՄԿՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ՇՊՀ, Գյումրի, ՀՀ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ՝ պատմ. գիտ. դոկտոր, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՌՈՒՆԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ՝ արվ. դոկտոր, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՍԱՂԱՎՍԿԻ ՄԻՒՍԱՆ՝ պատմ. գիտ. դոկտոր PhD, ՎՀ, Վարշավա, Լեհաստան
ՍԱՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ՝ հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՇՀՀԿ, Գյումրի, ՀՀ
ՑԱԿԱՆՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ԱԻ, Երևան, ՀՀ
ՕՐՈՒՆԻՄԱՆՅԱՆ ԷՄԻԼ՝ քաղ. գիտ. թեկնածու, ԳԱԱ ՓՄԻԻ, Երևան, ՀՀ

ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ». N 2 (28) / Հայագիտություն և հասա-
րակական գիտություններ // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի հոդվածների ժողովածու: Խմբ. խորհուրդ՝
Ս. Հայրապետյան և այլք.- Գյումրի, «Ռ.Ավետիսյան» ԱԶ, 2025,-300 էջ:

*Խմբագրության հասցեն՝ 3101, ՀՀ, Գյումրի, Վ.Սարգսյան 5ա:
էլ. հասցեն՝ scient.works@shirakcenter.sci.am
կայքէջը՝ www.shirakcenter.sci.am
հեռախոսը՝ +374/94/ 411 228*

ISSN 1829-4316
eISSN 2953-8076
DOI: 10.52971/18294316

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2025

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

2 (28)

EDITION

SCIENTIFIC WORKS

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Гюмри 2025 Gyumri

Периодический сборник статей «Научные труды» учрежден Ученым советом ШЦАИ НАН РА в 1998.
Входит в перечень периодических изданий, утвержденных ВАК-ом МОНКС РА.

The periodical collection of “Scientific Works” established in 1998 by the decision of the scientific board of Shirak’s Center of Armenological Studies of NAS, is indexed in the list of SCC MESCS RA.

ISSN 1829-4316

eISSN 2953-8076

DOI: 10.52971/18294316-2025.28.2

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АЙРАПЕТЯН СЕРГО - главный редактор, РА
АКОПОВ АРКАДИЙ- зам. гл. редактора, РА
БАЗЕЯН КАРИНЕ- отв. секретарь, РА

АУДЖЕЛЛИ ФРАНЧЕСКО - Италия, Китай,
АЙРАПЕТЯН АРМЕН, РА
АРУТЮНЯН АСМИК, РА
БАДАЛЯН СЕРГЕЙ, РА
БАЛЪЯН КАРЕН, РФ
ВАРДАНЯН БЕНИК, РА
ГРИГОРЯН (АЙКАЗУН) АШОТ, РА
ДЕВЕНДЕР КУМАР, Индия
ЖАН-ПИЕР МАЭ, Франция
КАВРЕЛИШВИЛИ РОИН, Грузия
КАЗАРЯН ГЕВОРГ, Греция
КАНДОР РУСЛАН, РФ
КРЮЧКОВ ИГОРЬ, РФ
МАРГАРЯН АРАКС, РА
МАРУКЯН АРМЕН, РА
МКОЯН АРТАШЕС, РА
ОГАНИСЯН АРТАК, РА
ОРДУХАНИЯН ЭМИЛЬ, РА
ПЕТРОСЯН САРГИС, РА
РУХКЯН МАРГАРИТ, РА
СААКЯН КАРИНЕ, РА
САДЛОВСКИЙ МИХАЛ, Польша
ХАЧАТРИАН ГУРГЕН, РА
ХЕМЧЯН ЭСТЕР, РА
ХОСРОЕВА АНАИТ, США
ХУАКО ФАТИМЕТ, РФ
ЦАКАНИЯН РУСЛАН, РА

EDITORIAL BOARD

HAYRAPETYAN SERGO editor-in-chief, RA
AKOPOV ARKADI vice editor, RA
BAZEYAN KARINE secretary, RA

AUGELLI FRANCESCO - Italy, China
HAYRAPETYAN ARMEN, RA
HARUTYUNYAN HASMIK, RA
BADALYAN SERGEY, RA
BALYAN KAREN, RF
VARDANYAN BENIK, RA
GRIGORYAN (HAYKAZUN) ASHOT, RA
DEVENDER KUMAR, India
JAN-PIER MAHE, France
KAVREISHVILI ROIN, Georgia
GHAZARYAN GEVORG, Greece
KANDOR RUSLAN, RF
KRYUCHKOV IGOR, RF
MARGARYAN ARAKS, RA
MARUQYAN ARMEN, RA
MKOYAN ARTASHES, RA
HOVHANNISYAN ARTAK, RA
ORDUKHANYAN EMIL, RA
PETROSYAN SARGIS, RA
RUKHKYAN MARGARIT, RA
SAHAKYAN KARINE, RA
SADLOVSKI MIKHAL, Poland
KHACHATRYAN GURGEN, RA
KHACHATRYAN LALIK, RA
KHEMCHYAN ESTER, RA
KHOSROEVA ANAHIT, USA
HUAKO FATHIMET, RF
TSAKANYAN RUSLAN, RA

“Научные труды” ШЦАИ НАН РА № 2 (28). Арменоведческие и общественные науки / НАН РА:
Сборник статей: Редакционный совет: С.Айрапетян и др.: -Гюмри,” ЧП Р.Аветисян”, 2025, 300 с.

“Scientific Works” № 2 (28) of SCAS of NAS RA: Ed. Board: S.Hayrapetyan & others: Gyumri, "IE RA". 2025, 300p.

Адрес: 3101, РА, Гюмри, ул. В.Саргсяна 5а

Address: 3101, 5 a V. Sargsyan Street, Gyumri, RA

E-mail: scient.works@shirakcenter.sci.am

hppt: www.shirakcenter.sci.am

мел./tel.: +374/94/411-228

ISSN 1829-4316

eISSN 2953-8076

DOI: 10.52971/18294316

@ Ширакский центр арменоведческих исследований НАН РА. 2025

@ Shirak Center for Armenological Studies of NAS RA. 2025

ՏԱՅՈՑ ԿԵՆԱՅ ԾԱՌԻ, ԹԻՆԱ ԴԻՑՈՒՀՈՒ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆ ԽԱԻ ԱՐՄԱՏԻ ՄԱՍԻՆ

Մարգիս Գ. Պետրոսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Ասորեստանի Թիզլաթփալասար I թագավորը (մ.թ.ա. 1115-1077) երկու արշավանք էր ձեռնարկել Ասորեստանից հյուսիս գտնվող երկրների դեմ: Արշավանքի թիրախները Նաիրի երկրներն էին և նրանց սևծովյան դաշնակիցները: Նաիրիում Թիզլաթփալասար I-ի բանակը հաղթահարել էր 16 «հզոր լեռներ» և նվաճել նաիրյան 23 երկրներ: Լեռների թվարկման մեջ Շեշեն զբաղեցնում է վերջին տեղը, իսկ նաիրյան երկրների մեջ վերջին տեղում Դայաենի երկիրն է: Այդ իսկ պատճառով ուրարտագետները արդարացիորեն գտնում են, որ Շեշեն լեռը և Դայաենի երկիրը «միևնույն պատմա-աշխարհագրական միավորի բաղկացուցիչ մասերն էին»: Ուրարտուի Մենուա թագավորը (մ.թ.ա. 810-786թթ.) Դիաուխի/Դայաենիի դեմ ձեռնարկված արշավանքի առնչությամբ հիշատակում է Շեշեթինա լեռը: Ն. Հարությունյանի կարծիքով, Շեշեթինան պետք է հասկանալ որպես «Šeše և tina» (resp. tini ?), այսինքն՝ Շեշե անվանումով կամ անունով լեռ: Բայց բանն այն է, որ Շեշեթինա լեռնանունը գրված է վերջնաձայն *-a*-ով, ոչ թե *-i*-ով (ինչպես գրված է ուրարտական արձանագրության բառը): Նշանակում է *-tina*-ն և *-tini*-ն տարբեր բառեր են: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը գրված է պատմա-համեմատական մեթոդի գործածումով, լեզվաբանական նյութի ստուգաբանական և իմաստաբանական վերլուծությամբ: Վերլուծություն. Հոդվածում վերլուծության են ենթարկվում նաև այլ հետազոտողների կարծիքները՝ բերված և քննարկված հայերեն բառերի, ինչպես նաև տարբեր բառարաններից քաղված ազգակից լեզուների բառերի վերաբերյալ: Արդյունքներ. Եզրահանգման մեջ բերված են հետազոտության ամփոփ արդյունքները: Դրանցում առկա է ինչպես նրա նորոյթը, այնպես էլ արդիականությունը:

Բանալի բառեր՝ Նաիրի, Գիզամեշ, լեռներ, Թիզլաթփալասար I, Շեշե, Շեշեթինա, Դայաենի, Մենուա, դիցուհի, խաղող:

Ինչպես հղել՝ Պետրոսյան Ս. Տայոց Կենաց ծառի, Թինա դիցուհու և հայերեն խառնաժամանակի մասին // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»։ Գյումրի։ 2025։ Հ. 2(28)։ 5-16 էջեր։ DOI: 10.52971/18294316-2025.28.2-5

TO “THE TREE OF LIFE” OF THE TAYK, TO THE GODDESS TINA AND TO THE ARMENIAN ROOT *KHAV*

Sargis G. Petrosyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: The king of Assyria Tiglath-Pileser I (1115-1077 BC) undertook two campaigns against the countries north of Assyria. The objects of the campaigns were the Nairi countries and their Black Sea allies. In Nairi the army of Tiglath-Pileser I overcame 16 “strong mountains” and conquered 23 Nairi countries. In the enumeration of mountains Sheshe occupies the last place, and among the Nairi countries the last place is occupied the country Dayaeni. Therefore, Urartologists rightly believe that Mount Sheshe and Dayaeni were “components of one and the same historical and geographical unit”. The King of Urartu Menua (810-786 BC) in connection with the campaign against Diaukhi/Dayaeni mentions the mountain Sheshetina. According to N. Harutyunyan, Sheshetina should be “interpreted as Šeše and tina (resp. tini ?), i.e. a mountain with the name Sheshe”. But the point is that the oronym Sheshe-*tina* is written with the ending -a, not -i- (as written the corresponding Urartian word). So, -*tina*- and -*tini* are different words. **Methods and materials:** The article is composed employing historical-comparative method, etymological and semasiological analysis of the linguistic material. **Analysis:** The article analysed the opinions of other researchers regarding the Armenian words quoted and discussed, as well as words of related Indo-European languages extracted from different dictionaries. **Results:** The conclusion summarizes the concise results, the novelty and the topicality of the research.

Key words: *Nairi, Gilgamesh, mountains, Tiglath-Pileser I, Sheshe, Sheshetina, Dayaeni, Menua, goddess, grapes.*

Citation: Petrosyan S. “To the Tree of Life” of the Tayk, to the Goddess Tina and to the Armenian Root *Khav* // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2025. Vol. 2 (28), 5-16 pp..

DOI:10.52971/18294316-2025.28.2-5

Ն Ա Խ Ա Ր Ա Ն. Հայտնի է, որ գետերի ակունքները պաշտամունքի առարկա էին, իսկ ճորոխներ՝ որպես Դրախտի չորս գետերից մեկինը, առավել էին պաշտվելու։ Ճորոխի ակունքների լեռներից էր լինելու Շեշեթինան։ Հայկական լեռնաշխարհի բնակիչները Tina-ն գործածել են որպես ինչ-որ աստծու դիցանուն կամ դիցանվան մակդիր։ Դրա մասին է խոսում ուրարտական սեպագրությամբ հայտնի Šešetina /Šeše-tina լեռան անունը։ Դայաենի/Տայքի Շեշեթինա լեռը հազարամյակներ շարունակ բուն հայերեն անուններ է կրել՝ *Չորմայրի* և *Խորտիկ*։ *Չորմայրի* անունը հստակ ստուգաբանություն ունի՝ բաղկացած չոր «չորացած» և մայրի «մայրի ծառը» բաղադրիչներից։ Իսկ ինչո՞ւ «չորացած», որովհետև մայրի ծառը սուրբ, պաշտվող ծառերից լինելով, սուրբ էր համարվում անգամ չորանալուց հետո։ Իսկ *Խորտիկ* «խորտո, գեղեցիկ, սիրուն» բառի գրության ճիշտ ձևը, ամենայն

հավանականությամբ, եղել է *խորոտ*-ը՝ ծագած *խաւրոտ* նախաձևից: Լեռան *խորտիկ* < *խորտիկ* անունը թուրքերենում դարեր շարունակ պահպանում էր իր հայկական բնույթը, կոչվելով *խորտիկ-դադ*: Իսկ դա նշանակում է, որ այն շարունակել է պաշտվել տեղի թուրքերի կողմից, հավանաբար թրքացած հայերի միջնորդությամբ:

Աստվածների պարտեզը և Թինա դիցուհին

Առաջավոր Ասիայի հին ժողովուրդները ունեին Դրախտի մասին իրենց պատկերացումները: Դրանցում առկա էր լինում առասպելական Կենաց ծառը: Կենաց ծառից անբաժան էր պատկերացվում նրան փաթաթված խաղողի որթատունկը: Դրա առաջին վկայությունը գտնում ենք շումեր-աքադական «Գիլգամեշ» դյուցազնավեպում: Նրա կենտրոնական կերպար Գիլգամեշի նախատիպը Շումերի Ուրուկ քաղաքի (հարավային Միջագետքում) արքա Գիլգամեշն էր՝ արքայատոհմի հինգերորդ ներկայացուցիչը՝ ապրած XXVII-XXVI դդ. (մ.թ.ա.) սահմանազխին [29, cc. 154-155; 30, c. 33, cc. 83-84]: Դեռևս նրան նախորդած դարերում Հայկական լեռնաշխարհի և Շումերի միջև գոյություն ունեցած առևտրատնտեսական կապերի մասին են վկայում շումերական Ուրուկ-IV մշակույթը կրողների գաղթօջախի պեղումները հետագա Ծոփքի տարածքում՝ Կապանի (այժմ՝ Քեբան) շրջանում [36, cc. 23-24]:

Շումեր-աքադական դյուցազնավեպում պատմվում է նաև, թե ինչպես անմահության հասնելու միջոցը գտնելու համար հյուսիսի ճանապարհը բռնած, բազում արգելքներ հաղթահարած Գիլգամեշը, երբ արդեն Հայկական լեռնաշխարհում էր, «հեռվեն նշմարեց աստվածներուն պարտեզը և անոր քով փութաց: Սարդիոնե ծառը հոն իր պտուղը ուներ: *Որթատունկերը պատած էին գայն և խաղողի ողկույզները կախված էին անկե*: Լազվարթն ալ տերև և գեղեցիկ տեսքով պտուղներ ուներ: Դարավոր մայրիներուն և կասկենիներուն վրայեն կախված ազնիվ քարերը կը շողշողային: Կանաչ զմրուխտը ծովասեզի նման ծառերուն ստորոտը տարածված էր... *Դիցուհի Սիդուրին ծովեզրի գահին վրա բազմած*, աստվածներուն պարտեզին կը հսկեր» [7, էջեր 78-79]: Դրախտի վերաբերյալ շումերների այս պատկերացման մեջ հայկական հենքն իրեն բացահայտում է խաղողի որթատունկերի առկայությամբ և աստվածների մատովակ Սիդուրի դիցուհու ներկայությամբ, իսկ անանուն մնացած ծովը Վանա լիճն է: Հայկական ավանդություն է եղել, որով որթատունկի գոյությունը հիշատակվում է ոչ թե Ջրհեղեղից հետո Նոյի տապանի և Արարատ (Մեծ Մասիս) լեռան, այլ Դրախտի առնչությամբ: Միջնադարի մեր տաղասացներից մեկը գրում էր. «Որթն դրախտաբոյս է, տունկ/Ձոր բեր է զխաղողն ողկուզեայ,/Ազնիւ գովական պտուղ,/Ճաշակաճն ասեն Ադամայ» [10, էջ 39]:

Լեռնային բույս որթատունկը Շումերում չէր աճում, իսկ նրա վայրի տարբեր տեսակներ հանդիպում են այսօր էլ մեր Մեղրու, Փամբակի ու Լոռու կիրճերում [11, էջ 5]: Պղնձաքարի դարաշրջանում է վայրի խաղողը դարձել մշակովի բույս, և սկիզբ դրվել գինեգործությանը [25, էջ 235; 34, c. 170]: Այսուհանդերձ, իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում խաղողը, թեև մշակաբույս, շարունակում էր հիմնա-կանում մնալ լեռնային տունկ [17, էջեր 256-257; 18, էջեր 177-178; 22, էջեր 51-61]: Այս առթիվ հիշարժան են Գ. Սրվանձտյանցի դիտողությունները՝ կատարված Արդնո (Արկնիի) գավառի նկարագրության մեջ: «Իսկ խաղողը այնքան ազնիվ և այնքան շատ, որո նման հայաբնակ

գավառաց մեջ չկա տեղ մը... Ջատ է գինվո խաղողն, որ նույնքան առատ է և պատվական յուր գույնն ու համը: *Գրեթե լեռներն ամբողջ որթատունկ են*» [26, էջ 448]: Գ. Սրվանձտյանից 2600 տարի առաջ նույնպիսի առատության է ականատես եղել ասորեստանցի դպիրը, որն հավանաբար մասնակիցն է եղել Ուրարտուի դեմ իր թագավոր Սարգոն II-ի մ.թ.ա. 713թ. արշավանքի: Ահա նրա խոսքերը Ուրարտուի Ուլիու քաղաքի շրջակայքում իր տեսածի վերաբերյալ. «պտուղներն ու խաղողը թափվում էին հորդառատ անձրևի նման», իսկ «բուրումնավետ գինին հոսում էր հանց գետի ջուր» [32, N 49, с. 205]:

Հայկական լեռնաշխարհն իր հայախոս բնիկ բնակչությամբ՝ խաղողի և գինու հայրենիքն համարվելու մասին են, անշուշտ, խոսում Փոքր Ասիայի հնագույն (մեռած) լեզուներում՝ խաթերենում (հաթերեն, պրոտոխեթերեն) և խեթերենում (հեթիտերեն) հնագույն հայերենից փոխառյալ՝ գինեգործությանն առնչվող բառերի գոյությունը: Խաթերեն *windu-karam* (*windu-qaram*, *windu-kkaram*) բառը «գինի հեղող», այսինքն՝ «մատովակ» է նշանակում [31, cc. 649-650, 881]: Խաթերենն արձանագրել է հնդեվրոպական ծագումով հայերեն բառի նախնական վիճակը, երբ հայերենում դեռևս տեղի չէր ունեցել *հ.-ե. *u->* հայ. *զ* հնչյունափոխությունը [20, էջ 160] (հայերենից փոխառյալ վրաց. *ղվինի* «գինի» բառն արձանագրվել է դրա միջանկյալ փուլը) [2, էջ 557]: *Հ.-ե. *uend-*ը հայերենում դարձել է *գինդ*, որից գրաբարում ունենք *գնդակ որթոյ* «որթի վազի ոստը կամ խիղբը. և *գնդաձև* «ոլորապտույտ» բառը (օր. *գնդաձև գնացք օձից*) [2, էջ 537; 12, էջ 453]: Հայերեն բառի հնդեվրոպական արմատակիցներից են հին սկանդ. *vinda*, հրգ. *wintan*, գերման. *winden* «ոլորել, դարձնել», նրգ. *Winde* «բաղել» և հատկապես հրգ. *Uinton* «խաղողի ծիլ» [2, էջ 557]: Ընդ որում, հայերենում *հ.-ե. *u-*ն *զ*-ի չէր վերածվել նաև ուրարտական դարաշրջանում. հմմտ. *Ueduri*-ում *ued* < *հ.-ե. *ued->* հայ. *գետ*, *Uelikuni* // *Գեղա(ր)քունի*:

Եթե հնդեվրոպական արմատի **uendh* վերին ձայնդարձից ունեցել ենք *գինդ*, ապա նրա ստորին ձայնդարձից ունեցել ենք *գանձ* «խաղողի վազի արմատների բարակ փունջ-փունջ թելերը» [12, էջ 453]: Բառում տեղի ունեցած *-նդ/-նձ* հնչյունական անցման տեսանկյունից հմմտ. *գունդ>գունձ-իկ* (Շիրակում ածխի մանրուքի և անասնաղբի շաղախի միջոցով ստացվող գնդաձև վառելիք), *խանդ>խանձ*, *խինդ>խնձ-իդ* (>խնձիդ), *փոխինդ>փոխինձ*: Ըստ երևույթին, *գանձ* բառը հնում ավելի լայնորեն կիրառվել է «խաղողի որթ» նշանակությամբ, որից Հայկական լեռնաշխարհի *Գանձասար* (Արցախում) և *Գանձակ* (Գարդմանում) տեղանունները: *Գանձ* բառի՝ ժամանակին ավելի լայն իմաստով կիրառված լինելու վկան է ժողովրդական «Ես գանձ կըսեմ, դու տանձ կհասկընաս առածը», որի *գանձ*-ը ո՛չ կարող է «ինչք» նշանակել, ո՛չ էլ «եկեղեցական երգ» [2, էջ 517]: Բնականաբար, միրգը մրգի հետ կարող էր համեմատվել-շփոթվել, և ոչ միրգը՝ մեկ այլ բանի:

Հայերենում *գանձ*-ը իր ձ-ով հիշեցնում է խեթական արքունիքի բարձրաստիճան անձանցից մեկի՝ *Nu-wa-an-za*-ի անվան *-wanza* (կարդում ենք *-վանցա*) բաղադրիչը: Սա արքունի մատովակի պաշտոնն զբաղեցրած գորավար էր [38, էջ 100]: Ըստ այսմ, նրա անվան *-wanza* բաղադրիչը հայերեն *գանձ*-ի նման ծագում է *հ.-ե. *uendh-* նախաձևից և, ըստ երևույթին, «խաղող» կամ «գինի» է նշանակել: Հիշենք, որ խեթական դարաշրջանի հայերենում դեռևս տեղի չէր ունեցել *հ.-ե. *u->*հայ. *զ* հնչյունափոխությունը: Իսկ այս մատովակի անվան *Nu-* բաղադրիչի համար կարող ենք հիշել հայերեն *նուարխոտ* և

նուարտակ բառերում առկա *նուար* բուսանվանական հիմքը (*նուար* < *նու-ար* հմմտ. *արդ-ար*, *գալ-ար*, *դալ-ար*, *երկ-ար* և այլն) [23, էջ 800]:

Տեֆե-տինա լեռնանունը խաղողային Թինա դիցուհու պաշտամունքի արգասիք

«Գիլգամեշ» դյուցազնավեպի խեթերեն թարգմանության մեջ Tinnu անծանոթ անունը բերված է որպես Սիդուրի դիցուհու Sābitu «մատովակ» մակդիրի համարժեք [33, c. 14]: Անմիջապես նկատվում է սրա և հայերեն *թին* «խաղողի կուտ, կճեպը, չեչը» բառի նույնությունը: Այս արմատն առկա է նաև *թնիճ* (<թին-իճ) բառում, որը միջնադարյան «Բառգիրք հայոց»-ը բերում է «հատ կամ որթն, որ ի հողոյ ելանէ» բացատրությամբ [6, էջ 121]: *Թնիճ*-ից ունենք *թնճուկ* /*թնջուկ* «մազերի խճճված տեղը» բառը: Գ. Ջահուկյանը *թնիճ*-ի մեջ տեսնում էր հ.-ե. *stai-/sti- «խտանալ» արմատը [23, էջ 267]: Հնդեվրոպական արմատի երկրորդ տարբերակը կարող է ընկած լինել նաև հայերեն (բարբառային) *թեյեք* «խաղողի որթ» բառի հիմքում [13, էջ 96]:

Ոչ միայն խեթերը, այլև Հայկական լեռնաշխարհի բնակիչները Tina-ն գործածել են որպես ինչ-որ աստծու դիցանուն կամ դիցանվան մակդիր: Դրա մասին է խոսում ուրարտական սեպագրությամբ հայտնի Šešetina /Šeše-tina լեռան անունը [35, N 36, ԿՏԿ. 1-10]: Հետագա Տայքի այս լեռը ուրարտագետները նույնացնում են Ասորեստանի Թիզլաթ-փալասար I թագավորի (մ.թ.ա. 1115-1077թթ.) կողմից Daiāeni-ում (հետագա Տայքը) հիշատակված Տեֆե լեռան հետ: Նրանց կարծիքով, Մենուան (մ.թ.ա. 810-786թթ) և Թիզլաթ-փալասար I նույն լեռն են նկատի առել, բայց Մենուան նրա բուն անվանը ավելացրել է ուրարտական արձանագրությունների լեզվի tina (resp. tini ?) բառը՝ «անունով կամ անվանմամբ» իմաստով [28, cc. 42, 415]: Հարցի մեջ հստակություն կարելի է մտցնել՝ միայն պարզելով լեռնանվան բուն մասի՝ Տեֆե-ի իմաստը: Մեր կարծիքով, այս բառը ուղղակի կապ ունի հայերեն մանկական թոթովանքի *շիշեկ* «գրկել» բայի հետ [14, էջ 517], որի արմատն ունենալու էր *շէշ* տեսքը: Հայտնի են մանկական թոթովանքի բառեր, որոնք գալիս են հնդեվրոպական նախալեզվից [Տե'ս 24, էջեր 56, 136, 179]: Այդպիսին կարող էր լինել նաև Տեֆե-ն՝ Մենուայի հիշատակած Տեֆե-Tina լեռնանվան առաջին մասը՝ «մատովակ» դիցուհի Թինայի «գիրկը»: Եթե հիշենք, որ հայերենն ունի նաև նմանահունչ *շիշք* «ծոճրակ» անհայտ ծագումով համարված բառը [23, էջ 588], ապա կարող ենք եզրակացնել, որ մատովակ դիցուհի Թինայի «գիրկը» համարվել է այդ լեռան խաղողաշատ խորածոր(եր)ը: Լեռան որևէ հատվածի համար մարդու մարմնամասների անվանումների կիրառումն ամբողջ աշխարհում տարածված հանրահայտ երևույթ է. հմմտ. հայերեն *գալ-գաթ*, *գոգ*, *լանջ*, *կատար*, *կող*, *ոտն*, *փոք*, *քիթ* բառերի նույնպիսի կիրառումները: Դրանց շարքը կարելի է դասել նաև տեղանվանական կիրառում ստացած Տեֆե-tina լեռան անունը՝ իր Տեֆե բաղադրիչով:

Հայերեն խառն արմատով բառերը

Շեշեթինա, հետագայում *Չորմայրի* և *Խորտիկ* կոչված լեռը հազարամյակներ շարունակ բուն հայերեն անուններ է կրել: Դրանցից *Խորտիկ*-ը այլ բան չէ, քան *խորոտ* բառի փաղաքշական ձևը՝ ստեղծված հայերեն *-իկ* վերջածանցի միջոցով:

Խորտիկ նշանակում է «խորոտ, գեղեցիկ, սիրուն» (հմմտ. ժողովրդական երգում «Ա՛յ խորտիկ-մորտիկ, ա՛յ սիրունիկ կաքավիկ») [13, էջ 296]: *Խորոտ* բառը հավաստի

ստուգաբանության չի արժանացել ոչ ճիշտ գրության պատճառով, որովհետև բարբառներից է գալիս, իսկ դրանցում *n*-ի և *o*-ի արտասանական տարբերությունը ջնջվել էր: Բառի գրության ճիշտ ձևը, ամենայն հավանականությամբ, եղել է *խորոտ*-ը՝ ծագած *խալորոտ* նախաձևից: *խալ*- արմատ, *-p*- աճական մասնիկ և *-ոտ* վերջածանց: *խալ* արմատական բառը նշանակում է «աղվամազ, պտուղի վրայի բարակ աղվամազը» [15, էջ 350]: Այն որպես առաջին բաղադրիչ առկա է *խալարծի* «(խաղողի) որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ», *խալարծիլ* «գաբծիլ, խաշնդեղ, որթի մատղաշ ծիլ», «վայրի վարունգ», *խալարտ* «կանաչեղեն, ուտելի բանջար», «վարունգ, կաղամբ» բառերում [15, էջեր 350-353]: *խորոտ* < *խալորոտ* բառի *-p*- աճականի համար հմմտ. *բարձր*, *եզր*, *մանր*, *մեղր*, փոքր և այլ բառերի համապատասխան աճական մասնիկները [27, էջեր 78, 98], իսկ *-ոտ*-ը այսօր էլ հայերենում գործածական աճականակերտ վերջածանց է [16, էջ 77]: Ինչպես նշվեց, *խորոտ*-ից փաղաքշական *-իկ* վերջածանցով ստեղծված ձև է *խորոտիկ*-ը, որից *խոր(ո)տիկ/խորտիկ* լեռնանունը (միջնաձայն *n*-ի հնչյունափոխման համար հմմտ. *խորոջուր* < *խոտորջուր*):

Խորտիկ լեռը Ճորոխի ակունքների լեռն է: Հայտնի է, որ գետերի ակունքները (և բնական, ինքնաբույս աղբյուրներն առհասարակ) պաշտամունքի առարկա էին, իսկ Ճորոխին՝ որպես Դրախտի չորս գետերից մեկինը, առավել էին պաշտվելու: Ըստ այսմ՝ հասկանալի է, թե ինչու լեռան *խորտիկ* < *խորոտիկ* անունը թուրքերենում դարեր շարունակ պահպանում էր իր հայկական բնույթը՝ կոչվելով *խորտիկ-դաղ*: Իսկ դա նշանակում է, որ այն շարունակել է պաշտվել տեղի թուրքերի կողմից, հավանաբար թրքացած հայերի միջնորդությամբ: Հանրահայտ փաստ է, որ հասուն միջնադարում Տայքի հայերի մի մասը դարձել էր քաղկեդոնիկ-վրացադավան: Օսմանյան տիրապետության տակ սրանք, մահմեդականություն ընդունելով, աստիճանաբար թրքացան [8, էջ 84]: Մեծ եղեռնի ժամանակ տեղի ունեցած Տայքի հայաթափումից հետո էլ տեղական բնակիչների համար Խորտիկը մնում էր պաշտելի լեռ՝ ստանալով արդեն մահմեդական Մասջիդ «մզկիթ» անունը:

խալ արմատը վերոբերյալ բառերից բացի առկա է նաև հազվադեպ կիրառություն ունեցած *խալիդ* բառում: «Բառգիրք հայոց»-ում կարդում ենք. «*խալիդ*-դրախտ կամ բուրաստան» [6, էջ 142]: Ընդ որում, այս բառը նաև «պարտեզ» և «բանջարանոց» է նշանակել [23, էջ 324]: Ծագումն անհայտ համարված այս բառին հետո հավելվել է *-իդ* / *-իլ* վերջածանցը: Ըստ Գ. Ջահուկյանի, *խալ* բառը ծագում է հ.-ե. *khəu-/*(s)/keu- «ծածկել, փաթաթել» արմատից, որից են ծագում նաև ազգակից լեզուների այնպիսի բառեր, ինչպիսիք են հին հնդկ. skānti «ծածկում է», հուն. κωας «բուրդ, կաշի, մորթի», լիտվ. kėvalas, լատիշ. caula «կճեպ» բառերը [23, էջ 323]: *խալիդ* - *իդ* / *-իլ* վերջածանցի համար հմմտ. *բալիդ*, *կաթիլ*, *տեսիլ* բառերի վերջածանցները, որոնց ավելի հաճախ հանդիպում ենք կենդանիների անուններում. հմմտ. հայ. *արագիլ*, *բորեղ*, *գոռեղ*, *մաթիլ*, *որջիլ*, *տառեղ* - ն և ռուս. дятел, козел, орел, осел բառերի համապատասխան վերջածանցները:

Խեթական արձանագրությունները մեր լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում ներառյալ հետագա Dajāeni/Տայքը հիշատակում են *Hauilija* տեղանունը [38, cc. 68, 72-73]: Սրանում *խալիդ*/Hauil հիմքին ավելացված է *-ija* հնդեվրոպական ծագումով վերջածանցը: Մեր *խալիդ*-ից փոխառյալ է նաև եբրայերեն Xavīlā-ն՝ այն երկրի անունը, որը Դրախտի մասն էր (Աստվածաշնչի հունարենից կատարած թարգմանությամբ հայերեն

է թափանցել/*էիլայ* տեսքով): Սրանք գալիս են հաստատելու անուշադրության մատնրված այն ենթադրությունը, թե Տայքի *Պարտիզաց փոր* գավառի, *Պարտեզ* բնակավայրի և *Պարտեզ* գետի (Ճորոխի վտակն է) [8, էջեր 77, 110] անուններում պահպանված է վերհուշը աստվածաշնչյան Դրախտի [1, էջ 10; 29, էջ 250]:

Չորմայրի լեռնանվան և խաւոյ բառի ստուգաբանությունները

Դրախտի վերհուշը պահպանած էր լինելու նաև Տայքի Չորմայրի լեռան անունը: Սա Ճորոխ գետի ակունքների լեռն էր՝ նույն Խորտիկը [8, էջ 76]: *Չորմայրի* անունը հստակ ստուգաբանություն ունի՝ բաղկացած *չոր* «չորացած» և *մայրի* «մայրի ծառը» բաղադրիչներից: Իսկ ինչու «չորացած», որովհետև *մայրի ծառը* «սոնուպի, *Pinus excelsa*» [14, էջ 249] սուրբ, պաշտվող ծառերից լինելով, սուրբ էր համարվում անգամ չորանալուց հետո՝ մանավանդ երբ չորացել էր կայծակի հարված ստանալու պատճառով: Արցախի Վարանդա գավառի առթիվ Ե. Լալայանը նկատել էր տալիս, որ «Սուրբ համարված ծառերը չորանալուց հետո էլ ժողովրդի համար նվիրական են մնում: Ոչ ոք չի կտրտում, վառում և կամ ուրիշ տեղ տանում այդ փայտերը, այլ շարունակում են մոմեր վառել և աղոթել դրանց առաջ: Եվ երբ սկսում է փտել, փռվել ջրի մեջ են ածում և խմում կամ քսում գորտնուկի (ձեռի հիվանդություն) վրա, որ առողջանա» [9, էջ 164]: Հենց այդպիսի մի չոր ծառ՝ չոր մայրի էր լինելու այն պաշտամունքի առարկա չորացած ծառը, որը գտնվել է նրա անունով *Չորմայրի* կոչված Խորտիկ լեռան վրա:

Այդ *Չորմայրի* լեռնանվան հնության մասին է խոսում նրա անվան հիշատակումը բյուզանդական մի աղբյուրում՝ որպես նրա շրջակայքը բռնած գավառի անուն [8, էջ 76]: Հունական անվանաձևում *մերի*-ն առաջացել է հայերեն բարբառներում տեղի ունեցած – *այ>ե*- վերափոխման պատճառով (*հմմտ. մայր>մեր, հայր>հեր* և այլն), իսկ մերի՝ «անտառ», *Մայրի* բառում – *ի*-ն բուսանվանակերտ հանրահայտ վերջածանցն է, իսկ *մայր*-ը՝ արմատը: *Մայր* բուսանվան առթիվ Հ. Աճառյանը գրում է. «անտառային մի բարձր ծառ է. ըստ ՆՀԲ եղևին, նոճի, թեղոշ, ըստ Արթինեան, Աստվածաշնչի տունկերը *Pinus cedrus*, չամ» [4, էջ 247]: Իսկ ստուգաբանության առթիվ նա կարծում է, որ նրա **māter*- նախաձևը կամ կարող է նույնը լինել *mātér* «մայրիկ» բառի հետ, կամ լինել անկախ բառ. հմմտ. լատին. *materia* «շինության համար փայտ, շինանյութ, նյութ», ռուս. *матеро́й* «հաստատուն, ամուր, ուժեղ» [4, էջ 247]: Ինչ վերաբերում է *Չոր-մայրի* լեռնանվան *չոր* բաղադրիչին, ապա իր հիմք *չոր* «չոր, ոչ թաց» բառի նման նրա նախաձևը ևս եղել է հ.-ե. **k^usoro*-ն՝ ծագած հ.-ե. **k^uuser* «չոր» արմատից [4, էջ 630; 24, էջեր 133, 218]:

Ի՞նչ կապ կարող էր ունենալ չորացած մայրի ծառը Թինա դիցուհու և նրա բուսական առարկայացումներն հանդիսացող խաղողի որթի և նրա ողկույզների հետ: Նախ, հիշենք հարևան Փոքր Ասիայի հին ժողովուրդների ամենապաշտելի բազմաստիճա Արտեմիսի եփեստյան հայտնի արձանը և մուծածիրյան Խալդի աստծու տիկնոջ՝ *Բազմաշտուի* (<**bag-mastu*) անունը: Սրա երկրորդ բաղադրիչին կարելի է հանդիպել հուն. *μασθόρ/μαστόρ* «կուրծք, ստինք» բառի, իսկ առաջին բաղադրիչին ոչ թե իրանական լեզուների *bag* «աստված» (ինչպես կարծում էինք 46 տարի առաջ) [21, էջեր 52-53, ծան. 46], այլ հայերեն *բազում* բառի մեջ: *Բազում* «շատ» բառը սովորաբար համարում էին իրանական լեզուներից կատարված փոխառություն: Այդ տեսակետն ընդունած Գ. Ջահուկյանը

հետագայում ավելացրել է, որ հ.-ե. *bħng' հս-ից «հնարավոր էր նաև անմիջական զարգացում» հայերենում [23, էջ 111]: Մենք կիսում ենք այս վերջին կարծիքը, որովհետև հ.-ե. -g' հ-ն ձայնավորից առաջ կարող էր հնչյունափոխվել ոչ թե -ձ-ի, այլ -գ-ի՝ ինչպես *մոզի* բառում [4, էջ 338]: Այսինքն՝ *bag-mastu* նշանակել է «բազմաստինք»: Հիշյալ դիցուհիների նման խաղողի բազմահատիկ ողկույզի մարմնավորում կարող էր ըմբռնված լինել նաև մեր Թինան: Ինչ վերաբերում է խաղողի որթի և «չորացած մայրի ծառի»՝ Չորմայրիի ունեցած կապին, ապա, անկասկած, ծառը կարող էր սարփինա ծառայել խաղողի գալարուն որթի համար: *Սարփինա* նշանակում է «երկու մետր և ավելի բարձրության ձող, որ այգիներում ցցում են վազերի մոտ և վրան կապում վազը» [15, էջ 193]:

Հայերեն *խաւ* արմատական բառի և դրախտի բնիկ հայկական *խաւիղ* անվան հետ խաղողի որթի կապերը ավելի բացահայտ են դառնում *խաղող* անվան տարբերակ *խաւող* բառի միջոցով: *Խաղող/խաւող* բոլ. *խաւող* բառի ստուգաբանական փորձերին անդրադարձած Հ. Աճառյանը դրանք համարում էր անհավաստի [3, էջ 322]: Գ. Ջահուկյանը նոր փորձ էր կատարել, բառն համարելով փոխառյալ խուռիերեն *ħalul* «ինչ-որ պտուղ, մի պտուղ» բառից [23, էջ 313; 24, էջ 426]: Բայց ի տարբերություն հայերեն բառի, որը *խաղ-ող* բաղադրիչների տրոհելով, սրանցից երկրորդը նա իրավամբ նույնն էր համարում *ող-կող* «խաղողի ողկույզ» բառի առաջին բաղադրիչի հետ [23, էջեր 600-601], խուռիերեն բառի նկատմամբ նույն կերպ չի վարվել: Սա մտածել է տալիս, որ փոխառությունը կարող էր տեղի ունեցած լինել հակառակ ուղղությամբ՝ հայերենից խուռիերեն: Մեր կարծիքով, թե՛ *խաղող/խաւող* բառի երկրորդ բաղադրիչը և թե *ողկույզ* բառի առաջին բաղադրիչը արմատակիցն են հայերեն *ուլն* «մարգարտի հատ կամ զարդի համար փոքրիկ օղակաձև ապակի» բառի [4, էջեր 592-593], որը պետք է ծագած համարել *olen* «ծոել, թեքել» նախաձևից [23, էջ 747]: Այս դեպքում պետք է նկատի առնվեր խաղողի հատիկների արտաքին տեսքը՝ փոքրիկ գնդաձև:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. *Խաղող/խաւող* բառի ստուգաբանության հարուցած դժվարությունը, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ նրա առաջին բաղադրիչի համար ճիշտ ձև և ստուգաբանության ելակետ ընդունվել է *խաղ-ը*, ոչ թե *խաւ-ը*: Արմատացած այս մտածելակերպի հետևանքով անցյալից մեզ հասած բառերի ուղղագույն գրության և արտասանության ձևը համարվել է պարտադիր կերպով գրաբարյանը: Որ այդպես մտածելիս առանձին դեպքերում կարող ենք սխալվել, ցույց է տալիս հետևյալ օրինակը: *Կճեպ* «պտուղի, ձվի կեղև» բառի բարբառային *կպեճ* ձևը (Գարնո բարբառի Գյումրու խոսվածք) հստակ վկայությունն է այն բանի, որ բառի նախաձևն ունեցել է **կիպ-էճ* տեսքը՝ բաղկացած *կիպ* արմատից և *-էճ/-իճ* վերջածանցից: *Կիպ* «կպած, հարած» արմատը կար գրաբարում (հմմտ. *Կպեալ* է ի ստինս նոցա՝ ծծել զկաթն), իսկ *-էճ/-իճ* վերջածանցի համար հմմտ. *բուէ, գաւէճ, թնիճ, լուիճ, կաւիճ, հաւէճ > հաւէջ, պատիճ* բառերի համապատասխան վերջածանցները: Այս ստուգաբանությամբ պարզվում է, որ *կպեճ* բարբառային բառը չէր կարող *խեճեպ* «պտյան, կեղև» բառի արտասանական (սղված, կրճատ) տարբերակը լինել, այլ ի տարբերություն շրջմամբ առաջացած *կճեպ*-ի, ինքնուրույն բառ է՝ իրեն հատուկ և իր նախատիպից եկած բառակազմությամբ:

Վերադառնալով *խաղող/խաւող* բառին՝ նշենք, որ նախատիպին ավելի հարագատ ձևը պետք է համարել *խաւող* տարբերակը, որովհետև հոգուտ դրա է խոսում ինչպես վերևում քննարկման առարկա դարձած նրա *խաւ* «աղվամագ, մրգի երեսի աղվամագ» բաղադրիչը, այնպես էլ հայերեն բարբառների այն ամբողջ շարքը, որոնցում մրգանվան առաջին բաղադրիչը ունի ոչ թե *ղ* (*այսինքն՝ խաղ-* է), այլ *վ* (*այսինքն՝ խաւ-* է): Այդ բարբառներն են. Ակնի, Այնթապի, Ասլանդուզի, Երևանի, Խարբերդի, Կարինի, Կ.Պոլսի, Հաճնի, Համշենի, Մարաղայի, Նոր-Նախիջևանի, Պարտիզակի, Ջուղայի, Ռոդոպոյի, Սալմաստի, Սուչավայի, Վանի, Տիգրանակերտի (Դիարբեքի) [3, էջ 322]: Մեր կարծիքով՝ այս բարբառները պահել են բառի նախկին վ/ւ հնչյունով արտասանությունը, իսկ *խաղող-խաւող* (ւ-ղ>ղ-ղ առնամանությամբ) հմմտ. *անեղ>աղեղ* (ն-ղ>ղ-ղ առնամանությամբ):

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ալիշան Ղ. Հայաստան յառաջ քան գլինդն Հայաստան: Ս. Ղազար հրատ.: Վենետիկ: 1904: 292 էջ:
2. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. I, ԵՀ հրատ.: Երևան: 1971: 698 էջ:
3. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. II, ԵՀ հրատ.: Երևան, 1973: 687 էջ:
4. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան: Հ. III: Երևան: 1979: 635 էջ:
5. Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց: Թարգմանեալ եբրայական եւ յունական բնագրից: Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ա. Յակոբ Պոյաճեան: 1883: 1006+302 էջ:
6. «Բառգիրք հայոց»: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայանի: «Մատենադարան»: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1975: 445 էջ:
7. «Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ»: Թարգմանությունը և ներածականը Ն. Մարտիրոսյանի: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Երևան: 1963: 121 էջ:
8. Երեմյան Ս. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Երևան: 1963: 153 էջ:
9. Լալայան Ե. Երկեր: Հ. II: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1988: 505 էջ:
10. Կոստանեանց Կ. Միջնադարեան Հայոց տաղեր և ոտանավորներ: Վաղարշապատ տպարան Մայր աթոռոյ Ս. Էջմիածնի: 1903: 84 էջ:
11. Հայկական սովետական հանրագիտարան: ՀՍՀ հրատ.: Հ. V: Երևան: 1979: 720 էջ:
12. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. I: Պետհրատ: Երևան: 1944: 608 էջ:
13. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. II, Երևան, 1944: 512 էջ:
14. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. III: Երևան: 1944: 614 էջ:
15. Մալխասյանց Ստ. Հայերեն բացատրական բառարան: Հ. IV: Երևան: 1945: 646 էջ:
16. Մուրադյան Մ. Բառագիտություն: «Հայոց լեզվի պատմ. քերականություն»: Հ. II: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1975: 383 էջ:
17. Պետրոսյան Ս. «Արարատյան դրախտը» սեպագիր աղբյուրներում//«Պատմա-բանասիրական հանդես»: 2009: թիվ 2-3: էջ 249-261:
18. Պետրոսյան Ս. Գնունի նախարարական տոհմի և գինու պաշտամունքի շուրջ//«Պատմա-բանասիրական հանդես»: 1999: թիվ 2-3: 175-189 էջեր
19. Պետրոսյան Ս. Դրախտի գետերի, Խալիլյա, Քուշ երկրների տեղադրության շուրջ//«Պատմա-բանասիրական հանդես»: 2006: թիվ 2: 237-255 էջեր:
20. Պետրոսյան Ս. Հին հայոց խաղողագործ աստվածը//«Հայոց հին պատմության հիմնահարցեր». ՀՀ ԳԱԱ ՊԻ, Երևան, 2004, 158-164 էջեր:
21. Պետրոսյան Ս. Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին: «Պատմա-բանասիրական հանդես»: 1979: թիվ 4: 46-58 էջեր:
22. Պետրոսյան Ս. Quria երկրները և հին հայոց մատուցականները//ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. XVIII: Գյումրի: 2015: 51-61 էջեր:
23. Զահուկյան Գ. Հայերեն ստուգաբանական բառարան: «Ասողիկ» հրատ.: Երևան: 2010: 819 էջ:

24. **Ջահուկյան Գ.** Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1987: 747 էջ:
25. **Սարգսյան Ս.** Նախնադարյան հասարակությունը Հայաստանում: ԵՀ հրատ.: Երևան: 1967: 416 էջ:
26. **Սրվանձտյան Գ.** Երկեր: Հ. II: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1982: 560 էջ:
27. **Սուրիապյան Հ.** Անական հայերենում: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1986: 249 էջ:
28. **Арутюнян Н.** Бийнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики. Изд-ство АН Арм ССР. Ереван. 1970. 472с.
29. **Афанасьева В.** Гильгамеш. «Мифология. Золотой фонд. Энциклопедия». Главный редактор Е. М. Мелетинский. М. 2003. 736с.
30. **Афанасьева В.** Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве. Главная редакция Восточной литературы. Изд. «Наука». Москва. 1979. 192с.
31. **Гамкрелидзе Т., Иванов В.** Индоевропейский язык и индоевропейцы. Т. II. Изд. Тбилисского университета. Тбилиси. 1984. 1328с.
32. **Дьяконов И.** Ассиро-вавилонские источники по истории Урарту. «Вестник древней истории». Москва. 1951. NN 2, 3, 4.
33. **Капанцян Г.** «Об урартском божестве Шебиту». Академия наук АрмССР. Ереван. 1947. «Տեղեկագիր» հասարակական գիտությունների»: 24 с.
34. **Кушнарева К. Чубинишвили Т.** Древние культуры Южного Кавказа. Ленинград. 1970. 190 с.
35. **Меликишвили Г.** Урартские клинообразные надписи. «Вестник древней истории» АН СССР. N1. Москва. 1960. 502с.
36. **Меллаарт Дж.** Торговля и торговые пути между Северной Сирией и Анатолией (4000-1500гг. до н. э.). «Древняя Эбла» (раскопки в Сирии). «Прогресс». Москва. 1985. 366с.
37. **Мурзаев Э.** Очерки топонимики. Изд.-ство «Мысль». Москва. 1974. 381с.
38. **Хачатрян В.** Восточные провинции Хеттской империи. Изд.-ство АН Арм. ССР Ереван. 1971. с. 183с.

References

1. **Alishan, L.** Armenia Before Being Armenia [*Hayastan yarraj k'an zlineln Hayastan*] S. Lazarus edition. Venice. 1904. 292 p. (in Armenian)
2. **Acharyan, H.** Root Dictionary of the Armenian Language [*Hayeren armatakan barraran*]. Vol. I. YU Pub. House. Yerevan. 1971. 698 p. (in Armenian)
3. **Acharyan, H.** Root Dictionary of the Armenian Language [*Hayeren armatakan barraran*]. vol. II. YU Pub. House. Yerevan. 1973. 687 p. (in Armenian)
4. **Acharyan, H.** Root Dictionary of the Armenian Language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. III. 1977. 635 p. (in Armenian)
5. Holy Scripture, Old and New Testaments [*Astuatsashunch' matean Hin yev Nor Ktakaranac*]. Constantinople. “Hakob Poyachean” pub. 1883. 1006+302 pp. (in Armenian)
6. “Vocabulary of the Armenian language” [*Barrgirk' hayots*']. Yerevan. “Matenadaran”. 1975. 445 p. (in Armenian)
7. “Gilgamesh. Ancient Oriental Epic” [*Gilgamesh. Hin Arevelk'i dyuts'aznavap*] Translation and Introduction by Nshan Martirosyan. Yerevan. Pub. USSR Academy of Sciences. 1963. 121 p. (in Armenian)
8. **Yeremyan, S.** Armenia according to “Ashkharatsuyts” [*Hayastany yst «Ashkharhats'uyts'»-i*]. Yerevan. AS of ArmSSR. 1963. 153 p. (in Armenian)
9. **Lalayan, E.** Works [*Yerker*]. Vol. II. AS of ArmSSR. Yerevan. 1988. 505 p. (in Armenian)
10. **Kostaneants, K.** Medieval Armenian Poems and Verses [*Mijnadarean Hayots' tagher yev votanaworner*]. “Vagharshapat”. Etchmiadzin. 1903. 84 p. (in Armenian)
11. Armenian Soviet Encyclopedia [*Hayakan sovetakan hanragitaran*]. ArmSSR Publishing House. Vol. V. Yerevan. 1979. 720 p. (in Armenian)
12. **Malkhasyants, S.** Armenian Defining Dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. I. Yerevan. State pub. 1944. 608 p. (in Armenian)

13. **Malkhasyants, S.** Armenian Defining Dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. II. Yerevan. State pub. 1944. 512 p. (in Armenian)
14. **Malkhasyants, S.** Armenian Defining Dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. III. Yerevan. State pub. 1944. 614 p. (in Armenian)
15. **Malkhasyants, S.** Armenian Defining Dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. IV. Yerevan. State pub. 1945. 646 p. (in Armenian)
16. **Muradyan, M.** Lexicography. "Historical Grammar of the Armenian Language" [*Barragitut'yun, "Hayots' lezvi patmakan k'erakanut'yun"*]. Vol. II. AS of the Arm.SSR. Yerevan. 1975. 383 p. (in Armenian)
17. **Petrosyan, S.** "Ararat Paradise" in Cuneiform Sources, [*"Araratyan drakhty" sepagir aghbyurnerum*] // "Historical-philological Journal". 2009. N 2-3. 249-261pp. (in Armenian)
18. **Petrosyan, S.** On the Gnuni Dynasty and the Cult of Wine [*Gnuni nakhararakan tohmi yev ginu pashtamunk'i shurf*] // "Historical-philological journal". 1999. N 2-3. 175-189 pp.. (in Armenian)
19. **Petrosyan, S.** On the Location of the Rivers of Paradise, the Countries of Khavila, Kush [*Drakhti geteri, Khavila, K'ush yerkrneri teghadrut'yan shurf*]// "Historical-philological Journal". 2006. N 2. 237-255 pp. (in Armenian)
20. **Petrosyan, S.** The Ancient Armenian God of Vintners [*Hin hayots' khaghoghagorts astvatsy*] // "Fundamental issues of Ancient Armenian History". Scientific Publishing House of the NAS of the Republic of Armenia. Yerevan. 2004. 158-164 pp. (in Armenian)
21. **Petrosyan, S.** On the Third Ethnic Element of the Territory of Ancient Media [*Hin Marastani taratsk'i yerrord et'nikakan tarri masin*]// "Historical-philological Journal". 1979. N 4. 46-58 pp. (in Armenian)
22. **Petrosyan, S.** Countries Quria and Ancient Armenian Cupbearers [*Quria yerkrnery yev hin hayots' matrrvaknery*]// "Scientific Works" of the Shirak Center for Armenian Studies of the NAS RA. XVIII. Gyumri. 2015. 51-61 pp.. (in Armenian)
23. **Jahukyan, G.** Armenian Etymological Dictionary [*Hayeren stugabanakan barraran*]. "Asoghik". Yerevan. 2010. 819 p. (in Armenian)
24. **Jahukyan, G.** History of the Armenian Language. Pre-literary Period [*Hayots' lezvi patmut'yun, nakhagrayin zhamanakashrjan*]. AS of ArmSSR. Yerevan. 1987. 747 p. (in Armenian)
25. **Sardaryan, S.** Prehistoric Society in Armenia [*Nakhnadaryan hasarakut'yuny Hayastanum*]. YU Pub. Yerevan. 1967. 416 p. (in Armenian)
26. **Srvandztyants, G.** Works [*Yerker*]. N II. AS of ArmSSR. Yerevan. 1982. 560 p. (in Armenian)
27. **Sukiasyan, H.** The Battlefield in Armenian [*Achakany hayerenum*]. AS of ArmSSR. Yerevan. 1986. 249 p. (in Armenian)
28. **Harutyunyan, N.** Bainili (Urartu). Military-Political History and Issues of Toponymy [*Biaynili (Urartu). Voyeno-politicheskaya istoriya i voprosy toponimiki*]. AS of the ArmSSR. Yerevan. 1970. 472 p. (in Russian)
29. **Afanasyeva, V.** Gilgamesh [*Gil'gamesh*]. Chief Editor E. M. Meletinsky. Moscow. 2003. 736 p. (in Russian)
30. **Afanasyeva, V.** Gilgamesh and Enkidu. Epic Images in Art [*Gil'gamesh i Enkidu. Epicheskiye obrazy v iskusstve*]. "Nauka". Moscow. 1979. 192 p. (in Russian)
31. **Gamkrelidze, T., Ivanov V.** Indo-European Language and Indo-Europeans [*Indoyevropeyskiy yazik i indoyevropeytsy*]. Vol. II. Pub. of Tbilisi University. Tbilisi. 1984. 1328 p. (in Russian)
32. **Dyakonov, I.** Assyro-Babylonian sources on the history of Urartu [*Assiro-vavilonkiye istochniki po istorii Urartu*]. "Herald of Ancient History". Moscow. 1951. NN 2, 3, 4. (in Russian)
33. **Kapantsyan, G.** "On the Urartian deity Shebitu" [*"Ob urartskom bozhestve Shebitu"*]. AS of the ArmSSR. Yerevan. 1947. 24 p. (in Russian)
34. **Kushnareva, K. Chubinishvili, T.** Ancient Cultures of the South Caucasus [*Drevniye kul'tury Yuzhnogo Kavkaza*]. Leningrad. 1970. 190 p.
35. **Melikishvili, G.** Urartian cuneiform inscriptions [*Urartskiy klinoobraznyye nadpisi*]. "Vestnik drevney istorii". AS of USSR. N 1. Moscow. 1960. 502 p. (in Russian)

36. **Mellaart, J.** Trade and Trade Routes between Northern Syria and Anatolia (4000-1500 B.C.) [*Torgovlya i torgovyye puti mezhd Severnoy Siriyei i Anatoliyei*]. (4000-1500 gg. do n. e.). “Ancient Ebla” (excavations in Syria). “Progress”. Moscow. 198. 366 p. (in Russian)
37. **Murzaev, E.** Essays of toponymy [*Ocherki toponimiki*]. “Mysl”. Moscow. 1974. 381 p. (in Russian)
38. **Khachatryan, V.** Eastern Provinces of the Hittite Empire [*Vostochnyye provintsii Khettskoy imperii*]. AS of the Arm.SSR. Yerevan. 1971. 183 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **02. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **09. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **04. 11. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Սարգիս Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտ. դոկտոր,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru / ORCID.org/0009-0008-8880-6936

Sargis Garegin PETROSYAN: Doctor of Historical sciences,
Senior Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA
e-mail: Vahe1996@mail.ru / ORCID.org/0009-0008-8880-6936

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռուսլան Ա. Ցականյան

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Միջինասորեստանյան (Ք.ա. մոտ XV դարի վերջին քառորդ – X դարի 2-րդ կես) գյուղատնտեսական համակարգի և գյուղի կազմակերպվածության ըմբռնումը նպաստում է գյուղական և քաղաքային համայնքների միջև փոխհարաբերությունների, վերահսկողության մեխանիզմների և վաղ պետական համակարգերի սոցիալ-տնտեսական հիմքերի վերաբերյալ ավելի խորը և համակարգային պատկերացմանը: Մեթոդներ և նյութեր. Հնագիտական նյութի, վարչական տեքստերի և համեմատական ուսումնասիրությունների վերլուծության միջոցով այս հետազոտությունը ուսումնասիրում է փոխկապակցված հասարակական, քաղաքական և տնտեսական համակարգերը, որոնք բնութագրում էին Միջին Ասորեստանի հասարակությանը: Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Աղբյուրների ուսումնասիրության ժամանակ կիրառվել է այդ մեթոդի համադրման և հակադրման սկզբունքը: Վերլուծություն. Վերհանված և բնութագրված են գյուղական և գյուղատնտեսական համակարգի ձևավորման և զարգացման եղանակները: Գյուղական համայնքների ինտեգրումը տերության վարչական կառուցվածքներին, որոշակի ոլորտներում տեղական ինքնավարությունը պահպանելով հանդերձ, ցույց է տալիս կառավարման պրագմատիկ մոտեցումը: Արդյունքներ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում Աշշուրը ականատես եղավ վարչաքաղաքական նորամուծություններով, ավանդական նորմերի իրավական բնութագրմամբ հասարակական-տնտեսական վերափոխված ինստիտուտների առաջացմանը: Հենց այս փոփոխություններն էին, որ հետագա դարերի ընթացքում պետք է դառնային ասորեստանյան քաղաքակրթության կարևորագույն բնութագրիչը, ինչպես նաև՝ նրա հանրության առանձնահատուկ հիմքը:

Բանալի բառեր՝ գյուղ, գյուղատնտեսական բնակավայր, տնտեսություն, Ասորեստան, նահանգ, նահանգային համակարգ, քաղաքական վերահսկողություն:

Ինչպես հղել՝ Ցականյան Ռ. *Գյուղը և գյուղատնտեսական բնակավայրերի համակարգը Միջինասորեստանյան ժամանակաշրջանում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 17 - 29 էջեր:

DOI: 10.52971/18294316-2025.28.2-17

THE AGRICULTURAL SETTLEMENT SYSTEM IN THE MIDDLE ASSYRIAN PERIOD

Ruslan A. Tsakanyan

The Institute of Oriental Studies of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: Understanding the Middle Assyrian (approximately the last quarter of the XV century BC - the first half of the X century BC) agricultural system and village organization contributes to a deeper and more systematic understanding of the relationships between rural and urban communities, control mechanisms, and the socio-economic foundations of early state systems. **Methods and materials:** Through the analysis of archaeological material, administrative texts, and comparative studies, this research examines the interconnected social, political, and economic systems that characterized Middle Assyrian society. The historical-comparative research method was used in the work. The principle of comparison and contrast of this method was applied when studying the sources. **Analysis:** The methods of formation and development of the rural and agricultural system are revealed and characterized. The integration of rural communities into the administrative structures of the state, while maintaining local autonomy in certain areas, demonstrates a pragmatic approach to management. **Results:** During the Middle Assyrian period, Assyria witnessed administrative and political innovations, the legal characterization of traditional norms, and the emergence of transformed socio-economic institutions. It was these changes that were to become the most important characteristic of Assyrian civilization in later centuries, as well as the distinctive basis of its society.

Key words: *village, agricultural settlement, economy, assyria, province, provincial system, political control.*

Citation: Tsakanyan R. *The Village and the Agricultural Settlement System in the Middle Assyrian Period* // "Scientific Works" of SCAS NAS of RA. Gyumri. 2025. V. 2(28). 17-29 pp., DOI:10.52971/18294316-2025.28.2-17

ՆԱԽԱԲԱՆ. Միջինասորեստանյան (Ք.ա. մոտ XV դարի վերջին քառորդ–X դարի 2-րդ կես) գյուղատնտեսական համակարգի և գյուղի կազմակերպվածության ըմբռնումը նպաստում է գյուղական և քաղաքային համայնքների միջև փոխհարաբերությունների, վե-

րահսկողության մեխանիզմների և վաղ պետական համակարգերի սոցիալ-տնտեսական հիմքերի վերաբերյալ ավելի խորը և համակարգային պատկերացումների հստակեցմանը:

Գյուղատնտեսական բնակավայրերը Ասորեստանի շուրջ երկու հազարամյա պատմության ընթացքում՝ կազմել են պետության սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների էական բաղադրիչները: Ակնհայտ է, որ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում գյուղատնտեսական բնակավայրերը գործել են տնտեսական փոխկախվածության, վարչական վերահսկողության և քաղաքային կենտրոնների հետ մշակութային փոխըմբռնման բարդ ցանցի շրջանակներում՝ պահպանելով գյուղատնտեսական արտադրությանը և ռեսուրսների կառավարմանը հարմարեցված առանձնահատուկ սոցիալական կառուցվածքները:

1. Գյուղատնտեսական համայնքների հասարակական կազմակերպումը, տնային տնտեսության կառուցվածքը

Միջինասորեստանյան գյուղական բնակավայրերի հնագիտական բացահայտումը լուրջ մարտահրավերներ է ներկայացնում: Գյուղական բնակավայրերի հնագիտական հետքերը նվազագույն են: Ավելին, շարունակական բնակեցումը շատ վայրերում թաքցրել է դրանց ավելի վաղ մնացորդները [39]: Այնուամենայնիվ, բուն Աշշուրի տարածքում և նահանգներում վերջերս կատարված հետազոտությունները բացահայտել են բազմաթիվ փոքր բնակատեղիներ (5 հա պակաս մակերեսով)՝ միջինասորեստանյան խեցեղենով, ինչը ենթադրում է գյուղական բնակավայրերի խիտ ցանցի մասին [19; 22]: Միջինասորեստանյան գյուղական համայնքների հիմնական հնագիտական ցուցանիշներն են՝

- ա) առանձնահատուկ կողավոր խեցեղենը և ստանդարտացված կերամիկական հավաքածուները, որոնք ցույց են տալիս ինտեգրումը ավելի լայն բաշխման ցանցերում [22],
- բ) փոքրածավալ գյուղատնտեսական վերամշակման կառույցներ, ներառյալ հացահատիկի մանրացման կայաններ և պահեստավորման կառույցներ [40, p. 33ff.],
- գ) մասնագիտացված արհեստագործական արտադրության կառույցներ, որոնք հաճախ լրացնում են գյուղատնտեսական գործունեությունը [29, p. 398ff.]:

Գյուղական բնակավայրերի պեղված օրինակներից է Թել ալ-Ռիմախի ստորին քաղաքը, որտեղ կենցաղային կառույցները գյուղատնտեսական վերամշակման կառույցներով ցույց են տալիս գյուղատնտեսական համայնքներին բնորոշ բնակելի և արտադրական տարածքների ինտեգրումը [21, p. 122ff.]:

Գյուղատնտեսական համայնքները ծառայում էին որպես կենտրոնական պետության և Ասորեստանի վերահսկողության տակ գտնվող բազմազան բնակչության միջև հիմնական կապող օղակ՝ նպաստելով նվաճված տարածքների ինտեգրմանը և ապահովելով ռազմարշավների ժամանակ հիմնական մոբիլիզացման ենթակա սոցիալական զանգվածի առկայությունը և այլն: Միջինասորեստանյան գյուղատնտեսական բնակավայրերում հիմնական սոցիալական միավորը տնային տնտեսությունն էր bitu [CAD¹, B, 282ff.; 23, p. 233], որը սովորաբար բաղկացած էր գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող միջուկային կամ փոքր ընդլայնված ընտանիքից [14, p. 305ff.]: Թել

¹ **CAD** - *The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago*, Eds.: R. D. Biggs, J. A. Brinkman, M. Civil, W. Farber, E. Reiner, M. T. Roth, M. W. Stolper, Chicago, (A to Z, 1956-2010).

Շեյխ-Համադի (Դուր-Կատլիմու) նման նահանգային կենտրոնների վարչական տեքստերը տնային տնտեսությունները գրանցում են որպես հարկերի գնահատման և աշխատանքային պարտավորության միավորներ, ինչը ցույց է տալիս դրանց հիմնարար տնտեսական և վարչական կարևորությունը [5, p. 47ff.]:

Հին մերձավորարևելյան տնային տնտեսություններում, գերակշռում էին հայրական ազգակցական կառուցվածքները, որտեղ սեփականությունը և գյուղատնտեսական հողերը սովորաբար անցնում էին հորից որդիներին [15, p. 65ff.]: Սակայն, միննոյն ժամանակ, Թել Խուերայի տեքստերը ցույց են տալիս, որ կանայք նույնպես կարող էին ունենալ սեփականություն և մասնակցել տնտեսական գործարքների, մասնավորապես՝ տղամարդկանց տնային տնտեսության ղեկավարի բացակայության դեպքում [13, p. 130ff.]: Գյուղատնտեսական բազմաթիվ տնային տնտեսություններ հաճախ պահպանում էին ազգակցական կապեր՝ ձևավորելով ընդլայնված ընտանեկան ցանցեր, որոնք նպաստում էին գյուղատնտեսական աշխատանքների համագործակցությանը, ռեսուրսների համատեղ օգտագործմանը և ապահովում սոցիալական անվտանգություն [28, p. 83ff.]:

Չնայած փաստերի անբավարարությանը՝ կարելի է ենթադրել, որ այս ազգակցական ցանցերը, հավանաբար, հիմք էին հանդիսացել տեղական ղեկավարության և համայնքային որոշումների կայացման գործընթացների համար:

2. Գյուղատնտեսական բնակավայրերի սահմանումն ու կառուցվածքը

Վարչաքաղաքական առումով, գյուղերը լիովին ինտեգրված էին հիերարխիկ վարչական կառուցվածքների մեջ, որոնք ապահովում էին արքայական անմիջական վերահսկողությունը գյուղական բնակչության նկատմամբ՝ պահպանելով որոշակի աստիճանի տեղական ինքնավարություն: Տնտեսական առումով, գյուղական համայնքները զարգացրել են մասնագիտացված տնտեսական գործառույթներ, որոնք նպաստել են պետության բարգավաճմանը և աջակցել քաղաքային կենտրոններին:

Նվաճված տարածքների բնակչության զանգվածային տեղահանության և վերաբնակեցման աստրեստանյան պրակտիկան շարունակական մարտահրավերներ էր ստեղծում գյուղատնտեսական բնակավայրերի կազմակերպման համար: Միջինասորեստանյան վարչական տեքստերը մանրամասն նկարագրում են տեղահանված բնակչությանը առկա համայնքներին ինտեգրելու և նոր բնակավայրեր հիմնելու բարդ ընթացակարգերը:

Միջինասորեստանյան գյուղերը հիմնականում կենտրոնացած էին գյուղատնտեսական արտադրության վրա, որտեղ հացահատիկի (մասնավորապես՝ գարու և ցորենի) մշակումը կազմում էր ինչպես ապրուստի, այնպես էլ ավելցուկային արտադրության հիմնական աղբյուրը [39, p. 490ff.]: Թել Շեյխ Խամադի վարչական տեքստերը գրանցում են շրջակա գյուղերից դեպի նահանգային կենտրոններ հացահատիկի զգալի մատակարարումներ, ինչը ցույց է տալիս գյուղական համայնքների կարևոր դերը քաղաքային բնակչությանը և պետական հաստատություններին աջակցելու գործում [5, p. 105ff.]:

Աշշուրի սրտում և հիմնական ջրային ուղիների երկայնքով գերակշռում էր ոռոգովի գյուղատնտեսությունը, մինչդեռ արևմտյան նահանգների գյուղական համայնքներին բնորոշ էր անջրդի գյուղատնտեսությունը: Միջինասորեստանյան պետությունը

զգալի ներդրումներ էր կատարում ոռոգման ենթակառուցվածքների մեջ, որոնք գյուղերը ինտեգրում էին ավելի լայն հիդրոլոգիական համակարգերի մեջ [3, p. 210ff.]:

Միջինասորեստանյան գյուղերը (*ālū*) սովորաբար կազմակերպվում էին գյուղատնտեսական գործունեության և պաշտպանական նկատառումներով: Հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ գյուղերի չափերը տատանվում էին 50-100 բնակչություն ունեցող փոքր գյուղակներից մինչև 500-1000 բնակչություն ունեցող ավելի մեծ բնակավայրեր [36]:

Միջին ասորական տեքստերում «*ālū*» տերմինը կարող է վերաբերել ինչպես առանձին գյուղերին, այնպես էլ ավելի մեծ բնակավայրերին: Գյուղերը հաճախ ամրացված էին պատերով (*dūru*) և դարպասներով (*bābu*) [12, p. 23ff.]:

Միջինասորեստանյան վարչական տեքստերում [10, №№ 07, 107, 188, 193, 263, 280, 319] ոչ քաղաքային բնակավայրերը նկարագրելու համար օգտագործվում են մի քանի տերմիններ, որոնք արտացոլում են բնակավայրերի հիերարխիայի նրբերանգային ըմբռնումը՝

1) *ālu*, *ālānu* [CAD, A/1, 386f.] – եզրի կիրառման վերաբերյալ առկա է հսկայածավալ մասնագիտական գրականություն: Եզրը կիրառվում է որպես՝

ա) *քաղաք*,

բ) *քաղաքը որպես հասարակական կազմակերպություն*,

գ) *գյուղ, կավածք*,

դ) *ամրոց, ռազմական հենակետ*:

Որպես բնակավայրի գաղափարագիր այն ներկայացվում է որպես URU՝ *քաղաք* և IRI (URU.ŠE) [23, p. 233]՝ *բնակավայր, գյուղ* իմաստներով: Իսկ բնակավայրի կամ գյուղի բնակիչ՝ գյուղացի նշելու համար օգտագործվում էր *ālāyūti* բառը [10, № 07:22]: Ավանդական գյուղերը (*ālānu*) նախկինում գոյություն ունեցող բնակավայրեր էին, որոնք ներառվել էին ասորեստանյան վարչական համակարգի մեջ: Խաբուրի հովտում կատարված հնագիտական պեղումների արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ շատ ավանդական գյուղեր պահպանել են իրենց հիմնական հիերարխիկ աստիճանակարգն ու կազմակերպվածությունը՝ միաժամանակ հարմարվելով նոր վարչական պահանջներին [16, pp. 203-225]: *ālānu* տերմինը հաճախ է հանդիպում վարչական տեքստերում՝ սովորաբար նշանակելով ժառանգական բնակչություն ունեցող հաստատված գյուղատնտեսական համայնքներ:

Աշշուրցիները իրենց տարածքային ընդլայնման և բնակչության վերաբնակեցման քաղաքականության շրջանակներում հարկադրված էին նոր բնակավայրեր հիմնել՝ *ālānu ešūtu* [15, pp. 28, 200]: Այս բնակավայրերը, որոնք հաճախ անվանվում են *ālānu ešūtu* («*նոր գյուղեր*»), սովորաբար հիմնադրվել են ռազմավարական վայրերի մոտ կամ նվաճված տարածքներում: Մոսուլ քաղաքի շրջակայքում կատարված հնագիտական պեղումների արդյունքները բացահայտում են պլանավորված բնակավայրեր՝ ստանդարտացված հատակագծերով [4, pp. 156-178]:

2) *kapru* (*գյուղ*) [CAD, K, p. 189f.]: Այս բառի իմաստային շրջանակը տարածվում է գյուղատնտեսական տարածքում գտնվող «*գյուղից*», գարի աճեցնելու «*ֆերմայից*» և

ավել կամ պակաս մշտական հովվական բնակավայրից մինչև քաղաքների շուրջ տարածվող արվարձանային շրջանները: *Kapru*-ն ըստ երևույթին եղել է քաղաքային կենտրոններին ենթակա գյուղատնտեսական բնակավայրերի ամենատարածված անվանումը: Ասորեստանյան գյուղերը, դատելով Նոր ասորեստանյան ժամանակաշրջանի վարչա-տնտեսական նյութերից՝ ունեցել են մասնագիտությունների հետ առնչվող անվանումներ: Որպես օրինակ, Նինվեի մոտ գտնվող գյուղերից հայտնի էին «*Հացթուխների գյուղ*», «*Ոսկերիչների գյուղ*», «*Կճուճների գյուղ*», և այլն [25, p. 268]: Կարելի է ենթադրել, որ նման պրակտիկա եղել է նաև Միջինասորեստանյան ժամանակաշրջանում: Վերջինիս առումով, Ջ. Փոսթգոյթը նշում է, որ որոշ արհեստներ ակնհայտորեն ավելի լավ են զարգանում քաղաքից դուրս, և կճուճագործությունը դրանցից մեկն է, կա՛մ այն պատճառով, որ այդպիսի արհեստանոցները պետք է կավի լավ հումքին մոտ լինեին, կա՛մ էլ՝ որ ծխացող վառարանները կարող էին անհարմարություն պատճառել քաղաքային բնակչությանը: Մինչդեռ, ոսկերիչներն ու հացթուխները, անշուշտ, սովորաբար աշխատել են քաղաքում: Այսպիսով, կա՛մ սրանք մեծ ընտանիքի կամ մասնագիտացված աշխատողների խմբի կողմից մասնավոր կերպով պահվող հողեր են, կա՛մ նրանք պետական խմբի անդամներ են, որոնք այս կամ այն պատճառով բնակություն են հաստատել գյուղական վայրերում [29, p. 345, n. 13; 25, p. 268]:

3) *dunnu* (*ամրացված կավածք* [7, p. 48], *դաստակերտ*) [CAD, D, 184ff.]: Գյուղատնտեսական կալվածքներ, որոնք հաճախ արքաների կողմից այս կամ այն պարտավորությունների դիմաց տրամադրվում էր աչքի ընկած աշտուրցի ընտանիքներին [38, p. 172ff.]: Հարկ է նշել նաև, որ մասնագետների շրջանում՝ *dunnu*-ի վերաբերյալ նույնպես չկա հստակ դիրքորոշում [տե՛ս՝ 6, p. 111]: *Dunnu*-ն ընդհանուր առմամբ հասկացվում է՝ որպես խոշոր քաղաքներին մոտ փոքր ամրացված բնակավայրի տեսակ, և ըստ երևույթին կարող է հասկացվել՝

ա) անվան իմաստաբանական դաշտով՝ հիմնված *dnn* «*ուժեղ լինել*» [CAD D, p. 95f.; 6, p. 111] արմատի վրա, և

բ) նկարագրություններով, որոնք կապված են կամ համեմատվում են միտաննական ժամանակաշրջանի *dimtu* տերմինի հետ [տե՛ս 29, p. 346ff.; 25, p. 268; 31, p. 69ff.; հմմտ.՝ 38, p. 172; 7, pp. 48, 50ff.] այն փաստարկի հիման վրա, ըստ որի *dunnu*-ները նախատեսված էին երկրի ռեսուրսային բազան բարելավելու համար՝ կենտրոնական պլանավորման միջոցով, և կամ այն գործել է որպես առանձին ինստիտուտ [7, p. 48]՝ միջինասորեստանյան *dunnu*-ի՝ որպես ինստիտուտի, ակնարկի համար: Բացի այդ, հնարավոր է, որ նորանվաճ տարածքներում՝ *dunnu*-ները ծառայել են որպես պաշտպանական կառույցներ: *Dunnu*-ները հիմնականում վերաբնակեցվել են այլ տարածքների բնակչության տեղահանությունների արդյունքում: Միջինասորեստանյան *dunnu*-ի կամ ամրացված գյուղատնտեսական կալվածքի ինստիտուտը, ըստ երևույթին, անմիջականորեն կապված է արքաների կողմից իրականացված զանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականության հետ [7, p. 62; 9, p. 90]:

Միջինասորեստանյան Թել Մաբի Աբյադ, Թել Բիկա և այլ բնակավայրերն այդպիսի կալվածքներից էին: Ասորեստանի սրտից տեղահանվածներն ու ազատ մարդիկ

այստեղ միասին աշխատում էին դաշտերում և վարչական համալիրներում՝ պետության վեզիրի ղեկավարության ներքո [20, p. 242]: 1986-ից 2010 թվականներին Թել Սաբի Աբյադ *dunnu*-ն գրեթե ամբողջությամբ պեղվել է [8, p. 35]:

Dunnu-ները, ըստ երևույթին, հիմնականում գործել է որպես վարչական կենտրոն՝ վերահսկելով շրջակա գյուղատնտեսական դաշտերը: *Dunnu*-ի կողմից շահագործվող հողատարածքի ընդհանուր մակերեսը գնահատվում է մոտ 3600 հա, որը բաղկացած է եղել արոտավայրերից, ֆերմայի գյուղատնտեսական հողերից, այգիներից, չմշակված հողերից և այլն [38, p. 183; 17, p. 98f.]: Իր ծաղկման շրջանում Թել Սաբի Աբյադը տարեկան արտադրել է մոտ 300 տոննա գարի, որից 200 տոննան՝ ավելցուկ: Ըստ որոշ հաշվարկների, բնակավայրում աշխատել է մոտ 900 մարդ, որոնցից էին բուն Աշշուրից եկած ազատ մարդիկ և այլ տեղահանված բնակչություն [8, p. 36; 1, p. 39]: Թել Սաբի Աբյադի տեքստերում հիշատակվում են կավագործներ, շինարարներ, զարեջրագործներ, կաշեգործներ, հացթուխներ, վարսավիրներ, դերձակներ, դարբիններ, կրոնական ծառայողներ, գրիչներ, յուղահաններ, օծանելիք պատրաստողներ, երգիչներ, վաճառականներ, այգեպաններ և հովիվներ [38, p. 190]: Գյուղատնտեսությունից բացի, Թել Սաբի Աբյադն ուներ սահմանային վերահսկողության, հարկերի հավաքագրման, ռազմական աջակցության և տարածաշրջանով անցնող քարավանների վերահսկողության հետ կապված գործառնություններ [2, p. 64; 1, p. 39]: Վերոնշյալ ժամանակաշրջանում խեցեղենի տարածվածության, տեսակի ու նրա հաջորդականության վերաբերյալ տե՛ս՝ [22]:

4) Dimtu (աշտարակ կամ ամրացված բնակավայր՝ [CAD, D, p. 144ff.]): Ավելի փոքր բնակավայրեր, որոնք հաճախ ունեցել են պաշտպանական գործառնություններ [7, pp. 48, 50ff.]:

Վերոնշյալ բնակավայրերը կարող էին այլ գործառնություններ ևս ունենալ: Հնագիտական պեղումների արդյունքները վկայում են նույն անվանումը կրող բնակավայրերի չափերի, դասավորության և գործառնության զգալի տարբերությունների մասին [22; 17; 1]:

3. Գյուղատնտեսական բնակավայրերի կառավարում

Միջինասորեստանյան գյուղատնտեսական համայնքներն ունեին տեղական կառավարման կառույցներ: Գյուղատնտեսական համայնքապետերը համակարգում էին հարկերի հավաքագրումը, կազմակերպում համայնքային աշխատանքը և ներկայացնում գյուղի շահերը բարձրագույն իշխանությունների առջև, հանդես գալով միջնորդի դերում, և այլն: Գյուղապետերը, հավանաբար, ընտրվել են տեղական նշանավոր ընտանիքներից, բայց ծառայել են որպես պետական իշխանության ներկայացուցիչներ՝ մարմնավորելով տեղական համայնքային կառույցների ինտեգրումը ավելի լայն վարչական շրջանի մեջ: Եվ չնայած Աշշուրում վարչական կենտրոնացման աճին, գյուղական համայնքները պահպանել են համայնքային որոշումներ կայացնելու որոշակի լիազորություններ, մասնավորապես՝ ներքին հարցերի վերաբերյալ: Միջինասորեստանյան ժամանակաշրջանի գյուղական կազմակերպվածության ուսումնասիրությունը բացահայտում է բարդ համակարգ, որը հաջողությամբ ինտեգրել է գյուղական համայնքները գավառական և նահանգային շրջանների մեջ [37, pp. 1721-1780; 11, pp. 178-201]:

Գյուղատնտեսական բնակավայրերի կառավարման համակարգում, չնայած այն բանի, որ գյուղի վերակացու կամ գյուղապետը կոչվում էր *rāb ālāne* [15, p. 160ff.]՝ առաջ-

նային տեղ է գրավում *hazi'ānu*-ի (*քաղաքապետ կամ գյուղապետ*) պաշտոնը, որը համակարգում էր հարկերի հավաքագրումը, կազմակերպում համայնքային աշխատանքը և ներկայացնում գյուղի շահերը բարձրագույն իշխանություններին [15, pp. 149-158]:

rāb kapri (GAL URU.DIDI) (գյուղի վերակացու- [CAD, K, p. 190]), հանդիպում է Շուլմանու-աշարեդու I-ի (Ք.ա. մոտ 1272-1243թթ.) և Թուկուլտի-Նինուրտա I-ի (Ք.ա. մոտ 1242-1206թթ.) գահակալության շրջանի վարչական տեքստերում, ինչը ենթադրում է գյուղական կառավարման պաշտոնականացում կայսրության ընդլայնմանը զուգընթաց [18]: Այս պաշտոնյաները, հավանաբար, ընտրվել են տեղական նշանավոր ընտանիքներից, բայց ծառայել են որպես պետական իշխանության ներկայացուցիչներ՝ մարմնավորելով տեղական համայնքային կառույցների ինտեգրումը ավելի լայն վարչական շրջանակի մեջ:

4. Արհեստավորական արտադրություն, մասնագիտացված տնտեսական և գյուղատնտեսական գործունեություն

Հնագիտական և տեքստային ապացույցները պարզում են, որ Միջին Ասորեստանի գյուղերը գյուղատնտեսական գործունեությունից զատ զբաղվում էին նաև մասնագիտացված արհեստագործական արտադրությամբ: Գյուղական արհեստագործական արտադրությունը սովորաբար կենտրոնացած էր հետևյալի վրա.

1. տեքստիլ արտադրության, մասնավորապես՝ բրդյա գործվածքների, որտեղ գյուղերը պատրաստի արտադրանքը մատակարարում էին քաղաքային կենտրոններ՝ որպես հարկային պարտավորությունների մաս [28],
2. կավագործության արտադրության, որտեղ տեղական վառարանները արտադրում էին համայնքային օգտագործման համար նախատեսված օգտակար իրեր՝ ավելի ստանդարտացված ձևերի հետ միասին, որոնք ինտեգրված էին ավելի լայն բաշխման ցանցերում [22],
3. մետաղագործության, մասնավորապես այն շրջաններում, որտեղ հանքային ռեսուրսների հասանելիություն կա, չնայած սովորաբար ավելի փոքր մասշտաբով, քան քաղաքային արհեստանոցները [32]:

Այս արհեստագործական արտադրությունը սովորաբար սեզոնային էր, իրականացվում էր գյուղատնտեսական ոչ սեզոնային ժամանակահատվածներում և լրացուցիչ եկամուտ էր ապահովում գյուղական տնային տնտեսությունների համար՝ միաժամանակ բավարարելով արհեստագործական ապրանքների տեղական պահանջարկը [15]:

Ինչ վերաբերում է մասնագիտացված գյուղատնտեսական արտադրությանը, ապա հացահատիկի մշակությունից զատ, այն ներառում էր նաև՝

- ա) խաղողագործություն, մասնավորապես նախալեռնային շրջաններում, որտեղ գինու արտադրությունը արժեքավոր առևտրային ապրանք էր [35, p. 193ff.],
- բ) մրգատու այգիներ (*kirû* – [CAD, K, p. 411]), որոնք արտադրում էին արմավենի, խնձոր և այլ մրգեր, որոնք հաճախ կից էին էլիտար կալվածքներին, բայց նաև պահպանվում էին գյուղական համայնքների կողմից [29, p. 348],
- գ) բանջարանոցներ, որոնք ինտենսիվորեն մշակվում էին բնակավայրերի մոտ, ապահովելով սննդային բազմազանություն [32]:

Հողային համակարգերը զգալիորեն տարբերվում էին, վկայում են պետական սեփականություն ունեցող հողերի (*ekallātu* – [CAD, E, p. 52ff.]), տաճարային կալվածքների, համայնքային գյուղական հողերի և մասնավոր կալվածքների մասին [15]: Գյուղական շատ բնակիչներ աշխատում էին որպես վարձակալներ՝ վճարելով իրենց բերքի մի մասը որպես վարձավճար, միաժամանակ պահպանելով տնային տնտեսության համար նախատեսված հողամասերը:

Մինչդեռ գյուղատնտեսությունը կազմում էր ասորեստանյան գյուղերի մեծ մասի տնտեսական հիմքը, շատ գյուղական համայնքներ զբաղվում էին խառը գյուղատնտեսական-անասնապահական տնտեսություններով: Թել Բիլլայի և Աշշուրի վարչական տեքստերը վկայում են գյուղերի կողմից պահպանվող ոչխարների և այծերի զգալի հոտերի մասին, որոնք կառավարվում էին սեփականատերերի, գյուղական համայնքների և մասնագիտացված անասնապահների միջև բարդ պայմանավորվածությունների միջոցով [27, p. 160ff.]: Թել Շեյի Խամադի տեքստերը հիշատակում են գյուղերին կից անասնապահական մասնագետների (*nāqidu/NA.GADA* – [CAD, N/1, p. 333ff.; 29, p. 304; 34, pp. XXXIIIff., 6]), ինչը ենթադրում է գյուղատնտեսական և անասնապահական արտադրական համակարգերի ինտեգրում (29, pp. 254, 294ff.; 5, p. 130ff.): Այս ինտեգրումը գյուղերին ապահովում էր կենդանական արտադրանքով (բուրդ, կաթ, միս), միաժամանակ առաջարկելով լրացուցիչ ռեսուրսների շահագործման ռազմավարություններ:

Հնագիտական պեղումների արդյունքները տեսանելի են դարձնում վերոշարադրյալ տեղաշարժի օրինաչափությունները՝ գյուղական համայնքների կողմից տարբեր էկոլոգիական գոտիների սեզոնային շահագործմամբ: Այս հարմարվողականությունը շրջակա միջավայրի պայմաններին ստեղծեց տնտեսական դիմադրողականություն գյուղատնտեսական անորոշության պայմաններում [40, p. 40ff.]:

Միջին Ասորեստանյան պետությունը մշակել էր գյուղական համայնքներից գյուղատնտեսական ավելցուկը արդյունահանելու բարդ մեխանիզմներ: Դրանցից առաջնայինը *šibšu* [CAD, Š/2, p. 383f.] հարկն էր՝ համամասնական բերքահավաքի հարկ, որը սովորաբար կազմում էր գյուղատնտեսական արտադրանքի 10%-ը [29, pp. 277, 341; 23; 24]: Սովորական հարկումից բացի, գյուղական համայնքները պարբերաբար ենթարկվում էին պահանջների (*šedū* [CAD, Š/2, p. 258f.])՝ ռազմական գորահավաքի ժամանակ կամ պետական հատուկ նախագծերի համար: Այս արտակարգ պահանջները կարող էին զգալի ճնշում գործադրել գյուղական ռեսուրսների վրա, մասնավորապես, երբ դրանք համընկնում էին գյուղատնտեսական պակասորդի հետ: *ginā'u* [33; 29, p. 90ff.; 24; 26; 5, p. 159] նվիրաբերությունների համակարգը ներկայացնում է ռեսուրսների արդյունահանման մեկ այլ ուղի, որտեղ գյուղերը կանոնավոր նվիրատվություններ էին կատարում տաճարային հաստատություններին [29, p. 102]: Այս գոհաբերությունները պահպանում էին կրոնական պաշտամունքային գործունեությունը, միաժամանակ ինտեգրելով գյուղական արտադրողներին գաղափարախոսական համակարգերի մեջ, որոնք օրինակապես նախնում էին պետական իշխանությունը:

Միջին ասորական գյուղերը պետական աշխատանքային համակարգերին ինտեգրվել են *ilku* ծառայության պարտավորության միջոցով, որը պահանջում էր, որ

գյուղական բնակիչները աշխատուժորեն ներգրավվեն հասարակական աշխատանքներին, պետական հողերի վրա գյուղատնտեսական գործունեության և զինվորական ծառայության մեջ [29, pp. 159, 260]: Tupšikku - հարկադիր աշխատանքը հատկապես վերաբերում է շինարարական և սպասարկման աշխատանքներին, մասնավորապես ոռոգման համակարգերի վրա, որոնք օգուտ էին բերում և՛ պետությանը, և՛ գյուղական համայնքներին [29, p. 375, n. 137]: Այս աշխատանքային պարտավորությունները սովորաբար սեզոնային էին, համապատասխանում էին գյուղատնտեսական դադարներին, այդպիսով նվազագույնի հասցնելով հիմնական արտադրական գործունեության խափանումները:

Ազատ հողատերերը՝ bēl bīti, տիրապետում էին գյուղատնտեսական հողերի և հաճախ վարձում էին կախյալ բանվորներին: Նրանք պատասխանատու էին զինվորական ծառայության և պետության նկատմամբ հարկային պարտավորությունների համար [26]: Կախյալ մշակները (errēšu – [CAD, E, p. 304f.]) կամ ֆերմերները մշակում էին ուրիշների պատկանող հողեր՝ սովորաբար վճարելով վարձավճար բնեղենով կամ աշխատանքային ծառայությամբ: Գյուղատնտեսական համայնքներում աշխատում էին նաև վարձու բանվորներ՝ agru [CAD, A/1, p. 151f.]: Սեզոնային աշխատողներ, որոնք աշխատանք էին մատուցում գյուղատնտեսական գազաթնակետային ժամանակահատվածներում, մասնավորապես՝ բերքահավաքի ժամանակ: Նրանք հաճախ վարձատրվում էին հացահատիկի չափաբաժիններով: Եվ վերջապես ստրուկները՝ wardu, որոնք հարուստ հողատերերի կամ պետության սեփականությունը հանդիսացող ստրուկներ են, աշխատում էին մեծ կալվածքներում և տնային տնտեսություններում:

5. Գյուղատնտեսական տերմինաբանություն

Միջինասորեստանյան վարչական տեքստերում տարբեր տեսակի գյուղատնտեսական հողերի համար օգտագործվել է բավականին հարուստ և բարդ բառապաշար.

Որպես մշակովի դաշտի ընդհանուր տերմինը, որը առավել հաճախ օգտագործվում է զարու դաշտերի համար, կոչվում էր՝ eqlu /GÁN [CAD, E, p. 249f.]:

Մրգատու այգի կամ այգի, սովորաբար պտղատու ծառերի և բանջարանոցի համար օգտագործվել է kirû/ GIŠ.SAR - [CAD, K, p. 411ff.; 29, pp. 63, 188] եզրը:

Šutēšubu՝ ջրով ոռոգվող հող, բառացիորեն «բնակության համար նախատեսված հող (ջրով)», šēru՝ անձրևներից կախված չոր գյուղատնտեսական հող, ugāru՝ արածեցման համար օգտագործվող մարգագետին կամ խոտհարք, aširtu՝ Տասանորդ հող, որը նախատեսված է կրոնական նպատակներով:

Միջինասորեստանյան գյուղատնտեսական բառապաշարը արտացոլում է մշակաբույսերի և մշակման մեթոդների բազմազան շրջանակ:

Հացահատիկային մշակաբույսերի, բանջարեղենի և մրգատու ծառերի համար որպես օրինակներ նշենք՝

akalû/NINDA [CAD, A/1, p. 238f.; 5, № 12:26; 34, №№ 63:26; 67:32]՝ - հաց; še'u [CAD, Š/2, p. 345f.]՝ զարի, հիմնական մշակաբույս; kunāšu, և բազում այլ անվանումներ ու տեսակներ – [CAD, K, p. 536f.]՝ ցորեն; suhattu, [CAD, Š/3, p. 205], šumkû [CAD, Š/3, p. 274]՝ սոխ, šumû [CAD, Š/3, p. 298f.]՝ սխտոր; šamaššammû [CAD, Š/1, p. 306f.]՝ քնջութ, և այլն:

Մրգատու ծառերից՝ GIŠ.hašhūru [CAD, H, p.139f.; 30, № 10; 10, № 319] խնձորենի; GIŠ.tittū [CAD, T, p. 435f.]՝ թզենի; GIŠ.nurmū [CAD N/2, p. 345f.]՝ նոենի, և այլն

Մշակման գործընթացը ներառում էր գյուղատնտեսական գործունեության համար նախատեսված հատուկ տերմինաբանություն՝ erēšu՝ մշակել կամ հերկել, zarū՝ ցանել, šaqū՝ ոռոգել, ḥasādu՝ բերքահավաք կատարել, dāšu՝ կալսել:

ԵԶՐԱՀԱՆԳԱՄ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում գյուղական և գյուղատնտեսական համայնքներում մեծ թափ էր ստացել վարչական ստանդարտացումը, որի հարկային ռեժիմները, աշխատանքային պարտավորությունները և կրոնական ծեսերը ավելի ու ավելի համակարգվում էին նահանգային կենտրոնների միջոցով: Գյուղական համայնքների ինտեգրումը տերության վարչական կառուցվածքներին՝ որոշակի ոլորտներում տեղական ինքնավարությունը պահպանելով հանդերձ, ցույց է տալիս կառավարման պրագմատիկ մոտեցումը: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ վարչական ինտեգրումը տեղի է ունեցել տարածաշրջանային տատանումների հետ մեկտեղ, որոնք արտացոլում էին բազմազան շրջակա միջավայրի պայմաններին և մշակութային ավանդույթներին հարմարվողականությունը:

Միջինասորեստանյան ժամանակաշրջանի գյուղական կյանքի և գյուղատնտեսական տերմինաբանության ուսումնասիրությունը բացահայտում է բարդ գյուղական հասարակություն, որը կազմել է Աշշուրի ընդլայնման տնտեսական հիմքը:

Bibliography

1. **Akkermans, K.** *Death at the Dunnu: Investigating Funerary Variety at Middle Assyrian Tell Sabi Abyad, Syria*, Sidestone Press, Leiden. 2023, 205 p.
2. **Akkermans, P. and Wiggermann, F.** *La Forteresse de Tell Sabi Abyad – Sentinelle de l'Empire Assyrien* // *Archéologia* № 358, 1999, 56-65 pp.
3. **Bagg, A.** *Assyrische Wasserbauten: Landwirtschaftliche Wasserbauten im Kernland Assyriens zwischen der 2. Hälfte des 2. und der 1. Hälfte des 1. Jahrtausends v. Chr.* Baghdader Forschungen 24. Mainz: Philipp von Zabern. 2000, XXXIV + 420 p.
4. **Bernbeck, R.** *Steppe als Kulturlandschaft: Das 'Ağğ-Gebiet Ostsyriens vom Neolithikum bis zur islamischen Zeit.* Berlin: Dietrich Reimer Verlag, 1993. XII+375 p.
5. **Cancik-Kirschbaum, E.** *Die mittellassyrischen Briefe aus Tall Šēh Ḥamad.* vol. 4; texts, 1. Berlin: Dietrich Reimer Verlag, 1996. XI + 245 pp., 46 plates
6. **Cancik-Kirschbaum, E.** *From Text to Tell: Governance and the Geography of Political Space according to Middle Assyrian Administrative Documents* // In Dominik Bonatz (ed.), *The Archaeology of Political Spaces: The Upper Mesopotamian Piedmont in the Second Millennium BC.* Berlin: De Gruyter, 2014, 107-118 pp.
7. **Düring, B.** *Reassessing the Dunnu Institution in the Context of the Middle Assyrian Empire* // *Ancient Near Eastern Studies* № 52, 2015, 47-68 pp.
8. **Düring, B.** *At the Root of the Matter: The Middle Assyrian Prelude to Empire* // In: Tyson C., Herrmann V. (red.) *Imperial Peripheries in the Neo-Assyrian Period.* Boulder: University of Colorado Press. 2018, 47-79 pp.
9. **Düring, B.** *The Imperialisation of Assyria. An Archaeological Approach.* Cambridge: Cambridge University. 2020, XVII-185 p.
10. **Ebeling, E.** *Keilschrifttexte Aus Assur Juristischen Inhalts.* Wissenschaftliche Veröffentlichung Der Deutschen Orient-Gesellschaft 50. Leipzig: J. C. Hinrichs. 1927, VIII+156 p.

11. **Faist, B.** *Der Fernhandel des assyrischen Reiches zwischen dem 14. und 11. Jh. v. Chr.*, AOAT 265, Ugarit-Verlag, Münster, 2001, XXII + 322 p.
12. **Fales, F.** *The Rural Landscape of the Neo-Assyrian Empire: A Survey* // State Archives of Assyria Bulletin № 4(2), 1990, 89-142 pp.
13. **Füger, A. and Gries, H.** *Middle Assyrian Texts from Tall Chuēra* // In Rural Landscape of the Assyrian Heartland: Recent Research, edited by D. Morandi Bonacossi and M. Iamoni, Turnhout: Brepols, 2020, 123-138 pp.
14. **Galil, G.** *The Lower Stratum Families in the Neo-Assyrian Period*. Leiden: Brill. 2007, XVIII+403 p.
15. **Jakob, S.** *Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur: Untersuchungen*. Leiden: Brill. 2003, 587 p.
16. **Kühne, H.** *The urbanization of the Assyrian provinces* // In S. Mazzoni (ed.), Nuove Fondazioni nel Vicino Oriente Antico: Realtà e Ideologia. Giardini, 1994, 55-84 pp.
17. **Lyon, J.** *Middle Assyrian Expansion and Settlement Development in the Syrian Jezira: The View from the Balikh Valley* // in R.M. Jas (ed), Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Leiden: NINO, 2000, 89-126 pp.
18. **Machinist, P.** *Provincial Governance in Middle Assyria and Some New Texts from Yale* // Assur № 3(2), 1982, 65-101 pp.
19. **Morandi Bonacossi, D.** *The Land of Nineveh Archaeological Project* // Iraq № 70, 2008, 100-110 pp.
20. **Morello, N.** *Frontiers and Fortifications in Assyria: an Introduction* // A Conference of young researchers working in the Ancient Near East, Egypt and Central Asia, University of Torino, October 2011, Edited by G. Affanni, C. Baccarin, L. Cordera, A. Di Michele, K. Gavagnin, BAR International Series 2698, 2015, 242-247 pp..
21. **Oates, D.** *The Excavations at Tell al-Rimah* // Iraq № 30(2), 1968, 115-138 pp.
22. **Pfälzner, P.** *Mittanische und mittelassyrische Keramik: Eine chronologische, funktionale und produktionsökonomische Analyse*. Berlin: Dietrich Reimer Verlag. 1995, XL, 276 Seiten, 234 Abbildungen, X Seiten, 196 Tafeln.
23. **Postgate, J.** *Some Remarks on Conditions in the Assyrian Countryside* // Journal of the Economic and Social History of the Orient, № XVII, 1974, 225-243 pp.
24. **Postgate, J.** *Taxation and Conscription in the Assyrian Empire*. Rome: Biblical Institute Press. 1974, 441p.
25. **Postgate, J.** *Employer, Employee and Employment in the Neo-Assyrian Empire* // in M.A. Powell (ed.), Labor in the Ancient Near East, American Oriental Series 68; New Haven, 1987, 257-270 pp.
26. **Postgate, J.** *The Archive of Urad-Šerua and His Family: A Middle Assyrian Household in Government Service*. Rome: Herder. 1988, XXXIII+230p.
27. **Postgate, J.** *Early Mesopotamia: Society and Economy at the Dawn of History*. London. 1992, XXIII+367p.
28. **Postgate, J.** *Middle Assyrian to Neo-Assyrian: The Nature of the Shift* // In Assyria 1995, edited by S. Parpola and R.M. Whiting, Helsinki: Neo-Assyrian Text Corpus Project. 1997, 159-168 pp.
29. **Postgate, J.** *Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria*. Cambridge: Cambridge University Press. 2013, XI+484 p.
30. **Prechel, D., Freydank, H.** *Urkunden der königlichen Palastverwalter vom Ende des 2. Jt. Chr. Das "ArchiAssur 21101 (M7 F)*, Studien zu den Assur-Texten 5, Wiesbaden, 2014. XII + 145 p., + 6 Tabellen
31. **Radner, K.** *Das mittelassyrische Tontafelarchiv von Giricano/Dunnu-ša-Uzibi*. Ausgrabungen in Giricano 1. Subartu 14. Turnhout: Brepols, 2004, III+156p.
32. **Reculeau, H.** *Climate, Environment and Agriculture in Assyria*. Wiesbaden: Harrassowitz. 2011, XVI+290p.

33. Rosa, D. *Middle Assyrian ginā'ū offerings lists: geographical implications* //in M. G. Biga & M. Liverani, ana turri gimilli studi dedicati al Padre Werner R. Mayer, S.J. da amici e allievi, Vicino Oriente Quaderno V; Rome, 2010. 327–342 pp.
34. Röllig, W. *Land- und Viehwirtschaft am Unteren Hābūr in mittellassyrischer Zeit* (BATSH 9, Texte 3), Verlag Otto Harrassowitz, Wiesbaden, 2008. XLV+221 p.
35. Stronach, D. *Village to Metropolis: Nineveh and the Beginnings of Urbanism in Northern Mesopotamia* // In Nuove fondazioni nel Vicino Oriente antico: Realtà e ideologia, edited by S. Mazzoni, Pisa: Giardini. 1994, 85-114 pp.
36. Ur, J. *Cycles of Civilization in Northern Mesopotamia, 4400-2000 BC.* // Journal of Archaeological Research №18, 2010, 387-431 pp.
37. Veenhof, K. *In Accordance with the Words of the Stele: Evidence for Old Assyrian Legislation* // Chicago-Kent Law Review 70, № 4, 1995, 1717-1744 pp.
38. Wiggemann, F. *Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad* // in R.M. Jas (ed), Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Leiden: NINO, 2000, 171-232 pp.
39. Wilkinson, T. J. *The Structure and Dynamics of Dry-Farming States in Upper Mesopotamia* // Current Anthropology № 35(5). 1994, 483-520 pp.
40. Wilkinson T., Wilkinson, E., Ur, J. and Altaweel, M. *Landscape and Settlement in the Neo-Assyrian Empire* // Bulletin of the American Schools of Oriental Research № 340, 2005, 23-56 pp.

Ընդունվել է / Received on: **04. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **24. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռոսլան Արշակի ՑԱԿԱՆՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ roslantsakanyan@gmail.com / ORSID.org./0009-0003-6148-0933

Rooslan Arshak TSAKANYAN: PhD in History,
Researcher at the Institute of Oriental Studies of NAS, Yerevan, RA,
e-mail: roslantsakanyan@gmail.com / ORSID. org/0009-0003-6148-0933

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԴԻՄԱԽԵՂՈՒՄԸ
ՏԱՅՔՈՒՄ 16-17-ԸՆԴ ԴԴ.

(Թորթումի գավառի օրինակով) ¹

Արկադի Ա. Ակոպով

Արմեն Ս. Հայրապետյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Ուսումնասիրությունը քննության է ենթարկում Տայք պատմական նահանգում XVI–XVII դարերում տեղի ունեցած ժողովրդագրական և կրոնական փոխակերպումները, որոնք վերաբերում էին հայկական բնակչությանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել խնդրո առարկա ժամանակաշրջանում Էրզրումի նահանգի կազմում ընդգրկված հայաշատ Թորթումի գավառին: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Վերլուծություն. Հիմնվելով առաջնային աղբյուրների և օսմանյան հարկացուցակների վրա՝ աշխատանքը ներկայացնում է բնակչության դինամիկայի, գյուղական և քաղաքային ընտանիքների բարդ կառուցվածքի, ինչպես նաև Էթնո-կրոնական ժողովրդագրության զարգացման համապարփակ վերլուծություն՝ լայնածավալ քաղաքական և ռազմական ճնշումների պայմաններում: Գործածված տվյալները ցույց են տալիս, որ այդ ժամանակահատվածում Տայքում տեղի է ունեցել խոր ժողովրդագրական ճգնաժամ՝ բնորոշվող ընդհանուր բնակչության թվի զգալի անկմամբ. բազմաթիվ գյուղեր ամայացել կամ անցել են մուսուլման ներգաղթյալների ազդեցության ոլորտ: Այս իրադարձություններին ուղեկցել են նաև էական կրոնական փոփոխություններ, որոնք հանգեցրել են հայկական բնակչության մի մասի աստիճանական իսլամացմանը և քրիստոնյա մեծամասնության վերափոխմանը փոքրամասնության: Ուսում-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 25RG-6A091 գիտական թեմայի շրջանակներում:

նախընտրվել են այն գործոնները, որոնք նպաստել են այս գործընթացներին, ներառյալ պատերազմները, վերաբնակեցումները և Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը: *Հեղինակների ներդրումը*. Հոդվածը գրվել է հեղինակների համատեղ ջանքերով: *Արդյունքներ*. XVII դարի առաջին կեսին Տայքում արձանագրված ժողովրդագրական ճգնաժամի հետևանքով տարածաշրջանի բնակչությունը նվազեց շուրջ երկու երրորդով: Այդ գործընթացին զուգահեռ ձևավորվեցին նաև էթնո-կրոնական խորքային փոփոխություններ. նախկինում գերիշխող քրիստոնյա մեծամասնությունը աստիճանաբար վերածվեց փոքրամասնության, իսկ մահմեդական տարրը հաստատեց իր բացարձակ գերակայությունը:

Բանալի բառեր` *Տայք, հայկական բնակչություն, ժողովրդագրական փոփոխություններ, էթնո-կրոնական փոխակերպում, վերաբնակեցում, իսլամացում, Օսմանյան կայսրություն, միգրացիա, ժողովրդագրական ճգնաժամ, քրիստոնեություն:*

Ինչպես հղել` Ակոպով Ա., Հայրապետյան Ա. *Ժողովրդագրական պատկերի դիմախեղումը Տայքում 16-17-րդ դարերում (Թորթումի գավառի օրինակով)* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28): 30- 44 էջեր:

DOI:10.52971/18294316-2025.28.2-30

DISTORTION OF THE DEMOGRAPHIC LANDSCAPE IN TAYK IN THE 16TH–17TH CENTURIES (A Case Study of the District of Tortum)

Arkadi A. Akopov

Armen S. Hayrapetyan

Shirak Center for Armenian Studies, National Academy of Sciences, Gyumri, RA

Abstract

Introduction: The study examines the demographic and religious transformations that took place among the Armenian population in the historical province of Tayk during the 16th–17th centuries. Particular attention is given to the Armenian-populated district of Tortum, which was part of the Erzurum province during the period under consideration. **Methods and Materials:** The research employs historical-comparative methods, as well as the analysis and correlation of primary sources. **Analysis:** Based on primary sources and the Ottoman tax registers, the study provides a comprehensive analysis of population dynamics, the complex structure of rural and urban households, and the development of ethno-confessional demography under conditions of extensive political and military pressure. The available data indicate that during this period Tayk experienced a profound demographic crisis, characterized by a significant decline in the total population. Many villages were depopulated or fell under the influence of Muslim immigrants. Those events were accompanied by significant religious changes that led to the gradual Islamisation of part of the Armenian population and the transformation of the Christian majority into a minority. The study also explores the factors that contributed to those processes, including wars, resettlements, and the Ottoman Empire's taxation policy. **Results:** In the first half of the 17th century, Tayk underwent a

deep demographic crisis that resulted in a reduction of the region's population by nearly two-thirds. Parallel to this process, profound ethno-religious transformations occurred: the formerly dominant Christian majority gradually turned into a minority, while the Muslim element established absolute predominance. *Authors' contribution:* The article was written through the joint efforts of the authors.

Key words: *Tayk, Armenian population, demographic changes, ethno-confessional transformation, resettlement, Islamization, the Ottoman Empire, migration, population crisis, Christianity.*

Citation: Akopov A., Hayrapetyan A. *Distortion of the Demographic Landscape in Tayk in the 16th–17th Centuries (A Case Study of the District of Tortum).* // “Scientific Works” of SCAS NAS of RA. Gyumri, 2025. Vol. 2(28), 30–44 pp., DOI:10.52971/18294316-2025.28.2-30

Ն Ա Խ Ա Ր Ա Ն. Պատմական Հայաստանի հյուսիսարևմտյան նահանգ Տայքը XVI-XVII դարերում ենթարկվեց էական քաղաքական, ժողովրդագրական և կրոնական փոփոխությունների: Դա պայմանավորված էր Օսմանյան կայսրության տարածքային ընդլայնմամբ, ինչպես նաև կայսրության ներսում տեղի ունեցած վարչական, քաղաքական և սոցիալական վերափոխություններով, որոնք լուրջ ազդեցություն ունեցան Տայքի ժողովրդագրական և էթնո-կրոնական պատկերի վրա՝ հատկապես հայ բնակչության կրոնական պատկանելության և ինքնության փոփոխության տեսանկյունից: Հոդվածում դիտարկվում է պատմական նահանգն Օսմանյան կայսրության վարչական և քաղաքական համակարգում, բնակչության հաշվառման մեթոդաբանական առանձնահատկությունները, էթնո-կրոնական պատկերի ձևավորումը, ինչպես նաև XVII դ. սկսված իսլամացման գործընթացը:

Հոդվածի գիտական նորությունը դրսևորվում է մի քանի մակարդակներում: Նախ՝ ի տարբերություն նախորդ ուսումնասիրությունների, այն անդրադառնում է Տայքի իսլամացման խնդրին՝ դիտարկելով ոչ միայն վարչական և քաղաքական, այլև տեղական սոցիալ-տնտեսական գործոնները: Բացի այդ, հոդվածում օգտագործված են սկզբնաղբյուրներ, որոնք մինչ այժմ մասնագիտական գրականության մեջ համալիր վերլուծության չեն ենթարկվել: Հատուկ ուշադրություն է դարձվել Օսմանյան հարկային մատյաններում արտացոլված վիճակագրական տվյալների վերլուծությանը: Հոդվածը նպատակ ունի խթանել հետաքրքրությունը թեմայի նկատմամբ ինչպես հայագիտության, այնպես էլ օսմանագիտության ոլորտներում:

Տայքն Օսմանյան կայսրության վարչաքաղաքական համակարգում

Օսմանյան կայսրությունը, որը ձևավորվեց XIII դարի վերջում, իր ուշադրությունը դեպի Արևելք դարձրեց XIV դարի վերջին քառորդին: XV դ. երկրորդ կեսից սկսվեցին օսմանցիների ներխուժումները Հայաստանի արևմտյան նահանգներ: XVI դարի սկզբից սկսած՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև ծավալվեց կատաղի մրցակցություն Հայաստանի վրա տիրապետություն հաստատելու համար: Մոտ մեկուկես դար տևած պատերազմները ավարտվեցին 1639 թվականի Քասր-ի Շիրինի հաշտության պայմանագրով, որը ամրագրեց օսմանյան բանակի հաղթանակը:

Արևմտյան հայկական նահանգների նվաճումից հետո օսմանյան իշխանությունները ձեռնարկեցին միջոցառումներ՝ դրանք լիովին ներառելու կայսրության վարչական և քաղաքական համակարգի մեջ: Այս ծրագրի իրագործման հիմնական գործիքը

եղան պարբերական վարչատարածքային բարեփոխումները, որոնք ուղղված էին ոչ միայն վարչաքաղաքական կառուցվածքի, այլև տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի փոփոխությանը [13, էջ 285]: Նվաճված տարածքների բաժանումը մեծ ու փոքր վարչական միավորների՝ նահանգների և գավառների, ծառայում էր կայսրության վերահսկողությունը ամրապնդելու և տարածաշրջանի էթնո-ժողովրդագրական կառուցվածքը համակարգված կերպով փոխելու նպատակին:

Թուրք պատմիչ Ֆերիդուն բեյի տեղեկությունների համաձայն՝ XVI դարում պատմական Տայքի տարածքը ներառված էր Էրզրումի, Ախալցխայի և Կարսի էյալեթների կազմի մեջ, մասնավորապես՝ Թորթումի և Մամրվանի գավառները միացվել էին Էրզրումին, Օլթիի և Բերդագրակի գավառները՝ Ախալցխային, իսկ Գյոլեն՝ Կարսին [5, էջեր 219-220]: Սակայն պետք է նշել, որ Ֆերիդուն բեյի տեղեկությունները թերի են, քանի որ հեղինակը չի անդրադառնում Տայքի մի շարք այլ շրջանների ճակատագրին: Կարելի է ենթադրել, որ պատմական նահանգի մնացած հատվածներն էլ ներառվել են նշված վարչական միավորների կազմի մեջ:

Տայքի XVI դարի վարչական և ժողովրդագրական պատկերի վերաբերյալ հետաքրքիր տվյալներ են պահպանվել նաև «Գուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում», որտեղ հիշատակվում են Բանակի սանջակը՝ իր Բանակ, Քիամիսիս և Փանագլերտ նահիեններով [20, էջեր 558-559], Օլթիի սանջակը՝ իր Քեթխուրթ, Մզվարի, Չրդիլի, Բարդուս, Անձավ, Արսադ, Չանուչուր նահիեններով [20, էջեր 595-603], ինչպես նաև՝ Փոքր Արդահան գավառը [20, էջ 499]:

Նվաճված շրջաններում վարչական և տարածքային բարեփոխումները շարունակվեցին նաև XVII դարում: Ըստ Քյաթիբ Չելեբիի զեկույցի՝ XVII դարի առաջին կեսին իրականացված բարեփոխումների արդյունքում պատմական Տայքի տարածքը բաժանվեց Ախալցխայի և Էրզրումի էյալեթների միջև: Ախալցխայի էյալեթը ներառում էր Սոքեն (Օլթի), Բանակը, Մամրվանը, Բերդագրակը և Գյոլեն՝ որպես Փոքր Արդահանի մաս, մինչդեռ Էրզրումի էյալեթին էին պատկանում Թորթումն ու Մամրվանը [5, էջ 41]:

Թուրք պատմիչ Էվլյա Չելեբիի վկայությամբ՝ XVII դարի երկրորդ կեսին տարածաշրջանում իրականացվեց հերթական վարչական բարեփոխումը: Տայքին պատկանող տարածքները միացվեցին Օլթի, Բանակ, Բերդագրակ, Արտանուջ և Լիվանե գավառներին [6, էջ 26]: Թորթումն ու Մամրվանը մնացին Էրզրումի էյալեթի կազմում, իսկ Գյոլեն՝ որպես Փոքր Արդահանի գավառի մաս, կրկին ներառվեց Կարսի էյալեթի մեջ [6, էջեր 26-27]:

Օսմանյան իշխանությունների կողմից Արևմտյան Հայաստանում իրականացված հաջորդ վարչատարածքային բարեփոխումը տեղի ունեցավ XVII դարի վերջին: Ըստ «Չըլդըրի էյալեթի Ջաֆա դավթարի»՝ Տայքի բոլոր գավառները ներառվեցին Ախալցխայի էյալեթի կազմում՝ բացառությամբ Թորթումի գավառի, որը, ինչպես նախկինում, մնաց Էրզրումի էյալեթի կազմում [22, էջեր 100-204]:

Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում վարչատարածքային բարեփոխումները շարունակվեցին մինչև XX դարի սկիզբը: Դրանց հաճախականությունը պայմանավորված էր կայսրության ռազմական և քաղաքական շահերով և նպատակ

ուներ ամրապնդելու ու կայունացնելու կենտրոնական իշխանության վերահսկողությունը սահմանային շրջանների նկատմամբ:

Տայքի էթնո-կրոնական պատկերը XVI դ. երկրորդ կեսին

XVI–XVII դարերում Տայքում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն վերականգնել Հյուսիսային Հայաստանի ամբողջական ժողովրդագրական պատկերը, այլև բացահայտել սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը և գնահատել էթնո-դավանաբանական փոփոխությունների ազդեցությունը: Մինևույն ժամանակ, ուսումնասիրությունը բարդանում է այն հանգամանքով, որ մեզ հասած աղբյուրները հատվածական են, իսկ դրանցում պարունակվող տեղեկությունները՝ հաճախ հակասական:

Տայքի և մասնավորապես՝ Թորթումի գավառի բնակչության մասին վիճակագրական տվյալներ պահպանվել են տարբեր աղբյուրներում: Դրանց թվում են օսմանյան վարչական և հարկային մատյանները, հայ մատենագիտների վկայությունները և եկեղեցական մատյանները: Սակայն այս աղբյուրներից յուրաքանչյուրը ստեղծվել է որոշակի նպատակի համար և սահմանափակ արժեք ունի վիճակագրական տեսանկյունից: Օսմանյան հարկային ցուցակների հիմնական նպատակը հարկերի հավաքագրումն էր, ուստի դրանք սովորաբար ընդգրկում էին միայն հարկատու տղամարդկանց: Ինչ վերաբերում է պատրիարքական մատյաններին, ապա դրանք երբեք ամբողջությամբ չեն հրատարակվել, իսկ դրանցում հայերի թիվը դիտավորյալ նվազեցվել է՝ հարկային բեռը թեթևացնելու նպատակով [1, էջեր 117-118]: Սեռային տարբերակման, ընտանիքի կազմի և բնակչության ճշգրիտ հաշվառման առումով թուրքական պաշտոնական տարեգրքերն (սալնամե) ու մարդահամարները նույնպես չափազանց անկատար էին: Պաշտոնյաները հաճախ բավարարվում էին գյուղական ավագների տրամադրած տեղեկություններով, որոնք դիտավորյալ չափազանցված էին և զգալիորեն տարբերվում էին իրականությունից:

Այս իրավիճակում առավել հուսալի մեթոդ է համարվում գավառների և էյալետների գյուղերի ընտանեկան հաշվառումը՝ յուրաքանչյուր ընտանիքի անդամների միջին թվաքանակի որոշմամբ: Ըստ աղբյուրների՝ հայկական գյուղացիական ընտանիքներն սովորաբար մեծ էին: Քաղաքներում ընդարձակ ընտանիքները հազվադեպ էին անցնում 15–20 հոգուց, մինչդեռ գյուղերում հանդիպում էին 30, 40 և անգամ 50 հոգանոց տնտեսություններ [3, էջեր 216-217]: Այս երևույթը բացատրվում է ոչ միայն հողի մասնատումից խուսափելու անհրաժեշտությամբ, այլև սեփականության և անձնական անվտանգության ապահովման ձգտումով: Ակադեմիկոս Ա. Մելքոնյանի դիտարկմամբ՝ հայկական ընտանիքում միջին անդամների թիվը 8 էր, թուրքականում՝ 6–7, իսկ քրդականում՝ ավելի քիչ [11, էջեր 111-112]: Մեր կարծիքով, Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների համար բնորոշ հաշվարկային բանաձևը կիրառելի է նաև Տայքի դեպքում:

Համեմատելով հայերեն, վրացերեն և օսմանյան աղբյուրները՝ կարելի է հստակ տեսնել, որ թեև նախորդ դարաշրջաններում Տայքում տեղի էին ունեցել հայերի համար անբարենպաստ էթնիկական փոփոխություններ, այնուամենայնիվ մինչև առնվազն XVI դարի երկրորդ կեսը բնակչության մեծամասնությունը կազմում էր տեղական հայկական բնակչությունը (թե՛ առաքելական, թե՛ ուղղափառ): Օսմանյան հարկային մատյանների հա-

մակդմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության բացարձակ մեծամասնությունն ուներ հայկական կամ վրացական անուններ կամ անուններ, որոնք լայնորեն տարածված էին այդ էթնիկ խմբերի շրջանում [19, էջեր 332-392; 21, էջեր 98-160 և 237-308]:

Թեև օսմանյան հարկային մատյանները ամբողջական չեն և լիարժեք չեն արտացոլում կայսրության բնակչության էթնիկական, ժողովրդագրական և կրոնական կազմը, այնուամենայնիվ դրանք առաջին վիճակագրական փաստաթղթերն են և բացառիկ կարևորություն ունեն ժողովրդագրական գործընթացները ուսումնասիրողների համար:

Թորթումի գավառը 1574 թ. Օսմանյան հարկային գրանցամատյանով ունեցել է 73 բնակավայր և 1,680 ծուխ [21, էջեր 237–293]՝ մոտ 13,440 բնակչով: Հայերը տեղաբաշխված էին անհավասարաչափ. նրանք կազմում էին բնակչության ավելի քան երկու-երրորդը Թորթումի գավառի Թորթում, Լսկավ և Աղջրիկ նահիեներում, մինչդեռ հյուսիսում՝ Խախուի նահիեում, նրանց բաժինը փոքր էր: Այս տարածքում զգալի թվով վրացի բնակչություն կար, ինչը կարելի է բացատրել Տայքի կարևոր հոգևոր կենտրոնների՝ Օշկվանք և Խախու վանական համալիրների առկայությամբ: Ի դեպ, Թորթումի գավառում և, ինչու չէ, ողջ Տայքում ապրող քաղքեղոնական կամ ուղղափառ ազգաբնակչության մասին հայ պատմագիտության մեջ կա հետաքրքիր տեսակետ: Հայ պատմիչ Հակոբ Կարնեցին գրում է. «Եւ էին բնակիչք երկրիս կէս Հայ ազգաւ և կէսն կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին» [12, էջ 18]: Խնդրին անդրադարձել է նաև Հ. Տաշյանը, ում կարծիքով. «Հայ ազգաւ և կրօնիւք Վրացի»՝ հակադրութիւն են կրօնական տեսակետով, ոչ թէ ազգային, ինչպէս արդէն «հայի լեզուաւ» կը ցուցնէ: Ասոնք «վրացի» էին այնպէս՝ ինչպէս այսօր «Firengi» կամ «Փրանկ» Հայեր: Ինչպէս Բիւզանդեանց իշխանութեան ներքև ունեցած ենք նաև շատ բազմաթիւ «հոռոմ» Հայեր, որոնցմէ այսօր ալ կան յունաձէս, բայց տակաւին հայախօս Հայ-Հոռոմներ, նոյնպէս պատմութեան բերմամբ ունեցած ենք «կրօնիւք վրացի» Հայեր – չհաշուելով լիովին վրացած՝ ինչպէս նաև յունացած ու կորսուած Հայերու բազմութիւն մը» [14, էջեր 68-69]:

Ընդհանուր առմամբ, պատմական Տայքի համար ունենք հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1.

Տայքի բնակչությունն ըստ գավառների (XVI դ. երկրորդ կես)

№	Գավառը	Բնակավայրերի թիվը	Ծխերի թիվը	Քրիստոնյա	Մահմեդական	Բնակչության թիվը
1	Թորթում	73	1,680	1,344	336	13,104
2	Բերդագրակ	60	2,299	2,299	-	18,392
3	Պարխար	27	810	648	162	6,318
4	Տայոցքար	40	1,258	941	317	9,747
5	Օլթի	101	3,082	2,940	142	24,514
6	Մամրվան	96	1,555	1,244	311	12,129
7	Բանակ	61	1,790	1,432	358	13,962
8	Գյոլե	40	1,200	960	240	9,360
Ընդամենը		498	13,674	11,808	1,866	107,526

Տայքի մի շարք բնակավայրերում նկատվել է յուրահատուկ երևույթ, որը գործնականում չի հանդիպում Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում: Դա վկայում է ընտանիքի շրջանակներում առկա զուգահեռ անունային (օնոմաստիկ) ավանդույթի գոյության մասին: Օրինակ կարելի է բերել այն դեպքերը, երբ հայրը կրում է վրացական անուն, իսկ որդին՝ հայկական, կամ նույն ընտանիքի եղբայրները տարբեր էթնիկական խմբերի անուններ ունեն: Այսպես, Թորթումի գավառի Քջխա գյուղի բնակիչ Իբրահիմը, ով Իվանի որդին էր, իր որդուն տվել է Հակոբ անունը: Օջքվանք գյուղի բնակիչ Գիորգին երկու որդի է ունեցել՝ Օվկեթ և Հակոբ, իսկ Բեթղար գյուղի բնակիչ Գիորգիի հայրը Խաչատուր էր [21, էջեր 249, 258, 285–286]: նմանատիպ բազմաթիվ դեպքերի ենք հանդիպում Տայքի մյուս գավառներում ևս: Բանակի գավառի Թխասքուրք գյուղի բնակիչ Բեքայի որդին Ազատն էր, Նորբերդ գյուղի քահանայի երկու որդիներից մեկը Հովսեփ անունն է ունեցել, մյուսը՝ Սաբա [19, էջեր 344, 386]: Բերդագրակ գավառի Կիսկիմ գյուղի բնակիչ Սաբան ունեցել է Ավագ անունով որդի: Որջնհաղ գյուղի բնակիչ Գրիգորի հայրանունը Մախորոբեղ էր [21, էջեր 297, 302]: Մամրվան գավառի Խանիրվերք գյուղի բնակիչ Մարտիրոսի հայրանունը Խվաջե էր, Վերին Խորխոր գյուղի բնակիչ Ղազարի հայրանունը Գիորգի էր, Գոմպոր գյուղի բնակիչ Կարապետի եղբայրը Մախորոբեղն էր [21, էջեր 220, 229, 230]: Այսպիսի փաստերը վկայում են ինչպես խառն բնակչություն ունեցող գյուղերի գոյության, այնպես էլ երկու էթնիկական խմբերի միջև ոչ միայն հանդուրժողականության, այլև բարեկամական հարաբերությունների առկայության մասին:

Այնուամենայնիվ, հարկային մատյանների վրաց թարգմանիչներ Ս. Ջիկիան և Ն. Շենգելիան, փորձելով ցույց տալ վրացական տարրի գերակայությունը տարածաշրջանում՝ եթե ոչ բացարձակ գերիշխանությունը, ապա գոնե դրա լայն ներկայացվածությունը, հաճախ «վրացացրել» են հայերին՝ ներկայացնելով «Գրիգոր» և «Գիրկոր» անունները վրացական ձևերով՝ «Գրիգուլ» և «Գիրկուլ»:

Ինչ վերաբերում է Տայքի տարածքում հանդիպող թյուրքական և թյուրքանման անձնանուններին, որոնք հայտնվում են հիմնականում հայկական միջավայրում, ապա դրանց առկայությունը կարելի է բացատրել այն փաստով, որ նման անունները մի ժամանակ լայնորեն տարածված էին հենց հայերի շրջանում: Արդյունքում, նույն ընտանիքում կարող էին հանդիպել թե՛ հայկական, թե՛ թյուրքական անուններ [16, էջեր 224–225]: Օրինակ՝ Մամրվանի գավառի Օլունոնուս գյուղում Նուրխաղ անունով մի մարդու որդիներից մեկը կոչվել է Մարտիրոս, իսկ մյուսը՝ Սուլթան, Մամրվանի մեկ այլ բնակիչ Մանվելը ունեցել է Կարագյոզ հայրանունը [21, էջեր 213, 216]:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է պնդել, որ XVI դարի երկրորդ կեսին Տայքը շարունակում էր պահպանել իր հայկական բնույթը և մնում էր հայկական ինքնության պահպանման կարևոր կենտրոն: Բնակչության մեծամասնությունը հայեր էին՝ առաքելական և քաղկեդոնական:

Ժողովրդագրական գործընթացները Տայքում XVII դարում

Արևմտյան Հայաստանի, և մասնավորապես՝ Տայքի հայ բնակչության համար XVI–XVII դարերի թուրք–պարսկական պատերազմները կործանարար հետևանքներ ունեցան: Ռազմական գործողություններն ուղեկցվում էին զանգվածային ավերածու-

թյուններով և բնակչության բռնի տեղահանությամբ: Ժամանակակիցը վկայում է, թե «Թուլին ՌԼԹ (1590) էր, Արգում քաղաք այլազգի որդիքն ի պատիւ կոչեցին զքրիստոնէայ... և մեծ սուգ եղև քաղաքին, քանզի զԹորդումու ձորերն տիրեցին» [2, էջ 102]: Այս իրադարձությունը վկայում է այն ծանր իրավիճակի մասին, որում հայտնվել էին հայաբնակ գավառները XVI–XVII դդ. սահմանային բախումների հետևանքով:

Հայ ազգաբնակչության բռնի տեղահանման առավել լայնածավալ դրսևորումը կապված է պարսից շահ Աբբաս I-ի անվան հետ: 1604 թ., օսմանյան ներխուժման վտանգի պայմաններում, շահի հրամանով իրականացվեց պատմագրության մեջ «մեծ սյուր-գյուն» անվամբ հայտնի հարկադիր տեղահանությունը: Ժամանակակիցների վկայությամբ հայրենի բնակավայրերից բռնի տեղահանված շուրջ 300.000–350.000 հայեր քշվեցին Սեֆյան Իրանի կենտրոնական շրջաններ: Զաքարիա Վանեցին անդրադառնալով այդ ողբերգական իրադարձությանը նշել է. «Ձի էլ հրաման յարքայէն, զի երթիցէն և գերեցէն գտունս հայոց: Եվ գնացեալ գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզըւան, զԱղջաղալեն, զԱլաշկերտ, զԳաւգ(սու), զԱիքլիս, զՏումանիս, զՉղըր, զԱրտախան, **զԿոլայ, զՇաքի, զՇրւան, զՇամախի, զԲանակ, զՓասկեր (Փանակերտ), զՅուխտիք, զՄամրվան,** (ընդգծումները մերն են) զԹարխուն, զՍեպեր, զԵրեւան, զՆախչըվան, զԶուղայ, զԱդրակ, զՍալամաստ և այլ բազում գեաւոյ և քաղաք, զոր ոչ կարենք ընդ գրով արկանել: Ձի Դավրեժոյ մինչև ի Թեոդորոյաւլիս, որ Արգըռում կոչեն անմարդաբնակ արարի, և Երեւանայ մինչև Թարվեզ 60.000 գերի արարին» [8, էջեր 411–412]:

Այս բռնագաղթը հայ ժողովրդի ճակատագրում դարձավ ժողովրդագրական կտրուկ շրջադարձի պատճառ, բազմաթիվ հայկական գավառներ ամայացան, լրջորեն խաթարվեց ավանդական գյուղացիական և քաղաքային կյանքը:

Քառորդ դար անց պատմությունը կրկնվեց. Ռազմական հաջողության չհասնելով Ապազի շրջանում՝ օսմանյան զորքը Խալիլ փաշայի հրամանով ավերեց Երզնկան, Էրզրումը, Բասենը, **Թորթումը** և հարակից գավառներն ու տեղահանեց քրիստոնյա (հայ) ազգաբնակչությանը [9, էջ 327]:

Նվաճված ժողովուրդների վրա լիակատար վերահսկողություն հաստատելու նպատակով սուլթանական կառավարությունը սկսեց օկուպացված տարածքները վերաբնակեցնել թյուրքալեզու և իրանալեզու ցեղախմբերով: Քրդերի վերաբնակեցման ցանկությանը ի պատասխան՝ սուլթան Մուրադ IV-ը 1635 թ. կազմակերպեց նրանց գանգվածային տեղաշարժը դեպի Էրզրումի էյալեթի հյուսիսային շրջաններ: Եթե նախկինում քրդերը հյուսիս էին անցնում ամառվա ամիսներին՝ յայլաներում իրենց մեծաքանակ հոտերն արածեցնելու համար, ապա այժմ նրանք տեղավորվեցին հայաթափված բնակավայրերում և անցան մշտական բնակության: Ավելին՝ տեղի հայ ազգաբնակչությունը այժմ արդեն պարտավոր էր ամբողջ ձմեռ պահել ինչպես քրդերին, այնպես էլ նրանց անասուններին: [1, էջ 134]:

Օսմանյան իշխանությունների նմանատիպ գործելառձն ուներ մեկ նպատակ՝ փոխել Արևմտյան Հայաստանի էթնիկ դիմագիծը: Եվ իրոք՝ պատերազմների և բռնագաղթերի արդյունքում Տայքի հայ ազգաբնակչության թիվը կրճատվեց: Դա հասկապես

ցայտուն է երևում, երբ համեմատում ենք 1574 և 1642 թթ. հարկացուցակներում առկա վիճակագրական տվյալները: Որպես օրինակ բերենք Թորթումի գավառը.

Աղյուսակ 2.

**Թորթումի գավառի բնակչության կրոնական կազմի համեմատական տվյալներ
(1574թ. և 1642թ.)**

N	Բնակավայրի անվանումը	1574 թ.			1642		
		Միսերի թիվը	Քրիստոնյաներ	Մահմեդականներ	Միսերի թիվը	Քրիստոնյաներ	Մահմեդականներ
1	Թորթում (ռաբաթ և կենտրոն)	54	50	4	22	18	4
2	Պոչենց	38	30	8	9	1	8
3	Սխտորուտ	39	31	8	3	-	3
4	Վանք	16	13	3	-	-	-
5	Տանքար	7	6	1	3	1	2
6	Չերքիլ	29	23	6	1	1	-
7	Մասրաքուլ	6	5	1	-	-	-
8	Սուքուրեք	12	10	2	-	-	-
9	Քարնաղուս	9	7	2	3	2	1
10	Գիրքուրնիք	6	5	1			
11	Վերին Լսկավ	87	80	7	12	10	2
12	Վարին Լսկավ	52	48	10	6	2	4
13	Նիխաղ	60	35	25	11	-	11
14	Բեթղար	15	12	3	4	-	4
15	Բշնկոց	13	10	3	-	-	-
16	Օսքիքավ	30	24	6	-	-	-
17	Աղասեր	-	-	-	9	4	5
18	Սինաք	12	10	2	-	-	-
19	Ղազարենց	15	12	3	4	-	4
20	Միհաջուր	-	-		8	4	4
21	Բարիլիս	12	10	2	-	-	-
22	Կաթնաջուր	-	-	-	2	2	-
23	Խոզբրիկ	30	24	6	14	1	13
24	Պար	16	13	3	14	8	6
25	Քեջնեթ	77	62	10	-	-	-
26	Մեծ Աղջրիկ	32	26	6	2	-	2
27	Պոչենց	29	23	6	-	-	-
28	Քցխա	102	82	20	22	1	21
29	Աղջրիկ	25	20	5	-	-	-
30	Քիսմաս	14	11	3	-	-	-
31	Չանկրես	44	35	9	-	-	-

Ժողովրդագրական պատկերի դիմախեղումը Տայքում 16-17-րդ դդ.

32	Արջուս	7	6	1	-	-	-
33	Այգեկ	33	28	5	5	-	5
34	Զինակեր	24	19	5	8	2	6
35	Վախթիկանց	16	13	3	9	3	6
36	Խաշուտ	15	12	3	7	5	2
37	Գեղիկ	18	14	4	4	1	3
38	Նորշեն	27	22	5	15	7	8
39	Վարդիշեն	16	13	3	-	-	-
40	Արջունիս	8	6	2			
41	Սաղեր	-	-	-	6		6
42	Էգրեկ	-	-	-	2	-	2
43	Մեղրագոմ	-	-	-	3	-	3
44	Աղբյուրիկ	-	-	-	5	-	5
45	Մաքիձոր	-	-	-	7	2	5
46	Էյթես	-	-	-	11	-	11
47	Փառիձոր	-	-	-	14	-	14
48	Աղբիձոր	-	-	-	5	3	2
49	Խախու	43	34	9	44	23	21
50	Վխիկ	55	44	10	17	-	17
51	Ընկուզեք	26	21	5	18	11	7
52	Ապրնես	31	25	6	12	-	12
53	Գեղուտ	19	15	4	3	-	3
54	Անի	8	6	2	-	-	-
55	Բարդոսանց	21	17	4	-	-	-
56	Կաղնուտ	26	21	5	7	-	7
57	Օղիկ	50	40	10	6	1	5
58	Սուրբօհան	14	11	3	2	1	1
59	Վերինգեղ ²	16	13	3	8	6	2
60	Վաղավեր	15	12	3	-	-	-
61	Կողաշեն	10	8	2	-	-	-
62	Ագորդ	27	22	5	5	-	5
63	Օսեթ	13	10	3	17	-	17
64	Օթղա	23	18	5	17	-	17
65	Իս	20	16	4	-	-	-
66	Օշքվանք	30	24	6	26	3	23
67	Օշք	43	34	9	31	-	31
68	Զխիկ (Ծխիկ)	30	20	10	16	-	16
69	Էշկիձոր	20	12	8	16	-	16
70	Խարս	30	24	6	30	-	30
71	Լեք	20	16	4	18	-	18

² Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը, որը գրվել է 1663 թ. Վերինգյուղում Արրահամ քահանայի կողմից, վկայում է այնտեղ կաթողիկե եկեղեցու ստկայության մասին: Տե՛ս Մատենադարան, Ձեռագիր № 8624, էջ 96բ:

Ակոսյով Արկադի, Հայրապետյան Արմեն

72	Թև	25	16	9	11	-	11
73	Խարթիսա	20	16	4	10	-	10
Ընդամենը Թորթումի գավառում		1680	1344	336	560	140	444

Փաստորեն, եթե 1574 թ. տվյալներով Թորթումի գավառում հաշվառված էր ընդհանուր առմամբ 1680 ծուխ, որոնցից 1344-ը (մոտ 80%) քրիստոնյա էին, իսկ 336-ը (մոտ 20%)՝ մահմեդական, ապա 1642 թ. նույն գավառում արձանագրվում է ընդամենը 560 ծուխ, որոնցից 140-ը (մոտ 25%) քրիստոնյա էին, իսկ 444-ը (մոտ 75%)՝ մահմեդական: Ծխերի ընդհանուր թիվը նվազել էր գրեթե երեք անգամ, իսկ բնակչության մեջ նախկինում գերակշռող քրիստոնյա մեծամասնությունը վերածվել էր փոքրամասնության:

Հարկացուցակների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ քրիստոնյաների թիվը նվազել է մոտ 89,6%-ով՝ 1344-ից իջնելով մինչև 140 ծուխ: Մահմեդականների թիվը, ընդհակառակը, աճել է շուրջ 32,1%-ով՝ 336-ից հասնելով 444-ի: Սա վկայում է ոչ միայն բնակչության թվի կտրուկ անկման, այլև էթնիկ և կրոնական կազմի որակական վերափոխման մասին:

Ի տարբերություն 1574 թ.-ի՝ 1642 թ. վիճակագրական փաստաթղթերում բազմաթիվ բնակավայրեր այլևս չեն հանդիպում, ինչը կարելի է մեկնաբանել որպես դրանց ավերում կամ բնակչության լիակատար արտագաղթ: Մի շարք գյուղերում կտրուկ աճում է մահմեդականների թիվը: Օրինակ՝ Քցիս գյուղում 1574 թ. առկա էր 102 տնտեսություն, որոնցից 1-ը մահմեդական, իսկ 1642 թ.՝ ընդամենը 22 ծուխ, որոնցից 21-ը մահմեդական [17, էջ 30]:

Քրիստոնյաների փոքրաթիվ մնացորդները հիմնականում պահպանվել էին լեռնային և համեմատաբար մեկուսացված գյուղերում, որտեղ մահմեդական բնակչության ներթափանցումը խիստ սահմանափակ էր:

1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրի կնքումից հետո թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ նվաճված ժողովուրդների մահմեդականացման գործընթացին: Հակոբ Կարնեցիի գրում է. «Ի բազմանալն Հագարացոցն ի ժամանակս մեր ի թուականիս 1643 ամին եղև հրաման մեծ կայսերեն Ստամպոլայ ի վերայ մոլլայի միոջ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արզրումայ և փաշաներաց՝ Ջաֆար անուն ժանտաբարոյ և քրիստոնեից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ երկիրս Արզրումայ: Եվ ելեալ արար դաւտար և կապեաց ծանր խարաճ, և ելին մեծ և փոքր ի թագաւորական դաւտարն. և երկրիս Վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէ խարաճին յօրէնս Մահմետի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սուրբ Լուսաւորչին» [12, էջ 18]:

Զանգվածային մահմեդականացման մեկ այլ դեպքի մասին վկայում է Ղ. Ինճիճյանը. «...զնախկին հայկազուն բնակչաց Թորթումայ, թե ձանձրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան առ հասարակ ի կրօնս տաճկաց», չնայած գյուղերը շարունակում էին մնալ «ըստ մասին բնակեալ ի հայոց և ըստ մասին ի տաճկաց (7, էջեր 93-94):

Թուրքական իշխանությունների կողմից իրականացված բռնի իսլամացումն այն աստիճան էր խորքային, որ կարճ ժամանակ անց Տայքի ուղղափառ եկեղեցին գործնա-

կանում դադարեց գոյություն ունենալ: Տայքի նշանակալի հոգևոր կենտրոնների՝ Իշխանի, Բանակի, Օշկի, Խախուի և այլոց մասին խոսելիս Վախուշտի Բագրատիոնին ընդգծում էր դրանց ամայացած վիճակը [10, էջեր 84-85]: Բնականաբար, դա կործանարար ազդեցություն ունեցավ ինչպես վրացացած հայերի, այնպես էլ հայության այն մի ստվար հատվածի համար, որն արդեն մի քանի դար է, ինչ ընդունել էր քաղկեդոնականություն: Հ. Տաշյանն այս առիթով գրում է, որ կղզիացած, առանց գլխավոր կենտրոնի նվիրապետության մնալով, հայախոս-վրացացած այս հայությանը մի առիթ էր ընդամենը պակասում, որպեսզի զանգվածաբար մահմեդականային: Եվ այդպիսի առիթ նրանց համար դարձավ 1643 թ. «ծանր խարաճը» [15, էջ 178]:

Իշխանությունների ճնշման ներքո իսլամացված հայերի զգալի մասը ձևականորեն ընդունեց իսլամը, սակայն իրականում պահպանեց երկակի ինքնություն. օրվա ընթացքում՝ մահմեդականներ, գիշերով՝ քրիստոնյաներ, ովքեր գաղտնի մասնակցում էին եկեղեցական ծեսերին: Այս բնակչությունը կոչվում էր «կեսկես» - կես հայ քրիստոնյա, կես թուրք մահմեդական: Տայքի «կեսկեսների» մի զգալի մասը գրեթե չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից. նրանք հաճախ նույնիսկ թուրքերեն ազատ չէին խոսում, նրանց խոսքում առատ էին հայկական բառերը, իսկ անուններին ավելանում էր թուրքական վերջավորությունը «օղի» - Կոստանօղի, Կիրակոսօղի, Գասպարօղի և այլ [16, էջ 81; 18, էջ 537]: Հայկական և քրիստոնեական տարրը հատկապես լավ էր պահպանվել «կեսկես» կանանց շրջանում: Դա բացատրվում է նրանով, որ ավանդական հայկական հասարակության մեջ կինն էր ընտանիքում լեզվի, հավատքի և մշակութային ավանդույթների հիմնական պահպանը: Բռնի իսլամացման և մշակութային ճնշումների պայմաններում հայ կանայք դրսևորեցին տոկունություն՝ պահպանելով ավանդույթները ընտանեկան միջավայրում: Նրանք առանցքային դեր ունեցան երեխաներին հայերենով դաստիարակելու և համայնքային հիշողությունը պահպանելու գործում:

Արժե նշել նաև, որ Տայքի հայ բնակչության մի մասը, ձգտելով խուսափել հալածանքներից, հաճախ իրենց նույնացնում էր ոչ միայն մահմեդականների, այլև լազերի հետ: Այդ պատճառով նրանց երբեմն կոչում էին ոչ թե «կեսկես», այլ «հայ-լազ» [11, էջ 80]:

Հ. Տաշյանը գրում է. «Այս պարագան մասամբ նպաստաւոր էր բռնի մահմեդականացման շրջանին այնու, որ հայ-կաթոլիկեայք քիչ շատ եւրոպական պաշտպանութիւն մը կը վայելէին. միւս կողմանէ սակայն մոռանալու չէ ճիշդ .ԺԸ. դարու վերջերն եւ մանաւանդ .ԺԹ. դարու սկիզբն յարուցումս սաստիկ հալածանքները կաթոլիկէից դէմ, որոնց արձագանքը հասած է մինչեւ այս խորին ձորերը» [16, էջ 66]: Այս գործընթացի արդյունքում դավանափոխ եղան Բերդագրակի գավառի Կուլրաշեն, Որջնհաղ, Կիսկիմ, Նիխաղ, Կարմրիկ, Ծեռկունց, Տանձուտ, Վերին և Վարին Մոխուրկուտ գյուղերը, ինչպես նաև Խոտորջուրի գյուղախումբը:

Այսպիսով, XVII դարի առաջին կեսին Տայքի հայկական բնակչությունը ենթարկվեց արմատական ժողովրդագրական և էթնիկական փոփոխությունների: Պատերազմները, զանգվածային արտաքսումները և հարկադիր վերաբնակեցումները հանգեցրին ամայացման, մինչդեռ օսմանյան իշխանությունները խրախուսում էին մահմեդական ցեղերի վերաբնակեցումը հայաթափ տարածքներում: Հարկային մատյանները ցույց են

տալիս քրիստոնյաների թվի շուրջ 90 % նվազում և մահմեդականների թվի համեմատական աճ: Այս փոփոխությունը արմատապես փոխեց տարածաշրջանի կրոնական և էթնիկական կազմը. քրիստոնյա բնակչության մի մասը բռնի իսլամացվեց՝ ձևավորելով «կեսկես» անվամբ հայտնի խումբը:

ԵԶՐԱՆԻ ՊԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄ: Այսպիսով, XVII դարի առաջին կեսին Տայքը հայտնվեց խոր ժողովրդագրական ճգնաժամի մեջ, որի հետևանքով ընդհանուր բնակչությունը նվազեց մոտ երկու երրորդով: Այս փոփոխությանը զուգընթաց տեղի ունեցավ նաև խորքային էթնոկրոնական տեղաշարժ. նախկինում գերակշռող քրիստոնյա մեծամասնությունը վերածվեց փոքրամասնության, մինչդեռ մահմեդական բնակչությունը ձեռք բերեց բացարձակ գերակայություն:

Այս գործընթացները համահունչ էին Օսմանյան կայսրության XVII դարի քաղաքականությանը, որի նպատակն էր ապահովել մահմեդական տարրի թվային առավելությունը սահմանային շրջաններում և թուլացնել քրիստոնյա բնակչության դիրքերը: Ցավոք, այս երևույթները այդտեղով չավարտվեցին. դրանք շարունակվեցին նաև հաջորդ դարերի ընթացքում՝ ի վերջո բերելով ողջ պատմական Տայքի ժողովրդագրական պատկերի արմատական փոփոխության:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ակոսյով Ա.** *Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը:* Երևան: ԳԱԱ պատմության ինստիտուտ: 2013:
2. **Աղանեանց Գ.** *Դիվան Հայոց պատմություն:* Գիրք Ժ: Թիֆլիս: Աղանյանցի տպարան: 1912:
3. **Երիցյան Ա.** *Թե Տանկական Հայաստանում որքան հայ կա//* Փորձ: 1880: Հունիս-հուլիս: 216-217 էջեր:
4. *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի նյութ ժողովուրդների մասին:* Հ. Ա: Կազմեց Ա. Սաֆրաստյանը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1961:
5. *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի նյութ ժողովուրդների մասին:* Հ. Բ: Կազմեց Ա. Սաֆրաստյանը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1961:
6. *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի նյութ ժողովուրդների մասին:* Հ. Գ: Էվիա Չելեբի: Կազմեց Ա. Սաֆրաստյանը: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1961:
7. **Ինճիբեան Գ.** *Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի:* Մաս Ա, Կ. Ա, Ասիա: Վենետիկ: Ս.Ղազար: 1806:
8. **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա.** *Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ:* Հ. Բ, (1601–1620): Երևան: ՀՀ ԳԱԱ հրատարակություն: 1974:
9. **Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա.** *Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ:* Հ. Բ, (1620–1640): Երևան: ՀՀ ԳԱԱ հրատարակություն: 1978:
10. **Մելիքսեթ-Բեկ Լ.** *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին:* Հ. Գ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն: 1955:
11. **Մելքոնյան Ա.** *Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին:* Երևան: ՀՀ ԳԱԱ հրատարակություն: 1994:
12. **Յակովբ Կարնեցի.** *Տեղագիր Վերին Հայոց:* Վաղարշապատ: Ս.Էջմիածնի տպարան: 1903:
13. **Սաֆրաստյան Ա.** *Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ.//* Արևելագիտական ժողովածու: Հ. 1: Երևան: 1960: 285-302 էջեր:
14. **Տաշեան Յ.** *Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին:* Վիեննա: Մխիթարյանների տպարան: 1921:
15. **Տաշեան Յ.** *Տայք, դրացիք և Խոսրոջուր:* Հ. Ա: Վենետիկ: Ս.Ղազար: 1973:

16. **Տաշեան Յ.** *Տայք, դրացիք և խոտորացիք*: Հ. Բ. Վենետիկ: Ս.Ղազար: 1980:
17. **Inbaşı M., Çakır I., Demir S.** *1642 tarihli Erzurum Eyâleti mufasssal avârız defteri*. Ankara: Türk Tarih Kurumu. 2014. (in Turkish).
18. **Линч Х. Ф. Б.** *Армения. Путевые очерки и этюды*. Тифлис: типография Мартиросяна. 1910.
19. *გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი*. წ. 2. თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკლევა და კომენტარები დაურთო სერგი ჯიქიამ. თბილისი: საქართველოს აკადემიის გამომცემლობა, 1941.
20. *გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი*. წ. 3. თურქული ტექსტი გამოსცა, თარგმანი, გამოკლევა და კომენტარები დაურთო სერგი ჯიქიამ. თბილისი: საქართველოს აკადემიის გამომცემლობა, 1958.
21. *ოსმალური ვრცელი და მოკლე დავთრები ტაო-კლარჯეთის შესახებ (XVI-XVIII საუკუნეები)*. ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, მცირე შენიშვნებითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადა პროფ. ნოდარ შენგელიამ, თბ., 2013, გვ. 296-298.
22. *ჩილდირის ეილეთის ჯაზა დავთარი*. 1694-1732. თურქული ტექსტი თარგმანით გამოსაცემად მოამზადა ც. აბულაძემ, გამოკლევა დაურთო მ. სვანიძემ. თბილისი: მეცნიერება, 1979.

References

1. **Akopov, A.** Administrative and Demographic Picture from the 16th Century to the First Third of the 19th Century [*Tayq. varchajhoghovrdagrakan patkery XVI daric XIX dari I eresnamyaky*]. Yerevan: Institute of History of the Academy of Sciences of RA 2013. (in Armenian).
2. **Aghaneyants, G.** Collection of Armenian History [*Divan Hayots patmutian*]. Book 10. Tiflis: Aghanyants' Press. 1912. (in Armenian)
3. **Yeritsyan, A.** How Many Armenians Live in Turkish Armenia [*Te Tachkakan Hayastanum vorkan hay ka*]/ *Pordz.* 1880. June–July, 216-229 pp. (in Armenian)
4. Turkish Sources about Armenia, Armenians and Other Peoples of the South Caucasus [*Turkakan aghbyurnery Hayastani, hayeri yev Andrkovkasi myus zhoghovurdneri masin*]. Vol. 1. Compiled by A. Safrastyan. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of Ar. SSR. 1961. (in Armenian)
5. Turkish Sources about Armenia, Armenians and Other Peoples of the South Caucasus [*Turkakan aghbyurnery Hayastani, hayeri yev Andrkovkasi myus zhoghovurdneri masin*]. Vol. 2. Compiled by A. Safrastyan. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Ar. SSR. 1964. (in Armenian)
6. Turkish Sources about Armenia, Armenians and Other Peoples of the South Caucasus [*Turkakan aghbyurnery Hayastani, hayeri yev Andrkovkasi myus zhoghovurdneri masin*]. Vol. 3. Evlia Chelebi. Compiled by A. Safrastyan. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Ar. SSR. 1967. (in Armenian)
7. **Inchichian, G.** Geography of the Four Parts of the World [*Ashkharagrutyun chorits masants ashkharhi*]. Part 1. Vol. I. Asia. Venice: St Lazare. 1806. (in Armenian)
8. **Hakobyan, V., Hovhannisyan, A.** Colophons of Armenian Manuscripts of the 17th Century [*Hayeren dzeragreri 17 dari hishtakaran*]. Vol. 1 (1601–1620). Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR. 1974. (in Armenian)
9. **Hakobyan V., Hovhannisyan, A.** Colophons of Armenian Manuscripts of the 17th Century [*Hayeren dzeragreri 17 dari hishtakaran*]. Vol. 2 (1621–1640). Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian)
10. **Melikset-Bek L.** *Georgian Sources about Armenia and Armenians* [*Vrats aghbyurnery Hayastani yev hayeri masin*]. Vol. III. Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR. 1955. (in Armenian).

11. **Melkonyan, A.** Erzurum. The Armenian Population of Erzurum Province in the First Three Decades of the 19th Century Erzurum (*Erzrumi nahangi hay azgnabnakchutyuny XIX dari arajin yeresnamyakin*). Yerevan. Publishing House of the Academy of Sciences of the Republic of Armenia. 1994. (in Armenian)
12. **Hakob of Karin.** Topography of Upper Armenia [*Teghagir verin hayoc*]. Vagharshapat: Mother See of Holy Etchmiadzin. 1903. (in Armenian)
13. **Safrastyan, A.** The Administrative Division of the Ottoman Empire in the 17th Century [*Osmanian kaysrutyan varchakan bazhanumy XVII dar*] // Oriental Studies Collection 1960. Vol. 1, 285–302 pp. (in Armenian)
14. **Tashian, H.** The Armenian Population from the Black Sea to Karin [*Hay bnakchutyuny Sev tsoven minchev Karin*]. Vienna: Mekhitarist Printing House. 1921. (in Armenian)
15. **Tashian, H.** Tayk, Neighbors and Khotorjur [*Tayk, dratsik yev Khotorjur*]. Vol. A. Venice: St. Lazare. 1973. (in Armenian)
16. **Tashian, H.** Tayk, Neighbors and Khotorjur [*Tayk, dratsik yev Khotorjur*]. Vol. B. Venice: St. Lazare. 1980. (in Armenian)
17. **Inbaşı, M. Çakır I., Demir S.** 1642 tarihli Erzurum Eyâleti mufassal avâriz defteri. Ankara: Türk Tarih Kurumu. 2014. (in Turkish)
18. **Lynch, H.F.B.** Armenia. Travel Sketches and Studies [*Armenia. Putevye ocherki i etudy*]. Tiflis: Martirosian Printing House. 1910. (in Russian)
19. Extensive register of the Gurjistan Vilayet [*Gurjistanis vilaietis didi davtari*]. Georgian translation by S. Jikia. Vol. 2. Tbilisi: Publishing House of the Georgian Academy of Sciences. 1941. (in Georgian)
20. Extensive register of the Gurjistan Vilayet [*Gurjistanis vilaietis didi davtari*]. Georgian translation by S. Jikia. Vol. 3. Tbilisi: Publishing House of the Georgian Academy of Sciences. 1958. (in Georgian)
21. Ottoman Detailed and Short Censuses of Tao-Klarjeti, 16th–18th Centuries [*Osmaluri vrtseli da mokle davtrebi Tao-Klarjetis shesakheb (XVI–XVIII saukuneebi)*]. Ottoman text with Georgian translation, introduction, notes and facsimiles, prepared for publication by Prof. Nodar Shengelia. Tbilisi. 2013. (in Georgian)
22. The Jaba Register of the Childir Eyalet (1694–1732) [*Childiris eialetis jaba davtari (1694–1732)*]. With supplements by M. Svanidze. Tbilisi: Metsniereba. 1979. (in Georgian)

Ընդունվել է / Received on: **18. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **02. 11. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Արկադի Արտյոմ ԱԿՈՊՈՎ՝ պատմ. գիտ. թեկնածու,
ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաբարոյաբ. Գյումրի. ՀՀ,
Էլ. huugne@arkadone1@gmail.com, / ORCID.org/0000-0001-6771-9747

Arkadi Artyom AKOPOV: PhD in History, Scientific Secretary at
Shirak Center of Armenological Studies of the NAS, Gyumri, RA,
e-mail: arkadone1@gmail.com / ORCID.org/0000-0001-6771-9747

Արմեն Սերգոյի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն,
ՇՀՀ պատմության ամբիոնի դոցենտ, Գյումրի. ՀՀ,
Էլ. huugne@ a.hayrapetyan@shirakcenter.sci.am / ORCID.org/0000-0003-1051-5078

Armen Sergo HAYRAPETYAN: PhD in History, Director of the Shirak Center for
Armenological Studies of NAS, Gyumri, Associate Professor of SUSh, Gyumri, RA,
e-mail: a.hayrapetyan@shirakcenter.sci.am / ORCID.org/0000-0003-1051-5078

ИСТОРИЯ
HISTORY

УДК 94(3)

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -45

АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ О РАЗВИТИИ УЛИЧНОГО ОСВЕЩЕНИЯ
ГОРОДА АЛЕКСАНДРОПОЛЯ В 1894 -1895 ГГ.

Инга Эд. Авагян

Ширакский центр арменоведческих исследований НАС РА, Гюмри
Историко-культурный музей - заповедник «Кумайри», Гюмри, РА

Аннотация

Введение: В статье представлены документы, которые хранятся в Национальном архиве Армении. Список датируется 1894-1895 гг. В то время в провинциальном уездном городе Александрополе не было местного самоуправления, а вопросы, которые относились управления городом, решались на уровне губернского правления и уездного начальства. Эти документы можно считать неповторимой национальной ценностью Республики Армения и города Гюмри, которые с опозданием в несколько десятилетий вводятся в научный оборот. Причиной тому является огромное количество этих исторических документов и то, что они в основном на старорусском языке. **Методы и материалы:** Статья написана на методах историко – исследовательского, историко-аналитического, исторического сопоставления и анализа и методах индукции и дедукции. Статья основана на анализе случайно выявленных архивных материалов из исторических архивов Армении и РФ, на анализе аналогичных документов, изданных нами и другими исследователями, которые встречаются в научной литературе. **Анализ:** При помощи вышеназванных методов произведен научный анализ и представлены материалы, документы, литература, а также исторические данные материалов, которые после сравнения с известными аналогичными материалами были датированы и введены в научный оборот. **Результаты:** Материалы и документы имеют исключительную научную и историческую ценность. Каждый документ датирован в отдельности, приведен на современном русском языке. Доказана единичность и ценность информации документов. Данное исследование можно использовать в научных целях: в статьях, диссертациях, в исследовательских работах магистров и бакалавров, а также во время составления туристических маршрутов по территории Историко-культурного музея-заповедника «Кумайри», для туристов посещающих город Гюмри и Республику Армения.

Ключевые слова: Александрополь, фонари, кронштейны, присутствие, рапорт, постановление, смета, контракт.

Цитирование: Авагян И. *Архивные документы о развитии уличного освещения города Александрополя в 1894-1895 гг.* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2025. Т. 2 (28). 45-53 сс. DOI:10.52971/18294316-2025.28.2-45

ARCHIVAL DOCUMENTS ON THE DEVELOPMENT OF STREET LIGHTING IN THE CITY OF ALEXANDROPOL IN 1894-1895

Inga E. Avagyan

Shirak Center Armenological Studies of NAS, Gyumri, RA
“Kumayri” Historical and Cultural Preserve - Museum, Gyumri, RA

Abstract

Introduction: This article presents documents kept in the National Archives of Armenia. The list dates back to 1894-1895. At that time, there was no local self-government in the provincial district town of Alexandropol, and the issues related to the administration of the town were solved at the level of the provincial government and district administration. These documents can be considered a unique national value of the Republic of Armenia and the city of Gyumri, which are introduced into the scientific turnover with a delay of several decades. The reason for this is the huge number of these historical documents and the fact that they are mostly in the Strarussian language. **Methods and materials:** The article is written on the methods of historical - research, historical-analytical, historical comparison and analysis and methods of induction and deduction. The article is based on the analysis of randomly identified archival materials from the historical archives of Armenia and the Russian Federation, on the analysis of similar documents published by us and other researchers, which are found in the scientific literature. **Analysis:** With the help of the above-mentioned methods scientific analyses were made and materials, documents, literature, as well as historical data of the materials were presented, which after comparison with known similar materials were dated and introduced into the scientific turnover. **Results:** The materials and documents are of exceptional scientific and historical value. Each document is dated separately, given in modern Russian language. The singularity and value of the information of the documents is proved. This research can be used for scientific purposes - in articles, dissertations, research works of masters and bachelors, as well as during the compilation of tourist routes in the Historical and Cultural Museum-Preserve «Kumayri» for tourists visiting Gyumri city and the Republic of Armenia.

Key words: *Alexandropolis, lanterns, brackets, presence, report, ordinance, estimate, contract.*

Citation: Avagyan I., *Archival Documents on the Development of Street Laghting in the City of Alexandropol in 1894-1895.* “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2025.V. 2 (28). 45-53 pp.. DOI:10.52971/18294316-2025.28.2-45

ВВЕДЕНИЕ: Уже несколько лет нами издаются статьи, в которых представлены документы, которые хранятся в Национальном архиве Армении. Эти документы являются свидетелями истории провинциального уездного города Александрополя [6]. История города в архивных материалах, делает более достоверной информацию [о переименовании города см. 9; 11]. Каждый документ дополняет и делает всеобъемлющей историю города Александрополя и одноименного уезда [11]. Список документов, изданный в данной статье, датируется 1894-1895 гг. и впервые вводится в научный оборот [Ф.94, Оп. 1, Д. 2164]. Целью данной статьи является всестороннее изучение и издание этих архивных материалов: в рамках, кото-

рых выявлен процесс организации городского освещения, финансовые источники и технические решения данного вопроса в конце XIX в. В то время в провинциальном уездном городке Александрополе не было местного самоуправления: городской думы, городской управы и городского головы [10]. Первые выборы местного самоуправления города были организованы в 1896-1897 гг., а вопросы, которые относились к управлению городом, решались на уровне губернского правления и уездного начальства, которое согласовывало с Кавказским наместничеством в Тифлисе и губернским правлением в городе Эриване [7]. Изданные нами материалы и документы можно считать неповторимой национальной ценностью Республики Армения и города Гюмри, которые с опозданием в несколько десятилетий вводятся в научный оборот. Причиной тому является огромное количество этих исторических документов и то, что они в основном на дореволюционном старорусском языке. Этим и объясняется актуальность данной статьи, в которой документы приведены на современном русском языке. Нужно отметить, что значимая часть архивных материалов по Александропольскому уезду была введена в научный оборот историками А. Айрапетяном [2;3], К. Алексаняном [1], которые много сделали в сфере изучения истории Александропольского уезда конца XIX- начала XX вв. издав десятки статей и сборники документов из Национального архива Армении. Нами также изданы более десятка статей [4;5], которые публикуют архивные материалы, относящиеся местному самоуправлению города. Новшеством статьи можно считать изучение особенностей местного городского самоуправления на образце маленького провинциального города, расположенного на окраине Российской империи, на основе архивных материалов конца XIX - начала XX вв. В заключении статьи идет сравнение Александропольских механизмов организации работ с нынешними современными городским механизмами.

Дело об уличных фонарях

Дело об уличных фонарях состоит из копии журнального постановления, рапортов, постановлений, копии контракта, который был заключен с мастером и других документов, которые датируются 1894-1895 гг. и свидетельствуют о механизме работы уездного начальства [Ф.94, Оп. 1, Д. 2164]. Дело об уличных фонарях дает представление, какими были улицы города, как освещались, как обустраивалось освещение городских улиц. Освещаются проблемы, не так уж различающиеся от нынешних забот мэрии города Гюмри.

Первый лист дела - это рапорт Александропольского уездного начальника написанный Эриванскому губернатору на бланке М.В.Д., датированный декабрем 1894 г. [Ф.94, Оп. 1, Д. 2164, Л. 1]. Представляя копию с постановления присутствия уездного полицейского управления, заседающего городским хозяйством, состоявшееся 14 декабря 1894 г., уездный начальник, ввиду изложенных в нем обстоятельств, имел честь ходатайствовать пред Его превосходительством Ериванским губернатором, о разрешении увеличить освещение города 100 фонарями. Причем уездный начальник считал своим долгом доложить: «К взысканию с населения города, числящиеся на нем недоимки, будут применены все дозволенные законом меры и приложено все старание, и усердие городских депутатов». Под документом подпись: уездного начальника-полковника N, секретаря и бухгалтера.

Справка

Следующий документ дела - это копия постановления и смета на приобретение и употребление фонарей: [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л.2, 2 обр. 3]. Из содержания документа следует, что до 1894 года весь город Александрополь освещался всего 150 фонарями, количество которых было неудовлетворительно для освещения темных улиц и переулков города, в котором проживало 35000 жителей. 14 декабря 1894г. присутствие Александропольского уездного полицейского управления, заведующего городским хозяйством, в заседании своем, обсуждая

вопрос о весьма слабом освещении городских улиц, нашло, что город освещался 150 фонарями, что это число фонарей было далеко не достаточным, для такого разбросанного большого с 35/т населения города Александрополя, и потому, не говоря уже о слабом освещении городских улиц, присутствие докладывало о том, что многие улицы и переулки на окраинах города вовсе не освещались и движение по ним в ночное время становилось положительно не возможным, вследствие чего, чины полиции не могли наблюдать и вовремя предупреждать всякого рода проступки и преступления лиц, живущих легкой наживой. Ввиду изложенного, присутствие полагало: безотлагательно увеличить освещение города, прибавив к числу фонарей еще 100 фонарей, отнеся потребный на этот предмет расход на средства городской кассы, с внесением его в городскую роспись.

Для этого была составлена справка по финансовым издержкам.

Справка: 1-я, на увеличение освещения города ста фонарями требовался расход: единовременно на приобретение фонарей со столбами или кронштейнами. Полагая стоимость по существующим ценам, одного такого фонаря 8 рублей-800 рублей, и постоянного расхода на уплату контрагенту за освещение согласно имеющегося с ним контракта по 10 рублей 80 копеек в год за фонарь, что составляло -1080 рублей; 2-ая - по росписи на 1895 г. был начислен:

- А. доходов - 45455 рублей 33 копейки;
- Б. расходов - 44208 рублей 10 копеек;
- В. остатке 1247 рублей 23 копейки;
- Г. запасного капитала -6276 рублей 94 копейки;
- Д. неприкосновенного капитала – 12646 рублей 85 копейки;
- Е. наличными деньгами в городской кассе к 1-му декабря 6940 рублей 37 копеек;
- Ж. благонадежных к поступлению недоимок прежних лет 36612 рублей 36 копейки.

Хотя городская роспись на 1895 год была закончена с остатком 1247 рублей 23 копейки, предстоящий расход по освещению города присутствие находило возможным отнести на вполне благонадежную на тот момент недоимку в 36992 рублей, которая, при усердии депутатов, всегда могла быть взыскана и потому присутствие уездного полицейского управления, заведующее городским хозяйством, на тот момент постановило: по внесении всего изложенного в акт, копию с него представить господину Эриванскому губернатору, прося у Его превосходительства разрешения увеличить освещение города ста фонарями, со внесением в городскую роспись на 1895 г. единовременным расходом на устройство 100 фонарей-800 рублей и постоянного расхода 1080 рублей, и с отнесения этого расхода на вполне благонадежную недоимку числящегося за населением города. Подлинное подписали: председатель управы, начальник, полковник Стоненский, городские пристава -Тер-Петросов и Арсеньев, городские депутаты - Карапетянц и Сагратов, И.д. секретарь Сакварешидзе, Верно: И.д. секретарь Сапревич. Секретарь И.д. бухгалтера Мушегянц [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л.2, 2 обр. 3].

Следующий документ дела [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л.9] - это доклад о разрешении расхода из сумм города Александрополя на увеличение освещения города, отправленный 29 марта 1895 года под №3502 господину Эриванскому губернатору из канцелярии главноначальствующего гражданскою частью на Кавказе, отделением хозяйственным в Тифлисе. Вследствие представления от 24 января 1895 года за № 230, канцелярия имела честь препроводить при сем к Его превосходительству, для надлежащего исполнения, копию с утвержденного господином главноначальствующим доклада, от 22 минувшего февраля за № 2319 о разрешении расхода из сумм города Александрополя на увеличение освещения города. За вице-директора документ подписал М. Имбарданов и делопроизводитель Дукельский.

Копия доклада машинописного текста

Следующий документ [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л.10,10 обр,11] - это копия доклада – машинописный текст отправленный в канцелярию главноначальствующего гражданского частью на Кавказе, отделения хозяйства в Тифлисе, датированный 22 февраля 1895 года под № 2319. На подлинном главноначальствующим написано: «Согласен» 24 февраля 1895 г. и стоит подпись делопроизводителя И. Мулина. Эриванское губернское начальство от 24 минувшего января за № 230 представляя копию с журнального постановления губернского правления, испрашивало разрешение на производство из сумм г. Александрополя, расхода потребного на увеличение освещения города. Из означенного постановления усматривалось, что существующие в то время в городе Александрополе фонари, в числе 180, в виду их ограниченности и разбросанности города, далеко не удовлетворяли потребностям освещения, многие улицы на окраинах вовсе не были освещены, или же освещались так тускло, что движение по ним в ночное время было очень затруднено, и чины полиции были лишены возможности предупреждать всякого рода преступления. Уездное управление, предполагало увеличить существующее число фонарей ста новыми, оно исчислило потребный для надобности расход в следующих размерах: а. единовременный на постройку новых фонарей со столбами и кронштейнами, полагая по существующим на тот момент ценам, по 8 рублей за каждый фонарь - 800 рублей; б. постоянный на удовлетворение контрагента за освещение, согласно заключенному с ним контракту по 10 рублей 80 копеек в год за фонарь - 1080 рублей.

Его высокопревосходительству господину главноначальствующему гражданскою частью на Кавказе было адресовано следующее: «Признавая, безусловно, необходимым увеличить число фонарей в городе Александрополе ста новыми, губернское правление, приняв во внимание, что бюджет города вполне этому благоприятствует, постановило испросить разрешения Его высокопревосходительства на производство из сумм города Александрополя расходов: единовременного, на постройку 100 фонарей с принадлежностями 800 рублей и постоянного, на удовлетворение контрагента, за освещение 1080 рублей в год».

Ниже приводим справку росписи города Александрополя:

«СПРАВКА: Росписи города Александрополя на текущий год предложено свести с остатком в 2308 рубля 23 копейки».

Освещение города 150 фонарями, на торгах, произведенных в сентябре 1892г. было отдано в подрядное содержание на три года за 1620 рублей, по 10 рублей 80 копеек. Г. Александрополь к 1 августа 1894 г. запасного капитала имел 6276 рублей 94 копейки и наличных сумм, для удовлетворения текущих расходов, 15163 рубля 25 копеек.

Далее приводим ЗАКЛЮЧЕНИЕ: «В видах предоставления населению г. Александрополя удобств, в местной полиции возможности к успешному предупреждению преступлений, канцелярия, имея в виду благоприятное состояние городских средств и руководствуясь 20 статьей Учредительного управления Кавказского края, полагала бы: разрешить произвести из средств города Александрополя потребный расход: а. единовременный на постройку новых ста фонарей и постоянный на освещение этих фонарей, с тем, чтобы расход, как по постройке новых фонарей, так и по операции освещения их произведен был подрядным способом, с торгов, к которым в видах удобств, был бы допущен и теперешний контрагент по освещению города».

Расход потребный за заготовление фонарей и их освещение в продолжение текущего года, по расчету со дня их устройства, было необходимо внести в дополнительную роспись города за 1895 г.

Настоящее заключение свое канцелярия имела честь представить Его высокопревосходительству на благоусмотрение. Документ подписал директор И. Мичкевич и скрепил делопроизводитель Дукельский. «Верно: За делопроизводителя- подпись И.Мулин».

Рапорт и постановление

Следующий документ дела – это рапорт, отправленный в Эриванское губернское правление на бланке М.В.Д. Александропольского уездного полицейского управления, датированный 1 июня 1895 года, за № 152, гор. Александрополь [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л.13]. Рапорт был отправлен 10 июня, на бланке дата получения 11 июня 1895 г. на штампе Эриванского губернского правления.

Уездное полицейское управление, представляя в губернское правление торговое производство на 36 листах на отдачу с подряда устройства ста новых фонарей для городских улиц, а также постановление присутствия заведывающего городским хозяйством, состоявшееся 24 мая, коим оно признавало предложенную на торгах цену выгодным для города, имело честь просить распоряжения об утверждении таковых. Документ подписали: уездный начальник, полковник - подпись, секретарь-подпись, И.д. бухгалтера- подпись Мушегянц.

Из постановления [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л. 14, 14 обр] следует: 24 мая 1895г. согласно предписания Его превосходительства господина Эриванского губернатора от 8 минувшего апреля за № 937 в присутствии уездного полицейского управления на 20 число мая 1895 г. назначены были торги с узаконенную чрез три дня переторжкой на отдачу с подряда устройства ста новых фонарей с железными к ним кронштейнами для освещения улиц и площадей города Александрополя. На переторжках состоявшихся 24 мая явились те же торгующие, что в день торга, а именно: Александропольские жители: мугдуси Михаил Стамбульцев и Гаспар Бунятов и были представлены два запечатанных конверта, один из них Карлом Микиртумовым, а другой Ервандом Гарибовым. Самую низкую против других плату по 6 рублей 29 копеек за фонарь с кронштейном, предложил мугдуси Михаил Стамбульцев, который в обеспечение неправоного выполнения принятого на себя обязательства, представил залог в сумму 220 рублей... копеек, равняющийся одной трети всей подрядной суммы и особо обязался подпискою на случай утверждения за ним губернским начальством этих торгов, исполнить все изложенные в кондициях условия. По вскрытии же запечатанных конвертов, оказалось, что Карл Мкртычев назначил цену на каждый фонарь с кронштейном по 7 рублей 20 копеек, т.е. более на 91 копейку, представленный залог в сумму 240 рублей тут же был возвращен ему за распискою на подлинном заявлении, а при другом заявлении, поданном Ервандом Гарибовым, не было приложено ни залога, ними заявление было оплачено гербовым сбором, и потому таковое было оставлено без рассмотрения.

Присутствие Александропольского уездного полицейского управления заведывающее городским хозяйством, признавая предложенную Стамбульцевым цену по 6 рублей 29 копеек за фонарь с кронштейном выгодною для города, постановило торговое по сему предмету производство представить в Эриванское губернское правление на благоусмотрение и утверждение. Ниже стоят подписи: Председатель, уездный начальник, полковник –подпись; Городской пристав-подпись; Городские депутаты – подписи Тигранова и другого депутата; И.д. секретаря-подпись; И.д. бухгалтера - подпись Мушегянц.

Копия контракта датированная 26 августа 1895 г. на гербовой бумаге

Ниже приводим последний документ дела-контракт [Ф. 94, Оп. 1, Д. 2164, Л. 19, 19 обр., 20]. «Тысяча восемьсот девяносто пятого года августа 26 дня я нижеподписавшийся житель города Александрополя мугдуси Мкртич Стамбульцев заключил сей контракт с общим

присутствием Александропольского уездного полицейского управления, заведующим городским хозяйством в лице его уполномоченного депутата Каранова о нижеследующем:

Первое: Я мугдуси Михаил Стамбульцев обязуюсь в месячный, со дня заключения сего контракта срок, заготовить 100 фонарей с железными кронштейнами по данным мне образцам, за предложенную мною на переторжке, состоявшейся 24-го минувшего мая низкую цену по 6 рублей 29 копеек за каждый фонарь с кронштейнами и другими принадлежностями: А именно: резервуаром, горелкою и стеклянным цилиндром.

Второе: Кронштейны должны быть сделаны из железа, а фонари из жести по образцу ныне существующих в городе.

Третье: По изготовлении заказа я мугдуси Михаил Стамбульцев обязан представить его в оное присутствие уездного полицейского управления, заведующее городским хозяйством, для освидетельствования в доброкачественности материалов и приеме его, причем если Присутствие найдет, что заказ выполнен недобросовестно и вследствие этого таковой не будет принят, то я мугдуси Михаил Стамбульцев, обязуюсь переделать его в назначенный срок на свой счет, во всем согласно указаниям Присутствия, не требуя для этого особого вознаграждения, а при неисполнении подряда Присутствие вправе выполнить таковой на счет моего залога.

Четвертое: Резервуары для ламп должны быть сделаны из латуни с 12-и линейною горелкою, фитилем и ламповым стеклом.

Пятое: Плата за заготовленные фонари выдается мне Стамбульцеву, после окончательного приема и поставки фонарей с кронштейнами на указанных мне полицейским управлением местах, также на мои Стамбульцева счет, и вместе с тем управление делает распоряжение о возврате мне представленного залога.

Шестое: В случае не своевременного исполнения заказа, или же обнаружения факта употребления в дело не доброкачественного материала я, Стамбульцев обязываюсь согласно пункту 3-му настоящего контракта, забракованные части заменить другими новыми на свой счет, не требуя за это ни каких дополнительных приплат, и всем последнем случае за не своевременное исполнение требований Присутствия, оно распоряжается отбиранием у меня заказа и передачею по своему усмотрению, другому лицу, при этом если плата окажется более той, которую я предложил, то весь излишек взыскивается с представленного мною залога.

Седьмое: Все издержки по операции заключения контракта как то гербовая бумага и т.д. должны быть произведены на мой, Стамбульцева счет.

Восьмое: Контракт сей должен быть исполняем одними договаривающимися сторонами свято и не нарушимо, подлинный контракт хранить в делах полицейского управления, а засвидетельствованную с него копию выдать мугдуси Михаилу Стамбульцеву:

Подлинною подписали мугдуси Михаил Стамбульцев и депутат Каранов».

С подлинным верно за главного начальника – подпись

Секретарь И. д. бухгалтера Мушегянц.

ЗАКЛЮЧЕНИЕ: Итак: изучение архивного дела дает возможность понять, как уездное начальство организовывало управление провинциального города Александрополя. Какие инстанции ведали, управляли и организовывали торги и переторжки по определенным вопросам обустройства Александрополя.

1. До 1896 г. городом управлял уездный начальник и члены уездного управления. Конечно же, уездное управление ведало не только городскими делами, на ее долю выпадало управление всем уездом.
2. Важные вопросы по строительству города согласовывались с Эриванским губернским правлением и Кавказским наместничеством в Тифлисе.

3. Проблема городского освещения актуальна и сейчас. Мэрия города сейчас так же занимается этой глобальной проблемой. С ростом населения города и застройки города новыми кварталами, нарастает проблема освещения, которая всегда затрагивала и затрагивает интересы местного самоуправления. Как и сейчас в Александрополе производились торгитендеры и выигрывали те участники, которые обязывались брать заказ по более низкой цене.
4. Торги проводились строго по правилам, закрытые конверты открывались во время торгов, при членах, которые организовывали торги.
5. Контракты заключались исключительно по пунктам, в которых в основном обязывался исполнитель.
6. Заключенные контракты были двухсторонними, платила управа, обязанности по всем другим пунктам выполнял исполнитель. Со стороны управы подписывал один из депутатов.
7. Некоторое внимание управа уделяла эстетической стороне заказа и качеству. В данном случае фонари должны были быть похожи на старые, которые уже освещали улицы города.
8. Как и сейчас финансировались проекты из местных бюджетов, который пополнялся за счет налогов, внесенных населением города в городскую казну.
9. Изученные документы дополняют историю города Александрополя - Гюмри, облегчая дело исследователей, которые более полномасштабно могут изучать данную эпоху нашего города.

Գ ր ա Կ ան ու թ յ ու ն

1. **Աբրահամյան Կ.** *Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գաղթումը 1914-1922 թթ.:* Փաստաթղթերի ժողովածու: Երևան: «Հայկարի» ՍՊԸ տպարան: 2012: 512 էջ:
2. **Հայրապետյան Ա.** *Ալեքսանդրապոլի գաղթը փնտիագրական նյութերում (XIXդ.–XXդարիսկիզբ).* փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան: «Գիտություն» հրատ.: 2011: 271 էջ:
3. **Հայրապետյան Ա.** *Ժողովրդագրական գործընթացներն Ալեքսանդրապոլի գաղթումը (XX դ. տարիների սկիզբից):* Հոդվածների և նյութերի ժողովածու: Երևան: «Գիտություն» հրատ.: 2020: 244 էջ:
4. **Авагян И., Оганнисян Г.** *Формирование городской телефонной сети в городе Александрополе в начале XX в. по источникам Национального архива Республики Армения* // Наука в современном мире: взгляд молодых ученых. Материалы VIII Международной научно–практической конференции молодых ученых, аспирантов и студентов (Грозный, 27–28 мая 2022 г.). Материалы Круглого стола «Аксиологический кризис человеческого бытия: гуманизм – трансгуманизм – посттрансгуманизм». Грозный: ЧГПУ, ЧГУ. Махачкала: Изд-во АЛЕФ. 2022. 10-16 сс.
5. **Авагян И., Оганнисян А., Оганнисян Г.** *Утверждение плана города Александрополя в начале XX в. (по архивным источникам)* // XVII международных научных чтений, посвященных Дню славянской письменности и культуры, 24 мая 2024 года (Майкоп, 24 мая 2024 г.). Майкоп: Изд-во Магарин О., 2024. 9-14 сс..
6. Атлас крепостей Российской империи. Санкт Петербург. URL: insmat.info/fales/uploads/45273/atlas_krepostey_rossiyskoy_imperii_ok_1830_chast_i.pdf. (дата обращения: 17.02.2025.).
7. *Городовое положение 11 июня 1892 года.* // <https://www.hist.msu.ru/ER/Etext/grd1892.htm> (дата обращения: 17.02.2025).
8. *Национальный архив Армении, Фонд 94, Опись 1, Дело 2164* [далее Ф.94, Оп. 1, Д. 2164].
9. **Шильдер Н.** *Николай Первый его жизнь и царствование.* Т. 2. Санкт-Петербург: Изд-во А.С. Суворина. 1903. 820 с. <http://elibrary.ru/nodes/1028-t-2-1903#mode/inspect/page/3/zoom/4> (дата обращения: 01.30.2025).
10. **Надеждин П.** *Кавказский край природа и люди, Второе издание, совершенно вновь обработанное и дополненное.* Тула. Типография и литография Е.И. Дружининой. 1895. 449 с. https://rusneb.ru/catalog/000199_000009_003638152/ (дата обращения: 17.02.2025).
11. **Новицкий В., Фон-Шварц А., Апушкин В., Фон-Шульц Г.** *Военная Энциклопедия в 18 томах.* Т. 1. Петербург: Изд-во И.Д. Сытина. 1911. 457 с.

References

1. **Aleksanyan, K.** Western Armenian migration in the province of Alexandropol in 1914-1922. Collection of documents. [*Arevmtahay gaght'akanut'yuny Alek'sandrapoli gavarrum 1914-1922 t't'. P'astat'ght'eri zhoghovatsu*]. Yerevan: "Haykarli" LLC printing house, 2012. 512 p. (in Armenian)
2. **Hayrapetyan, A.** The province of Alexandropol in statistical materials (19th–early 20th centuries): a collection of documents and materials [*Alek'sandrapoli gavarry vichakagrakan nyut'erum (XIXd.–XX daraskizb). p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu*]. Yerevan: "Science" publ., 2011. 271p. (in Armenian).
3. **Hayrapetyan, A.** Demographic processes in the Alexandropol province (first two decades of the 20th century). Collection of articles and materials [*Zhoghovrdagrakan gortsynt'ats'nern Alek'sandrapoli gavarrum (XX d. arrajin k'sanamyak): Hodvatsneri yev nyut'eri zhoghovatsu*]. Yerevan: "Science" publ., 2020. 244 p. (in Armenian)
4. **Avagyan I., Oganisyan, G.** Formation of the urban telephone network in the city of Alexandropol in the early 20th century based on sources from the National Archives of the Republic of Armenia [*Formirovaniye gorodskoy telefonnoy seti v gorode Aleksandropole v nachale xx v. po istochnikam Natsional'nogo arkhiva Respubliki Armeniya*] // Science in the modern world: a view of young scientists. Proceedings of the VIII International scientific and practical conference of young scientists, graduate students and students (Grozny, May 27-28, 2022). Proceedings of the Round Table "Axiological crisis of human existence: humanism - transhumanism - posttranshumanism". Grozny, ChSPU, ChSU. Makhachkala, ALEF publ., 2022. pp. 10-16. (in Russian)
5. **Avagyan I., Oganisyan A., Oganisyan, G.** Approval of the plan of the city of Alexandropol at the beginning of the 20th century (based on archival sources) [*Utverzhdeniye plana goroda Aleksandropolya v nachale XX v. (po arkhivnym istochnikam)*]// XVII international scientific readings dedicated to the Day of Slavic Literature and Culture, May 24, 2024 (Maikop, May 24, 2024). Maykop, Magarin O.G. publ. 2024. pp. 9-14. (in Russian)
6. Atlas of fortresses of the Russian Empire. Saint Petersburg [*Atlas krepostey Rossiyskoy imperii. Sankt eterburg*]URL: informatika.info/fales/uploads/45273/atlas_krepostey_rossiyskoy_imperii_ok_1830_chast_i.pdf (accessed on: 17.02.2025). (in Russian)
7. City regulations of June 11, 1892. [*Gorodovoye polozheniye 11 iyunya 1892 goda.*] <https://www.hist.msu.ru/ER/Etext/grd1892.htm> (accessed on: 17.02.2025). (in Russian)
8. National Archives of Armenia, Fund 94, List 1, File 2164 [hereinafter F.94, List 1, File 2164]. [Natsional'nyy arkhiv Armenii, Fond 94, Opis' 1, Delo 2164 [daleye F.94, Op. 1, D. 2164]). (in Russian)
9. **Schilder, N., Nicholas, I.** His Life and Reign. Vol. 2 [*Nikolay Pervyy yego zhizn' i tsarstvovaniye*]. St. Petersburg: A.S. Suvorin publ. 1903. 820 p. <http://elibrary.shpl.ru/ru/nodes/10281903#mode/inspect/page/3/zoom/4> (accessed: 01.30.2025). (in Russian)
10. **Nadezhdin, P.** The Caucasus Region: Nature and People, Second Edition, Completely Re-Edited and E.I. Druzhinina. 1895. 449 p. https://rusneb.ru/catalog/000199_000009_003638152 (accessed: 17.02.2025). (in Russian)
11. **Novitsky V., Fon-Schwartz A., Apushkin V., Fon-Schulz, G.** Military Encyclopedia in 18 Volumes [*Voyennaya Entsiklopediya v 18 tomakh*]. T. 1. Petersburg: I.D. Sytin Publ. 1911. 457 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **04. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **08. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for. Pub: **10. 12. 2025**

Информация об авторе

Инга Эдуардовна АВАГЯН: канд. ист. наук, доцент, директор Историко-культурного музея - заповедника «Кумайри», научный сотрудник ИЦАИ НАН РА, преподаватель ШГУ, Гюмри, РА
эл. почта: inga.avagyan.76@mail.ru / ORCID 0000-0001-6260-1467

Inga Eduard AVAGYAN: Ph.D. Philosophy in History, Associate Professor, Director of the “Kumayri” Historical and Cultural Preserve- Museum, Gymri, Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, Lecturer at SUSH, Gyumri, RA,
e-mail: inga.avagyan.76@mail.ru / ORCID 0000-0001-6260-1467

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ
1919 թ.ՎԵՐՋԻՆ – 1920 թ. ՄԿՁԲԻՆ

Արմենուհի Վ. Ղամբարյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. 1919 թ. սեպտեմբերի վերջին Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության կողմից ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ նշանակվեց Գարեգին Փաստրմաձյանը (Արմեն Գարո): Նա ժամանեց ԱՄՆ հոկտեմբերի սկզբին և առաջիկա ամիսների ընթացքում գործեց Միացյալ Նահանգներ գործուղված ՀՀ պաշտոնական պատվիրակության՝ Հ. Քաջազնունու քաղաքացիական առաքելության շրջանակներում: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը հիմնված է հետազոտման պատմահամեմատական մեթոդի վրա: Աշխատանքում ներկայացված տեղեկությունները մամուլի և արխիվային նյութերի վերլուծության արդյունք են: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական մեթոդի համադրման և հակադրման սկզբունքները: Վերլուծություն. ԱՄՆ-ում Գ. Փաստրմաձյանը համագործակցում էր ոչ միայն քաղաքացիական պատվիրակության, այլև այստեղ ժամանած ՀՀ ռազմական առաքելության հետ: Նա պաշտոնական ներկայացուցչություն էր բացել Վաշինգտոնում և հանդես էր գալիս ճկուն դիվանագիտական գործունեությամբ: Գարոյի ներդրած ջանքերի շնորհիվ տնտեսական որոշ հարցերի մասնակի լուծում էր ապահովվել, կազմակերպվել էին հայ զինվորականության հանդիպումներ ԱՄՆ-ի ռազմական բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Այդուհանդերձ, Փաստրմաձյանի գործունեության հիմնական ուղղությունը քաղաքական՝ մասնավորապես ԱՄՆ-ի կողմից Հայաստանի երիտասարդ Հանրապետության անկախության ճանաչման և վերջինիս հովանավորության՝ մանդատի հարցերի լուծումներն ապահովելն էր: Արդյունքներ. Քաղաքական ոլորտում Գ. Փաստրմաձյանի դիվանագիտական ակտիվությունը հաջողություն չունեցավ: Ճիշտ է, 1920 թ. ապրիլի վերջին ԱՄՆ կառավարությունը, թեպետև դե ֆակտո, ճանաչեց Հայաս-

տանի անկախ հանրապետությունը, իսկ Գարոն էլ պաշտոնապես ընդունվեց որպես ՀՀ դեսպան, սակայն հայ դիվանագետի ոգևորությունն առաջացրած այս հանգամանքը չէր երաշխավորում որևէ լուրջ դրական քայլ նորանկախ Հանրապետության համար: Ավելին, ընդամենը մեկ ամիս անց ԱՄՆ-ի կառավարությունը մերժեց ՀՀ մանդատի ստանձնումը: **Բանալի բառեր՝** Հայաստանի Հանրապետություն, ԱՄՆ, Գ. Փաստրմաճյան, մանդատ, անկախություն, լիազոր ներկայացուցիչ, առաքելություն, Պետական դեպարտամենտ: **Ինչպես հղել՝** Ղամբարյան Ա. Հայաստանի առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունն ԱՄՆ-ում 1919թ. վերջին - 1920թ. սկզբին // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28), 54-65 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-54

DIPLOMATIC REPRESENTATION OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN THE USA IN LATE 1919 - EARLY 1920

Armenuhi V. Ghambaryan

Institute of History of the National Academy of Sciences, Yerevan, RA

Abstract

Introduction: At the end of September 1919, the Government of the First Republic of Armenia appointed Garegin Pasdermadjian (Armen Garo) as the Republic's plenipotentiary representative to the USA. He arrived in the United States in early October and over the following months acted as part of the Kajaznuni's Civil mission - the official delegation of the Republic of Armenia sent to the United States. **Methods and materials:** This article is based on the historical-comparative research method. The information presented in this paper is the result of an analysis of the investigated sources: press materials and archival materials. The principles of comparison and contrast of the historical-comparative method were applied throughout the study. **Analysis:** G. Pasdermadjian collaborated not only with the Civil delegation in the United States, but also with the military mission of the Republic arousing the Armenian diplomat's enthusiasm, did not guarantee any serious positive step for the newly independent Republic. Moreover, a month later, the US administration officially rejected the adoption of the mandate of the Republic of Armenia. **Results:** In the political sphere, G. Pasdermadjian's diplomatic activity was unsuccessful. It is true that in late April 1920, the U.S. government, de facto, recognized the independence of the Republic of Armenia, and Garo was officially accepted as the Armenian ambassador. However, this circumstance, which had initially inspired the Armenian diplomat, did not guarantee any significant positive developments for the newly independent Republic.

Key words: Republic of Armenia, USA, G. Pasdermadjian, mandate, independence, authorized representative, mission, State Department.

Citation: Ghambaryan A. *Diplomatic Representation of the First Republic of Armenia in the USA in Late 1919 - Early 1920* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025: Vol. 2 (28).

54-65 pp.. DOI: 10.52971/18294316-2025.28.2-54

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Անկախության հռչակման առաջին իսկ օրվանից Հայաստանի առաջին Հանրապետությանը վիճակված էր անցնել փորձություններով լի դժվարագույն

ճանապարհ: 1918 թ. մայիսից մինչև խոր աշուն՝ Առաջին աշխարհամարտի ավարտը, նորածին Հանրապետությունն արտաքին քաղաքականության դաշտում, կռիվ տալով իր ֆիզիկական գոյության համար, միննույն ժամանակ ծանր պայքար էր մղում երկրի ներքին խնդիրներին հնարավոր չափով լուծում ապահովելու համար:

Ներքին և արտաքին աղետալի վիճակը շարունակվեց և 1919 թ.: Հանրապետության Խորհրդարանի կողմից 1919 թ. փետրվարի 4-ին հաստատված օրինագծի համաձայն՝ կազմավորվում է հատուկ՝ քաղաքացիական առաքելություն [11, էջեր 254-257], որին սովի դեմն առնելու նպատակով հանձնարարվում է ուղևորվել Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա ու խնդրել մեծ տերություններին՝ տնտեսական օգնություն, առաջին հերթին անունդ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը [3, էջ 167]: Կառավարության այս պաշտոնական պատվիրակության նախագահ է նշանակվում ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին, իսկ կազմում ընդգրկված էին տնտեսական խորհրդականներ՝ ֆինանսների նախկին նախարար Արտաշես Էնֆիաջյանն ու գյուղատնտես Արտեմ Փիրալյանը, ինչպես նաև կապիտան Սուրեն Մելիքյանը՝ իբրև նախագահի քարտուղար:

Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը 1919 թ. մայիսի վերջին ուղևորվում է Եվրոպա և հունիսի 16-ին հասնում Փարիզ [2, ֆ. 200, ց. 2, գ. 59, մաս 2, թ. 1]: Այստեղից առաքելության անդամները՝ թե՛ պաշտոնական և թե՛ մասնավոր հանդիպումներ ունենալու նպատակով այցելում են նաև բրիտանական մայրաքաղաք: Եվրոպայում անցկացրած նպատակային աշխատանքով լի մի քանի ամիսները, փաստացի, չեն հանգեցնում զգալի արդյունքների: Ակնհայտ էր, որ դաշնակից պետություններն առանձնապես չէին ցանկանում հոգալ հայ ժողովրդի՝ այս պահին խիստ անհրաժեշտ տնտեսական կարիքները և, ավելին, պարզ էր դառնում աստիճանաբար, որ նրանք նաև չէին պատրաստվում քաղաքական վճռականություն դրսևորել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ: Ուստիև աջակցություն ստանալու անհրաժեշտությունը ստիպում է հայկական պատվիրակներին հայացքն ուղղել դեպի Ամերիկա՝ Միացյալ Նահանգներ:

1919 թ. սեպտեմբերին Փարիզում՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության և Պողոս Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունների համատեղ նիստում որոշում է կայացվում դիմել ամերիկյան կառավարությանը, և դա պաշտոնապես և ուղղակիորեն անել հենց ԱՄՆ-ում՝ Վաշինգտոնում [2, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 55-60]: Այս որոշումը հաստատվում է Հանրապետության ղեկավարության կողմից: Հ. Քաջազնունու աշխատանքային խումբը պետք է դիմեր Հայաստանի Խորհրդի անունից Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությանը և խնդրեր նրանց օգնությունը՝ ներմուծելու Հայաստան երկրին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ապրանքներ [11, էջ 255: 4, էջ 566] :

Առաքելությունը, ԱՄՆ-ից տնտեսական աջակցություն ստանալու հիմնական նպատակից բացի, լիազորվում էր նաև ապահովել քաղաքական և ռազմական բնութի որոշ հարցերի լուծում: Ինչ վերաբերում էր ռազմական հարցերին և ակնկալվող օգնությանը, ապա վերջիններիս բարձրացման և ընթացք տալու համար, հաջակցություն

Քաջագնուհու խմբի, որոշվեց, որ Միացյալ Նահանգներ պետք է գործուղվի առանձին ռազմական առաքելություն՝ ի դեմս գեներալ Հակոբ Բագրատունու և զորավար Անդրանիկի [6, էջ 46-55: 14, ք. 74-89]: Վերջիններս հանդես էին գալու համապատասխանաբար՝ իբրև Հայաստանի հանրապետության և Պողոս Նուբարի ներկայացուցիչներ [2, ֆ. 370, ց. 1, գ. 63, թ. 3-4; 20, ց. 265; 21, ց. 282; 10, էջ 140]: Նույն կերպ քաղաքացիական առաքելությանն էր միացել Ազգային պատվիրակության փոխնախագահ Աբր. Տեր-Հակոբյանը՝ իբրև Պողոս Նուբարի ներկայացուցիչ [20, ց. 229; 21, ց. 282] :

ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցչի նշանակումը

Փարիզում՝ համատեղ նիստի ընթացքում մանրամասնվեց և որոշ հստակեցում ստացավ նաև քաղաքական խնդիրներին լուծումներ ապահովելու հարցը: Նշված պահին Հայաստանի իշխանությունները գիտակցում էին՝ մեծ տերությունների շարքում ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը: Ուստի, առավելապես այդ նպատակով, Ֆրանսիայից ԱՄՆ մեկնող Քաջագնուհու պատվիրակությանը միանում է Փարիզում ՀՀ պատվիրակության անդամ և Ազգային պատվիրակության փոխնախագահ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), որը Հայաստանի կառավարության կողմից նշանակվեց ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ [2, ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 1-2, 4]:

Ասել, թե այդ նշանակումով Հայաստանի Հանրապետությունն իրական դիվանագիտական ներկայացուցչություն ունեցավ ԱՄՆ-ում, իհարկե, ճիշտ չի լինի: Դա կարող էր իրականություն դառնալ միայն ԱՄՆ-ի կառավարության հետ պաշտոնական բուն դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո, ինչն էլ՝ որպես բնականոն ընթացք, տեղի կունենար Մեծ տերության կողմից երիտասարդ Հանրապետության ճանաչման արդյունքում: Ուստի, Գ. Փաստրմաճյանն ԱՄՆ-ի բարձրաստիճան ատյաններում և պաշտոնյաների կողմից ընդունվում էր որպես ՀՀ լիազոր ներկայացուցիչ, այսպես ասած՝ «դե ֆակտո»: Ինչևէ, Գ. Փաստրմաճյանի հետ մեկտեղ՝ ԱՄՆ-ում Հայաստանն էին որոշակիորեն ներկայացնում թե՛ քաղաքացիական և թե՛ ռազմական առաքելություններ իրենց ներկայացուցիչներով՝ մաս կազմելով «դիվանագիտական ներկայացուցչության»:

Այսպիսով հարկ է ընդգծել, որ Գարոն ԱՄՆ-ում՝ 1919 թ. վերջին – 1920-ի սկզբին հիմնականում գործում էր Հ. Քաջագնուհու առաքելության շրջանակներում, թեպետ ուներ անհատապես իր առջև դրված պաշտոնական հանձնարարականներ [2, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 7]:

Դիվանագիտական ներկայացչության գործունեության մեկնարկը

Երբ 1919 թ. հոկտեմբերի 9-ին Հայաստանի առաջին Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը ժամանեց Նյու Յորք, Գ. Փաստրմաճյանը վերջինիս կազմում էր [1, էջ 1353: 6, էջ 457: 15, ք. 383; 20, ց. 230; 21, ց. 279] : Նույն օրը երեկոյան նրանք Նյու Յորքից մեկնեցին Վաշինգտոն՝ ամերիկյան կառավարությանը ներկայացնելու հայության խնդիրները: Հոկտեմբերի 10-ին Հ. Քաջագնուհին [11, էջեր 257-261: 8, էջեր 276-280: 17, ք. 109-111]՝ իբրև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական առաքելության նախագահ և Գ. Փաստրմաճյանը [7, էջեր 89-94: 8, էջեր 281-286: 17, ք. 111-114]՝ որպես Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ, հանդես եկան վկայու-

թյամբ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում՝ «Խաղաղության պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո ընթացող լսումներին: Դրանք մեկնարկել էին 1919 թ. սեպտեմբերի 27-ին՝ սենատոր Ջոն Շարփ Ուիլյամսի ներկայացրած բանաձևի շուրջ, որն ԱՄՆ կառավարությանը լիազորում էր ստանձնել հայերի համար դաշնակիցների ծրագրած օգնությունը և ամերիկյան զորքեր տրամադրել Հայաստանին [4, էջ 566: 8, էջեր 29-30: 17, p. 3]:

Քանի որ Հ. Քաջազունու խմբի առաքելության հիմնական նպատակն ԱՄՆ-ից տնտեսական ու քաղաքական աջակցություն ստանալն էր, վերջինիս վկայությունն առավելապես ընդգրկում էր հայ ժողովրդի ազգային, մշակութային, քաղաքական նկարագրի և իրավունքների վերաբերյալ տեղեկություններ: Քաջազունին վստահեցնում էր, որ Ջ. Ուիլյամսի բանաձևով նախատեսվող օժանդակության դեպքում հայերն ի վիճակի կլինեն կազմակերպելու իրենց ինքնապաշտպանությունը, ինչպես նաև սեփական աշխատասիրության ու Հայաստանի բնական պաշարների շնորհիվ կկարողանան վճարել վերցրած վարկերը [11, էջեր 257-261; 8, էջեր 276-280; 17, pp. 109-111]:

Ամբողջությամբ կիսելով Հ. Քաջազունու վկայությունները, Գ. Փաստրմաճյանն իր խոսքում անդրադարձավ Հայաստանի հանդեպ ԱՄՆ-ի խնամակալության հարցին և նշեց նաև, որ խնամակալ ԱՄՆ-ի փոքրաթիվ զորամիավորումները Բաթումում և Երևանում շատ ցանկալի էին և կարևորագույն դեր կխաղային սոսկ իրենց ներկայությամբ, քանի որ մեծ տպավորություն կթողնեն առաջին հերթին հենց Հայաստանի հարևանների վրա [7, էջեր 89-94: 8, էջեր 281-286: 17, pp. 111-114]:

Հայ պատվիրակների վկայությունները կարևոր նշանակություն ունեցան Սենատի ենթահանձնաժողովի անդամների կարծիքների ձևավորման համար: Ենթահանձնաժողովի նախագահ սենատոր Ուորեն Գ. Հարդինգը, որը հայկական հարցերի շուրջ զուսպ կեցվածք էր դրսևորում, մասնավոր զրույցներում ակնարկում էր, թե թերևս խելամիտ կլինեին առաջարկել, որ Երևանի կառավարությանը քաղաքական ճանաչում, ռազմական նյութեր և ֆինանսական վարկ հատկացվի [5, 12.10. 1919]:

Ենթահանձնաժողովի առջև վկայությամբ հանդես գալուց հետո Հայաստանի հանրապետության ներկայացուցիչները սենատոր Ջ. Ուիլյամսի ուղեկցությամբ մեկնեցին Սպիտակ Տուն: Ցավոք, նախագահ Վ. Վիլսոնը վատառողջ լինելու պատճառով չէր կարողացել հանդիպել ՀՀ առաքելության անդամների հետ: Բարձրաստիճան հյուրերին ընդունել էր նրա քարտուղար Ջ. Պ. Թումուլտին: Վերջինս, փոխանցելով Վ. Վիլսոնի ավստանքները հանդիպման չկայանալու հանգամանքի վերաբերյալ, նաև հայտնել էր հայ պատվիրակներին Հայկական հարցի նկատմամբ ԱՄՆ նախագահի համակրանքի մասին [6, էջ 459: 15 p. 385; 20, c. 264; 21, c. 279]:

Հաջորդ մի քանի օրերի՝ հոկտեմբերի 10-11-ի ընթացքում հայ պատվիրակությանն ընդունել էին նաև ԱՄՆ փոխնախագահ Թ. Ռ. Մարշալը, Սենատի մեծամասնության ղեկավար Հ. Ք. Լոջը և փոքրամասնության ղեկավար Գ. Մ. Հիչքոքը, սենատոր Ու. Հ. Քինգը, Պետական դեպարտամենտի քարտուղար Ռ. Լանսինգը [12, 10. 01. 1920: 1, էջ 1351: 5, 15.10. 1919: 6, էջ 45: 18, 13.10.1919]: Մեծ տերության պաշտոնական ամենաբարձր ատյանների որոշ ներկայացուցիչների կողմից, անգամ շատ ջերմ ընդունելությունները,

ինչ խոսք, ոգևորիչ էին: Այդուհանդերձ, դրանք չէին նախատեսում քաղաքական, կամ ռազմական օժանդակության ուղղությամբ որևէ քայլի փորձ: Իրականությունն այլ էր, և դա հասկանալու համար Հայաստանի պատվիրակներին շատ ժամանակ պետք չեղավ: Լոք դիվանագիտական գրույցներ, և հուսադրող ոչ մի խոստում անգամ: Պետքարտուղար Ռ. Լանսինգի հետ հանդիպման ժամանակ Հ. Քաջագունու Բարձրացրած՝ ՀՀ ճանաչման հարցին ի պատասխան ամերիկյան պաշտոնյան ընդամենը խորհուրդ էր տվել պաշտոնական հուշագիր ներկայացնել [6, էջ 464: 20, c. 264; 21, c. 286]:

ԱՄՆ-ի կողմից ոչ քաղաքական, ոչ՝ ռազմական օժանդակության որևէ պատկեր չէր ձևավորվում: Իրականում Մենատի ենթահանձնաժողովի լսումների արդյունքը ոչ այլ ինչ էր, քան մերժում՝ թե՛ մանդատի և թե՛ ռազմական օգնության: Ջ. Շ. Ուիլյամսի բանաձևի վերաբերյալ լսումներն ընդամենը նպաստել էին Կոնգրեսի կողմից միայն հումանիտար օգնության՝ պարենի հետագա մատակարարումների համար բյուջետային միջոցների հատկացմանը: Դա ակնհայտ դարձավ արդեն հոկտեմբերի 16-ին՝ ԱՄՆ ռազմածովային նախարար Ջ. Դենիելսի խոսքից, որը Նյու Յորքում «Մերձավոր Արևելքի օգնության» կոմիտեի համագումարում իր ելույթի ժամանակ գովաբանելով հումանիտար օգնությունը և ընդգծելով վերջինիս կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ փաստացի հաստատեց, որ ԱՄՆ-ը հրաժարվում էր ստանձնել Հայաստանի թե՛ մանդատը և թե՛ ռազմական օժանդակությունը [2, ֆ. 200, ց. 1, գ. 525, թ. 4]:

Թվում էր՝ դրանով ամեն ինչ ասված էր. ռազմածովային նախարարը փոքր մարդ չէր, բայց նայնպես երկրի նախագահը չէր: Ուստի Հանրապետության լիազոր ներկայացուցիչը ջանքեր չէր խնայում իրեն հանձնարարված տարբեր հարցերի շուրջ աշխատանքներ ծավալելու համար՝ իհարկե, առաջնահերթություն տալով քաղաքական խնդիրներին:

ՀՀ լիազոր ներկայացուցչի գործունեության հիմնական ուղղությունները

Գ. Փաստրմաճյանն իր գործունեությունը մեկնարկեց՝ միևնույն ժամանակ կենտրոնանալով երեք ուղղությունների վրա: Այն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքական և իրավական ճանաչմանը հասնելը, ամերիկյան պետական և հասարակական շրջանակներին Հայաստանի գոյության անհրաժեշտության մասին իրազեկումը, ԱՄՆ-ի կողմից նյութական, տնտեսական, ռազմական և քաղաքական աջակցության ապահովումը: Այս հենքի վրա՝ Գ. Փաստրմաճյանի դիվանագիտական ջանքերի առանցքն էր Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից մանդատ ստանձնելու խնդրի իրականացումը: Վերջինիս ուղղությամբ նա անխնայ աշխատանք էր կատարում [13, pp. 48-58]: Վաշինգտոնում՝ «Կոնգրես հոլլ» հյուրանոցում ՀՀ պաշտոնական ներկայացուցչությունը բացած Գ. Փաստրմաճյանը 1919 թ. աշնանն ու ձմռան սկզբին բավական ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալեց: Նա հանդիպումներ էր կազմակերպում, դիմումներ հղում Սպիտակ տուն, Կոնգրես, Պետդեպարտամենտ, բանակցություններ վարում նաև անհատ ձեռնարկատերերի հետ: Ամերիկյան պաշտոնական, քաղաքական ու հանրային շրջանակներում Ա. Գաբոն քարոզում էր Հայաստանի մանդատային կառավարման անհրաժեշտությունը, միջնորդում սննդի, հագուստի, սերմացուի, գյուղատնտեսական սարքավորումների, ռազմական աջակցության վերաբերյալ [18, 05.10.19, 12.10.19; 1, N 43 էջ 1386-1387, N 44 էջ 1403-1404: 6, էջ 480: 15, pp. 401-402; 13, pp. 49-57; 21, c. 299]:

ՀՀ լիազոր ներկայացուցչի գործունեության կարևորությունն այդ օրերին հատկապես մեծ էր, քանի որ այն համընկել էր մի ժամանակահատվածի հետ, երբ ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակների պասիվությունը հայկական հարցերի շուրջ ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում: Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվելիք՝ թե՛ քաղաքական, թե՛ ռազմական օժանդակության վերաբերյալ որևէ քայլ չէր արվում: Սենատի ենթահանձնաժողովի լսումները, փաստորեն, ընթացք չունեցան: Ենթահանձնաժողովի զեկույցը չհրապարակվեց և, անգամ, չներկայացվեց ԱՄՆ-ի Սենատի նիստին ոչ միայն 1919 թ. ընթացքում, այլև 1920 թ. սկզբին:

Այս ամենը արդյունք էր ԱՄՆ-ում առկա իրավիճակի: Մի կողմից դեր խաղաց առողջական խնդիրների պատճառով երկար ժամանակով հայամետ նախագահ Վ. Վիլսոնի մեկուսացումը պաշտոնական գործերից, մյուս կողմից՝ ընդհիմադիր հանրապետականների բացասական դիրքորոշումը նախագահի քաղաքականության հանդեպ: Վերջինս հանգեցրել էր նրան, որ ԱՄՆ-ի Սենատը, իր արտաքին քաղաքականության կողմնորոշումներում վերադառնալով Մոնրոյի ուսմունքին, մերժում էր Վերսալյան պայմանագիրը, որի հետ նաև՝ Ազգերի լիգային վերաբերող պայմանագիրը, ուստի նաև՝ մանդատների համակարգը: Կնշանակի, թե մանդատի իրողությունը փակված էր, այլևս գոյություն չունեք: Այս ամենից պարզ է դառնում, որ հայության սպասումները անարդյունք էին մնալու:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր ուշադիր հետևել ԱՄՆ-ի ներքին և դրանից բխող արտաքին քաղաքականության ասպարեզում առաջ եկող նոր դրսևորումներին: Շատ կարևոր էր ուշադրությունը պահել նոր իրադարձությունների և գործընթացների զարգացումների զարկերակին, որպեսզի հայությանը հուզող խնդիրների հետ կապված կարևոր պահերը բաց չթողնվեին, և ճիշտ ժամանակին ապահովվեին անհրաժեշտ քայլեր: Այդ աշխատանքի ծանրության մեծ մասն իր ուսերին էր կրում Գ. Փաստերմաճյանը: Ներդնելով իր պաշտոնական լիազորություններն ու դիվանագիտական կարողությունները՝ նա անխոնջ գործունեություն էր ծավալում վերոնշյալ բոլոր ուղղություններով: ԱՄՆ տարբեր նահանգների մեծ և փոքր քաղաքներում՝ թե՛ հայ համայնքի և թե՛ ամերիկյան բազմաթիվ կազմակերպությունների կողմից ձեռնարկված հանրահավաքների, հանդիպումների, ի պատիվ ՀՀ կառավարության ներկայացուցիչների տրված ճաշկերպների և այլ արարողությունների ժամանակ ամերիկյան պաշտոնյաների, հայտնի հանրային դեմքերի, ինչպես նաև հայկական քաղաքացիական, ռազմական, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների շարքում անվերապահորեն հանդես էր գալիս նաև Ա. Գաբուն:

Գ. Փաստերմաճյանի գործունեության ուղղություններն ու բովանդակությունն արտահայտվել է մասնավորապես ամերիկահայ մամուլի էջերում: Հատկանշական են այդ առումով բազմահավաք հանդիսությունների ժամանակ հնչեցրած նրա ելույթներն ու ճառերը, որոնք տպագրվել էին թե՛ անգլալեզու և թե՛ հայալեզու պարբերականներում: Գ. Փաստերմաճյանն ակտիվ գործունեություն էր ծավալել նաև ամերիկահայ պառակտված համայնքի միավորման գործում:

Ռազմական ասպարեզին վերաբերող հարցերի լուծմանը նպաստելու նպատակով Գարոն համագործակցում էր հայկական ռազմական միացյալ առաքելության հետ և վերջինիս ներկայացուցիչների համար հանդիպումներ կազմակերպում ԱՄՆ-ի ռազմական բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ հանձինս նախարար Ն. Բեյքերի, ինչպես նաև պետական քարտուղար Ռ. Լանսինգի [21, c. 286; 13, p. 57]:

Գ. Փաստրմաճյանի դիվանագիտական առաջին քայլերից էր պետքարտուղար Ռ. Լանսինգին՝ իր իսկ պահանջած փաստաթուղթի՝ «Հայաստանի Հանրապետության ճանաչման մասին» Հ. Քաջազունու առաքելության կողմից կազմած հուշագրի ներկայացումը 1919 թ. հոկտեմբերի 28-ին: Չնայած նրան, որ սույն հուշագիրը սենատոր Հ. Ք. Լոջի կողմից նոյեմբերի 10-ին ներկայացվել էր Սենատին և տպվել որպես Սենատի N 151 փաստաթուղթ [2, ֆ. 200, գ. 498, թթ. 20-58: 6, էջ, 465: 19, pp. 3-15; 16, pp. 244-245, 250, 271, 273; 15, p. 389; 21, c. 287; 20, c. 286], ԱՄՆ-ի կառավարությունը ոչինչ չէր ձեռնարկում Հայաստանի Հանրապետության ճանաչման օգտին: Անհաղորդ էր նաև Պետական քարտուղարությունը: Այդուհանդերձ ՀՀ լիազոր ներկայացուցիչը չէր վիսատվում: 1919 թ. նոյեմբերին-դեկտեմբերին նա մի շարք նամակներ և գրություններ էր ուղարկել Պետքարտուղարություն [13, pp. 52-57]: Նոյեմբերի 3-ին Ռ. Լանսինգին գրած նամակում նշվում էր, որ «Ռուսաստանի կայսրության ավերակների վրա առաջացած Հանրապետությունը, շրջապատված թշնամիներով, կտրված քաղաքակիրթ աշխարհից, առանց նրա բարեկամ մեծ տերությունների որևէ օգնության, տնտեսապես ավերված, դատապարտված սովի և համաճարակների ու բազմաթիվ այլ խոչընդոտների, շնորհիվ իր ժողովրդի հայրենասիրության, համառություն, խոհեմություն և այլ առաքինությունների կարողացել է շարունակել իր գոյությունը տասնյոթ ամիսների ընթացքում» [2, ֆ. 200, գ. 1, գ. 431, թթ. 50-58: 13, p. 52]: Ա. Գարոն պնդում էր, որ հայկական Հանրապետությունն արժանի է օգնության և պարզաբանում բազմաթիվ նպաստավոր հարցեր՝ անդրադառնալով և՛ Ռուսաստանին և հարևան երկրների հետ հարաբերություններին:

Մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 10-ն, որևէ պատասխան դեռ չունենալով, Գարոն պետքարտուղարին է ուղարկում Հայաստանից ստացված՝ Հանրապետությունում սննդամթերքի հետ կապված ծայրահեղ ծանր վիճակի վերաբերյալ հեռագրի պատճենը [2, ֆ. 200, գ. 1, գ. 431, թ. 56]: Երկրում ստեղծված վերոնշյալ ծանր պայմաններից ելնելով՝ Գարոն որպես պաշտոնական ներկայացուցիչ բավական համարձակ և կտրուկ է դիմում պետքարտուղարին, ներկայացնելով տվյալ պահին հայությանն անհրաժեշտ կարիքները: Նա ընդգծում էր, որ Հայաստանի Հանրապետության ճակատագիրն այդ պահին ամերիկյան կառավարության ձեռքում է:

Ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների և պետական այլ գործիչների հետ ունեցած թե՛ նամակագրական կապերի և թե՛ անձնական շփումների ընթացքում Գարոն 1919 թ. վերջին իր ուշադրությունը կենտրոնացրել էր Հանրապետության ճանաչման հարցին: Այդ քայլերն քաջալերվում էին Հայաստանի կառավարության կողմից: Հանրապետության արտգործնախարարությունից՝ Ա. Խատիսյանից Գարոյին ուղարկված նոյեմբերի 18-ի նամակում Գարոյին հրահանգվում էր. «Դիմել համապատասխան գործողությունների՝ անկախությունը ճանաչելու ուղղությամբ, քանի որ անգլիացիների գնալուց հետո մենք ամերի-

կացիների հովանավորության տակ ենք, բայց դա ավելի շատ պլատոնիկ բնույթ է կրում՝ քանի որ Հայաստանում գտնվող ամերիկացիները չունեն զորք և զենք կանխելու համար տաճիկների ներխուժումը Հայաստանի Հանրապետություն» [2, ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 4-5]: 1919թ. վերջին այս հանձնարականը խիստ արդիական դարձավ՝ կապված ԱՄՆ-ի քաղաքական կողմնորոշումներում ակնհայտ փոփոխությունների հետ, այն է՝ մանդատային կուրսի փոփոխությունը դեպի անկախություն [20, ց. 291]:

Ու թեև 1919 թ. վերջին քաղաքական հարցերի շուրջ ձեռքբերումներ գրեթե չկային, ՀՀ լիազոր ներկայացուցչի ջանքերն ամբողջությամբ անարդյունք չէին: Գ. Փաստրմաճյանն իր բաժին ներդրումն էր ունեցել 1919 թ. վերջին ԱՄՆ-ում՝ ՀՀ-ի օգտին տնտեսական օգնության առումով ձեռք բերված հաջողություններում: Քաջագնունին հեռագրում էր Հայաստան, որ ԱՄՆ-ը 35 հազար տոննա ալյուր էր վաճառել, որ նոյեմբերի 28-ին առաջին նավը՝ 8.500 տոննա հացամթերքով Նյու Յորքից ճանապարհվել է Բաթում [2, ֆ. 200, ց. 1, գ. 20, թթ. 184-185]: Ըստ Քաջագնունու՝ Հայաստանի համար նախատեսված բեռով երկրորդ շոգենավը Նյու Յորքից մեկնելու էր դեկտեմբերի առաջին օրերին:

ԱՄՆ-ում Գարոյի քաղաքական քարոզչության առաքելությունը, որը ոչ միայն հստակ դրսևորվում էր ամերիկյան պաշտոնյաների հետ բանակցություններում, այլև արտացոլվում էր նրա ելույթներում, ճառերում, հարցազրույցներում և վկայություններում, ուղղված էին Հայաստանը՝ որպես լեգիտիմ և կայուն պետություն, ներկայացնելուն: Վերջինից ելնելով՝ Գարոն հաճախ շեշտում էր անկախ Հայաստանի կարևոր ռազմավարական դերը Կովկասում՝ որպես քաղաքական կայունության ապահովող ուժի և քրիստոնյա արժեքների պահպանման ամրոցի [20, ց. 291]: Նրա կոչերում մշտապես ընդգծվում էին հայ ժողովրդի կրած տառապանքները, հատկապես՝ ցեղասպանության ժամանակ և հետո, և միջազգային հանրության՝ հայ ազգին օգնելու բարոյական պարտքը:

1920 թ. սկզբին, երբ ԱՄՆ-ը դեռևս չէր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, Գ. Փաստրմաճյանը քաղաքական խնդիրների շուրջ տարվող աշխատանքներում առաջնահերթությունն ամբողջությամբ տալիս էր երիտասարդ հայկական պետության ճանաչմանը: Դա նաև ՀՀ կառավարության հանձնարականն էր: Այն խիստ արդիական դարձավ ոչ միայն այն պատճառով, որ դաշնակից պետություններն հունվարին ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը, այլև կապված էր ԱՄՆ-ի քաղաքական կողմնորոշումներում ակնհայտ փոփոխությունների հետ: Այն է. մանդատային կուրսի փոփոխությունը դեպի անկախություն: 1920 թ. սկզբին Հայաստանի Հանրապետությունը ճանաչելու հարցն ապահովելու նպատակով Գ. Փաստրմաճյանը նամակագրական փոխադարձ կապ էր հաստատել պետական քարտուղար Ռ. Լանսինգի և, անգամ, նախագահ Վ. Վիլսոնի հետ: Գ. Փաստրմաճյանի անմնացորդ ջանքերը մեծ հաջողությունների չբերեցին: Թեև ապրիլի վերջին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց դե-ֆակտո, միայն մայիսի 15-ին սենատոր Ջ. Ուիլյամսի՝ Հայաստանին ռազմական օգնություն ցուցաբերելու մասին ամբողջությամբ ձևափոխված և նախնական իմաստը կորցրած բանաձևը ներկայացվեց Սենատի լրակազմ նիստին և մերժվեց: Կես ամիս հետո ԱՄՆ-ի Սենատը պաշտոնապես մերժեց ՀՀ-ի մանդատը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1919 թ. ամռանը Հայաստանի Հանրապետության համար ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը մեծ նշանակություն ստացավ: Դա հատկապես էր կարևորվում, քանի որ մյուս դաշնակից Մեծ պետությունները տնտեսական և, ավելին, քաղաքական որևէ լուրջ քայլ չէին կատարում Հայաստանի Հանրապետությանն աջակցելու ուղղությամբ:

Ուստի Հ. Քաջազունու քաղաքացիական պատվիրակության շրջանակներում՝ Հայաստանի կառավարության կողմից ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ նշանակված Գարեգին Փաստրմաճյանի (Արմեն Գարո) ժամանումն ԱՄՆ կարևոր դեր էր խաղալու: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի առկայությունն ԱՄՆ-ում կրելու էր մշտական բնույթ՝ ի տարբերություն քաղաքացիական և ռազմական պատվիրակությունների, որ ժամանել էին ԱՄՆ հատուկ կարճատև առաքելությամբ: Վերջիններիս հետ համագործակցելուց՝ տնտեսական և ռազմական հարցերի շուրջ բանակցություններ և քննարկումներ վարելուց զատ՝ Արմեն Գարոն 1919 թ. վերջին – 1920 թ. սկզբին զբաղված էր քաղաքական հարցերին և առաջին հերթին՝ ՀՀ անկախության իրավական ճանաչմանը լուծում ապահովելու գործունեությամբ: Գ. Փաստրմաճյանի ակտիվ գործունեությունն առանձնակի քաղաքական հաջողությամբ չպսակվեց: 1920 թ. ապրիլի վերջին ԱՄՆ կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախ Հանրապետությունը՝ ընդամենը դե ֆակտո, իսկ Գարոյի՝ իբրև դեսպանի պաշտոնապես ճանաչումն էլ որևէ կերպ չէր նպաստելու ԱՄՆ-ի կողմից ՀՀ մանդատի ստանձնմանը: Վերջինիս քաղաքական գործունեության հիմնական ձեռքբերումն եղավ ամերիկյան պետական և հասարակական շրջանակներին Հայաստանի գոյության անհրաժեշտության մասին իրազեկումը:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. «*Կոչնակ Հայաստանի*»: Նյու Յորք: 1919: N 42, 1353, 1351 էջեր: N 43, 1386-1387 էջեր: N 44 1403-1404 էջեր:
2. *Հայաստանի ազգային արխիվ* (ՀԱԱ).
 ֆ. 200, ց. 1, գ. 20, թթ. 184-185: ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 55-60: ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 1-2, 4:
 ֆ. 200, ց. 1, գ. 395, թթ. 4-5: ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 7: ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 50-58:
 ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 56: ֆ. 200, ց. 1, գ. 498, թթ. 20-58: ֆ. 200, ց. 1, գ. 525, թ. 4:
 ֆ. 200, ց. 2, գ. 59, մաս 2, թ. 1: ֆ. 370, ց. 1, գ. 63, թթ. 3-4
3. *Հայաստանի Հանրապետության պաշտամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ.*: Երևան: 2010: 616+16 էջ:
4. *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*: Կազմ. Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան: Երևան: 1972: 809 էջ:
5. «*Հայրենիք*»: Պոսթոն: 12.10. 1919: 15.10. 1919: 19.10.1919:
6. **Հովհաննիսյան Ռ.** *Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920: հ. II*: Երևան: 2014: 708+8 էջ:
7. **Ղամբարյան Ա.** Գ. Փաստրմաճյանի հաղորդումը ԱՄՆ սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (*հոկտեմբեր, 1919թ.*) // “Регион и мир”: Գիտավերլուծական հանդես: Երևան: 2020: N 6: 89-94 էջեր:
8. **Ղամբարյան Ա.** *Խաղաղության պահպանումը Հայաստանում. խումբներ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (27.09.19-10.10.19)*: Երևան: ՀՀ ՀԱԱ պատմ. ինստ. հրատ.: 2022: 356 էջ:

9. **Ղամբարյան Ա.** Հայաստանի առաջին Հանրապետության ռազմական առաքելությունն ԱՄՆ-ում (1919 թ. վերջ – 1920 թ. ամառ) // “Регион и мир”: Գիտավերլուծական հանդես: Երևան: 2022: N 6: 46-55 էջեր:
10. **Ղամբարյան Ա.,** Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքացիական առաքելության գործունեությունն ԱՄՆ (1919թ. վերջ - 1920թ. սկիզբ) // Պատմա-բանասիրական հանդես: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2021թ.: N 3: 134-149 էջեր:
11. **Ղամբարյան Ա.** Հ. Քաջագնունու հաղորդումը ԱՄՆ սենատի ադուսքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում (հոկտեմբեր, 1919) // Պատմա-բանասիրական հանդես: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2019թ.: N 3: 254 -261 էջեր:
12. «Յառաջ»: Երևան: 10. 01. 1920:
13. **Ghambaryan A.** *The Diplomatic Activity of The Plenipotentiary Representative of The Republic of Armenia G. Pasdermadjian (Armen Garo) in the USA at the End of 1919* // Լրաբեր հասարակագիտական գիտությունների (Herald of Social Sciences): Երևան: 2024: N 3: 48-60 էջեր:
14. **Ghambaryan A.** *The Millitary Mission of the First Republic of Armenia and Commander Andranik* // “Բանբեր հայագիտության”: Հայագիտական միջազգային հանդես: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն հրատարակչություն»: N 3 (30): 74-89 էջեր:
15. **Hovannisian R.** *From Versailles to London, 1919-1920. Vol. II.* Berkley-Los Angeles-London. 1982. 603 p..
16. *Journal of Senate, 66 Congress, 1st Session.* 1919. Washington.
17. *Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R..* Washington. 1919. 125 p..
18. «New York Times». New York. 13.10. 1919; 05.10.19; 12.10.19.
19. *The Republic of Armenia. A Memorandum on the Recognition of the Government of the Republic of Armenia Submitted by the Special Mission of the Republic of Armenia to the United States.* Presented by Mr. Lodge, November 10, 1919 - Ordered to be printed. Washington. Government Printing Office. 1919. 15 p..
20. **Махмуриян Г.** *Армения в политике США 1917-1923 гг..* Ереван: Институт Истории НАН РА. 2018. 608 с..
21. **Ованнисян Р.** *Международные отношения Республики Армения 1918-1920.* Ереван: Изд-во «Տիգրան մեծ». 2007. 890 с..

References

1. "Armenia's Kochnak " [*Kochnak Haiastani*]. New York: 1919. N 42, 1353 pp, 351 pp.. N 43, 1386-1387pp.. N 44, 1403-1404 pp. (in Armenian)
2. The National Archive of Armenia (NAA) [*Hayastani azgayin arkhiv (HAA)*]. (in Armenian)
 fund 200, reg.1, file200 f.184-185: f. 200, reg.1, fil290, f.55-60 f. 200, reg.1, file395, f.1-2,4:
 fund 200, reg.1, file 395, f.4-5: f. 200, reg.1, file395, f 7: f. 200, reg.1, file431, f.50-58:
 fund 200, reg.1, file 431, f. 56: f. 200, reg.1, file 498, f.20-58: f. 200, reg.1, file 525, f. 4:
 fund 200, reg.2, file 59, part 2, f. 1: f. 370, reg.1, file 63, f. 3-4:
3. Minutes of the Sessions of the Parliament of the Republic of Armenia 1918-1920 [*Hayastani Hanrapetout 'yan parlamenti nisteri ardzanagrout 'younner 1918-1920 t' t'.*] Yerevan. 2010: 616+16 p.(in Armenian)
4. Armenia in the documents of international diplomacy and Soviet foreign policy (1828-1923) [*Hayastanē mijazgayin divanagitout 'yan ev sovetakan artak 'in k'aghak 'akanout 'yan p 'astat 'ght'eroum (1828-1923)*]. Compiled by J. Kirakosyan, R. Sahakyan. Yerevan. 1972. 809 p. (in Armenian)
5. "Haireniq" [*Haireniq*]. Boston. 12.10.1919, 15.10.1919, 19.10.1919. (in Armenian)
6. **Hovhannisyan, R.** The Republic of Armenia, from Versailles- to London 1919-1920 [*Hayastani Hanrapetout 'youn, Versalits '-London 1919-1920*]. Vol. II. Yerevan. 2014. 708+8 p. (in Armenian)
7. **Ghambaryan, A.** Statement of G. Pasdermadjian to the Subcommittee of the Committee on Foreign Relations United States Senate (October, 1919) [*P'asdermajyani haghordoumē AMN senati artak 'in*

- haraberout'youneri handznazhoghovi ent'ahandznazhoghovoum (hoktember, 1919t']. // "Region and World". Scientific-analytical journal. Yerevan: 2020: N 6: 89-94 p.. (in Armenian)*
8. **Ghambaryan, A.** Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations (27.09.19-10.10.19) [*Khaghaghout'yan pahpanoumē Hayastanoum: Isoumner AMN-i Senati Artak'in haraberout'youneri handznazhoghovi ent'ahandznazhoghovoum (27.09.19-10.10.19).* Yerevan: Institute of History of the RA NAS: 2022: 356 p.
 9. **Ghambaryan, A.** The Military Mission of the First Republic of Armenia in the USA (summer of 1920) [*Hayastani Arajin Hanrapetout'yan razmakan arak'elout'younn AMN-oum (1919 t'. verj – 1920 t'. amar)*] // "Region and World". Scientific-analytical journal. Yerevan. 2022. No. 6. 46-55pp. (in Armenian)
 10. **Ghambaryan, A.** The Activities of the Civil Mission of the First Republic of Armenia to the USA (end of 1919 - beginning of 1920) [*Hayastani Arajin Hanrapetout'yan k'aghak'ats'iakan arak'elout'yan gortsouneowt'younn AMN (1919t'. verj - 1920t'. skizb).* // Historical and Philological Journal. Yerevan. "Science" Publishing House of the NAS of the Republic of Armenia. 2021. N 3. 134-149 pp.. (in Armenian)
 11. **Ghambaryan, A.** Statement of H. Kajaznuni to the Subcommittee of the Committee on Foreign Relations United States Senate (October, 1919) [*H. K'ajaznounou haghordoumē AMN senati artak'in haraberout'youneri handznazhoghovi ent'ahandznazhoghovoum (hoktember, 1919)*] // Historical and Philological Journal. Yerevan. "Science" Publishing House of the RA NAS. 2019. N 3. 254 -261 pp.. (in Armenian)
 12. "Yaraj" [*«Yaraj»*]. Yerevan. 10.01.1920.
 13. **Ghambaryan, A.** The Diplomatic Activity of The Plenipotentiary Representative of The Republic of Armenia G. Pasdermadjian (Armen Garo) in the USA at the End of 1919 // Herald of Social Sciences. Yerevan. 2024. No. 3. pp. 48-60. (in Armenian)
 14. **Ghambaryan, A.** The Millitary Mission of the First Republic of Armenia and Commander Andranik // "Review of Armenian Studies". International Journal of Armenian Studies. Yerevan: "Science" Publishing House of the NAS of the Republic of Armenia. No. 3 (30). 74-89 pp.. (in Armenian)
 15. **Hovannisian, R.** From Versailles to London, 1919-1920. Vol. II. Berkley-Los Angeles-London. 1982. 603 p..
 16. Journal of Senate, 66 Congress, 1st Session. 1919. Washington.
 17. Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R.. Washington. 1919. 125 p.
 18. «New York Times». New York. 13.10. 1919; 05.10.19; 12.10.19.
 19. The Republic of Armenia. A Memorandum on the Recognition of the Government of the Republic of Armenia Submitted by the Special Mission of the Republic of Armenia to the United States. Presented by Mr. Lodge, November 10, 1919 - Ordered to be printed. Washington. Government Printing Office. 1919. 15 p..
 20. **Makhmuryan, G.** Armenia in the U.S. Politics of 1917-1923 [Armenia v poltike SSHA v 1917-1923]. Yerevan. Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia. 2018. 608p.. (in Russian)
 21. **Hovhannisyan, R.** Foreign Relations of the Republic of Armenia 1918-1920 [*Mezhdunarodniye otnosheniya Respubliki Armenia 1918-1920*]. Yerevan. Publishing House "Tigran mets". 2007. 890 p.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **26. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **04. 11. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմենուհի Վանյայի ՂԱՄԲԱՐՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ armenuhi.ghambaryan@gmail.com / ORCID.org/0009-0005-5102-3725

Armenuhi Vanik GHAMBARYAN: PhD in History, Associate Professor,
Senior Researcher at the Institute of History of NAS, Yerevan, RA.
e-mail: armenuhi.ghambaryan@gmail.com / ORCID.org/0009-0005-5102-3725

ԴՐՎԱԳՆԵՐ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1915-1917 թթ)¹

Արմեն Ս. Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Նինեստա Ս. Ադամյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Առաջին աշխարհամարտի տարիներին շուրջ 300.000 արևմտահայեր, ցեղասպանությունից փրկվելով, ապաստան գտան Կովկասի հայաբնակ շրջաններում: Մեծ Բրիտանիան կարևոր դերակատարություն ունեցավ նրանց ընդունելու և նվազագույն կենսապայմաններով ապահովելու գործում: Հոգվածի նպատակն է ներկայացնել բրիտանական «Հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդի» ու «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» բարեգործական գործունեության պատմությունը: Այս կազմակերպությունները Միացյալ Թագավորությունից ստացված նվիրատվությունների և բրիտանական պետական գանձարանի միջոցների հաշվին հազարավոր մարդկանց փրկեցին սովից, հիվանդություններից և ֆիզիկական բնաջնջումից: Մեթոդներ և նյութեր. Բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների 1915-1917թթ. ծավալած գործունեության վերաբերյալ համապարփակ պատկերացում ձևավորելու համար հոգվածում կիրառվել են սկզբնաղբյուրային նյութերի՝ որակական

¹ Հոգվածը որպես զեկուցում կարդացվել է 2025թ. սեպտեմբերի 26-27-ին Գյումրիում անցկացված «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» խորագրով 12-րդ միջազգային գիտաժողովում:

ցուցանիշով դասակարգման, ձեռագիր և տպագիր վավերագրերի համեմատության, դրանց հավաստիության ստուգման, պատմական փաստերի վերլուծության և համադրման մեթոդները: Վերլուծություն. Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերում պահվող փաստաթղթերի, հայերեն գիտական գրականության և ժամանակի պարբերական մամուլում հրապարակված նյութերի համադրությամբ՝ հոդվածում ներկայացրել ենք նշված կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղություններն ու արդյունքները, ինչպես նաև նրանց կապերը տարածաշրջանում գործող հայկական բարեգործական հիմնադրամների հետ: Արդյունքներ. Համագործակցելով Կովկասում գործող հայկական բարեգործական ընկերությունների հետ՝ բրիտանական հայանպաստ կազմակերպությունները զգալի աջակցություն ցուցաբերեցին հայ գաղթականներին՝ հիմնելով որբանոցներ, արհեստանոցներ, սննդակայաններ և հիվանդանոցներ: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ թուրքական զորքերը դուրս բերվեցին Հայաստանի նորաստեղծ հանրապետության տարածքից, այդ կազմակերպություններից շատերը վերադարձան և իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1926 թ.: Հեղինակների ներդրումը. Հետազոտությունն իրականացվել է երկու հեղինակների անմիջական մասնակցությամբ. առաջին հեղինակը հրապարակման է պատրաստել «Հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդի», իսկ երկրորդը՝ «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» 1915-1917 թթ. գործունեության պատմությունը:

Բանալի բառեր՝ *Առաջին համաշխարհային պատերազմ, Կովկասի Հայոց բարեգործական ընկերություն, Մեծ Բրիտանիա, Ալեքսանդրապոլ, գաղթականներ, արհեստանոց, որբանոց:*

Ինչպես հղել՝ Հայրապետյան Ա., Ադամյան Ն. *Դրվագներ բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների համագործակցության պատմությունից (1915-1917թթ.)*. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2025: Հ. 2 (28): 66-79 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-66

EXCERPTS FROM THE HISTORY OF COOPERATION BETWEEN BRITISH AND ARMENIAN CHARITABLE ORGANIZATIONS (1915–1917)

Armen S. Hayrapetyan

Institute of History of NAS, Yerevan, RA
Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Ninet S. Adamyan

Institute of History of NAS RA, Yerevan, RA

Abstract

Introduction: During World War I, approximately 300,000 Western Armenians, having escaped genocide, found refuge in Armenian-populated areas of the Caucasus. Great Britain played an important role in receiving them and providing them with basic living conditions. The purpose of

this article is to present the history of the charitable activities of the British organizations “Armenian Red Cross and Refugee Fund” and “Armenian Refugee Fund (Lord Mayor's Fund)”. These organizations, through donations from the United Kingdom and funds from the British treasury, saved thousands of people from starvation, disease, and physical destruction. *Methods and materials:* To create a comprehensive picture of the activities carried out by British and Armenian charitable organizations in 1915-1917, the article uses methods such as qualitative classification of primary sources, comparison of handwritten and printed documents, verification of their authenticity, as well as analysis and comparison of historical facts. *Analysis:* By comparing documents stored in the relevant funds of the National Archives of Armenia, Armenian-language scientific literature, and materials published in the periodicals of that time, the article presents the main directions and results of the activities of these organizations, as well as their connections with Armenian charitable foundations operating in the region. *Results:* Working with Armenian charities operating in the Caucasus, British charities provided significant assistance to Armenian refugees by establishing children's shelters, workshops, canteens, and hospitals. After the end of the World War, when Turkish troops were withdrawn from the territory of the newly formed Republic of Armenia, many of these organizations returned and continued their activities until 1926. *Authors' contributions:* The research was carried out with the direct participation of both authors: the first author prepared the history of the activities of the “Armenian Red Cross and Refugee Fund” for publication, while the second author prepared the history of the activities of the “Armenian Refugee Fund (Lord Mayor's Fund)” in 1915–1917.

Key words: *World War I, Caucasian Armenian Charitable Society, Great Britain, Alexandropol, refugees, workshop, shelter.*

Citation: Hayrapetyan A., Adamyan N. *Excerpts from the History of Cooperation between British and Armenian Charitable Organizations (1915–1917).* // "Scientific Works" of the SHCAS of NAS RA, Gyumri, 2025. Vol. 2 (28): 66-79 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.2-66

Ն Ա Մ Ա Ֆ Ա Ն. Առաջին աշխարհամարտի տարիներին մոտ 1.5 միլիոն հայեր զոհ գնացին երիտթուրքական իշխանությունների ոճրագործ քաղաքականությանը: Ջարդերից հրաշքով փրկվածների մի մասը ցրվեց Մերձավոր Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում: 300.000 մարդ անցավ Արևելյան Հայաստան և Կովկասի հայաշատ շրջաններ: Սրանց ընդունման ու տարրական կենսապայմանների ապահովման գործն իրենց ուսերին վերցրեցին հասարակական-բարեգործական կազմակերպությունները: Հայ ժողովրդի համար օրհասական այդ պահին անգնահատելի է այն օգնությունը, որ ցուցաբերվեց արտասահմանյան մարդասիրական կազմակերպությունների կողմից: Այս գործում իր ուրույն դերակատարությունն ունեցավ Մեծ Բրիտանիան՝ ինչպես առանձին անհատների, այնպես էլ բարեգործական կազմակերպությունների մակարդակով [9, թ. 25-26: 20, էջ 174]:

Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում սկիզբ առավ դեռևս 1878 թ., երբ լորդ Ջեյմս Բրայսը հիմնեց «Հայ-անգլիական բարեկամության ընկերություն» վերտառությամբ առաջին հայասիրական կազմակերպությունը [26, էջ 19: 20, էջ 4]: Համիդյան կոտորածների տարիներին՝ 1895–1897 թթ., հիմնվեցին «Շոտլանդա-հայկական ընկերակցություն» և «Հայաստանի բարեկամների միջազգային ընկերություն» կազմակերպությունները [26, էջեր 28-29, 31], իսկ 1913թ. սկզբներին՝ «Բրիտանիա-Հայաստան կոմիտեն» [19]:

Շարժումն իր գազաթնակետին հասավ Առաջին աշխարհամարտի տարիներին: Թուրքական կոտորածների հետևանքով տուժած բազմահազար հայ գաղթականներին օգնելու նպատակով Մեծ Բրիտանիայում հիմնվեցին տասնյակ մարդասիրական կազմակերպություններ, որոնց մեջ իր ակվիտ գործունեությամբ հատկապես աչքի ընկավ «Անգլիան հայ փախստականներին» լոնդոնյան կոմիտեն՝ Անգլկոմը, որը պատմական գրականության մեջ և արխիվային փաստաթղթերում հաճախ հիշատակվում է նաև Լորդ Քաղաքագլխի ֆոնդ («Lord Mayor's Fund») անունով, չնայած, վերջինից բացի՝ ընդգրկում էր նաև մի քանի այլ կազմակերպություններ, ինչպիսիք էին՝ «Հայաստանի բարեկամների ընկերությունը», «Հայկական ընկերությունը», «Մանչեստրի կանանց ընկերությունը» և այլն [9, թթ. 25-26]:

Անգլկոմի ընդհանուր ղեկավարությամբ այս կազմակերպությունները, սկսած 1915թ.-ից, իրենց բաժանմունքները հիմնեցին Եգիպտոսում, Բասրայում, Ադանայում, Վանում և Իզդիրում, ապա պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ իրենց ուժերը կենտրոնացրին Միջագետքում և Հայաստանում: Մեծ Բրիտանիայից ստացվող նվիրատվությունների և բրիտանական պետական զանձարանից հատկացվող միջոցների հաշվին՝ դրանք զբաղվեցին ինչպես թուրքական ջարդերից փրկված որբերի խնամակալությամբ (բացվեցին որբանոցներ, սննդակայաններ, արհեստանոցներ ու դպրոցներ), այնպես էլ Միջագետքում և Հայաստանում ապաստանած գաղթականների օժանդակությամբ՝ այդ կերպ սովից, հիվանդություններից ու ֆիզիկական բնաջնջումից փրկելով հազարավոր մարդկանց: Բարեգործական անհատույց օգնության տրամադրումից զատ՝ այս կազմակերպությունները որբերի և գաղթականների համար հիմնեցին կարի, կոշիկի և գործվածքեղենի արտելներ՝ լուծելով նաև աշխատատեղերով բնակչության մի որոշ մասի ապահովման խնդիրը:

Ցավոք, բրիտանական կազմակերպությունների ծավալած հայանապաստ գործունեությանը խորհրդահայ պատմագրությունը, քաղաքական դրդապատճառներից ելնելով, անհրաժեշտ ուշադրության չարժանացրեց (թեև հազարավոր գաղթականներ այդ կազմակերպությունների շնորհիվ փրկվեցին սովից, ցրտից ու ապահովվեցին հանապազօրյա հացով): Խնդրի նկատմամբ հայ պատմագիտությունը հետաքրքրություն սկսեց ցուցաբերել միայն վերջին տարիներին, երբ հետազոտողներ Բ. Պողոսյանի և Ս. Ավետիսյանի ջանքերով ընթերցողի դատին ներկայացվեցին բրիտանական կազմակերպությունների՝ Հայաստանում ծավալած գործունեությանը վերաբերող փաստաթղթերի և նյութերի առաջին ժողովածուները [21: 5]:

Սույն հետազոտության նպատակն է լուսաբանել բրիտանական «Հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդի» ու «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» գործունեությունը 1915–1917 թթ.:

Հետազոտության առաջին բաժինը նվիրված է «Հայկական կարմիր խաչի և փախստականների օգնության ֆոնդի» 1915–1917 թթ. գործունեությանը: Քննարկել ենք հիմնադրամի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև՝ համագործակցության ձևերն ու արդյունքները «Հայկական կենտրոնական կոմիտեի» և «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հետ: Էմիլի Ռոբինսոն-

նի գրագրության և բրիտանական կառավարությանը ներկայացված հաշվետվություններին հիման վրա հատուկ ուշադրություն ենք դարձրել հիմնադրամի ֆինանսական գործունեությանը՝ լուսաբանելով հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն ու իրականացրած ներդրումների ծավալը:

Հոդվածի երկրորդ բաժնում վերլուծել ենք «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» գործունեությունը: Սա բրիտանական ամենամեծ բարեգործական կազմակերպությունն էր, որը օգնություն տրամադրեց արևմտահայերին ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ դրանից հետո: Ներկայացրել ենք հիմնադրամի ձևավորման գործընթացը, դրամահավաքի մեթոդները, ինչպես նաև համագործակցության ձևերը Կովկասում գործող հայկական բարեգործական կազմակերպությունների հետ: Այս հիմնադրամը դարձավ առաջին բրիտանական կազմակերպությունը, որը ոչ միայն մարդասիրական օգնություն տրամադրեց գաղթականներին, այլև սնունդ, սերմեր, գյուղատնտեսական գործիքներ և տնային կենդանիներ տրամադրեց իրենց բնակավայրեր վերադարձողներին: Համագործակցելով «Հայաստանի վերակառուցման հանձնաժողովի» և «Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերության» հետ՝ հիմնադրամը Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածներում հիմնեց նաև բրդի ու բամբակի վերամշակման ձեռնարկություններ՝ հնարավորություն տալով հազարավոր գաղթականների բարելավելու իրենց կյանքի պայմանները և հասնելու տնտեսական կայունության:

«Հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդի»

նպաստամատույց գործունեությունը 1915-1917 թթ.

Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված բրիտանական առաջին հայանպաստ կազմակերպությունը «Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդ» էր, որի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր 1913 թ. հիմնադրված «Հայկական ընկերության» քարտուղար Էմիլի Ռոբինզոնին [30, c. 13: 1, էջ 595]: Մինչև 1915 թ. հոկտեմբերի կեսերը Ֆոնդը համարվում էր արևմտահայ գաղթականներին օգնություն տրամադրող հիմնական բրիտանական կազմակերպությունը: Ֆոնդն ուներ բավականին ներկայացուցչական ղեկավար կազմ (նախագահ՝ Լեդի Բրայս, փոխնախագահներ՝ Լորդ Բրայս, Ալիսթեր Ֆրեյզեր, Լեդի Հենրի Սոմերսեթ, Լեդի Ֆրեդերիկ Գավնդիշ, գնդապետ Գրեգորի, Պատվելի Ստեֆեն Գլադստոն, սըր Էդվարդ Բոյլ, սըր Էդվին Փիրս, Նոել Բաքսթոն և ուրիշներ [11, թ. 14: 18, էջեր 31-32]) և ֆինանսավորվում էր հիմնականում բրիտանական պետական գանձարանից, ինչի համար ներկայացնում էր ամենամյա հաշվետվություն (այդ թվում նաև լուսանկարներ): Զուգահեռ՝ Ֆոնդը ֆինանսական միջոցներ էր ստանում նաև առանձին անհատներից նվիրատվությունների ձևով և դրամահավաքներից: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում պարբերաբար կազմակերպվում էին այսպես կոչված «Հայկական դրոշի օրեր»: Այդ միջոցառման ընթացքում վաճառվում էին հայկական դրոշներ, իսկ վաճառքից գոյացած գումարն անցնում էր ֆոնդի տրամադրության տակ:

Առաջին այդպիսի միջոցառումը, որին մասնակցություն բերեցին ինչպես տեղի հայկական գաղութի ներկայացուցիչները, այնպես էլ զգալի թվով անգլիացիներ և բելգիացիներ, տեղի ունեցավ Մանչեստրում 1916 թ. հոկտեմբերի 13-14-ին: 1916 թ. հոկտեմբերի 21-ին «Հայկական դրոշի օրեր» կազմակերպվեցին Վիտհում, նոյեմբերի 18-ին՝

Միլնգարնվիում, նոյեմբերի 25-ին՝ Նորտ Բերվիքում և Բրիջ օֆ Ալենում, դեկտեմբերի 2-ին՝ Դեննիում, դեկտեմբերի 4-ին՝ Լիդսում, դեկտեմբերի 18-ին՝ Լիվերպոլում: Ֆոնդին ֆինանսական աջակցություն տրամադրեցին նաև Բրիտանիայում գործող հասարակական կազմակերպությունները՝ Հիլսթոն քաղաքի «Դաշնակիցների օգնության ֆոնդը», Աթերթոնի «Քաղաքացիների լիգան», Լամփեթերի «Դաշնակիցների օգնության հայրենասերների կոմիտեն», Վուլվերհեմփթոնի «Դաշնակիցների ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Միդլբորոյի «Նպաստների կենտրոնական ֆոնդի» քաղաքային ղեկավարությունը, Սթոկթոնի «Նպաստներ հատկացնող դաշնակիցների ընդհանուր կոմիտեն» և այլք [32, cc. 18-19]:

Աշխարհամարտի տարիներին Անդրկովկասում հանգրվանած գաղթականների կարիքները բավարարելու նպատակով Ռուսական կայսրության տարբեր շրջաններում ստեղծվել էին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ՝ «Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը», «Հայկական կենտրոնական կոմիտեն», Մոսկվայի և Պետրոգրադի «Պատերազմից վնասվածներին օգնող» կոմիտեները, «Հայ նպաստամատույց» և «Մեղու» ընկերությունները, «Հայ տիկնանց» և «Հայ ուսուցչական կոմիտեները», «Հայրենակցական միությունների» միությունը, «Եղբայրական օգնության կոմիտեն», «Տատյանա Նիկոլանայի կոմիտեն», «Քաղաքների միության կոմիտեն» և այլք [12, էջեր 25-26]: Այս կազմակերպությունները պատերազմի ընթացքում և դրանից հետո բավարարեցին գաղթականների կենցաղային կարիքները, ցուցաբերեցին դրամական օգնություն, իրականացրեցին գերության մեջ գտնվող գաղթականների փրկության գործը, բացեցին որբանոցներ, սննդատու կայաններ ու հանրակացարաններ, զբաղվեցին որբերի խնամքով ու դաստիարակությամբ:

Բարեգործական այս կազմակերպությունները նաև կապող օղակ դարձան ամերիկյան և եվրոպական նպաստամատույց կոմիտեների ու արևմտահայ գաղթականության միջև: Հիմնականում հենց նրանց միջոցով էր դրամական և նյութական օգնությունը արտասահմանից հասնում Անդրկովկաս:

Իր գործունեության առաջին շրջանում (1915-1917 թթ.) բրիտանական «Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը» համագործակցեց «Կովկասի Հայոց բարեգործական ընկերության (այսուհետ՝ ԿՀԲԸ)»² և նրան կից գործող Հայկական

² Կովկասի Հայոց Բարեգործական ընկերություն – հիմնվել է Թիֆլիսում՝ 1881թ. նոյեմբերին, բժիշկ Բագրատ Նավասարդյանի նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ օգնել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կովկաս գաղթած հայերին: ԿՀԲԸ-ն օժանդակել է հայ գրողներին, հրապարակախոսներին, նկարիչներին ու երաժիշտներին, կրթաթոշակ է տրամադրել Ռուսաստանի և Եվրոպայի տարբեր բուհերում սովորող հայ ուսանողներին: Ընկերությունը ֆինանսավորում էր 140 դպրոց, հրատարակում գրքեր՝ այդ թվում նաև անվճար դասագրքեր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո ԿՀԲԸ-ն հայ գաղթականների համար բացեց դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և ապաստարաններ, միջոցներ հայթայթեց հայ ռազմագերիներին օգնելու համար, ապա 1915 թ. դեկտեմբերից հրատարակեց «Համբավաբեր» շաբաթաթերթը: ԿՀԲԸ-ն իր գործունեությունը դադարեցրեց 1921 թ. մարտի 2-ին՝ Վրաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո:

կենտրոնական կոմիտեի հետ (այսուհետ՝ ՀԿԿ)³ հետ:

Արևմտահայ գաղթականների և հայ կամավորականների բժշկական կարիքները հոգալու համար Ֆոնդն իր առաջին 200 ֆունտ ստեռլինգ նվիրատվությունը Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս Բրյուս Լոկարտի միջոցով փոխանցեց Թիֆլիսի քաղաքագլխին արդեն 1915 թ. հունվարին: Հաջորդ երկու ամիսների ընթացքում Է. Ռոբինսոնի նախաձեռությամբ և ԿՀԲԸ միջնորդությամբ գաղթականների ու որբերի օգտին փոխանցվեց ևս 13.000 ռուբլի [11, թթ. 15-16: 22, էջ 2]: 1915 թ. ապրիլի 16-ին նույն ճանապարհով ևս 600 ֆունտ ստեռլինգ փոխանցվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին [34, pp. 244-248]:

Իր գործունեության միայն առաջին տարում՝ 1915 թ., «Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը» հավաքեց շուրջ 4.600 ֆունտ ստեռլինգ կամ մոտ 47.000 ռ. գումար՝ չհաշված ֆոնդի անունով ստացված հագուստը: Այս ֆինանսների մի մասը հոկտեմբեր ամսին Մոսկվայում բրիտանական հյուպատոսի միջոցով փոխանցվեց ԿՀԲԸ-ին և ՀԿԿ-ին՝ տեղերում գաղթականության առաջնահերթ կարիքները հոգալու համար: Թիֆլիս ուղարկվեց նաև զգալի քանակությամբ տաք հագուստ և մոտ 3.000 ռ. դեղորայք [29, c. 14]: Եվս 1.000 ֆունտ ստեռլինգ՝ նոյեմբերին փոխանցվեց Ամենայն հայոց կաթողիկոսին [36, pp. 279-281]: Նույն ժամանակահատվածում Է. Ռոբինսոնը ԿՀԲԸ-ի միջոցով «Հայ օրիորդների կոմիտեի» կողմից պահվող որբանոցներին հատկացրեց 8.000 ռ. [14, էջ 16], և ևս 3.080 ռ.՝ ի նպաստ Թիֆլիսում և Երևանում ապրող «Վանեցի կանանց միության» նորաբաց արհեստանոցների:

Ֆոնդի ու հայկական նպաստամատույց կազմակերպությունների համագործակցությունն առավել մեծ մասշտաբներ ընդունեց 1916 թ.: Այսպես, ապրիլին Լոնդոնի քաղաքագլխի միջոցով Մանչեստրից հայ փախստականների կարիքների համար ԿՀԲԸ-ին փոխանցվեց 13.800 ֆունտ ստեռլինգ [13: 10, թ. 28]: Եվս 14.000 ֆունտ ստեռլինգի նյութական աջակցություն ցուցաբերեցին հնդկահայ վաճառականները [27, էջեր 1-2]: Նույն ամսին լորդ Հարոլդ Բաքստոնի ջանքերով Անդրկովկաս գործուղվեց բժշկական խումբ (մեկ բժիշկ, գթության երկու քույր և գաղթականական գործի երկու կազմակերպիչ)[7], որը հաջորդ երկու ամիսների ընթացքում եղավ Էրզրումում, Վանում, ապա Պարսկաստանի մի շարք շրջաններում և հունիսի 21-ին վերադարձավ Թիֆլիս [17 էջ 3]: Հունիսի վերջին օրերին «Հայկական կենտրոնական կոմիտեի» Թիֆլիսի գրասենյակ հասավ նաև Է. Ռոբինսոնի կողմից ուղարկված 4 արկղ տաք հագուստ ու 28 արկղ դեղորայք [38, p. 464]: Տարեվերջին Ֆոնդը՝ ԿՀԲԸ հետ համատեղ ծրագրեց Ալեքսանդրապոլում 100 սասունցի երեխաների համար բացել որբանոց և այդ ծրագրի իրագործման համար նախական փոխանցեց 4.635 ռ. կամ 300 ֆունտ ստեռլինգ: Ցավոք, միջոցների պակասն ու կտրուկ գնաճը հարկադրեցին այս ուղղությամբ որոշակիորեն կրճատել աշխատանքի ծավալները: Է. Ռոբինսոնի անունը կրող որբանոցն իր աշխատանքները սկսեց 1917 թ.

³ Հայկական կենտրոնական կոմիտե – Ս. Հարությունյանի նախագահությամբ հիմնադրվել է 1914 թ. սեպտեմբերին՝ գաղթականներին և կամավորներին օգնություն ցույց տալու նպատակով: ՀԿԿ-ն ուներ 24 անդամ և գործում էր ԿՀԲԸ-ին կից: Կոմիտեն իր ներկայացուցիչն ուներ Ռուսական կայսրության Ներքին գործերի նախարարություն՝ ի դեմս Պետական դոմայի անդամ Մ. Աճեմյանի:

հունվարին՝ 40 որբերով [11, թ. 2]:

1916 թ. Ֆոնդը սերտ հարաբերություններ հաստատեց նաև Թիֆլիսի «Պատերազմի զոհերի կենտրոնական նպաստամատույց կոմիտեի» հետ: Այս համագործակցության արդյունքում արևմտահայ երիտասարդ գաղթականների համար Դիլիջանում բացվեց տեխնիկական դպրոց և հիմնվեց ֆերմային տնտեսություն: Այդ ծրագրերի իրագործման նպատակով 1916 թ. նոյեմբերի 4-ին Ֆոնդը Նպաստամատույց կոմիտեին փոխանցեց 6.200 ռ. (400 ֆունտ ստեռլինգ): Եվս 1.550 ռ. (400 ֆունտ ստեռլինգ) Կոմիտեի միջոցով հատկացվեց Վանից գաղթած «Արծաթագործների միությանը» [11, թթ. 5, 23-24]:

«Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը» 1917 թ. ևս շարունակեց իր ակտիվ մարդասիրական գործունեությունը՝ որպես օգնություն Անդրկովկաս ուղարկելով մոտ 11.500 ֆունտ ստեռլինգ կամ մոտ 180.000 ռ.: 1917 թ. միայն առաջին վեց ամիսների ընթացքում այդ ընդհանուր միջոցներից ԿՀԲԸ-ի միջնորդությամբ Թիֆլիս՝ տարբեր անձանց և կազմակերպությունների անունով ուղարկվեց 18420 ռ. (որից 8.225 ռ. հունվարի 29-ին հանձնվեց «Եղբայրական օգնության» հանձնաժողովի էրզրումում գտնվող ներկայացուցիչներ Զավեն Եպիսկոպոսին՝ տեղի գաղթականներին օգնելու համար [2, էջեր 169-170], 12.342 ռ. փոխանցվեց Դիլիջանում գաղթականների համար բացված արհեստանոցներին, իսկ 10.650 ռ. էլ՝ Ալեքսանդրապոլի Է. Ռոբինսոնի անվան որբանոցին [11, թթ. 5, 23-24]: Հաջորդ չորս ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլի որբանոցի, Դիլիջանի արհեստանոցների և «Արևմտահայ ուսուցչական միության» օգտին փոխանցվեց ևս 13.500 ռ [25, էջ 690]:

Ի դեպ, Է. Ռոբինսոնի և ԿՀԲԸ-ի համատեղ ջանքերով Դիլիջանում բացված արհեստանոցները կարճ ժամանակահատվածում մեծ ճանաչում ձեռք բերեցին: Դրանցում աշխատում էին երիտասարդ գաղթականներն ու որբերը (օրական 50-60 մարդ): Գործում էր չորս ուղղություն. ա. Վիեննական ոճով կահույքի պատրաստում, բ. աստղ-ձագործություն, գ. հյուսնություն և դ. դարբնություն: Արհեստանոցներին կից բացվել էր հանրակացարան, բաղնիք, գաղթականական դպրոց և ագարակ, որտեղ գաղթականները զբաղվում էին նաև հողագործությամբ: Ծրագրի նպատակն էր՝ երեխաներին արհեստ սովորեցնելը, որպեսզի նրանք հետագայում կարողանային ապրուստի միջոց վաստակել [2, էջեր 168-169, 171]:

Ցավոք, 1918 թ. իրադարձությունները՝ թուրքական արշավանքը, Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների զինագրավումը թուրքական զորքերի կողմից ու հաղորդակցական ուղիների փակվելն իրենց ազդեցությունն ունեցան Ֆոնդի գործունեության վրա: Այն գրեթե դադարեցրեց միջոցներ առաքել Անդրկովկաս, սակայն շարունակեց իր աշխատանքները Մեծ Բրիտանիայում:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում կնքված զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչվեց աշխարհամարտում պարտված: Թուրքական օկուպացիոն զորքերը հեռացան, իսկ զինագրավված շրջանները վերադարձվեցին ՀՀ-ին: Նույն օրերին իր աշխատանքներն Անդրկովկասում վերսկսեց նաև «Հայկական կարմիր խաչի և փախստականների ֆոնդը»:

«Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» գործունեությունը 1915-1917թթ.

Աշխարհամարտի տարիներին և դրանից հետո գաղթականությանն օգնություն տրա-

մադրող բրիտանական ամենախոշոր նպաստամատույց կազմակերպությունը «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդ» էր: Վերջինիս ստեղծման մասին որոշումը Լորդերի պալատն ընդունեց 1915թ. հոկտեմբերի 6-ին: Ֆոնդի ստեղծման գործում մեծ ներդրում ունեցան Լոնդոնի ապագա Լորդ քաղաքագլուխ Կառլ Ուեյկֆիլդը, պառլամենտի անդամներ Ա. Ուիլյամսը, Ն. Բաքսթոնը և այլք: Ֆոնդի մշտական նախագահն էր Լոնդոնի Լորդ քաղաքագլուխը, փոխնախագահների թվում էին՝ Քենթերբերիի և Յորքի արքեպիսկոպոսները, Լոնդոնի եպիսկոպոսը, Անգլիայի կաթոլիկների առաջնորդ կարդինալ Բուրնը, Անգլիայում ռուսական դեսպան Բենկենդորֆը և այլք [35, p. 136]:

Բրիտանական մյուս նպաստամատույց ընկերությունների օրինակով՝ «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը» ևս իր մարդասիրական առաքելության ընթացքում համագործակցեց Անդրկովկասում գործող հայկական բարեգործական կազմակերպությունների հետ:

Ֆոնդի վաղ շրջանի գործունեության մասին տեղեկություններ են պահպանվել վերջինիս գործադիր կոմիտեի նախագահ Անեուրին Ուիլիամսի նամակներում, որ պահվում են ՀՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվում: Օրինակ՝ 1915 թ. նոյեմբերի 23-ով թվագրված մի նամակից պարզ է դառնում, որ «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդ» իր գոյության առաջին ամսում բարեգործական նպատակներով հավաքել էր 14.000 ֆունտ ստեռլինգ, որից 10.000-ը՝ Մոսկվայում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոսի միջոցով փոխանցել էր Ամենայն Հայոց կաթողիկոսին, 550-ը՝ Թավրիզում բրիտանական հյուպատոսին, իսկ 170 ֆունտ ստեռլինգ արժողությամբ սննդամթերք էլ ուղարկել էր Եգիպտոսում հանգրվանած հայ գաղթականներին [6]:

Թիֆլիսի շրջակայքում կուտակված գաղթականների կարիքները հոգալու համար 1915 թ. դեկտեմբերի 21-ին Ֆոնդը ՀԿԿ-ին տրամադրել էր 37.312 ռ. [11, թ. 67]: Հաջորդ չորս ամիսների ընթացքում Վոլժսկո-Կամսկի բանկի միջոցով ՀԿԿ-ին փոխանցվել էր ևս 220.000 ռ.՝ 83.000-ը գաղթականների (Երևանում՝ 28.000, Էջմիածնում՝ 25.000, Ալեքսանդրապոլում՝ 30.000) կարիքները հոգալու, նրանց օրեկան 15 կոպեկ և այլուր տրամադրելու համար [23, էջ 210: 15, էջ 16]: Ֆինանսական միջոցներ էին տրամադրվել նաև ասորի գաղթականներին (Ֆոնդը, հատուկ որոշմամբ, իր տրամադրության տակ եղած գումարների 10 %-ը մշտապես ծախսում էր ոչ հայ գաղթականներին օգնելու համար) [3, էջեր 320 – 322]:

Իսկ ընդհանուր առմամբ «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդ» իր գործունեության առաջին տարում հավաքել էր մոտ 62.300 ֆունտ ստեռլինգ [37, pp. 244-245]:

Գաղթականության վիճակին մոտիկից ծանոթանալու, ինչպես նաև տեղում աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար, Ֆոնդը 1916 թ. գարնանը Անդրկովկաս գործուղեց ութհոգանոց առաքելություն՝ պատվավոր քարտուղար Հ. Բաքսթոնի գլխավորությամբ (պատվիրակության անդամներն էին՝ բժիշկ Գ. Ասպլանդը, գթության քույրեր Բ. Քարը, Մ. Բարբըրը և Արմսթրոնգը, Ա. Բաքսաուզը, բանկիր Ջ. Հոջկինը և առաքելության քարտուղար Ա. Մաֆրաստյանը) [8, էջեր 517-518]: Ապրիլի 2-ին առաքելությունը ժամանեց Պետրոգրադ, ապրիլի 18-ին Թիֆլիսում մասնակցեց «Հայկական կենտրոնական կոմիտեի» արտակարգ նիստին, ապա անցավ Էջմիածին, Կարին, Վան և Բիթլիս [16, էջ 16: 28, էջ 753]:

Հ. Բաքսթոնի առաքելության այցն Արևմտյան Հայաստան էականորեն փոխեց բրիտանական նպաստամատույց կազմակերպությունների և կառավարող շրջանակների վերաբերմունքը երկրամասի նկատմամբ: Ռուսական զորքերի վերջին հաղթանակներից ոգևորված գաղթականները սկսել էին վերադառնալ բնակության նախկին վայրեր, ինչը որոշակիորեն փոխում էր նպաստամատույց կազմակերպությունների առջև դրված խնդիրները: Այժմ արդեն անհրաժեշտ էր մտածել հայրենիք վերադարձող գաղթականներին սովի ճիւղաններից փրկելու՝ նրանց աշխատանքով, սերմնացուով և ընտանի կենդանիներով ապահովելու մասին [31, cc. 16-17]:

Այս խնդիրների լուծման համար 1916 թ. գարնանից «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը» սկսեց համագործակցել նաև «Հայաստանի վերաշինման հանձնաժողովի» ու «Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերության» հետ:

Այդ համագործակցության արդյունքում 1917 թ. մարտին Բզդիքում բացվեց բամբակագործական գործարան, որտեղ աշխատում էին ջարդերի ժամանակ այրիացած 100 կանայք: Նրանցից յուրաքանչյուրը անվճար ստանում էր ճախարակ և շաբաթական երեք ֆունտ բամբակ: Գործարանում միջին աշխատավարձը կազմում էր ամսեկան 12 ռ. [24, էջ 10]: Մինչև սեպտեմբեր աշխատակցուհիների թիվը հասավ 500-ի, բարցրացվեց նաև ամսեկան աշխատավարձը:

1917 թ. ամռան վերջերից Ֆոնդը նմանատիպ գործարան-արհեստանոցներ բացեց նաև Արևելյան Հայաստանում: Օրինակ՝ 15-ական ճախարակներով բրդի և բամբակի մշակման 4 արհեստանոցներ բացվեցին Ալեքսանդրապոլի գավառում [33, c. 18]: Ըստ «Աշխատանք» օրաթերթի՝ սա հնարավորություն տվեց 1490 գաղթականների ապահովել աշխատանքով: Այսինքն՝ միջին հաշվով մոտ 6000 մարդ բարելավեց իր կենսապայմանները: Աշխատակիցներից 40-ը տղամարդիկ էին (վարպետներ), իսկ 1450-ը՝ կանայք (800-ն աշխատում էր բրդի, իսկ 650-ը՝ բամբակի մանարաններում) [4, էջեր 1-2]:

«Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» հիմնական ֆինանսական միջոցները ստացվում էին դրամահավաքներից: Բրիտանական նպաստամատույց մյուս կազմակերպությունների օրինակով՝ Ֆոնդը Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում պարբերաբար կազմակերպվում էր «Հայկական դրոշի օրեր»: Այդ միջոցառումներից ամենախոշորը տեղի ունեցավ 1917 թ. հունիսի 13-ին՝ Լոնդոնում:

Դրամահավաքի մեկ այլ ձև էր «Հայկական կիրակիների» կազմակերպումը, երբ հոգևորականները կիրակնօրյա ժամերգությունից հետո եկեղեցիներում հավաքված բազմությանը պատմում էին պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած կորուստների մասին և ներկաներին կոչ անում հնարավորության սահմաններում օժանդակել նրանց:

Նմանատիպ եղանակներով «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը» 1917 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում հավաքեց ավելի քան 85.500 ֆունտ ստեռլինգ [39, pp. 125-126]:

Անդրկովկասում Ֆոնդի ծավալած գործունեությանը լուրջ հարված հասցրեցին 1918 թ. թուրքական արշավանքն ու Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների զինագրավումը: «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդը» դադարեցրեց իր

ծրագրերի իրականացումը տարածաշրջանում, իսկ նրա ներկայացուցիչները վերադարձան Լոնդոն: Թուրքական զորքերի հեռանալուց հետո Ֆոնդը վերսկսեց իր գործունեությունն արդեն Հայաստանի նորանկախ հանրապետությունում: Դրանց իրագործումը շարունակվեց նաև Հայաստանի խորհրդայնացումից հետո:

Ե Զ Ը Մ Զ Ն Պ ՈՒ Մ. Ամփոփելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հումանիտար բնագավառում բրիտանական հայանպաստ կազմակերպությունների ծավալած գործունեության լուսաբանումը՝ նշենք հետևյալը. սկսած 1915 թ.-ից՝ այդ կազմակերպությունները զգալի ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին հայ գաղթականներին և որբերին՝ հիմնելով որբանոցներ, արհեստանոցներ, սննդակայաններ ու հիվանդանոցներ: Իրենց մարդասիրական գործունեության շրջանակներում նրանք ակտիվորեն համագործակցեցին տարածաշրջանում գործող հայկական բարեգործական կազմակերպությունների՝ հիմնաձևում Կովկասի Հայոց բարեգործական ընկերության հետ՝ վերջինիս տրամադրելով ֆինանսական զգալի միջոցներ: Զուգահեռ՝ այդ կազմակերպություններից շատերը տեղում աշխատանքները հսկելու նպատակով Կովկաս ուղարկեցին հատուկ առաքելություններ և տարածաշրջանում ունեցան իրենց մշտական ներկայացուցիչները: Բրիտանական մարդասիրական կազմակերպությունները քայլեր ձեռնարկեցին նաև գաղթականների ու մեծահասակ որբերի համար տարաբնույթ աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ, ինչը, մեր կարծիքով, առավել օգտակար էր: Ցավոք, 1918 թ. իրադարձությունները՝ թուրքական արշավանքը, Արևելյան Հայաստանի մեծ մասի օկուպացումը թուրքական զորքերի կողմից և հաղորդակցական ուղիների փակվելն իրենց ազդեցությունն ունեցան բրիտանական կազմակերպությունների գործունեության վրա: Դրանք ստիպված եղան դադարեցնելու հայախնամ ծրագրերի իրականացումը տարածաշրջանում և աշխատանքները շարունակեցին Մեծ Բրիտանիայում: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ թուրքական օկուպացիոն զորքերը հեռացան, բրիտանական մարդասիրական կազմակերպություններից շատերը վերադարձան տարածաշրջան և իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1926 թ.:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ա.Ս.** «Տանկահայեր. Օր. Էմիլի Ռոբինսոն»: Համբաւաբեր շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 19:
2. **Աղամյան Ն.** Բրիտանական «Հայկական ընկերության» հայանպաստ գործունեության պատմությունից (1916–1917 թթ.) // «Լրաբեր հասարակական գիտությունների»: Երևան: 2015: № 1: 163–180 էջեր:
3. **Աղամյան Ն.** ԿՀԲԸ-ն և Armenian Refugees (Lord Mayor's Fund-ի համագործակցության պատմությունից (1915–1916 թթ.) // «Լրաբեր հասարակական գիտությունների»: Երևան: 2018: № 1: 315–324 էջեր:
4. **Արմենակ Փ.** «Ամերիկացիները մեր մէջ»: Աշխատանք: Երևան: 1917: № 42:
5. **Ավետիսյան Ս.** Անգլիական օգնության կոմիտեի (Անգլկոմի) գործունեությունը Հայաստանում 1920-ական թվականներին: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ.: 2014: 137 էջ:
6. **Ե. Չարենցի** անվան գրականության և արվեստի թանգարան: Արշակ Չոպանյանի ֆոնդ: Բաժին III: թիվ 9385:
7. «Ժողովուրդների բարեկամությունը»: Արեւ. օրաթերթ: Բագու: 1916: № 78:
8. «Լոնդոնի Լորդ-քաղաքագլխի հայկական միսիան»: Համբաւաբեր շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 17:
9. Հայաստանի ազգային արխիվ: Ֆոնդ 113: Ցուցակ 38: Գործ 10:

10. Հայաստանի ազգային արխիվ: Փոնդ 28: Ցուցակ 1: Գործ 423:
11. Հայաստանի ազգային արխիվ: Փոնդ 28: Ցուցակ 1: Գործ 901:
12. **Հարությունյան Ա.** Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916թթ. // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»: Երևան: 2002: Թիվ 6: 19-31 էջեր:
13. «Ներքին լուրեր»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1917: № 21:
14. «Ճաբաթական լուրեր»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 12:
15. «Ճաբաթական լուրեր»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 16:
16. «Ճաբաթական լուրեր»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 25:
17. «Ճաբաթական լուրեր»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 31:
18. **Պողոսյան Բ.** Բրիտանական հայանպաստ կազմակերպությունների օգնությունը հայ փախստականներին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»: Երևան: 2003: № 8: էջ 31-46 էջեր:
19. **Պողոսյան Բ.** Բրիտանիա-Հայաստան կոմիտեի գործունեությունը (1913-1924 թթ.): Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ.: 2003: 122 էջ:
20. **Պողոսյան Բ.** Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում (1914-1923 թթ.): Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ.: 2005: 174 էջ:
21. **Պողոսյան Բ.** Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում ըստ ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվում պահվող փաթեթերի (1918-1923 թթ.): Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ.: 2002: 96 էջ:
22. **Սաֆրաստեան Ա.** «Նամակ Անգլիայից»: Մշակ օրաթերթ: Թիֆլիս: 1915: № 92:
23. «Տարեգիր բարեգործության»: Համբավաբեր շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 7:
24. **Տ.** «Թխրքահայ գաղթականությունը Կովկասում»: Վան-Տոսպ շաբաթաթերթ: Թիֆլիս: 1917: № 16:
25. «Տարեգիր Կ.Հ.Բ. ընկերության»: Հայկական կենտրոնական Կոմիտե: Համբավաբեր շաբաթաթերթ: Թիֆլիս: 1917: № 35:
26. **Տիգրանեան Տ.** Անգլիան և հայերը: Երևան: Մ. Վարանդեան հրատ.: 1994: 218 էջ:
27. **Տոնապետեան Պ.** «Լոնդոնի Լորդ Մերի Հայ նպաստամատուց ֆոնդի յանձնախումբը դեպի Կովկաս. Հնդկահայերու աջակցությունը»: Հորիզոն օրաթերթ: 1916: № 82:
28. «Քրոնիկոն»: Համբավաբեր շաբաթաթերթ: Թիֆլիս: 1916: № 24:
29. **Робинсон Э.** «Европа и армяне. Отчет Armenian Red Cross в Лондоне» // Армянский Вестник. Москва. 1916. № 8.
30. «Мисс Эм. Робинзон» // Армянский вестник. Москва. 1916. № 35-36.
31. **Адамов М.** «Английская помощь армянам» // Армянский вестник. Москва. 1916. № 22.
32. **Сафрастьян А.** «Дни армянского флага в разных областях Англии» // Армянский Вестник. Москва. 1917. № 1.
33. «Ситуация с беженцами» // Армянский вестник. Москва. 1917. № 43-44.
34. **Robinson J. Emily.** 'The Armenian Red Cross and Refugee Fund' // Ararat. A Searchlight on Armenia. London. 1915. vol. II, № 19.
35. 'Armenian Refugees (Lord Mayor's) Fund' // Ararat. A Searchlight on Armenia. London. 1915. vol. III. № 28.
36. **Robinson J. Emily.** 'Armenian Refugees' Relief Fund' // Ararat. A Searchlight on Armenia", London, 1915, vol. III, № 30, December, 279-281 pp..
37. 'Current notes', "Ararat. A Searchlight on Armenia", London, 1916, vol. IV, № 42, December, 241-247pp..
38. **Robinson J. Emily.** 'The Armenian Red Cross and Refugee Fund' // Ararat. A Searchlight on Armenia. London. 1917. vol. IV. № 46.
39. **Buxton Harold.** 'Armenian Refugees (Lord Mayor's) Fund' // Ararat. A Searchlight on Armenia. London. 1917. vol. V. № 51.

References

1. **A.S.** 'Tadjka Armenians. Or. Emily Robinson' [Tachkahayer. Or. Emili Rrobinson]. Reputable weekly. Tiflis: 1916: № 19.(in Armenian)

2. **Adamyan, N.** From the history of the pro-Armenian activities of the British 'Armenian Society' (1916–1917) [*Britanakan «Haykakan ynkerut'yan» hayanpast gortsuneut'yan patmut'yunits' (1916–1917 t't'.)*] // *Laber of Social Sciences*. Yerevan. 2015. № 1. 163-180 pp.. (in Armenian)
3. **Adamyan, N.** From the history of cooperation between the Armenian Refugees (Lord Mayor's) Fund and the Armenian Refugees (Lord Mayor's) Fund (1915–1916) [*KHBY-n yev Armenian Refugees (Lord Mayor's) Fund-i hamagorts0aks't'ut'yan patmut'yunits' (1915–1916.)*] // *Laber of Social Sciences*. Yerevan. 2018. № 1. 315-324 pp..(in Armenian)
4. **Armenak P.** 'The Americans Among Us [*Amerikats'inery mer mej*]. Work. Yerevan. 1917. № 42. (in Armenian)
5. **Avetisyan, S.** The activities of the English Relief Committee (Anglocom) in Armenia in the 1920 [*Angliakan ognut'yan komitev (Anglkomi) gortsuneut'yuny Hayastanum 1920-akan t'vakannerin: P'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu*]. Collection of documents and materials. Yerevan. Institute of History of the NAS RA Publishing House. 2014. 137 p.. (in Armenian)
6. **Charents, E.** Museum of Literature and Art. Arshak Chopanyan Fund. Department III. № 9385.. (in Armenian)
7. 'Friendship of Peoples' [*Zhoghovurdneri barekamut'iwny*]. *Arev Daily*. Baku. 1916. № 78. (in Armenian)
8. 'The Armenian Mission of the Lord Mayor of London' [*Londoni Lord-k'aghak'aglkhi haykakan misian*]. Reputable weekly. Tiflis. 1916. № 17. (in Armenian)
9. National Archives of Armenia. Fund 113. List 38. File 10.
10. National Archives of Armenia. Fund 28. List 1. File 423.
11. National Archives of Armenia. Fund 28. List 1. File 901.
12. **Harutyunyan, A.** The Armenian Genocide and Armenian Migration in the Caucasus in 1914-1916 [*Hayots' Mets yegherrny yev hay gaght'akanut'yuny Kovkasum 1914-1916t't'*]. // *Issues of the History and Historiography of the Armenian Genocide*. Yerevan. 2002. № 6. 19-31 p.. (in Armenian)
13. 'Domestic News' [*Nerk'in lurer*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1917. № 21. (in Armenian)
14. 'Weekly News' [*Shabat'akan lurer*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1916. № 12. (in Armenian)
15. 'Weekly News' [*Shabat'akan lurer*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1916. № 16. (in Armenian)
16. 'Weekly News' [*Shabat'akan lurer*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1916. № 25. (in Armenian)
17. 'Weekly News' [*Shabat'akan lurer*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1916. № 31. (in Armenian)
18. **Poghosyan, B.** The assistance of British pro-Armenian organizations to Armenian refugees during the First World War [*Britanakan hayanpast kazmakerput'yunneri ognut'yuny hay p'akhstakannerin Arrajin hamashkharhayin paterazmi tarinerin*]/Issues of the history and historiography of the Armenian Genocide. Yerevan. 2003. 8.31-46 pp.. (in Armenian)
19. **Poghosyan, B.** The Activities of the Britain-Armenia Committee (1913–1924) [*Britania-Hayastan komitev gortsuneut'yuny (1913–1924 t't'.)*]. Yerevan. Armenian Genocide Museum-Institute Publishing House. 2003. 122 p.. (in Armenian)
20. **Poghosyan, B.** The Pro-Armenian Movement in Great Britain (1914–1923) [*Hayanpast sharzhumy Mets Britaniayum (1914–1923 t't'.)*]. Yerevan. Armenian Genocide Museum-Institute Publishing House. 2005. 174 p. (in Armenian)
21. **Poghosyan, B.** The Pro-Armenian Movement in Great Britain According to Documents Stored in the Central State Archives of History of the Republic of Armenia (1918–1923) [*Hayanpast sharzhumy Mets Britaniayum yst HH Patmut'yan kentronakan petakan arkhivum pahvogh vaverageri (1918–1923 t't'.)*]. Yerevan. Armenian Genocide Museum-Institute Publishing House. 2002. 96 p. (in Armenian)
22. **Safrastian, A.** 'Letter from England' [*Namak Angliayits'*]. *Mshak daily newspaper*. Tbilisi. 1915. № 92. (in Armenian)
23. *Annals of Charity* [*Taregir baregortsut'ean*]. *Hambavaber weekly*. Tbilisi. 1916. № 7. (in Armenian)
24. **T.** 'Turkish-Armenian Migration in the Caucasus' [*T'iwrk'ahay gaght'akanut'iwny Kovkasum*]. *Van-Tosp Weekly*. Tiflis. 1917. № 16. (in Armenian)'Annual of the K.H.B. Society. Armenian Central Committee' [*Taregir K.H.B. ynkerut'ean: Haykakan kentronakan Komite*]. Reputable weekly. Tbilisi. 1917. № 35. (in Armenian)
25. **Tigranian, T.** England and the Armenians [*Anglian yev hayery*]. Yerevan. M. Varandian Publishing House. 1994. 218 p. (in Armenian)

26. **Donabedian, P.** 'The Committee of Lord Mary's Armenian Relief Fund of London to the Caucasus. The Support of the Indian Armenians' [*Londoni Lord Meri Hay npastamatoyts' fondi yandznakhumby depi Kovkas. Hndkahayeru ajakts 'ut' iwny*]. Horizon Daily. 1916. № 82.
27. 'Chronicon' [*K'ronikon*]. Hambavaber weekly. Tiflis. 1916. № 24. (in Armenian)
28. **Robinson, E.** Europe and the Armenians. Report of the Armenian Red Cross in London [*Yevropa i armyane. Otchet Armenian Red Cross v Londone*]. // Armenian Bulletin. Moscow. 1916. № 8.
29. 'Miss M. Robinson' [*Miss Em. Robinzon*]. // Armenian Bulletin. Moscow. 1916. № 8. 35–36 pp..
30. **Adamov, M.** 'English aid to Armenians' [*Angliyskaya pomoshch armyanam*]. // Armenian Bulletin. Moscow. 1916. № 22. [in Russian]
31. **Safrastyan, A.** 'Days of the Armenian Flag in Different Regions of England' [*Dni armyanskogo flaga v raznykh oblastyakh Anglii*]. // Armenian Bulletin. Moscow. 1917. № 1. [in Russian]
32. 'The Refugee Situation' [*Situatsiya s bezhentsami*]. // Armenian Bulletin. Moscow. 1917. № 43-44. [in Russian]
33. **Robinson, J. Emily.** 'The Armenian Red Cross and Refugee Fund' // Ararat. A Searchlight on Armenia. London. 1915. vol. II, № 19.
34. – 39. /**Տե՛ս հայերեն գրականության ցանկում**

Ընդունվել է / Received on: **01. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **10. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմեն Սերգոյի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան,
ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ armenani@mail.ru / ORCID.org/0000-0003-1051-5078

Armen Sergio HAYRAPETYAN: PhD in History, Associate Professor
Senior Researcher at the Institute of History, NAS, Yerevan, RA,
Senior Researcher at the Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: armenani@mail.ru / ORCID.org/0000-0003-1051-5078

Նինետա Սերգեյի ԱԳԱՄՅԱՆ՝ ասպիրանտ,
ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտ./գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ ninettadamyam@gmail.com / ORCID.org/0000-0001-5014-6209

Nineta Sergey ADAMYAN: post-graduate student,
Junior Researcher at the Institute of History, NAS, Yerevan, RA,
e-mail: ninettadamyam@gmail.com / ORCID.org/0000-0001-5014-6209

ԾՈՑԻ 41-ՕՐՅԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱՆ.
ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՐՄՎԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արկադի Ս. Գրիգորյան

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,

Պաշտպանության նախարարության Վ.Սարգսյանի անվ. ռազմական ակադեմիա, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. 1991 թ. Ծոցի առաջին պատերազմի արդյունքներով ԱՄՆ գլխավորած կոալիցիոն ուժերի անվիճելի հաղթանակը նոր խոսք ավելացրեց ռազմական գործողությունների նախապատրաստման, իրագործման և վերլուծության մեջ: Իրաքյան բանակի կրած պարտությունը խորհրդային ռազմական դպրոցի ժառանգորդ ռուսական և հայկական զինված ուժերը տեղին վերլուծության չենթարկեցին: Մեթոդներ և նյութեր. Մասնակից բարձրաստիճան զինվորականների հուշագրությունների, հաշվետվությունների, տարբեր ուղեղային կենտրոնների իրականացրած վերլուծությունների, ինչպես նաև համեմատական ուսումնասիրությունների միջոցով հետազոտության հեղինակը ուսումնասիրում է 1991 թ. Ծոցի պատերազմի և 2020թ. Արցախյան 44-օրյա ռազմական գործողությունների միջև կապը, վեր հանում ռազմագիտական կորսված հնարավորությունները, ընդգծում բացթողումները: Վերլուծություն. Վեր հանված և բնութագրված են «Փոթորիկ անապատում» ռազմագործողության ժամանակ կոալիցիոն ուժերի իրականացրած նորարարությունները, ինչպես նաև մանրամասն քննված են իրաքյան զինված ուժերի դեկավարման համակարգերի և կառուցվածքային հիմնախնդիրները: Արդյունքներ. 1991 թ. Ծոցի առաջին պատերազմը երկաթով և արյամբ ապացուցեց արևմտյան ռազմական դպրոցի գերակայությունը խորհրդային ռազմական մեքենայի նկատմամբ: Շուրջ երեք տասնամյակ հայկական զինված ուժերի կողմից վերոնշյալ պատերազմի պատշաճ վերլուծության չիրականացումը հանգեցրեց բանակաշինության էական բացթողումների, ինչն էականորեն ի ցույց դրվեց 44-օրյա ռազմական գործողությունների ժամանակ:

Բանալի բառեր՝ ռազմական դպրոցներ, օդային գերակայություն, կառավարում, սպայակազմ, ռազմական գործողություններ, «Փոթորիկ անապատում» ռազմագործողություն, 44-օրյա պատերազմ:

Ինչպես հղել՝ Գրիգորյան Ա. *Ծոցի 41-օրյայից մինչև Արցախյան 44-օրյան. ռազմագիտական կորսված հնարավորություններ* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 80-97 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-80

FROM GULF 41 DAY WAR TO ARTSAKHIAN 44 DAY WAR: LOST MILITARY-SCIENTIFIC CAPABILITIES

Arkadi S. Grigoryan

Institute of Oriental Studies of NAS, Yerevan RA

The Military Academy named after V. Sargsyan of the Ministry of Defense of RA

Abstract

Introduction: The undisputed victory of the US-led coalition forces in the 1991 Gulf War added a new dimension to the preparation, conduct, and analysis of military operations. The defeat of the Iraqi army has not been adequately analyzed by the Russian and Armenian armed forces, heirs to the Soviet military school. **Methods and materials:** Using the memoirs of high-ranking military participants, reports, analytical materials from various think tanks, and comparative studies, the author examines the relationship between the 1991 Gulf War and the 44-day military operations of 2020, identifies missed strategic opportunities, and points out the shortcomings. **Analysis:** This article highlights and characterizes the innovations introduced by coalition forces during Operation Desert Storm, and also examines in detail the command and control systems and structural problems of the Iraqi armed forces. **Results:** The First Gulf War of 1991 demonstrated, through blood and iron, the superiority of Western military training over the Soviet military machine. The Armenian armed forces' failure to properly analyze the course of this war over nearly three decades led to significant shortcomings in army development, which were clearly demonstrated during the 44-day military operations.

Key words: military schools, air superiority, officer corps, combat operations, operation “Desert Storm”, 44-day war.

Citation: Grigoryan A. *From Gulf 41 Day War to Artsakhian 44 Day War: Lost Military-Scientific Capabilities* // “Scientific Works” of SCAS NAS of RA. Gyumri. 2025. V. 2 (28). 80-97 pp.

DOI:10.52971/18294316-2025.28.2-80

ՆԱԽԱԲԱՆ. Ծոցի 41 օր տևած կամ Իրաքյան առաջին պատերազմը «Փոթորիկ անապատում» ռազմագործողությամբ նոր խոսք բերեց ռազմական գործի մեջ և բաժանարար գիծ դարձավ հետագա պատերազմների համար:

Իրաքյան բանակը հիմնականում պատերազմում էր խորհրդային ռազմական գիտության կանոններով և նրա ռազմական տեխնիկայով: Կորպուսներն ու դիվիզիաները մեծաքանակ էին, ունեին հզոր մեքենայացվածություն և անգամ՝ բանակային ուղղաթիռներ:

Քուվեյթի գրավումից հետո իրաքյան բանակը խորհրդային չափորոշիչներով բավականին ամուր պաշտպանական բնագծեր էր կառուցել իր ապահովման գոտիներ:

րով, առաջավոր դիրքերով, բնագծերով. յուրաքանչյուր դիրք սարքավորվել էր 3-4 խրամուղով, գատիչ դիրքերով, խորությունը գլխավոր հարվածի ուղղությամբ հասնում էր մինչև 65 կմ [4, էջ 771]: Չնայած մարտական գործողություններին՝ սկզբնական դրությամբ իրաքյան ՋՈւ-ի «Հարավային խմբավորումը» հաշվվում էր 458 հազար զինվոր, 4160 տանկ, մոտ 5000 փողային հրետանի, ականանետ և հրթիռահրետանային կայանք, օպերատիվ-մարտավարական հրթիռների արձակման ավելի քան 40 կայաններ, 250-ից ավել մարտական ինքնաթիռներ [4, շ. 83] (ներառված էին չորս ԲԿ, 38 դիվիզիա, 25 առանձին բրիգադ), սակայն կրեց ջախջախիչ պարտություն կռաւիցիոն ուժերի կողմից, որը գլխավորում էր ԱՄՆ-ը:

Այս ռազմագործողությունում ամենակարևոր և վճռորոշ մոտեցումներն էին.

- գերճշգրիտ հրթիռները,
- ռադիոլուկացիոն հետախուզական կայանների համար անտեսանելի ինքնաթիռները,
- կապի և հետախուզական արբանյակների խմբավորումները, որոնք ապահովում էին իրական ժամանակում գորքերի կառավարումը և հետախուզական տվյալների տրամադրումը,
- ավտոմատ կառավարման համակարգը,
- հոգեբանական մեծ ճնշումը իրաքյան բանակի վրա(երկարաժամկետ՝ վեց շաբաթ, կրակով և հրթիռային հարվածներով, առանց ցամաքային գործողությունների),
- տեղեկատվահոգեբանական գործողությունների նոր ձևերը,
- մանևրող հետախուզահարվածային միջոցների կիրառումը,
- առկա ուժերով ռազմագործողության սկսելը (մինչև վերախմբավորումը),
- ռադիոէլեկտրոնային ճնշման միջոցները,
- օդային գերակայության ձեռքբերումն ու պահպանումը:

Ծոցի առաջին պատերազմին զուգահեռ՝ հայկական նորանկախ պետությունը ևս կերտում էր հաղթանակներ: Հակամարտող կողմերը կիրառում էին խորհրդային զինամթերք և ռազմական տեխնիկա: Այդ ընթացքում բանակաշինության հիմքում կանգնած են եղել մարդիկ, որոնք մեծ ավանդ են ունեցել նաև Խորհրդային Միության զինված ուժերում և բնական էր, որ ՀՀ բանակն իր ունեցած խորհրդային սպառազինությամբ և խորհրդային ռազմական դպրոց անցած սպաների շնորհիվ (գեներալներ՝ Գուրգեն Դալիբալթյան, Նորատ Տեր-Գրիգորյան, Հրաչյա Անդրեասյան, Քրիստափոր Իվանյան, Անատոլի Զիննիչ և այլք) կազմավորվող հայկական բանակի համար որպես հիմք ընդունելու էին *խորհրդային ռազմական մոդելը*: Խորհրդային ռազմական մոդելի արհեստական ներդրմամբ փաստացի հաշվի չառնվեց ազգային արժեհամակարգն ու առանձնահատկությունները, ինչպես նաև արևմտյան երկրների և Արցախյան առաջին պատերազմի փորձը:

Արցախյան առաջին պատերազմում բանակաշինության մեջ դրական հակակշիռ դարձան Հայաստանից և արտերկրից ներգրավված ջոկատների հրամանատարները՝ Մոնթե Մելքոնյանը, Լեոնիդ Ազգալդյանը, Թաթուլ Կրպեյանը, Կարո Քահքեջյանը և այլք: Չունենալով ռազմական կրթություն ու փորձ՝ մարտական գործողությունները պլանավորում և իրականացնում էին այնպիսի ոչ ստանդարտ լուծումներով, որոնք պսակվում էին հաղթանակներով:

Արցախյան առաջին պատերազմում ռազմական բախման ի նպաստ Ադրբեջանի էր [41, էջեր 29-31], ինչը Խորհրդային Միությունից մեծ ռազմական ժառանգություն ստանալու արդյունքն էր: Հայկական ջոկատների կողմից իրականացվող ռազմագործողությունները հիմնականում դուրս էին դասական ռազմական գիտության կանոններից և հանգեցնում էին հաղթական ելքի: 1994 թ. հրադադարից հետո կողմերն անցան ձևավորված շփման գծով պաշտպանության: Հայկական զինված ուժերը, անհաղորդ մնալով ռազմական գործի մեջ արդիական/առաջավոր մոտեցումներին, սկսեցին առաջնորդվել խորհրդային մեծաքանակ բանակների համար գրված մարտավարությամբ և օպերատիվ արվեստով՝ հիմնականում կիրառելով նաև անձնակազմի ուսուցման նույն մեթոդներն ու նորմացույցերը, որոնք անգամ լիարժեք չէին կատարվում կամ պահպանվում:

Հրադադարից տասնամյակ անց հետախուզական և բաց աղբյուրներով շատ անհանգստացնող ազդակներ ի հայտ եկան. Ադրբեջանը հայատացությամբ լցված նոր սերունդ էր դաստիարակում դեռևս մանկապարտեզային տարիքից, վերափոխում էր բանակը արևմտյան չափորոշիչներով, հարձակողական զենք-զինամթերքի գնումներ էր կատարում ՌԴ-ից, Իսրայելից, Թուրքիայից, Պակիստանից, Բելոռուսից, Սերբիայից, Չեխիայից, ՀԱՀ-ից և այլ երկրներից [27]: Սերտ համագործակցելով Թուրքիայի [29] և Պակիստանի հետ՝ ինչպես ռազմակրթական [30], այնպես էլ զորքերի կիրառման ասպարեզում բարձրացնում էր զորքերի մարտական պատրաստության որակները՝ կնքելով նրանց հետ ռազմավարական փոխհամագործակցության պայմանագրեր [31]: ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը մնաց անդդվելի բանակի կերպափոխման հարցում, իսկ իրականացված աշխատանքները կոսմետիկ բնույթի էին, երբեմն՝ անգամ ի վնաս պետության անվտանգային շահերին (օրինակ՝ կադրային զորամասերի, 1-ին ԲԿ-ի կրճատումները և այլն):

Հայաստանի Հանրապետության կողմից մինչև 2016 թ. ռազմական տեխնիկայի գնումներն իրականացվում էին շատ չնչին քանակի, իսկ առկա տեխնիկան ֆիզիկապես վաղուց սպառել էր իրեն, քանի որ չէր անցնում հիմնանորոգում՝ մասնավորապես զրահատեխնիկան և ավիացիան: Գնահատական չորվեց ռազմական գործի մեջ բեկումնային դարձած Ծոցի առաջին և 2003 թ. Իրաքյան երկրորդ պատերազմում ամերիկյան պատերազմավարման կանոնները կատարելության հասցրած և դրանից հետո տեղի ունեցած զարգացումներին և իրականացման միջոցների առումով:

2016 թ. քառօրյա մարտական գործողությունները սկսելով՝ Ադրբեջանը վերջնական ստուգեց իր պատրաստվածությունը, բացահայտեց ՀՀ ՁՈՒ-ի կողմից ծավալումը՝ իրականացնելով խորքային մարտ հետախուզությամբ: Հայկական բանակն իր պատրաստվածությամբ դեռ մնացել էր 90-ականների տրամաբանության մեջ: 2020 թ. պատերազմը դարձավ անխուսափելի մեզ համար՝ պարտության ելքով [22]:

1. *Խորհրդային ռազմական դպրոցի ազդեցությունը իրաքյան բանակի վրա 1991 թ. պատերազմում*

Դեռևս 1950 թվականների երկրորդ կեսից Խորհրդային Միությունը Իրաքին օգնում էր ոչ միայն ռազմատեխնիկական առումով, այլև ռազմական ակադեմիաներում կադրերի պատրաստմամբ: Իրաքյան բանակի հիեարխիան, կազմավորումները, ինչպես

նաև օպերատիվ մտածելակերպը թելադրում էր խորհրդային ռազմական միտքը: Այն առավել արտահայտիչ դարձավ 1960-ականների կեսից մինչև 1980-ական թվականներ ռազմական խորհրդատուների՝ այդ ժամանակահատվածում Խորհրդային Միությունից գնված մոտ 13 միլիարդ դոլլարի ռազմական տեխնիկայի ուսուցման համար մեծաքանակ հրահանգիչների ներկայությամբ: 1960-1990 թթ. Իրաք են այցելել 8000-ից ավել խորհրդային ռազմական մասնագետներ, զինվորականներ, իսկ Խորհրդային Միության ռազմաուսումնական հաստատություններում կրթություն են ստացել 6000-ից ավելի իրաքյան տարբեր զորատեսակների զինծառայողներ [43, c. 298]:

Արաբա-իսրայելական 1967 թ. Վեցօրյա, ապա 1973 թ. Դատաստանի օրվա պատերազմներից հետո խորհրդային ռազմական գործիչներից շատերն էին հասկացել, որ առկա ռազմական դոկտրինը չի արդարացնում իրեն տեղային պատերազմների ժամանակ: Սակայն այդպես էլ տեղային պատերազմների համար նոր դոկտրին չմշակվեց: Տվյալ մոդելը դատապարտված էր, քանի որ կառավարվում էր ռուսական ռազմական կենտրոնացված ու խիստ ուղղահայացով, այն ազդում էր գործողությունների կատարման արագության և հրամանատարական կազմի ինքնուրույնության վրա, չէր ներառում ասիմետրիկ գործողություններ, զորքերի, հարվածային, կրակային միջոցների բարձր մանևրողականություն:

Խորհրդային Միության խորհրդականներն ու հրահանգիչներն ուսուցանում էին իրաքյան բանակի հրետանավորներին և տանկիստներին ոչ թե զորաշարժային, այլ հիմնականում գծային գործողություններին դիմակայելու համար: Դա իրաքյան բանակին դարձրեց ծանր, շարժունակությունից զուրկ, իսկ հրամանատարական կազմին՝ առանց մոտիվացիայի և վերադասներից միշտ հրահանգներ ակնկալող: Վերջինիս պատճառով էլ բարձր տեխնոլոգիաներով հագեցած մանևրունակ բազմազգ կռավիցիոն ուժերի և մասնավորապես ԱՄՆ-ի բանակի համար այն խոցելի դարձավ:

Իրաքյան բանակը և «Փոթորիկ անապատում» ռազմագործողությունը

1991 թ. Ծոցի պատերազմի ժամանակ, երբ բազմազգ կռավիցիոն ուժերը իրականացրին «Փոթորիկ անապատում» ռազմագործողությունը, սկսման պահին, չնայած իրաքյան բանակի կողմից զրահատանկային տեխնիկայի, հրետանային միջոցների և ուղղաթիռների զգալի առավելությանը, բացառությամբ ռազմական ինքնաթիռների (համաձայն հետևյալ աղբյուրներից վերցված տվյալներից կատարված համեմատականների [11; 12; 13; 16; 25]), Ս.Հունեյնի բանակը չկարողացավ արդյունավետ դիմակայել միացյալ ուժերին: Իրաքյան ուժերը պաշտպանության էին անցել էշելոնացված՝ ըստ բնագծերի, սակայն չէին նախատեսել հակահարվածներ՝ ի հակառակ ռուսական ռազմագիտական դպրոցի կանոնների:

Կռավիցիոն ուժերի ավիացիայի և գերճշգրիտ զինատեսակների համար նրանք հրաշալի թիրախներ էին: Իրաքյան առաջին պատերազմի մասին իր հուշերում դա փաստում է նաև 146 հազար անձնակազմ ունեցող VII կորպուսի հրամանատար, գեներալ Ֆրեդերիկ Մելվին Ֆրենքս Կրտսերը [12, pp. 145-147]: Իհարկե, ցամաքային մարտերը շատ տեղերում թեժ ընթացք ունեցան, սակայն իրաքյան միավորումները չկարողացան դիմակայել կռավիցիոն ուժերի արագաշարժ բրիգադային խմբերի հարվածներին [21]:

ԱՄՆ-ը և կոալիցիոն ուժերը Քուվեյթում թևային հարված հասցրին իրաքյան ուժերի պաշտպանության հարավային ճակատին և նրա թիկունքին, որոնք խիտ կուտակումներով գտնվում էին դիրքային պաշտպանության համար կառուցված ամրաշինական կառույցներում [33]: Սա իրաքյան բանակին դարձրել էր հրաշալի թիրախ ավիացիոն և հրթիռային զանգվածային հարվածների և հրետանային նախապատրաստության համար: Այս մասին գեներալ Չակ Հոբները՝ CENTCOM ավիացիայի գորահարամանատարը, իր հուշերում գրում է. «Իրաքյան զորքերը կանգնել և սպասում էին, թե երբ են իրենց ոչնչացնելու» [16, p. 195]:

Անգամ Իրան-իրաքյան պատերազմը չէր նպաստել, որպեսզի իրաքյան զրահատանկային միավորումները ունակ լինեին իրականացնելու հարձակողական գործողություններ, քանի որ գործել էին կրակային բնագծերից՝ որպես հետևակին կրակային աջակցման միջոց:

Գիշերային մարտերը դարձել էին մղձավանջ իրաքյան զինվորականների համար: Իրաքյան գեներալներն իրենց «շաբլոնային» գիտելիքներն էին սովորեցնում ենթականերին, ինչի արդյունքում չէին կարողանում դիմակայել հակառակորդի հարվածներին: Չի կարելի թերագնահատել նրանց սերտած դասերը ինժեներական կահավորման, մարտավարական քողարկման հարցում, որը բավականին գրագետ էր կատարվում, սակայն այդ ամենն ԱՄՆ-ի հետախուզական «ամենատես աչքի» ներքո էր:

Կադրային քաղաքականությունը և կրթական որակը

Կադրերի նշանակումն ընդհանրապես պետական համակարգերում հիմնականում կատարվում է ըստ արժանիքների և ըստ նվիրվածության, ինչքան մենք շարժվում ենք արևելք, ավելանում է նվիրվածությունը և թուլանում ըստ արժանիքների նշանակումը: Իրաքյան բանակի բոլոր որոշիչ պաշտոններում նշանակված էին Սադդամ Հուսեյնի մերձավորները՝ անկախ իրենց արժանիքների գնահատականի: Այս խնդիրն ունեինք նաև մենք: Իրաքյան բանակը, 1990 թ.՝ Քուվեյթ ներխուժումից առաջ, դիվիզիաների քանակը մոտ տասը անգամ ավելացրեց՝ տվյալ պահի դրությամբ դառնալով աշխարհում չորրորդն իր մեծությամբ:

Կարճ ժամանակում բանակի թվային աճը բնականաբար ազդեց մարտունակության վրա՝ հաշվի առնելով բազում իրար շաղկապված խնդիրները: Իրաքի ազգաբնակչությունը միատարր չէր ինչպես ազգային պատկանելությամբ, այնպես էլ՝ հավատքով: Կրթական մակարդակը շատ ցածր էր, որը հիմնականում ազդում էր տեխնիկական միջոցներ ունեցող զորատեսակների մարտունակության վրա: Սադդամ Հուսեյնի ծպտված ոստիկանությունը վերահսկում էր բանակային կյանքը, և հաճախակի էին չնչին զանցանքների, կամ ծառայողական թերությունների համար սպայակազմի ներկայացուցիչների ձերբակալում: Կառավարման ուղղահայացը շատ խիստ էր դրված, և ցածր օդակի հրամանատարական կազմը, ինչպես խորհրդային բանակում, զուրկ էր որոշումների կայացման իրավունքից: Գումարտակի, անգամ բրիգադների հրամանատարները մարտի դաշտում իրավունք չունեին ինքնուրույն որոշումներ ընդունելու: Նրանք ըստ վերադասության զեկույցներ էին տալիս մինչև Բաղդադ, իսկ պատասխանը, ինչպես միշտ, համահունչ չէր լինում արդեն փոփոխված իրադրությանը [39, c. 204]: Սակայն դա վերա-

դասի կողմից սխալ դրված ծառայողական խնդիրների կատարման բացասական արդյունքի դեպքում ենթակային չէր ազատում պատժից:

Իրանի հետ պատերազմի արդյունքում իրաքյան բանակում մեծ թիվ էր կազմում փորձառու բարձրաստիճան սպայակազմը, որը մարտավարական ցածր օղակի հրամանատարների թույլ ունակությունները բարձրացնելու համար մանրակրկիտ մշակված, պարզ, հասարակ մարտավարական դրվագներով էր վարժեցնում՝ ենթակայի համար չթողնելով ինքնուրույն մտածելու, տրամաբանելու հնարավորություն: Ցավալի է, սակայն նույնը հիմանականում կատարում էինք նաև մենք՝ զորամասերի հաստատված մարտական խնդիրները ոչ էական փոփոխությամբ դարձնելով շտաբային մարզումների, հրամանատարաշտաբային խաղերի առաջադրանքներ:

Իրաքյան բանակում անձնակազմի ուսուցման մեթոդները և միջոցները շատ չէին տարբերվում խորհրդայինից: Անձնակազմը սովորում էր զրահատեխնիկական կիրառել զորավարժարաններում տեղից, կարճ դադարներից կամ կրակային դիրքի փոփոխությամբ, անշարժ և շարժական թիրախների վրա կրակով. նույն տրամաբանությամբ էր վարժեցվում նաև հետևակը, ինչը բնորոշ էր նաև մեր բանակին: ԱՄՆ-ում դեռևս 80-ականների սկզբին ստեղծվեց MILES համակարգը [7], որը աշխատում էր լազերային ճառագայթներով, և կրակում էին զինատեսակներից ուսումնական փամփուշտներ՝ որպես մարտական գործողությունների իմիտացիա: MILES համակարգով երկկողմանի զորավարժություններով պատրաստվող ամերիկյան անձնակազմի, զրահատեխնիկաների հաշվարկների մարտական պատրաստության աստիճանը, բնականաբար, մի քանի անգամ բարձր էր խորհրդային տարբերակից:

Ջրահատանկային զորքերը

Իրաքյան զրահատեխնիկական հիմնականում կենտրոնացված էր հանրապետական գվարդիայի 8-րդ և բանակային 9-րդ մեխանիզացված դիվիզիաներում, որոնք պայմանագրային ծառայողներ էին, իսկ առաջին պաշտպանական բնագիծը զբաղեցնում էին 26 հետևակային դիվիզիաներ՝ համալրված ժամկետային զինծառայողներով, որոնք մարտական գործողությունների ժամանակ կարելի է ասել դիմադրություն չցուցաբերեցին՝ ի տարբերություն Արցախյան երկրորդ պատերազմին մեր ժամկետային զինծառայողների:

Իրաքյան բանակը հիմնականում զինված էր խորհրդային ռազմական տեխնիկայով՝ T-55, T-62, T-72 տանկերով (որոնց մեջ առկա լեհական տանկերն ունեին առավելություններ խորհրդային արտադրության T-72 "Կառ-1"-ից) և մոտ 100 ֆրանսիական AMX-30 տանկով [32, p. 146]: Հետևակը մարտական մեքենաներից ուներ խորհրդային մոտ 1000 БМП-1 և 500 WZ-501 (Type 86) նրա չինական տարբերակը, մինչև 200 БМП-2: Անգամ T-72 տանկը, որը տվյալ ժամանակում համարվում էր լավագույններից, համալրված չէր կրակի կառավարման, զիջերային և ջերմատեսիլ համակարգերով, բացակայում էր ակտիվ պաշտպանության համակարգը: T-72-ը իր 125 մմ հրանոթով խոցման հնարավորությամբ զգալի զիջում էր ամերիկյան M1 Abrams-ի 120 մմ հրանոթին [34, p. 34]: Նշենք, որ ամերիկյան ծովային հետևակի երկու դիվիզիա զինված էր 1960-ական թվականների արտադրության M60A1 տանկերով: Ռուսական պատվերով պատմագրության կեղծիքներն ի նպաստ սեփական ռազմական տեխնիկայի թաքցրած իրականությունն

անգամ կարելի է գտնել հենց տողատակերում [45, cc. 47-61]: Անկախ ռուսական փորձագիտական միտքը նշում էր, որ T-72 տանկերը ամերիկյան բանակի Abrams M1A1 տանկերի կողմից ոչնչացվում էին 3կմ և ավելի, իսկ ուղղաթիռներից արձակվող հակատանկային հրթիռներից՝ մինչև 5կմ հեռավորությունից [35, cc. 59-61]: БМП-1/2-ի դիմաց կանգնած էին հիմնականում ամերիկյան Bradley ՀՄՄ-ները, մոդուլային թեթև HAMMER-ները: Թերևս նշենք, որ ԽՍՀՄ-ը Իրաքին չէր վաճառել T-72-ի նոր մոդիֆիկացիաները, սակայն հարցն այն է, որ տվյալ մոդելի տանկը և անգամ նրա հաջորդները հետագայում ինչքան էլ արդիականացվեցին, այդպես էլ մարտավարա-տեխնիկական շատ չափորոշիչներով համարժեք չդարձան արևմտյան հակառակորդներին:

Թյուր են այն կարծիքները, որ իրաքյան բանակի զրահատանկային զորքերը կռիվցիոն ուժերի օդային հարձակումներից հետո չեն ունեցել համապատասխան քանակի դիմակայող ուժեր: Իրաքյան բանակում առկա էին տանկային մարտունակ միավորումներ, և նրանցից շատերը բավականին կատաղի մարտեր են վարել կռալիցիոն ուժերի ցամաքային զորքերի դեմ.

- հիմնական հարվածային խմբավորման խորը թևանցումը ("Left Hook") [23], որը իրականացրեց ամերիկյան VII կորպուսը՝ (24-28 փետրվարի 1991 թ.) հարվածելով իրաքյան ռեզերվներին՝ Հանրապետական գվարդիայի էլիտար դիվիզիաներին [19],
- փետրվարի 26-ին տեղի ունեցավ Battle of 73 Easting որոշիչ տանկային մարտը [9],
- Քուվեյթի ազատագրման ժամանակ իրաքյան ամրացված բնագծերի դասական ճեղքման ժամանակ [24] և այլն:

Հետախուզությունը

Արևմուտքը, մինչ պատերազմի սկիզբը, մի քանի ամիսների ընթացքում, կարելի է ասել, չեզոքացրել էր իրաքյան գործակալական հետախուզությունը: Փաստացի չունենալով արտաքին, արբանյակային հետախուզություն, հետախուզական տվյալների հավաքագրման և վերլուծության ժամանակակից համակարգեր՝ իրաքյան բանակը հնարավորություն չուներ ժամանակին հայտնաբերել և գնահատել հակառակորդի գործողությունները՝ բացահայտելով նրա մտահղացումը, տեսնել խմբավորումների շարժը: Տվյալ խնդիրների մեծ մասն ունեցել է նաև ՀՀ ԶՈՒ-ն՝ ներառյալ 2020 թ. պատերազմը: Նույն ժամանակ կռալիցիոն ուժերն օգտագործում էին տիեզերական, ռադիոէլեկտրոնային, ավիացիոն, ԱԹՄ-ների, գործակալական և ՀՆՇ ստորաբաժանումների հետախուզական տվյալների մեծաքանակ ու բազմաշերտ տեղեկատվությունը: Անգամ մարտական պայմաններում փորձարկվող նոր վերլուծական համակարգերի թերություններով հանդերձ (հետախուզական տվյալների հոսքը այնքան մեծ էր, որ երբեմն անգամ համակարգչային ծրագրերը չէին հասցնում վերլուծել)՝ ԱՄՆ զինվորականները գործում էին գրեթե համաժամանակյա ռեժիմում [6]: Մեծ արդյունավետություն ցուցաբերեց տիեզերական հետախուզությունը, որն ընդհանուր հետախուզական տեղեկատվության մոտավորապես 90 տոկոսն էր:

ՀՕՊ-ը

Այն բավականին խիտ էր. առկա էին խորհրդային արտադրության մոտ 15 դիվիզիոն C-75, մինչև 25 դիվիզիոն C-125, "Oca" և 2K12 "Ky6" ("Квадрат") և ֆրանս-գերմանա-

կան արտադրության Roland I/II 23 մարտկոց [38]: Իրաքը հակաօդային պաշտպանության փաստացի խորհրդային և արևմտյան ՀՕՊ միջոցների ինտեգրումն էր, որի կառավարումն իրականացվում էր ֆրանսիական ռազմարդյունաբերական ընկերության կողմից ներդրված QARI համակարգով: Իրաքյան զինուժում առկա էին 500-ից ավել ռադիոլուկացիան կայաններ, սակայն դրանցից միայն խորհրդային արտադրության P-12, P-18, ինչպես նաև չինական արտադրության Nanjing ռադարներն էին երբեմն կարողանում հայտնաբերել F-117 ինքնաթիռներին: Կռալիցիոն ուժերի կողմից օգտագործող խայծը ստիպում էր իրաքյան ռադիոլուկացիոն միջոցներին իրենց բացահայտել, որոնք անմիջապես EF-111A, EA-6B, EC-130 հատուկ ՌԷՃ համար նախատեսված ինքնաթիռների և AN/ALQ-151 «Quickfix» միջոցներով կահավորված ուղղաթիռների կողմից ենթարկվում էին ռադիոճնշման: Հնարավորության դեպքում կայանները խոցվում էին հակառադիոլուկացիոն ամերիկյան RGM-88 և բրիտանական ALARM հրթիռներով, ՀՕՊ-ի և ՌԷՊ-ի կրակային խոցում իրականացնող F-4, F/A-18 և Tornado ինքնաթիռներով [37, c. 201]՝ հիմնականում կահավորված կախովի ռադիոէլեկտրոնային ճնշիչ կոնտեյներով:

Օդուժը և օդային հարձակման միջոցները

Իրաքյան բանակն ուներ շուրջ 500 ինքնաթիռ. գերակայում էին խորհրդային МиГ-21, 23, 25 “Foxbat”, МиГ-29A “Fulcrum” (հենման կետ) խորհրդային կործանիչ ինքնաթիռները, Су-22 և Су-25 ռազմական ինքնաթիռներ [18]: Իրաքյան անձնակազմները Իրան-իրաքյան պատերազմում ձեռք էին բերել մեծ փորձ, սակայն Իրաքը չունեւր AWACS-ի նման օդային կառավարման և հետախուզման համակարգեր, այս ամենը բերեց նրան, որ իրաքյան ավիացիան ճնշվեց մինչև օպերացիայի սկսվելը, շատերն անգամ օդ չհասցրին բարձրանալ:

Ի տարբերություն վիետնամական ջունգլիների՝ իրաքյան անապատները հարմար տարածք էին ամերիկյան ավիացիայի համար: Ռազմագործողության առաջին իսկ օրից օդում գերակայում էին ամերիկյան F-15 և F-117-երը: Դաշնակիցների ուժերի 89 տոկոսը և սպառազինության մինչև 95 տոկոսը ամերիկյան էին: Դաշնակից ուժերն այնպիսի հզոր գործողություններ ծավալեցին, որ Իրաքը կարողացավ պատասխանել միայն՝

- Իսրայելի տարածքի՝ ոչ այնքան արդյունավետ հրթիռակոծությամբ,
- նավթով հեղեղելով Պարսից ծոցը,
- այրելով Քուվեյթի նավթաշտարակները:

Դաշնակիցները մարտական գործողությունների ամբողջ ընթացքում կատարեցին մոտավորապես 50.000 մարտական և զգալիորեն ավելի շատ ոչ մարտական թռիչքներ՝ չհաշված բազում այլ ՕՀՄ-ների հարվածները [46, c. 50; 44, c. 93; 40, c. 337] : «Փոթորիկ անապատում» ռազմագործողության ժամանակ ղեկավարվող էր ավիառումբերի 8 տոկոսը (օդային ԹՀ առհասարակ չօգտագործվեց):

Մինչ կռալիցիոն ուժերի վերախմբավորման ավարտվելը՝ սկսվեցին 6-շաբաթյա օդային գործողությունները, որի ընթացքում, կարելի է ասել, թռիչքների քանակը գիշերցերեկ հավասարաչափ էր բաշխված, և մասնակցում էին մինչև 600 ինքնաթիռ: Օդային հարվածներն ուղեկցվում էին ծովային բազավորման թևավոր հրթիռների հարվածներով: Առաջին երեք օրերի ընթացքում իրականացվեց մոտավորապես 4.500 ինքնաթի-

ռաթոնիչք, որոնց արդյունքում շարքից դուրս բերվեց Իրաքի ռազմական և ռազմատնտեսական ներուժի զգալի մասը և օդուժը գետնի վրա [4, էջ 764]:

Հրթիռային և հրետանային զորքերը

Իրաքյան զորքերը լայնորեն կիրառեցին խորհրդային մարտավարությունը, առկա էին խորհրդային և չինական արտադրության ՌՀԿՀ ԵՄ-21, հարավսլավական M-63 «Plamen», խորհրդային արտադրության քարշակվող հրանոթներ՝ Ժ-30, Ժ-20, M-46, 2С7 «Пион», M-240 քարշակվող ծանր ականանետ, ֆրանսիական ինքնագնաց հրետանի GCT AUF1, կանադական GC-45, ավստրիական GH N-45. վերջիններս մեծ խնդիրներ էին առաջացնում կռավիցիոն ուժերի համար իրենց հեռահարությամբ և դիպուկությամբ: Սակայն հրթիռահրետանային միջոցները գործում էին մեկուսացված, և նրանց հետախուզական տվյալները կետային չէին: Նույն ժամանակ կռավիցիոն ուժերի կողմից ցամաքային գործողությունների ընդգրկված հրետանային միջոցների հեռահարությունը գերազանցում էր 20 կմ-ը, իսկ նշանակետերի տվյալները թարմացվում էին գրեթե համաժամանակյա ռեժիմով և կետային էին: Առկա օպերատիվ-մարտավարական հրթիռների հիմնական մասի հիմքը խորհրդային «Скад»-ներն էին, որոնք, արդիականացվելով Իրաքում(հիմնականում հեռահարություն, ճշգրտության մասին խոսք անգամ չկա), անվանակոչվում էին այլ անուններով: Ստացվում է, որ անգամ մեծաքանակ հրթիռահրետանային միջոցների առկայությունը դեռ բավարար չէր որոշիչ արդյունք ունենալ մարտադաշտում: Մեր ունեցած միջոցները 2020 թ. պատերազմում անգամ խորհրդային տեսականիով զիջում էին իրաքյան բանակին:

Կառավարման միջոցները

Կառավարման մոդելի և խնդիրների մասին արդեն խոսել ենք, այստեղ հակիրճ կներկայացնենք իրաքյան բանակի կառավարման միջոցները, որոնք հիմնականում գնվել էին ԽՍՀՄ-ից և արևմտյան երկրներից 1970-ական թվականներին և չէին համապատասխանում տվյալ ժամանակի արագաշարժ մարտի պահանջներին: Սոստոհրաձգային զորքերն օգտագործում էին խորհրդային ռադիոկապի միջոցներ (P-105M, P-123, P-130, P-173, P-107), իսկ ռազմաօդային և ՀՆՇ ուժերը՝ ֆրանսիական և հարավսլավական միջոցներ: Այդ միջոցները թույլ էին պաշտպանված ռադիոխանգարումներից, բացակայում էր թվային կոդավորումը: Գծալարային կապը հենված էր քաղաքացիական հեռախոսային ենթակառուցվածքների և ռազմական գծալարային կապի վրա, որը, անընդմեջ ավիահարվածների հետևանքով շարքից դուրս գալով, անկառավարելի դարձրեց իրաքյան խմբավորումները [11, p. 203]: Դա գալիս էր նրանից, որ զորքերի կառավարման բոլոր որոշումները կայացվում էր Սադդամ Հուսեյնի կամ իր մերձավորների կողմից: Բանակում արբանյակային կապ չկար: ՀՕՊ-ի և ռազմաօդային ուժերի ռադիոլոկացիոն կետերի կառավարումն իրականացվում էր խորհրդային П-18, П-35 և այլ միջոցներով, որոնք առաջին իսկ ավիահարվածներից հետո նույնպես ոչնչացվեցին կամ ճնշվեցին ՌԷՃ միջոցներով:

Հրամանները փոխանցվում էին գծալարային ռադիոկապի միջոցներով ըստ վերադասության: Շատ դեպքերում գաղտնիություն ապահովելու համար կիրառվում էր սուրհանդակափոստային կապը՝ դանդաղեցնելով հրամանների կատարումը կամ

դարձնելով ժամանակավրեպ: Ռադիոկապը պատերազմի ընթացքում հիմնականում ճնշված է եղել և չի գործել, իսկ կառավարման կետերի ապակենտրոնացման փորձերն ուշացած էին և անօգուտ, չունեին պահեստային կապի միջոցներ:

Օպերատիվ-ռազմավարական կառավարման կենտրոնները նախապես կահավորված երկաթբետոնյա բունկերներ էին (Ալ-Մուտանայի բունկերը՝ «Bunker 2», «Amiriyah Shelter»-ը, ՀՕՊ կառավարման կենտրոնը՝ IOC և այլն), որոնք հիմնականում խոցվեցին զինվորական ուղղորդմամբ ավիատումբերի միջոցով, նետված F-117 ինքնաթիռներից:

Այս խնդիրներից շատերը ևս առկա էին Պաշտպանության բանակում, անգամ 2020 թ.: Դեռևս 2011 թ. ՊԲ-ի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից գրված ռեֆերատում նշվում էր, որ հակառակորդը պոտենցիալ ի վիճակի է 1 օրում խոցել մինչև 100 % բանակային, դիվիզիոնային, բրիգադային (ՊՇ, գունդ) օղակների ղեկավարման կետեր: Կառավարման կետերի կենսունակությունը ապահովելու համար առաջարկում էր. «...*հակառակորդի կողմից գերձգրիտ զենքի կիրառման պայմաններում, ամենանպատակահարմարը կլինի ղեկավարման կետերի հիմնական տարրերի ապակենտրոնացումը, առանց ՀԿ-ների (ՊՀԿ և ԹՀԿ) տեղաբաշխման ընդհանուր մակերեսի փոփոխման, ինչպես նաև մեծ քանակի նշանակետերի ստեղծմամբ, որոնց մեծ մասը կլինի խաբուսիկ: Դրանից բացի, ինչպես զորավարությունների փորձն է ցույց տալիս, յուրաքանչյուր ղեկավարման կետ, բացի իր հիմնական շրջանից, պետք է ունենա 1-2 պահեստային շրջան, մեկը մյուսից 2-3 կմ հեռավորությամբ: Անհրաժեշտության դեպքում այդպիսի հեռավորությունը կապահովի կարճ ժամանակահատվածում կատարել ղեկավարման կետի տեղաշարժ»:*

Թե ինչքանով էր տեղին և ակտուալ առաջարկը սպասվող պատերազմի ժամանակ և ինչ աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ, ցույց տվեցին 2016 թ. ապրիլյան [8] և 2020 թ. ռազմական գործողությունները: Ավիացիա, ԱԹՍ և ՌԷՊ զորատեսակների հետախուզման և կառավարման համակարգերի ինտեգրումը՝ որպես վաղուց ժամանակի պահանջ, չիրականացվեց ՀՀ ՁՈՒ-երում: Ինչպես Իրաքում, այնպես էլ Արցախում, միայն հակաօդային պաշտպանությունը չկարողացավ դիմակայել ժամանակակից ԱԹՍ-ներին և կործանիչ ինքնաթիռներին:

Բազմազգ ուժերի հրամանատար գեներալ Նորման Շվարցկոպֆը իր հուշերում նշում է. «Իրաքյան բանակը նման էր կոշտ կառույցի, որը ունակ չէր մարտադաշտում արագ փոփոխվող իրադրությունում ադապտանալ» [25, p. 15]:

Պատերազմը հարթ չի անցել նաև կռավիցիոն ուժերի համար, ամբողջական քննադատական հոդվածների շարք են դարձել «ընկերական կրակի» արդյունքով տեղի ունեցած խոցումները [26]:

2. *Հնարավոր դասեր ՀՀ ՁՈՒ համար, եթե կատարվեն հետևություններ Օոցի պատերազմներից*

Եթե «Փոթորիկ անապատում» ռազմագործողությանը և նրան հաջորդող որոշիչ պատերազմներին նախապես ՀՀ-ում տրվեք գնահատական, ապա բանակաշինությունը կզարգանար այլ տրամաբանությամբ, այն կփոխեր 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի ելքը:

Դաս առաջին. Ուսում և կադրային քաղաքականություն. ՀՀ ՁՈՒ-ի սպայակազմը, դեռևս 1990-ականների սկզբին ակադեմիական կրթություն ստանալով ՌԴ-ում, չնա-

յաժ արաբա-իսրայելական, իրաքյան պատերազմների վերաբերյալ [42] ակադեմիական վերլուծական նյութերի առկայությանը [37], չկատարեց հետևություններ իրաքյան երկու պատերազմների ռազմագիտական արդյունքերից: ՀՀ անվտանգային համակարգում և ԶՈՒ-ում չիրականացվեցին բարեփոխումներ՝ ամրագրելու ձեռք բերված հաղթանակը և ժամանակին համահունչ մարտունակ բանակ ունենալու համար:

Դաս երկրորդ. Խորհրդային պաշտպանության մոդելի տեղայնացումը, որը պահանջում էր խորը էշելոնացված պաշտպանական բնագծեր, իսկ դա իր հերթին՝ մեծաքանակ մարդկային ռեսուրսներ, Իրաքը նշված մասը կատարել էր թերի, իսկ հայկական զինուժը՝ ավելի քիչ մասը ավելի շատ թերություններով: Այս համակարգը ղեկավարվում էր ինչպես Իրաքում, այնպես էլ Հայաստանում խորհրդային ռազմական դպրոցի կենտրոնացված խիստ ուղղահայացով, առանց նախաձեռնողականության՝ երկար տարիներ մնալով կարծրացած վիճակում:

Դաս երրորդ. Իրաքի կողմից պարտության համար որոշիչ գործոններ դարձան օդային և տեղեկատվական գերակայության թերագնահատումը Ծոցի առաջին պատերազմում, հետախուզական բազմաշերտ տվյալների բացակայությունը, միայն ՀՕՊ միջոցների կենտրոնացումով օդային գերակայության դեմ պայքարը: Ծոցի պատերազմում դիրքային պաշտպանության նստած իրաքյան բանակը լավ թիրախ էր օդային գերակայություն ունեցող հակառակորդի համար, որը տեղի ունեցավ նաև 44-օրյա պատերազմում մեզ մոտ՝ Ադրբեյջանի կողմից հակահետախուզահարվածային ԱԹՄ-ների, լազերային ուղղորդմամբ ռումբերի, հրթիռահրետանային հարվածների կիրառմամբ [10]:

ՀՀ-ում ևս շեշտադրում չէր կատարվել՝ ունենալու հզոր օդուժ, ՌԷՊ-ի միջոցներ, համարելով, որ ՀՕՊ պատասպարումը բավարար կլինի դիմակայելու հակառակորդին, որն անգամ բազմաշերտ չէր: Հաշվի չառնվեց, որ 1991 թ. Ծոցի պատերազմը, ինչպես նաև 1999 թ. Հարավսլավական [20] կամ Կոսովոյի [15] և 2003 թ. Իրաքյան [28] պատերազմները, ինչպես նաև արաբա-իսրայելական այլ պատերազմները այլ բան էին ապացուցում: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում ցամաքային ՀՕՊ-ի անարդյունավետության մասին տարիներ շարունակ գրվում էին ռազմամասնագիտական հետազոտություններ (ռազմական տեսաբան Ա. Հովհաննիսյանը մի շարք ուսումնասիրություններում բարձրաձայնում էր այդ խնդրի մասին [1; 3; 5; 17]), միննույն է, ՀՀ-ում ռազմաքաղաքական որոշում կայացնողները ամուր էին իրենց դիրքերում և ԶՈՒ-երը հետևողականորեն տանում էին դեպի պարտություն՝ չիրականացնելով նույնիսկ խորհրդային դոկտրինալ պահանջները:

Դաս չորրորդ. Իրաքյան բանակում մարտական իրադրությունում հրամանատարական կազմի կողմից ոչ ստանդարտ և արագ որոշումներ հիմնականում չեն կայացվել, բացառությամբ Սադդամ Հուսեյնի անմիջական ենթակայության տակ գտնվող դիվիզիաների (Համուրայի, Մեդինա, Տավակալնա, Նաբուգոդոնոսոր): Տվյալ դիվիզիաներն ուղղակի իրենց բարձր մարտական պատրաստության շնորհիվ խիստ ուղղահայաց կառավարման համակարգով կարողացել են դիմակայել կռավիցիոն ուժերին, չնայած՝ ի վերջո դատապարտված էին ջախջախման: Նման խնդիր նաև դիտարկվում է 44-օրյա պատերազմի վերլուծությունների արդյունքում, ոչ միայն ստորաբաժանումների ղեկա-

վարման, այլև ավելի բարձր օղակի հրամանատարության մոտ (չեն ունեցել նախաձեռնողականությունն իր ձեռքում միշտ պահելու ունակություններ): Խորհրդային մոդելում հրամանատարությունը կոշտ կենտրոնացված է, ինչը հանգեցնում է դաշտային հրամանատարների անգործության: *Իրարում և Արցախում նման համակարգերը ձախողվեցին:*

Կառավարման մոդելը ուղիղ կապ ունի ենթակաների կրթական մակարդակի հետ, այսինքն՝ օպերատիվ օղակի մտահղացումները չեն աշխատել հրամանատարման մեթոդով, որն առավել ճկուն կդարձներ կառավարումը և խնդիրների կատարումը:

ՀՀ ՁՈԻ-ում պետք է ապահովել զորամասերի, ստորաբաժանումների հրամանատարների նախաձեռնողականություն և տեղում որոշումներ կայացնելու ազատություն: Դրան հասնելու միակ բանալին շարունակական կրթվելն է:

Առաջնային և կարևոր գործոն է նաև ավտոմատված կառավարման ընդհանուր համակարգի գոյությունը, որում հետախուզական միջոցներից ստացվող տեղեկատվության ինտեգրմամբ արագանում է որոշումների կայացումն ու իրականացումը՝ դուրս մղելով բյուրոկրատական ուղղահայաց շղթայի զեկույցները: Դրանք մարտի դաշտում իսկում են այնքան թանկ ժամանակը: Ցավոք, այն ևս անհրաժեշտություն էր վաղուց, որը բացակայում էր ՀՀ ՁՈԻ-ում 44-օրյա պատերազմի ժամանակ:

Դաս հինգերորդ. ԱՄՆ-ը և կոալիցիոն ուժերն ընդդեմ Իրաքի իրականացրին ակտիվ տեղեկատվական պատերազմ՝ ճնշելով նրա ընդդիմանալու կամքը, ռազմավարական ենթակառուցվածքները:

Հայաստանը չիրականացրեց ռազմավարական ակտիվ տեղեկատվական գործողություններ ընդդեմ Ադրբեյջանի, այն հենված էր ոչ թե համակարգի, այլ հիմնականում անձերի գործունեության վրա, որը բավարար չէր չեզոքացնելու ադրբեյջանական քարոզչամեթոդային աշխատանքը: Իրաքի նկատմամբ կիրառված ինֆորմացիոն օպերացիաներից կատարված հետևությունները հնարավորություն կտային ստեղծելու առավել ընդհանուր պաշտպանական համակարգ կոգնիտիվ [2, էջեր 160-178] տիրույթում:

Դաս վեցերորդ. Պետության առկա և մոբիլիզացիոն ռեսուրսների կենտրոնացում, նախապատրաստվելու ասիմետրիկ կոնֆլիկտի. ինչպես Իրաքը, այնպես էլ Հայաստանը նախընտրեց ստատիկ էշելոնացված պաշտպանությունը, որը ռազմավարական մեծ սխալ էր հատկապես սակավ ռեսուրսների պարագայում: ՁՈւ-երի կառուցվածքը, մարտական պատրաստությունը, սպառազինությունն իր հերթին մնում էր նույն վիճակում. ընդամենը ցաք ու ցրիվ, իմիտացիոն գործողություններ էին իրականացվում մինչև 2018 թ., քանի որ հավանական պատերազմի բնույթի իրական գնահատականը տրված չէր: Եթե Հայաստանը ժամանակին կատարեր անհրաժեշտ բարեփոխումներ և զորաշարժային մեծ ունակությամբ թեթև հետևակ պատրաստեր, հատուկ օպերացիաների ուժեր ձևավորեր, ձեռք բերեր ավիացիա, ԱԹՄ-ներ, ՌԷՊ միջոցներ, ինքնագնաց հրետանի, ապա պատերազմի ելքն այլ կլիներ :

Այս կետը շատ վիճելի է տարբեր ռազմական տեսաբանների կամ փորձառու զինվորականների կողմից: Փաստարկներ կան, որոնք անվիճելի են. օրինակ՝ Արցախի Պաշտպանության բանակը խորհրդային ժամանակներում գրված կանոնագրքերի պահանջների համապատասխան էշելոնացված պաշտպանության համար չէր կահավորել

անգամ անհրաժեշտ քանակի դիրքեր ու բնագծեր [36] մասնավորապես՝ հարավում: Չունենալով համգորային ստորաբաժանումների ցանկալի համալրվածություն՝ 30-65% [14]: Հակառակորդը ցամաքային գործողությունները սկսեց դասական ճեղքումով՝ զրահատանկային ուժերի միջոցով և առաջին շաբաթվա ընթացքում ընդամենը մխրձվել էր գումարտակային խորության: Հաջողություն չունենալով՝ հրամանատարությունը գործերի դեկը հանձնեց թուրքական զինվորականությանը, իսկ ճեղքված հատվածը օգտագործվեց հատուկ նշանակության ուժերի կողմից խորքային գործողություն իրականացնելու համար [22]:

Դաս յոթերորդ. Չունենալով ֆինանսական խնդիր՝ Սադդամը իր ռազմական ներուժի գագաթնակետը տեսնում էր միայն ատոմային զենք ստեղծելը. քիմիական և կենսաբանական զինամթերքն արդեն ակտուալ չէր նրա համար: Այն կօգներ նրան դառնալու ինչպես արաբական երկրների համար «առաջին ջութակ», այնպես էլ աշխարհի հզորների շարքում կգտներ իր տեղը: Սադդամը չստեղծեց ռազմարդյունաբերական համալիր և մշտապես, ինչպես ռազմական տեխնիկայի, այնպես էլ զինամթերքի պարագայում, կախվածության մեջ էր գտնվում: ՀՀ ռազմարդյունաբերությունը մինչև 2016 թ. պատերազմն ավելի շատ էկզոտիկա էր իր բյուրոկրատիայով, այն էլ՝ անպտուղ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ծոցի առաջին պատերազմը ցույց տվեց, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ մասնագիտական թույլ պատրաստվածությունը (վարժվածությունը), սխալ կադրային քաղաքականությունը, նախաձեռնողականության բացակայությունը և նոր տեխնոլոգիաներով ու տեխնիկական միջոցներով հակառակորդին զիջելը: Հայաստանը Արցախյան առաջին պատերազմից հետո չկատարեց եզրակացություններ հիմնարար բարեփոխումների ուղղությամբ. եթե կատարվեին հետևություններ սեփական փորձից, իրաքյան պատերազմներից, ապա հայկական բանակը կունենար ավելի մեծ հնարավորություն ռազմագործողություններում ձկուն գործելու, կլիներ առավել կենսունակ՝ մեծաքանակ զրահատեխնիկայով, հատուկ նշանակության ուժերով, ԱԹՄ-ներով և ցանցային կառավարման տարրերով պատրաստված հակառակորդին դիմակայելու համար:

Սադդամ Հուսեյնը ռազմական բարեփոխումների ճանապարհին, անգամ երբ Խորհրդային Միությունից գնել և գնում էր միլիարդավոր դոլլարների զինատեսակներ, հասկացավ, որ գնված ռազմական տեխնիկայի մեծ մասը զիջում է իր ունակություններով արևմտյան նմանօրինակ տեսակներին: Միաբնեռ գնումները միապեստը փորձեց փոխարինել բազմավեկտոր կապերով՝ գնելով Ֆրանսիայից, Լեհաստանից, Բուլղարիայից, Բելգիայից, Հարավսլավիայից, Պորտուգալիայից, Չինաստանից, Գերմանիայից, Չեխոսլովակիայից, Բրազիլիայից [39, c. 131] առավել ժամանակակից ռազմական տեխնիկա, անգամ փորձ կատարվեց նրա կողմից ԱՄՆ-ից գնումներ կատարելու: Դրանով նախ նա փորձում էր թուլացնել ռազմական կախվածությունը ԽՍՀՄ-ից, մյուս կողմից՝ դա քաղաքական քայլ էր, որը թույլ էր տալիս ունենալ աշխարհաքաղաքական խաղացող աջակիցներ: Սա ևս չիրականացվեց, անգամ 2016թ. քառօրյա մարտական գործողություններից հետո: Բարձրագույն զինվորականությունը և ռազմաքաղաքական ղեկավարությունը դիմադրում էր ԶՈւ-երի հիմնարար բարեփոխումներին՝ նոր տեխնոլոգիաների և մշակույթի ներդրմանը:

Իրաքյան պատերազմը փաստացի ցույց տվեց, որ մեծաքանակ բանակը և հրթիռային համակարգերը, առանց օդային գերակայության և կառավարման ձկուն համա-

կարգի, չեն կարող դառնալ ոչ հաղթանակի և ոչ էլ զսպման միջոց, իսկ մասնագիտական ցածր պատրաստվածությունը և սխալ կադրային քաղաքականությունը դրա նպաստելու հիմնական գրավականն էին :

Իրաքյան և Արցախի 2020 թ.-ի պատերազմները ցույց տվեցին, որ իներտ, տեխնիկապես հնացած և կոշտ կառավարման համակարգերը, ինքնուրույն որոշումներ կայացնելուց և նախաձեռնողականությունից զուրկ հրամանատարական կազմը և զորքերը խոցելի են ժամանակակից պատերազմներում: Հայաստանը պետք է անցում կատարի դեպի ցանցային, ռոբոտացված, ճկուն և բոլոր զորատեսակներում տեխնոլոգիապես հագեցած մոդելի՝ պաշտպանելու իր տարածքն ու շահերը նոր սպառնալիքների պայմաններում:

Պետք է ներդնել մշտադիտարկման և վերլուծական կենտրոն, որը կիրականացնի պատերազմների առաջավոր փորձի և ձախողումների պատճառների վերլուծություն և հանդես կգա ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ-ին ինչպես առաջարկություններով, այնպես էլ նոր մշակումներով: Կենտրոնը լավագույնս իրեն կդրսևորի ռազմաուսումնական հաստատություններում՝ սերտ համագործակցությամբ միավորելով պահեստագործի սպաներին, ռազմական փորձագետներին և ակադեմիական ոլորտի մասնագետներին:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Հովհաննիսյան Ա.**, *Արյոն՝ պետք է միավորել ՌՕՈՒ-երն ու ՀՕՊ զորքերը*, «21-րդ դար», հ. 2, 2010, 88-101 էջեր:
2. **Հովհաննիսյան Ա.**, *Բարդակազմ/քազմաշերտ պատերազմ. VI սերնդի պատերազմի համառոտագիր*, Երևան, 2025, Անտարես, 216 էջ:
3. **Հովհաննիսյան Ա.**, *Մի քանի հարցեր Ավիացիայից*, Երևան, 2009, 136 էջ:
4. **Հովհաննիսյան Ա.**, *Ռազմարվեստ, հատոր II, Ցամաքային ճեղքում*, Երևան, 2020, 1333 էջ:
5. **Հովհաննիսյան Ա.**, *Օդային զերակայություն*, Երևան, 2010, 372 էջ:
6. A Critical Analysis Of The I MEF Intelligence Performance In The 1991 Persian Gulf War CSC 1995 <https://www.globalsecurity.org/intell/library/reports/1995/CRE.htm> 22 May 2025
7. *Army to Replace 'Laser Tag' System for Soldier Training* <https://www.nationaldefensemagazine.org/articles/2023/12/29/army-to-replace-laser-tag-system-for-soldier-training> 12/29/2023
8. Azerbaijan destroys Armenian command point, says 170 soldiers killed in Nagorno-Karabakh clashes Apr 04, 2016 - 12:00 am GMT+3. <https://www.dailysabah.com/europe/2016/04/04/azerbaijan-destroys-armenian-command-point-says-170-soldiers-killed-in-nagorno-karabakh-clashes> 22 May 2025
9. **Denney D., Master Sgt.**, *Mission Command at the Battle of 73 Easting By U.S. Army Sergeants Major academy* <https://www.armyupress.army.mil/Journals/NCO-Journal/Archives/2022/October/Mission-Command-at-the-Battle-of-73-Easting/> 22 May 2025
10. *Drones in the Nagorno-Karabakh War: Analyzing the Data Eado Hecht - Israel Defense Forces Tactical Command College* <https://www.militarystrategymagazine.com/article/drones-in-the-nagorno-karabakh-war-analyzing-the-data/> 22 May 2025
11. **Final report to Congress on the conduct of the Persian Gulf war**, Pursuant to Title V of the Persian Gulf Conflict Supplemental Authorization and Personnel Benefits Act of 1991 (Publ.Law 102-25), April 1992, 1360 p.
12. **Frederick F. & Clancy, T.** *Into the Storm*, 1997, 531 p.
13. GlobalSecurity.org, **IISS Military Balance** (1990–1991), 245 p.

14. **Grasser, P.** *RETEX - 44 days over Nagorno-Karabakh.*, PhD in history of international relations
https://www.irsem.fr/storage/file_manager_files/2025/03/10-retex-44-days-over-nagorno-karabakh.pdf 22 May 2025
15. *Harnessing technology for coalition warfare 01 September 2000*
<https://www.nato.int/docu/review/articles/2000/09/01/harnessing-technology-for-coalition-warfare/>
16. **Horner, C. & Clancy, T.** *Every Man a Tiger*, 1999, 672 p.
17. **Hovhannisyan, A.** *About Wars of the Future*, Jul-Sep 2016, Vol. 31.3, Indian defence review, Issue, p. 69-79;
18. **Kopp, C.** *The Gulf Crisis - Order of Battle First published in Australian Aviation, November 1990*
<https://www.ausairpower.net/iraq-pre-ds.html> 22 May 2025
19. **Kreisher, Otto.** *Naval History, Volume 30, Number 1* <https://www.usni.org/magazines/naval-history-magazine/2016/february/marines-desert-victory> 22 May 2025
20. **Lambeth, B.** *NATO's Air War for Kosovo. A Strategic and Operational Assessment.* DR2087.5 .L36, 2001, 323 p.
21. **Lightning Victory In The Persian Gulf**, *International coalition forces shattered the Iraqi army occupying Kuwait during the brief but bloody Persian Gulf War. Winter 2023*
<https://warfarehistorynetwork.com/article/lightning-victory-in-the-persian-gulf/> 22 May 2025
22. Lt. Col. **Erickson, E.**, PhD, U.S. Army, Retired, *The 44-Day War in Nagorno-Karabakh Turkish Drone Success or Operational Art?* August 2021 Online Exclusive Article.
<https://www.armyupress.army.mil/Portals/7/military-review/img/Online-Exclusive/2021/erickson/Erickson-the-44-day-war.pdf> 22 May 2025
23. **Maye, D.** *History's Last Left Hook?* December 15, 2015 <https://thestrategybridge.org/the-bridge/2015/12/14/historys-last-left-hook> 22 May 2025
24. *Persian Gulf War 1990-1991* <https://www.britannica.com/event/Persian-Gulf-War> 22 May 2025
25. **Schwarzkopf, N.** *It Doesn't Take a Hero*, 1992, 432 p.
26. *Task Force 1-41 Infantry: Fratricide at Objective Norfolk (1993)*
<https://apps.dtic.mil/sti/tr/pdf/ADA264134.pdf> 22 May 2025
27. **Tatikyan, S.** *Deterrence and Coercion: Armenia and Azerbaijan's Diverging Defense Postures*,
<https://evnreport.com/politics/deterrence-and-coercion-armenia-and-azerbajians-diverging-defense-postures/> Jun 20, 2025
28. *The March to Baghdad: A Timeline of the 2003 Invasion of Iraq.* <https://teamrbw.org/blog/the-march-to-baghdad-a-timeline-of-the-2003-invasion-of-iraq> 22 May 2025
29. *Turkey's Overlooked Role in the Second Nagorno-Karabakh War* <https://www.gmfus.org/news/turkeys-overlooked-role-second-nagorno-karabakh-war> January 21, 2021.
30. *Türkiye-Azerbaijan Relations: Ideological Ties or Strategic Relations?*
https://trendsresearch.org/insight/turkiye-azerbaijan-relations-ideological-tirelations?srsltid=AfmBOop05R2NzCMsGfhYoDBkvOCMo9hfKKrtF5xhUvJweGxVT9wsQc0#_ftnrefl001 Jun 2025
31. *Türkiye-Pakistan-Azerbaijan Trilateral Defence Cooperation*
<https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/13869-kyrgyzstan-and-tajikistan-resolve-final-border-dispute-a-historic-but-fragile-peace.html> 22 May 2025
32. *World Armaments and Disarmament SIPRI Year book 1980*, Stockholm International Peace Research Institute, Taylor & Francis Ltd, London, 1980, 562 p.
33. **Wright, D.** *Deception in the Desert Deceiving Iraq in Operation Desert Storm*
<https://www.armyupress.army.mil/Books/Browse-Books/iBooks-and-EPUBs/Deception-in-the-Desert/> 22 May 2025
34. **Zaloga, S.** *M1 Abrams T-72 Ural operation Desert Storm 1991*, Osprey Publishing, 2009, 81 p.
35. **Барятинский М.**, «Абрамс». *Враг № 1*, Москва, 2010, 98 с.
36. **Бутусов Ю.**, *Позиционный тупик в Карабахе: прекращение огня или война на истощение?*
https://censor.net/ru/resonance/32242/pozitsionnyyi_tupik_v_karabahe_prekraschenie_ognya_voyina_na_istoscie 22 май 2025

37. *Война в Персидском заливе*, Москва: Военное издательство, 1993, 271 с., с ил. / генерал-лейтенант С. А. Богданов (руководитель авторского коллектива).
38. **Калуга Е.** *Операция «Буря в пустыне», или Первая война XXI века. Воздушная кампания* 02.03.2024г. <https://kontingent.press/post/operaciya-burya-v-pustyne-ili-pervaya-vojna-xxi-veka-vozdushnaya-kampaniya> 2май 2025
39. **Криворучко А., Рошупкин В.** *Багдадский вождь. Взлет и падение... Политический портрет Саддама Хусейна и его режима на региональном и глобальном фоне*, Москва, 2008, 560 с.
40. **Люттвак Э.** *Стратегия: Логика войны и мира*, Москва, 2012, 392 с.
41. **Минасян С.,** *Милитаризация Южного Кавказа и развитие вооруженных сил государств региона*// 21-րդ դար, թիվ 4 (6), 2004, էջեր 27-61:
42. *Некоторые уроки войны в Персидском заливе: материалы дискуссии за "круглым столом"* / Под общ. ред. Л. В. Степанова, А.И. Чичерова, Москва, 1992, 64 с.
43. **Окороков А.** *Секретные войны Советского Союза. Первая полная энциклопедия, (Войны XX века)*, Москва: Яуза, Эксмо, 2008, 736 с.
44. **Сидорин А. и др.** *ВС зарубежных государств*, Москва, 2009, 528 с.
45. **Суворов С.** *Танк Т-72: вчера, сегодня, завтра*, Москва, 2001, 68 с.
46. **Шляхтов Д.** *Перспективы строительства и применения стратегической бомбардировочной авиации США*, *Зарубежное Военное Обозрение*, № 4. 2008, с. 46-54.

References

1. **Hovhannisyan, A.** *Should the air force and air defence forces be merged? [Ardyoq petq e miavorel ROU-nern u HOP zorqery]*, 21-st century, v.2, 2010, 88-101 pp. (in Armenian)
2. **Hovhannisyan, A.** *Complex/ multi-level warfare: A review of sixth generation warfare [Bardakazm/bazmashert paterazm. VI serndi paterazmi hamrotagir]*, Yerevan, 2025, 216 p. (in Armenian)
3. **Hovhannisyan, A.** *A few questions about aviation [Mi qani harcer aviacyayic]*, Yerevan, 2009, 136 p. (in Armenian)
4. **Hovhannisyan, A.** *Military art, vol II, Land breakthrough [Razmarvest, hator II, tsamaqayin tscheghqum]*, Yerevan, 2020, 1333 p. (in Armenian)
5. **Hovhannisyan, A.** *Air supremacy [Odayin gerakayutyun]*, Yerevan, 2010, 372 p. (in Armenian)
6. **Baryatinsky, M.** *"Abrams". Enemy No. 1 [Abrams. Vrag n. 1]* , Moscow, 2010, 98 p. (in Russian)
7. **Butusov, Yu.** *Positional Deadlock in Karabakh: Ceasefire or War of Attrition? [Pozitsionniy tupik v Karabaxe: Prekraschenie ognya ili voyna na istoschenie]*
8. https://censor.net/ru/resonance/32242/pozitsionnyyi_tupik_v_karabahe_prekraschenie_ognyavoyina_na_i_stoschenie 22 May 2025 (in Russian)
9. *War in the Persian Gulf [Voina v persidskom zalive]*, Moscow: Military Publishing House, 1993, 271 p., with ill. / Lieutenant General S. A. Bogdanov (head of the authors' collective). (in Russian)
10. **Kaluga E.,** *Operation "Desert Storm", or the First War of the 21st Century. Air campaign [Operatsiya "burya v pustine", ili Pervaya voyna XXI veka. Vozdushnaya kampaniya]* 02.03.2024. <https://kontingent.press/post/operaciya-burya-v-pustyne-ili-pervaya-vojna-xxi-veka-vozdushnaya-kampaniya> 22.2025
11. **Krivoruchko A., Roshchupkin,V.** *Baghdad leader. Rise and fall... Political portrait of Saddam Hussein and his regime against the regional and global background [Bagdadskiy vozhd. Vzlyot i padenie... Politicheskij portret Saddama Xuseyna I ego rezhima na regionalnom I globalnom fone]*, Moscow, 2008, 560 p. (in Russian)
12. **Luttwak, E.** *Strategy: The logic of war and peace [Strategiya: logika voyni i mira]*, M., 2012, 392 p. (in Russian)
13. **Minasyan, S.** *Militarization of the South Caucasus and the Development of the Armed Forces of the States of the Region [Militarizatsiya Yuzhnogo Kavkaza I razvitie vooruzhennix sil gosudarstv regiona]* // 21-st century, n. 4(6), 2004, 27-61pp. (in Russian)

14. *Some Lessons of the Gulf War: Materials of the Round Table Discussion [Nekotorie uroki voyni v Persidskom zalive: materiali diskusii za kruglim stolom]* // Under the general editorship of L. V. Stepanov, A. I. Chicherov, Moscow, 1992, 64 p. (in Russian)
15. **Okorokov, A.** *Secret Wars of the Soviet Union. The First Complete Encyclopedia, (Wars of the 20th Century) [Sekretnie voini Sovetskogo Soyuza. Pervaya polnaya enciklopediya (Voini XX veka)]*, Moscow: Yauza, Eksmo, 2008, 736 p. in Russian)
16. **Sidorin, A. et al.** *Armed Forces of Foreign States [Vooruzhennie sili zarubezhnix gosudarstv]*, Moscow, 2009, 528 p. (in Russian)
17. **Suvorov, S.** *Tank T-72: yesterday, today, tomorrow [Tank T-72: vchera, segodnya, zavtra]*, Moscow, 2001, 68 p. (in Russian)
18. **Shlyakhtov, D.** *Prospects for the construction and use of US strategic bomber aviation [Perspektivi stroitelstva i premeneniya strategicheskoy bombardirovochnoy aviacii SSHA]*, Foreign Military Review, No. 4. 2008, 46-54. (in Russian)

/Այլուսները՝ /in English/ տե՛ս հայերեն գրականության ցանկում/

Ընդունվել է / Received on: **20. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **04. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արկադի Սեյրանի ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ, ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի մարշալ Հ. Բաղրամյանի անվան հրամանատարաշտաբային ինստիտուտի պետի տեղակալ, գնդապետ, Երևան, ՀՀ
Էլ. հասցե՝ arkadigrigoryan82@gmail.com / [ORCID.org/0009-0003-5978-7290](https://orcid.org/0009-0003-5978-7290)

Arkadi Seyran GRIGORYAN: Applicant of Institute of Oriental Studies of NAS, Yerevan RA
Deputy Chief of the Command and Staff Institute named after Marshal H. Baghramyan
of the Military Academy named after V. Sargsyan of the Ministry of Defense of RA, Colonel,
e-mail: arkadigrigoryan82@gmail.com / [ORCID.org/0009-0003-5978-7290](https://orcid.org/0009-0003-5978-7290)

ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ (1886–1916 թթ.)

Արտաշես Գ. Բոյաջյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

*Պատմությունը թվերով չէ, բայց թվերն առանց
պատմության կես պատմություն են
Վարազդատ Հարությունյան*

Ամփոփում

Նախաբան. Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնիկական կազմում զգալի փոփոխություններ տեղի ունեցան XIX դ. վերջին XX դ. սկզբին՝ պայմանավորված տնտեսական, քաղաքական, սոցիալական և ժողովրդագրական գործոններով: Այդ տարիներին խոշոր քաղաքները, հատկապես՝ Բաքուն, Թիֆլիսը, Ալեքսանդրապոլը, Ելիզավետպոլը և Շուշին, տարանջատված էին առանձին էթնիկական թաղամասերով՝ հայկական, վրացական, մահմեդական, ռուսական և այլն: Քաղաքային բնակչության թվաքանակով առաջին տեղը զբաղեցրել են հայերը: Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հարավային Կովկասի քաղաքների էթնոժողովրդագրական գործընթացները: Ուսումնասիրության հիմնական ուղղություններն են քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական փոփոխությունները և քաղաքայնացման գործընթացները: Մեթոդաբանությունը և մեթոդները. Ուսումնասիրությունը հիմնված է արխիվային փաստաթղթերի, պաշտոնական վիճակագրության տվյալների՝ «Կովկասյան օրացույց», նահանգային տեղեկագրերի վրա, օգտագործվել են նաև նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային տարիներին հրատարակված գիտական գրականություն, ներկայացվող ժամանակահատվածում հրատարակված թերթերի և պարբերականների նյութեր: Հետազոտության գիտական նորություն է Հարավային Կովկասի քաղաքային էթնոժողովրդագրության պատմության չլուսաբանված հիմնահարցերի հրապարակայնացումը:

Բանալի բառեր՝ ազգային կազմ, կրոնական կազմ, քաղաքային բնակչություն, արդյունաբերականացում, նահանգ, միգրացիա, ուրբանիզացիա, մարդահամար, ցեղասպանություն:

Ինչպես հղել՝ Բոյաջյան Ա. Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները (1886–1916 թթ.), // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ. 2 /28/: 98-111 էջեր:

DOI: 10.52971/18294316-2025.28.2-98

ETHNO-DEMOGRAPHIC PROCESSES OF THE URBAN POPULATION OF THE SOUTH CAUCASUS (1886–1916)

Artashes G. Boyajyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: Significant changes occurred in the ethnic composition of the urban population of the South Caucasus in the late 19th and early 20th centuries, due to economic, political, social and demographic factors. In those years, large cities, especially Baku, Tbilisi, Alexandropol, Elizavetpol and Shushi, were divided into separate ethnic districts: Armenian, Georgian, Muslim, Russian, etc. Armenians occupied the first place in terms of the urban population.

The aim of this study is to analyze the ethnodemographic processes of the cities of the South Caucasus. The main directions of the study are the ethnodemographic changes of the urban population and the processes of urbanization. **Methods and methods:** The study is based on archival documents, official statistical data - "Caucasian Calendar", provincial bulletins, scientific literature published in the pre-Soviet, Soviet and post-Soviet years, materials from newspapers and periodicals published in the presented period were also used. The scientific novelty of the research is the publicization of unexplained issues of the history of urban ethnodemography of the South Caucasus.

Key words: *national composition, religious composition, urban population, industrialization, province, migration, urbanization, census, genocide.*

Citation: Boyajyan A. *Ethnodemographic Processes of the Urban Population of the South Caucasus (1886–1916)*, // Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2025. Vol. 2/28/, 98-111 pp., DOI: 10.52971/18294316-2025.28.2-98

Ն Ա Խ Ա Ր Ա Ն. Քաղաքայնացումը (ուրբանիզացիան) XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հարավային Կովկասում զգալի փոփոխություններ մտցրեց քաղաքների էթնիկ կազմի մեջ: Այս գործընթացը պայմանավորված էր արդյունաբերության զարգացմամբ, նավթային բումով, երկաթուղիների կառուցմամբ և Ռուսական կայսրության վարչատնտեսական քաղաքականությամբ: Քաղաքայնացման գործընթացի առանձնահատկություններից է եղել տարբեր ազգությունների միջմշակութային ինտեգրումը, մյուս կողմից էլ՝ ազգային հակամարտությունների սրացումը: Այդ տարիներին ռուսական կայսրության քաղաքականությունը, տնտեսական փոփոխությունները և ազգայնական շարժումների աճը հանգեցրին էթնիկական լարվածության ուժեղացմանը, որն իր արտահայտությունն է գտել հետևյալ առումներով. ազգությունների տեղաշարժերի ակտիվաց-

մամբ և փախստականների հոսքերի ծավալների աճով: Օրինակ՝ 1905–1906 թթ. հայերի և Կովկասի թաթարների (ներկայիս ադրբեջանցիներ) Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգների քաղաքներում էթնիկական բախումների հետևանքով գրանցվեցին տարբեր ազգությունների զանգվածային տեղահանություններ: Տարածաշրջանի խոշոր քաղաքներում՝ Բաքվում, Ելիզավետպոլում, Երևանում և Շուշիում աճել է փախստականների թիվը, ինչը փոխել է էթնիկական հավասարակշռությունը: Բաքվում հայ ազգաբնակչության մասնաբաժինը նվազել է, իսկ Կովկասի թաթարներինը՝ աճել: Երևանում շեշտակի ավելացել է հայերի տեսակարար համաթիվը: Այդ բախումների հիմնական շարժառիթ հանդիսացել է տնտեսական մրցակցությունը և ազգային քաղաքական ուժերի միջև լարվածության խորացումը: Այսպես կոչված «ռուսականացման» քաղաքականությունը նպաստել է խոշոր քաղաքներում ռուսների թվի աճին: Նշենք, որ լեզվական, կրոնական և էթնիկական տարբերությունները, խոչընդոտում էին համընդհանուր քաղաքային ինքնության ձևավորմանը:

Մոցիլա-տնտեսական գործոնով և Ռուսական կայսրության ազգային քաղաքականությամբ պայմանավորված՝ հայերն ու վրացիները դիմել են արտագաղթի՝ ուղղվելով կայսրության եվրոպական գոտի և արտասահմանյան երկրներ, մասնավորապես՝ Միացյալ Նահանգներ: Միաժամանակ, եվրոպական պետություններից և կայսրության եվրոպական տարածքներից տարածաշրջան են ներգաղթել տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ ռուսներ, գերմանացիներ, լեհեր, հրեաներ և այլք, որոնց հիմնական կենտրոնները եղել են Բաքուն, Թիֆլիսը և Կարսի մարզը:

Տարածաշրջանում արդյունաբերության զարգացման գործընթացները պայմանավորել են գյուղական բնակչության արտագաղթը դեպի խոշոր քաղաքներ, ինչն իր հերթին հանգեցրել է տեղի բնակչության դժգոհությանը: Արտագաղթող գյուղական բնակչության մեջ զգալի մասնաբաժին ունեցել են հայերը:

Բնական վերարտադրության գործոնը ևս էական ազդեցություն է գործել տարածաշրջանի քաղաքների էթնիկ կազմի փոփոխության վրա. այն անմիջականորեն անդրադարձել է տարբեր էթնիկ խմբերի թվաքանակի և տեսակարար կշռի վրա:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Հարավային Կովկասը բարդ և բազմաշերտ միջավայր ունեցող տարածաշրջան է: Նրա բնակլիմայական պայմանների, բնակչության էթնիկ բազմազանության, տնտեսության և մշակույթի առանձնահատկությունները կրում են ինքնատիպության նշաններ և պահանջում են հատուկ ուսումնասիրություն: Դարերի ընթացքում այստեղ կողք կողքի ապրել են բազմաթիվ ժողովուրդներ, մշակույթներ և քաղաքակրթություններ՝ յուրաքանչյուրն իր յուրահատուկ էթնոժողովրդագրական բնութագրերով [12, c. 331]:

Տարածաշրջանի ազգային կազմի խայտաբղետությունը զգալիորեն բարդացնում է էթնոժողովրդագրական մի շարք հիմնահարցերի սպառիչ վերլուծությունը, հատկապես ուսումնասիրվող ժամանակահատվածի համար: Դժբախտաբար, այդ շրջանի համար ձեռքի տակ չունենք տարածաշրջանի էթնոժողովրդագրական իրավիճակը ամբողջությամբ ներկայացնող փաստաթղթեր և վիճակագրական տվյալներ: Կովկասյան օրացույցի տարեգրքերում և այլ հրապարակումներում հիմնականում ուշադրություն է դարձվել էթնո-

կրոնական կազմին, ինչը որոշ դեպքերում խոչընդոտում է բնակչության էթնիկ պատկերի ճշգրիտ բացահայտմանը, հատկապես ներկայիս աղբյուրների էթնոսի վերաբերյալ: Այդ ժամանակահատվածի պաշտոնական վիճակագրության մեջ նրանք ներկայացված էին որպես շիա մահմեդականներ, Դադստանի մարզի բնակիչները՝ որպես լեռնային կովկասցիներ, իսկ քարթվելական ժողովուրդները՝ հաճախ մեկ ընդհանուր խմբի ներքո:

Այդ պայմաններում բնակչության էթնիկ կառուցվածքի վերաբերյալ համեմատաբար հուսալի տեղեկություն են ապահովում մարդահամարները: Սակայն Հարավային Կովկասի հանրապետություններում դրանց կանոնավոր անցկացումը սկսվել է միայն XX դարի 20-ական թվականներից: Մինչ այդ՝ XIX դարի երկրորդ կեսին, երբ տարածաշրջանը դեռ գտնվում էր Ռուսական կայսրության կազմում, էթնիկական պատկերը որոշ չափով արտացոլվել է 1886 թ. ընտանեկան ցուցակներում և 1897թ. Համառուսական առաջին մարդահամարում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այդ տվյալներում արձանագրվել է հիմնականում անձի ազգությունը կամ մայրենի լեզուն, դրանց օգտագործումը էթնոժողովրդագրական կազմի համակողմանի ուսումնասիրության համար լուրջ դժվարություններ է առաջացնում:

Քննարկվող հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ցարական կառավարության էթնոժողովրդագրական քաղաքականությունը Հարավային Կովկասում բնույթով պրագմատիկ էր և միտված էր կայսրության անվտանգության ամրապնդմանը, ինչպես նաև հետագա տարածքային ընդլայնման հիմքերի ստեղծմանը: Այս նպատակով իրականացվել է տնտեսության զարգացմանն ուղղված քայլեր, խթանվել է հաղորդակցության նոր ուղիների, մասնավորապես՝ երկաթուղային մայրուղիների կառուցումը: Բնականաբար, նման քաղաքականությունը զգալի ազդեցություն է ունեցել կապիտալիստական հարաբերությունների զարգացման և քաղաքային բնակչության աճի վրա: Ռուսական կայսրությունը, իր դիրքերը Հարավային Կովկասում ամրապնդելու նպատակով, հետևողականորեն և նպատակասլաց իրականացրել է քրիստոնյա ազգությունների՝ գերմանացիների, ռուսների, հայերի, հույների և այլոց վերաբնակեցման քաղաքականություն:

Հարավային Կովկասի քաղաքային բնակավայրերի մեծ մասը ունի տասնյակ դարերի պատմություն: Երևանի ի հայտ գալը կապվում է Էրեբունի ամրոցի և քաղաքի կառուցման հետ՝ մ.թ.ա. 782 թվականին: Քութայիսը հիշատակվում է մ.թ.ա. 3-րդ դարի հին հունական աղբյուրներում, հետագոտողները Թբիլիսիի հիմնադրումը թվագրում են 5-րդ դարով, Բաքուն հայտնի է 8-րդ դարից, իսկ հին Գյանջան (այժմ՝ Կիրովաբադը), ըստ արաբ աշխարհագրագետների տեղեկությունների, գոյություն ունի 9-րդ դարից: Շամախն անվանվում է 10-րդ դարի աղբյուրներում և այլն: Միաժամանակ, Հարավային Կովկասի որոշ քաղաքներ ձևավորվել են միայն 19-րդ դարում: Դրանցից են՝ Ալեքսանդրապոլը (ժամանակակից Գյումրի), որի տեղում 19-րդ դարի առաջին քառորդին գտնվում էր Գումրի փոքրիկ գյուղը, Մեծ Ղարաքիլիսան (ներկայիս Վանաձոր), Նոր-Բայազետը (ներկայիս Գավառ), ուր 1828–1829 թվականներին հայերը գաղթել են Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից: Հարավային Կովկասում և հարակից տարածքներում կան բազմաթիվ խոշոր տնտեսական և մշակութային քաղաքային կենտրոններ, որոնք կարևորություն են ունեցել ոչ միայն տարածաշրջանի, այլև Հյուսիսային Կովկասի, Ռու-

սաստանի կենտրոնական շրջանների և Մերձավոր Արևելքի համար: Սակայն XVIII–XIX դարերում այս քաղաքները զգալի անկում են ապրել և աստիճանաբար վերածվել փոքր բնակչությամբ բնակավայրերի, որոնց ճանաչելիությունը հիմնականում պահպանվել է միայն իրենց պատմական անցյալի շնորհիվ:

Այսպես, Բարդան, որը X դարում համարվում էր Հարավային Կովկասի ամենամեծ քաղաքներից մեկը, 1880-ական թվականներին վերածվեց փոքր բնակավայրի՝ ընդամենը 300 բնակչով [6, c.94]: Միջնադարում Գանձակը և Շամախը համարվել են տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի ամենաառաջատար տնտեսական և մշակութային կենտրոններ, սակայն արդեն XVIII դարի սկզբին նրանք գտնվում էին անկման փուլում: Շամախը 1720-ական թվականներին եղել է խոշոր արհեստավորական քաղաք՝ գործող մետաքսի գործարաններով և մանուֆակտուրաներով: Այստեղ բնակություն են հաստատել բազմաթիվ պարսիկ, հայ, թուրք, հնդիկ և այլ վաճառականներ [6, c.94]:

Հարավային Կովկասում XIX դարում արդյունաբերությունը, բացառությամբ Բաքվի և Ճիաթուրայի, տնտեսության զարգացման թույլ ոլորտներից էր, մինչդեռ մյուս խոշոր քաղաքներում ավելի մեծ ուշադրություն էր դարձվում առևտրին և արհեստագործությանը: Կային քաղաքներ, որտեղ աշխատունակ բնակչության զգալի մասը զբաղված էր գյուղատնտեսական աշխատանքներով, և դրանց արտաքին տեսքը գրեթե չէր տարբերվում խոշոր գյուղական բնակավայրերից: Նույնիսկ Ելիզավետպոլ նահանգային քաղաքը հարուստ էր մրգերի և խաղողի այգիներով, Նուխան՝ թթենու տնկարկներով, և Երևանն էլ մեծ տարածքներ էին զբաղեցնում հողագործության համար [13, c. 2]: Ի վերջո, տարածաշրջանի արդյունահանող և հարակից ճյուղերը արագորեն զարգանում էին Թիֆլիսի, Քութայիսի և Բաքվի նահանգներում:

Բաքվի նավթը, Ճիաթուրիայի մանգանը, Ալավերդու և Զանգեզուրի պղինձը տարածաշրջանին բերում են համաշխարհային ճանաչում: Մանգանի համաշխարհային հանույթի 30%-ը բաժին է ընկել Ճիաթուրայի հանքավայրին [8, c.235], իսկ Ռուսաստանի պղինձի 1/3-ը տալիս էին Ալավերդին և Զանգեզուրը [1, էջ 108]:

Արդյունաբերության զարգացումը խթանել է գյուղական, հատկապես հայաբնակ, բնակավայրերի բնակչության արտագնացությունը: Բաքվում հայ եկվորների բնակչությունը կազմում էր քաղաքի հայ բնակչության կեսից ավելին՝ 42,6 հազար մարդ, որոնցից 13,0 հազարը եկել էր Լեռնային Ղարաբաղից, 9,4 հազարը՝ Շամախից, 6,8 հազարը՝ Երևանի նահանգից, իսկ մնացածը՝ այլ վայրերից [11, c.17] :

Այսպիսով, Հարավային Կովկասում գյուղից քաղաք հոսքը հիմնականում պայմանավորված էր սոցիալ-տնտեսական գործոններով, մինչդեռ Արևմտյան Հայաստանից գաղթը հետևանք էր բռնաճնշումների: Հատկանշական է, որ հայերի հոսքը դեպի Թիֆլիս և Բաքու ևս կապված էր այն հանգամանքի հետ, որ Երևանի նահանգում և ընդհանուր առմամբ՝ Արևելյան Հայաստանում կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացումը ավելի դանդաղ էր ընթանում: Արդյունքում, հայաշատ բնակավայրերի բնակիչները նախընտրում էին Թիֆլիսը, Բաքուն և Սևծովյան նահանգի արագ աճող քաղաքային կենտրոնները: Դրա հետևանքով 1886–1916 թթ. Երևանի նահանգի բնակչության աճի տեմպերը զիջել են Հարավային Կովկասի այլ շրջաններում բնակվող

հայերի աճի տեմպերին, իսկ Բաքվի բնակչության աճը այդ ժամանակաշրջանում գերազանցել է Թիֆլիսի ցուցանիշները: 1886 թվականի պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ տարածաշրջանում կար 35 քաղաք: Ամենամեծերը Բաքուն և Թիֆլիսն էին, որոնց բնակչությունը կազմել է 80–90 հազար մարդ: Ելիզավետպոլի, Քութայիսի, Շամախի, Ալեքսանդրապոլի, Նուխիի և Շուշիի բնակչությունը տատանվել է 20–26 հազ. մարդու սահմաններում [13,с.3]: Գրեթե բոլոր խոշոր քաղաքներում հայերի տեսակարար համաթիվը բավականին բարձր էր: Այդ տարիներին տարածաշրջանի խոշոր քաղաքների թվում են եղել Թիֆլիսը, Բաքուն, Սուխումը, Նուխին, Շուշին, Ալեքսանդրապոլը և այլքն:

Աղյուսակ 1-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում տարածաշրջանի քաղաքային բնակչության թիվն ավելացել է 882,3 հազարով կամ 2,9 անգամ, իսկ տարեկան միջին աճի տեմպը՝ 6,1% էր: Քաղաքային բնակչության աճի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Սևծովյան նահանգում և Կարսի մարզում, բարձր՝ համապատասխանաբար, Դաղստանի մարզում, Զաքաթալայի օկրուգում, Թիֆլիսի և Բաքվի նահանգներում, միջին մակարդակ՝ Ելիզավետպոլի և Երևանի նահանգներում և ցածր՝ Քութայիսի նահանգում: Տարածաշրջանում քաղաքային բնակչության շեշտակի աճ գրանցվել է 1897-1916 թթ., ինչը՝ կարծում ենք՝ կապված է կապիտալիստական արտադրահարաբերությունների արագընթաց զարգացման հետ, իսկ Կարսի մարզի քաղաքային բնակչության աճը՝ Արևմտյան Հայաստանից հայերի և հույների և Ռուսաստանի եվրոպական գոտուց ռուսների ներգաղթի հետ: Դրա մասին, որոշակի պատկերացում տալիս են աղյուսակ 2-ը և 3-ը:

Աղյուսակ 1

Հարավային Կովկասի քաղաքային բնակչության թվի շարժընթացը

Նահանգ, մարզ, օկրուգ	1886		1897		1916		Քաղաքային բնակչության տարեկան աճի միջին տեմպը %
	նիվել դոկումենտի թվաքանակը	դոկումենտի թվաքանակը մ.-%	նիվել դոկումենտի թվաքանակը	դոկումենտի թվաքանակը մ.-%	նիվել դոկումենտի թվաքանակը	դոկումենտի թվաքանակը մ.-%	
Թիֆլիսի	129952	16,1	221787	22,9	427670	29,0	7,6
Քութայիսի	52626	5,7	97516	9,2	88080	8,5	2,2
Երևանի	57594	8,6	92323	11,1	132559	11,8	4,3
Ելիզավետպոլի	72994	10,0	89259	10,2	156044	12,2	3,8
Բաքվի	139652	19,6	169995	20,6	334938	26,1	5,6
Դաղստանի	20599	3,5	44601	7,8	69973	9,8	7,9
Կարսի	3970	2,3	37837	13,0	44797	12,3	11,3 անգամ
Զաքաթալայի	1231	1,6	3009	3,6	4505	4,9	8,9
Սևծովյան	6993	38,6	19641	34,2	82722	46,4	11,8 անգամ
Բաթում	-	-	-	-	27047	22,0	-
Ընդամենը	485611	10,3	775968	14,0	1368335	19,3	6,1

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Списки населенных мест Кавказского края. Ч. 1 Бакинская губерния, и Ставропольская и Терская область. – Тифлис [1879].. [343], Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Тифлис 1893г., Первая Всеобщая перепись населения Российской империи 1897 г., СПб, 1905; КК на 1913, Тифлис 1912, отд. стат. III, с.129-139, КК на 1917, Тифлис 1916, отд. III, стат. с.198.

Այսպես, 1915 թվականին Վանից ռուսական զորքերի նահանջի ժամանակ բանակի հետ հեռացավ մոտ 200 հազար հայ[14, p. 21.], որոնց մի մասը հաստատվեց Հարավային Կովկասում, հիմնականում Երևանի նահանգում և Կարսի մարզում: 1880–1900-ական թվականներին տարածաշրջանի արդյունաբերության զարգացումը և երկաթուղային կապերի կառուցումը (Բաքու–Բաթում, Թիֆլիս–Փոթի, Թիֆլիս–Ալեքսանդրապոլ–Կարս և այլ գծեր) զգալիորեն արագացրեցին քաղաքների աճը և նպաստեցին Բաքվի, Թիֆլիսի և Երևանի նահանգների գյուղական բնակչության, ինչպես նաև Ռուսաստանի կենտրոնական նահանգներից եկած գյուղացի վերաբնակիչների ներգրավմանը արդյունաբերական արտադրության ոլորտներում:

Թիֆլիսի և Բաքվի բնակիչների թիվը 1897 թվականին 1886թ. համեմատ ավելացավ մինչև 55,5 և 26,1 հազար մարդով[15]: Բաքու–Բաթում նավթամուղի կառուցմամբ Բաթումը դարձավ Եվրոպայի հետ նավթամթերքի առևտրի խոշոր նավահանգիստ: Այդ ժամանակահատվածում քաղաքային զարգացումն այնքան ակտիվացավ, որ քաղաքային բնակչության աճը զգալիորեն գերազանցեց Հարավային Կովկասի բնակչության միջին աճի ցուցանիշին: Օրինակ՝ 1897–1913 թվականներին տարածաշրջանի բնակիչների ընդհանուր թիվը աճել է 32.1%-ով, իսկ քաղաքային բնակիչների թիվը՝ 74.2%-ով: Սակայն վերջիններս շատ անհավասարաչափ էին բաշխված առանձին շրջանների միջև. քաղաքաբնակների ամենաբարձր տոկոսը գրանցվել է Թիֆլիսի և Բաքվի նահանգներում (25.6% և 23.7%): Երևանի նահանգում նույն ցուցանիշը կազմել է ընդամենը 10,4%, իսկ Քուրայիսի նահանգում՝ ավելի ցածր է եղել [4, c.42]:

Հարավային Կովկասի քաղաքների բնակչության էթնիկ կազմը բաղկացած էր. 1) շրջակա գյուղերի բնակչությունից, որոնք իրենց էթնիկ բաղադրիչներով հիմնականում միատարր էին 2) Տարածաշրջանի հարակից երկրներից՝ Արևմտյան Հայաստանից և Իրանից ներգաղթածներից: Այդ երկրներից ներգաղթածները կազմում էին Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Սևծովյան նահանգների և Կարսի մարզի սահմանային գոտու բնակիչների զգալի տոկոսը: Սակայն ներգաղթածների էթնիկ կազմը բավականին միատարր էր. նրանք հիմնականում հայեր և ռուսներ էին, որոնք բնակվում էին Արևմտյան Հայաստանում, Իրանում և Ռուսական կայսրության եվրոպական գոտում կոմպակտ և մեծ խմբերով, որոնք տարբեր պատմական իրադարձությունների հետևանքով XIX և XX դարերի սկզբին բազմիցս անցել են Արաքսը և Մեծ Կովկասյան լեռնաշղթան մուտք գործելով Հարավային Կովկաս: Ներգաղթածների թվաքանակում զգալիորեն փոքր է եղել հույների, եվրոպական ժողովուրդների, հրեաների և ասորիների մասնաբաժինը ներգաղթյալների ընդհանուր թվաքանակում:

Ի տարբերություն Հյուսիսային Կովկասի, Հարավային Կովկասի քաղաքները հիմնականում բնակեցված էին տեղաբնիկ էթնոսներով: 1886թ. բնակչության հաշվառման համաձայն՝ տարածաշրջանի քաղաքներում (տե՛ս աղյուսակ 2) ապրում էր 186.6 հազար հայ, 67,3 հազար թուրքալեզուներ և 59.6 հազար քարթվելներ (վրացի, իմերեթ, մեգրել և այլն): Այլ կերպ ասած՝ Հարավային Կովկասում բնակվող հայերի 20%-ը, թուրքալեզու ժողովուրդների 8.3%-ը և քարթվելների 5.7%-ը ապրում էին քաղաքներում[13, c.

5]: Հայերի թիվը զգալի էր ոչ միայն Երևանի, այլև Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգներում և Կարսի մարզում: Թվարկված վարչատարածքային միավորներում հայերը հիշատակվում են նույնիսկ միջնադարյան աղբյուրներում[3, 72]:

Աղյուսակ 2

**Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնիկ կազմի շարժընթացը
1886-1916թթ.**

	1886թ.		1897թ.		1916թ.	
	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը
հայ	186607	38,1	217453	28,7	518510	37,8
ռուս	53182	10,7	146313	19,2	367149	26,8
հույն	3843	0,8	6729	0,7	-	-
լեհ	2100	0,5	3286	0,3	-	-
գերմանացի	2915	0,6	3347	0,3	-	-
հրեա	18331	3,7	9390	1,1	36929	2,6
պարսիկ	9024	1,8	3563	0,4	-	-
թուրքալեզու	67295	13,7	172959	22,6	248492	18,1
ավար	1873	0,4	3922	0,4	-	-
թալիշ և թաթար	77265	15,8	-	-	-	-
դարգին	-	-	15557	1,9	-	-
վրացի	32011	6,5	91484	12,0	167091	12,2
մեզրել	6138	1,3	15872	1,9		
իմերեթ	21177	4,3	26048	3,3		
Այլ ազգույթ.	8105	1,8	55859	7,2	30164	2,5
Ընդամենը	489666	100	775968	100	1368335	100

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են՝ Списки населенных мест Кавказского края. Ч. 1 Бакинская губерния, и Ставропольская и Терская область. – Тифлис [1879]., [343], Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г Тифлис 1893г., Первая Всеобщая перепись населения Российской империи 1897 г., СПб, 1905; Кавказский календарь [Текст]. на 1910 год : 65-й год. Ч. 1. — Тифлис, 1845-1916, [1909]. — VIII, 928 с.:

Աղյուսակ 2-ից երևում է, որ քաղաքային բնակչության էթնիկական կազմից աճի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է հայերի մոտ, մասնավորապես 1897-1916 թթ.: Տարածաշրջանի քաղաքային բնակավայրերում հայերի տեսակարար համաթիվն ամենաբարձրն է եղել: Արևմտյան Հայաստանից հայերի բռնագաղթը դեպի Հարավային Կովկաս զանգվածային բնույթ կրեց Առաջին աշխարհամարտի տարիներին: Այսպես, 1915թ. միայն մեկ օրվա ընթացքում Արևմտյան Հայաստանից ցեղասպանությունից մազապուրծ փրկված չորս հազար հայերից 2,3 հազարը բնակություն հաստատեցին Ալեքսանդրապոլ, իսկ 1,5 հազարը՝ Երևան քաղաքներում[9, с.37]: Հատկանշական է, որ «Կարսի մարզի 1896 թվականի ակնարկում» նշվում է. «Մարզում ժամանակավորապես բնակվող 17789 հայերից՝ 12334 հայ գաղթականներ են եղել, որոնք փախել են Օսմանյան Թուրքիայից: Մի քանի բացառություններով, այս գաղթականները չունեն իրենց սեփական ապրուստի միջոցները. նրանց հիմնական զբաղմունքը Թուրքիայում՝ իրենց հայրենիքում գյուղատնտեսությունն էր, բայց նրանց մեջ կան նաև փոքրաթիվ արհեստավորներ, հիմնականում՝ դարբիններ, որմնադիրներ, հյուսներ և այլն: Նրանց ճնշող մեծամասնություն-

նր բնակվեց Կարս քաղաքում և համանուն մարզի գյուղերում՝ տեղացի հայերի կողմից ժամանակավորապես անվճար տրամադրված տարածքներում և իրեն պահում է վերջիններիս օգնությամբ՝ հիմնականում չնչին եկամուտով [9, c. 26]:

Այսպիսով, XIX դարի վերջից մինչև XX դարի սկիզբ՝ հայաշատ էին Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Վաղարշապատ, Կարս, Երևան քաղաքները, իսկ այլ նահանգների քաղաքներից՝ Ախալցխա, Ախալքալաք, Թիֆլիս, Շուշի, Բաքու, Ելիզավետպոլ և այլ քաղաքներ: 1886-1916 թթ. Հարավային Կովկասի քաղաքային բնակավայրերում մեծաթիվ ազգերից՝ հայերի և վրացիների թիվն առանձին- առանձին ավելացել է 2,8, ռուսներինը 6,9 և թուրքալեզու բնակիչներինը՝ 3,7 անգամ: Բնչպես տեսնում ենք, ռուս և թուրքալեզու բնակիչների աճի ցուցանիշը բարձր է եղել: Դրանով է պայմանավորված, որ 1916թ. համեմատ՝ 1886թ. տարածաշրջանի քաղաքային ազգաբնակչության տեսակարար համաթվում հայերինը փոփոխության գրեթե չի ենթարկվել, վրացիներինը, ռուսներինը և թուրքալեզուներինը աճել է:

Թուրքալեզու բնակությունը (ճնշող մեծամասնությունը ներկայիս ադրբեջանցիներն են կամ շիա մահմեդականները) հիմնականում բնակվել են Ելիզավետպոլի և Բաքվի նահանգների քաղաքներում: Բաքվում, Շուշիում, Նուխայում, Շամախայում նրանք կազմում էին բնակչության 45-80%-ը, Սալյանում և Օրդուբադում՝ 90-100%-ը: Բացի այդ, մոտ 10 հազար թուրքալեզուներ ապրում էին Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում: Եթե 1886թ. տարածաշրջանի քաղաքային բնակավայրերում ապրում էր թուրքալեզու բնակչության 13,7%-ը, ապա 1916թ.՝ 22,6%-ը: Աղյուսակ 4-ից նաև երևում է, որ շիա մահմեդականները տարածաշրջանի խոշոր քաղաքներում ճնշող մեծամասնություն չեն կազմել:

Քարթվեկները հիմնականում բնակվում էին Թիֆլիսի, Քութայիսի նահանգների և Սուխումի օկրուգի քաղաքային կենտրոններում. նրանց մեծ մասը գտնվում էր Թիֆլիսում և Քութայիսում (ընդհանուր առմամբ 36,5 հազար մարդ), զգալի թիվը (բնակչության 40-60%-ը)՝ Սդնադիում, Գորիում, Փոթիում, Սուխումում: 1897թ. մարդահամարը ցույց տվեց քաղաքներում վրացիների, հայերի և ադրբեջանցիների թվի աճ: Այսպիսով, 1886-1897թթ. Թիֆլիսում վրացիների թիվն աճեց 93%-ով, Գորիում՝ 59%-ով, Քութայիսում՝ 50%-ով և այլն: Իսկ, ընդհանրապես 1897-1916թթ. քաղաքաբնակ վրացիների տարեկան միջին աճը կազմել է 1,6%: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը հայերի համար կազմել է 7,3%, ռուսներինը՝ 7,9% և թուրքալեզուներինը՝ 2,3%:

Թալիշներն ու լեռնային հրեաները Լենքորանի և Ղուբայի տարածքների տեղաբնիկներ էին: Տարածաշրջանի քաղաքաբնակ թալիշների և լեռնային հրեաների վերաբերյալ տվյալները սակավ են և հակասություններով լի, ինչի հետևանքով հնարավոր չէ նրանց թվաքանակի դինամիկայի վերաբերյալ տալ հստակ պատկերացում: Փոքրաթիվ տեղաբնիկ աբխազները, լեզգիները և քրդերը բնակվել են Սուխումի օկրուգի, Դադստանի, ինչպես նաև Կարսի մարզի և Ելիզավետպոլի նահանգի քաղաքային բնակավայրերում: Մինևույն ժամանակ, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից առաջ Հարավային Կովկասի քաղաքներում նրանց ներկայությունը գրեթե չէր արձանագրվում[5, c.43]:

Տեղաբնիկ խմբերից բացի՝ տարածաշրջանի քաղաքներում բնակվում էին նաև մեծաթիվ ռուսներ, ինչպես նաև փոքրաթիվ հույներ, գերմանացիներ և լեհեր: Ռուսները կազմում էին արդյունաբերական Բաքվի բնակչության 24.6%-ը, Թիֆլիսի՝ 18.1%-ը, իսկ

Բաթում նավահանգստային քաղաքի՝ 11.2%-ը: Հույները հիմնականում կենտրոնացած էին Բաթումում (20.1%), իսկ որոշ չափով՝ նաև Փոթիում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Քուրբայիսում և Կարսում: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1915 թվականին, Թուրքիայից փախստական հույները հայերի հետ միասին անցան Հարավային Կովկաս: Մարդահամարի ընդամենը մեկ օրվա ընթացքում Ախալքալաքում հաշվառվել է շուրջ 1.4 հազար հույն, Ալեքսանդրապոլում՝ 1.3 հազար, իսկ Ախալցխալում և Բաթումում՝ համեմատաբար ավելի փոքր թվով: Նույն ժամանակաշրջանում տարածաշրջանի քաղաքներում հայտնվեցին նաև ասորիներ: Ընդհանուր առմամբ, ավելի քան 3 հազար ասորի ներգաղթեց. նրանցից 19-ը հաստատվեց Թիֆլիսում, մոտ 300-ը՝ Երևանում, Ալեքսանդրապոլում և Նախիջևանում, սակայն ասորիների հիմնական զանգվածը բնակություն հաստատեց գյուղական վայրերում[9,с.27] :

Աղյուսակ 3

**Եվրոպացի էթնիկ խմբերի բաշխումը Հարավային Կովկասի քաղաքներում՝
ըստ 1897թ. մարդահամարի**

Նահանգ, մարզ, օկրուգ	լեհ	Լատիշ, լիտվացի	Ֆրանսիացի, ռումինացի, մոլդովացի	Գերմանացի	հույն	Ֆինն, էստոնացի	Ընդամենը
Բաքու	1439	371	158	3430	-	622	6020
Ելիզավետպոլ	616	148	143	3194	538	16	4655
Զակատալա	115	-	-	11	2	-	128
Դաղստան	1630	537	78	261	-	50	2556
Կարս	3243	956	51	430	32593	484	37757
Թիֆլիս	6167	1420	814	8329	27116	199	44045
Բաթում	911	191	160	369	4717	31	6379
Սուխում	234	123	138	406	5393	607	6901
Սևծովյան	731	88	1091	748	5269	821	8748
Երևան	1385	485	363	210	1323	403	4169
Ընդամենը	16471	4319	2996	17388	76951	3233	121358

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Кавказский календарь на 1908 год, Тифлис 1907, с.108-124:

Հրապարակված վիճակագրական տվյալները վկայում են, որ Անդրկովկասի քաղաքների բնակչությունը, բացառությամբ Թիֆլիսի, Բաքվի և Բաթումի, բնութագրվում էր համեմատաբար էթնիկ միատարրությամբ: Սա էական տարբերություն էր Հարավային Կովկասի քաղաքների և Հյուսիսային Կովկասի քաղաքային կենտրոնների միջև, որտեղ բնակչությունը բազմազգ էր՝ պայմանավորված Ռուսաստանի, Եվրոպայի, Թուրքիայի և Իրանի հետ ինտենսիվ միգրացիոն գործընթացներով:

XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին եվրոպական ծագում ունեցող ազգությունները զանգվածաբար ներգաղթեցին Կովկաս: Այս գործընթացի արդյունքում XIX դ. և XX դարի սկզբին Հարավային Կովկասում ձևավորվեցին եվրոպական էթնիկ համայնքներ: Ներգաղթողների շարքում կային տարբեր մասնագիտական ոլորտների ներկայացուցիչներ, ձեռնարկատերեր և այլ սոցիալական խմբեր: Արդյունաբերության զարգացումը նպաստեց ներգաղթի ծավալների աճին՝ պայմանավորելով տարածաշրջանում եվրոպաբնակ տարրերի առավել հաստատուն ներկայությունը:

Աղյուսակ 3-ի թվային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ եվրոպական ծագում ունեցող ազգություններից առավել մեծաթիվ էին հույները, գերմանացիները և լեհերը: Հատկանշական է, որ հույների զգալի մասը Օսմանյան կայսրությունից եկած փախստականներ էին, որոնք բնակություն էին հաստատել Կարսի մարզում և Թիֆլիսի նահանգում: Վիճակագրական տվյալներով՝ քաղաքաբնակ հույների ընդհանուր թվի 42.3%-ը կենտրոնացած էր Կարսի մարզում, իսկ 35.2%-ը՝ Թիֆլիսի նահանգում: Լեհերի մեծ մասն ապրել է նույն վարչատարածքային միավորներում, մինչդեռ գերմանացիները բնակվել են Բաքվի, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների քաղաքային բնակավայրերում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածի մարդահամարի և բնակչության հաշվառման տվյալները վկայում են, որ խոշոր և միջին քաղաքներում բնակչության հիմնական մասը կազմել են երեքից չորս էթնիկ խմբեր, մինչդեռ փոքր քաղաքները բնորոշվել են համեմատաբար էթնիկ միատարրությամբ: Միջին մեծության քաղաքներից բացառություն են կազմել Ալեքսանդրապոլը և Նովոռոսիյսկը. առաջինում ճնշող մեծամասնությունը հայերն էին, երկրորդում՝ ռուսները: Օրինակ, Նախիջևանում, Շուշիում և Օրդուբադում բնակչության հիմնական մասը կազմել են շիա մահմեդականներն ու հայերը, Թելավիում՝ վրացիներն ու հայերը, իսկ Շամախիում՝ շիա մահմեդականները, հայերը և ռուսները (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնոկրոնական կազմը 1916թթ.[16]

№	քաղաք	Նահանգ, մարզ, օկրուգ	Ազգաբնակչություն	% միգրանտներ	% տղամարդ	Էթնոկոնֆեսիոնալ խմբերը, որոնք 3%-ից ավելի են
1	Թիֆլիս	Թիֆլիսի նահանգ	346766	50.5%	51.8%	հայ – 43.1%, ռուս – 26.5%, քարթվելներ – 10.8%, ասիական քրիստոնյաներ – 5.6%, եվրոպական ժողովուրդներ – 3.4%, հրեաներ – 3.1%
2	Բաքու	Բաքվի նահանգ	262422	60.4%	54.8%	ռուս – 30.4%, շիա մահմեդական – 26.4%, հայ – 23.8%, սունի մահմեդական – 7.4%
3	Սուխում	Սուխումի օկրուգ	61974	40.9%	78%	քարթվելներ – 40.6%, ռուս – 30.5%, հայ – 13.3%, ասիական քրիստոնյաներ – 7.6%, սունի մահմեդական – 3.9%
4	Քութայիս	Քութայիսի նահանգ	58151	28.4%	58.4%	քարթվել – 58.2%, ռուս – 18.9%, հրեա – 18%, հայ – 3.2%
5	Ելիզավետպոլ	Ելիզավետպոլի նահանգ	57731	15.8%	49.4%	Շիա մահմեդական – 65.2%, հայ – 21%, ռուս – 10.6%
6	Նուխա	Ելիզավետպոլի նահանգ	52243	2.4%	54.8%	Սունի մահմեդական – 64.7%, շիա մահմեդական – 18.4%, հայ – 15.3%
7	Ալեքսանդրապոլ	Երևանի նահանգ	51874	16.2%	54.9%	հայ – 88.0%, ռուս – 7.9%,
8	Նովոռոսիյսկ	Սևծովյան նահանգ	51651	47.8%	56.5%	ռուս – 85.8%, եվրոպացի ժողովուրդներ – 8.1%, հրեա – 3.2%

Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական գործընթացները...

9	Երևան	Երևանի նահանգ	51286	57.1%	49.8%	հայ – 72.6%, շիա մահմեդական – 24.5%
10	Շուշի	Ելիզավետպոլի նահանգ	43869	6.3%	57.9%	հայ – 53.3%, շիա մահմեդական – 43.5%,

Բաքվի ոստիկանապետությունը ներառում է Բաքու քաղաքը և հարակից բնակավայրերը, ասիացի քրիստոնյաներ՝ հիմնականում հույներ և ասորիներ, մուսուլմաններ՝ տունիներ և շիաներ՝ Բաղառու-թյամբ հյուսիսկովկասցիների և քրդերի:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում խոշոր քաղաքների բնակչության զգալի մասը կազմել են ոչ տեղաբնիկները կամ ժամանակավոր բնակություն հաստատած աշխատանքային միգրանտները, որոնց մի մասը ժամանակի ընթացքում դարձել է մշտական բնակիչ: 1914 թ. Հարավային Կովկասի բնակչությունը կազմել է մոտ 6,3 մլն մարդ, որից «ժամանակավոր բնակիչների» թիվը հասել է 800,9 հազարի: Նրանցից 482,7 հազարը եղել են տղամարդիկ, իսկ 318,2 հազարը՝ կանայք: «Ժամանակավոր բնակիչների» առավել մեծ համակենտրոնացումը նկատվել է զարգացած արդյունաբերական շրջաններում՝ Բաքվի և Թիֆլիսի նահանգներում: Բացառություն են կազմել Սուխումի շրջանն ու Կարսի մարզը, որտեղ «ժամանակավոր բնակիչների» բարձր տոկոսը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանից գաղթած փախստականների ներկայությամբ:

«Ժամանակավոր բնակիչների» կեսից ավելին՝ 461,3 հազարը կամ 57,5%-ը, բնակվում էր քաղաքներում և, ըստ ամենայնի, ներգրավված էր արդյունաբերական արտադրության մեջ[7, cc. 218-234]: Վիճակագրական տվյալներով՝ այս խմբի էթնիկ կազմը հետևյալն էր. 25,5%-ը հայեր, 24,9%-ը՝ ռուսներ, 17,9%-ը՝ ադրբեջանցիներ, 14,7%-ը՝ վրացիներ, 5,5%-ը՝ ասորիներ, աբխազներ և այլ փոքրաթիվ ժողովուրդներ, իսկ մնացած մասը՝ այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Արևելյան Հայաստանում «ժամանակավոր բնակիչների» թիվը կազմել է 118,4 հազար մարդ, ինչը համարվել է երկրամասի ամբողջ բնակչության 5,6%-ը: Նրանցից 33,8%-ը բնակվել է քաղաքներում, իսկ 66,2%-ը՝ գյուղական բնակավայրերում: Տվյալ թվաքանակից 52,1 հազարը եղել են հայեր, 25,4 հազարը՝ ադրբեջանցիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ, 15,4 հազարը՝ ռուսներ, իսկ 14,1 հազարը՝ քրդեր[1, c.45]:

Ե Զ Ը Մ Զ Ս Ն Գ ՈՒ Մ: Հարավային Կովկասի քաղաքայնացման գործընթացի առանձնահատկություններից է եղել մի կողմից տարբեր ազգությունների միջմշակութային ինտեգրումը, մյուս կողմից էլ՝ ազգային հակամարտությունների սրացումը: Այդ տարիներին ռուսական կայսրության ազգային քաղաքականությունը, տնտեսական փոփոխությունները և ազգայնական շարժումների աճը հանգեցրին էթնիկական լարվածության ուժեղացմանը, որն իր արտահայտությունն է գտել ազգությունների տեղաշարժերի ակտիվացմամբ: Միաժամանակ, եվրոպական պետություններից և կայսրության եվրոպական տարածքներից տարածաշրջան են ներգաղթել տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ ռուսներ, գերմանացիներ, լեհեր, հրեաներ և այլք, որոնց հիմնականում բնակություն են հաստատել Բաքվի, Թիֆլիսի նահանգների և Կարսի մարզի քաղաքային բնակավայրերում: Ի վերջո, 1886–1916 թթ. Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական զարգացումները վկայում են տարածաշրջանում ընթացող բարդ և բազմաշերտ գործընթացների մասին: Ազգաբնակչության տեղաշարժերը, ներքին

ու արտաքին միգրացիաները, ինչպես նաև ազգային հակամարտություններն ու բախումները էական դեր են խաղացել էթնիկական փոխհարաբերման ձևավորման և վերափոխման գործում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում էթնոժողովրդագրական դինամիկան եղել է պատմական, տնտեսական, կրոնական և էթնոքաղաքական զարգացումների արդյունք՝ պայմանավորելով համակեցության ինչպես ինտեգրացիոն, այնպես էլ հակամարտային դրսևորումներ: Քաղաքային բնակչության թվաքանակում առաջին տեղը զբաղեցրել են հայերը, մեծամասնություն են կազմել ռուսները, քարթվելական ժողովուրդները և շիա մահմեդականները:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Խոջաբեկյան Վ.** Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում-XXI դ. շնմին: «Գիտություն» հրատ., Եր, 2001: 480 էջ :
2. **Ամбарյան Ա.** Численность и национальный состав «временно проживающих» в Закавказье и Восточной Армении в 1914г.: //Լրագրի հասարակական գիտությունների: 1979, N8, էջեր 38-45:
3. **Веселовский Н.** Памятники дипломатических и торговых сношений Московской Руси с Персией, т. I, СПб., 1890: 455стр.
4. **Волкова Н.** Изменения в городском населении Закавказья в конце XIX–XX веке // СЭ. — 1968: № 6: стр. 39–51:
5. **Волкова Н.** Изменения в национальном составе городского населения Северного Кавказа за годы Советской власти, //Сов. этнография, стр. 39-51, 1965: № 2., стр. 43.
6. **Гербер И.** Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря, 1728 г., в кн.: «История, география и этнография Дагестана. XVIII—XIX вв.», М., 1958: стр. 94.
7. Кавказский календарь на 1915, Тифлис, 1916: 616 с.:
8. Кооперация в Закавказье: вып. I, отд. II: Тифлис, 1925, 263с.:
9. Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией», Эриван, 1915, 50 с.
10. «Обзор Каресской области за №96 год», Карс, 1897, 130 с.
11. Обзор Эриванской губернии за 1912г., Ер. 1913г., 65 с.
12. **Сороко Е.,** Показатели для описания этнодемографических процессов // Апрельская международная научная конференция по проблемам развития экономики и общества. Книга 3. / Отв. ред. Е.Г. Ясин. М.: Изд. дом Высшей школы экономики, М. 2016. 328-338 сс.
13. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Тифлис 1893: 272 с.
14. **Hovannisian, Richard G.** *The Republic of Armenia: The First Year, 1918-1919.* //Vol. 1, University of California Press, 1971, 21-22 pp..
15. Первая всеобщая перепись населения Российской Империи 1897 г. Число наличного населения в городах, https://www.demoscope.ru/weekly/ssp/rus1897_02.php , դիտվել է 20.08.2025
16. Крупнейшие города Кавказа, 1 янв. 1916 года, <https://athanatoi.livejournal.com/100061.html> դիտվել է 06.09.2025

References

1. **Khojabekyan, V.** Reproduction and Migration of the Population of Armenia in the 19th-20th/ [*Hayastani bnakh 'ut 'yan verartadrut 'yuny yev teghasharzhery XIX-XX darerum-XXId. shemin*]:, Gitut'yun., hrat., Yerevan, 2001, 480 p. (in Armenien)

2. **Ambaryan, A.** The Number and National Composition of "Temporary Residents" in Transcaucasia and Eastern Armenia in 1914. [*Chislennost' i natsional'nyy sostav «vremennykh zhiteley» v Zakavkaz'ye i Vostochnoy Armenii v 1914 godu. //Izvestiya obshchestvennykh nauk.*] // News of Social Sciences. 1979, N8, 38-45 p. (in Russian)
3. **Veselovsky, N.** Monuments of Diplomatic and Trade Relations of Muscovite Rus' with Persia, vol. I, [*Pamyatniki diplomaticheskikh i torgovykh snosheniy Moskovskoy Rusi s Persiyey.*]// St. Petersburg, 1890: 455pp. (in Russian)
4. **Volkova, N.** Changes in the Urban Population of Transcaucasia in the late 19th–20th centuries [*Izmeneniya v gorodskom naselenii Zakavkaz'ya v kontse XIX–XX veke*] // SE. – 1968, No. 6, 39–51pp. (in Russian)
5. **Volkova, N.** Changes in the National Composition of the Urban Population of the North Caucasus during the Years of Soviet Power, [*Izmeneniya v natsional'nom sostave gorodskogo naseleniya Severnogo Kavkaza za gody Sovetskoy vlasti*] // Sov. ethnography, 39-51pp., 1965, No. 2., 43p. (in Russian)
6. **Gerber, I.** Description of the Countries and Peoples along the Western Shore of the Caspian Sea, 1728, in the Book: [*Opisaniye stran i narodov vdol' zapadnogo berega Kaspiyskogo morya*] "History, Geography and Ethnography of Dagestan. 18th-19th centuries", Moscow, 1958: 94p. (in Russian)
7. Caucasian Calendar for 1915: [*Kavkazskiy kalendar' na 1915*] Tiflis, 1916, 616 p. (in Russian)
8. Cooperation in Transcaucasia: [*Kooperatsiya v Zakavkaz'ye*]: vol. I, ot del. II: Tiflis, 1925, 263 p. (in Russian)
9. One-day Census of Refugees from Turkey, Persia and from Places Bordering Turkey, [*Odnodnevnyaya perepis' bezhentsv iz Turtsii, Persii i iz mest, pogranychnykh s Turtsiyey*]] Erivan, 1915, 50 p. (in Russian)
10. Review of the Kars Region, / [*Obzor Karsskoy oblasti*] No. 96, Kars, 1897, 130 p. (in Russian)
11. Review of the Yerevan Province for 1912, [*Obzor Erivanskoy gubernii za 1912g*] Erivan, 1913, 65 p., (in Russian)
12. **Soroko, E.** Indicators for Describing Ethnodemographic Processes [*Pokazateli dlya opisaniya etnodemograficheskikh protsessov*] // XVI April International Scientific Conference on Problems of Economic and Social Development. Book 3./ Ed. E. G. Yasin. Moscow: Publishing House of the Higher School of Economics, Moscow, 2016. 328-338 pp. (in Russian)
13. A Collection of Statistical Data on the Population of the Transcaucasian Region, [*Svod statisticheskikh dannykh o naselenii Zakavkazskago kraya, izvlechnnykh iz posemeynykh spiskov 1886 g.*] extracted from family lists of 1886. Tiflis 1893, 272 p. (in Russian)
14. **Hovannisian, R.** *The Republic of Armenia: The First Year, 1918-1919.* //Vol. 1, University of California Press, 1971, pp. 21-22.
15. The First General Census of the Russian Empire in 1897. [*Pervaya vseobshchaya perepis' naseleniya Rossiyskoy Imperii 1897 g. Chislo nalichnogo naseleniya v gorodakh*] The Number of Actual Population in Cities, https://www.demoscope.ru/weekly/ssp/rus1897_02.php , April 20, 2025(in Russian)
16. Largest Cities of the Caucasus, January 1. 1916, <https://athanatoi.livejournal.com/100061.html> (access: 09/06/2025)

Ընդունվել է / Received on: **11. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **09. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արտաշես Գևորգի ԲՈՅԱՋՅԱՆ՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ a.bojayyan@mail.ru / ORCID.org/0009-0002-8424-4522

Artashes Gevorg BOYAJYAN: PhD in History, Associate Professor,
Senior Researcher at Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: a.bojayyan@mail.ru / ORCID.org/0009-0002-8424-4522

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԱՎՄԱՆ ՏԱՊԱՆԱԳՐԱՅԻՆ
ՈՒ ՍԳԵՐԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Կարինե Ա. Սահակյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Ռոզա Պ. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում դիտարկվում են 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո ձևավորված գերեզմանոցները՝ որպես յուրահատուկ մշակութային արխիվներ, որոնք պահպանել են անձնական և հավաքական հիշողության, վշտի, հավատքի ու ինքնության բազմաշերտ նարատիվները: Հիմնվելով տեղական դաշտային հետազոտությունների, լուսանկարների և էթնոգրաֆիկ տվյալների վրա՝ ուսումնասիրությունն անդրադառնում է, թե ինչպես են գերեզմանոցները վերածվել հիշողության տարածքների՝ արտացոլելով ոչ միայն անհատական ռաբբիությունները, այլև հանրային ինքնության վերակառուցման գործընթացը: Գիտական նորույթ. Առաջին անգամ համադրվում են Գյումրու տապանագրային և բանավոր սգերգային ժառանգությունները՝ դիտարկելով դրանք որպես փոխլրացնող հիշողության համակարգ, որը միավորում է նյութական և ոչ նյութական մշակույթը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտելու հետադեպյան հիշողության ձևավորման մոդելներ, որոնք կարող են կիրառվել նաև այլ տարածաշրջաններում: Մեթոդներ և նյութեր. Հետազոտությունը կիրառում է միջդիսցիպլինար մոտեցում՝ համադրելով մշակութաբանական և նարատիվային վերլուծության մեթոդները՝ բացահայտելու անձնական հիշողությունների, խորհրդանշական պատկերների և հանրային հիշողության ձևավորման փոխհարաբերությունները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են մեր /-Կ.Ս. և Ռ.Հ./ գրառած դաշտային բանահյուսական նյութերը, որոնք ներառում են տեղական ավանդույթներ, գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրություններ, աղետի հիշողության բանավոր նարատիվներ: Դաշտային ու-

սումնասիրությունները իրականացվել են 1988թ. երկրաշարժից հետո Շիրակի և Գյումրու հին ու նոր գերեզմանոցներում: Վերլուծություն. Նարատիվային վերլուծության շրջանակում ուսումնասիրվել են գերեզմանաքարերի տեքստերը, դրանցում առկա սիմվոլիկան և պատկերագրությունը: Արդյունքներ: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Գյումրու տապանագրային և բանավոր սգերգային ժառանգությունը արտացոլում է ոչ միայն հետադեպի մշակութային հիշողության համընդհանուր օրինաչափությունները, այլև յուրահատուկ տեղային մոդել, որը կարելի է բնորոշել որպես երկակի հիշողության համակարգ: Այս համակարգը ձևավորվում է նյութական և ոչ նյութական հիշողության փոխլրացնող փոխազդեցությամբ: Հեղինակների ներդրումը. Համատեղ գրառել ու համակարգել ենք գերեզմանոցային մշակույթին, տապանաքարային արվեստին ու բանավոր նարատիվներին առնչվող մեծածավալ նյութ, կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե գերեզմանոցները՝ որպես մշակութային արխիվներ, ինչպես են պահպանում մեր ինքնությունն ու հիշողությունը:

Բանալի բառեր՝ երկրաշարժ, գերեզմանոցներ, մշակութային արխիվներ, հավաքական հիշողություն, խորհրդանշական նարատիվներ, նարատիվային վերլուծություն:

Ինչպես հղել՝ Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. Հիշողությունը և տրավման տապանագրային ու սգերգային ժառանգության համատեքստում // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 112 - 123 էջեր:

DOI:10.52971/18294316-2025.28.2-112

MEMORY AND TRAUMA IN THE CONTEXT OF THE GRAPHIC AND FUNERARY HERITAGE

Karine A. Sahakyan

Shirak Center for Armenological Studies of NAS,
Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Roza P. Hovhannisyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

Abstract

Introduction: This article examines cemeteries formed after the 1988 Spitak earthquake as unique cultural archives that have preserved multi-layered narratives of personal and collective memory, grief, faith, and identity. Drawing on local fieldwork, photographs, and ethnographic data, the study examines how cemeteries have become sites of memory, reflecting not only individual tragedies but also the process of rebuilding public identity. For the first time, the epigraphic and oral funeral legacies of Gyumri are combined, viewing them as a complementary memory system that unites material and non-material culture. This approach allows us to identify models of post-disaster memory formation that can be applied to other regions. Methods and materials: The research uses an interdisciplinary approach, combining the methods of cultural and narrative analysis to reveal the interrelationships between personal memories, symbolic images, and the formation of public memory. During the research, we used field folklore materials recorded by us /-K.S. and R.H./, which include local traditions, artistic inscriptions on tombstones, and oral narratives of disaster memory. Field studies were conducted after the 1988 earthquake in the old and new cemeteries of

Shirak and Gyumri. *Analysis*: Within the framework of narrative analysis, the texts of tombstones, their symbolism, and iconography were studied. *Results*. The results of the analysis show that the epigraphic and oral funeral heritage of Gyumri reflects not only the general patterns of post-disaster cultural memory, but also a unique local model, which can be characterized as a dual memory system. This system is formed by the complementary interaction of material and non-material memory. *Authors' contribution*: They jointly wrote and systematized a large amount of material related to cemetery culture, tombstone art and oral narratives, conducted a study to find out how cemeteries, as cultural archives, preserve our identity and memory.

Key words: *earthquake, cemeteries, cultural archives, collective memory, symbolic narratives, narrative analysis.*

Citation: Sahakyan K., Hovhannisyan R. *Memory and Trauma in the Context of Tombstone and Funeral Heritage*// Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025: Vol. 2 (28). 112-123 pp. DOI:10.52971/18294316-2025.28.2-112

Ն Ա Խ Ա Բ Ա Ն. Հիշողությունը, տրավման և քաղաքային ինքնությունը փոխկապակցված երևույթներ են, որոնք առանձնահատուկ կերպով արտահայտվում են այն տարածքներում, որտեղ բնական աղետները արմատապես փոխել են քաղաքի սոցիալական կառուցվածքը, ֆիզիկական միջավայրը և հավաքական ինքնության սահմանները: 1988 թ. Սպիտակի երկրաշարժը, որի հետևանքով Գյումրին կորցրեց իր բնակչության զգալի մասը և նյութական մշակութային ժառանգության մեծ հատված, այսօր հանդես է գալիս ոչ միայն որպես բնական աղետ, այլ նաև որպես սոցիալական և մշակութային տրավմայի հիմնական կրող:

Գյումրին՝ որպես հիշողության քաղաք, իր մեջ կրում է տարբեր շերտեր նյութական և ոչ նյութական ժառանգության, որոնք ամրագրված են ինչպես *գերեզմանաքարերի մակագրություններում* [4, էջ 284], այնպես էլ *բանավոր սգերգերում* [6, էջ 123]: Այս երկակի հիշողության համակարգը կարևոր է հասկանալու համար, թե ինչպես է *քաղաքային ինքնությունը ձևավորվում, վերակառուցվում կամ կորստի մատնվում աղետից հետո*:

Հոդվածը նպատակ ունի՝

- ուսումնասիրել Գյումրու հին գերեզմանատները որպես մշակութային արխիվներ, վերլուծել դրանց տապանագրերում առկա սիմվոլիկան, տեքստերը և պատկերային շերտերը [4, էջ 311],
- համադրել դրանք սգերգերի բանավոր ավանդույթի հետ [6],
- բացահայտել հիշողության, տրավմայի և քաղաքային ինքնության փոխազդեցության մեխանիզմները:

Հետազոտությունն առանձնահատուկ է նրանով, որ համադրում է երկու մակարդակ՝ *նյութական ժառանգություն* (տապանագրեր, գերեզմանաքարային արվեստ) և *ոչ նյութական ժառանգություն* (բանահյուսական սգերգեր, բանավոր հիշողություն): Այս մոտեցումը թույլ է տալիս բացահայտել *հիշողության բազմաշերտ կառուցվածքը* և դրա ազդեցությունը ժամանակակից Գյումրու սոցիալ-մշակութային ինքնության վրա:

Տեսական հիմքեր

Հիշողության և տրավմայի հետազոտությունները վերջին տասնամյակներում ձևավորել են առանձին գիտական միջդիսցիպլինար դաշտ: Հիշողության սոցիոլոգիան

և քաղաքային անթրոպոլոգիան դիտարկում են՝ ոչ միայն *ինչպես են մարդիկ հիշում*, այլ նաև՝ *ինչպես են հիշողությունները նյութականացվում միջավայրում*:

Յան Ասմանի տեսության համաձայն՝ հավաքական հիշողությունը գործում է երկու մակարդակով՝ ա/*հաղորդակցական հիշողություն*՝ սահմանափակվում է կենդանի սերունդների փորձառությամբ և բանավոր փոխանցմամբ, բ/*մշակութային հիշողություն*՝ ամրագրվում է նյութական կրիչներում՝ տապանագրերում, պատկերներում, ծեսերում [8, էջ 55]: Մորիս Հալբավախսը [11] ընդգծում է, որ հիշողությունը միշտ տեղայնացված է, այն չի կարող գոյություն ունենալ առանց կոնկրետ տարածքի: Գյումրու հին գերեզմանոցները հենց այդպիսի *հիշողության վայրեր* են, որտեղ հավաքական ինքնությունը ձևավորվում է սիմվոլիկ նշանների, տեքստերի և արարողությունների միջոցով:

Ջեֆրի Ալեքսանդրի [8] տրավմայի սոցիալական կառուցման տեսությունը կարևոր է այս հետազոտության համար: Ըստ նրա՝ հասարակությունը աղետից հետո ոչ միայն տառապում է, այլև *կառուցում է տրավմայի նարատիվներ*՝ խորհրդանշական միջոցներով փոխանցելով փորձառությունները ապագա սերունդներին: Գյումրու գերեզմանաքարերը և սգերգերը միասին ստեղծում են այդպիսի նարատիվային շերտեր:

Վիկտոր Թըրների [12] ծիսական գործընթացների մոտեցումը նույնպես կարևոր է: Գյումրու սգերգերը, ինչպես նաև գերեզմանաքարերի սիմվոլիկան, դիտարկվում են որպես *liminal* (սահմանային) պրակտիկաներ, որոնք օգնում են համայնքին անցնել մահվան, կորստի և վերակառուցման փուլերով: Այս տեսական շրջանակը թույլ է տալիս դիտարկել Գյումրու հին գերեզմանոցները ոչ միայն որպես *պատմական փաստերի կրողներ*, այլև որպես *մշակութային ինստիտուցիոնալ հիշողության դաշտեր*, որոնք ձևավորում են քաղաքային ինքնության ներկա և ապագա շերտերը:

Գերեզմանոցները՝ որպես մշակութային արխիվներ

Վերլուծության նպատակն է բացահայտել գերեզմանոցային պատկերագրության, սիմվոլիկայի և տեքստերի համակարգը՝ հասկանալու դրանց դերը տրավմայի մշակութային ներկայացման մեջ: 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո Գյումրու գերեզմանոցները վերածվեցին յուրատեսակ *մշակութային արխիվների*, որոնք պահպանեցին աղետի հիշողությունը: Սգո պատկերագրությունը, խաչքարերի կոմպոզիցիաները և արձանագրությունները վկայում են ոչ միայն անհատական կորուստների, այլև հավաքական դիմակայության մասին [11, pp. 145-147]: Գյումրու գերեզմանոցներում արձանագրված խաչքարերի մանրագրող սիմվոլիկան արտացոլում է հայկական հոգևոր ավանդույթների շարունակականությունը և նրանց փոխակերպումը ժամանակակից տրավմայի համատեքստում: Բացի այդ, գերեզմանոցային արձանագրություններում հանդիպող սիմվոլները՝ ճաքած սրտեր, ժամացույցի սլաքներ, աղավնիներ և խաչեր, վկայում են ինչպես աղետի ժամանակի հանկարծակևորության, այնպես էլ հույսի և հավատի շարունակականության մասին: Աղետի հետևանքով զոհվածների հարազատների պատմությունները վկայում են, որ գերեզմանաքարերի տեքստերը պահպանել են համայնքային ինքնության կարևորագույն շերտերը: Այսպիսով, գերեզմանոցների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ոչ միայն արձագանքում են տրավմային, այլև նպաս-

տում քաղաքային ինքնության վերակառուցմանը՝ ընդգծելով հիշողության շարունակականությունը [8, p. 202]:

Հետազոտության դաշտային բաղադրիչը ներառում է Գյումրու հին (Ալեքսանդրապոլի շրջանի) և հետադետյան՝ նոր (1988 թ. Մպիտակի երկրաշարժից հետո) գերեզմանաքարերի մակագրությունները, ինչպես նաև լացերգերը, որոնք արձանագրվել են Գյումրու և Շիրակի գերեզմանոցներում և պահպանվել են գրավոր կամ բանավոր փոխանցմամբ: Տվյալների հավաքագրումը իրականացվել է ինչպես աղետից հետո՝ 1989-93թթ., այնպես էլ 2022-2024 թթ. ընթացքում:

Մեր դաշտային աշխատանքների ընթացքում փաստագրվել է ընդհանուր 312 գերեզմանաքար՝ մակագրություններով (134 նախադետյան և 178 հետադետյան): Վերլուծության մեջ ընդգրկվել է 65 գերեզմանաքար՝ ընտրված պահպանվածության, մակագրության ընթեռնելիության և հետազոտական ներկայացուցչականության չափանիշներով: (Հին գերեզմանաքարերի որոշ մակագրություններ մաշված կամ անընթեռնելի էին, ինչը սահմանափակեց դրանց ամբողջական փաստագրումը):

Տապանագրային մշակույթ

Նկատվում է երկշերտ կառուցվածք՝ ա/ ավանդական կրոնական և աղոթքային էպիտաֆիաներ՝ մինչև աղետը տարածված, բ/ էքսպրեսիվ և բանաստեղծական տեքստեր՝ ստեղծված աղետից հետո, որոնք ներառում են սիմվոլիկ պատկերներ, հուզական մետաֆորներ և ուղղակի դիմում անցորդին: Գյումրու դեպքում առանձնահատուկ է այն, որ նյութական և ոչ նյութական հիշողության կրիչները փոխլրացնում են միմյանց. տապանագրերը և լացերգերը միասին ձևավորում են երկակի հիշողություն, որը միավորում է քարով վավերացված և ձայնով փոխանցված ժառանգությունը:

1. Ավանդական կրոնական և բանաձևային մակագրություններ. Այս խումբը բնորոշ է նախադետյան շրջանին և ունի բանաձևային արժեք՝ ուղղված հոգու խաղաղության և Աստծո ողորմության խնդրանքին: Օրինակներ՝ «Աստ հանգչի խաղաղությամբ Մարիամ Ավիրեանց (ծնեալ 1783, վախճ. 1831 թթ.):» «Կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց»: «Աստ հանգչի ոսկերք Վարդիթեր Թոփչեանցի, // Ով հանդիպի, տա ողորմի» [3]: Այս տապանագրերը կառուցվածքային առումով ցույց են տալիս միջնադարյան հայ էպիտաֆիական ավանդույթի շարունակականությունը և կրոնական աշխարհընկալման գերակայությունը (Տե՛ս նաև հոդվածի Հավելվածը՝ *Գյումրու հին գերեզմանատների ավանդական տապանագրերի ընտրանին*):

2. Սոցիալական և մասնագիտական ինքնության արձանագրում. Որոշ մակագրություններ արտացոլում են հանգուցյալի սոցիալական դերակատարումը կամ արհեստը, ինչը վերաժվում է կենսագրական փաստագրության: Օրինակներ՝ «Ժողովրդի դարդերի թարգման, կոյր աշուղ Համբարձում Աղամեան (Համբո) 1867-1904»: «Ես եմ ծառայ ճարտարապետ եկեղեցիք շինողն և խաչքարերը զարդարող վարպետ Մանուկ Պետրոսեանց, վ. 1909 թ. նոյեմբ. 15-ին» [3]: Այսպիսի էպիտաֆիաները ծառայում են նաև որպես մասնագիտական հիշողության պահպանման գործիք:

3. Հետադետյան հուզական և բանաստեղծական մակագրություններ. 1988 թ. երկրաշարժից հետո գերեզմանաքարային տեքստերը հագեցած են հուզականությամբ, բա-

նաստեղծական պատկերներով և անմիջական ողբով: Օրինակներ՝ «Մենք քար արցունքով կրծքերս ենք ծեծում ու չենք հասկանում՝ մի՞թե դու չկաս...»: «Չենք դողանքի էլ այս կյանքում... որ մենք դարձանք համր մի զանգ», «Երկրաշարժը կյանքս խլեց» [3] և այլն: Այս տեքստերը փաստում են սգի և տրավմայի ուղիղ արտահայտումը, որը բնորոշ է հետադեպյան բանավոր մշակույթին:

4. Բանաստեղծների տողերի ինքնատիպ ընտրանի. Որոշ գերեզմանաքարեր կրում են հանգուցյալի սեփական ստեղծագործություններից հատվածներ, ինչը յուրահատուկ ինքնագրային ժառանգություն է: Օրինակներ՝ «Մենությունդ կողպել՝ դեռ ապրել ես ուզում, բառը թողած անտեր, ցավից փախած աղջիկ...» /Անահիտ Հարությունյան/: «Թվում է՝ սուտ ես, մահ ու մոռացում...» /Շմավոն Թորոսյան/ [3]: Այս երկույթը համեմատելի է Ճապոնիայի որոշ շրջանների հետ, որտեղ հուշաքարերին փորագրվում են անհատական հոբու կամ թանկա բանաստեղծություններ [10, p. 8]:

5. Ուղղակի երկխոսություն անցորդի հետ. Շատ մակագրություններ դիմում են անցորդին՝ ստեղծելով կենդանի երկխոսություն: Օրինակներ՝ «Ո՛վ անցավոր..., հիշիր, անցորդ, ես իմ տանն եմ, իսկ դու հյուր ես աշխարհում»: «Կարեկի՛ց անցորդ, թե զիս հարցնես...» [3]: Մա վկայում է ոչ միայն սգի ինտերակտիվ բնույթի մասին, այլև մահվան սոցիալական ընկալման հնագույն շերտերի պահպանման մասին: Ջեֆրի Ս.Ալեքսանդրը մշակել է տրավմայի մասին ինքնատիպ սոցիալական տեսություն: Նա պնդում է, որ տրավմաները ոչ միայն հոգեբանական են, այլև կոլեկտիվ փորձառություններ, և որ տրավմայի հետ կապված աշխատանքը կարևոր դեր է խաղում կարևոր սոցիալական հակամարտությունների ծագումն ու արդյունքները սահմանելու գործում [9, p. 23]:

6. Միմվոլիկա և պատկերագրություն. Հետադեպյան գերեզմանաքարերին հաճախ հանդիպում են ժամացույցի, կոտրված ծաղկի, նռան, դափնու տերևի պատկերներ, որոնք համալրվում են մակագրություններով: Օրինակ՝ «Իմ ճակատին այս էր գրված, որ թառամեմ դեռ չծաղկած» [3]: Այս սիմվոլիկան համընկնում է համընդհանուր սգի մշակույթներում կիրառվող տեսողական կոդերին, որոնք նպաստում են հիշողության պահպանությանը:

Շիրակ գերեզմանատանը Արցախյան գոյամարտերին իրենց կյանքը նվիրաբերած քաջարի հայորդիների մահարձաններին *խաչի* պատկերն է՝ 2 սրերի խաչաձև համադրությամբ: Հայրենիքի առաջ բոլորս հավասար ենք, զինվոր ու նահատակ. այս է խորհուրդը միանման մահարձանների, որ կառուցվել են պետական աջակցությամբ: Մեր ժամանակներում՝ հատկապես Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, համայնական կորստի պարագայում, տապանաքարային արվեստը, այսպես ասած, դուրս է եկել դամբանական սահմանափակությունից, և մեր սուրբ նահատակների պատկեր-դեմքերը տեսնում ենք նաև բնակելի շինությունների պատերին՝ հակիրճ կենսագրականով ու մեկ բառով կամ նշանաբանով՝ «Կյանքս տվի հայրենիքին», «Իմ կյանքը իմ պատերազմն է», «Իմ կյանքը՝ ձեզ» և այլն:

Սգերգությունը՝ բանահյուսական հնագույն ժանր

Լինելով ոչ թե դարերի խորքում մնացած հնագույն բանահյուսական ժանր, այլ մեր օրերում էլ կենցաղավարող և նախկինի պես թաղման ծեսի մաս հանդիսացող ժո-

դովրդական բանավեճ, սգերգը ունի այժմեական մեծ նշանակություն թե՛ բանագիտական ու ազգագրական և թե՛ ժողովրդի հոգեբանության, մտածելակերպի ու աշխարհընկալման մասին պատկերացում կազմելու առումներով [6, էջ 123]:

Սգո երգերի (լացերգեր) ամբողջական նմուշներ.

/Որդու մահվան առիթով ասված երգ/

Մունըս սողցեցիր, բալա ջան, // Կանաչ արտս քաղեցիր,

Դուռ ու երդիկըս փակեցիր, // Տուն ու դուռըս սև քարով շարիր,

Թներըս պոկիր, բըմբըլներս քաշիր, // Թռած թներըս թափիր,

Ես ո՞ր վագեմ, օր քեզի գտնիմ, // Դու նեցուկ էիր ընձի,

Մոխիր կտրիմ, բալա ջան:

/Մոֆյա Սարգսյան Թորոսի, 1883 թ. ծնվել է Ալեքսանդրապոլում /Գյումրի/, ունեցել է 9 զավակ, քաղաքում հայտնի կատակաբան Ծիտրո Ալեքի քույրն է, գիտեր բանաձևային բանահյուսության բազմաթիվ նմուշներ, ժողովրդական բուժամիջոցներ, հեքիմ էր, տատմեր/ [3]:

1. Նշանասիմվոլային վերլուծություն՝ «Մունըս սողցեցիր, կանաչ արտս քաղեցիր» – որդին խորհրդանշվում է որպես ծառ, արտ, կյանքի և բեղմնավորության աղբյուր: Մահը՝ ծառի սողցում է և արտի կործանում: «Դուռ ու երդիկըս սև քարով շարեցիր, տուն ու դուռըս սև քարով շարիր» – սև քարն այստեղ մահվան և գերեզմանաքարի խորհրդանիշն է: Տունը վերածվում է սգի ու հիշատակի տարածության: «Թներըս թափիր, բըմբըլներըս քաշիր» – մարմնի մասնատման պատկերով ցույց է տրվում մայրական կյանքի կորուստը: Որդու մահը ոչ միայն նրա մարմինն է կործանում, այլև կյանքի շարունակականությունը: «Դու նեցուկ էիր ընձի» – որդին ներկայացվում է որպես կյանքի հենասյուն: Այսպիսով, այս լացերգում բնական-կենցաղային սիմվոլիկան ծառայում է անհատի մահվան և համայնքային կյանքի խզման ներկայացմանը:

2. Հոգեբանական վերլուծություն՝ Լացերգը արտահայտում է կոլեկտիվ տրավմատիկ փորձի լեզվային կառուցվածքը. Կորստի վերապրումը բերվում է կրկնվող նախադասություններով («Մունըս սողցեցիր... Կանաչ արտըս քաղեցիր...»), ինչը հուշում է սթրեսային հիշողության մեխանիկական կրկնության մասին: Սա բնորոշ է տրավմայի մշակութային լեզվին, երբ բառերը մնում են պտտվող, կրկնվող: Արտահայտությունները մարմնավորված են սոմատիկ պատկերներով («Թներըս թափիր», «բըմբըլներըս քաշիր»), որոնք ցույց են տալիս տրավմայի ֆիզիկական ազդեցությունը հոգեկանի վրա: Որդու կորուստը հոգեբանական մակարդակում մոր ինքնության փլուզում է:

3. Մշակութային և քաղաքային ինքնության համատեքստ՝ Այսպիսի լացերգերը տարածված էին Գյումրիում /նախկին՝ Ալեքսանդրապոլ/՝ որպես համայնքային սգի ձև: Երբ քաղաքը անցնում էր աղետների միջով (մահ, երկրաշարժ, պատերազմ), այս երգերը կատարում էին հիշողության պահպանման և կոլեկտիվ ինքնության ամրապնդման գործառնություն: Լացերգը ըստ էության դառնում է գերեզմանաքարի մակագրություն. այն նշում է մահվան փաստը, բայց միաժամանակ նաև պահպանում է հիշողությունը՝ դարձնելով այն սերնդից սերունդ փոխանցվող:

Քաղաքային ինքնության համատեքստում նման երգերը ձևավորում էին համայնքային հիշողության ոլորտը, որտեղ յուրաքանչյուր կորուստ ընկալվում էր ոչ թե անհատի, այլ ամբողջ քաղաքի կորստի տեսանկյունից: Տրված նյութը ոչ միայն անհատական ողբ է, այլև տրավմայի մշակութային արտահայտություն, որը սիմվոլիկորեն կապում է մարմինը, տունը և քաղաքը: Այն ցույց է տալիս, թե ինչպես է հիշողությունը ձևավորվում երգի, սգի և սիմվոլների միջոցով. որդու մահը հավասար է ծառը կտրելուն, արտի կորստին, տան սևաբացմանը:

Այսպիսով, լացերգը կարելի է դիտարկել որպես քաղաքային ինքնության և կոլեկտիվ հիշողության անջնջելի մաս, որտեղ Գյումրու մշակույթում տրավմայի խոսքը վերածվում է ոչ միայն սգի, այլև հիշողության պահպանման մեխանիզմի: Վկայաբերենք մի ամբողջական լացերգ ևս, որ գրառել ենք 1988 թ. երկրաշարժից հետո, Գյումրու հին գերեզմանոցում.

Ինչը՞ դ չլամ, ինչը՞ դ չողբամ, բալեք ջան, // Արմատախիլ էղավ բալես, / Ծաղկեցրի, փնջեցի, աչք մեծրցրի բալիս վրա, // Ծառերի պես բացվեիք, բալեք ջան, // Ես ծառս տնկեցի, բարը չտեսա, // Ա՛խ, իմ մատղա՛շ բալեք ջան, / Լավից լավին արժանի բալա, // Զօր ու գիշեր լացի մեջ եմ, բալա, / Գեթ մեկ անգամ ձենդ լսեմ, բալա ջան, // Շունչդ առնեմ, բալա ջան, // Անմե՛ղ, խղճո՛ւկ բալա ջան, // Զո՛ւսպ ու լո՛իկ բալա ջան, // Լուսս քոռնա, բալա ջան, // Էս ի՛նչ վառման կրակ է, բալա ջան, // Մե՛ փոքր լուսամուտը բացեք, // Նես գամ, բալեք ջան, // Իմ կյանքիս կես բալա, // Ո՛ր քարը ճգմեց, ձեռքես խլեց բալեքիս, // Հողերը զլխիդ, ա՛յ մեր, // Դու ինչը՞ դ կապրիս արևի երեսը: // Առանց շորի մտան էս անտեր հողը բալեքս, // Գոնե ձագուկներդ մնային, // Սրտիս վրա պահեի, // Քու տեղդ հոտ քաշեի, բալա: // Էդ էլ չկամեցավ, // Էդ էլ տարավ: // Ոչ մի մեր էս կսկիծը չտեսնի, // Դեմը առնել չի էղնի, // Արուն հոսող վերք է, // Զի փակվի, բալա [3]:

1. Անհատական սուգ - կոլեկտիվ սուգ. Տրված լացերգում մոր խոսքը՝ ուղղված իր երեխային, վերածվում է համայնքի խոսքի. «Արմատախիլ էղավ բալես»-ը կարող է նույնքան վերաբերել թե՛ մի որդեկուրույս մոր, թե՛ ամբողջ ազգի, որ կորցել է զավակներին: Այսպիսով՝ անհատական ողբերն ու պատմությունները պահպանվում են որպես *ազգային տրավմայի վկայություններ*:

2. Մշակութային անավարտություն. Մոր խոսքը՝ «Էդ էլ չկամեցավ, էդ էլ տարավ», ցույց է տալիս անդադար կորստի զգացողությունը: Ցեղասպանության բանահյուսության մեջ այս «անվերջ կորուստ»-ի մոտիվը արտահայտվում է՝ «Տները սև քար դարձան», «Ձագերը կոտորվեցին»: Այսպիսով, մշակութային անավարտությունը դառնում է ոչ միայն ընտանեկան, այլև ազգային մասշտաբի:

3. Նշանասիմվոլներ. Ծառ, արմատ, հող, լույս – սգերգի հիմնական խորհրդանիշներն են: Նույնը կարելի է տեսնել ազգային ողբերում՝ «արմատախիլ ժողովուրդ», «լույսը մարեց մեր օջախի», «հողը կուլ տվեց»: Այս կերպ տեքստերի սիմվոլիկան կրկնվում է՝ հաստատելով, որ մշակութային հիշողությունը պահպանում է նույն պատկերային դաշտը՝ անհատականից ընդհուպ կոլեկտիվ:

4. Տրավմա և հիշողություն. Մոր տրավման չի փակվում, վերքը մշտապես բաց է («Արուն հոսող վերք է, չի փակվի»): Ազգային սգերգերում նույնն է. ցավը ներկայացվում

է որպէս պահպանվող բաց վերք, որը չի ապաքինվում, այլ փոխանցվում է սերունդներին: Սա հենց հիշողության մեխանիզմն է. չապաքինված վերքը դառնում է հիշողության կրող: Այսպիսով՝ անհատի ողբերգությունը, ինչպէս տրված սգերգում, և ազգային մեծ ողբերգությունները ունեն նույն կառուցվածքը: Երկուսն էլ հիմնված են տրավմայի բաց վերքի, անավարտության, և խորհրդանշական կրկնվող պատկերների վրա:

Հետադետյան լացերգեր – 1988 թ. երկրաշարժից հետո դրանց թեմատիկան ընդլայնվեց ընդհուպ զանգվածային կորուստների արձանագրում: Օրինակներ՝ «Երկրաշարժը տունս քանդեց»: «Ա՛խ, երկրաշարժ, ի՞նչ արեցիր»: «Ասա՛, ո՛վ Աստված, եթե խիղճ ունես, ի՞նչ ճակատագիր դու տվեցիր մեզ» [3]:

Տապանագրային արվեստում հատկապէս երեխաների մահվան թեման արտահայտված է բացառիկ էմոցիոնալ ուժով, ինչպէս օրինակ՝ «Թոաք, հրեշտակներ, ձեր տնից կարոտ, ինձ անհույս թողեցիք, ցմահ եմ լալու...»: «Դու հող ես դառնում, ուրեմն կյանքս ես հողին կտամ...» [7, էջ 162]:

Ընդհանրապէս հայ կնոջ օրորոցայինից անբաժան է եղել սրտակեղեք ողբի մոտիվը: Նա, միջավայրին անհաղորդ և ներամփոփված, իր մանկան սնարի մոտ է լացել իր ճակատագրի դառնությունները, վշտերն ու հոգսերը: Մանավանդ որդեկորույս ու այրի կնոջ՝ օրորոցի մոտ թե մի այլ առիթով ասված երգը միշտ ողբ է ու լալիք. «Միրտս բլե՛կուլամ էրուն, /Անխեր թալին իմ ձագերուն, /Անբուն թողին իմ ձագերուն, Միրտս բլե՛կուլամ էրուն...» [6, էջ 204]: Այս տեքստերը փաստում են, որ լացերգերը գործում են որպէս ձայնավորված (վոկալիզացված) էպիտաֆիաներ, որոնց սեմանտիկ դաշտը համընկնում է տապանագրերին: Ամեն դեպքում լացերգերի ժառանգությունը Գյումրիում գործում է որպէս կատարսիսի և համայնքային համերաշխության միջոց, և այստեղ էական դեր ունի կրոնական հղումների և անցորդին ուղղված խոսքի պահպանությունը:

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Գյումրու տապանագրային և բանավոր սգերգային ժառանգությունը արտացոլում է ոչ միայն հետադետյան մշակութային հիշողության համընդհանուր օրինաչափությունները, այլև յուրահատուկ տեղային մոդել, որը կարելի է բնորոշել որպէս *երկակի հիշողության համակարգ*: Այս համակարգը ձևավորվում է նյութական և ոչ նյութական հիշողության փոխլրացնող փոխազդեցությամբ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Այսպիսով՝ հետադետյան շրջանում ձևավորված գերեզմանոցները հանդես են գալիս ոչ միայն որպէս անձնական և հավաքական վշտի վայրեր, այլև որպէս *մշակութային արխիվներ*, որոնք պահպանել և վերարտադրել են աղետի մասին հիշողության բազմաշերտ պատմությունները: Գյումրու տապանագրային և սգերգերի ժառանգությունը ձևավորում են հետադետյան հիշողության յուրօրինակ համակարգ, որտեղ տրավմայի լեզուն անցնում է անհատական կորստից դեպի հավաքական փորձառություն: Հիշողության կրիչները հանդես են գալիս երկակի՝ նյութական և ոչ նյութական ձևերով: Քաղաքային ինքնությունն ամրապնդվում է ոչ միայն անցյալի վաւերացման, այլև նրա սիմվոլիկ վերակառուցման միջոցով:

Այսպիսով, գերեզմանոցների ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս նորովի հասկանալ 1988 թվականի մեծ աղետի մշակութային ժառանգությունը և բացահայտել

հավաքական հիշողության ձևավորման բարդ, բազմաշերտ գործընթացները: Այն միա-
ժամանակ կարևոր քայլ է հետադեպի ինքնության և մշակութային հարմարվողակա-
նության համապարփակ ուսումնասիրության ճանապարհին: Գյումրու գերեզմանոցնե-
րը 1988 թվականի երկրաշարժից հետո վերածվել են յուրահատուկ մշակութային տա-
րածքների, որոնք պահպանել և փոխանցել են քաղաքի հավաքական հիշողության
առանցքային տարրերը:

Հետազոտությունը հաստատում է, որ գերեզմանոցները դառնում են ակտիվ
մշակութային հարթակներ, որտեղ խաչվում են անցյալի վկայությունները, ներկայի սիմ-
վոլները և ապագայի նարատիվները: Այդպիսով, դրանք հանդես են գալիս որպես հի-
շողության կենդանի արխիվներ:

Հ ա վ ե լ վ ա ծ

Գյումրու հին գերեզմանատների ավանդական տապանագրերի ընտրանի

*Աղբյուր՝ «Դիվան հայ վիմագրության, պրակ X. Շիրակի մարզ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,
Երևան, 2017:*

Տապանագիր 1

Տեղանքը՝ Գյումրի, Նորաշեն հին գերեզմանատուն

Թվագրությունը՝ Թուին Հայոց ՌՃԽԳ (1851 թ.)

Տեքստը. «Յիշատակ է ծառայի Աստուծոյ Հովսէփի, որ հանգաւ ի թուին Հայոց ՌՃԽԳ, Աստուած
ողորմեաց»

Հղում՝ [4, էջ 472]

Տապանագիր 2

Տեղանքը՝ Գյումրի, ս. Ամենափրկիչի հարակից գերեզմանատուն

Թվագրությունը՝ Թուին Հայոց ՌՃՆԱ (1891 թ.)

Տեքստը. «Յիշատակ է Մարիամին և որդւոյն Մինասի, թող լոյս ի հանգիստս հոգւոց իւրոց»

Հղում՝ [4, էջ 311]

Տապանագիր 3

Տեղանքը՝ Գյումրի, Կումայրի պատմական գերեզմանատուն

Թվագրությունը՝ 1863 թ.

Տեքստը. «Թուին Հայոց ՌՃԿԲ, այստեղ հանգաւ վարպետ Կարապետը, շինարարն այս սուրբ
վայրի»

Միավորիկա. խաչ, գեղարվեստական զարդաքանդակներ, շինարարական գործիքների
պատկերներ

Հղում՝ [4, էջ 352]

Տապանագիր 4

Տեղանքը՝ Գյումրի, Կումայրի

Թվագրությունը՝ 1874 թ.

Տեքստը. «Յիշատակ է Արշակի, որ ի հանգիստ ի քնաց զաւակաց և ծնողաց յաղթաւ, Տէ՛ր յիշեա՛
զհոգիս»

Հղում՝ [4, էջ 405]

Տապանագիր 5

Տեղանքը՝ Գյումրի, Նորաշեն

Թվագրությունը՝ 1838 թ.

Տեքստը. «Թուին Հայոց ՌՃԺԸ, հանգաւ ծառան Աստուծոյ Ստեփանոս, թող ի լոյս եւ ի խաղաղութիւն»

Հղում՝ [4, էջ 443]

Տապանագիր 6

Տեղանքը՝ Գյումրի, հին գերեզմանատուն

Թվագրությունը՝ 1902 թ.

Տեքստը. «Աստուած ողորմեաց զԾովինարին, կինն բարեպաշտ եւ մայրն գութալի, թող յիշատակն անմահ լինի»

Հղում՝ [4, էջ 472]

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աբեղյան Մ.** *Երկեր*, Է հատոր: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975: 603 էջ:
2. **Գրիգորյան Ռ.** *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, Հ. 14: Երևան: Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1983: 263 էջ:
3. *Դաշտային բանահյուսական նյութեր*. Կ. Սահակյանի անձնական արխիվ:
4. *Դիվան հայ վիմագրության: Պրակ X: Շիրակի մարզ: Կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան:* Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017: 725 էջ:
5. **Խաչատրյան Պ.** *Հայ միջնադարյան պատմական ողբերգ.* Երևան, 1969: 344 էջ:
6. **Հարությունյան Ե.** *Հայ ժողովրդական սգո երգեր // Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ, հ. 24:* Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007: էջ 123:
7. **Հովհաննիսյան Ռ., Սահակյան Կ.** *Գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրությունների շուրջ*, // ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, Գյումրի: «Գիտություն» հրատ., 2000: 161-165 էջեր:
8. **Assmann Jan.** *Cultural Memory and Early Civilization.* Cambridge: Cambridge University Press, 2018. 344 p.
9. **Alexander J.** *Trauma: A Social Theory.* Cambridge: Polity Press, 2018. 256 p.
10. **Boret Sebastien, and Aiko Shibayama.** 2017. *Living with Disaster: Social Dimensions of Earthquake Disasters in Japan.* Kyoto: Kyoto University Press. 1–12pp.
11. *On Collective Memory.* Chicago: University of Chicago Press, 1992. 254 p.
12. **Turner V.** *The Ritual Process: Structure and Anti-Structure.* Chicago: Aldine Publishing, 1969. 213 p.

References

1. **Abegyan, M.** *Collected Works, Vol. 5 [Yerker, h. 5].* Yerevan: Armenian SSR Academy of Sciences Press, 1975. 603 p. (in Armenian)
2. **Grigoryan, R.** *Armenian Ethnography and Folklore, Vol. 14 [Hay azgagrutyun yev banahyusutyun, h. 14].* Yerevan: Armenian SSR Academy of Sciences Press, 1983. 263 p. (in Armenian)
3. **Sahakyan, K.** *Field Folklore Materials [Dashtayin banahyusakan nyuter].* Personal Archive, 2021–2024. (in Armenian)
4. *Divan of Armenian Epigraphy, Vol. X: Shirak Region [Divan hay vimagrut'yan, prak X. Shiraki marz].* Comp. by S. G. Barkhudaryan. Yerevan: NAS RA “Gitut'yun” Publ., 2017. 725 p. (in Armenian)
5. **Khachatryan, P.** *Medieval Armenian Historical Laments [Hay mijndaryan patmakan voghbery].* Yerevan: Armenian SSR Academy of Sciences Press, 1969. 344 p. (in Armenian)

6. **Harutyunyan, Ye.** *Armenian Folk Funeral Songs* [Hay zhoghovrdakan sgo yergery] // Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, Vol. 24 [*Hay azgagrutyun yev banahyusutyun: Nyuter yev usumnasirutyunner, h. 24*]. Yerevan: NAS RA “Gitut’yun” Publ., 2007. 123p. (in Armenian)
7. **Hovhannisyani, R., & Sahakyan, K.** On the Artistic Inscriptions of Tombstones [*Gerezmanakareri geharts’vestakan makagrutyunneri shrj*] // Scientific Papers of the Shirak Centre of NAS RA, Vol. 3. Gyumri: “Gitut’yun” Publ., 2000. 161–165pp. (in Armenian)
8. - 12. / տե՛ս հայերեն գրականության ցանկում՝ in English/

Ընդունվել է / Received on: **20. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **14. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Կարինե Արամի ՍԱՀԱԿՅԱՆ՝ հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ,
ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող,
ԾՊՀ Հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ sahakyanani@mail.ru / ORCID.org. 0009-0008-6566-0911

Karine Aram SAHAKYAN: PhD, associate professor,
Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS,
Lecturer at the Chair of Psychology and Sociology, SUSH, Gyumri, RA,
e-mail: sahakyanani@mail.ru / ORCID.org. 0009-0008-6566-0911

Ռոզա Պողոսի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ԳԱԱ Ծիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,
Էլ. հասցե՝ vard-rosa@mail.ru / ORCID.org 0009-0009-7553-7797

Roza Pogos HOVHANNISYAN: Researcher at Shirak Center for
Armenological Studies of NAS, Gyumri, RA,
e-mail: vard-rosa@mail.ru / ORCID.org. 0009-0009-7553-7797

MANIFESTATIONS OF ATU 707 TYPE IN THE TALES OF MAGIC OF KARS-SHIRAK REGION¹

Marine H. Khemchyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: Tales of magic are prominent in the folklore heritage of the Kars-Shirak region. Through the analysis of basic motifs, this study examines the tales of magic of the region that correspond to the ATU 707 type titled "The Three Golden Children" according to Hans-Jörg Uther's international classification. The main motifs include the birth of the heroes (prince), their removal from the palace with the intention of destroying them, assigning impossible tasks to the hero(es), the revelation of truth, and the restoration of the rights of the heroes and their mother. **Methods and Materials:** This study is based on the tales of magic "Yashifidan and Chnashkharik" from Kars, "The Tale of Golden-Haired Boy", "The Tale of Bildiliki Marjan", "Hazaran Blbul" from Shirak, as well as the non-published "The Tale of Zulumkyar King," which are published in the collections "Kars: The Folklore Tradition of Armenians" and "Shirak: The Folklore Tradition of Armenians". During the research, historical-comparative and historical-geographical methods used in folklore studies were employed. **Analysis:** The selected tales were subjected to detailed study, comparing them with similar plots from other regions of Armenia as well as international analogues. Their typological, structural, plot-related, motivic, and functional characteristics were identified. **Results:** The study shows that the examined tales have more similarities with tales from other regions of Armenia as well as with neighboring peoples' Kurdish and Turkish tales, which are conditioned by regional interpenetrations of folklore material.

Key words: *tale of magic, plot, type, motif, variant, region, hero, function, international classification.*

Citation: *Khemchyan M., Manifestations of ATU 707 Type in the Tales of Magic of Kars-Shirak Region, // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. Vol. 2(28): 124-132 pp.*

DOI: 10.52971/18294316-2025.28.2-124

¹ The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-6B114)

ATU 707 ՏԻՊԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՍ-ՇԻՐԱԿ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ²

Մարինե Հ. Խենյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Կարս-Շիրակ տարածաշրջանի բանահյուսական ժառանգության մեջ զգալի են հրաշապատում հեքիաթները: Պարզագույն մոտիվների կտրվածքով քննության են առնվում տարածաշրջանի այն հրաշապատում հեքիաթները, որոնք համապատասխանում են Հանս-Յորգ Ութերի միջազգային դասակարգմամբ «Երեք ոսկեղեն երեխաներ» խորագիրը կրող ATU 707 տիպին: Այդ հիմնական մոտիվներից են հերոսների (թագա-ժառանգի) ծնունդը, ոչնչացնելու նպատակով նրանց հեռացումը արքունիքից, հերոսին (հերոսներին) անիրագործելի խնդիրներ հանձնարարելը, ճշմարտության բացահայտումը, հերոսների և նրանց մոր իրավունքների վերականգնումը: Մեթոդներ և նյութեր. Սույն ուսումնասիրության համար հիմք են ծառայել «Կարս. հայոց բանահյուսական մշակույթը» և «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուներում տպագրված Կարսի «Յաշիֆիդան և Չնաշխարիկ», Շիրակի «Օսկեքյանքյուլ տըղի հեքյաթը», «Բիլդիլիկի Մառջանի հեկյաթը», «Հազարան բլբուլ», ինչպես նաև անտիպ «Զուլումքյար թաքավորի հեքյաթը» հրաշապատում հեքիաթները: Հետազոտության ժամանակ օգտագործվել է բանագիտության մեջ կիրառվող պատմահամեմատական և պատմաշխարհագրական մեթոդները: Վերլուծություն. Ընտրված հեքիաթները ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության՝ համեմատելով Հայաստանի այլ տարածաշրջանների, ինչպես նաև միջազգային նույնատիպ սյուժեների հետ: Վեր են հանվել դրանց տիպաբանական, կառուցվածքային, սյուժետային, մոտիվային, գործառնային առանձնահատկությունները: Արդյունքներ. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննության առնված հեքիաթներն ավելի շատ եզրեր ունեն ինչպես Հայաստանի այլ տարածաշրջանների, այնպես էլ հարևան ժողովուրդների՝ քրդական, թուրքական հեքիաթների հետ, որոնք պայմանավորված են բանահյուսական նյութի տարածաշրջանային փոխներթափանցումներով:

Բանալի բառեր՝ *հրաշապատում հեքիաթ, սյուժե, տիպ, մոտիվ, տարբերակ, տարածաշրջան, հերոս, գործառնային, միջազգային դասակարգում:*

Ինչպես հղել՝ Խենյան Մ., ATU 707 տիպի դրսևորումները Կարս-Շիրակ տարածաշրջանի հրաշապատում հեքիաթներում, // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28): 124-132 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-124

² Չեկուցումը կարդացվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողովում:
Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 25RG-6B114 ծածկագրով նախագծի շրջանակում:

INTRODUCTION: The Kars province formed in the late 19th century (1877) bordered the Yerevan province from the east, particularly the Shirak region. The neighboring Kars and Shirak inhabitants mainly spoke in dialects specific to their regions, which were based on the Karno dialect. In the 1950s-60s, folklore material was recorded mainly in the Shirak province from native Shirak inhabitants and Kars immigrants who had migrated from the Kars region. There are amateur folklore collectors (Anushavan Gevorgyan, Hrach Mkrtchyan, Yeghishe Khachatryan, Parouyr Barseghyan and others) who equally recorded materials from both Kars and Shirak inhabitants, noting the origin of the narrators.

Tales of magic are prominent in the folklore heritage of the Kars-Shirak region. Through the analysis of basic motifs, this study examines the tales of magic of the region that correspond to the ATU 707 type titled "The Three Golden Children" according to Hans-Jörg Uther's international classification. The main motifs include the birth of the heroes (prince), their removal from the palace with the intention of destroying them, assigning impossible tasks to the hero(es), the revelation of truth, and the restoration of the rights of the heroes and their mother. These motifs are presented in the international classification with the following pattern: "Three girls boast that if they marry the king they will have triplets with golden hair, a chain around the neck, and a star on the forehead. The king overhears the youngest and marries her. When she gives birth to three marvelous children the elder sisters substitute animals (dogs). She is imprisoned (banished), her children are exposed but are rescued by a miller (fisherman). When they have grown up, the eldest son sets out to find his father, to seek a speaking bird, a singing tree, or the water of life. He and his brother both fail and are transformed to marble columns. The sister, with the help of an old woman, succeeds in rescuing them and in bringing back the magic objects. The attention of the king is drawn to the children and the magic objects. The bird of truth reveals the whole story. The children and their mother are restored; the sisters are punished" [20, pp. 381-382].

The following tales of magic have been selected for study: "Yashifidan and Chnashkharik"³ from Kars, "The Tale of Golden-Haired Boy"⁴, "The Tale of Bildiliki Marjan"⁵, "Hazaran Blbul" from Shirak⁶, as well as the non-published "The Tale of Zulumkyar King."⁷

***Tales of Magic of the Kars-Shirak Region and Other Regions of Armenia
in the Context of ATU 707***

It is important to distinguish the main, introductory motif of ATU 707, which is the birth of the crown prince. In Armenian folk tales of the same type, although the prince's mother is of common origin, the newborn is the legitimate heir to the throne, and his mother acquires the full right of a queen with the child's birth. The newborn and his mother immediately find themselves at the center of intrigues. The evil sisters, to preserve their place in the palace, slander their sister and

³ Recorded by collector-storyteller Yeghishe Khachatryan in July 1974 in Leninakan. He heard the tale in his childhood years from his father in Chala village, Kars district.

⁴ Recorded by collector Hrach Mkrtchyan in December 1973 in Leninakan from storyteller Suren Sargsyan. Storyteller Suren Hakob Sargsyan was born in 1906 in Chrakhl (now Jrarat) village, Akhurian district, in a farmer's family.

⁵ Recorded by collector Herik Hartenyan in October 1969 in Horom village, Artik district. The tale was once told by his father, ashugh Tsaghkali (Melikset Hartenyan). Melikset Hartenyan was born in 1870 in Horom village, Artik district.

⁶ Recorded by collector Anushavan Gevorgyan on November 29, 1975 in Yerevan, from storyteller Abraham Ghukasyan.

⁷ Recorded by collector Smbat Petrosi Khachatryan in Leninakan in November 1959, the storyteller is unknown.

remove the newborns from the palace. It is also important to emphasize that the golden hair, fingers, golden scepter, chain around the neck, or star on the forehead of the princes are royal symbols, and these children were born to be kings.

In this article, we examine the variant of the crown prince's origin, referring to the Armenian manifestations of ATU 707. Moreover, through comparative analysis of similar tales from different regions of Armenia (Ayrarat, Artsakh, Vaspurakan, Tavush, Bulanykh, Mush, Taron, Kharberd, Kars, Shirak, Syunik, Lori, Gharadagh), tales have been selected in which the hero is sent to accomplish impossible tasks with the intention of destroying him, and then the mother who gave birth to golden-haired children and was dishonored as a result of her sisters' intrigue restores her rights. Such tales include "Hazaran Bilbul" from Ayrarat [4, pp. 17-36], "Hazari Blbul" from Tavush [3, pp. 30-33], "The Kadjanc King" from Syunik [5, pp. 398-410], "Dunya Guzal" from Mush [6, pp. 138-152], "The Tale of Pilpul Hazaru" from Taron [7, pp. 147-153], "Golden-Haired Twins" from Kharberd [17, pp. 245-253], "Hazaran Blbul" from Shirak [9, pp. 20-24], "The Tale of Bildiliki Marjan" [9, pp. 39-55], "The Tale of Golden-Haired Boy" [9, pp. 24-28], "The Vskeyankyul dwuBoy" from Gharadagh [8, pp. 25-34], and others. In these tales, the hero(es), driven by envy and evil forces (the hero's maternal aunts and midwife), journey after miraculous objects, a miraculous horse, a bride, and most importantly, the Hazaran Blbul. Through the speaking, wise Hazaran Blbul (sometimes through the bride), the intrigue is revealed, the evildoers are punished, and the dishonored and imprisoned mother restores her rights as queen.

In the similar tales of the Kars-Shirak region, the plot develops according to the following scheme: promises of sisters from common people → marriage of the king or crown prince with the third or youngest → birth of golden-haired (golden-fingered, with golden scepter, golden embroidery hoop, nacre teeth) twins → replacement of children with animal cubs (dog, cat) or objects (millstone, stump, wood) → removal of children from the palace through the intrigue of maternal aunts (old wit or midwife) → finding and raising of children by a miller (fisherman, baker, hermit, merchant) → discovery of who the children are by the maternal aunts → assigning impossible tasks to the prince with the intention of destroying him → appearance of an advisor during the fulfillment of tasks → revelation of truth through the found girl or Hazaran Blbul → restoration of the rights of children and their mother → punishment of evildoers.

In the non-published tale "The Tale of Zulumkyar King" from Shirak [1, pp. FFIII: 4157.0-4228.00], there are episodes that are absent in similar tales of magic from both the Kars-Shirak region and other regions of Armenia, as well as from other peoples. If in all other tales the king or prince hears the conversation of three sisters, in this non-published tale the king accidentally hears the promises of three sisters while wandering to find those who robbed his treasury. In this tale, the unmarried girls are 150, 100, and 50 years old. From this fact, we can assume that these girls have otherworldly origins and appeared on the king's path not accidentally or by fate, but with a specific mission. The 150-year-old and 100-year-old sisters do not fulfill their promises (to prepare a giant tent and weave a carpet), so the king makes them a swineherd and chicken keeper. The youngest, 50-year-old sister gives birth to a golden-haired and golden-fingered boy and girl [1, pp. FFIII: 4163-4164]. Another difference is that the hero, at the command of the sorceress, obtains a bird that speaks 72 languages. The sorceress also sends the boy after an otherworldly beauty named Yamrchangli. Yamrchangli turns the hero to stone. The sister goes after her brother, and Yamrchangli revives the boy and all those previously turned to stone with her magical pipe. Yamrchangli reveals the whole truth. This tale has another episode that is absent in similar tales. Yamrchangli makes a tent and a carpet with her magical pipe, so that the king's entire people enter that tent and sit on that carpet [1, pp. FFIII: 4224-4225]. That is, the two sisters did not fulfill their promise, considering it unrealizable, but Yamrchangli showed that it was possible to accomplish it.

It is necessary to address in more detail the tale "Golden-Haired Twins" from Kharberd⁸, as it differs from Armenian tales of the same type through the uniqueness of its motifs and episodes and plot developments.

Unlike other tales of the same type, the three sisters are princesses. The king hears his daughters' conversation, marries the eldest daughter to a prince, the middle one to a rich merchant, and the youngest to a man of middle standing. Only the youngest sister fulfills her promise, giving birth to golden-haired twins—a boy and a girl, each with a golden scepter in their hand (symbol of being heir to the throne), and every morning a purse of gold on the pillow. The other sisters do not even try to weave the promised carpet and bake bread, reasoning that it does not befit them as princesses to do work. The envious sisters, through a midwife, replace the twins with two puppies, and throw the children into the river in a basket. If in other tales the children are immediately found (by a fisherman, miller, hermit, wealthy man-like giant), in this tale the children in the basket caught in reeds are fed by a goat for several days until the goat owner realizes that his goat is giving less milk than usual. After eight years of accepting the old man as their father, the children realize that he is not their father and set out to search for their parents. The envious sisters see the golden-haired boy with a golden scepter in the market and realize that the twins have not been destroyed. They first send the golden-haired hero after Hazaran Blbul, then after a girl who understands the bird's language (translator), and finally after Hazaran Blbul's mistress, Tazara. One of the peculiarities of this tale is that if in other tales the hero's advisors are old people (except for the Ayrarat variant, where the advisor was a horse inherited from the father), here initially the advisor is the hero's horse, then Hazaran Blbul's mistress. Through Hazaran Blbul and its mistress, the children are able to reveal the truth and restore their own and their mother's rights.

In the plot of this folktale, archaic episodes have been preserved that give grounds to believe that it has retained one of the manifestations of the matriarchy institution - the issues of maternal lineage priority in society. In the folktale, the heir's mother is a princess, while the father is a representative of the middle class, therefore the child's rights are determined through the maternal line.

The Kars tale "Yashifidan and Chnashkharik" differs in certain episodes from similar folktales. Unlike other folktales, the golden-haired and golden-nailed twins born at a specific time period are placed separately in boxes and thrown from the window into the river. The children are found and raised by a miller. While in other folktales of this type the hero travels several times in search of magical objects (Hazaran Blbul, fiery horse, immortality apple, magical tree, magical millstone, etc.), in this tale the Witch sends Yashifidan to bring Chnashkharik's embroidery hoop (weaving frame), convinced that he too will not return. While in a series of similar folktales the hero turns to stone and is revived through his sister's intervention, in this tale Chnashkharik does not allow Yashifidan to return. The hero's horse returns home, the sister understands that her brother is in trials and sets off to follow him. In this tale, the deception is revealed through Chnashkharik, and the twins and their mother restore their rights.

We have presented the above-mentioned folktales (from Shirak, Kars, and Kharberd) in detail because they differ in certain motifs not only from Armenian folk tales but also from similar tales of other peoples.

Among the examined Armenian folk tales, twins are born in nine of them, three children in one (Taron's "The Tale of Pilpul Hazaru"), and a golden-haired boy in another (Gharadagh's

⁸ The tale was recorded by Susie Hugasyan in the 1950s in Detroit from her grandmother, Mariam Serabyan, a storyteller from Kharberd. Mariam Serabyan was born in 1875 in Kharberd (Kharput) and died in 1953 in Detroit [17, p. 537].

"The Golden-Haired Boy"). In all folktales, the golden newborns are replaced with animal cubs and removed from the palace for destruction (thrown into rivers or seas in boxes or baskets, left in forests or ravines). By God's mercy, the children end up with a miller (in most folktales), and in some tales with a rich man, hermit, lame devil, merchant, fisherman, or solitary old woman.

Due to circumstances, the hero's envious aunts learn that the children are alive and try to destroy the legitimate heir through a midwife or old witch by giving impossible tasks. The impossible tasks in the examined folktales are diverse, and to fulfill these tasks, the hero's advisors demand bringing magical objects (immortal apple, magical tree, special melon, elephant task, master's tools), Hazaran Blbul (Tuti ghush), fiery horse, and finally in some folktales the mistress of the Hazaran Blbul (Bildiliki Marjan, Tanzara Khanum, Dili-dili Marjan, etc.), who reveals the deception. The dishonored or imprisoned queen restores her rights in various ways, while the evildoers are subjected to capital punishment.

Tales of Magic of Other Peoples in the ATU 707 Type Context

Stith Thompson and later Hans-Jörg Uther consider that the earliest literary manifestations of this type of folktale are the third tale of the fourth night in Italian novelist Gianfrancesco Straparola's "Pleasant Nights" (1550), as well as the earlier created Arabian "Thousand and One Nights," which entered Europe through Antoine Galland's French translation (late 17th-early 18th century).

Unlike the ATU 707 type framework, according to which all three sisters boast that they will have golden-haired triplets, in both Straparola's tale and the Arabian tale, and Armenian folk tales, only the youngest of the three sisters promises that she will have golden-haired children.

To emphasize the correspondence with the international type of folktales, let us briefly present Straparola's tale: The youngest of three sisters promises to have two boys and one girl whose hair is made of gold reaching to their shoulders, with necklaces on their necks and stars on their foreheads. At the time of the children's birth, the king was absent. Taking advantage of this circumstance, the envious sisters, at the demand of the king's mother (the king's mother as an evildoer occurs only in Straparola's version), replace the children with puppies born on the same day that had stars on their foreheads, while the midwife, placing the children in a box, throws them into the river. The children's mother is sent to the laundry house, where she lived in unspeakable conditions. By God's care, the miller takes the box from the river and keeps the children. When the children come of age, they understand that they are not the miller's children and leave home. During a hunt, the king sees the children and invites them to the palace for dinner. As a result, the children's grandmother and envious aunts understand that the children did not die and try to destroy them through the grandmother by giving impossible tasks. The brothers are sent after dancing water, singing apple, and bright green talking bird. The white dove helps the brothers with advice. After numerous trials, the children obtain the dancing water, singing apple, and talking bird, who reveals the truth. The king returns his wife from the laundry house to the palace, while the evildoers are burned at the stake.

There is no doubt that this tale by Straparola has a folklore basis, like "Panchatantra", "Thousand and One Nights", or "Decameron." It would be wrong to consider that Italo Calvino's tale "The Beautiful Green Bird" [18, pp. 315-323], recorded and developed in Florence in the 1950s, is a retelling of Straparola's tale. These two tales, despite similarities (dancing water, talking wise green bird), differ greatly from each other. In Calvino's tale, the children are not triplets. They are born separately (the children in Taron's "The Tale of Pilpul Hazaru" are also born separately). The first boy is replaced with a monkey cub, the second boy with a puppy, the third - the girl - with a tiger cub. After the third child's birth, the king imprisons his wife in a dungeon. The children are found by a sailor. The children sent to trials are helped with advice by a hermit (in Straparola's - a white dove). The sought

objects are dancing water, musical tree, and talking wise green bird, through which the deception is revealed. Comparing these two Italian tales, we see that Calvino's version also has connections with "Thousand and One Nights", [19, pp. 391-424], particularly the children's birth motif, which probably penetrated Florence through Antoine Galland's translation.

The Lithuanian folk tale "The Deceived King" [11, pp. 129-133] has connections in the children's birth motif with both Straparola's and Taron's "The Tale of Pilpul Hazaru" similar tales of magic. In all three tales, the king marries the youngest sister, the children are born in turn - one per year. While in the Italian and Armenian tales the children are born with royal symbols (necklaces on necks, stars on foreheads, and golden scepters), in the Lithuanian tale the children - two boys and a girl - do not have such symbols. In the Lithuanian tale, the envious sisters send the brothers through a hermit after a talking bird, singing and dancing tree, and yellow water. The boys do not follow the old man's advice and turn to stone. The sister sets out to search for her brothers. Following the old man's advice, she revives her brothers with immortal water and together with the talking bird, singing and dancing tree, and yellow water, they return to the estate. The talking bird reveals the truth, the children and mother restore their rights.

We will not address the Russian similar folktale series "Up to the knees - gold, up to the elbows - silver" [10, pp. 296-307] because these tales are classified under the SUS 707 type titled "Miracle Children" [13, pp.177-178] and differ significantly from ATU 707.

Among the neighboring peoples' tales of magic, the Kurdish [12, pp.71-80] "Golden Curls"⁹ and Turkish [16, pp. 77-84] "Jan-Ghushu, Chor-Ghushu"¹⁰ tales are noteworthy. In both tales, the opening motif is the same: the padishah orders that no one in his city light a lamp after dark. The command's execution is violated by three weaver girls. The padishah, hearing the girls' conversation (promises in case of marrying the king), takes all three as wives. Then the folktales' plot developments change. Unlike Uther's framework, in the Kurdish tale the miracle newborns removed from the palace for destruction are fed by a wild goat until they can independently care for their livelihood, while in the Turkish tale, the box with children is found by a dervish, and the children are fed by a mother deer sent by God, which came down from the mountains. The feeding of newborns by goats or deer has mythological roots. In ancient Greek mythology, Zeus's mother Rhea, to save the child from Kronos, hides him in a cave on Mount Ida in Crete, where he is fed by the goat Amalthea. Later, Zeus uses the goat's accidentally broken horn (horn of plenty) to fulfill his wishes [15 pp. 65]. This motif is also present in the Kharberd tale "The Golden-Haired Twins."

In both tales, due to circumstances, the children's envious aunts understand that they are alive and undertake to give impossible tasks to destroy them. Noteworthy is the hero's transformation to stone through the magical influence of speech, which is present in both Kurdish and Turkish tales, as well as in one of the Shirak tales ("The Tale of Bildiliki Marjan"). These words are "chor"¹¹ and "jan"¹². In the Turkish tale, the importance of these words is expressed even in the tale's title - "Jan-Ghushu, Chor-Ghushu" [16, p. 77]. Incidentally, the ghush (bird) is one of the sought objects in this type of tales of magic (Hazaran Blbul [9, p. 22], Tuti Ghush [9, p. 46-47], Green Bird [14, p. 140], etc.). In all three tales, the hero turns to stone with the word "chor" and is revived with the word "jan."

⁹ Recorded in 1976 from storyteller Osee Shabab in Nor Geghi village, Nairi district.

¹⁰ Recorded by Turkish folklorist P. Boratav from his mother, who in her youth heard the tale in the Armenian-inhabited town of Kilis in Gaziantep (Ayntap) vilayet. According to Boratav's notes, the tale was widespread in Erzurum, Sivas, Sarikamish, Kars, and other settlements.

¹¹ An expression of fierce reproach - a response to some inquiry or action.

¹² A dialectal word meaning "my dear, my soul."

Hans-Jörg Uther has provided about a hundred variants of the ATU 707 type. Within the framework of our article, we have selected several interesting manifestations of this type from both Armenian and other peoples.

CONCLUSION: The study of five folktales from the Kars-Shirak region has shown that in the context of Hans-Jörg Uther's international classification ATU 707 type titled "Three Golden Children," most of the motifs of the examined folktales correspond to their framework. Nevertheless, they have certain distinctive differences in motifs, heroes, anti-heroes, advisors, sought magical objects, and plot developments, which are conditioned by the geographical position of the regions, climatic and socio-economic conditions, and other factors.

The detailed study of the tales of magic of the Kars-Shirak region has shown that they have more connections with the folktales of other regions of Armenia and neighboring peoples - Kurdish, Turkish tales, which are consequences of regional material interpenetrations.

L i t e r a t u r e

1. **Խաչատրյան Ս.** Շիրակի հեքիաթները, ձեռագիր հավաքածու, 1959, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ – բանահյուսություն (ՀԱԻԱԲ), FFIII: 4157,0-4228,00 էջեր:
2. **Կարս. հայոց բանահյուսական մշակույթը**, կազմ.՝ Ս. Հարությունյան, Ս. Վարդանյան, Է. Խեմյան, Լ. Ղեքյան, Մ. Խեմյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 750 էջ:
3. **Հայ ազգագրություն և բանահյուսություն**, հ. 25, *Իջևան (Չորտիոր)*, կազմ.՝ Է. Խեմյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 490 էջ:
4. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. 3, *Արարատ*, կազմ.՝ Ա. Նազինյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, 672 էջ:
5. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. 7, *Արցախ-Սյունիք*, կազմ.՝ Ա. Նազինյան, Մ. Առաքելյան Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1979, 768 էջ:
6. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. 12, *Տոբուքերան-Մուշ*, կազմ.՝ Վ. Սվազյան Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 651 էջ:
7. **Հայ ժողովրդական հեքիաթներ**, հ. 13, *Մուշ-Տարոն*, կազմ.՝ Ա. Ղազիյան Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 616 էջ:
8. **Հովսեփյան Հ.** *Ղարաղաղի հայերը. բանահյուսություն*, կազմ.՝ Ս. Վարդանյան, Է. Խեմյան, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 664 էջ:
9. **Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը**, կազմ.՝ Մ. Խեմյան, Է. Խեմյան, Լ. Ղեքյան, Հ. Մատիկյան, Երևան, ՀԱԻ հրատ., 2024, 640 էջ:
10. **Афанасьев А.** *Народные русские сказки, том 2*, Москва, Изд-во «Наука», 1985, 464 с..
11. **Кербелите Б.** *Литовские народные сказки*, Москва, Изд-во «Инфра», 2015, 417 с.
12. *Курдские сказки, легенды и предания*, Составление О. Джалила, Главная редакция восточной литературы издательства «Наука», Москва, 1989, 628 с.
13. *Сравнительный указатель сюжетов. Восточнославянская сказка*, Ленинград. Изд-во «Наука», 1979, 440с.
14. **Страпарола Дж.** *Приятные ночи*, Москва, Изд-во «Наука», 1978, 447 с.
15. **Тахо-Годи А.** *Амалфея, // Мифы народов мира (МНМ)*, I том, Москва, Изд-во «Советская энциклопедия», 2008, с. 65.
16. *Турецкие сказки*, Составление, перевод с турецкого, вступительная статья и примечания И. Стеблевой, Главная редакция восточной литературы издательства «Наука», Москва, 1986, 400 с.
17. *100 Armenian Tales, 100 Armenian Tales and Their Folkloristic Relevance*, Collected and Edited by Susie Hoogasian-Villa, Wayne State University Press, Detroit, 1966, 603 p.
18. **Calvino I.** *Italian Folktales*. Selected and Retold by Italo Calvino. Orlando, Florida, 1980, 763 p.
19. *The Arabian Nights. Entertainments*, Selected and edited by A. Lang, New impression, 1916, 424 p.
20. **Uther H.** *The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction*, Helsinki, Academia Scientiarum Fennica . 2011, 619 p.

References

1. **Khachatryan, S.** The Folktales of Shirak, Manuscript Collection [*Shiraki hek'iat'ner, dzeragir havak'atsu*], Folklore Archive of the Institute of Archaeology and Ethnography (FAIAE), 1959, pp. FFIII: 4157,0-4228,00. (in Armenian)
2. Kars. The Folklore Tradition of Armenian [*Kars. hayot's banahyusakan mshakuyt'y*], comp.: S. Harutyunyan, S. Vardanyan, E. Khemchyan, L. Kh. Ghrejyan, M. Khemchyan, Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2013, 750 p. (in Armenian)
3. Armenian Ethnography and Folklore: Ijevan (Dzorapor) [*Hay azgagrut'yun yev banahyusut'yun. Ijevan (Dzorop'or)*], comp.: E. Khemchyan, Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2008, 490 p. (in Armenian)
4. Armenian folktales, Ayrarat, vol. 3 [*Hay zhogovrdakan hek'iat'ner, Ayrarat, hat. 3*], comp.: A. Nazinyan, Yerevan, Publishing House AS ASSR, 1962, 672 p. (in Armenian)
5. Armenian folktales, Art'sakh-Syunik, vol. 7 [*Hay zhogovrdakan hek'iat'ner, Art'sakh-Syunik, hat. 7*], comp.: A. M. Nazinyan, M. N. Arakelyan, Yerevan, Publishing House AS ASSR, 1979, 768 p. (in Armenian)
6. Armenian folktales, Turubaran-Mush, vol. 12 [*Hay zhogovrdakan hek'iat'ner, Turubaran-Mush, hat. 12*], comp.: V. Svazlyan, Yerevan, Publishing House AS ASSR, 1984, 651 p. (in Armenian)
7. Armenian folktales, Mush-Taron, vol. 13 [*Hay zhogovrdakan hek'iat'ner, Mush-Taron, hat. 13*], comp.: A. Ghazyan, Yerevan, Publishing House AS ASSR, 1985, 616 p. (in Armenian)
8. **Hovsepyan, H.** Armenians of Gharadagh: Folklore [*Gharadaghi hayery. Banahyusut'yun*], comp.: S. Vardanyan, E. Khemchyan, Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2009, 664 p. (in Armenian)
9. Shirak. The Folklore Tradition of Armenian [*Shirak. hayot's banahyusakan mshakuyt'y*], comp.: M. Khemchyan, E. Khemchyan, L. Ghrejyan, H. Matikyan, Yerevan, Publishing House IAE NAS RA, 2024, 640 p. (in Armenian)
10. **Afanasyev, A.** Russian Folktales, vol. 2 [*Narodnye russkie skazki, tom.2*], Moscow, Publishing House "Nauka", 1985, 464 p. (in Russian)
11. **Kerbelite, B.** Lithuanian folktales [*Litovskie narodnye skazki*], Moscow, Publishing House "Infra", 2015, 417 p. (in Russian)
12. Kurdish fairytales, legends and tradition [*Kurdskie skazki, legendy i predanya*], Moscow, Publishing House "Nauka", 1989, 628 p. (in Russian)
13. Comparative index of plots. East Slavic tale [*Sravnitel'nyy ukazatel' syuzhetov. Vosstozhno-slavyanskaya skazka*], Leningrad, Publishing House "Nauka", 1979, 440 p. (in Russian)
14. **Straparola, G.** The Pleasant Nights [*Pryatnye nochi*], Moscow, Publishing House "Nauka", 1978, 447 p. (in Russian)
15. **Takho-Godi A.** Amalfeya [*Amalfeya*], // Myths of the peoples of the world, 2nd ed., vol. 1, Moscow, Publishing House "Sovetskaya encyklopedya", 2008, p. 65. (in Russian)
16. Turkish tales [*Turet'skie skazki*], comp. Stebleva I., Moscow, Publishing House "Nauka", 1986, 400 p. (in Russian)
17. - **20. /տե՛ս հայերէն գրականության ցանկում՝ in English/**

Ընդունվել է / Received on: **13. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **10. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Information about the author

Marine Hayk KHEMCHYAN: PhD in Philology, Senior Researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA, e-mail: mkhemchyan@yandex.ru / ORCID.org/0000-0003-4764-0876

Մարինե Հայկի ԽԵՄՉՅԱՆ՝ քան. գիտ. թեկնածու, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ, Էլ. հասցե՝ mkhemchyan@yandex.ru, / ORCID.org/0000-0003-4764-0876

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԴԵՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Լիլիթ Ա. Մահակյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում քննության են առնվում երգիծանքի դրսևորումները հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթներում: Երգիծանքը դիտարկվում է իբրև գեղարվեստական յուրացման ձև, ինչով բացահայտվում են մարդկային թերություններն ու արատները: Երգիծանքը հանդես է գալիս որպես սուր խոսքային, գեղարվեստական միջոց և մշտապես ունեցել է կարևոր դեր հասարակական գիտակցության ձևավորման գործընթացում: Կենդանական հեքիաթների մեջ երգիծանքը ոչ միայն խոսքի հնարանք է կամ զվարճանքի աղբյուր, այլև բարոյախրատական ու արժեքային կարևոր ուղենիշ: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրությունն իրականացվել է տեքստաբանական, պատմահամեմատական և տիպաբանական մեթոդներով՝ հիմնվելով հայ ժողովրդական կենդանական հեքիաթների, ազգագրական և առակագրական աղբյուրների վրա: Նյութերի համեմատական դիտարկումը թույլ է տվել նաև նկատի ունենալ այլ ժողովուրդների բանահյուսական զուգահեռները, ինչը հնարավորություն է տվել բացահայտելու երգիծանքի ընդհանուր դրսևորումները կենդանական հեքիաթներում: Վերլուծություն. Կենդանական հեքիաթներում երգիծանքը դրսևորվում է կերպարների հակադրության միջոցով, երբ խորամանկն ու միամիտը հանդես են գալիս որպես ծաղրող և ծաղրվող: Այս առումով ամենահաճախ հանդիպող կերպարներն են աղվեսը և գայլը. առաջինը հանդես է գալիս որպես խելացի ու հնարամիտ կերպար, երկրորդը՝ որպես հիմար ու անհեռատես: Երգիծանքը կիրառվում է նաև կուտակային (կոմուլյատիվ) կառուցվածքով, երբ աննշան միջադեպից ստեղծվում է մեծ իրարանցում՝ ձևավորելով ծիծաղելի ու գրոտեսկային իրավիճակներ: Նուրբ հումորի և սուր ծաղրի համադրությունը ոչ միայն զվարճացնում է ընթերցողին, այլև ընդգծում է սովյալ վարքագծի սխալ և անընդունելի կողմերը: Արդյունքներ. Վերլուծության հիման վրա պարզ է դառնում, որ հայ ժողովրդական կեն-

դանապատում հեքիաթներում երգիծանքը դաստիարակչական սուր միջոց է: Այն անխնա ծաղրում է ազահությունը, ծուլությունը, վախկոտությունը, միամտությունը և այլ թերություններ՝ միաժամանակ մատնանշելով իդեալական վարքագծի օրինակները:

Բանալի բառեր՝ *երգիծանք, ծաղր, կենդանապատում հեքիաթներ, խորամանկություն, կուտակային կառուցվածք:*

Ինչպես հղել՝ Սահակյան Լ. *Երգիծանքի դերը և դրսևորումները հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթներում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ. 2 /28/: 133-142 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-133

THE ROLE AND MANIFESTATIONS OF SATIRE IN ARMENIAN FOLK ANIMAL TALES

Lilit A. Sahakyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This article examines the manifestations of satire in Armenian folk animal tales. Satire is considered as a form of artistic cognition through which human flaws and vices are revealed. It functions as a sharp rhetorical and artistic device and has consistently played an important role in the formation of social consciousness. In animal tales, satire is not merely a rhetorical device or a source of amusement but also serves as a moral and axiological guidepost. **Methods and Materials:** The study was conducted using textual, historical-comparative, and typological methods, drawing upon Armenian folk animal tales, ethnographic records, and fable collections. Comparative analysis of the material has made it possible to take into account parallels in the folklore of other nations, thereby revealing the common manifestations of satire in animal tales. **Analysis:** In Armenian animal tales, satire is expressed through the opposition of characters, where the cunning and the naïve appear respectively as the ridiculer and the ridiculed. The most frequently encountered figures are the fox and the wolf: the former is portrayed as clever and resourceful, while the latter embodies foolishness and shortsightedness. Satire is also employed through cumulative plot structures, where a trivial incident escalates into major commotion, creating humorous and grotesque situations. The combination of subtle humor and sharp ridicule not only entertains the reader but also highlights the erroneous and socially unacceptable aspects of certain behaviors. **Results:** The analysis demonstrates that satire in Armenian folk animal tales functions as a powerful pedagogical tool. It relentlessly mocks greed, laziness, cowardice, gullibility, and other shortcomings, while simultaneously pointing to exemplary models of ideal behavior.

Key words: *satire, ridicule, animal tales, cunning, cumulative plot structure.*

Citation: Sahakyan L. // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, Vol. 2 (28), 133-142pp., DOI: 10.52971/18294316-2025.28.2-133

ՆԱԽԱԲԱՆ. Երգիծանքը մարդկային մշակույթի անբաժան մասն է. այն գոյություն ունի նույնքան, որքան մարդկությունը: Բնության մեջ մարդն է միակ արարածը, ով կարող է և՛ ծիծաղել, և՛ ծիծաղ առաջացնել: Ինչպես ծիծաղն է անբաժան մարդկային կյանքից, այնպես էլ երգիծանքն է կապված մարդու գործունեության ու ստեղծածի հետ: Այդ պատճառով էլ

ծիծաղն ու երգիծանքը դառնում են մարդկային կյանքի կարևոր բաղադրիչներ՝ առնչվելով առօրյա իրավիճակներին, արտացոլվելով գեղարվեստական ստեղծագործության մեջ:

Երգիծանքն իր բառարանային նշանակությամբ մեկնաբանվում է որպես երգիծական խոսք, խայթող, ծակող խոսք, ծաղր [14, էջ 575]: Ըստ Աճառյանի՝ բառը սերում է երգիծանել (արմատն է՝ երգէծ՝ «պատատել, ճեղքել, պայթեցնել, ճաքեցնել») բառից, որի մեջ գտնում ենք «զավեշտ» իմաստը, ինչը հնում չկար [1, էջ 43]: Երգիծանքը գեղարվեստական սուր միջոց է, խոսքի հնարանք՝ ուղղված կյանքի տարբեր արատավոր երևույթների ու թերությունների քննադատմանը: Այն մշտապես հարմարվում է ժամանակի պահանջներին, մշտապես արդիական է և փոփոխական, ինչի շնորհիվ պահպանում է իր կենսունակությունը: Շոպենհաուերը գտնում էր, որ ծիծաղը առաջանում է այն ժամանակ, երբ մենք հանկարծ նկատում ենք, որ մեզ շրջապատող աշխարհի իրական առարկաները չեն համապատասխանում դրանց մասին ունեցած մեր պատկերացումներին ու գաղափարներին [21, էջ 9]: Ծիծաղելի է այն, ինչը չի համապատասխանում իրերի ընդունված դասավորությանը, ինչը սովորականի շրջանակներից դուրս է, արտասովոր է և առաջանում է անսպասելի: Այս ամենի հիմքում ընկած է վախը, քանզի ամեն անսպասելի հանդիպում արտասովորի հետ վախենալի է: Միայն համոզվելուց հետո, որ այդ վախենալին վտանգավոր չէ, մարդն սկսում է ծիծաղել. այստեղից էլ՝ վախի հաղթահարում=>ծիծաղ բանաձևը [23, էջեր 62-63]: Ընթերցողը սովոր է հեքիաթներում ազահ գայլին, օրինակ, տեսնել իշխողի դերում իրենից թույլ ու անճար կենդանիների նկատմամբ, այլ ոչ թե հակառակը, բայց վերջինս երգիծական իրավիճակներում զոհ է գնում անգամ հենց իրենից թույլերին՝ խեղճ ու անճար կենդանիներին՝ Էշին, ձիուն, գառանը, ոչխարին [2, էջ 207]: Կամ Էշին ուտելուց առաջ գայլը կատարում է նրա վերջին խնդրանքը՝ հանել նալը սմբակից, և աքացի է ստանում: Կենդանապատում հեքիաթի հերոսը կամ իրավիճակը հաճախ դիտվում են որպես անսովոր, հակասող ընդունված նորմերին, և ընթերցողի նախնական արձագանքը կարող է լինել զարմանք կամ նույնիսկ վախ՝ ինչպես նաև են ուժեղները թույլ, հիմարները՝ հաջողակ, խորամանկները՝ միամիտ: Հասկանալով, որ այդ արտասովոր երևույթը կամ իրավիճակը իրական սպառնալիք չեն, այլ ընդամենը ծաղրանք կամ չափազանցություն՝ ընթերցողը ծիծաղում է: Երգիծանքի գաղափարական բովանդակությունը միշտ բնորոշվում է ժխտման և հաստատման միասնությամբ, և նրա ենթատեսականների՝ սատիրայի և հումորի տարբերությունը կախված է այդ երկու կողմերի փոխհարաբերությունից: Սատիրայի մեջ կերպարները ցուցադրվում են իրենց ողջ այլանդակությամբ՝ ժխտելով պատկերավոր իրականությունը, իսկ հումորի մեջ ծաղրվում և դատապարտվում է որևէ մարդկային թերություն, բայց այն կրող անձնավորությունն ամբողջովին չի ժխտվում [16, էջեր 127-128]: Այսպես օրինակ՝ ազահ գայլը կամ հիմար արջը ներկայացվում են որպես արատավոր բնավորությունների կրողներ, որոնց վարքագիծը ծաղրի է արժանանում, դատապարտվում, խորամանկ աղվեսը, որին ժողովուրդը ծիծաղի առարկա է դարձնում, միևնույն ժամանակ գնահատվում է իր խելքի և հնարամտության համար:

Ոչ ոք ապահովված չէ ծաղրվելու վտանգից, որովհետև ոչ ոք համոզված չէ, որ ինքը բացարձակ անթերի և անփոփոխ մեծություն է: Ահա թե ինչու երգիծանքից վախենում են բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր ուրիշ ոչ մի բանից չեն վախենում [15, էջեր 54-55]:

Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն. «Լինելով միշտ լուսամիտ, լավատես, բարուն ու առաջադիմականին ձգտող՝ ժողովուրդը երգիծանքի թիրախ է դարձրել այն թուլությունները և արատները, որոնք խոչընդոտել են հասարակական կյանքի առաջընթացը» [17, էջ 61]: Երգիծանքը, լինելով ժողովրդական ծագման և ժողովրդական մտածողության արդյունք, իր արտահայտությունը գտել է ժողովրդական բանահյուսության մեջ: Երգիծանքի դրսևորումները հատկապես նկատելի են կենդանապատում տիպի հեքիաթներում, որտեղ կենդանիները այլաբանորեն մարմնավորում են մարդկանց՝ իրենց թուլություններով ու առաքինություններով: Կենդանապատում հեքիաթների հիմքում ընկած են հնագույն տոտեմական աշխարհայացքը և համապատասխան պատկերացումներ, որոնց վրա ձևավորվել են զանազան առասպելական գրույցներ կենդանիների բնավորության, հատկանիշների, հնարամիտ արարքների մասին [13, էջ 164]: Երբ կենդանիները ներկայացվում են որպես մարդկանց այլաբանություններ, ծիծաղն արդեն դուրս է գուտ զվարճանքի շրջանակից. այն դառնում է **սխալների գիտակցման և ուղղման միջոց**: Նապաստակի խորամանկությանը կուլ գնացած արջը կամ առյուծին խաբած աղվեսը ոչ միայն ծիծաղելի են, այլև օրինակ՝ ցույց տալու համար, որ ուժն ու իշխանությունը պետք է գուժակցվեն խելքի ու զգուշության հետ: Սովորաբար կենդանիների մասին հեքիաթներն ընկալվում են կա՛մ որպես զվարճալի ու ծիծաղելի պատմություններ, կա՛մ էլ որպես բարոյախրատական առակներ արձակով: Սակայն միշտ չէ, որ կենդանիների մասին պատմությունները հետապնդել են միայն զվարճացնելու կամ ուսուցանելու նպատակ [20, էջ 73]: Կենդանապատում հեքիաթները այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքը՝ նրա դրական և բացասական կողմերով: Իրենց հուզական բովանդակությամբ և նպատակներով տարբեր են նաև երգիծական պատկերներն ու ծիծաղի տեսակները, որոնք, սակայն, միշտ չէ, որ ծիծաղելի են. միայն այն դեպքերում, երբ տվյալ կենդանու արտաքին տեսքը հիշեցնում է մարդկանց որոշ բացասական հատկություններ [21, էջեր 48-53]: Ծիծաղի բնույթը կախված է նախ պատկերվող երևույթի էությունից: Այս առումով գուժահեռները տանում են դիմակահանդես, ուր ներկայացված է մարդկային «շրջված» աշխարհը: Այն մի յուրատեսակ հայելի է, որն իր մեջ արտացոլում է մարդկային կյանքն անուղղակի կերպով [23, էջ 64]: Երկու դեպքում էլ գործող հերոսները կենդանիներն են, որոնք որքան էլ իրենց էությամբ չար ու սևավոր են, դիմակահանդեսում դառնում են ծիծաղելի՝ փորձելով դրսևորել մարդկային վարք:

Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթները՝ արկածային, երգիծական, բարոյախրատական բաժանումներով, սյուժեների բազմազնությամբ կարևոր տեղ են զբաղեցնում հեքիաթների ժանրային համակարգում: Նրանց բնորոշ ամենակարևոր առանձնահատկություններից մեկը երգիծանքն է: Կենդանապատում հեքիաթները լի են սուր հումորով, տալիս են փայլուն գրոտեսկային պատկերներ անդրդվելի ծուլների, ամեն ինչ շփոթով անող հիմարների [20, էջ 94]՝ նպատակ ունենալով դաստիարակել՝ ծաղրելու միջոցով ցույց տալով վատը, թերին, արատավորը: Արատավոր են ծուլությունը, ազափությունը, անշնորհքությունը, երկչոտությունը, ժլատությունը, անհեռատեսությունը և այլն: Երգիծական, ծաղրական իրավիճակ ստեղծում են հենց իրենք՝ կենդանիները, որոնք հաճախ հայտնվում են

իրենց իսկ «փորած փռսի մեջ»: Ծաղրելով ու քննադատելով այս կամ այն թերությունը՝ հեքիաթում միշտ հասկացվում է, թե որն է ճիշտը, իդեալականը:

Կենդանապատում հեքիաթներում երգիծական իրավիճակ դրսևորվում է երկու հակադիր բևեռների միջոցով, նրանց բախումից, որոնք են ծաղրողն ու ծաղրվողը: Այսպես, ծաղրողի դերում հանդես է գալիս հիմնականում այն կենդանին, որը կարողանում է խորամանկել, հնարամտորեն գտնել ելքը՝ հոգուտ իրեն, իսկ ծաղրվողի դերում համապատասխանաբար միամիտ, հիմար կենդանին է: Մակայն երբեմն պատահում է, որ ծաղրողն ու ծաղրվողը փոխում են իրենց տեղն ու դերը՝ խորամանկը հայտնվում է ծիծաղելի իրավիճակներում՝ իր անուշաղբության, երբեմն էլ միամտության «շնորհիվ»: Այսպես, օրինակ՝ աղվեսին հնարամտորեն խաբում են աղավնին, ագռավը, կաքավը և այլք՝ պատվիրելով իրենց ուտելուց առաջ նախ «Հայր մեր»-ն ասել, ու հենց աղվեսը բացում է բերանը, արագորեն փախչում են նրա բերանից. սա ավելի է սրում իրադրությունը՝ առաջացնելով ավելի սուր ծիծաղ: Ինչպես հայկական «Աղուէսն ու Ագռավը» [6, էջ 349], «Աղուէսն ու Աղավնին» [6, էջ 350], «Կաքավը և աղվեսը» [8, էջ 512] հեքիաթներում ենք հանդիպում խաբվող աղվեսին, այնպես էլ մի շարք ժողովուրդների հեքիաթներում (ռուսական, գերմանական [25], հնդկական [27, էջ 12] ենք տեսնում թե՛ միամիտ [22, էջ 16], թե՛ խորամանկ [22, էջ 18] աղվեսին [24, էջ 88], որը միշտ հասնում է իր նպատակին՝ ծիծաղելի իրավիճակների մեջ դնելով կենդանիներից հատկապես գայլին, արջին, ուղտին [6, էջ 256]:

Նշենք, որ երգիծանք ասելով՝ չպետք է նկատի ունենալ, որ կենդանապատում հեքիաթներն ընթերցելիս մեր մեջ պետք է առաջանա անգուսպ ծիծաղ: Երգիծանքն այստեղ դրսևորվում է ոչ թե սուր կերպով, այլ ընդհակառակը՝ շատ մեղմ, նուրբ ձևով: Պարզապես հեքիաթներն ընդգծված են նուրբ հումորով:

Ամենատարածված հակադրությունն ստեղծվում է աղվեսի ու գայլի միջև՝ երգիծանքով համեմված: Պետք է նկատել, որ երգիծական իրավիճակները դրսևորվում են ոչ միայն որևէ իրադրության մեջ, այլև խոսքում: Լեզուն հսկայական շտեմարան է բառերի, որոնք մեծ զենք կարող են դառնալ ցանկացած պահի՝ ձևավորելով խոսքի երգիծանք: «Գել ախպեր», «սանահեր գել» արտահայտություններով, իսկ հետևից էլ՝ «խելքից պակաս ու փանաքի», կեռպոչ ախմախ» [11, էջեր 439-441] անվանելով գայլին՝ շողոքորթ աղվեսը միշտ հասնում է իր նպատակին՝ ծիծաղելի իրադրության մեջ դնելով խեղճ ու հիմար կենդանուն: Զավեշտալի է. երբ հեքիաթի հերոսները միմյանց դիմում են «բաջօղի», «մոքիրօղի», «քեռի», ունեն մարդկային անուններ՝ Բագոս, Թևաթորոս, Մարկոս [11, էջ 19] և այլն: Տեսնում ենք, թե ինչպես է «քավոր աղվեսը» [11, էջ 414] հեզնանքով ու ծաղրով գովաբանում գայլին.

-Օ՜, բարձր է Բագո՛ւս,
Չանարժան է Մարկոս,
Շուրջ գիկա Թևաթորոս,
Օռշնած աղ, կեցի վըր քրուն
Փախնիմ էթամ հըտ ձորուն [11, էջ 419]:

Կամ գայթակղում է գայլին՝ համոզելով ուտել թակարդի պանիրը, քանի որ ինքը պասի մեջ է, պանիր չի կարող ուտել: Երբ գայլն ընկնում է թակարդը, աղվեսն ասում է.

«Նայեցի երկնքին, տեսա պասը վերջացել է, ուտիսն է սկսվել, երբ գան որսորդները, գել ախպեր, պահքդ կվերջանա, ուտիսդ կսկսվի» [5, էջեր 298-299]:

Պետք է նշել, որ ընթերցողի համակրանքը խորամանկ և հնարամիտ կենդանու կողմն է, սակայն ոչ նրա համար, որ արդարացնում է վերջինիս: Պարզապես ընթերցողը ծիծաղում է խաբվողի հիմարության, անհեռատեսության և տգիտության վրա, որի համար էլ արժանի է, որ իր վրա ծիծաղեն: Բիարկել, գայլը չի ցանկանում հետ մնալ աղվեսից, որոշում է «մոտ հանել», բայց ձախողվում է՝ նմանվելով այն «առասպելական հիմարին», ով հաճախ ինքն է ստեղծում այդ ծիծաղելի իրավիճակները՝ ինքն ընկնելով ծիծաղելի դրության մեջ: Աղվեսը կարողանում է խաբել իր շրջապատի բոլոր կենդանիներին, և դա մեզ տեսանելի է դառնում նուրբ հումորի միջոցով: Նա խորհուրդ է տալիս գայլին պոչով ձուկ կամ հարստություն բռնել («Խաբլան Աղվես» 11, էջ 427), «Աղվեսու ու գիլու հեքիաթ» [11, էջ 439]) թաթը դնել ջրաղացի քարի տակ [6, էջ 356], կամ հնարամտորեն խուսափում է առյուծի դատաստանից՝ իր տեղը «գիջելով» գայլին [6, էջ 360], իսկ հիմար գայլը միշտ միամտորեն հավատում է ու պատժվում:

Մի խումբ հեքիաթներում էլ գայլին կարողանում են հիմարացնել և մահից խուսափել տալ էշը, ձին, ջորին [6, էջ 256], որոնք խորհուրդ են տալիս ուտել իրենցից ամենաերիտասարդին: Գայլը ուզում է կարդալ էշի սմբակի տակ գրված տարիքը, բայց աքացի է ստանում և փոխում գետնին, իսկ աղվեսն էլ փառք է տալիս իր նախնիներին, որ իրեն գրել-կարդալ չեն սովորեցրել [11, էջ 432]: «Աստված զիմ վարժապետի հոգին լուսավորե, օր ընձի փակագիր կարդալ չը սորվեցուց» [11, էջ 433]: Նմանատիպ հեքիաթների շարքում աղվեսի և գայլի կերպարների հակադրությունը դառնում է հայ ժողովրդական երգիծանքի առանցքային կառուցվածքային ձև: Խորամանկի և միամիտի բախման միջոցով հասարակությունը ոչ միայն ծիծաղում է անհեռատեսի հիմարության վրա, այլև հաստատում է խելամտության ու հնարամտության գերակայությունը որպես արժեք:

Հայկական կենդանապատում հեքիաթներում աղվեսի և գայլի հակադրությունը համադրելի է ռուսական [19] և եվրոպական հեքիաթների հետ, որտեղ նույն կերպարները հանդես են գալիս խորամանկի և հիմարի դերերում: Նույն տիպի երգիծական մոտիվներ հանդիպում են նաև հնդկական բանահյուսության մեջ [26]: Հնդկական Պանչաթանտրայի [27] առակներում կենդանիների հակադրությունը նույնպես կառուցվում է երգիծական իրավիճակների վրա. միամիտներն ու մեծամիտները միշտ ծաղրվում են, իսկ խելամիտները հաղթում են: Այս համեմատական դիտարկումները ցույց են տալիս, որ կենդանապատում հեքիաթներում երգիծանքը համամարդկային երևույթ է, որը յուրաքանչյուր ժողովուրդ հագեցնում է իր մշակութային ու արժեհամակարգային յուրահատկություններով:

Երգիծանքի ֆոնի վրա խորամանկ կամ ավելի ճիշտ հնարամիտ եղանակով մահից փրկվում է կապիկը «Կիրիբի հեքիաթում» [11, էջ 436]: Նրան փորձում է միամտեցնել կրիան, բայց կապիկը միամիտ չէ և կրիայի ասածին, թե թագավորին պետք է կապիկի ջիգյարը, պատասխանում է, որ մոռացել է ծառի վրա: Երգիծանքի նուրբ դրսևորման մի ձև տեսնում ենք «Օղտրեն պար կյալը» [8, էջ 226] հեքիաթում: Հենց վերնագրի մեջ արդեն երևում է երգիծանքը: Ուղտը որոշում է պարել կամրջին և իրեն ու էշին գցում գետը:

Կենդանապատում հեքիաթների մեջ առանձնացնենք նաև մեկ այլ խումբ, որտեղ երախտամոռ ու անշնորհակալ կենդանիներն են հայտնվում ծիծաղելի իրավիճակներում՝ իբրև շնորհակալություն՝ վատություն անելով՝ խայթելով: Այսպես, օձը, կարիճը ի բնե սովոր են անընդհատ խայթել, վնասել, իսկ գոհի դերում կրկին անմեղներն են, նույնիսկ նրանք, ովքեր երբևէ լավություն են արել, բայց հեքիաթի վերջում, միննույնն է, միշտ արժանիորեն պատժվում են աղվեսի, ձկան և այլ կենդանիների ձեռքով [8, էջ 225]: Այս խմբի հեքիաթներում երգիծանքը ծառայում է բարոյական արդարության վերականգնմանը. երախտամոռ և վնասատու կերպարները, որքան էլ ժամանակավորապես հաջողության հասնեն, անպայման հայտնվում են ծիծաղելի ու պատժելի իրավիճակում: Այսպես երգիծանքը դառնում է արդար դատաստան հաստատող խորհրդանշական միջոց:

Կենդանապատում հեքիաթներում առանձին խումբ են կազմում այն հեքիաթները, որտեղ ստեղծվում է «մեծ աղմուկ ոչնչից»: Երգիծական նուրբ հյուսվածքով առաջանում է մեծ իրարանցում, որի պատճառը կարող է լինել մի աննշան բան. դրանք կոմունյատիվ հեքիաթներն են, որոնց մեջ ստեղծված իրավիճակի և պատճառի հակադրությունն ակնհայտ ծիծաղելի է («Նազլու խանում» [12, էջ 6], «Մուկն ու խոռոզը» [3, էջ 233], «Լուսնան Սրեժակը» [7, էջ 241] «Հարսնուկ մուկն է մեռի» [11, էջ 376]): Այս հեքիաթախմբի հերոս մուկն ընկնում է թոնիրը կամ ապուրի մեջ, և նրա դարդից ծառը քարերին է խփվում, ջուրը արյուն է կապում, հովվի փայտը երկու կտոր է լինում, ագռավը թափում է փետուրները, ոչխարը պոկում է պոզերը, աղան բեղերն է ածիլում, ճնճղուկը թևաթափ է լինում՝ «ինչ է, ինչ է, մուկն է մեռել»: Վերջապահը հաճախ կառուցվում է այնպես, որ ամեն ինչ ընկնում է իր տեղը («Աշըղ այլիլը» [12, էջ 17], «Խոռոզի մը մասալը» [4, էջ 730], «Պոչատ աղվեսը» [9, էջ 434], «Ճնճղու օտաց փուշը» [10, էջ 203]): Ստեղծվում է մեծ խառնաշփոթ մի ինքնագոհ ծոխ քմահաճության պատճառով, որը պահանջում է տերևից իր հետևը սրբել [8, էջ 211], կամ մի լվի՝ գոմաղբի մեջ խեղդվելուց [12, էջ 92]: Մասնագետներից ոմանք այս տիպի երգիծական սյուժեները համեմատում են փրփուրի մեկ պղպջակի հետ, որը գնալով ավելի ու ավելի է մեծանում և մեկ էլ հանկարծ միանգամից ուժեղ պայթում [21, էջ 123]: Կուտակային կառուցվածքով հեքիաթները ցույց են տալիս, թե ինչպես աննշան միջադեպից կարող է առաջանալ մեծ իրարանցում: Երգիծական այս ձևը բացահայտում է անհեթեթ վարքագծի հետևանքները և հասարակական խուճապի ծաղրական բնույթը, ասել է թե՛ հեքիաթները դառնում են ոչ միայն զվարճալի պատում, այլև հասարակական անիրատեսական արձագանքների քննադատություն: Որոշակի կրկնություն-կուտակումներով հյուսվող դիպաշարը պատումին հաղորդում է գրավչություն, թեթևություն, արկածայնություն, երգիծական բնույթ, իսկ դիպաշարի մեջ հյուսվող պատումի կրկնությունը յուրաքանչյուր նոր բաղադրիչի ավելացմամբ նպաստում է կուտակվող շղթայի օղակների հաջորդական շարունակականությանը՝ մտապահելով վերականգնելու հմտությունը, ինչի շնորհիվ զարգանում են նաև երեխայի հիշողությունն ու տրամաբանությունը [18, էջեր 118-129]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Հայ ժողովրդական կենդանապատում հեքիաթներում երգիծանքը հանդես է գալիս որպես գեղարվեստական յուրացման ինքնատիպ ձև: Այն ոչ միայն զվարճանքի միջոց է, այլև բարոյախրատական գործիք, որի միջոցով ժողովուրդը մատ-

նանշել է մարդկային թերությունները և հաստատել իդեալական վարքագծի օրինակները: Հեքիաթներում երգիծանքը դրսևորվում է հիմնականում կերպարների հակադրության միջոցով՝ խորամանկի և միամիտի, խելամիտի և անհեռատեսի միջև: Կուտակային կառուցվածքի, խոսքային ծաղրի և գրոտեսկի կիրառումը կենդանապատում հեքիաթներին հաղորդում են աշխուժություն և հումոր, իսկ ծիծաղի միջոցով ընթերցողը ոչ միայն զվարճանում է, այլև գիտակցում սխալները: Այսպիսով, երգիծանքը կենդանապատում հեքիաթներում հանդես է գալիս որպես համամարդկային մշակութային երևույթ, որը հայկական միջավայրում ստացել է յուրահատուկ արտահայտություն՝ միավորելով զվարճանքը, քննադատությունը և բարոյական իդեալների ձևավորումը մեկ տեղում:

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ե Մ ՈՒ Ն

1. **Աճառեան Հր.** Հայերեն արևատական բառարան, հ. 2: Երևան: ԵՀ հրատ.: 1926: 687 էջ:
2. **Բարսիլի հայոց բանահյուսությունը:** Երևան: «Զանգակ-97» հրատ.: Ժողովածուն կազմեցին Ա. Ղազիյանը, Սվ. Վարդանյանը: 2004: 380 էջ:
3. **Բիւրակն.** Թիվ 15: 1900: էջ 233 Խարբերդ:
4. **Բիւրակն.** Թիվ 46: 1900: 730 էջ:
5. **Գրիգորյան-Սպանդարյան Մ.** Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1971: 477 էջ:
6. **Լալայեան Ե.** Ազգագրական հանդես, գ. Բ, Թիֆլիս: Մ. Ռոտինեանցի տպ.-ն: 1897:
7. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V:** Երևան: ԳԱ հրատ.: Նախաբանը՝ Ա. Նազինյանի: 1966: 759 էջ:
8. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII:** Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Հատորը պատրաստեցին և նախաբանը գրեցին Ա. Նազինյանը, Մ. Առաքելյանը: 1979: 768 էջ:
9. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VIII:** Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հատորը պատրաստեցին Ա. Նազինյանը, Ռ. Գրիգորյանը: 1977: 904 էջ:
10. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X:** Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: Հատորը կազմեց և ծանոթագրեց Ս. Տարոնցին: 1967: 635 էջ:
11. **Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. IX:** Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Մ. Մկրտչյանը: 1968: 649 էջ:
12. **Հայկունի Ս.** Ժողովրդական առակներ, կենդանական վեպեր: Վաղարշապատ: Տպ. Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի: 1907: 92 էջ:
13. **Հարությունյան Ս.** Բանագիտական ակնարկներ: Երևան: ԳԱ «Գիտություն» հրատ.: 2010 262 էջ:
14. **Մալխասեանց Ստ.** Հայերեն բացատրական բառարան, հ. I: Երևան: ՀՍՍՌ պետհրատ.: 1944: 609 էջ:
15. **Մակարյան Ա.** Երգիծական ստեղծագործություն: Երևան: Հայպետհրատ.: 1957: 274 էջ:
16. **Ջրբաշյան Էդ.** Գրականության տեսություն: Երևան: ԵՀ հրատ.: 1980: 496 էջ:
17. **Սարգսյան Ս.** Երգիծանքը հայ ժողովրդական հեքիաթներում և առակներում: Երևան: «Հայաստան» հրատ.: 1975: 159 էջ:
18. **Վարդանյան Ն.** Կուտակային հեքիաթների և ծիսերգային բանահյուսության որոշ գուգահեռներ // Բանբեր Երևանի Համալսարանի, հ.2: Երևան: ԵՀ հրատ.: 2023: 118-129 էջեր:
19. **Афанасьева А.** Народные русские сказки. том I. Изд-во "Наука". Москва. 1984. 511 с.
20. **Померанцева Э.** Русская народная сказка. Москва. Изд-во Академии наук СССР. 1963. 129 с.
21. **Пропп В.** Проблема комизма и смеха. Москва. Изд-во "Искусство". 1976. 183 с.
22. **Русская народная сказка.** Изд-во "Кнебель". Под ред. М. Свентицкой. Москва. 1910. 102 с.
23. **Смех как побочный продукт и движущая сила праздника** // Смех: истоки и функции. СПб.: Изд-во "Наука". Под ред. А. Козинцева. 2002. 62-63 сс.
24. **American Indian myths and legends,** edited by R. Erdoes, Alfonso Ortiz, Pantheon Books Random House. New York. 1984. 526 p.

25. **Grimms'** *Fairy Tales*. https://www.planetpublish.com/wpcontent/uploads/2011/11/Grimms_Fairy_Tales_NT.pdf դիտվել է 10.09.2025
26. *Indian fairy tales*. Collected and translated Maive stokes. Ellis & White. London 1879. 303 p.
27. **Sharma Vishnu**. *Panchatantra*. Pub. by *Rupa Publications*. Translated by G. Chandiramani. New Delhi. 1991. 258 p.

References

1. **Acharyan, Hr.** Armenian Radical Dictionary [*Hayeren armatakan bar'aran*], vol. 2: Yerevan: Yerevan University Press: 1926: 688 p. (in Armenian)
2. Armenian Folklore of Baku [*Baqvi hayoc banahyowsowt'yowny'*]. Yerevan: "Zangak-97" Publishing House. The collection was compiled by A. Ghaziyany, Sv. Vardanyan. 2004: 380 p. (in Armenian)
3. Byurakn [*Byowrakn*]: No. 15: 1900: 233p. Kharberd. (in Armenian)
4. Byurakn [*Byowrakn*]: No. 46: 1900: 730p. Kharberd. (in Armenian)
5. **Grigoryan-Spandarian, M.** Folklore of Nagorno-Karabakh [*Ler'nayin Gharabaghi banahyowsowt'yowny'*], Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR: 1971: 477 p. (in Armenian)
6. **Lalayan, E.** Ethnographic Journal [*Azgagrakan handes*], vol. B, Tiflis. M. Rodinyantsi Printing House. 1897. (in Armenian)
7. Armenian Folk Tales [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], vol. V: Yerevan: National Academy of Sciences Publishing House. Preface written by A. Nazinian. 1966: 759 p.. (in Armenian)
8. Armenian Folk Tales [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], Vol. VII: Yerevan: Publishing House of the AS of the Arm.SSR. The volume was prepared and the preface was written by A. Nazinian, M. Arakelyan. 1979: 768. (in Armenian)
9. Armenian Folk Tales [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], vol. VIII: Yerevan: Publishing House of the AS of the Arm. SSR. The volume was prepared by A. Nazinian, R. Grigoryan, 1977: 904 p.. (in Armenian)
10. Armenian Folk Tales [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], vol. X: Yerevan: Publishing House of the AS of the,Arm. SSR. The volume was compiled and annotated by S. Tarontsi. 1967: 635 p.. (in Armenian)
11. Armenian Folk Tales [*Hay jhoghovrdakan heqiat'ner*], vol. IX: Yerevan: Publishing House of the ASof the Arm. SSR. The volume was prepared and the foreword was written by M. Mkrtchyan. 1968: 649 p.. (in Armenian)
12. **Haykun, S.** Folk Fables, Animal Novels [*Jhoghovrdakan ar'akner, kendanakan veper*]. Vagharshapat: Printed by the Mother See of Holy Etchmiadzin: 1907: 92 p.. (in Armenian)
13. **Harutyunyan, S.** Philological Essays [*Banagitakan aknarkner*]. Yerevan: NAS "Science" Publishing House: 2010. 262 p.. (in Armenian)
14. **Malkhasiants, St.** Armenian Explanatory Diction0ary [*Hayere'n bacatrakan bar'aran*], vol. 1: Yerevan: ArmSSR State Publishing House: 1944: 609 p.. (in Armenian)
15. **Makaryan, A.** Satirical Work [*Ergic'akan steghc'agorc'owt'yown*]. Yerevan. Haypethrat. 1957. 274 p.. (in Armenian)
16. **Jrbashyan, Ed.** Theory of Literature [*Grakanowt'yan tesowt'yown*]:Yerevan. YU Press.1980. 496 p.. (in Armenian)
17. **Sargsyan, S.** Satire in Armenian Folk Tales and Fables [*Ergic'anqy' hay jhoghovrdakan heqiat'nerowm & ar'aknerowm*]. Yerevan. "Hayastan" Publishing House: 1975: 159 p.. (in Armenian)
18. **Vardanyan, N.** Some parallels between collective fairy tales and ritual folklore [*Kowtakayin heqiat'neri & c'isergayin banahyowsowt'yan orosh zowgaher'ner*] //Bulletin of YU, issue 2. Yerevan. EU Publishing House. 2023. 118-129 pp. (in Armenian)
19. **Afanasyeva, A.** Russian Folk Tales [*Narodnye russkie skazki*]. volume 1. Publishing house "Science". Moscow. 1984. art. 511 p. (in Russian)
20. **Pomerantseva, E.** Russian Folk Tale [*Russkaja narodnaja skazka*]. Moscow. Publishing house of the USSR Academy of Sciences. 1963. 129 p.. (in Russian)

21. **Propp, V.** The Problem of Comedy and Laughter [*Problema komizma i smeha*]. Moscow. Publishing House "Art". 1976. 183 p.. (in Russian)
22. Russian Folk Tale [*Russkaja narodnaja skazka*]. Knebel Publishing House. Ed. by M. Sventitskaya. Moscow. 1910. 102 p.. (in Russian)
23. Laughter as a by-product and driving force of the holiday // Laughter: sources and functions [*Smeh kak pobochnyj produkt i dvizhushhaja sila prazdnika // Smeh: istoki i funkcii*]. St. Petersburg: Nauka Publishing House. Ed. A. Kozintsev. 2002. 62-63 pp.. (in Russian)
24. – 27. /Տե՛ս հայերեն գրականության ցանկում՝ in English/

Ընդունվել է / Received on: **03. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **15. 09. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Լիլիթ Արայիկի ՍԱՀԱԿՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ sahakyanlilit1982@gmail.com / [ORCID.org/0009-0006-7006-4255](https://orcid.org/0009-0006-7006-4255)

Lilit Arayik SAHAKYAN: Junior Researcher at the Institute of
Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail:sahakyanlilit1982@gmail.com / [ORCID.org/0009-0006-7006-4255](https://orcid.org/0009-0006-7006-4255)

ՇԻՐԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասմիկ Հ. Մատիկյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի

Հասմիկ Հ. Հարությունյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ

Անվտուգություն

Նախաբան. Շիրակի արդի բանահյուսության մեջ ամենակենսունակ ժանրը խաղիկն է կամ պարերգը: Ինչպես բանահյուսական այլ ժանրերում, այնպես էլ խաղիկներում կան կայուն միավորներ, որոնք բանաձևային մտածողության արգասիք են: Դրանք դիտարկելի են տարբեր մակարդակներում: Առավել ցցուն են այս երգերում հանդիպող կրկնակների և կրկնատողերի բանաձևային դրսևորումները: Հոգվածում մենք դիտարկել ենք Շիրակում տարածված վիճակի երգերի բանաձևային կառույցները՝ որպես ավանդական բանահյուսական կարևորագույն բաղադրիչներ: Մեթոդներ և նյութեր. Պատմաքննական, բանագիտատեքստաբանական և երաժշտատեսական մեթոդներով քննության են առնվել շիրակյան խաղիկները, որոնք հանդիպում են Համբարձման տոնաձևի սակայն համակարգում: Վերլուծություն. Ուսումնասիրվել են վիճակի երգերի տարածամասնակյա գրառումներ և համեմատվել այլ խաղիկների հորինվածքային առանձնահատկությունների հետ: Արդյունքներ. Շիրակյան խաղիկների արդի դրսևորումները կրում են բանաձևային մտածողության կարևորագույն բնորոշիչներ, ավելին՝ դրանց գործառնությունը բավական ընդլայնվել է ծիսական համատեքստի փոփոխման շնորհիվ: Հեղինակների ներդրումը. Հետազոտությունն իրականացվել է երկու հեղինակների անմիջական մասնակցությամբ: Առաջին հեղինակի ներդրումը բանագիտական նյութի և տեքստական մասի շարադրանքն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ հավաքված նյութերի նոտային վերծանություններն ու էթնոերաժշտագիտական քննությունը:

Բանալի բառեր՝ տեքստ, ժանրային բնութագիր, ոճ, դաշտային աշխատանք, Շիրակ, խաղիկ, պարերգ, բանաձև, համատեքստ:

Ինչպես հղել՝ Մատիկյան Հ., Հարությունյան Հ., Շիրակյան խաղիկների որոշ առանձնահատկություններ, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28): 143-152 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-143

SOME CHARACTERISTICS OF SHIRAKIAN SONGS (KHAGHIKS)

Hasmik H. Matikyan

Shirak Center for Armenological Studies NAS RA
Shirak State University, Gyumri, RA

Hasmik H. Harutyunyan

Shirak Center for Armenological Studies NAS, Gyumri, RA
Gyumri Branch of Yerevan Komitas State Conservatory, RA

Abstract

Introduction. In the contemporary folklore of Shirak, the most vibrant genre is the *khaghik* or *dance song*. As in other folklore genres, *khaghiks* contain stable units that are products of formulaic thinking. These can be observed on various levels. Particularly prominent are the formulaic expressions found in the refrains and repeated lines of these songs. In this article, we examine the formulaic structures of *vijak* (fortune-telling) songs widespread in Shirak as essential components of traditional folklore. Within the scope of this study, we will specifically analyze the folk *khaghiks* related to the Hambardzum (Ascension) festival. **Methods and Materials:** The *khaghiks* of Shirak that are part of the Hambardzum ritual system have been studied using historical-comparative, folkloristic-textological, and musicological methods. **Analysis:** Recordings of *vijak* songs from different periods were analyzed and compared with the compositional features of other *khaghiks*. **Results:** The modern manifestations of *khaghiks* in Shirak bear key characteristics of formulaic thinking. Moreover, their function has significantly expanded due to shifts in the ritual context. **Authors' Contributions:** The research was carried out with the direct involvement of both authors. The first author contributed to the formulation of the folkloristic material and the theoretical section, while the second author was responsible for the transcription of the collected musical materials and the ethnomusicological analysis.

Key words: *text, genre characteristics, style, fieldwork, Shirak, dance song, formula, context.*

Citation: Matikyan H., Harutyunyan H. *Some Characteristics of Shirakian Songs (Khaghiks)*/// Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. Vol. 2 (28). 143-152 pp..
DOI: 10.52971/18294316-2025.28.2-143

ՆԱԽԱԲԱՆ. Բանաձևը՝ որպես բանավոր արվեստում ասելաձևի դրսևորում, ձեռք է բերում կարևոր հորինվածքային բաղադրիչ և մտածողության ձև: Դա առավել կիրառվել է խաղիկներում, որոնք ունեն շատ փոքր ծավալ և բովանդակային սահմաններ: Բանաձևը, ելնելով համատեքստի առանձնահատկություններից, շարունակ ծավալվելու հնարավորություն է ընձեռել՝ առաջացնելով տարբերակային բազում դրսևորումներ:

Դեռևս Մ. Աբեղյան է նշել, որ այս փոքրիկ երգերը հատկապես քնարական բնույթի են և ունեն շատ հակիրճ բովանդակություն: Դրանք երբեմն հարափոփոխ են և հաճախ աղերսվում են բնության նկարագրին և ժողովրդական կյանքից բխող դեպքերի թվարկմամբ ստանում են իմաստաբանական որոշակի արժեք: Հետևաբար, այս ժանրի նմուշները բավական բազմազան են՝ հատկապես գործառության-թեմատիկ նշանակությամբ: Դրանք նախկինում ունեցել են կատարման հստակ վայր և համատեքստ, հետագայում համատեքստն ընդլայնվել է՝ ըստ հասարակական պահանջների:

Բանաձևային դրսևորումները հաճախ նկատելի են խաղիկների բացականչություններում, որոնք բխում են պարային շեշտերից և շարժումներից: Մրանք փոքրիկ դարձվածքներ են, որոնք հիշեցնում են ձայնարկություններ և բխում են խաղիկի բովանդակությունից: Շարունակ կրկնվելով՝ դրանք նպաստում են խաղիկի կառուցվածքի կայունությանը և հանդիսանում են հորինվածքի բանաձևային կառուցվածքի ամենակայուն տարրերից մեկը: Այսպես՝ ժամանակի ընթացքում, ինչպես հաճախ հանդիպում է բանավոր արվեստում, համատեքստից բխող առանձնահատկություններով բոլորովին նոր տներ են ավելանում և այս բանաձև-ձայնարկությունների շնորհիվ է, որ խաղիկը կամ պարերգը պահպանում է իր ավանդական նկարագիրը: Բանաձևային արտահայտություններով հարուստ են Շիրակում տարածված վիճակի երգերն ու մանկները (Ջան, վիճակ, ջան, ջան):

Պատահական չէ, որ Կոմիտասի բնորոշմամբ՝ ժողովրդական եղանակներին գույն տվողը հենց այս կրկնակներն են:

Կախված հորինվածքի առանձնահատկություններից՝ այս բանաձև-կրկնակները կարող են հանդիպել խաղիկի սկզբում, յուրաքանչյուր տողի վերջում կամ ավարտին՝ իբրև կրկնատող: Վերջինս տարբերվում է կրկնակ ձայնարկությունից նրանով, որ մի ամբողջ տող է կամ երկու տող և կրում է բովանդակային ավելի լուրջ կշիռ:

Ինչպես ընդգծում է Ռ. Խաչատրյանը, բանահյուսական երգի զարգացման գործընթացում խաղիկի կրկնակը կարող է փոխարկվել միայն այն դեպքերում, երբ այն ձեռք է բերում խաղիկին հավասարազոր իմաստային ամբողջականություն ու ավարտվածություն, իսկ բանաստեղծական չափերը լրացվում կամ ընդլայնվում են ռեդիֆային բնույթ ունեցող բառային, բառադարձվածային ռիթմամաս կրկնություններով ու միջարկություններով: [6, էջեր 87-94]:

Պարերգերում երբեմն հանդիպում են հիմնական թեմայից բխող որոշակի պոեմատիկ գծեր, հավատալիքային նախադրություններ, որոշակի թեմատիկ ուղղվածությամբ և խորհրդանիշ պատկերներով, որոնք պայմանավորում են տվյալ ստեղծագործության ձևակառուցվածքային և իմաստային ծավալման հնարավորությունները՝ ամբողջացնելով պարերգի ներքին զարգացման դինամիկ շղթան: Նմանատիպ հորինվածք ունի երկրագործական ծիսական կենցաղին աղերսվող *Համբարձման երկուշաբթին* պարերգային շարքը, որն աչքի է ընկնում ոչ միայն իր նախնական իմաստաբանությամբ, խորհրդանիշ-պատկերներով, այլև ավանդական ատաղձի վրա՝ պոեմատիկ զարգացման նոր հնարավորություններով, բառադարձվածային և հնչյունաշարային կրկնակներ:

րով ու նորամուծություններով, որոնք և ստեղծագործական տեսական զարգացման արդյունք են [6, էջեր 87-94]:

Խաղիկները երբեմն կատարվում ենք փոխեփոխ երգեցողությամբ՝ տարբեր խմբերի կամ մեներգչի ու խմբի հաջորդաբար կատարմամբ: Հաճախ դրանք ուղեկցվում են պարով:

Բնականաբար, կարևորվում է այս ժանրին պատկանող յուրաքանչյուր նմուշի հորինման ու կատարման համատեքստն ու միջավայրը: Հենց բանաձևային դրսևորումները հնարավորություն են տվել ոչ միայն պահպանել այս կամ այն խաղիկը բավական տեսական ժամանակաշրջան, այլև նպաստել են ժանրի նոր նմուշների ի հայտ գալու և ավանդական նկարագիրը պահպանելու գործընթացին:

Մենք անդրադառնալու ենք Շիրակի խաղիկներից վիճակի երգերին:



Երգը ձայնագրվել է 2021 թվականին: Բանասացն է Մանյա Հովհաննիսյանը, ծնվել է 1935թ. Լեռնակերտում, նախնիները գաղթել են Մուշից ու Ալաշկերտից: Կրթությունը՝ թերի միջնակարգ (Հարությունյան Հ., ՇԿԿԿ, ֆոնդ 25/5)

Վիճակի բովանդակային սահմանները

Ելնելով ծեսի հինավուրց արմատներից՝ ժամանակի ընթացքում շատ սիրված և տարածված վիճակի երգերը ընդլայնել են իրենց բովանդակային սահմանները՝ քնարական-սիրային, կատակային, սոցիալական-իրավիճակային և այլն: Ավելին՝ այս երգերը ներթափանցել են նաև ծիսական այլ ոլորտներ: Վիճակի երգերը պահպանել են իրենց ծիսական սինկրետիզմը՝ միավորելով խոսքը, երգը, պարը:

Վիճակի երգերը ներառվել են տարիքային տարբեր խմբերի կողմից՝ մանկախաղաց, չամուսնացած երիտասարդների:

Վիճակի երգերում հարյուրավոր քառյակներ են երգվել: Երգերին բնորոշ են հնագույն նմուշներից եկող *Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, Ջա՛ն, վիճակ ջան, ջա՛ն, Ջա՛ն գյուլում, ջա՛ն, ջա՛ն* կրկնատողերը.

Խամբարձում՝ հերկեն գիշեր,
Ջան, վիճակ, ջան, ջան,
 Քոր գընաց ծաղիկ չափել,
Ջան, վիճակ, ջան, ջան,
 Քոր գընաց ծաղիկ չափել,
Ջան, վիճակ, ջան, ջան, [5, էջ 171]:

Վիճակ, տու հոլա, հոլա,
 Ջան, վիճակ, ջան, ջան,
 Ազապ լաճեր վիճկին քոլա,
 Ջան, գուլում, ջան: [5, էջ 172]:

Կամ՝

Ծառիս տակը մանիշակ,
 Ջա՛ն, գուլում, ջա՛ն, ջա՛ն,
 Իմ յարը քանց քեզ չիչակ,
 Ջա՛ն, ծաղի՛կ, ջա՛ն, ջա՛ն [10]:

Գյուլում ջան-ը որոշ դեպքերում դառնում է ինքնուրույն կրկնակ միավոր:
 Որպես օրինակ՝ *Խնկի ծառ* երգը.

Մեր դռանը խնկի ծառ,
 Գյուլում ջան,
 Ձեր դռանը խնկի ծառ,
 Գյուլում ջան,
 Խնկենին ա բերել բար,
 Գյուլում ջան,
 Իմ խորոտիկ, պըզտիկ յար,
 Գյուլում ջան [11]:

Ուշագրավ է այն, որ *Ջան, գուլում, ջան, ջան* կրկնակը երբեմն հանդիպում է մանկախաղաց երգերում: Նշված կրկնակով երգի հետաքրքիր նմուշ ենք տեսնում Ռ. Գրիգորյանի *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր* գրքում: Հեղինակը այս կրկնակով երգը գետեղել է գրքի հավելված բաժնում՝ ի թիվս գրական մշակման ենթարկված երգերի, օրորոցային համարված և մանկան ողբի ու պարի երգերի.

Սիրուն երեխա, որք ես մնացեր,
 Քո անբախտ մորը գերի են տարեր,
 Նա գնաց կորա՛վ, էլ հետ չի գալու,
 Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու,
 Քամին կգա, ժաժ կտա,
 Պախրեն կգա, ծիծ կտա,
 Ջա՛ն, գուլում, ջա՛ն, ջա՛ն: [4, էջ 355]

Նշված երգն առանց *Ջա՛ն, գուլում, ջա՛ն, ջա՛ն*... բանաձևի գրական և բանահյուսական միջավայրերում է տարածական՝ որպես օրորերգ: Այս մասին անդրադարձել ենք *Օրոր-ողբերգ տեքստերը հայկական բանահյուսության մեջ/ գրական միջավայրի համատեքստում/* հոդվածում [8]:

Ծառիս տակը մանիշակ,
 Ջա՛ն, գուլում, ջա՛ն, ջա՛ն,
 Իմ յարը քանց քեզ չիչակ,
 Ջա՛ն, ծաղի՛կ, ջա՛ն, ջա՛ն: [10]

Երբեմն երգային նույն տիրույթում են երկու տարբեր բանաձևեր:

Վիճակի երգերին բնորոշ կրկնակ-բանաձևային նմուշներ գրառել ենք նաև Շիրակի մարզում կատարած դաշտային աշխատանքների ժամանակ: Հատկապես մանիներ երգելու ժամանակ բանասացները *մանի ասեմ* բանաձևից հետո ավելացնում էին *Ջան, վիճակ, ջան, ջան* կրկնատողը:

Մանի ըսեմ ու շարեմ բանաձևը, լինելով ճկուն միավոր շիրակյան խաղիկներում, երբեմն թույլ է տալիս փոփոխություն իր բանաձևային տիրույթում՝ *վիճակ ըսեմ ու շարեմ* փոփոխակով:

Վիճակ ըսեմ ու շարեմ,
Ջան, վիճակ, ջան, ջան,
Լցնեմ տոպրակն ու կարեմ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան: [9, էջ 420]

Անդրադառնանք վիճակի երգերից մի յուրահատուկ նմուշի, որը մեծ ժողովրդականություն է վայելում հատկապես Շիրակի տարածաշրջանում: Ալեքսանդրապոլում այս պարերգը, ենթարկվելով ծիսական փոխակերպման, կատարվել է հարսանիքի ժամանակ՝ որպես հարսի պար: Խոսքը *Ծաղիկս ունիմ* վիճակի երգի մասին է:

Ահավասիկ վիճակի երգը. [2, էջ 102]:

Չափավոր

Ծա-ռիս տա-կը մա-նի - շակ, ջան, գյու-լում ջան, ջան,

իմ յա - ռը քանց քեզ շի-շակ, ջան, ծա-ղիկ ջան, ջան:

Ծա-ռիս տա-կը մա-նի-շակ, ջան, գյու-լում, ջան, ջան,

իմ յա-ռըս քանց քեզ շի-շակ, ջան, ծա-ղիկ, ջան, ջան:

Ծա-ղիկ ու-նեմ ա - լա - յա, ջան, ծա-ղիկ ջան, ջան,

մե - ջը լի - քը լա - լա - յա, ջան, ծա-ղիկ, ջան, ջան:

Հստ Մ. Բրուսյանի՝ սա բուն ժողովրդական գեղջկական պարերգ է, որը հանդիպում է Հայաստանի տարբեր գավառներում [3, էջ 216]: Բավական է նշել, որ Կոմիտասի ժողովածուներում այս երգը հանդիպում է 12 տարբերակով [7, էջեր 276-279]:

Ելնելով այս երգերի մեղեդիական բազմազանությունից՝ վերստին կարելի է եզրակացնել, որ ժողովրդական ստեղծագործության մեջ տեքստի բանաձևային միավորների շնորհիվ պահպանվել է ոչ միայն կրկնատողերի միավորները, այլև հնարավորություն է ստեղծվել ազատ ստեղծագործական մոտեցում հանդես բերել մյուս տողերի եղանակավորման մեջ:

Երաժշտական և բանաստեղծական տեքստերի կապը հատկապես օրգանական է երգի առաջին տան մեջ, քանի որ հենց այստեղ է ձևավորվում երգի ամբողջական կառուցվածքը: Առաջին տան մեջ թեմատիկ բովանդակությունից բացի արտահայտվում է կառուցվածքային կազմակերպվածությունն ու ռճական կերպարայնությունը: Այն հիմք է ծառայում մնացած տների ձևավորման համար, որոնք, որպես կանոն, կառուցվում են առաջին տան օրինակով:



Այս առումով բավական հետաքրքիր է Հ. Ափինյանի ուսումնասիրությունը, որը նվիրված է վիճակի այս երգի 10 օրինակների համեմատական վերլուծությանը: Դրանք հիմնականում ձայնագրվել են Շիրակի գյուղերում և Գյումրիում [1, էջ 31]:

Ալեքսանդրապոլի հարսանիքներում ավանդաբար հնչող գեղջկական երգի այս հնավանդ նմուշը կատարվում է մեներգի ձևով, երբեմն փոխնիփոխ երգեցողությամբ, հաճախ նվարգարանային՝ դուդուկների կամ գուռնայի եռյակի մեկնաբանությամբ / մենանվագ գործիք, դամ, հարվածային՝ դափ կամ դիդլ/, սակավ լարավոր նվագարանների ուղեկցությամբ / թառ կամ քամանչա և որևէ հարվածային/՝ դանդաղ ու հանդիսավոր:

Ծիսապարին մասնակցում էին 7 ամուսնացած աղջիկ համարվող գույգեր՝ ձեռք ձեռքի բռնած: Պարը պարտադիր կատարվում էր շրջանի երեք պտույտով՝ վառվող մոմերի ուղեկցությամբ, որոնք պահվում էին և հետագայում վառվում առանձնահատուկ իրադրությունների՝ ծանր ծննդաբերության, հիվանդությունների կամ ընտանեկան նեղությունների դեպքում միայն [1, էջ 35]:



Հ. Ափինյանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դիտարկված բոլոր երգերում առկա է նույն կրկնակը և նույն բովանդակությունը, սակայն տարբեր են տների կառուցման ձևերը: Ըստ Ափինյանի՝ կան վանկաչափական կաղապարներ, որոնց մեջ բանաստեղծական յուրաքանչյուր ոտքին համապատասխանում է չորսով ավելի երաժշտական ռիթմական միավոր: Երաժշտական բաղադրիչի շնորհիվ պարային ռիթմական պատկերները իրենց են ենթարկում բանաստեղծական անհավասար տողերը: Այդ անհավասարությունները ընդհանրացվում են ամանակադրության օրենքով, հավասարատևության սկզբունքով: Վերջինս կայուն կրկնվող, տիպական և բնութագրական պարային կշռությապատկերի ապացույցն է: Բնորոշ ոտքերն են՝ մեծասար-մեծավերջ, մեծասար-անգայթ, համբույր-մեծավերջ [1, էջ 36]:

Նշենք, որ կենսունակության շնորհիվ հարսի այս պարը տևական ժամանակ կիրառվել է լենինականյան հարսանյաց հանդեսներում: Ավելին՝ իր մեծ ժողովրդականության շնորհիվ այն օգտագործվել է որպես գյումրեցի արհեստավոր վարպետների պար՝ Մկրտիչ Արմենի համանուն վիպակի հիման վրա 1970 թվականին նկարահանված «*Հեղինար աղբյուր*» ֆիլմում /ռեժիսոր՝ Ա.Մանարյան/: Այստեղ ընդհանրապես ծիսական բաղադրիչը համատեքստից դուրս է մնացել, փոխվել է նաև նկարագիրը, քանի որ երգվող տեքստային հատվածը դուրս է բերվել, և մնացել է պարը որպես ծանր ավանդական շուրջպար: Անշուշտ, սա ստեղծագործական մոտեցում է, որը կատարել է կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը՝ փորձելով ֆիլմում ստեղծել ավանդական քաղաքային տոնախմբության պատկեր: Պատահական չի ընտրվել այս ծիսական մեղեդին:

Վիճակի երգերի մեծ ժողովրդականությունը և մտերմիկ քնարականությունը հնարավորություն է տվել դրանք ընդգրկել նաև նախահարսանեկան պարտներում, որտեղ հիմնականում նորահարսի ընկերուհիները հարսանիքի նախորդ օրը փոքրիկ տոնախմբություն են կազմակերպել՝ առանձնահատուկ կենսուրախ մթնոլորտի մեջ:

Ժանրի նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հայ գրողները՝ ժողովրդական տոնախմբությունների մեջ ներառելով հատկապես վիճակի տեսարանները: Դրա բացառիկ դրսևորումը Հովհ. Թումանյանի «*Անուշ*» պոեմում Համբարձման տոնախմբության մեծակերտ նկարագրությունն են և այստեղ ծավալվող գործողությունները: 1912 թ. կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի համանուն օպերայում հնչելուց հետո, *Համբարձում յայլա* խմբերգը այնքան մեծ ճանաչում գտավ, որ այսօր բանահավաքչական աշխատանքների ժամանակ այն մատուցվում է որպես հին հայկական ծիսական երգ, մինչդեռ, տեղի է ունեցել կոմպոզիտորական ստեղծագործության ժողովրդականացման յուրօրինակ դրսևորում, ինչը բանահյուսության մեջ հանդիպում է, երբ երգը կորցնում է հեղինակային պատկանելությունը և դառնում բանավոր ավանդման նմուշ:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Շիրակի բանահյուսական ժառանգության մեջ վիճակի երգերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ակնառու կերպով նկատել հայ բանահյուսության մեջ բանաձևային դրսևորումների ինչպես կենսական հատկանիշները, այնպես էլ ժամանակի ընթացքում կրած ազդեցությունների առկայության պայմաններում բանաձևային միավորների կարևորագույն դերը:

Բուն ծիսական բանաձևային միավորները *Ջան, ծաղիկ ջան, Ջան վիճակ ջան, ջան, Ջան գյուլում, ջան, ջան* պահպանել են երգերի բնապաշտական արխայիկ նկարագիրը. կիզակետում զարնանամուտն է: Բանաձևը թույլ է տալիս, որ գեղջկական զգացողությունը ինչ-որ առումով պահպանվի նաև այլ երգերում: Եվ այդ բանաձևերի շնորհիվ ցանկացած խաղիկ կարող է ծիսականացվել որպես վիճակի երգ և հակառակը: Ինչպես նկատեցինք, հնագույն ծիսական համալիրից պահպանված *Ջան, ծաղիկ ջան* բանաձևը ավելի ուշ շրջանում վերափոխվել է:

Երաժշտական բաղադրիչը չի տուժել, որովհետև խաղիկում երկու դեպքում էլ վանկային նույն միավորներն են/վիճակ, գյուլում/: Հետևաբար, երգը դիտելի է որպես գործողություն, որն իրականացվում է կոնկրետ սոցիալական և մշակութային իրադրության մեջ: Ժանրային պատկանելիությունը բխում է գործողության բնույթից, տվյալ համայնքում ունեցած կարգավիճակից, և միայն դրանից հետո՝ արտահայտչական կամ կառուցվածքային հատկանիշներից: Սա նաև բացատրում է, թե ինչու տարբեր իրավիճակներում նույն տեքստը կարող է դասակարգվել տարբեր ժանրերի ներքո: Հետևաբար, տեքստ-համատեքստ համադրումը ժողովրդական երգում հանդիսանում է ոչ միայն ժանրի բացատրության գործիք, այլ հենց դրա առաջացման և փոխակերպման մեկնություն:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ափրիյան Հ. Հայ ավանդական երաժշտության խնդիրներ: Հոդվածների ժողովածու: Գյումրի: ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ հրատ., 2024: 168 էջ:
2. Բրուտյան Ա. Ռամկական մրմունջներ: Երևան: 1983:
3. Բրուտյան Մ. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն: Երևան: 1983:
4. Գրիգորյան Ռ. Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր: Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1970:465 էջ:
5. Թումանյան Մ. Հայրենի երգ ու բան, հ. 4, Չանգակ-97 հրատ.: Երևան: 2005: 432 էջ:
6. Խաչատրյան Ռ. Համբարձման երկուշաբթին պարերգի իմաստատեքստաբանական վերլուծության փորձ, Երևան, 1991, Լրաբեր հասարակական գիտությունների, Հ. 6, 87-94 էջեր:
7. Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ.2, Երևան: Հայաստան: 1965:
8. Մառիկյան Հ., Օրոր-ողբերգերը հայկական բանահյուսության մեջ/ գրական միջավայրի համատեքստում/, ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, N 1(24) 2021: 97-107 էջեր:
9. Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը: Երևան: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024, 640 էջ:
10. www.horovel.org/lalayan/horovel.nsf. (access: 10.09.2025)
11. <https://museum.am/songs/11.html> (access: 09.20.2025)

References

1. Apinyan, H. *Issues of Armenian Traditional Music. Collection of Articles* [Hay avandakan yerazhshtut'yan khndirner]. Gyumri, NAS RA Shirak Center for Armenian Studies Press, 2024, 168 p. (in Armenian)
2. Brutyan, A. *Rural Murmurs* [Ramkakan mrmunjner], Yerevan, 1983. (in Armenian)
3. Brutyan M. *Armenian Folk Musical Creativity* [Hay zhoghovrdakan yerazhshtakan steghsagortsutyun] Yerevan, 1983. (in Armenian)

4. **Grigoryan R.** *Armenian Folk Lullabies and Children's Songs* [*Hay zhoghovrdakan ororotsayin yev mankakan yerger*] Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 1970, 465 p. (in Armenian)
5. **Tumajyan, M.** *Songs and Words of the Homeland* [*Hayreni yerg u ban*] Vol. 4, Yerevan, Zangak-97 Press, 2005, 432 p..(in Armenian)
6. **Khachatryan, R.** An Attempt at a Semantic-Textual Analysis of the Hambardzum Monday Song [*Hambardzman Yerkushabtin parergi imastatekstabanakan verluts 'ut 'yan p 'vots '*], Vol. 6, Yerevan, 1991, 87–94pp .. (in Armenian)
7. **Komitas, Collected Works** [*Erkeri zhoghovatsu*] Vol. 2, Yerevan, Hayastan, 1965. (in Armenian)
8. **Matikyan H.** Lament-Lullabies in Armenian Folklore (in the Context of the Literary Setting) [*Ororoghbergerë haykakan banahyusut'yan mej / grakan mijavayri hamatekst'um*] *Scientific Works of the NAS Shirak Center for Armenian Studies*, No. 1(24), 2021, 97–107 pp. (in Armenian)
9. *Shirak: The Folkloric Culture of the Armenians* [*Shirak. Hayots' banahyusakan mshakuyt 'y*] Yerevan, Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, 2024, 640 pp.. (in Armenian)
10. – 11 /տե՛ս հայերեն գրականության ցանկում՝ in English/

Ընդունվել է / Received on: **20. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **30. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Հասմիկ Համլետի ՄԱՏԻԿՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի գիտաշխատող, ՇՊՀ-ի Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ hasvrej@mail.ru. / <https://ORCID.org/0000-0003-0032-5123>

Hasmik Hamlet MATIKYAN: PhD in Philology, Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, Gyumri Lecturer at the Chair of Foreign Languages and Literature of SUSH, Gyumri, RA, e-mail: hasvrej@mail.ru. [https:// ORCID.org/0000-0003-0032-5123](https://ORCID.org/0000-0003-0032-5123)

Հասմիկ Հայկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ արվ.գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ, էլ. հասցե՝ hasmik.har@mail.ru / [https:// ORCID.org/0000-0001-7756-4240](https://ORCID.org/0000-0001-7756-4240)

Hasmik Hayk HARUTHYUNYAN: PhD in Art, Associate professor, Senior Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, Gyumri e-mail: hasmik.har@mail.ru / [https:// ORCID.org/0000-0001-7756-4240](https://ORCID.org/0000-0001-7756-4240)

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
FOLKLORE STUDIES

ՀՏԴ՝ 793.3

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -153

ԿԼՈՐ ՊԱՐ-ՅԱԼԼԻ-ԳՅՈՎՆԴ-ՀԱԼԱՅ. ՀԱՅԿԱԿԱՆ, ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ
ՔՐԴԱԿԱՆ ՊԱՐԱՅԻՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԵՄԵՏԱԿԱՆ-ՏԵՍԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ
(ՄԱՍ I)

Հայարկի Գ. Անանյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անվտիմում

Նախաբան. Գյովնդը հայկական պարային մշակույթի ամենատարածված պարերից է, որն այսօր էլ պահպանում է իր շարունակականությունը: Այս պարատեսակը, սակայն, այլ անուններով հանդիպում է նաև քրդական և թուրքական պարային ավանդույթներում՝ որպես այդ ժողովուրդների ազգային պար: Հետազոտության նպատակն է պարզել գյովնդ-յալի-հալայ պարաձևերի առկայությունն ու ընկալումները հայերի, քրդերի և թուրքերի մշակույթում, ինչպես նաև բացահայտել դրանց կառուցվածքային գուգահեռներն ու առանձնահատկությունները: Մեթոդներ և նյութեր. Հետազոտությունն իրականացվել է պատմահամեմատական մեթոդի, բառարանների ուսումնասիրության և տեսանյութերի բովանդակային վերլուծության համադրմամբ: Քրդական և թուրքական տարբերակների կատարողական առանձնահատկությունները դիտարկվել են տեքստային և տեսադիտողական աղբյուրների հիման վրա (YouTube հարթակից): Վերլուծություն. Գյովնդ-յալի-հալայ պարաձևերի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև դրանք ձևավորվել են տարբեր մշակութային միջավայրերում և կրել են տեղային առանձնահատկություններ, սակայն իրենց էության մեջ նույն կառուցվածքային սկզբունքներ և իմաստը՝ շրջան, աղեղ, գունդ: Արդյունք. Գյովնդը, յալին և հալայը հոմանիշ բառեր են, նույնական են պար բառի հետ և երեք ժողովուրդների մոտ էլ ներկայացնում են շրջանով կատարվող տարբեր քայլերից կազմված համայնքային պարեր՝ պարզից բարդացող քայլերով, դանդաղից արագացող տեմպով:

Բանալի բառեր՝ գյովնդ, յալի-յալի, հալայ, շուրջպար, համայնքային պարեր, հայկական/քրդական/թուրքական պարային ավանդույթներ, կլոր պար:

Ինչպես հղել՝ Անանյան Հ., Կլոր պար-յալի-գյովնդ-հալայ. հայկական, թուրքական և քրդական պարային ավանդույթների համեմատական-տեսական դիտարկում ազգագրական նյութերի հիման վրա (Մաս I),// ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 153-166 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-153

ROUND DANCE–YALLI–GYOVAND–HALAY: COMPARATIVE-THEORETICAL OBSERVATION OF ARMENIAN, TURKISH, AND KURDISH DANCE TRADITIONS BASED ON ETHNOGRAPHIC MATERIALS (PART I)

Hayarpi G. Ananyan

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction. Gyovnd is one of the most widespread dance forms in Armenian dance culture, and it continues to be actively practiced today. This dance type, however, is also found under different names in Kurdish and Turkish dance traditions, serving as a national dance for these peoples.

The aim of this study is to identify the presence and perceptions of gyovnd–yalli–halay dance forms in Armenian, Kurdish, and Turkish cultures, as well as to reveal their structural parallels and distinctive features. **Methods and Materials.** The research was conducted using a combination of historical-comparative methods, dictionary studies, and content analysis of video recordings. The performative features of the Kurdish and Turkish variants were examined based on textual sources and visual materials (collected from YouTube). **Analysis.** A comparative study of gyovnd–yalli–halay dance forms shows that, although they developed in different cultural contexts and bear local characteristics, they share the same underlying structural principles and meaning—circle, arch, and round. **Results.** Gyovnd, yalli, and halay are synonymous terms, equivalent to the word “dance”, and in all three cultures, they represent communal dances performed in a circle, composed of steps ranging from simple to complex and progressing from slow to fast tempo.

Key words: gyovnd, yalli–yayli, halay, circular dance, community dances, Armenian /Kurdish / Turkish dance traditions, round dance.

Citation: Ananyan H. *Round Dance–Yalli–Gyovand–Halay: Comparative-Theoretical Observation of Armenian, Turkish, and Kurdish Dance Traditions Based on Ethnographic Materials (part I)* // "Scientific Works" SHCAS of NAS RA. V. 2(28). Gyumri. 2025: 153-166 pp.

DOI: 10.52971/18294316-2025.28.2-153

ՆԵՐՄԱՏՈՒԹՅՈՒՆ. Գյովնդը հայկական պարային մշակույթի ամենատարածված պարերից է, որն այսօր էլ շարունակում է իր գոյությունը և՛ քաղաքում, և՛ գյուղական համայնքներում: Գյովնդին զուգահեռ՝ տարբեր շրջաններում գործածվում են յալի, հալայ, կլոր և բոլոր պար անվանումները, որ առաջին հայացքից տարբեր պարեր են, բայց պարային նկարագրությունները ցույց են տալիս դրանց նմանությունները, նույնիսկ՝ նույնական լինելը:

Թուրքական և քրդական պարային ավանդույթներում նույնպես պահպանվել են նմանատիպ (գյովնդի կառուցվածքով և իմաստով) շրջանով կատարվող պարեր, որոնք կրկնում են հայերի մեջ տարածված նույն անվանումները՝ գյովնդ, յալի, հալայ: Այս ուսումնասիրությունն ուղղված է դրանց ընդհանուր հատկանիշների ու տարբերությունների վերհանմանը՝ հիմնվելով ազգագրական, տեքստային և տեսադիտողական նյութերի համադրության վրա: Հետազոտությունը նպատակ ունի պարզելու՝ արդյո՞ք գյովնդ-յալի-հալայ անուններն ու պարաձևերը ներկայացնում են տարբեր պարատեսակներ, թե տարբեր մշակույթներին բնորոշ վերամշակմամբ նույն երևույթն են, և արդյո՞ք դրանք պարանուններ են, թե շուրջպար իմաստն են կրում՝ միաժամանակ վերլուծելով դրանց կառուցվածքային, պարաքայլային և իմաստային առանձնահատկությունները հայերի, թուրքերի և քրդերի մոտ:

Թուրքերեն աղբյուրների թարգմանության և մեկնաբանությունների հարցում աջակցել է թուրքագետ Հրաչուհի Էլոյանը, ում շնորհակալություն ենք հայտնում:

Հայկական պարագիտության անդրադարձները գյովնդին

Գյովնդի վերաբերյալ առաջին մանրամասն պարագիտական նկարագրությունն ու սահմանումը՝ որպես պարատեսակ, նախ տվել է Սրբուհի Լիսիցյանը, իսկ ավելի ուշ՝ նաև Ժենյա Խաչատրյանը: Լիսիցյանը գյովնդը կապում է գունդ, շրջան բառերի հետ, որն ունի նաև «կլոր, մարդկանց բազմություն», ամբողջություն իմաստները: Պարագետը հիմնականում նկարագրում է գյովնդ-գյոնդերը իրենց բարբառային տարբեր երանգներով, մինչդեռ թաղալու-յալի-հալայները հիշատակում է միայն հպանցիկ՝ նշելով, որ դրանք տարբեր շրջաններում բազմազան անվանումներով պարերգեր են՝ խաղ, մանի, յալի, գյոնդ (կամ գովնդ), թաղալու, ջանիման և այլն [28, էջեր 112, 172-174, 319, 332: 29, էջեր 36-39, 47-48, 149]:

Այսպիսով՝ Լիսիցյանը, ակնարկային, բայց փաստում է, որ դրանք տարբեր անուններով նույն երևույթն են բնութագրում: Լիսիցյանն իր աշխատանքում գյովնդները սահմանում է որպես պարատեսակ, և առանձնացնում է հատկապես առավել տարածված ձևերը, որոնք դանդաղ և ծանր պարեր են, հասնում են չափավոր արագության, բայց թոնոցի չեն դառնում և կառուցված են 6 կամ 8 պարաքայլից: Նրանց հիմնական կառուցվածքային սկզբունքը պայմանավորված է «երկու գնալ, մեկ դառնալ» (երկու քայլ դեպի աջ և մեկ քայլ դեպի ձախ) կամ «երկու գնալ, երկու դառնալ» քայլային համադրությամբ [29, էջ 122], իսկ մեղեդին հիմնականում ներառում է 4/4, 2/4 և 6/8 չափերը [28, էջեր 175-176]:

Միաժամանակ Լիսիցյանը նկարագրել է նաև այլ գյովնդներ՝ տարբերվող պարաքայլերով ու տեմպերով, որոնք նրա հիմնական դասակարգման մեջ չեն տեղավորվում, այդպիսիք են՝ «երեք գնալ, մեկ դառնալ», «չորս գնալ, մեկ դառնալ», միայն աջ տեղաշարժվող և այլ գյովնդները [28, էջեր 302-315, 386, 394: 29, էջեր 122-133]: Այս բոլոր պարերը կատարվում են շրջանով, տարբեր քայլերով ու մեղեդիներով՝ պարերգերի շրթայական հաջորդականությամբ, և կարող են տևել մի քանի ժամ: Թոնոցի դառնալուց հետո սկսվում էր մեկ այլ պարի դանդաղ մասը, որն էլ իր հերթին էր աստիճանաբար արագանում և վերածվում թոնոցու [28, էջեր 286-288]: Յուրաքանչյուր նոր պար շատ տարբեր չէր նախորդից, փոխվում էին ոտնաթաթը դնելու կամ բարձրացնելու ձևերը՝ ոտնահարվածով, կրունկը բարձրացնելով, ծունկը շեշտված ծալելով, թռչելով [28, էջեր 175-178, 185, 207, 210-212]:

Ժողովուրդը գյովնդների այդ տարբեր ձևերը տարբերակելու համար բնութագրող տարբեր անուններ է տվել, օրինակ՝ *ծանդր գյոնդ*, *ծանդր գյոնդ կոտորոցի*, *շորորվելով*, *թագավորի գյոնդ*, *վերվերի* կամ *թոնոցի* և այլն [7, էջեր 28, 43: 28, էջեր 197-198, 207, 239-240, 247]:

Վերվերի, *թամգարա կամ քոչարի* և մյուս պարերը հետազոտողը ներկայացնում է որպես առանձին պարանուններ, սակայն նրանց ղեկավարողը կոչվում է ընդհանուր՝ *գյոնդբաշի*, *յալլիբաշի* կամ *հալայբաշի*, ինչը վկայում է, որ տարբեր անվանումներով պարերը ընկալվել են որպես մեկ շուրջպարի՝ գյոնդի, յալլիի, հալայի մաս [28, էջեր 79, 366, 408-409]:

Թեպետ, Լիսիցյանը նկարագրում է անընդմեջ կատարվող պարերի ամբողջ շարք, որոնք ամփոփվում են յալլի-հալայ-գյովնդ անվանումների ներքո, բայց նրա հիմնական շեշտադրումը պարատեսակն է, և բացակայում են գյովնդի շուրջպար իմաստի մասին վերլուծությունն ու եզրակացությունները: Հավանական է, որ նա՝ ինքն էլ, այդ ամբողջությունը չի դիտարկել որպես միասնական միավոր, ինչի հետևանքով հետագա ուսումնասիրողները նույնպես գյովնդը դիտարկել են պարատեսակ, ոչ թե շուրջպարին համարժեք երևույթ՝ անտեսելով դրա բազմազան ձևերը:

Ժենյա Խաչատրյանը շարունակում է Լիսիցյանի մոտեցումը՝ գյովնդը ներկայացնելով որպես դանդաղ, ծանր պարատեսակ, որով սկսվել են խնջույքները [7, էջեր 32, 119]: Ի տարբերություն Լիսիցյանի՝ Խաչատրյանը չի նկարագրում դանդաղից արագացող, բարդացող գյովնդներ, հիմնականում դանդաղ տեսակներն են, բացառություն է Ջավախքի արագ քայլեր ունեցող *կլոր պարը* [7, էջեր 118-119]:

Խաչատրյանի մոտ հանդիպում ենք գյովնդ տերմինի երկակի կիրառության: Մի դեպքում համայնքային պար է՝ բոլորի մասնակցությամբ՝ առանց կարգավիճակային, սեռային կամ տարիքային սահմանափակման [7, էջ 118], իսկ մեկ այլ դեպքում՝ մասնակիցների հատուկ կազմով գյովնդներ են, օրինակ՝ հարսանեկան *մոմ խաղցնելու գյովնդը*, որ պարել են միայն ամուսնացած զույգերը, կամ Պարատան սկիզբը ազդարարող գյովնդները, որին չեն մասնակցել այրիներն ու բախտը փոխածները [7, էջեր 32, 54-55, 186]:

Նույն խնդիրը նկատվում է նաև *իրեք վողկ* պարի դեպքում: Խաչատրյանը նշում է, որ Ջավախքի համայնքային բոլոր պարերը ընդհանրական *կլոր պար* են կոչվում, որի կազմում յուրաքանչյուրն ունի իր պարաքայլին բնորոշ անունը՝ *իրեք վողկ*, *մէ վողկ*, *էրգու վողկ*, *յէդ ու առաջ* և այլն: Սրանք պարզից բարդացող, դանդաղից արագացող, թոփքների ու կքանիստերի վերածվող տարբեր պարեր են, որոնց ընթացքում փոխվում է մասնակիցների կազմը. պարզ տարբերակներին մասնակցում է ամբողջ համայնքը, իսկ բարդ պարերի ժամանակ շարքում մնում են հիմնականում երիտասարդ տղամարդիկ: Այսպիսով՝ կլոր պարը կարելի է դիտարկել իբրև տարբեր պարերի համախումբ՝ շուրջպար:

Հակասությունն առաջ է գալիս, երբ նա մե՛կ նույնացնում է *գյովնդը* *իրեք վողկի* հետ, մե՛կ *գյովնդը*՝ *կլոր պարի* հետ: Նախ հետազոտողը գյովնդը սահմանում է իբրև պարատեսակ, կլոր պարը՝ շուրջպար, իսկ *իրեք վողկը*, ըստ նկարագրության, կլոր պարի կազմում ինքնուրույն պարանուն է՝ հստակ մեղեդիով ու քայլով: Այդուհանդերձ, նա *իրեք վողկը* նույնացնում է գյովնդի հետ՝ դիտարկելով որպես դանդաղ համայնքային պար: Սա կարող է պայմանավորված լինել նրանով, որ, *իրեք վողկի* նկարագրությունը համընկնում է գյովնդ պարատեսակի սահմանման հետ՝ շուրջպարի կազմում կատարվող առաջին պարերից է,

ունի դանդաղ տեմպ, մասնակցում է ամբողջ համայնքը: Խաչատրյանը նաև նշում է, որ այն կատարվում է «երկու գնալ, մեկ դառնալ» կառուցվածքով, այսինքն՝ երեք քայլով, ինչից էլ առաջացել է պարի անվանումը՝ *իրեք վողկ* [8, էջեր 62-63]:

Եթե այս մոտեցումն ընդունենք, ապա ստացվում է, որ գյովնդը ևս պետք է դիտարկվի շուրջպարի կազմում որպես առանձին պար և ոչ թե որպես պարատեսակ, ինչպես սահմանում է հեղինակը: Կամ էլ հակառակը՝ *իրեք վողկը* պետք է դիտարկվի որպես պարատեսակ, ինչը, սակայն, հակասում է դաշտային տվյալներին, ըստ որոնց՝ այն պարանուն է:

Մյուս կողմից էլ, եթե գյովնդը պարատեսակ է և նույնացվում է կլոր պարի հետ, ապա անտեսելով, որ *կլոր պարը* շուրջպար բառի նշանակությունն ունի, նույնպես պետք է սահմանվի որպես պարատեսակ, կամ գյովնդն ու կլոր պարը պետք է ընկալել շուրջպար՝ սխալ համարելով գյովնդի պարատեսակ սահմանումը: Մեր գնահատմամբ՝ գյովնդը նույնանում է ոչ թե *իրեք ողկի*, այլ՝ *կլոր պարի* հետ՝ շուրջպար իմաստով, որպես տարբեր պարերի ընդհանրական անվանում:

Բացի այդ, Խաչատրյանը նկարագրում է նաև իր սահմանած գյովնդ պարատեսակի հատկանիշներով պարեր («երկու գնալ, մեկ դառնալ» կամ «երկու գնալ, երկու դառնալ» կառուցվածքով, համայնքային, թոնոցի չդարձող), օրինակ՝ *ծառ փնջելու պար, քոչարի* և այլն [7, էջեր 18-19, 42, 178, 351, 361-362], որոնք դիտարկում է որպես ինքնուրույն պարեր՝ դուրս թողնելով գյովնդ պարատեսակի շրջանակից: Սա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ դրանց անվանումներում բացակայում է գյովնդ բառը: Կարելի է նկատել, որ Ժ. Խաչատրյանը գյովնդը սահմանում է որպես պարատեսակ, բայց նրա իսկ նկարագրություններում այն ընկալվում է պարանուն իմաստով: Կամ Խաչատրյանի մտապատկերում վերջնական հստակեցված չէ՝ գյովնդը պարատեսակ է, թե պարանուն, կամ՝ ընդամենն առաջնորդվել է բանասացների բնորոշումներով: Իսկ թաղալու-յալի-հալայ ձևերին Խաչատրյանը գրեթե չի անդրադառնում:

Այսպիսով՝ Լիսիցյանը նկարագրում է գյովնդի բազմազան տեսակներ, սակայն սահմանում է այն որպես դանդաղ, թոնոցի չդարձող, «երկու գնալ, մեկ դառնալ» կամ «երկու գնալ, երկու դառնալ» կառուցվածքով պարատեսակ, իսկ Ժենյա Խաչատրյանը Լիսիցյանի նման սահմանում է իբրև պարատեսակ, բայց հիմնականում նկարագրում է որպես պարանուն:

Գյովնդ-թաղալու-յալի-հալայ-կլոր պարերը հայ պարագիտության մեջ կամ քիչ են քննարկվում, կամ ընկալվում են որպես առանձին պարաձևեր, քանի որ կրում են տարբեր անուններ, թեև դրանք ունեն միևնույն բնութագիրը՝ սկսվում են դանդաղ, հասնում զարգացման, բարդանում և ներառում տարբեր քայլաձևեր: Հետազոտական սահմանումներում դրանք սահմանափակվում են դանդաղ, չարագացող, «երկու գնալ, մեկ դառնալ» կառուցվածքով, սակայն աղբյուրների համադրությունը ցույց է տալիս, որ իրականում դրանք արտահայտում են շուրջպարի ընդհանրական իմաստ և չունեն դանդաղ կամ արագ ձևերի սահմանափակում:

***Թուրքական պարագիտության անդրադարձները
գյովնդ, յալի, հալայ և բար պարաձևերին***

Բար, յալի-յալի, հալի-հալայ, գյովնդ-գյոնդ պարերը լայն տարածում ունեն նաև թուրքերի և քրդերի մոտ, որոնցից յուրաքանչյուրն այս պարը համարում է իր ազգայինը, իր ինքնության մասը:

Թուրքական պարագիտության մեջ թուրքերին բնորոշ ընդհանրական պարի մասին չի խոսվում, քանի որ չկա մշակութային միատարրություն, դրանք ավելի շատ տարածաշրջանային են, հանդիպում են նույնիսկ միայն մեկ գյուղին բնորոշ պարեր [34, էջ 1]: Ելնելով այդ հանգամանքից՝ պարերը դասակարգվում են յուրաքանչյուր շրջանին բնորոշ պարանունների համաձայն: Այսպես՝ Հյուսիսարևելյան Անատոլիայում (որի կազմում են նախկին հայաբնակ շրջաններ և գյուղեր) տարածված ընդհանուր պարը *բարն* է, տեղ-տեղ էլ՝ *յալլին*, ուստի դա համարվում է *բարի և յալլիի շրջան* [32, էջ 210]: Կենտրոնական և Հարավարևելյան Անատոլիան *հալայի* շրջանն է [30 էջ 64]:

Յալլի-հալայ- բար-գովենդները դիտարկվում են պար բառի հոմանիշ և միևնույն երևույթի՝ շրջանով համայնական պարի, տարբեր տեղական անվանումներ, - «*Որպես խաղեր կամ պարեր՝ հալայը, բարը, յալլին և հորան, ըստ էության, նույնն են*» [31, էջ 28: 30, էջ 65: 32, էջ 258: 34, էջ 28]: Սկսվում են պարզ քայլերից (հիմնականում 6 քայլ), հետզհետե արագանում և վերածվում թոնոցիների, հետո հանգստանալու համար տեմպը նորից դանդաղում է [27, էջեր 233-234, 237: 32, էջ 205]: Դանդաղ պարերը, ինչպես մեզ մոտ, կոչվում են *ժանր հալայ, ժանր բար, ժանր գովենդ* [31, էջ 88]: Տարածված են 2/4 և 4/4, 10/8, 5/8 և 9/8, 6/8 չափերը [35, էջ 75]: Բար-յալլի-հալայները ներառում են տարբեր անվանումներով պարեր, օրինակ՝ *մեկ ոտք, երկու ոտք, կամ Նարե, Թեմիր աղա* և այլն [35, էջ 74: 30, էջ 61]: Ուղեկցվում են և՛ երգով, և՛ երաժշտական գործիքներով [32, էջեր 206, 210, 310: 30, էջ 57]:

Քրդական պարային ժառանգության վերաբերյալ գիտական նյութը համեմատաբար քիչ է, բայց վերջին տարիներին այդ բացը մասամբ լրացվում է օնլայն հարթակում, որտեղ ակնհայտ է գովենդ-յալլի-հալայների կենդանի ներկայությունը: Հիմնական անդրադարձը յալլի, հալայարկե, դիլանի և գովենդ պարերի վերաբերյալ է [36], որոնք ունեն նույն բնութագիրը, ինչ թուրքական համանուն պարերը [27, էջ 233]:

Ըստ էության՝ թուրքական և քրդական պարային ուսումնասիրություններում բար-յալլի-հալայ-գովենդ պարերը միևնույն հատկանիշներով են նկարագրվում, երկու ժողովուրդների ընկալումները, պարին տված իմաստները նույնն են:

Ելնելով ներկայացված նյութից՝ կարելի է եզրակացնել, որ յալլի, հալայ, գովնդ, բար, պարանունները քրդերի և թուրքերի պարամշակույթում չեն ներկայացնում մեկ կոնկրետ պարաձև կամ պարատեսակ, այլ գործածվում են որպես շուրջպարի ընդհանրական անվանումներ, որոնք ընդգրկում են տարբեր պարեր ու մեղեդիներ: Ընդհանուր առմամբ՝ պարային կառուցվածքը, տեմպային զարգացումը և իմաստային շեշտադրումները հիմնականում համընկնում են:

Գյովնդ-գյոնդեր

Անդրադառնալով նաև *գյովնդ-գյոնդ, յալլի-յալլի, պար-բար, կլոր պար-բոլոր պար և հալայ* պարաձևերին՝ նրանց առանձնահատկությունները խորությամբ բացահայտելու և համադրությունները շոշափելի դարձնելու նպատակով՝ օգտագործելով նաև քրդական և թուրքական աղբյուրները:

Հայկական աղբյուրներում հանդիպող գյովնդ, գոնդ, գյոնդ, գովենդ, գովնդ անունով պարերը բազմազան են: Բաֆֆին նկարագրում է *յալլի կամ գուանդ*, որի ժամանակ պարում են և՛ կանայք, և՛ տղամարդիկ՝ երգ ասելով և զանազան շարժումներով [25, էջ

423]: Սա *համայնական պարի* օրինակ է, երբ *յալի*, *գուանդ* անունները շուրջպար իմաստով են և ներառում են զանազան պարեր:

Արձակցիների մոտ գյոնդը ծանրից մինչև չափավոր տեմպի հասնող համայնքային պարերի շարք է [1, էջ 69, 150]: Թոհչքի չվերածվող, բայց տարբեր քայլերով այս նկարագրությունը համահունչ է հայ պարագետների սահմանած գյովնդ պարատեսակի հիմնական առանձնահատկություններին:

Հայկական աղբյուրներում հանդիպում են նաև թոնոցի դարձող գյովնդ-յալիներ, որոնք ամբողջացնում են այդ պարերի նկարագիրը:

Թոնոցի դարձող Գյոնդի մասին արժեքավոր, և թերևս, ամենաընդգրկուն մի տեղեկություն է տալիս Հ. Քաջբերունին: Ըստ նրա՝ *գյոնդը* մի քանի ժամ տևող հասարակական *կլոր պար է*, որը ներառում է 12 տարբեր շարժումներով և մեղեդիներով պարեր՝ սկսելով ամենաձանր պարից, և աստիճանաբար վերածվելով թոնոցու: 12 տեսակներից յուրաքանչյուրն ունի իրեն բնութագրող անունը՝ *ծանր գյոնդ*, *ծունկ կոտրուկ*, *մայմո*, *երեք ոտ*: Դանդաղ ու պարզ պարերին մասնակցում է ամբողջ համայնքը, սակայն 8-րդ պարից սկսած, մեղեդին դառնում է ավելի արագ և տեխնիկապես բարդ: Այդ պատճառով պարողների շարքերը նոսրանում են, իսկ վերջին երկու պարերում մնում են միայն երիտասարդ տղաները, քանի որ կատարվում էր այնպիսի արագությամբ, որ շատերը վայր էին ընկնում [26, էջեր 159, 167-168]:

Սովետական և Բասենում *գյովանդ* նշանակում էր կլոր պար: Սա նույնն է, ինչ Քաջբերունու նկարագրածը՝ դանդաղից արագացող [4, էջեր 487ա-488: 10, էջ 379]: Այս օրինակներում գյովնդը միատեսակ պար չէ. ներառում է իրար հաջորդող, նաև արագացող տարբեր պարերգեր, այսինքն՝ ընդհանրական անվանում է:

Լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը գովանդը բացատրում է որպես *շրջան կապել*, որը քրդերեն *gō-շրջան* և *band-կապել* բառերից է կազմված [38]: Հայ-քրդերեն բառարանում նույնպես թարգմանվում է շուրջպար [24, էջ 275]: Իսկ *գուանդ* բառը բացատրվում է ժողովուրդ, բոլորակ, շրջան, կամար, մեղունների պարս իմաստներով [17, էջ 581]:

Այս ամբողջը ցույց է տալիս, որ *գյոնդ*, *գյովնդ* անվանումը շրջան, կլոր բառն է, որի մեջ ամփոփվում են տարբեր անուններով տարատեսակ պարեր: Հնարավոր է, որ նախկինում միասնաբար կատարվող 12 կամ այլ քանակով պարերի համալիր գյովնդ-գյոնդը, հետագայում փոփոխություն է կրել ու դրա մեջ ամփոփվող պարերը սկսել են տրոհվել և առանձին գոյատևել՝ որպես ինքնուրույն միավորներ: Իսկ գյովնդ-գյոնդ անվանումը պահպանել են պարային շարանը սկսող ամենապարզ պարերը՝ որոնք համալիր գյոնդի դեպքում էլ գյոնդ անվանումն էին պարունակում՝ օրինակ *Ծանդր գյոնդ*, *Ծանդր գյոնդ կոտրոցի*: Ըստ երևույթին, այն գյովնդները, որ ընկալվում են որպես պարանուն, աստիճանաբար կորցրել են իրենց հավաքական բնույթը:

Թուրքական, քրդական աղբյուրներում գյոնդ, գոնդ ձևեր չեն հանդիպում, փոխարենը *գովենդ*, *գոբանդ*, *գյովենք* շրջանով կատարվող պարերգային ձևերն են [32, էջ 258]: Թուրք հետազոտողները քիչ են անդրադառնում գովենդին, որն ավելի հաճախ ներկայացվում է որպես պարանուն, հազվադեպ՝ շուրջպար իմաստով [35, էջ 74]:

Քրդական պարի հետազոտողները գովենդին համարժեք են համարում *դիլանին*, *հալպարկեն*, *հալայր* և ընկալում են շուրջպար, կլոր, շրջան իմաստներով: Տեմպերը կարող են լինել 2/4, 4/4, 3/4, 6/8, 9/8 չափով [22, էջեր 100, 153]: «Մա շղթայական պարերի մի խումբ է՝ տարբեր կառուցվածքային շարժման համակարգերով, որոնք հայտնի են տարբեր անուններով: Բոլոր պարերը կատարվում են շրջանաձև, զուգահեռաբար կենդանի երաժշտության հետ» [27, էջ 99]: Այսինքն՝ քրդերի մոտ գյովնդը ընդհանրական եզր է՝ շուրջպար իմաստով, որը ներառում է տարբեր պարեր: Մինչդեռ թուրքերի մոտ այն ավելի հաճախ դիտարկվում է որպես պարանուն:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ առկա նյութերը հաստատում են՝ ինչպես հայերի, այնպես էլ թուրքերի ու քրդերի մոտ, գյովնդ-գովենդ-գյովենք պարերի առկայությունը, որոնք տարբեր պարերից կազմված երգով կամ երաժշտական գործիքով ուղեկցվող, դանդաղից արագի հասնող պարեր են և ունեն շուրջպար իմաստը:

Ցալի-յալի

Հայկական աղբյուրներում կան *յալի տալ*, *յալի բաշի*, *յալի խաղալ*, *յալի ձները*:

Աշտարակում և Էջմիածնում *յալի-յալին* ունի շուրջպար իմաստ [16, էջեր 93, 103, 169]: Այդ մասին են վկայում նաև Պերճ Պողոսյանի նկարագրած յալիները, որոնք մեղեդիների փոփոխություններով ու տարբեր քայլերով բազմազան պարեր են՝ սկսած ընդհանրական պարերից մինչև միայն կանանց¹, կամ միայն տղամարդկանց յալիներ² [20, էջեր 367, 528], երգվող յալիներից մինչև երաժշտական գործիքներով ուղեկցվող յալիներ³ [20, էջեր 510, 532]:

Արցախում *յալին* ունի տասնյակի հասնող տարատեսակներ և ընկալվում է հայ ազգային պարերի համահավաք անուն, պար բառի հոմանիշ [11, էջեր 11-12, 148-149]: Նույն կառուցվածքային սկզբունքն ունի, ինչ Աշտարակի յալիները՝ դանդաղից դառնալով թնոցի, որի ընթացքում փոխվում է մասնակիցների կազմը:

Այսինքն՝ Աշտարակում և Արցախում *յալի* անվանումը գործածվում էր որպես բոլոր տեսակի պարերի համընդհանուր անվանում՝ անկախ մեղեդուց, քայլաձևից կամ տեմպից: Հատկանշական է, որ պարը սկսվում է խառը կազմով, սակայն շարժումների բարդանալու հետ պարողների կազմը փոփոխվում է՝ ինչպես Քաջագնդում նկարագրած գյոնդում:

Ատրպետը նկարագրում է ամբողջ համայնքի կատարմամբ թնոցիներով յալի [3, էջ 346]: Որոշ դեպքերում էլ յալին ոչ թե շուրջպար բառի բնորոշումն է, այլ պարանուն է՝ իր պարաքայլերով ու մեղեդիով, որոնց անդրադարձել է Ն. Շամամյանը [18, էջեր 243-248]:

Ցալի-յալի-եալին մեկնաբանվում է որպես թուրքերեն բառ՝ շուրջպար, կլոր պար նշանակությամբ, որի ժամանակ պարագլուխը մի տուն եալի է ասում, և պարողները կրկնում են [23, էջ 532: 13, էջ 548]: Կոմիտասը ենթադրում է, որ թուրքերեն *եալ* բառից է

¹ «Չատկին Ձիու խաղը վերջացավ, հերթն ընկավ աղջկերանցը. դափ ու զուռնան ածեցին ու յալիբաշի (պարեզուի) խանումը վեր կացավ տեղիցը ... Ցալին տաքացրին ու ծանր ու բարակ սկսեցին տմբորմբայով, լնկնկալով պտիտ գալ»:

² «Կոխ պրծնիլը, որ վերջացավ, յալին սարքեցին ու ազապ տղեքն իրանց սրտի ուզած մի յալի խաղացին: Հենց են թռչում, որ կասես ոտները գետինը չի առնում»:

³ «Ազապ տղեքանց մենձ բաժինը դափ ու զուռնի քամակիցը գնացին, մնացող ավելի մոտիկ բարեկամները հավաքվեցին, Սոսին քցեցին յալիբաշի, իրանք էլ կուռն ընկած՝ «ելե» ասելով խաղացին»: «Լելիի յալին զուռնիցն ավելի ա ճոներ ընկնում, ազապների քեֆը բերում»:

էայլին, նշանակում է աղեղ, բոլորակ, իսկ *էայլին*՝ նշանակում է *շրջանաձև, աղեղնաւոր*: Երկրորդ նշանակությունը զսպանակաւորն է, որն էլ ունի ճոճման և երերման գործողության գաղափարը [9, էջ 55]: Թուրքերեն-հայերեն բառարանում յալիի արմատական ձևերն են՝ *yay- աղեղ, զսպանակ, yaylı-զսպանակավոր, alay-թափոր, գորագունդ* [21, էջեր 11, 503, 504]:

Այսպես՝ յալի-յալիները նշված ժողովուրդների մոտ *պար* կամ *շուրջպար* բառի հոմանիշներ են՝ ընդգրկելով դանդաղից արագացող տարբեր պարեր: Այդուհանդերձ, սրանք որոշ դեպքերում գյովնդների նման ընկալվում են նաև ինքնուրույն պարանուն:

Հալայ-հալի

Սրբուհի Լիսիցյանը շատ քիչ է անդրադարձել հալայներին, բայց նշում է, որ դրանք գյովնդի, թաղալուի նման են, երգելով են պարում, իսկ երգողը հալայբաշին (պարագլուխ) է, կամ խմբի մի կեսն ասում է, մյուս կեսը՝ դարձնում [29, էջեր 36-39]:

Գամիրքում հիշատակվում է տղամարդկանց կողմից կատարվող երկու տեսակի հալայ՝ մեկը *խոնչա պարացնելիս*, մյուսը՝ փեսան ու ընկերներն են կատարում՝ *հողալո ջան երգելով* [5, էջ 120,124]: Հալայը բացատրվում է շուրջպար, կլոր պար իմաստով: Չնայած քայլերը նկարագրված չեն, բայց կարելի է ենթադրել, որ տարբեր իրավիճակներում հալայը տարբեր պարաքայլերով են կատարել ու երգվող տեքստերով:

Ակնեցիների մոտ հալայը՝ շուրջպարը, համայնքային խառը կազմով պար է. «*Ակնայ պարերը երկու տեսակ էին կլոր-պար, կամ շուրջ-պար (Հալայ քաշել) գոր կը պարէին երիտասարդ-երիտասարդուհի խառն, ճթնուկ մատով (ձկոյթ) իրարու միացած, շղթայ կազմած, գլխաւորութեամբ պարագլուխին (պար – պաշի)՝ որ մետաքս թաշկինակ մը ձեռքը, կը դեկավարէր պարը*» [19, էջ 496]:

Մալիսասեանցը հալայը բացատրում է որպես պարի տեսակ՝ *հալայ քաշել*, հալայ պարը պարել [14, էջ 11]: Հալայները հայկական աղբյուրներում բացատրվում են շուրջպար իմաստով, բայց ի տարբերություն գյովնդի ու յալիի, մեծապես նկարագրված են ծանր, դանդաղ հալայներ, իսկ թոնոցի դարձողներ մեզ չեն հանդիպել: Քրդական աղբյուրներում հալայների մասին տեղեկություններ քիչ են հանդիպում: Դրանք հիմնականում արձանագրված են համացանցում ամկա տեսանյութերում, մինչդեռ գրավոր աղբյուրներում դրանց մասին գրեթե չի խոսվում: Տեսանյութերի համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք նույնն են, ինչ թուրքական հալայները: Իսկ թուրքական աղբյուրները հալայները նկարագրում են ինչպես յալիները. պարերը սկսվում են դանդաղ, և ընթացքում նրանց ռիթմիկ կառուցվածքը աստիճանաբար արագանում է: Հալայ բառը, որ հայտնի է նաև Halay, Haley, Alay, Aley անուններով, առաջացել է *ալայ* բառից, նշանակում է *մարդկանց խումբ, համայնք, գունդ կամ գորագունդ* [32, էջեր 229-241]: Հալայները հիմնականում ունեն 2/4 և 6/8, 4/4, 5/8, 9/8 երաժշտական չափ [33, էջ 39], կատարվում են կանանց ու տղամարդկանց խառը խմբերով [35, էջ 73], ներառում են տարբեր պարեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անունը [32, էջ 231]: *Հալայը* տարբեր պարաձևերի ընդհանուր անվանումն է՝ հաճախ փոխարինելով *պար* բառին [30, էջ 65]:

Մեր ունեցած տվյալները թույլ են տալիս ասել, որ հալայը *պար* բառի հոմանիշն է, որը հայերն ընկալում են պարանուն, իսկ թուրքերն ու քրդերը՝ շուրջպար իմաստով:

Կլոր պար – Բոլոր պար

Թուրքական կամ քրդական ավանդույթներում կլոր կամ բոլոր պար անվանումներով պարեր չեն հանդիպում, մինչդեռ հայերի մեջ շուրջպարը բնութագրվում է կլոր, բոլորակ պար ձևերով, ինչպես Ջավախքի օրինակում [7, էջեր 343-344]: Բանահյուսական պարերգային տեքստերում հաճախ հանդիպում են *կլոր կամ բոլոր պարեր*, որոնք երգվել են տարբեր տեմպերով՝ համապատասխանեցնելով պարաքայլերին [10, էջ 317, 323: 29, էջ 145-159]: Նոր Նախիջևանում *կլոր պարերը* խմբական, պարերգային բնույթ են կրում՝ 7/8, 2/4 և 6/8 չափով մեղեդիներով [6, էջ 139]: Բոլոր կամ կլոր պարի օրինակ է *Պյուլոր գրոնդը*, որը մինչև երեկո պարում էին [2, էջեր 69, 70]: Այսինքն այս պարերը կազմում էին մի քանի ժամ տևող տարբեր պարերի շարան, որտեղ, ենթադրվում է, նույն պարը չէին կրկնում անընդմեջ:

Պար-բար

Ըստ Աճառյանի՝ պար նշանակում է *շուրջ, շրջան*, նաև *մեղվախումբ, խումբ, բարերգ* [3, էջեր 54-55]: Մալխասեանցը պար բառի իմաստները բացատրում է այսպես՝ *շրջան, բոլորակ, շրջան կազմել, մարդկանց խումբ* [15, էջ 76]: Կոմիտասն էլ է պար բառը մեկնաբանում շրջան իմաստով⁴: Նա *եայլի ու պար* բառերը հոմանիշներ է դիտարկում, քանի որ երկուսն էլ նշանակում են *աղեղ, բոլորակ* [9, էջ 55]:

2. Հովհաննիսյանը պար բառը հոմանիշ է համարում հունարեն *χορός* բառի հետ: Երկուսն էլ նշանակում են խումբ, շրջան կամ շարան, շարք և վերաբերում են խմբային, խմբերգային իրար հաջորդող գործողություններին [12, էջեր 115-123]: Ելնելով պար բառի իմաստներից՝ այն կարելի է սահմանել որպես շրջանով անընդհատ կատարվող տարբեր խմբերգերի և պարերի շարան՝ շուրջպար:

Թուրք պարագետները նշում են, որ *բարերը* տարածված են հիմնականում Հյուսիսարևելյան Անատոլիայում՝ Էրզրումում, Կարսում, Երզնկայում, Բայբուրթում, Արդահանում, Մուշում, Վանում (նախկին հայաբնակ շրջաններում) [32, էջեր 204-224]: *Բար* նշանակում է շամանական թմբուկ, միասնականություն, իսկ *bar, barça, baru* բառերը նշանակում են համայնք, որի հիմքը կարգն ու համաչափությունն է [33, էջ 33]:

Էրզրումում *բար բռնել* տերմինն օգտագործվում է բոլոր խաղերի, պարերի համար՝ անկախ դրանց տեսակից» [33, էջ 36]: Դրանք դանդաղ սկսվող և աստիճանաբար արագացող՝ կենդանություն ստացող շրջանով կատարվող տարբեր պարերի համախումբ են, որ ներառում են առանձին տղամարդկանց, կանանց և ընդհանրական պարեր: Բարի կազմում ամեն պար իր անունն ունի, ասենք՝ *բաշբար, սարհոշ բար, հոշբիլագիկ, թամ-գարա, քոչերի* և այլն [32, էջեր 206-211, 210-214]:

Հետաքրքիր է, որ *բար* տեսակի պարերն այսօր էլ պահպանվում են Հյուսիսարևելյան Անատոլիայում ապրող քրդերի կողմից, սակայն *բարերը* գրեթե չեն արտացոլվում քրդական գիտական գրականության մեջ, որտեղ շուրջպարի ընդհանրացումները հիմնված են *հալ-պարկե, դիլանի, հալայ և գովենդ* ձևերի վրա: *Բարը* հանդիպում է ժամանակակից տեսա-հարթակներում՝ որպես կենդանի մշակույթի օրինակ, և բնորոշ է միայն այս շրջանի քրդերին, բայց ոչ Իրաքի ու Իրանի քրդերին [37]: Մա ցույց է տալիս, որ այն չի հանդիսանում

⁴ «Պար նշանակում է շրջան, կլոր, պտոյտ, բոլորակ: ...Պարն ունի եւ մի այլ ընդհանրացած անուն՝ եայլի»:

քրդերի ընդհանուր պարային ժառանգության ձև: Միևնույն ժամանակ հնարավոր է՝ հայկական մշակույթի պար ձևի ազդեցությունն է, սակայն այս ենթադրությունը պահանջում է լրացուցիչ հետազոտում:

Ելնելով այս նյութից՝ կարող ենք ասել, որ *բարերը* նույն բնութագրերն ունեն, ինչ գյովնդ-յալի-հալայները, այսինքն՝ բարը ոչ թե պարանուն է, այլ տարբեր պարերը միավորող ընդհանրական անվանում՝ շուրջպար իմաստով, մինչդեռ հայկական մշակութային պար է անվանվում յուրաքանչյուր պար, իսկ շուրջպարն արտահայտում է ավանդական կլոր պար իմաստը:

Այսպիսով՝ պարզ է, որ բար, յալի, հալայ, գովենդ անվանումները տարբեր լեզվամշակութային միջավայրերի արդյունք են, բայց փոխազդեցությունների պատճառով երեք ժողովուրդների մոտ էլ տարածված են, և ըստ էության, դրանք բոլորն էլ մատնանշում են նույն երևույթը՝ կլոր կառուցվածքով, հավաքական երգով ուղեկցվող պար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Մեր ուսումնասիրության ընթացքում արձանագրեցինք, որ գյովնդ, յալի, հալայ, բար, կլոր պար և հարակից անվանումներով շուրջպարային ձևերը առկա են ոչ միայն հայերի, այլև քրդերի և թուրքերի պարային ավանդույթներում: Բոլոր դեպքերում էլ դրանք պար բառի հոմանիշ են, կառուցված են պարզից բարդացող քայլերից, դանդաղից արագացող երաժշտական չափերից: Այս պարերը միայն շարժում չեն, այլ նաև խոսք են՝ երգ, պարերգ: Բացատրվում են նույն իմաստներով՝ շրջան, կլոր, համայնք, մեղուների պարս, ունեն նույն երաժշտական չափը: Այսինքն՝ շուրջպար են, որ ներառում են տարբեր պարերի շարք, որոնք մեկը մյուսի ետևից շարունակաբար կատարվում են:

Հայ պարագիտության մեջ գյովնդ-յալի-հալայները հաճախ դիտարկվում են որպես առանձին՝ ընդհանրություն չունեցող պարատեսակներ, թեև գրականության մեջ առկա են բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են դրանց նույնականությունը: Ի տարբերություն այս մոտեցման՝ թուրքական և քրդական պարագիտության մեջ դրանք դիտվում են որպես հոմանիշ, միևնույն իմաստով ու կառուցվածքով, բայց տարբեր անվանումներով ու տարբեր ոճերով:

Ըստ մեր նյութերի՝ գյովնդ-յալիները հայկական մշակութային երկու կերպ են ընկալվում՝ որպես առանձին պարատեսակներ և որպես պարանուն, իսկ հալայները հիմնականում ընկալվում են պարանուն: Մեր դիտարկմամբ՝ գյովնդն ու հարակից անվանումները ոչ թե առանձին պարեր են կամ պարատեսակներ, այլ տարբեր լեզվամշակութային արտահայտություններով շուրջպար կամ պար նշանակությունն ունեն:

Այս հոդվածը ներկայացնում է գյովնդ-յալի-հալայ պարաձևերի տեսական և համեմատական դիտարկումները: Հետազոտության երկրորդ մասում կներկայացվեն դրանց ներկա ընկալումները, փոփոխությունները, վերաիմաստավորումները և սոցիալ-մշակութային գործառնությունները:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Ավագյան Ս.** *Արմակ* // ՀԱԲ 8: Երևան: ՀՍՍՀ ԳԱ: 1978: 188 էջ:
2. **Աճառյան Հ.** *Հայերեն արմատական բառարան, հ. 4:* Երևան, ԵՀ հրատ.: 1979: 676 էջ:
3. **Առապետ Երկեր:** Երևան: Հայպետհրատ: 1964: 433 էջ:

4. **Դարբինյան Ա.** ֆոնդ, *Մոկսի ազգագրական նյութերը*: Գործ 11, Հարսանիք, ամուսնություն: ՀԱԻ արխիվ: 1962: 42 թերթ:
5. **Թեմուրճյան Վ.** *Գամիրքի հայերը* // ՀԱԲ 1: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1970: 204 էջ:
6. **Լյուլեճյան Գ.** *Նոր Նախիջևանի հայ ժողովրդական երգերն ու եղանակները* // ՀԱԲ 2: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1971: 230 էջ:
7. **Խաչատրյան Ժ.** *Ծխական պարերը հայոց հախատալիքների համատեքստում*: Երևան: «Գիտություն» հրատ.: 2014: 381 էջ:
8. **Խաչատրյան Ժ.** *Պարը հայոց մեջ*: Հոգևածների ժողովածու: Եր.: Էդիթ Պրինտ հրատ.: 2013: 276 էջ:
9. **Կոմիտաս** *Հոգևածներ և ուսումնասիրություններ*: հավաքեց՝ Ռ. Թերլեմեզյան: Յերևան: Պետհրատ.: 1941: 200 էջ:
10. **Հակոբյան Գ.** *Ներքին Բաննի ազգագրությունը և բանահյուսությունը*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1974: 460 էջ:
11. **Հարությունյան Լ.** *Նշխարներ Արցախի բանահյուսության*: Երևան: ԵՀ հրատ.: 1991: 400 էջ:
12. **Հովհաննիսյան Հ.** *Թատրոնը միջնադարյան Հայաստանում: Պատմության և տեսության հարցեր*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1978: 356 էջ:
13. **Մալխասեանց Ս.** *Հայերեն բացատրական բառարան, հ. 1*: Երևան: Հայպետհրատ: 1944: 609 էջ:
14. **Մալխասեանց Ս.** *Հայերեն բացատրական բառարան, հ. 3*: Երևան: Հայպետհրատ: 1944: 615 էջ:
15. **Մալխասեանց Ս.** *Հայերեն բացատրական բառարան, հ. 4*: Երևան: Հայպետհրատ: 1945: 647 էջ:
16. **Նազարյան Ա.,** *Էջմիածնի և Աշտարակի բանահյուսությունից* // ՀԱԲ 9: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 175 էջ:
17. *Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 1*: Երևան: ԵՀ հրատ.: 1979: 1142 էջ:
18. **Շամաձյան Ն.** «Յայլի» պարը: Պատմաազգագրական ուսումնասիրության փորձ // Սյունիքը՝ կրթության և մշակույթի օջախ: Երևան, «Արմավ» հրատ.: 2019: 243-249 էջեր:
19. **Պարսամեան Մ., Քեչեան Ա.** *Ակն և Ակնցիք*: Փարիզ: compatriotic association of Eguen: 1952: 1061 էջ:
20. **Պռոշյան Պ.** *Երկեր*: Երևան: «Լույս» հրատ.: 1982: 559 էջ:
21. **Պօհնալեան Ա.** *Թրքերեն-հայերեն բառարան*: Իսթանբուլ: «Յակոբ Արեան» տպարան: 1981: 525 էջ:
22. **Ջառուրի Ն.** *Քրդական ժողովրդական երգարվեստը*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ: 1976: 180 էջ:
23. **Սարգսյան Ա.** *Հարաբաթի բարբաթի բառարան*: Երևան: «Էդիթ Պրինտ» հրատ.: 2013: 846 էջ:
24. **Սիբանդով Ս., Չազան Ա.** *Հայ-քրդերեն բառարան*: Երևան: Հայպետհրատ: 1957: 352 էջ:
25. **Բաֆֆի** *Երկերի ժողովածու, հ. 4*: Երևան: Հայպետհրատ: 1963: 528 էջ:
26. **Քաջբերունի Հ.** *Ճանապարհորդական նկատողություններ*: Երևան: «Մուղնի» հրատ.: 2003: 544 էջ:
27. **Shahmohammadi Sh.** *Comparative Analysis of Kurdish Rhythms And Dance Movements* // Library Progress International: Vol. 44, no. 6: Jul.–Dec. 2024, 231–238 pp.
28. **Лисициан С.** *Старинные пляски и театральные представления армянского народа, том 1*. Ереван. Изд. Академии наук Армянской ССР. 1958. 612 с..
29. **Лисициан С.** *Старинные пляски и театральные представления армянского народа, том 2*. Ереван. Изд. Академии наук Армянской ССР. 1972, 501 с..
30. **And M.** *Türk Köylü Dansları. İstanbul*: Yapı Kredi Yayınları. 2024, 135 s.
31. **Arslan M.** «Türk Halk Oyunlarından Gabalar Üzerine Bir İnceleme: Gaziantep ve Kilis Yöreleri Örneği». (Yüksek Lisans Tezi. Gaziantep Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Türk Dili ve Edebiyatı Anabilim Dalı. 2018, 218 s.
32. **Demirsipahi C.** *Türk Halk Oyunları*. Ankara: Türkiye İş Bankası Kültür Yayınları. 1975, 424 s.
33. **Doğan A.** *Erzurum'da oyun folklori* // Sanat Dergisi № 20. 2012, 25-40 ss..
34. **Doğan A.** «Erzurum İli Halay Oyunları Üzerine Bir İnceleme». (Doktora Tezi, Atatürk Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Türk Dili ve Edebiyatı Ana Bilim Dalı 6 Erzurum, 2011, 135 s.).
35. **Eroğlu T.** *Türkiye'deki Halk Oyunlarının Temel Özellikler, Tür ve Dağılım Bakımından İncelenmesi* // She Journal of Academic Social Sciences 42(42). January. 2017 67-78 ss.
36. <https://thekurdishproject.org/history-and-culture/kurdish-culture/kurdish-dance/> ղիտվել է՝ 24.09.2025:
37. <https://www.kurdistan24.net/en/story/385653> տեղադրված է՝ 22.09.2021, ղիտվել է՝ 24.09.2025:
38. <https://www.facebook.com/tengiz.siyabendi/posts/pfbid02e2P7fPbJ1pzjMWVsS9GPw3WT7Chpv2Y6mCEajcXqpg7Q8iRQACmufCSJUM86FFpol> տեղադրված է՝ 28.02.2024, ղիտվել է՝ 24.09.2025:

References

1. **Avagyan, S.** Archak [Archak]. HAB 8. Yerevan: AS ArmSSR. 1978, 188 p. (in Armenian)
2. **Acharian, H.** Armenian Etymological Dictionary [Hayeren armatakan bararan, hator 4]. Vol. 4, Yerevan. YU Press. 1979, 676 p. (in Armenian)
3. **Atrpet, Works** [Erker]. Yerevan. Haypethrat Publishing House. 1964, 433 p. (in Armenian)
4. **Darbinyan, A.** Fund, Ethnographic Materials of Moks [Moksi azgagrakan nyuter@]. File 11, Wedding, Marriage. HAI Archive. 1962, 42 sheets. (in Armenian)
5. **Temurchyan, V.** The Armenians of Gamirk [Gamirki hayer@] // HAB 1. Yerevan. AS ArmSSR Press. 1970, 204 p. (in Armenian)
6. **Lyulejyan, D.** Armenian Folk Songs and Melodies of Nor Nakhijevan [Nor Nakhijevani hay zhoghovrdakan yergern u yeghanaknery] // HAB 2. Yerevan: AS ArmSSR Press. 1971, 230 p. (in Armenian)
7. **Khachatryan, Zh.** Ritual Dances in the Context of Armenian Beliefs [Tsisakan parer@ hayots havataliqneri hamatekstum]. Yerevan: "Gitutyun" Publishing. 2014, 381 p. (in Armenian)
8. **Khachatryan, Zh.** Dance among Armenians: Collection of Articles [Par@ hayots mej. Hodvacneri zhoghovatsu]. Yerevan: Edit Print. 2013, 276 p. (in Armenian)
9. **Komitas, Articles and Studies** [Hodvacner yev usumnasirutyunner]. Compiled by R. Terlemezian. Yerevan: State Publishing House: 1941, 200 p. (in Armenian)
10. **Hakobyan, G.** Ethnography and Folklore of Inner Basen [Nerkin Baseni azgagutyuny yev banahyusutyuny]. Yerevan: "Hayastan" Publishing. 1974, 460 p. (in Armenian)
11. **Harutyunyan, L.** Fragments of the Folklore of Artsakh [Nshkharner Artsakhi banahyusutyun]. Yerevan: Yerevan State University Press. 1991, 400 p. (in Armenian)
12. **Hovhannisyan, H.** Theatre in Medieval Armenia: Issues of History and Theory [Tatron@ mijnadaryan Hayastanum: Patmutyan yev tesutyun harcer]. Yerevan: AS ArmSSR Press. 1978, 356 p. (in Armenian)
13. **Malkhaseants, S.** Explanatory Dictionary of the Armenian Language, Vol. 1 [Hayeren batsatrankan bararan, hator 1]. Yerevan: Haypethrat. 1944, 609 p. (in Armenian)
14. **Malkhaseants, S.** Explanatory Dictionary of the Armenian Language, Vol. 3 [Hayeren batsatrankan bararan, hator 3]. Yerevan: Haypethrat. 1944, 615 p. (in Armenian)
15. **Malkhaseants, S.** Explanatory Dictionary of the Armenian Language, Vol. 4 [Hayeren batsatrankan bararan, hator 4]. Yerevan: Haypethrat. 1945, 647 p. (in Armenian)
16. **Nazaryan, A.** From the Folklore of Ejmiatsin and Ashtarak [Ejmiatsni yev Ashtaraki banahyusutyunits] // HAB 9. Yerevan: AS ArmSSR Press. 1975, 175 p. (in Armenian)
17. New Dictionary of the Armenian Language [Nor baragirk haykazean lezvi, hator 1]. Vol. 1. Yerevan: YU Press. 1979, 1142 p. (in Armenian)
18. **Shamamyán, N.** "Yayli" Dance: An Attempt at a historical-ethnographic Study ["Yayli" par@: Patmaazgagrakan usumnasirutyun pordz] // In Syunik: A Center of Education and Culture. Yerevan: "Armav". 2019, 243–249 pp. (in Armenian)
19. **Parsamean M., Kechean, A.** Akn and Its People [Akn yev Akntsiq]. Paris: Compatriotic Association of Eguen. 1952, 1061 p. (in Armenian)
20. **Proshyan, P.** Works [Erker]. Yerevan: Luys. 1982, 559 p. (in Armenian)
21. **Pohjalyan Father Aristakes Vrd,** Turkish–Armenian Dictionary [Trkeren-hayeren bararan]. Istanbul: "Hakob Abean" Printing House. 1981, 525 p. (in Armenian)
22. **Jauari, N.** Kurdish Folk Song Art [Krdakan zhoghovrdakan yergarvest@]. Yerevan: AS ArmSSR Press. 1976, 180 p. (in Armenian)
23. **Sargsyan, A.** Dictionary of the Karabakh Dialect [Gharabaghi barbari bararan]. Yerevan: "Edit Print". 2013, 846 p. (in Armenian)
24. **Siabandov S., Zazan, A.** Armenian–Kurdish Dictionary [Hay-krderen bararan]. Yerevan: Haypethrat. 1957, 352 p. (in Armenian)
25. **Raffi,** Collected Works, Vol. 4 [Yerkeri zhoghovatsu, hator 4]. Yerevan: Haypethrat. 1963, 528 p. (in Armenian)

26. **Kachberuni, H.** *Travel Notes [Chanaparhordakan nkatoxtutunner]*. Yerevan: “Mughni”. 2003, 544 p. (in Armenian)
27. **Shahmohammadi, Sh.** *Comparative Analysis of Kurdish Rhythms And Dance Movements* // Library Progress International: Vol. 44, no. 6: Jul.–Dec. 2024, 231–238 pp. (In English)
28. **Lisitsian, S.** Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People, Vol. 1 [*Starinnie plyaski i teatralnie predstavleniya armyanskogo naroda, tom 1*]. Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR. 1958, 612 p. (in Russian)
29. **Lisitsian, S.** Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People, Vol. 2 [*Starinnye plyaski i teatralnie predstavleniya armyanskogo naroda, tom 2*]. Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR. 1972, 501 p. (in Russian)
30. **And, M.** Turkish Peasant Dances [*Türk Köylü Dansları*]. Istanbul: Yapı Kredi Publications. 2024, 135 p. (in Turkish)
31. **Arslan, M.** A Study on Gabalar Among Turkish Folk Dances: The Case of Gaziantep and Kilis Regions [*Türk Halk Oyunlarından Gabalar Üzerine Bir İnceleme: Gaziantep ve Kilis Yörelere Örneği*]. (Master’s Thesis. Gaziantep University, Institute of Social Sciences, Department of Turkish Language and Literature. 2018, 218 p.) (in Turkish)
32. **Demirsipahi, C.** Turkish Folk Dances [*Türk Halk Oyunları*]. Ankara: Türkiye İş Bankası Cultural Publications. 1975, 424 p. (in Turkish)
33. **Doğan, A.** Game Folklore in Erzurum [*Erzurum’da oyun folklori*] // Art Journal, № 20. 2012, 25–40 pp.. (in Turkish)
34. **Doğan, A.** A Study on the Halay Dances of Erzurum Province [*Erzurum İli Halay Oyunları Üzerine Bir İnceleme*]. (PhD Dissertation. Atatürk University, Institute of Social Sciences, Department of Turkish Language and Literature, Erzurum, 2011, 135 p.). (in Turkish)
35. **Eroğlu, T.** An Examination of the Basic Features, Types, and Distribution of Folk Dances in Turkey [*Türkiye’deki Halk Oyunlarının Temel Özellikler, Tür ve Dağılım Bakımından İncelenmesi*] // The Journal of Academic Social Sciences 42(42). January. 2017, 67–78 pp.. (in Turkish)
36. – 38 /տե՛ս հայերեն գրականության ցանկում/

Ընդունվել է / Received on: **18. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **25. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայարփի Գուրգենի ԱՆԱՆՅԱՆ՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ լաբորանտ, Երևան, ՀՀ
Էլ. huughe ananyanhg@gmail.com / ORCID.org/0009-0008-7147-4015

Hayarpi Gurgen ANANYAN: Senior Laboratory Assistant at the Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA
e-mail: ananyanhg@gmail.com / ORCID.org/0009-0008-7147-4015

ԿԱՐՍ-ՇԻՐԱԿԹԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ¹

Էսթեր Հ. Խենյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Մույն ուսումնասիրությունը նվիրված է կոնկրետ տարածքային ընդգրկում ունեցող մականուններին: Ուսումնասիրության մեջ փորձ է արվել կարս-շիրակյան մականունները ստորաբաժանել ըստ հիմնական տարատեսակների՝ ելնելով դրանց իմաստաբանական ուղղվածությունից, ինչպես նաև հիմնական բնութագրիչներից: Դիտարկման առանձին խնդիր են դարձել մականունների առաջացման պատճառահետևանքային պայմանները, ինչպես նաև կառուցվածքային տիրապետող սխեման: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող (անտիպ) Կարս-Շիրակի տարածաշրջանը ներկայացնող մականունների հիման վրա: Հետազոտության ժամանակ ուշադրության են առնվել հայ և ռուսական լեզվաբանական, ազգագրական և բանագիտական ուսումնասիրությունների արդյունքները: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական և մասամբ պատմաաշխարհագրական մեթոդներ: Վերլուծություն. Կարս-շիրակյան տարածաշրջանի բանավոր ավանդույթի ինքնատիպ դրսևորումներից մեկը մականունն է, որը հասարակության անդամների անձնանվանական բանաձևերին զուգահեռ ակտիվ կերպով ստեղծվել և շրջանառվել է: Ի տարբերություն անձնանունների, որոնք ուսումնասիրվող տարածաշրջանում վերջին երկու հարյուրամյակի ընթացքում հիմնականում հանդես են եկել եռաբաղադրյալ բանաձևային կազմով (անուն, հայրանուն, ազգանուն), մականուններն անհատի ինքնությունը բացահայտող լրացուցիչ բանաձևի դեր են ունեցել: Արդյունքներ. Մականունների քննությունը ցույց է տալիս կարս-շի-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 25RG-6B114 ծածկագրով նախագծի շրջանակում: Ձեկուցումը կարդացվել է «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» 12-րդ միջազգային գիտաժողովում:

րակյան տարածաշրջանի հասարակության սոցիալական վիճակը, սովորությունները, փոխհարաբերությունները, պատմական գլոբալ փոփոխությունները 19-րդ դարավերջում և 20-րդ դարում: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ մականունները կազմել են կարս-շիրակյան տարածաշրջանի և հատկապես Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ազգաբնակչության կյանքի ու կենցաղի անբաժան մասը՝ անփոխարինելի հմայք հաղորդելով անհատի անձնականմանը՝ այն լրացնելով ինքնատիպ փաստերով և նրբերանգներով:

Բանալի բառեր՝ *մականուն, անձնանուն, անհատ, ավելորդ անուն, բանաձև, հավաքածու, բանավոր ավանդույթ, սովորույթ:*

Ինչպես հղել. Խեմչյան Է. *Կարս-շիրակյան տարածաշրջանի մականունները և դրանց բնութագրիչները*, // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28): 167 - 176 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.2-167

NICKNAMES OF THE KARS-SHIRAK REGION AND THEIR CHARACTERISTICS ²

Ester H. Khemchyan

Institute of Archeology and Ethnography NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: This study is devoted to nicknames having a specific territorial coverage. The study attempts to subdivide the Kars-Shirak nicknames according to their main varieties, based on their semantic orientation as well as their fundamental characteristics. A separate issue of consideration became the causal conditions of nickname formation, as well as the dominant structural pattern. **Methods and materials:** The study is based on nicknames representing the Kars-Shirak region, stored in the archive of the Institute of Archaeology and Ethnography NAS RA (unpublished). During the research, the results of Armenian and Russian linguistic, ethnographic, and folkloric studies were taken into account. The study employed historical-comparative and partially historical-geographical methods. **Analysis:** One of the distinctive manifestations of the oral tradition of the Kars-Shirak region is the nickname, which was actively created and circulated parallel to the personal naming formulas of community members. Unlike personal names, which in the studied region over the past two centuries have mainly appeared in three-component formulaic composition (first name, patronymic, surname), nicknames have played the role of an additional (surplus) formula revealing an individual's identity. **Results:** The examination of nicknames reveals the social status, customs, relationships, and historical global changes of Kars-Shirak region society in the late 19th and 20th centuries. The study also shows that nicknames constituted an integral part of the life and everyday existence of the population of the Kars-Shirak region and especially the city of Alexandropol-Gyumri-Leninakan, imparting irreplaceable charm to individual naming by supplementing it with distinctive facts and nuances.

² The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-6B114)

Key words: *nickname, personal name, individual, additional name, formula, collection, oral tradition, custom.*

Citation. Khemchyan E. *Nicknames of the Kars-Shirak Region and their Characteristics*, // “Scientific Works” of the Shirak Center for Armenological Studies of NAS RA, Gyumri, 2025. V. 2 (28), 167-176 pp.. DOI:10.52971/18294316-2025.28.2-167

Ն Ա Խ Ա Բ Ա Ն . Հայ հասարակության մեջ մականունները մեծ տարածում են ունեցել: Պատմական Հայաստանի տարբեր տարածաշրջաններում մականվանը տարբեր անվանումներ են տվել, որոնց հիմքում նույն իմաստն է ընկած: Մականունը մեծ մասամբ դիտարկվել է որպես «ավել անուն» [1, էջ 119], «ածական» [1, էջ 13] կամ «փուտ անուն» [2, էջ 1543], որը անհատի բուն անունից գատ, բնորոշել է նրա պակասությունը, ֆիզիկական և հոգեկան թերությունը, ընդգծված տարբերությունը հասարակության մյուս անդամներից և այլն: Յուրաքանչյուր գավառ կիրառել է իր բարբառային տարբերակը, օրինակ՝ Լոռիում այն «ելվել անըմ» [12, էջ 205], Արցախ-Սյունիք տարածաշրջանում «փոթ անում» [11, էջ 715], իսկ Տավուշում «Փուտ անուն» բառակապակցությունն է, որի հիմքում նույնպես ընկած է արատավորության, թերության գաղափարը: «Փուտ անունը» մեծ կիրառություն է ունեցել նաև Արարատյան և Թիֆլիսի բարբառներում [7, էջ 82]: Կարս-Շիրակ տարածաշրջանում «մականուն» [2, էջ 955] բառին զուգահեռ օգտագործվել է նաև թուրքերեն «լաղապ», «լաղաբ» (lakap) բառը [14, էջ 378], որը թարգմանաբար նշանակում է մականուն:

Իրենց ժանրային տեսակով մականունները մտնում են ասոցիաբանական բանահյուսության մեջ՝ որպես անձանվանական բանաձևեր: Մականունները կարճառոտ, պատկերավոր, բնութագրական ու այլաբանական իմաստով ձևակերպումներ են, որոնք բացահայտում են անհատի ֆիզիկական, մտավոր, հասարակական հատկանիշները: Կարս-Շիրակ տարածաշրջանի մականունների մեջ առաջնահերթությունը պատկանում է Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքին: Հին Գյումրու մականունների մեջ պահպանվել է արհեստավորական քաղաքի միջավայրը, բնակիչների բնավորությունը, փոխհարաբերությունները, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, կենցաղն ու սովորույթները, վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Այդ ամենն ինքնատիպորեն ծաղրի, ձեռք առնելու, կատակաբանության միջոցով վերածվել է թեմավոր խոսքի և մականունբանաձևի: Այդ մականունների մեջ ողջ Շիրակն է իր անկրկնելի հմայքով և դիպուկ խոսքին տիրապետելու կարողությամբ: Իրենց ընդգրկուն, իմաստաբանական, տեղեկատվական լայն հնարավորություններ ունեցող մականունները բազմակողմանի ուսումնասիրության մեծ ասպարեզ են ապահովում բանագետների, ազգագրագետների և լեզվաբանների համար: Շիրակի մականունները կոլեկտիվ ստեղծագործության արդյունք են և կոլեկտիվ սպառման նյութ: Մականունը ծնող և սնող միջավայրում էլ լայն շրջանառության մեջ է դրվել և մականվանակիր անձին ուղեկցել ողջ կյանքում:

Բառագանձը, որ օգտագործվել է մականունների ստեղծման ընթացքում Կարս-Շիրակի խոսվածքի 19-րդ դարավերջ և 20-րդ դար ժամանակահատվածի պատկերն է ներկայացնում: Քննության առնված նյութերը ցույց են տալիս, որ Կարս-Շիրակի խոսվածքի լեզվական հնարավորություններով ստեղծվել են հյութեղ, արտահայտիչ, սարկաստիկ և երգիծական պատկերներ, որոնց կրողները կոնկրետ և ճանաչելի անհատներ

են՝ իրենց դրական և բացասական կողմերով [6, էջեր 415-444: 9, էջեր 306-329]: Եվ այդ միջավայրում յուրաքանչյուր մականուն-բանաձև դարձել է դրական կամ բացասական կերպար, օրինակ՝ Փշող Համո, Պոլոզ Մուկուչ, Ջղեր Խաչիկ, Ծիտրո Տիգրան, Կոռո Արտաշ, Կոռունկ, Լոբի Օնիկ, Թիփի Լևոն, Կենդանի արձան և այլն:

Անվանագիտությունը մականուն տերմինը քննության է առնում տարբեր կողմերից: Լեզվաբան Տիգրան Ավետիսյանը մականուն տերմինը կապում է անհատի և նրան շրջապատող մարդկանց փոխհարաբերության հետ, երբ վերջիններս այդ անհատի բնորոշ որևէ հատկանիշին համապատասխան մականուն են տալիս, որը մեծ մասամբ կապված է արտաքինի, ներքինի, հասարակական վիճակի և հասարակության մեջ ունեցած դիրքի հետ [3, էջ 214], օրինակ՝ Երկան Ալեք, Չոփու Թաթոս, Խելառ Աշո, Յարթար Մանուկ, Խուժան Մելիք և այլն:

Հայ բանահյուսական ավանդույթին բնորոշ է նաև մականուններ տալ բնակավայրերին և նրանց բնակիչներին, օրինակ՝ Ուտոդ-խմոդ այգեձորցիք, // Նրանց նման են չինըրեցիք, // Քոռ ու քաչալ չորըթնեցիք, // Ղոնախ խոփ տվող դրդեցիք [5, էջ 172] և այլն: Տեղավայրը բնորոշող մականունները միևնույն ժամանակ տարածվում են նաև բնակիչների վրա, և երբ ասվում է «Լոթի-փոթի գյումրեցի» (№ 1(4375) [9, էջ 500]), ապա բնորոշումը կերպաստեղծ հատկություն ունի և հավասարապես տարածվում է թե՛ բնակչի և թե՛ բնակավայրի վրա:

Վերլուծելով ռուսական տեղանվանական մականունները՝ ռուս բանագետ Կարտաշևան գտնում է, որ որոշ մականուններ ստեղծվել են զուտ տեղեկատվության նպատակով և գիտելիքներ են հաղորդում մականունակիրների բնակավայրի մասին (գյուղ, քաղաք և այլն) [13, էջեր 143-144]: Այս պարագայում մականվանը կցվող իրապատում գրույցը, զվարճախոսությունը, իրոք, իր սյուժեի մեջ պարունակում է նաև տեղավայրի, պատմության, կենցաղի, սովորույթների, հավատալիքների մասին տեղեկատվություն: Հետևաբար բնակավայրային մականունների տիպը ևս լրացրել է հայերին և Հայաստանին բնորոշ մականունների տեսակների շարքը:

Պարույր Բարսեղյանի հավաքածուն

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պահվող Կարս-Շիրակ տարածաշրջանների ժողովրդական բանահյուսության բնագրերը: Տարածաշրջանը ներկայացնող տպագիր ժողովածուներում մականունների ժանրի նյութերը խիստ սակավաթիվ են, հիմնական նյութը ձեռագիր վիճակում գտնվում է արխիվային ֆոնդերում (FFI: 7473-7678, Ն. Նիկողոսյան, Մ. Թամրազյան): Մականունային ամենամեծ հավաքածուն սիրող-բանահավաք Պարույր Բարսեղյանի՝ 1960-ական թվականներին Լենինական քաղաքում գրառած մականուններն են (ՀԱԽԱԲ FFIV: 2045-2876, FFVI: 6404-6435 ֆոնդեր):

Մականունները մինչ օրս ակտիվորեն կենցաղավարում են կարս-շիրակյան տարածաշրջանում և առավելապես Գյումրի քաղաքում: Գյումրի քաղաքի մականունային ավանդույթը Պ. Բարսեղյանը բնորոշել է այսպես. «Այդ քաղաքի բնակչությունն ունեցել է և շարունակում է ունենալ այն սովորությունը, որ իր համաքաղաքացուն կցում է շատ ժամանակ զարմանալի բնորոշ կամ թնավոր մի ավելորդ անուն»:

Պ. Բարսեղյանը ծնվել և մեծացել է Ալեքսանդրապոլում, սովորել է առևտրական դպրոցում, անձամբ ճանաչել է բոլոր մականվանակիրներին, ծանոթ է եղել քաղաքի անցուղարձին, համաքաղաքացիների պատմություններին, մասնակցել է բոլոր նշանակալից իրադարձություններին: Իմացությունների լայն շրջանակը և ընկերների ու բանասացների շրջապատը բանահավաքին հնարավորություն են տվել հավաքել և ի մի բերել ժողովրդական բանահյուսության բազմաժանր նյութերը: Պ. Բարսեղյանն իր հավաքչական գործունեությունը սկսել է՝ նպատակ ունենալով գրառել Շիրակ աշխարհի և հատկապես Գյումրի քաղաքի բանահյուսությունը, սակայն շուտով նա հասկացել է, որ Շիրակում բնակվում են ոչ միայն շիրակցիներ, այլև կարսեցիներ, ախալքալաքցիներ, էրզրուցիներ և Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառներից գաղթած հայեր, որոնց բանավոր խոսքը ճոխ է, իսկ բանահյուսական ժանրերը հարուստ և ինքնատիպ, որոնք նույնպես կարիք ունեն հավաքման: Եվ նրա հավաքչական գործունեության սահմաններն ընդարձակվել են:

Գյումրիում մականուն են շնորհել ոչ միայն տոհմիկ գյումրեցիներին, այլև եկվոր ազգաբնակչությանը, որոնց ներկայությունը նոր երանգ է հաղորդել սրամիտ գյումրեցիների խոսքին: Բանահավաք Պ. Բարսեղյանի հավաքածուի նյութերի մեծ մասը ներկայացնում է 19-րդ դարավերջում և 20-րդ դարասկզբում Գյումրիում ապրած մարդկանց մականունները, օրինակ՝ Լախանի քոքենք, Լոպազ Մարգար, Խնգազդենց Մուկուչ, Կավկազ Օնիկ, Կացին Նիկոլ, Ջաջուռցի Արշակ և այլն: Քանի որ Պ. Բարսեղյանը մականունները գրառել է 20-րդ դարի 60-ական թվականներին, ուստի հավաքածուում զգալի թիվ են կազմում խորհրդային տարիների լենինականյան մականունները: Այդ մասին նա տվել է հետևյալ ծանոթությունը. «Այս ժողովածուի մեջ մտել են գլխավորապես հին սերնդի (ալեքսանդրապոլցոց) նաև մասամբ նոր սերնդի (լենինականցոց) մականունները: Նոր սերնդի մականուններից հետո փակագծերի մեջ գրվում է Ն տառը» [4, էջ FFIV: 2053], օրինակ՝ Բոնդո Գարուշ, Զոլոտ Ալբերտ (ոսկե ատամների համար), Խանձած Կարո, Կտուց Արամ, Չանկայշի Մուկուչ, Դավուլ Սերոժ, Մեղր Խաչիկ, Ճրտան Սերոժ, Զոթած Բադաթ, Ժաժիկ Մուկուչ և այլն: Փաստորեն բարսեղյանական ժողովածուն մականուն-բանաձևերը ներկայացնում է 100-ամյա կտրվածքով և ցույց է տալիս դրանց կենսունակության, շարունակականության և կենցաղավարման ավանդույթի պահպանումը Շիրակի տարածաշրջանում:

Բանահավաք Պ. Բարսեղյանը հանգամանորեն ներկայացրել է յուրաքանչյուր մականվան առաջացման պատճառը, մականունը կրողի ով լինելը, զբաղմունքը, արտաքին տեսքը, բնավորությունը, մարդկային արժանիքները, հասարակության կողմից դրական կամ բացասական վերաբերմունքը և այլն: Օրինակ՝ Թիփի Սուրեն (գրավաճառ, մականունը ստացել է դատարկ խոսելու և ստախոսության համար), Թրքեն աղա (Գրիգորյան Թորգոմ, հարուստ նավթավաճառ, տախտակը պակաս (թեթևսոլիկ), «Թրքեն» մականունը Թորգոմ անվան աղավաղումն է, ասվել է հեզնանքի համար), Լոպազ Միմոն (միկիտանչի, խմող, մեծ-մեծ խոսող, գլուխը գովող լոպազ մարդ), Գելխոյենց Կարո (Հարությունյան, հայտնի գլխարկ կարող, գլխարկի մեջ գրում էր իր ազգանունը: Այնքան ավտարիտետ ուներ, երբ իրա միշտարիքը խմելիս փող չէին ունենում, ցույց էին տալիս նրա ազգանունով գլխարկը, խմիչքը ապառիկ էր բաց թողնվում), Արտուշ խան Շագրիարսկի

(նախկին Շահրիար գյուղից, վայելչակազմ, գեղեցիկ, շախին, դոչաղ, միշտ զինված, դաշնակ, տեռորիստ, հեղափոխությունից հետո գնդակահարված: Այդ պատճառով կինը՝ Խոյեցունց աղջիկը, ինքնասպան եղավ), Բզանմոզենց Սիմոն (Սիմոնի պապը ունեցել է մի մոզի, որին միայն բզելով են տեղից շարժել): Բարսեղյանն իր հավաքածուին կցել է նաև բարբառային և օտարալեզու բառերի հանգամանակից բառարան:

Մականվանակիրներից շատերը ժամանակին եղել են Ալեքսանդրապոլ-Գյումրի քաղաքի նշանավոր դեմքերը, որոնց անվան շուրջ տարբեր զվարճալի պատմություններ են ձևավորվել: Բանահավաք Բարսեղյանը գրառել է նաև այդ պատումները, որոնք մեծ տեղեկատվություն են պարունակում այդ ինքնատիպ քաղաքի ու նրա բնակիչների մասին: Դրանք ընդգրկվել են «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուի իրապատում գրույցների շարքում [9, էջեր 306-329]: Կարելի է ասել, որ բանահավաք Պ. Բարսեղյանն ինչ-որ չափով Գյումրի քաղաքի կենսագիրն է, և նրա ջանքերի շնորհիվ պահպանված նյութերն այսօրվա ընթերցողին պատկերացում են տալիս 19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարի կեսերը Գյումրու և գյումրեցիների մասին: Ինչպես նկատել են մերօրյա գյումրեցիներ Կարինե Սահակյանն ու Ռոզա Հովհաննիսյանը. «... մականուններն ու տեղական գրույցները քաղաքի կենդանի մատյաններն են՝ խտացված հումորով» [10, էջ 85]:

Մականունների տեսակներն ու ստեղծման պատճառները

Կարս-շիրակյան մականունները իմաստով և անհատին բնութագրելու հատկությամբ բաժանվում են մի քանի տեսակների.

ա) Մականուններ, որոնք պայմանավորված են անհատի մասնագիտության, արհեստի, զբաղմունքի կամ գործի բնույթով և ներկայացնում են Կարս-Շիրակ տարածաշրջանի արհեստների ողջ երանգապնակը, օրինակ՝ Բոստանչի Սենո, Դալլաք Շառո, Դամրչի Մանուկ, Խոզարած Յուլակ, Չարչի Մխոյենք, Ֆայտոնչի Կարապետ, Դավուչի Պոլոզ Աշո, Յափչի Արամ, Չոբան Համբո, Սարկչի Յարշակ, Ակմակչի Կարո, Ասչի Չախալ և այլն:

բ) Մականուններ՝ պայմանավորված անհատի ֆիզիկական և հոգեկան շեղումներով, որոնք հաճախ ունեն ստորացնելու և ծաղրելու միտում, օրինակ՝ Տանձի պոչենք, Խելառ Աշո, Խլեզ Օնիկ, Խույսուզ Սերոժ, Ծուռվիզ Հայկ, Ժաժան գլուխ Թաթոս, Քաչալ Մկո, Դդում Յարութիկ, Լենտո Յարութ, Լալ Վաղո, Ճուղզ Սերոժ, Չեչոտ Ավո, Փթած Յակո, Խուլ Յակո և այլն:

գ) Անհատական հետաքրքրությունները ներկայացնող մականուններ, օրինակ՝ Գրամաֆոն Մուկուչ, Տուռնիկ Օնիկ, Շուն խաղցնող (Կարեն Տիգրանյան), Տանգո Գևոր, Ստիլակ Ճուկ Գևոր, Գող Գևոր, Ֆաբրիկա Ղազար և այլն:

դ) Մտավորականությանը, արվեստագետներին և անհատի կրթական մակարդակը ներկայացնող մականուններ, օրինակ՝ Աշո Գոքոր կամ Աշո Շերամ (Գրիգոր Տալյան), Ղազարապատցի Ավո (Ավետիք Իսահակյան), Քոռ Կոյա (կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյան), Թամրզենց Մացո (բանաստեղծ և գյուտարար), Կայծակ Նիկալ («Կայծակ» պատի թերթի խմբագիր), Կոուց Մեխակ (դերասան), Ճզրը-վզրը Բաբայան (ջութակահար), Մունդառ Պուշկին (բանաստեղծ, արտաքինով Պուշկինին նման, բայց բանաստեղծության որակը վատ), Դեպոյի Ճնճող (Հովհաննես Ափինյան-տպարանապետ), Ժակ Բոնբոն (փաստաբան) և այլն:

ե) Անհատի ծննդավայրը կամ բնակավայրը որպես մականվան ցուցիչ, օրինակ՝ Չիֆտալինակի Վարոս (Չիֆտալու գյուղից), Ջաջուոցի Արշակ, Սլաբոտկի Մանուկ

(Գյումրու թաղամաս), Ղանլիջեցի Սերկո, Փալդրվեցոց Նազարեթ, Դրմփենք (գաղթել են Բուլանըխից և անցել են «Դրմփ կարմունջեն»: Մականունը դարձել է ազգանուն), Ջիթող-ցունք (նախնիները գաղթել են Էրզրումի Ջիթողի գյուղից), Ղարս Կարո, Աբարանցի Խաչո, Բաթում Մարտիրոս, Կախեթի Օնիկ, Թիֆլիզ Յակոբ, Էրզրումցի Յարուֆ, Ծմակի Օհանես կամ Էջմիածնեցի Օհանես և այլն:

զ) Մականուններ, որոնք ցույց են տալիս անհատի գրաված դիրքը ընտանիքում և հասարակական կյանքում, օրինակ՝ Տեր Աքուլ, Բաշպորտ Դերենիկ, Բարբառ Յակոբ (հեքիմ), Արթար Մանուկ («Փրկիչ» եկեղեցու հոջակավոր վարպետներից մեկը), Բարի Լուսենք (առավոտյան բոլորին «Բարի լույս» էին մաղթում), Գառ Մանուկենք, Դուզակատենց Սիրական (ճիշտ խոսքը ճակատին ասող), Թամբալ լոթի, Հարս ապլա տերտեր և այլն:

ե) Մականուններ, որոնք տրվել են օտարազգի հարևաններին կամ օտարազգիների հետ այս կամ այն կերպ առնչություն ունեցող հայերին, օրինակ՝ Աղքատ Շեխո (ազգությամբ՝ եզդի, մուրացկան), Սվախչի Ալեք (Ալեքսանդր Վասիլիչ Կաչերգին, ռուսաց լեզվի ուսուցիչ), Ուռում Կոլյա, Բոշի տղա, Դոխտրուր Գևոր (դուխաբորների հետ շփվելու համար), Լազգի Համո (լազգու շորեր էր հագնում, խանչալ կապում), Խախոլ Արամ (շեկ լինելու պատճառով), Կիտայ Գևոր, Կիրգիզ Յոսեփ, Քուրդ Մելքոն և այլն:

զ) Մականուններ, որոնք բնորոշում են Գյումրիի հայտնի տոհմերը, նրանց գործունեությունը, դրական և բացասական կողմերը: Օրինակ՝ հայտնի մանուֆակտուրիստներ Կարապետ և Սկրտիչ Մխիթարյաններին անվանում էին Ալթի Գոռշենց: Մականվան համար հիմք էր հանդիսացել իրենց խանութում ալթի (վեց) գոռշանոց կտոր ծախելը: Ըստ Պ. Բարսեղյանի նյութերի՝ այս մականունը Մխիթարյաններին տվել են քրդերը: Ալվանձոնք (մականունը տրվել էր Կուպալյաններին՝ զանազան կտորներ ներկելու համար), Անարժան Հարուստենք (մականունը տրվել է վաճառական Պապիկյաններին: Նրանց տոհմից Պետրոսը փոքր ժամանակ քաղաքամերձ ձորից գտել էր մի կճուռ ոսկի և հարստացել էին ու զբաղվում էին նավթի և ածուխի վաճառքով): Բակմզենք (մականունը տրվել է երկաթեղենի խանութ և խան (իջևանատուն) ունեցող Պողոսյաններին: Վաղ ժամանակներում նրանց խանը մի ուխտաբեռ բակմազ (դոշաք) են բերում: Բակմազի տիկը ծակվում է, և բակմազը տարածվում է ողջ խանով մեկ: Այս դիպվածն էլ հիմք է հանդիսանում նրանց մականվան համար), Ղունկ Աշողենք (տոհմական առևտրականներ եղունգ նայելով գուշակել են):

Մականունների ստեղծման միջավայրը սովորաբար այն բնակավայրը, աշխատավայրը, համայնքը, դպրոցը, ընկերախումբն է, որտեղ մարդիկ միմյանց լավ են ճանաչում, գիտեն բոլորի թերություններն ու արժանիքները և ըստ այդմ՝ մականուն ստացողին սրամիտ ու համապատասխան բնորոշում են տալիս: Մականունների ստեղծման համար հիմք են ծառայել հետևյալ հանգամանքները.

ա) ծաղրը և սարկազմը կրողի նկատմամբ, օրինակ՝ Բոլիանտ Խանում, Գոջի Յակո, Գավնո Մարգիս, Էշ Արմեն, Իծու նամուս, Իշպիշկա թստող, Լոզոտ Աղասի, Խաշած Քալլա, Շան պլոր Արտո և այլն:

բ) հարգանքի, սիրո և գնահատանքի դրսևորում մականունակրի նկատմամբ, օրինակ՝ Բարխատ Կարո, Ծիտիկ Ավո, Կրակ Սերոժ, Ճստո Գևոր, Շաքար Աղբեր, Սիրուն Գևոր

զ) մականուններ, որոնք տրվել են հասարակության մեջ հեղինակություն ունենալու համար, օրինակ՝ Չուստիկով աղվակատ, Պաղվալի Վադո, Ջանլաթ (հայդուկ, կռվել է Տաճկաստանում), Ջիգարօղլի («Փրկիչ» եկեղեցու հռչակավոր վարպետներից մեկը՝ Մկրտիչը)

դ) մականուններ, որոնց համար առիթ են դարձել առանձին անհատների կյանքի ինքնատիպ դեպքերը, օրինակ՝ Սելաֆի Սերկո (խեղդվելուց փրկել է Կապանին), որի համար ստացել է մեդալ և մականուն, Ռասպիսկա Սիմոն, Սատանա Պապոպյենք (Ծերացած Պապոյին լավ չեն պահում: Նա հայտնում է, որ իր կտակը գտնում է պահել, որից հետո ուշադրության է արժանանում):

Ազգագրագետ Նիկոլ Մարգարյանը գտնում է, որ նմանօրինակ մականունները մշտական հատկանիշ չեն ցույց տալիս, այլ որևէ տպավորիչ դիպվածի արձագանք են, ուստի նպատակահարմար է դրանք անվանել «դիպվածային» [8, էջ 51]:

Իրենց կառուցվածքով կարս-շիրակյան մականունները հիմնականում հանդես են գալիս միաբաղադրիչ, երկբաղադրիչ և եռաբաղադրիչ բանաձևերով: Միաբաղադրիչ բանաձևը չի կցվում անձնանվանը, այն հանդես է գալիս ինքնուրույն և այնպես է աղերսվում անհատին, որ փոխարինում է անձնանվանը, և հասարակությունն անհատին ճանաչում է մականունով, օրինակ՝ Կոժոն, Պարավոզը, Մարինը, Օպիսը, Ճիլոն, Ճնճուղը, Ղունկին և այլն:

Մականունային երկբաղադրիչ բանաձևը կազմված է մականունից և անձնանունից, օրինակ՝ Ճենճոտ Նազար, Ասպածային Արա, Ճերմակ Համո կամ երկու բաղադրիչն էլ բնութագրող նշանակությամբ իրար լրացնող բառեր են, օրինակ՝ Բիրդան աղա, Բալուլ Մարգարե, Մկի դեսետնիկ, Վառված շուն:

Եռաբաղադրիչ երբեմն էլ քառաբաղադրիչ մականունները կազմված են տոհմանունից և անունից, օրինակ՝ Սատանա Պապոյենց Արմենակ, Տոան Մարտոյենց Աղասի, Սատանա ՍաղմոսենցՎաչաբեկ աղա, Քալ Դավիթենց Խելառ Սերկո: Մի շարք եռաբաղադրիչ մականուններ հանդես են գալիս առանց անձնանունի և բնութագրում են կոնկրետ անհատի, օրինակ՝ Խորոզ ծախող Փեզավանզը, Խոտով խորոված էնողը և այլն:

Կարս-Շիրակ տարածաշրջանին և հատկապես Գյումրի քաղաքին բնորոշ առանձնահատկություններից է նույն անձնավորությանը մի քանի մականուն տալու սովորությունը, որը պայմանավորված է մականուն ստացող անհատի բնավորության, գործելակերպի, վարքի առանձնահատկություններով, օրինակ՝ Տեր Ճնղլո (գիշերները ցորենի դեզից օրան գողանալու համար ստացել է նաև Տեր Ուկոալ (ռուս. украл) մականունը), Մուկ Ալեքը (նաև՝ Թոփալ Ալեք, Ամբ)՝ Պոլոզ Մուկուչի եղբայրը՝ միկիտանչի, մռայլ մարդ, Կնուր Վարդան (Վեայոլի Վարդան), Կարճ Աշո (Պզղի Աշո, Խնկի ծառ, Կապեկ պաշտող Աշո) և այլն:

Մականունների կազմության մեջ հայերենից բացի կիրառվում են օտարալեզու (ռուսերեն, թուրքերեն, քրդերեն) փոխառյալ բառեր, որոնք ավելի են սաստկացնում հեղինանքը, ծաղրը և երբեմն էլ ստորացնելու միտում ունեն, օրինակ՝ Վեայոլի Վանիչկա, Քեռի քուչի, Իզվեստնի Արամայիս, Թոփալ Ալեք, Չորնի Արտաշ, Յախկ Կարուշ, Ղաչաղ Յակո, Թոփալ Կոստո, Բեդնի Վարոս և այլն: Ինչպես նկատել է Ն. Մարգարյանը՝ «ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավելի բարի ու դրական իմաստ ունեցող ածական անունների մեծ մասը հայիմաստ բառեր ու արտահայտություններ են, իսկ ամենասուր, սպանիչ կամ ստորացնող ածականները ունեն օտարալեզու (մեծ մասամբ՝ արաբա-

թուրքական) ծագում [8, էջ 52]: Նմանօրինակ մականունները նպատակ ունեն ստորացնելու, արհամարհելու, ծաղրելու, մարդու ինքնությունը ոչնչացնելու:

Ե Զ Ը Ր Ա Հ Ա Ն Ն Գ ՈՒ Մ. Կարս-Շիրակ տարածաշրջանի մականունների քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք մականունային բազմազան ու հարուստ ավանդույթ ունեցող հանրության հետ: Դիտարկված մականունային նյութը հնարավորություն է տալիս բացահայտելու տարածաշրջանի և հատկապես Գյումրի քաղաքի հասարակության բազմաշերտությունը, ազգաբնակչության սոցիալական վիճակը, կենցաղը, սովորությունները, մարդկային փոխհարաբերությունները 19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարի կեսերը: Քննության են առնվել մականունի ժանրային պատկանելության հարցը, մականուն տերմինի հոմանիշների կիրառությունն ըստ այլ տարածաշրջանների: Ներկայացվել է տարածաշրջանի ամենամեծ մականունային հավաքածուի նյութերի որոնման և գրառման պատմությունը: Ձեռքի տակ եղած արխիվային նյութերի հիման վրա ըստ մականունների իմաստաբանական ու բնութագրական հատկանիշների՝ նյութերը ստորաբաժանվել և տեսակավորվել են: Վեր են հանվել նաև մականունների առաջացմանը նպաստող պատճառները: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ մականունները կազմել են կարս-շիրակյան տարածաշրջանի և հատկապես Ալեքսանդրապոլ-Գյումրի-Լենինական քաղաքի ազգաբնակչության կյանքի ու կենցաղի անբաժան մասը՝ անփոխարինելի հմայք հաղորդելով անհատի անձնականմանը՝ այն լրացնելով ինքնատիպ փաստերով և նրբերանգներով:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աղայան Է.** *Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1* Երևան, «Հայաստան» հրատ.: 1976, 948 էջ:
2. **Աղայան Է.** *Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2*, Երևան, «Հայաստան» հրատ.: 1976, 1642 էջ:
3. **Ավետիսյան Տ.** *Հայկական ազգանուն*, Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1987, 321 էջ:
4. **Բարսեղյան Պ.** *Գյումրեցոց մականունները, ձեռագիր հավաքածու*: Երևան: 1961-1967, FFIV: 2045-2876, FFVI: 6404-6435:
5. **Խեմյան Է.** *Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 21 Տալուշ*: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2000: 314 էջ:
6. **Կարս. հայոց բանահյուսական մշակույթը**, կազմ.՝ Ս. Հարությունյան, Ս. Վարդանյան, Է. Խեմյան, Լ. Ղուեջյան, Մ. Խեմյան, Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2013: 750 էջ:
7. *Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Է*, Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2012, 207 էջ:
8. **Մարգարյան Ն.** *Անձնական ընտրությունը արևելահայոց մեջ (19-20-րդ դդ. (ազգաբնական ուսումնասիրություն)* (Թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2000, 160 էջ):
9. *Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը*, կազմ.՝ Մ. Հ. Խեմյան, Է. Հ. Խեմյան, Լ. Խ. Ղուեջյան, Հ. Հ. Մատիկյան, Երևան, ՀԱԻ հրատարակչություն, 2024, 640 էջ:
10. **Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ.** *Մականունները որպես Գյումրու երևելիների բանահյուսական դիմանկարի ստեղծման փորձ* // «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ.: 2023: 85-93 էջեր:
11. **Մարգարյան Ա.** *Արցախի բանահյուսությունը*: Երևան: «Էդիթ պրինտ»: 2015, 747 էջ:
12. **Մարգարյան Ա.** *Ծանոթություն*, Երևան, «Աստղիկ» հրատ.: 2025: 504 էջ:
13. **Карташова И. Ю.** *Прозвища-приставки в русском фольклоре* // Фольклор Урала, вып. 8, Свердловск, 1984, 140-153 сс.
14. *Турецко-русский словарь*, Москва, Государственное издательство национальных и иностранных словарей, 1945, 704 с.

References

1. **Aghayan E.**, Explanatory Dictionary of Modern Armenian, vol. 1 [*Ardi hayereni bat'satrakan bararan, h. 1*], Yerevan, Publishing House "Hayastan", 1976, 948 p. (in Armenian)
2. **Aghayan E.**, Explanatory Dictionary of Modern Armenian, vol. 2 [*Ardi hayereni bat'satrakan bararan, h. 2*], Yerevan, Publishing House "Hayastan", 1976, 1642 p. (in Armenian)
3. **Avetisyan T.** Armenian Surname [*Haykakan azganun*], Yerevan, Publishing House AS ArSSR, 1987, 321 p. (in Armenian)
4. **Barseghyan P.** Nicknames of Gyumri, manuscript collection [*Gyumret'sot's makanunnery, dzeragir havak'atsu*], Folklore Archive of the Institute of Archaeology and Ethnography (FAIAE), 1961-1967, FFIV: 2045-2876, FFVI: 6404-6435. (in Armenian)
5. **Khemchyan E.** Armenian Ethnography and Folklore, vol. 21, Tavush [*Hay azagrut'yun ev banahyusut'yun, h. 21, Tavush*], Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2008, 492 p. (in Armenian)
6. Kars. The Folklore Tradition of Armenian [*Kars. hayot's banahyusakan mshakuyt'y*], comp.: S. Harutyunyan, S. Vardanyan, E. Khemchyan, L. Ghrejyan, M. Khemchyan, Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2013, 750 p. (in Armenian)
7. Dialectological Dictionary of the Armenian Language, vol. VII [*Hayot's lezvi barbarayin bararan, h. E*], Yerevan, Publishing House "Gitutyun" NAS RA, 2012, 207 p. (in Armenian)
8. **Margaryan N.** The Choice of Personal Names among Eastern Armenians (19th-20th Centuries (Ethnological Study) [*Andznanvan yntrut'yuny arevelahayot's mej (19-20-rd dd. Azgabanakan usumnasirut'yun)*] (Candidate's Thesis, Institute of Archaeology and Ethnography of the RA National Academy of Sciences, 2000, 160 pages) (in Armenian)
9. Shirak. The Folklore Tradition of Armenian [*Shirak. hayot's banahyusakan mshakuyt'y*], comp.: M. Khemchyan, E. Khemchyan, L. Ghrejyan, H. Matikyan, Yerevan, Publishing House IAE NAS RA, 2024, 640 p. (in Armenian)
10. Nicknames as an attempt to create a folklore portrait of prominent Gyumri people [*Makanunnery vorpes Gyumru erevelineri banahyusakan dimankari steghtsman p'ordz*] Proceedings of the International Conference "Shirak - a Treasury of Armenian Bar u Ban", Yerevan, LI Publishing House of the RA NAS, 2023, 85-93 pp. (in Armenian)
11. **Sargsyan A.** Artsakh Folklore [*Art'sakhi banahyusut'yuny*], Yerevan, Publishing House "Edit Print", 2015, 747 p. (in Armenian)
12. **Sargsyan A.** Shamut [*Shamut*], Yerevan, Publishing House "Asoghik", 2025, 504 p. (in Armenian)
13. **Kartasheva I.** Nicknames-proverbs in Russian folklore [*Prozvischcha-prislovie v russkom fol'klore*] // Folklore of the Ural, vol. 8, Sverdlovsk, 1984, 140-153 pp. (in Russian)
14. Turkish-Russian Dictionary [*Turet'sko-russkiy slovar'*], Moscow, State Publishing House of National and Foreign Dictionaries, 1945, 704 p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **16. 10. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **25. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Էսթեր Հայկի ԽԵՄՉՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,
ԳԱԱ հնագիտության և ազգագր. ինստիտուտի ավ.գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. huughe ekhemchyan@yandex.ru / ORCID.org/0000-0002-3638-7855

Ester Hayk KHEMCHYAN: PhD in Philology, Senior Researcher at
Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail: ekhemchyan@yandex.ru / ORCID.org/0000-0002-3638-7855

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ART STUDIES

ՀՏԴ՝ 7.02

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -177

ՈՐՄԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՑ
ՄԻՆԶԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հուսինե Պ. Պետրոսյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հետազոտությունը նվիրված է մոնումենտալ-դեկորատիվ արվեստի, մասնավորապես՝ որմնանկարչության զարգացման ուսումնասիրությանը Հայաստանում XX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը: Ուսումնասիրությունը կարևոր է ազգային, մշակութային ինքնության պահպանման և քաղաքային միջավայրի գեղարվեստական ձևավորման համատեքստում: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են արվեստագիտական վերլուծական, համեմատական հետազոտական մեթոդներ: Հիմնական նյութը խորհրդային շրջանի որմնանկարներն են, դրանց ստեղծման, գործառնության, պահպանման և վերականգնման վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև մեր օրերում փողոցային արվեստի ծրագրերի և ժամանակակից հեղինակների աշխատանքները: Վերլուծություն. Մեկնաբանվել են խորհրդային շրջանում ստեղծված որմնանկարների գեղարվեստական, գաղափարական և տեխնիկական առանձնահատկությունները, որոնք մեծապես ազդել են քաղաքի հասարակական միջավայրի ձևավորման վրա: Ներկայացվել են հայկական մոնումենտալ արվեստի առաջատար ներկայացուցիչների ստեղծագործություններ: Տրամաբանորեն դիտարկվել է հետխորհրդային շրջանում որմնանկարչության դանդաղումը և XXI դարում դրա վերածնունդը՝ ժամանակակից միջազգային արվեստային նախաձեռնությունների ազդեցությամբ: Վերլուծվել է նաև նոր սերնդի և օտարերկրյա նկարիչների ներգրավվածությունը, որոնք անդրադառնում են քաղաքային ինքնության և հանրային տարածքի վերաիմաստավորման խնդիրներին: Արդյունքներ. Հետազոտությունը փաստում է, որ որմնանկարչությունը Հայաստանում շարունակական մշակութային երևույթ է, որն իր նոր դրսևորումներով դարձել է գեղագիտական, գաղափարական

րական և մշակութային ժառանգության կարևոր ձև: Ներկայացվում է խորհրդային ժառանգության և ժամանակակից փորձառության համադրությունը՝ որպես քաղաքի մշակութային դիմագծի և ինքնության վերաձևավորման գործիք:

Բանալի բառեր՝ Որմնանկարչություն, մոնումենտալ-դեկորատիվ արվեստ, մշակութային արժեք, ժառանգություն, միջավայր:

Ինչպես հղել՝ Պետրոսյան Լ. Որմնանկարչությանը Հայաստանի հասարակական շենքերում և այլ շինություններում XX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 177-188 էջեր:

DOI:10.52971/18294316-2025.28.2-177

MURAL PAINTING IN PUBLIC BUILDINGS AND OTHER STRUCTURES IN ARMENIA FROM THE SECOND HALF OF THE 20TH CENTURY TO THE PRESENT DAY

Lusine P. Petrosyan

State Academy of Fine Arts of Armenia, Yerevan, RA

Abstract

Introduction: The article is dedicated to the study of the development of monumental-decorative art, particularly mural painting, in Armenia from the second half of the 20th century to the present. This research is significant in the context of preserving national and cultural identity and shaping the artistic character of the urban environment. **Methods and Materials:** The article employs art historical analytical, comparative, and documentary research methods. The main materials include murals from the Soviet period, documents related to their creation, damage, and restoration, as well as contemporary works and international street art initiatives of recent years. **Analysis:** The artistic, ideological, and technical characteristics of murals created during the Soviet era are analyzed, emphasizing their influence on shaping the urban public environment. The works of leading representatives of Armenian monumental art are presented. The decline of mural painting in the post-Soviet period and its revival in the XXI century through modern international art projects are also examined. The involvement of a new generation of local and foreign artists addressing issues of urban identity and public space reinterpretation is discussed. **Results:** The article demonstrates that mural painting in Armenia is a continuous cultural phenomenon that, with its new manifestations, serves as an important form of aesthetic, ideological, and cultural heritage. It presents a synthesis of the Soviet heritage and contemporary mural practices as a tool for the cultural identity and visual redefinition of the urban landscape.

Key words: *Mural painting, monumental-decorative art, cultural value, heritage, environment.*

Citation: Petrosyan L. *Mural Painting in Public Buildings and other Structures in Armenia from the Second Half of the XX century to the Present Day* // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2025, No. 2 (28). 177-188 pp. DOI:10.52971/18294316-2025.28.2-177

Ն Ա Ն Ա Ր Ա Ն. Հայ արվեստի բազմադարյան պատմության մեջ կարևոր դեր է գրավում մոնումենտալ-դեկորատիվ արվեստի ճյուղ հանդիսացող որմնանկարչությունը: Որպես ժողովրդական լայն զանգվածներին հասցեագրված արվեստ, այն յուրաքան-

յուր պատմական ժամանակահատվածում արտահայտում է ոչ միայն ժամանակի գեղարվեստական ու գեղագիտական ըմբռնումները, այլև հասարակական մտքի տեղաշարժերը, սոցիալ-քաղաքական բնույթի փոփոխություններն ու փոխազդեցությունները: Սույն աշխատանքում օգտագործված գրականությունը ներկայացնում է ինչպես հայկական, այնպես էլ միջազգային աղբյուրներ, որոնք արտացոլում են մոնումենտալ-դեկորատիվ արվեստի, հատկապես՝ որմանակարչության զարգացման պատմությունը, գեղարվեստական առանձնահատկությունները, ինչպես նաև պահպանման և վերափմաստավորման ժամանակակից խնդիրները: Հայ հեղինակների աշխատություններում ընդգծվում են խորհրդային շրջանի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները, մոնումենտալ արվեստի փոխհարաբերությունը ճարտարապետական տարածքների հետ, ինչպես նաև հանրային նշանակության խնդիրները: Միջազգային հեղինակների ուսումնասիրությունները թույլ են տալիս դիտարկել թեման համադրական և միջմշակութային տեսանկյունից՝ ընդգծելով տեխնոլոգիական նորարարությունների, ազգային ինքնության դրսևորման և ժառանգության պահպանման հարցերը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի որմանակարչության զարգացումը XX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը՝ շեշտադրելով այս ոլորտի գեղարվեստական, գաղափարական, տեխնոլոգիական և հանրային դերակատարության ձևափոխությունները: Հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է ինչպես խորհրդային շրջանի արվեստի գործերի ստեղծման, պահպանման և տարածքային վերատեղայնացման գործընթացների վրա, այնպես էլ ժամանակակից հասարակական միջավայրում որմանակարչության վերաթմուրման և զարգացման նոր միտումների վրա:

Արդիականությունն ու նորությը պայմանավորված են մի քանի գործոններով: Նախ, որմանակարների պահպանման հարցը վերածվել է հրատապ մշակութային և մասնագիտական հիմնախնդրի: Երկրորդ, վերջին տասնամյակում նոր մոնումենտալ աշխատանքների ի հայտ գալը՝ փողոցային արվեստի ձևով, պահանջում է թեմայի ուսումնասիրության նոր մեկնակետեր՝ հաշվի առնելով գեղարվեստական լեզվի, տեխնոլոգիական հենքի և հանրային ընկալման փոփոխությունները: Եվ վերջապես, աշխատանքի նորությն արտահայտվում է մոնումենտալ որմանակարչության վերափմաստավորման փորձի մեջ՝ որպես ոչ միայն պատմական-գեղարվեստական, այլև սոցիալ-մշակութային հաղորդակցության ժամանակակից միջոց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ. Որմանակարչությունը կարևոր դեր է խաղացել Հայաստանի հասարակական շենքերի և շինությունների գեղարվեստական ձևավորման մեջ՝ հատկապես XX դարի երկրորդ կեսից սկսած: Այս ժամանակահատվածը աչքի է ընկնում հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում կերպարվեստի համակցման նոր հնարավորություններով և դրսևորումներով: Սոցիալիստական ռեալիզմի գաղափարախոսության ազդեցությամբ, և հետագայում՝ անկախության շրջանում, ստեղծվեցին որակական նոր մոտեցումներ, որոնք արտացոլեցին ազգային, մշակութային ինքնությունն ու ժամանակի գեղարվեստական միտումները:

XX դարի երկրորդ կեսին որմանակարչությունը դարձավ արվեստի արտահայտման հիմնական միջոցներից մեկը: Բազմաթիվ նկարիչներ ստեղծեցին եզակի աշխա-

տանքներ, որոնք հարստացրեցին քաղաքների հասարակական շենքերի ձևավորումը՝ դառնալով միջավայրի անբաժանելի մասը: Ակնհայտ էր որմնանկարչության ազդեցությունը միջավայրի գեղարվեստական ձևավորման, հասարակության գեղագիտական դաստիարակության և մշակութային ինքնության պահպանման գործընթացում:

Մոնումենտալ գեղանկարչությունը Հայաստանում խոր արմատներ ունի: Հատկանշական է, որ այստեղ լայն տարածում է ունեցել ժայռապատկերային արվեստը: Ավելի ուշ, հասարակական-տնտեսական վերելքով պայմանավորված, ճարտարապետության, արվեստի ձևավորման ու զարգացման հետ, աստիճանաբար կիրառություն է գտել պաշտամունքային կառույցների ներքին պատերի հարդարումը նկարազարդման միջոցով [3, էջ 98]:

Խորհրդային դարաշրջանում ձևավորվեց թեմատիկայի, գեղարվեստական միջոցների, ճարտարապետական տարածքների ձևավորման մեթոդների ամբողջական համակարգ: Կարևոր առանձնահատկություններից էր նաև այն, որ մոնումենտալ-դեկորատիվ նախագծերի պատվիրատուն պետությունն էր: Մոնումենտալ արվեստն էլ հայտնվեց արմատապես նոր պայմաններում [7, էջ 11]:

XX դարի կեսերից երկրի տնտեսական վիճակի բարելավումը հանգեցրեց քաղաքաշինության, կառուցապատման և ճարտարապետության ընդհանուր վերելքին, որին զուգահեռ աճեց հետաքրքրությունը մոնումենտալ և դեկորատիվ արվեստի ստեղծագործությունների նկատմամբ: Մահմանելով ժամանակաշրջանի արվեստի ընկալման բնութագրումը, Ար. Աղասյանը «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX - XX դարերում» աշխատության մեջ նշում է. «1950-ականների կեսերին առաջ է գալիս ճարտարապետության և կերպարվեստի ներդաշնակ համադրման, սինթեզի հարցը: Մակայն եթե 1920-ականների վերջերից ի վեր այդ խնդիրն իր կոնկրետ լուծումներն էր գտնում գրեթե բացառապես ճարտարապետության և քանդակագործության մոնումենտալ դեկորատիվ ձևերի՝ հարթաքանդակների կամ բարձրաքանդակների շնորհիվ, ապա այժմ ճարտարապետական ծավալների և հարթությունների ու դրանց հաշվին ստեղծվող տարածության գեղարվեստական հարդարման, դեկորատիվ-ռիթմիկ, արխիտեկտոնիկ շեշտավորման գործում, քանդակի հետ մեկտեղ սկսում են ակտիվորեն ներքաշվել գեղանկարչության մոնումենտալ-դեկորատիվ զանազան ձևերն ու տեսակները՝ որմնանկարը, խճանկարը» [1, էջ 155]: 1950-ականների վերջին խրուշչովյան «քաղաքական ձևափոխում» առիթ հանդիսացավ խորհրդային մշակույթի ու արվեստի որոշակի հեղաշրջման ու ազատականացման: 1960-ականների սկզբին սկսեցին ի հայտ գալ քաղաքային միջավայրի ձևավորման նոր լուծումներ, որտեղ կարևոր տեղ էր հատկացված հանրային միջավայրի ու հատկապես շենքերի արտաքին ու ներքին գեղարվեստական ձևավորմանը: Հենց այդ տասնամյակում էլ Խորհրդային Հայաստանի քաղաքներում սկսեցին հայտնվել մոնումենտալ-դեկորատիվ արվեստի լայնածավալ նախագծեր՝ խճանկարներ, որմնանկարներ ու կերամիկական բարձրաքանդակներ: Ակնհայտ էր ազգային տրամադրությունների աճը և մշակութային վերածնունդը խորհրդահայ արվեստագետների հուշարձաններում, գեղանկարներում և որմնանկարներում: Արևմուտքի հետ հաղորդակցության բացմամբ և ճնշումների նվազմամբ արվեստները սկսեցին ծաղկում ապրել [5, էջ 9]: Որպես ճարտարապետության անբաժան մաս՝ մոնումենտալ-դեկորատիվ արվեստը

Հայաստանում օգտագործվում էր հասարակական շենքերի, հրապարակների, արդյունաբերական շենքերի, պետական հիմնարկների, մշակույթի պալատների ձևավորման համար՝ նպատակ ունենալով ամրապնդել հավաքական ինքնությունը և ընդգծել ազգային մշակութային առանձնահատկությունը:

Հայ մոնումենտալ-դեկորատիվ արվեստի՝ մասնավորապես որմանակարգության ոլորտում մեծ գեղարվեստական արժեք է ներկայացնում Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ընթերցարանի գմբեթի որմանակարը: Հեղինակներն են՝ ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Աշոտ Մելքոնյանը (1930-2009), գեղանկարիչ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ, Հակոբ Հակոբյանը (1923-2013), գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հենրիկ Սիրավյանն (1928-2001) և գեղանկարիչ, մոնումենտալիստ Ռաֆայել Սարգսյանը (1919-2000): Այն իրենից ներկայացնում է ութամաս որմանակար, որի ամեն նիստը 8մx4մ է:

1969 թվականն էր, աշխարհի տարբեր ծայրերում և մայր հայրենիքում աշխարհասփյուռ հայությունը մեծ շուքով նշում էր հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, բանահավաք, երաժշտագետ, խմբավար և երգիչ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակը: Նրա անհատականությամբ և գործունեությամբ ոգեշնչված՝ նկարիչներ Աշոտ Մելքոնյանը, Հակոբ Հակոբյանը, Հենրիկ Սիրավյանն ու Ռաֆայել Սարգսյանը նույն տարում ձեռնամուխ եղան ճեմարանի գմբեթի նկարազարդման աշխատանքներին: Ութ մասից բաղկացած հորինվածքը ներքին մեծ հուզականություն պարունակող աշխատանք է, որի կենտրոնում՝ որպես յուրօրինակ կենտրոնացնող ֆիգուր, հառնում է ճամփեգրի քարին նստած Կոմիտասը՝ «շրջապատված» իր հավաքագրած, մշակած և սերունդների սեփականությունը դարձրած հայ գեղջկական երկրագործական երգերի պատկերազարդումներով: Առաստաղի տարբեր անկյուններից դիտորդին նայող տեսարանները կարծես մի պահ կենդանանում են, ու թվում է՝ դիտորդը դառնում է ստեղծագործության մի մասնիկը և ունկնդրում է հայ երգերը, դառնում նրանց առօրյայի մի մասը: Կոմիտասին Հակոբ Հակոբյանն է պատկերել, Վարդապետի ձեռքին նոթատետր է պատկերված, որի վրա Հակոբ Հակոբյանը թողել է որմանակարը ստեղծած նկարիչների անունները: Ընդհանուր կերպով աշխատանքը հանդիսանում է մշակութային հիշողության, երաժշտական ժառանգության և ազգային ինքնության սինթեզի բացառիկ դրսևորում:

Հայաստանի խորհրդային և արդի մշակութային ժառանգության պահպանության գործում նշանակալի դեպք է Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմանակարի վերականգնումը, տեղափոխումն ու պահպանությունը: Ստեղծված լինելով խորհրդային շրջանի ուշ տասնամյակներում՝ որմանակարը երկար ժամանակ գտնվել է 1988թ. երկրաշարժից ավերված արդյունաբերական շենքում՝ գործարանի ճաշարանի պատին: 2016 թվականին այն ժամանակավորապես ապամոնտաժվել և տեղափոխվել է Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ճեմասրահ՝ որպես հուշարձանային արվեստի պահպանման հրատապ քայլ:

Այդուհանդերձ, թատրոնի ճեմասրահը, որպես ժամանակավոր հարթակ, ցավոք չապահովեց պատշաճ պահպանման պայմաններ: Միջավայրում ջերմային կայունության բացակայությունը, լուսային միջամտության խնդիրները և գալիք վերանորոգման ծրագրերը պայմանավորեցին որմանակարի կրկնակի տեղափոխման անհրաժեշտու-

թյունը: 2024–2025 թթ. ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ֆինանսական աջակցության և մասնագիտական վերահսկողության ներքո որմնանկարը ապամոնտաժվեց և տեղակայվեց Գյումրու քաղաքապետարանի շենքում, ինչը վերածվեց ոչ միայն տեխնիկական, այլև մշակութաբանական կարևոր գործողության:

Նախագծի իրագործման ընթացքին ներգրավված են եղել մի շարք պետական և մասնավոր կառույցներ: Որմնանկարի տարածական շարժը կարելի է դիտարկել ոչ միայն որպես ֆիզիկական փոխադրման գործընթաց, այլև՝ որպես մշակութային ժառանգության տարածքային վերակենտրոնացման դրսևորում: Այն արտահայտում է պետական վերաբերմունքի փոփոխությունը՝ երբ ժառանգությունը պարզապես պահպանելու մեխանիկական մոտեցման փոխարեն այժմ կարևորվում է դրա իմաստավորումը և ներկայացումը ժամանակակից մշակութային համատեքստում: «Սարերում» որմնանկարը, որը պատկերում է հայկական լեռնաշխարհի խորհրդանշալի բնապատկեր՝ համադրված մարդու և բնության ներդաշնակ գոյակցության հետ, արժևորվում է նոր տարածքում՝ քաղաքացիական կառավարման հաստատության ներսում: Այդ նոր նշանակման հարթակը վերաիմաստավորում է որմնանկարի հանրային դերը՝ տեղափոխելով այն բեմարվեստից դեպի քաղաքային հիշողության և ինքնության հաստատման ոլորտ:

Որպես պատմամշակութային արժեք՝ «Սարերում» որմնանկարը ներառվել է ՀՀ կառավարության 1270-Ն որոշման շրջանակում հաստատված՝ Շիրակի մարզի անշարժ հուշարձանների պետական ցուցակում՝ արդիացված տվյալներով: Այդ կարգավիճակը ոչ միայն իրավական երաշխիք է, այլև մշակութաբանական ճանաչում, որ որմնանկարը հանդիսանում է ոչ միայն գեղարվեստական, այլև ազգային հիշողության նյութական կրող: Հակոբ Հակոբյանի որմնանկարի վերակենդանացումը, հետևաբար, հանդես է գալիս որպես օրինակ՝ թե՛ արվեստի պահպանման գործնական քաղաքականության և թե՛ որմնանկարչության՝ որպես հանրային արվեստի, վերաիմաստավորման տեսանկյունից: Այս գործընթացը վերածվում է կենդանի ժառանգության պահպանման և հասարակությանն այն փոխանցելու արդի ռազմավարական մոտեցման վկայության:

Հայկական որմնանկարչության արվեստում մեծ ներդրում է ունեցել ԽՍՀՄ վաստակավոր նկարիչ Մինաս Ավետիսյանը (1928–1975 թթ.): Նա ստեղծել է ավելի քան 500 կտավ, հարյուրավոր գծանկարներ, մեծածավալ որմնանկարներ, դիմանկարներ և բնանկարներ: Նրա արվեստը բնութագրվում է վառ և զսպված գույների ներդաշնակ համադրությամբ, հայրենի բնության յուրահատկությունների գեղանկարչական խտացումով և կյանքը վկայող արտահայտչականությամբ [6, էջ 166]: Մինաս Ավետիսյանը իր որմնանկարները ստեղծել է 1970-1974 թթ.: Երևանում, Գյումրիում և Վահրամաբերդ գյուղում նա ստեղծել է 20 որմնանկար՝ մոտ 500 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժը մեծ վնաս հասցրեց նաև Մինաս Ավետիսյանի որմնանկարներին: Շենքերը, որտեղ տեղադրված էին որմնանկարները, կա՛մ փլուզվել են, կա՛մ դարձել վթարային: Երկրաշարժից անմիջապես հետո փրկվել է «Աղբյուրի մոտ» որմնանկարը, որը ստեղծվել էր «Անալիտիկ սարքեր» գործարանի ճաշարանում: «Լեռներում» որմնանկարը, որը տեղադրված է Ազատան գյուղի Մշակույթի տան մուտքի սրահում, ներկայումս լավ պահպանված է: «Հայաստան» որմնանկարը

գտնվում է Վահրամաբերդ գյուղի նախկին Մշակույթի տան առաջին հարկում: Շենքից միայն այն պատն է պահպանվել, որի վրա որմնանկարն է:

Մինաս Ավետիսյանի որմնանկարների վերականգնումը սկսվել է 2008 թվականին: 2010-2012 թթ. Մինաս Ավետիսյանի հիմնադրամը վերականգնել կամ տեղափոխել է «Հանդիպում», «Խաչքարի մոտ», «Գորգ են գործում», «Երկանք», «Թել են մանում», «Հայկական հովվերգություն» և այլ որմնանկարներ:

Իտալացի մասնագետների ջանքերով 2009 թվականին վերականգնվել է «Թորոս Ռոսլինի ծնունդը» որմնանկարը և տեղադրվել Մ. Ավետիսյանի՝ Ջաջուռում գործող տուն-թանգարանում: 2010 թվականին «Հանդիպում» և «Խաչքարի մոտ» որմնանկարները վերականգնվել և տեղադրվել են ՀՀ կառավարության շենքում: Այժմ որոշում է կայացվել այս երկու որմնանկարները տեղափոխել Մ. Ավետիսյանի տուն-թանգարան՝ ավելի հասանելի դարձնելու մարդկանց լայն շրջանակների համար:

2018 թվականին Մինաս Ավետիսյանի որդին՝ Արման Ավետիսյանը, որը Մինաս Ավետիսյանի մշակութային բարեգործական հիմնադրամի և տուն-թանգարանի տնօրենն է, բարձրաձայնեց խնդիր, որ «Գիշեր» որմնանկարը գտնվում է ոչնչացման եզրին: Այն տեղակայված էր Գյումրիում փլուզված գործարաններից մեկում և գտնվում էր վնասված վիճակում: 2019 թվականին որմնանկարը վերականգնվեց և մեկ ամիս անց ներկայացվեց Նոր Նորքի Մեգամոլ առևտրի և ժամանցի կենտրոնի բացման ժամանակ, որտեղ դրա համար հատկացվեց առանձին տարածք:

«Թել են մանում» (13.5x4 մ) որմնանկարը տեղադրված է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ուղևորային տերմինալում, իսկ «Երկանքը» (5.7x3 մ)՝ նախագահական տերմինալում: Երևույթը դիտարկելով գաղափարական տեսանկյունից՝ կարող ենք ասել, որ այն կրում է մշակութային արժեքների ներկայացման բնույթ, դիտարկելով այն ընկալման և գեղարվեստական ձևավորման տեսանկյունից, կարող ենք ասել, որ «Թել են մանում» որմնանկարը տարածքի մասշտաբայնության մեջ չի ընկալվում որպես մոնումենտալ որմնանկար, այլ ավելի շատ հիշեցնում է ազգային գեղանկարչության օրինակ, որն օդանավակայանի ներքին միջավայրի ձևավորման ժամանակակից ոճի մեջ չի կարողանում գտնել իր տեղը և միջավայրի հետ համակցվելով՝ դառնալ մեկ ամբողջություն: Որմնանկարի ներքևում տեղադրված ակտիվ դեղին գույնի ապակե պատնեշը խոչընդոտում է որմնանկարի գունային ընկալմանը: Որմնանկարը կարելի է ասել աննկատ է մնում տարածության և միջավայրի մեջ՝ այսպիսով կորցնելով իր գեղարվեստական արժեքը:

Մ. Ավետիսյանի որմնանկարների ճակատագիրը ոչ միայն վկայում է դրանց բարձր գեղարվեստական արժեքի, այլև արտացոլում է հայ մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության պատմության մեջ որմնանկարների պահպանման, տեղափոխման և նոր միջավայրում դրա հարմարեցման յուրահատուկ մի դեպք: Սպիտակի երկրաշարժից հետո ստեղծված արտակարգ իրավիճակում՝ հուշարձանային որմնանկարների պահպանման նպատակով մշակվել և կիրառվել են կոնկրետ մեթոդաբանություններ, որոնց իրականացումը հնարավոր է դարձել տեղական և միջազգային մասնագետների համագործակցության շնորհիվ:

Մինաս Ավետիսյանի և Հակոբ Հակոբյանի որմնանկարները կարող են դիտվել որմնանկարային արվեստի շարժուն պահպանության և վերատեղայնացման օրինակ, երբ որմնանկարները ի սկզբանե ստեղծված են կոնկրետ ճարտարապետական և գործառության միջավայրի համար, սակայն հետագայում տեղափոխվել են նոր տարածքներ, ինչպիսին են՝ թանգարանները, պետական կառույցները, առևտրային կենտրոնները կամ օդանավակայանները: Այս գործընթացը պահանջում է ոչ միայն տեխնիկական հմտություններ, այլև խորագիտություն որմնանկարչության ընկալման և միջավայրի հետ նրա փոխհարաբերության վերաբերյալ:

Հայաստանի շատ քաղաքներում կան բազմաթիվ մոնումենտալ գեղանկարչական աշխատանքներ, որոնք գտնվում են լքված և այլևս չշահագործվող հասարակական շենքերում և շինություններում: Դրանցից կարելի է առանձնացնել ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հենրիկ Սիրավյանի(1928-2001 թթ.), 1975թ Բջնիի մշակույթի ակումբում արված «Պատմությունն ու ներկան» (4x40ս) որմնանկարը: Այն որոշ չափով պահպանված է, սակայն գտնվում է անմխիթար վիճակում: Որմնանկարի թեմատիկան ազգային մոտիվներով է, պատկերված են Հայաստանի բնանկար, հայ թագավորներ, զինվորներ, հայ շինարարը և դաշտերում աշխատող հայ կանայք: Որմնանկարի գունապնակում գերիշխում են կանաչ և կապույտ գույները: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մի շարք որմնանկարներ ոչնչացվել են, դրանց շարքում՝ նաև Հ. Սիրավյանի Հրազդանի շրջանի Քաղսի գյուղի մշակույթի տանն արված 1970թ «Աղբյուրի մոտ» և «Որս» որմնանկարները... Հայ որմնանկարային մշակույթը կորցրել է գեղարվեստական արժեք հանդիսացող երկու որմնանկար:

Որմնանկարները մշակութային ժառանգության կարևոր մաս են, որոնք արտացոլում են պատմական, գեղարվեստական և հոգևոր արժեքներ: Ժամանակի ընթացքում դրանք ենթարկվում են տարատեսակ վնասների՝ մթնոլորտային ազդեցությունների, խոնավության, ջերմաստիճանի տատանումների, միկրոօրգանիզմների և մարդկային միջամտության հետևանքով: Որմնանկարների պահպանումը և վերականգնումը միշտ եղել է արդիական հիմնահարց՝ արվեստաբանների, վերականգնող մասնագետների, հետազոտողների համար [2, էջ 330]: Վերականգնման գործընթացը պահանջում է մասնագիտացված գիտելիքներ և նորագույն տեխնոլոգիաների կիրառություն՝ ինչպես վնասի պատճառները բացահայտելու, այնպես էլ դրանց կանխարգելման համար: Շարունակական գիտական և տեխնոլոգիական ներդրումները կարող են կարևոր դեր խաղալ մշակութային ժառանգության պահպանման գործում [4, էջ 2]: Սակայն կարևոր է նաև հասարակական շենքերում պահպանված որմնանկարների արժևորումը, ուսումնասիրությունը և հանրայնացումը: Այս համատեքստում կարելի է առանձնացել Հայաստանի վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանի (1942-2019 թթ.) Երևանի Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարանի ընթերցասրահների որմնանկարային ձևավորումը 1982-1984թթ: Գլխավոր ընթերցասրահի որմնանկարներն իրականացված են մատիտանկարի տեխնիկայով: Հայ ժողովրդի պատմության այս զարմանահրաշ և ներշնչող պատկերները տաղանդավոր նկարիչը կարողացել է ներդաշնակ և վարպետորեն միավորել ընթերցասրահների ներքին ձևավորման հետ: Սրահի շրջանաձև պատուհանները,

ու դռների ապակիների կտրվածքը ինչպես նաև գլխավոր մուտքի փայտե դռան վրա առկա ազգային զարդանախշերով շրջանաձև ուրվագիծը (դռան հեղինակը քանդակագործ Օհան Պետրոսյանն է, շենքի ճարտարապետները՝ Լևոն Գալումյանն ու Ռուզան Ալավերդյանը) արտացոլվել են նաև որմնանկարների գրաֆիկայում՝ ստեղծելով ամբողջական և ներդաշնակ մթնոլորտ շենքի ընդհանուր ճարտարապետական լուծումների հետ: Գունային գամման բաց տոնայնությամբ է, պատկերները՝ թափանցիկ և հեշտ ընկալելի: Հեղինակը կարողացել է հազեցած ու խորիմաստ բովանդակություն փոխանցել՝ կիրառելով մատիտի թեթև հարվածներ և երկրաչափական գծագրական լուծումներ: Երկնագույն, մոխրագույն և բաց դարչնագույն երանգները չեն շեղում ընթերցողին, այլ ներդաշնակորեն ներառվում են տարածության մեջ՝ դարձնելով դրանք արտահայտիչ և տպավորիչ: Այս որմնանկարը պատմում է հայ ժողովրդի բազմադարյա պատմության մասին՝ մշակութային հիշողությունը փոխանցելով նոր սերունդներին [8, էջ 149-150]: Ուսումնասիրության արդյուքնում այս ու ևս ինը մոնումենտալ-դեկորատիվ ստեղծագործություններ ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, որն էլ հանձնարարել է «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ներկայացված օբյեկտների պատմամշակութային արժեքն ուսումնասիրել ըստ ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 14-ի N 2196-Ն որոշմամբ հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու չափորոշիչների» և համապատասխանության մասին մասնագիտական եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ:

Խորհրդային Միության փլուզումից հետո մոնումենտալ-դեկորատիվ արվեստի զարգացումը Հայաստանում որոշ ժամանակ հայտնվեց պասիվության փուլում: Այն պայմանավորված էր ինչպես տնտեսական և մշակութային քաղաքականության խզմամբ, այնպես էլ հասարակական ուշադրության շեղումով՝ նոր ձևավորվող ազատ շուկայական հարաբերությունների և քաղաքական անցումային գործընթացների հետևանքով:

XXI դարի երկրորդ տասնամյակից սկսած՝ հատկապես վերջին տարիներին, նկատվում է որմնանկարչության և ընդհանրապես փողոցային արվեստի ակտիվ վերածնունդ քաղաքային միջավայրում: Հայաստանի մի քանի քաղաքներում, հատկապես Գյումրիում և Երևանում ձևավորվել է փողոցային արվեստի նոր մշակութային դաշտ, որի հիմնական նպատակն է վերարժնորել և նորովի մեկնաբանել քաղաքային միջավայրը՝ ազատ արվեստի լեզվով: Այս գործընթացը մասամբ կազմակերպվում է միջազգային մշակութային համագործակցության շրջանակում, ինչպիսին է **"CITY OF THE FUTURE Yerevan Street Art Fest"** նախաձեռնությունը: 2023 թվականին ծրագրի շրջանակում ստեղծվեց իտալացի արվեստագետ **Անտոնինո Պերոտտայի** (Antonino Perrotta) մոնումենտալ որմնանկարը՝ տեղադրված Երևանի Բսահակյան փողոց 36 շենքի կողային ճակատին: Այս աշխատանքը քաղաքին հաղորդում է համաշխարհային արվեստի ժամանակակից շունչ: Սակայն կարևոր է նշել, որ այս աշխատանքը իրականացված է սահմանափակ տարածության վրա, ինչի հետևանքով այն չունի հարմար դիտակետ և դիտման տարածք, ինչը խանգարում է, որ այս մոնումենտալ ստեղծագործությունը լիարժեք ներգրավվի քաղաքային միջավայրի մեջ:

2024 թվականին, նկարիչ **Ռոբերտ Նիկողոսյանը**, ոգեշնչվելով չեխ արվեստագետ **Ալֆոնս Մուխայի** ստեղծագործական ժառանգությունից, ստեղծեց նոր որմնանկար Երևանի կենտրոնում՝ Խանջյան փողոցի շենքերից մեկի ճակատին, ի նշան հայ-չեխ մշակութային կապերի:

Այս զարգացումներին զուգահեռ՝ 2024 թ.-ին իտալացի նկարիչ **Ֆաբիո Մարիա Ֆեդելեն** իրականացրեց ժամանակակից վերարտադրություն **Երվանդ Քոչարի «Ընդվզում»** ստեղծագործության մոտիվներով: Արձագանքելով հայկական մոնումենտալ արվեստի ժառանգությանը՝ այս գործը վերաիմաստավորեց Քոչարի ավանդը ժամանակակից քաղաքային մշակույթի շրջանակում:

Վերջին տասնամյակում Գյումրիում ևս նկատվում է փողոցային արվեստի՝ մասնավորապես գրաֆիտիի տեխնիկայով որմնանկարների ակտիվ զարգացում, որը վկայում է քաղաքի նորաձև մշակութային շնչի ձևավորման և պատմամշակութային ինքնության վերարժևորման մասին: Ի տարբերություն խորհրդային մոնումենտալիզմի, արդի որմնանկարչությունը Գյումրիում ունի ակնհայտ ազատարտահայտման բնույթ, հարաբերվում է ինչպես սոցիալական խնդիրների, այնպես էլ ազգային խորհրդանիշների հետ: Մի խումբ երիտասարդ նկարիչներ միավորվելով ստեղծեցին Gyumri Street Art նախագիծը, որի շրջանակներում բազմաթիվ շինությունների մակերեսները ձևավորեցին գրաֆիտիի տեխնիկայով արված հորինվածքներով: Դժվար է համադրել կոլորիտային քաղաքի միջավայրը ժամանակակից վառ գունապնակով և արդի թեմատիկ պատկերներով, սակայն այս հակասական տանդեմը կարելի է հանդիպել նաև շատ եվրոպական քաղաքներում: Այդ որմնանկարներում հաճախ միահյուսվում են ավանդական և ժամանակակից մոտիվները: Փողոցային արվեստի այս դրսևորումները հաճախ տարակարծությունների և քննարկումների առիթ են դառնում: Գյումրու փողոցային արվեստի նմուշները, կարելի է բնորոշել որպես սոցիալ-քաղաքական դերակատարություն ունեցող հաղորդակցային, մշակութային ուղերձներ, որոնք վերաիմաստավորում են քաղաքի տեսողական լեզուն և դրա սոցիալական նշանակությունը:

ԿՍՀՄ շրջանի որմնանկարները հաճախ կրել են գաղափարախոսական կառուցվածք, այնինչ ժամանակակից փողոցային արվեստի աշխատանքները հիմնականում ունեն **անհատական բովանդակություն**: Նոր որմնանկարները զգալիորեն ազատ են թեմատիկ և ոճական առումներով, ներկայացնում են **փիլիսոփայական, համաշխարհային կամ ներանձնային** գաղափարներ, շեշտում են մարդու և քաղաքի հարաբերությունը ոչ թե խորհրդանշային, այլ զգայական, անձնային մակարդակով:

ԵԶՐԱՀԱՆԳ ՈՒՄ. Հայաստանի մոնումենտալ-դեկորատիվ արվեստի, մասնավորապես՝ որմնանկարչության պատմության ուսումնասիրությունը վկայում է այս ոլորտի բարդ և բազմաշերտ զարգացումների մասին: Խորհրդային ժամանակաշրջանի գաղափարական և գեղարվեստական մոտեցումներից մինչև անկախության շրջանի ստեղծագործական անկումը և XXI դարի նոր վերածնունդը՝ որմնանկարչությունն անցել է ձևափոխությունների բազմակի փուլեր՝ միաժամանակ պահպանելով իր նշանակությունը որպես հասարակական հաղորդակցության, մշակութային ինքնության և գեղագիտական դաստիարակության գործիք:

Հայ անվանի արվեստագետների ստեղծագործությունները ոչ միայն աչքի են ընկնում իրենց գեղարվեստական արժեքով, այլև հանդես են գալիս որպես պատմական և մշակութային ժառանգության կրողներ: Այդ արժեքավոր գործերի պահպանման և վերականգնման ջանքերը կարևոր քայլ են ազգային մշակութային հիշողության ամրապնդման գործում:

Մրա հետ մեկտեղ՝ վերջին տարիներին նկատվող փողոցային արվեստի զարգացումը նոր լիցք է հաղորդել մոնումենտալ արվեստին՝ իբրև ժամանակակից մեղիա և հանրային արտահայտման միջոց: Մերնդափոխության և միջազգային համագործակցության արդյունքում ի հայտ են եկել նոր թեմատիկ լուծումներ ու ոճեր, որոնք քաղաքային միջավայրում վերաիմաստավորում են մարդու, պատմության և հասարակության փոխհարաբերությունները:

Խորհրդային ժամանակաշրջանում որմանակարները հիմնականում իրականացվում էին հասարակական շենքերի ներքին հարդարման մեջ՝ պայմանավորված արտաքին միջավայրի ազդեցությանը չդիմացող նյութերով և տեխնոլոգիական սահմանափակումներով: Ներկայումս, դիմացկուն գունանյութերի և նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ որմանակարները դուրս են եկել փակ տարածքներից՝ ընդգրկելով նաև շենքերի ճակատային հարդարանքը, ինչն ապահովում է արվեստի հանրայնացում և տարածական միջավայրի գեղագիտական բարձրացում: Այս նոր աշխատանքները վերափոխում են քաղաքային միջավայրը՝ ձևավորելով քաղաքների **տեսողական ինքնությունը**: Այստեղ կարևոր է գգուշորեն մոտենալ հարցին՝ չվնասելու համար առանց այդ էլ տեղեկատվական, գովազդային վահանակներով գերծանրաբեռնված միջավայրը:

Այսպիսով, որմանակարչությունը Հայաստանում ոչ միայն արտացոլում է պատմական և գեղարվեստական զարգացումների ընթացքը, այլև շարունակում է ապրել՝ հարմարվելով ժամանակակից պայմաններին, դառնալով հանրային տարածքների վերափոխման, մշակութային երկխոսության և ազգային ինքնության կառուցման կարևոր միջոց:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Աղասյան Ա.** *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*: Երևան: «Ոսկան Երևանցի» հրատ.: 2009, 292 էջ:
2. **Չարյան Ա., Լամուրե Ք.** *Որմանակարների վերականգնումը վաղ քրիստոնեական հայկական մի շարք եկեղեցիներում*: Երևան: 2019, 330 էջ:
3. **Մելիքսեթյան Գ.** *Մոնումենտալ արվեստը Հայաստանում (կրթողային արվեստ, որմանակարչություն)* // Հայագիտական հանդես: № 2 (61): Երևան: 2023: 98-106 էջեր:
4. **Cantoni V., Mosconi M., Setti, A.** *Technological innovation and its enhancement of cultural heritage* // In 2019 IEEE International Symposium on Innovations in Intelligent SysTems and Applications (INISTA). IEEE. 2019. 1-6 pp.
5. **Cicciariello K.** *Art and Nationalism in Soviet Armenia* // Purchase College State University of New York. 2019. p. 30.
6. **Бондаренко А.** *"Минас Аветисян: человек, художник, легенда."* // Армения: притяжение культуры. 2019. 165-171 сс.
7. **Котов А.** *Монументальное искусство в СССР*. Москва: АСТ. 2022. с 208, с.11.

8. **Петросян Л.** Монументальная живопись как средство организации пространственной среды // Актуальные проблемы монументального искусства: сборник научных трудов: в 2 частях. Часть II / под ред. Д. О. Антипиной, Я. А. Александровой, Р. А. Бахтиярова. Санкт-Петербург. ФГБОУВО «СПбГУПТД. 2025. 142-152 сс.

References

1. **Aghasyan, A.** The Development Paths of Armenian Fine Arts in the 19th–20th Centuries [*Hay kerparveste zargacman ughinery XIX–XX darerum*]. Yerevan: “Voskan Yerevantsi” publ., 2009. 292 p. (in Armenian)
2. **Zaryan, A.** Lamoure C. The Restoration of Murals in a Number of Early Christian Armenian Churches [*Vagh k'ristonēakan haykakan mi sharj yekeghets'ineri vormnanakarneri verakangnumn*]. Yerevan, 2019. 330 p. (in Armenian)
3. **Meliksetyan, G.** Monumental Art in Armenia (Monumental Sculpture, Mural Painting) [*Monumental arvesty Hayastanumv (k'ot'oghayin arvest, vormnanakarch'ut'yun)*] // Armenological Journal [*Hayagitakan handes*], No. 2 (61). Yerevan, 2023, 98–106 pp. (in Armenian)
4. - 5 /**Տե՛ս հայերեն գրականության ցանկում՝ in English/**
6. **Bondarenko, A.** Minas Avetisyan: The Man, the Artist, the Legend [*Minas Avetisyan: chelovek, khudozhnik, legenda*] // Armenia: The Attraction of Culture [*Armeniya: prityazhenie kultury*]. 2019, 165–171 pp. (in Russian)
7. **Kotov, A.** Monumental Art in the USSR [*Monumental'noye iskusstvo v SSSR*]. Moscow: AST publ., 2022. 208 p. (in Russian)
8. **Petrosyan, L.** Monumental Painting as a Means of Organizing Spatial Environment [*Monumental'naya zhivopis' kak sredstvo organizatsii prostranstvennoy sredy*] // Topical Issues of Monumental Art: Collection of Scientific Works: In 2 parts. Part II / Ed. by D.O. Antipina, Ya.A. Alexandrova, R.A. Bakhtiyarov. Saint Petersburg: SPbSUTD, 2025, 142–152 pp. (in Russian)

Ընդունվել է / Received on: **12. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **09. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե Պետրոսի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ Հայաստանի գեղարվեստի
պետական ակադեմիայի դասախոս, ասպիրանտ, Երևան, ՀՀ,
Էլ. հասցե՝ Lus8990@gmail.com / ORCID iD: 0009-0005-1039-014X

Lusine Petros PETROSYAN: State Academy of Fine Arts of Armenia,
Lecturer, PhD Candidate, Yerevan, RA,
e-mail: Lus8990@gmail.com/ORCID iD: 0009-0005-1039-014X

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARCHITECTURE

ՀՏԴ՝ 726

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -189

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ
ՀԱՐՑԵՐ ԳԱՌՆԻԻ ԵՎ ՄՈՒՍԱՍԻՐԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Աշոտ Հայկազուն Գրիգորյան

Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան,
Ալ.Թամանյանի անվ. ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անվտվում

Նախաբան. Ներկայացվող սրահավոր, ճակտոնով և հատակագծային քառանկյան չորս կողմերում վեր խոյացող պլունաշարքով պաշտամունքային կառույցներից (պահպանված) լավագույն օրինակ է Գառնիի հեթանոսական տաճարը: Հոդվածում Գառնիի և Մուսասիրի տաճարների համեմատական վերլուծությամբ փորձ է արվում պարզել և հիմնավորել դրանց հորինվածքային նախատիպերի նմանությունն ու տեղական ծագումը: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Վերլուծություն. Կատարվել են Գառնիի և Մուսասիրի տաճարների տարածաչափական ուսումնասիրություններ, ինչպես նաև հատակագծային և ընդհանուր կերպարային վերլուծություններ: Արդյունքներ. Ուսումնասիրության մեջ համեմատական վերլուծությունների արդյունքում շրջանառության մեջ է դրվել այն տեսակետը, որ Գառնիի և Մուսասիրի տաճարների հորինվածքային ձևերի նախատիպերը գտնվում են Հայկական լեռնաշխարհում, դրանք տեղական, հայկական ծագում ունեն և սերվում են մեր նախահայրերի բնապատական ընկալումներից:

Բանալի բառեր՝ Գառնի, Մուսասիր, տաճար, թաղ, խոյակ, երթիկ, խորհրդանշան, Հայկական լեռնաշխարհ:

Ինչպես հղել՝ Գրիգորյան Ա. Հ. Պաշտամունքային կառույցների նախատիպերի մի շարք հարցեր Գառնիի և Մուսասիրի տաճարների օրինակով: // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 189 - 204 էջեր:

DOI:10.52971/18294316-2025.28.2-189

A NUMBER OF QUESTIONS OF PROTOTYPES OF RELIGIOUS BUILDINGS (ON THE EXAMPLE OF THE TEMPLES OF GARNI AND MUSASIR)

Ashot H. Grigoryan

National University of Architecture and Construction of Armenia,
National Museum-Institute of Architecture after Alexander Tamanyan, RA

Abstract

Introduction: The best preserved example of a religious building with a hall, pediment and colonnade rising on all four sides of a quadrangular plan is the pagan temple of Garni.

The article attempts to clarify and substantiate the similarities of their compositional prototypes and local origin through a comparative analysis of the volumetric-spatial solutions of the temples of Garni and Musasir. **Methods and materials:** We have used historical-comparative methods, as well as methods of analyzing primary sources. **Analysis:** Volumetric-spatial and artistic-decorative studies of the temples of Garni and Musasir were conducted. **Results:** As a result of the comparative analysis, the study substantiates that the prototypes of the compositional forms of the temples of Garni and Musasir found in the Armenian Highlands have a local origin and are inherited from the natural-philosophical ideas of our ancestors.

Keywords: Garni, Musasir, temple, vault, capital, symbol, Armenian Highland.

Citation: Grigoryan A. A. *A Number of Questions of Prototypes of Religious Buildings (on the Example of the Temples of Garni and Musasir)*. // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025.

Vol. 2 (28). 189 – 204 pp.. DOI:10.52971/18294316-2025.28.2-189

ՆԱԽԱԲԱՆ. Հայկական լեռնաշխարհում հայտնի պաշտամունքային կառույցները իրենց հորիվածքային ձևերով բաժանվում են սրահավոր հարթածածկ, սրահավոր երկլանջ ծածկով և ճակտոնով, սրահավոր երկլանջ (ճակտոնով) ծածկը իրենց վրա կրող սյունաշարքով, ինչպես նաև սրահները հարթ և թաղակապ ծածկված հորինվածքով հիմնական տիպերի:

Սրահավոր, ճակտոնով և հատակագծային քառանկյան չորս կողմերում վեր խոյացող սյունաշարքով պաշտամունքային կառույցներից (պահպանված) լավագույն օրինակ է Գառնիի հեթանոսական տաճարը, որը գտնվում է Կոտայքի մարզի Գառնի գյուղում, Ազատ գետի աջ ափից երկինք ձգվող անդնդախոր կիրճի վրա (նկ.1, 2): Տաճարի շրջակայքը պարսպապատ է՝ ամրոցաշինությանը բնորոշ ճարտարապետությամբ: Գառնիի ամրոցում շինարարական կյանքը գոյություն է ունեցել վաղ բրոնզի դարում (III հազարամյակ մ.թ.ա.), պահպանվել են վաղ բրոնզիդարյան ամրոցի պարսպապատերը և կլոր կացարանի մնացորդները:[5]

Հենց այս հնագույն ամրոցի տարածքում էլ հետագայում՝ I-ին դարի II-րդ կեսին, կառուցվել է Գառնիի մինչքրիստոնեական տաճարը: (նկ.3)

Գառնիի տաճարի հատակագիծը 5,05 x 7,988 մետր չափի ուղղանկյուն դահլիճ է՝ նախամուտքով, որոնք շրջապատված են կարճ ճակտոններում վեցական, երկար ճակտոններում՝ ութական, այսպես կոչված՝ հռոմեական-հունիական օրդերի սյուներով: [5, էջ 207] (զծ.3,4) :

Գառնիի տաճարը նվիրվել է Արևի աստված Արեգին (Միհրին): Տաճարը կանգուն է եղել մինչև XVII դարը, կործանվել է հզոր երկրաշարժի հետևանքով, 1679 թվականին:

1975 թվականին ճարտարապետ Ալեքսանդր Սահինյանի մշակած վերակառուցման նախագծի հիման վրա և նրա անմիջական վերահսկողությամբ ավարտվեցին Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման աշխատանքները:

Վ Ե Ը Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն. Չնայած առաջին հայացքից Գառնիի տաճարն ընկալվում է որպես հելլենիստական շրջանի ճարտարապետական հորինվածք, սակայն մանրագնին հետազոտության ընթացքում ի հայտ են գալիս որոշ մանրամասներ, որոնք թույլ են տալիս հետևություն անել, որ տաճարի ճարտարապետությունը կրկնություն չէ, այլ շատ հորինվածքային ձևերով տարբերվում է մեզ հայտնի հունա-հռոմեական տաճարների ճարտարապետությունից:

Դեռևս հետազոտական աշխատանքների առաջին քայլերից Ալ. Սահինյանը նկատել էր, որ տաճարի «շինանյութը Գառնիի որձաքարն է, որի մշակումը կատարված է մեծ վարպետությամբ. մի բան, որին դյուրությամբ կարող էին հասնել այդ շինանյութի վրա աշխատելու դարավոր փորձ ունեցող տեղական վարպետները: [5, էջ 207]

Եվ իրոք, Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում նման օրինակներ շատ կան: Սահինյանն էլ իրավացիորեն նշում է, որ որձաքարի մշակման նման եղանակները պատմական Հայաստանում հայտնի էին դեռևս ուրարտական (Վանի հայկական թագավորության - Ա.Գ.) ժամանակներից (IX-VIII դդ. մ.թ.ա.): [5, էջ 207] :

Հաջորդ տարբերությունը, որ ակնհայտ է տաճարի հորինվածքում, այն է, որ կառույցը հիմքից մինչ տանիք կառուցված է քարից: Մի բան որ չենք հանդիպում հունահռոմեական տաճարաշինության մեջ:

Այնտեղ հայտնի բոլոր կառույցների ծածկերը կառուցված են եղել փայտից: Սահինյանի ուսումնասիրություններն էլ իրենց հերթին ցույց են տվել, որ «Գառնիի տաճարի կառուցվածքում փայտյա ոչ մի մաս չի եղել» [5, էջ 208]:

Իսկ ինչպես է իրականացվել տաճարի ծածկը: Տաճարի ավերակներում գտնված բազմաթիվ քարաբերկորների չափագրումն ու ուսումնասիրությունը թույլ են տվել եզրակացնել, որ տաճարի ծածկը եղել է թաղակապ:

Այսինքն՝ կառույցը վարից վերև քարաշեն է: Սրահը ավարտվում է կիսաշրջանաձև, քարաշեն թաղակապ ծածկով (նկ. 5), իսկ որ Հայակական լեռնաշխարհում թաղածածկի հորինվածքը սերում է քարի դարից, այսօր որևէ կասկած չի հարուցում: Բավական է համեմատել Արագածոտնի տարածքում (և այլուր) պահպանված «հսկայի տներ» տիպի կառույցների ծածկերի կառուցվածքային լուծումները հետագա ժամանակաշրջանների նմանատիպ և այլ հորինվածքների հետ, ապա հեշտ է նկատել, որ կամար, թաղ, խորան և այլ հորինվածքներ «կեղծ կամար» տարբերակից մինչև Գառնիի կիսաշրջան թաղածածկ տեսակ՝ չընդհատվող երկար ու ձիգ ճանապարհ են անցել :[2,3, 4] (նկ. 5, 6)

Բացի այդ, Գառնիի տաճարի թաղածածկ հորինվածքը ունի նաև երդիկ: Սահինյանը նշում է, որ Գառնիում (սրահի, ԱԳեն) մուտքի բացվածքը այնքան մեծ է, որ այնտեղից ներս թափանցող լույսը լիովին բավական է սրահը անհրաժեշտ չափով լուսավորելու համար: Չնայած դրան՝ Գառնիի տաճարը լուսավորվում է նաև վերնից՝ երդիկից: [5, էջ 208](նկ. 5-9)

Ուրեմն ինչպես է հիմնավորվում երդիկ ունենալու պահանջը:

Չմոռանանք, որ տաճարը նվիրված է հայոց Արեգ աստծուն: Ըստ այդմ, բնական է, որ տաճարի ճարտարապետական հորինվածքում ուղղակի թե անուղղակի պիտի որևէ կերպ արտահայտված լինեին Արև աստծո և Արևի պաշտամունքի հետ կապված դրսևորումներ: Իսկ արևի նկատմամբ մեր նախնիների պատկերացումները կազմավորվել և փաստացի ամրագրվել են Հայկական լեռնաշխարհում առնվազն մ.թ.ա. 12-րդ հազարամյակից:

Ըստ Հայր Ղևոնդ Ալիշանի՝ «Թերևս միայն կոյրք չգիտնան, թե ըստ բնական տեսության մարդկան՝ Արեգակն է գլխավոր Լուսավորաց, Ակն (աչք) տիեզերաց կոչուած, գուցէ լաւ եւս ըսել՝ Աչք տիեզերաց յարեգակն. ուստի բնական այլ է, որ գերբնականէն մոլորեալ միտք՝ զԱրեգակն աստուած համարէր...» [1, էջ 83]:

Այստեղից հետևում է, որ Հայկական լեռնաշխարհում, հնագույն ժամանակաշրջաններից սկսած մինչև մ.թ. I դարը, դեռ պահպանված էր Արեգակի պաշտամունքն իր ամենատարբեր դրսևորումներով (գիտենք նաև, որ շատ բնակավայրերում այն պահպանվել էր ընդհուպ ուշ միջնադար, իսկ պաշտամունքային որոշ ձևեր՝ մինչ օրս):

Ուստի Գառնիի տաճարի կառուցումից շատ ավելի վաղ «հին Հայք նախ զԱրեգակն պատուած և պաշտած պիտի ըլլան՝ յերկինս, իր առերեւոյթ շրջանին մեջ, մանաւանդ ծագած և ծածկուած աղենն՝ ի հորիզոնի, յետոյ բոլորակի ձեւով ներկայացաւ, ապա և մարդակերպ» [1, էջ 85]:

Եվ իրոք, միայն Սյունաց և այլ լեռների ժայռապատկերներում արեգակի բոլորակաձև և մարդակերպ պատկերները մի քանի տասնյակ են (նկ. 21, 22), որոնք պայմանավորված են մեր նախնիների բնապաշտական մտածողության արդյունքում կազմավորված խորհրդաբանական ընկալումներով:

Այստեղից կարող ենք հետևություն անել, որ Գառնիի տաճարի ճարտարապետական հորինվածքում սրահը, որը, ի դեպ, «հենված» է երկրի վրա, իր վերնամասում պիտի ունենար երկինքը խորհրդանշող կամար և կամարակապ ծածկ, այն երկնքի, որտեղ իր ամենօրյա շրջապտույտն է կատարում Արեգակը, որի պաշտամունքին էլ նվիրված է տաճարն ընդհանրապես:

Ինչ վերաբերում է թաղածածկի մեջ բացված երդիկին, ապա նրա նշանակությունը նույնպես հասկանալի է: V դարի մատենագիրներ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու վկայություններից հայտնի է, որ հայկական մեհյաններն ունեցել են պաշտվող կուռքի արձաններ: Համանման նշանակության արձան կանգնեցված է եղել նաև Գառնիի տաճարում: Այն դրվել է սրահի հետևի պատի մոտ, բարձր պատվանդանի վրա՝ ներառված ուղղանկյուն խորշի մեջ [5, էջ 208]:

Երդիկից ներս թափանցող Արեգակի ճառագայթները պետք է լուսավորեին սրահի բացվածքի դիմացի պատի խորշի մեջ տեղադրված Արեգ աստծո արձանը: Ի դեպ, սխալված չենք լինի արձանագրել, որ այդ խորշը իր քառանկյուն, աջից և ձախից խորշատիպ (հատակագծում) հորինվածքով, կարող էր նախատիպ հանդիսանալ վաղքրիստոնեական պաշտամունքային կառույցների ավագ խորանի հորինվածքների համար (նկ.

4, 5) (Նկատենք, որ հելենական տաճարներում ընդունված էր արձանը տեղադրել սրահի մուտքի դիմաց, նրա կենտրոնում, կամ քիչ ավելի հեռու, դեպի դիմացի պատը):

Արեգ աստծո արձանի լուսավորման անհրաժեշտությունը իրականացվել է տաճարի թաղածածկի մեջ բացված երդիկով. այսպիսի լուծում ունեն Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչ օրս պահպանված բնակելի տների, «գլխատուն» տարատեսակի հազարաշեն ծածկով հորինվածքները [3, էջեր 75-94]: Ըստ Ալեքսանդր Սահինյանի մեկնության՝ «...այն տաճարները, որոնցում առավել ստույգ է հաստատված վերնից լուսավորվելու բացվածքների առկայությունը, նվիրված են լույս անձնավորող աստվածություններին...»: Իրավամբ՝ «...Գառնիի տաճարը նվիրված է եղել (ինչպես արդեն նշվեց) հին հայկական արևի (Արեգ) աստված Միհրին»:

Ուրեմն կարելի է եզրակացնել, որ Գառնիի տաճարի երդիկի լույսը ունեցել է խորհրդանշանային դեր, ցանկացել են պաշտվող կուռքի վրա վերնից իջեցնել արևի ճառագայթների խուրձ (ինչպես որ հետագայում քրիստոնեական շրջանում, ավագ խորանի արևելյան պատի միակ բացվածքից, որ լուսամուտ է կոչվում, արևածագի լույսի խուրձն է իջնում և լուսավորում աստծո երկրային տան ավագ խորանի Ս. սեղանը):

Ընդհանրապես Արեգ-Միհրը խորհրդանշում են կենսատու լույսը, մաքրություն, ճշմարտություն, անշեջ հուր, զորություն, խավարի ու չար ուժերի դեմ մարտնչող աստված, Արեգը երկնքից տեսնում է (այստեղից էլ՝ նրա «Ակն տիեզերաց», «Հայեկ» մականունները) երկրային արարքները և ընդունում արդար վճիռ:[ՀՀՀ, հ 3, էջ 701]

Տաճարի հորինվածքում կարևոր նշանակություն ունի նրա ծավալային լուծման եռամաս (եռաշերտ) բաժանման համակարգի գոյությունը: Տաճարը կառուցված է բարձր պատվանդանի վրա, որից հետո սյունաշարքով շրջապատված սրահն է (որի ներսում Արեգ աստծո արձանն է տեղադրված եղել), կառույցն ավարտվում է եռանկյուն ճակտոնով: Այս մոտեցումը պայմանավորված է և սերում է մարդ-երկիր-երկինք խորհրդանշանային պատկերացումներից, ըստ որոնց՝ եռաբաժան համակարգի ներքնի՝ ստորին շերտը խորհրդանշում է անդրաշխարհը, միջին շերտը (մարդ-Աստված) երկրային սահմանը, իսկ երրորդ՝ վերին շերտը երկնային (Աստվածների) տիրույթն է (Ի դեպ, նման բաժանում ունեն նաև քրիստոնեության շրջանի հայոց աշխարհի պաշտամունքային կառույցները) [ՀՀՀ, հ.3, էջ 701]: (նկ. 12)

Ինչ վերաբերում է սյունաշարքին, ապա հունական անտիկ ճարտարապետության մեջ ընդունված հոնիական սյունակարգը պատահականորեն չի ընտրված Գառնիի տաճարում: Հիշենք, որ տաճարը կառուցված է Հայկական լեռնաշխարհի գողտրիկ վայրերից մեկում, որտեղ մինչ Գառնիի տաճարի կառուցումը արդեն եղել են ավելի հին և հավանաբար նույնպես պաշտամունքային կառույցներ: Մակայն չմոռանանք, որ Տաճարի տեղադրության վայրը ինքնին խորհրդանշական է: Հայկական լեռնաշխարհում լեռնային գետերը իրենց ոլորապտույտ հունով շատ անգամ ստեղծել են «գետի մեջ խրված» եռանկյան տեսքով ժայռակոփ սեպ, որը հանդիսացել է ինչպես պաշտամունքային, այնպես էլ բնակավայր կամ ամրոց կառուցելու համար շատ հարմար (երեք կողմից բնականորեն պաշտպանված տարածք) միջավայր (Անի, Շամիրամ, Ղարս, և այլն):

Խորհրդաբանական ընկալումների շրջանակում այսպիսի տարածքները նույնացվում են ջրի պաշտամունքի, մայրության, երկրային կյանքի պահպանման և շարունակականության ապահովման (իգական և արական) խորհուրդների հետ:

Մյուս կողմից՝ չմոռանանք, որ հոնիական օրդերն իր անունը ստացել է հին Հունաստանի Հոնիա շրջանի անվանումից, որտեղ այն ծագել է: Իսկ Հոնիան գտնվում էր Փոքր Ասիայի արևմտյան միջերկրածովյան ափամերձ հատվածում և իր արևելյան սահմաններով հարակից (հարևան) էր պատմական Հայաստանի տարածքներին: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հոնիական սյունակարգի վերին մասը (խոյակը) ուղղակի հին հունարենով նշանակել է Հալդերի երկրից բերված, և իր նկարվածքով հար և նման է հայկական մուֆլոնի՝ խոյի պարույրաձև կոտոշներին: Իսկ հայկական իրականության մեջ խոյի պաշտամունքը դարերի պատմություն ունի (նկ. 16, 18, 20, 21, 23, 24):

Ուստի պատահական չէ, որ Գառնիի տաճարի հորինվածքում հոնիական սյունակարգն է ընտրվել, որը ավելի հարագատ, ծանոթ և ընկալելի էր (և այսօր էլ), տեղաբնիկներին, նաև այն իմաստով, որ մեր նախնիների խորհրդաբանական պատկերացումներով սյուն-ուղղահայացը՝ կենաց ծառը, երկիրը կապում էր երկնքի հետ և, բնականաբար, երկինքը՝ երկրի (նկ. 10):

Գառնիի տաճարի ճարտարապետական հորինվածքում այլ հետաքրքիր խորհրդանշական մոտեցումներ էլ կան, օրինակ ճակտոնի երկար կողմերում առյուծի գլուխների առկայությունը, արդեն որպես Արեգակի կենդանակերպի նշան՝ իրենց խորհրդաբանությամբ, սյուն կենաց ծառերը՝ որպես երկինքը պահող գավազաններ, արական սկիզբ – ուղղահայացներ, պատվանդանի 10 աստիճանները՝ որպես 10 թվի խորհուրդ և այլն, երկնքից խոյով առ երկիր իջնող և երկիրը բեղմնավորող արևի բարեբեր ճառագայթներ: Խորհրդաբանական ընկալումների արդյունք են նաև սյուները, հատկապես իրենց քանակական իմաստով:

Ի դեպ, պատմաբան Արտակ Մովսիսյանը Գառնիի 24 սյուների քանակը կապում է օրվա 24 ժամերի հետ՝ համարելով, որ դրանց քանակական ընտրությունը գալիս է Արևի աստվածության պատկերացումներից և գուգահեռվում է մեր նախնիների՝ աշխարհի մասին բնափիլիսոփայական պատկերացումների հետ:

Հարկ է նշել, որ տաճարի սյուների հոնիական օրդերի՝ իրականում երկու տիպ է հայտնի: Հոնիական օրդերի երկու (ոչ մեծ տարբերություն ունեցող) տարատեսակներից առաջինը՝ հիմնականը, համարվում է «փոքրասիական տարբերակը» (նկ. 10), երկրորդը՝ հունականը (նկ. 15), որը «կազմավորվեց հիմնականից ավելի ուշ»: [5, էջ 209]

Ուշագրավ է նաև, որ հույները (արգանավորդների օրինակով) Հալդերի երկրում էին փնտրում նաև «ոսկե գեղմը» խոյի գլուխը, յուրահատուկ գալարաձև կոտոշներով, որը հոնիական օրդերի խոյակի հորինվածքային նկարվածքի հիմքն է: (նկ. 21, 23)

Սակայն, մեր հետազոտության համար մեկ այլ դիտարկում էլ կա, արդյո՞ք Գառնիի տաճարի հորինվածքը Հայկական լեռնաշխարհում իր նախատիպը չի ունեցել, մանավանդ հայտնի է նաև, որ հունական սյունակարգային ճարտարապետության նախատիպեր պատմական Հունաստանի տարածքում չեն հայտնաբերվել, և շատ հետազոտողներ այն կարծիքն են հայտնել և հայտնում, որ դրանք փոքրասիական ծագում պետք է որ ունեցած լինեին:

Իրականում Հայկական լեռնաշխարհում Արարատյան թագավորության ժամանակաշրջանում եղել են եռանկյուն ճակտոնով և սյունաշարքով պաշտամունքային կառույցներ: Ասվածի լավագույն վկան Մուսասիրի տաճարն է (նկ.11), որը, ինչպես նշում է ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկին, «ներկայացնելով սյունաշարքով և ճակտոնով տաճարների հայտնի տիպերից հնագույնը, ընկավ անտիկ ճարտարապետության հիմքում»:

Մուսասիրի տիպի տաճարները կարող էին գոյություն ունենալ Հայկական լեռնաշխարհի նաև այլ վայրերում: Այդ մասին է վկայում Իջևանից (Աստղաբլուր) գտնված, մ.թ.ա. VI դարի գործ համարվող, երկլանջ տանիքով կառուցվածքակալաշեն մանրակերտը: (նկ. 13, 14)

Բորիս Պիոտրովսկին նշում է նաև, որ «մուտքի բացվածքի կամ խորշի վերին մասի կամարաձև վերջավորությունը և թաղը (коロボвай свод) Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեն դեռևս ուրարտական ժամանակաշրջաններում[5, էջ 209]: Եվ իրոք, Ք.ա. 714 թվականին Արդինիից ոչ հեռու, Վանա լճից հարավ կառուցված Մուսասիրի (Մուծածիր) տաճարը (նկ. 11) Վանի Արարատյան (Հայկական) թագավորության գլխավոր աստծո Խալդիի տաճարն է, որի պաշտամունքը կապվում է Արևապաշտության հետ (Իդեալ, մինչ այդ Հայոց մեջ նկատել և ընդունել են Արևի հավերժ լինելու պարագան, երկնականարում չընդհատվող իր պտույտով, լուսավորելու, ջերմացնելու, երկիրը բեղմնավորելու հատկություններով):

Մուսասիրի տաճարը, ավելի ճիշտ նրա պատկերը, պահպանվել է Խորասաբադի Դուռ Շառուկինի (Ասորեստան) պալատի քանդակներից մեկի վրա, որտեղ ցույց է տրված Ասորեստանի թագավոր Սարգոնի 714 թվականի (մ.թ.ա.) արշավանքի ժամանակ տվյալ տաճարի կողոպուտը (նկ. 11):

Տաճարի պահպանված նկարվածքից կարելի է հետևություն անել, որ այն իր ճակտոնով ծավալային հորինվածքում նույնպես եռաշերտ է, ինչպես Գառնիի տաճարը, այստեղ նույնպես հզոր պատվանդանի վրա երկինք են ձգվում տանիքի եռանկյունաձև ճակտոնը պահող սյուները: Ճակտոնը ինչպես Գառնիի պարագայում, ավարտվում է կենաց ծառ (տերև) հորինվածքով (նկ. 12): Տաճարը թալանվել է, քանդի ներսում եղել են ոսկեծույլ արձան, թանկարժեք այլ իրեր և պարագներ: [ՀՀՀ, հ. 3, էջ 803]

Մուսասիրի կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Միայն Լուվրյան տեքստերից է իմացվում, որ նա Ք. ա. IX դարի վերջին կամ Ք. ա. VIII դարի սկզբին արդեն գոյություն ուներ: Պրոֆեսոր Պիատրովսկին «շատ հավանական» է գտնում, որ «կառուցվել է Մենուայի կողմից Ք. ա. IX դարի վերջին»: [7, cc. 251-252]

Փաստորեն, այս երկու տաճարները կառուցված են բարձր պատվանդանի վրա, ճակատային մասում սյունաշար ունեն, ավարտվում են ճակտոններով: Բացի ճարտարապետական այս ընդհանրություններից, երկու կառույցներում առկա են բնապաշտական աշխարհընկալման արդյունքում ստեղծված խորհրդաբանական պատկերացումների նյութերն արտահայտություններ:

Այսպես, երկու տաճարներում էլ հստակ նկատելի է մարդ-երկիր-երկինք եռաշերտության գաղափարը: Եթե մտովի տաճարների ճակտոնների գագաթից ուղղահայաց «կանգնեցնենք» առ երկիր, ապա հեշտ է նկատել, որ ըստ ուղղահայաց առանցքի, տաճարների

հորինվածքը բաժանում է երեք մասի՝ պատվանդան, պունաշար, երկթեք տանիք (ճակտոն): Այստեղ աստիճանաձև պատվանդանը խորհրդանշում է եռաշերտի անդրաշխարհ, անդր-երկրային (օձ, վիշապներ) շերտը, պունաշարերը՝ երկրից առ երկինք վեր բարձրացող (սյունը խորհրդանշում է նաև երկնքից առ երկիր կապը, լույսի ճառագայթը) կենաց ծառերն են, որ պատկերում են եռաշերտի երկնային մասը (Ըմ նդ որում՝ այստեղ, երկրի վրա է գտնվում հենց տաճարը՝ ուղղանկյուն լուծումով, որի մեջ պիտի լինեք նաև պաշտվողի արձանը) և սրանից վերև ճակտոնով (երկինք, թռչուն խորհրդանշանի կիրառմամբ) երկնային մասը, այն երկնքի, որտեղ բնակվում են Աստվածները (նկ. 12):

Ի դեպ, Մուսասիրի տաճարի ճակտոնը ավարտվում է «Ծիլ» խորհրդանշանակ հանգույցով, որը խորհրդանշում է երկրի վրա կյանքի ծլարձակման գաղափարը՝ երկնային ուժերից բեղմնավորված: Այսպիսի լուծում կարելի է տեսնել Արարատյան թագավորության ժամանակաշրջանի բազմաթիվ կոթողների, դեկորատիվ կիրառական արվեստի գործերի վրա, իսկ Գառնիի տաճարի երկայնական ճակատի վերնամասում առյուծի գլուխների շարքեր են քանդակված, որ Արևի կենդանակերպ խորհրդանշանն են:

Այսպիսով, կարելի է եզրակացնել՝ թե՛ Մուսասիրի, և թե՛ Գառնիի տաճարների հորինվածքներում տեղ են գտել այնպիսի խորհրդանշանային պատկերներ, ինչպիսիք են՝ հորիզոնական և ուղղահայաց գծերը, թռչուն-երկինք պատկերը, պուն-կենաց ծառ, երկիր-երկինք, աշխարհի եռաշերտ բաժանման և աշխարհի քառակողմ բաժանման համակարգեր և այլք. հանգամանք, որ հստակ է և բնորոշ հայկական պատմաճարտարապետական հուշարձաններին ընդհանրապես:

Մուսասիրի և Գառնիի տաճարների ընդհանրությունը այնքան բացահայտ է, որ Ալեքսանդր Մահինյանը կարողացել է կատարել տրամաբանական և համոզիչ հետևություն: Ըստ նրա՝ «Գառնի տաճարի պերիպտեքլալ հորինվածքը հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետական կառուցողական ընդհանուր արվեստի արգասիք է, որի ընդհանուր կառույցի հիմքում հիմնականում ընկած է Մուսասիրի ուրարտական տաճարի կերպարը, ցելլայի հատակագիծն իր համաչափություններով հար և նման է Էրեբունիի ուրարտական տաճարի՝ «Մուսիի» հատակագծին, իսկ հոնիական օրդերի համաչափական համակարգն ունի, ըստ էության, փոքրասիական ծագում:

Մահինյանը իրավամբ նկատում է նաև, որ «Տաճարը կառուցված է նույն այն շինանյութով (Գառնիի որձաքար) և կառուցողական նույն տեխնիկայով, որպիսին գոյություն ունեւ տաճարի կառուցումից շուրջ երեք հարյուր տարի առաջ ստեղծված՝ հենց նույն Գառնիի ամրոցի պաշտպանական համակարգում: Հետևապես, շենքը կառուցված է հայ շինարարներին մինչ այդ արդեն իսկ քաջ ծանոթ շինանյութով ու կառուցողական տեխնիկայով:

Տաճարի միջուկը կազմող ցելլայի կառուցվածքը (սրբատաշ որձաքարով պատի շարվածք) քարակերտ թաղակապ ծածկ, թաղի վերնում՝ կրաշաղախ, իսկ վրան՝ որձաքարե սալիկներով պատված տանիք, երդիկ, համաչափություններ, նույնիսկ հատակագծային բացարձակ չափեր, ակնհայտ ընդհանրություն ունի ճարտարապետական մշակույթի տեղական ավանդույթների հետ»:[5, էջ 210]

Ընդհանրացնելով իր եզրակացությունները Գառնիի տաճարի շուրջ՝ Ալեքսանդր Սահինյանը ավելի հեռու է գնում, գտնելով, որ «Հայաստանում ճարտարապետական մտքի ու կառուցողական արվեստի բարձր մակարդակի արգասիք հանդիսացող նշանակալից քանակությամբ հուշարձանների առկայությունը աներկբայորեն ցույց է տալիս, որ հայ ազգային ճարտարապետության բնույթի սկզբնավորման, նրա առանձնահատկությունների դրսևորման պրոցեսը սկսվել է դեռևս ինը դար ընդգրկող նախաքրիստոնեական շրջանում, որը և ներկայացնում է հայ դասական ճարտարապետության կազմավորման առաջին փուլը: [5, էջ 214]

Այս տողերը Սահինյանը գրել է 1983 թվականին: Անցել է ավելի քան 40 տարի, հնագիտական, պատմական, տարաբնույթ համեմատական վերլուծությունների և ուսումնասիրությունների հիման վրա շրջանառության մեջ են մտել նոր տեսակներ: Զջգրովել են մինչ այդ հավաստի թվացող տվյալներ և մոտեցումներ: Հաշվի առնելով Սահինյանից հետո կատարված ուսումնասիրությունների հավաստիությունը, մինչև նույն ժամանակ բարձր գնահատելով Սահինյանի վաստակը Գառնի տաճարի պեղման, ուսումնասիրության և վերականգնման գործում՝ համենայն դեպս արձանագրում ենք, որ «Հայ դասական ճարտարապետության կազմավորման առաջին փուլը» ոչ միայն շատ ավելի վաղ է առաջացել, այլ այն անցել է կազմավորման երկար, փնտրտուքներով հարուստ ժամանակաշրջաններ:

Եթե առաջին պաշտամունքի արժանացած երևույթներն և տեսանելի շնչավոր կամ «անշունչ» էակները, բնության մեջ էին և հաճախ անտեսանելի (օրինակ՝ գիշերը, կամ ամպամած օրերին), հետևաբար դրանց պաշտել-եկրպագելու ձևն ու տիրույթն էլ բնության մեջ էր: Հետագայում, երբ մարդկային հասարակությունը անցավ նստակյաց կյանքի, ստեղծելով բնական հաստատուն միջավայր, աստիճանաբար այդ միջավայր ներգրավվեց պաշտամունքային տարածք ունենալու գաղափարը: Բնակելի միջավայրը կազմակերպող գործառնական տարածքների կազմակերպմանը զուգահեռ՝ բնակելի կացարանի տարածք ինտեգրվեցին այլ, արդեն պաշտամունքային բաղադրիչներ: Դրանք, կացարանից դուրս գալով, տեղակայվեցին բնակավայրի հրապարակում, որտեղ կառուցվեցին պաշտամունքային շինություններ, չմոռացվեցին նաև մինչ այդ բնության մեջ կանխորոշած, սար, գագաթ, բլուր և այլ պաշտամունքային վայրերը, որտեղ նույնպես սկսեցին համապատասխան շինություններ կառուցելու գործընթացները: Ինչ վերաբերում է Գառնի-Մուսասիր զուգահեռներին, ապա կարևոր է շեշտել, որ Մուսասիրը կառուցվել է շատ ավելի վաղ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Գառնիի տաճարի հորինվածքում առկա մեր նախնիների բնապաշտական ընկալումների արդյունքում արմատացած խորհրդաբանական պատկերացումների գոյությունը և դրանց ընդհանրությունը Մուսասիրի տաճարի խորհրդաբանական ընկալումների հետ (քառանկյուն լուծում (երկրի խորհրդանշան պատկեր), եռանկյուն ճակտոն (երկնքի խորհրդանշան պատկեր), սյուն՝ ուղղահայացի խորհուրդ, խոյակ՝ խոյի պաշտամունք, առյուծ՝ արևի կենդանապատկեր, աշխարհի եռաշերտ բաժանման համակարգ և այլն) մի կողմից և Հայկական լեռնաշխարհից բացահայտված հազարավոր քարիդարյա վաղեմության տարատեսակ արտիֆակտներում խորհրդաբանա-

կան պատկերացումների նույնիմաստ հետքերը՝ մյուս կողմից համեմատելով, հաստատում և նորովի ամրագրում ենք, որ Գառնիի տաճարի հորինվածքային ձևերի նախատիպերը հայտնի էին և պահպանված են Հայկական լեռնաշխարհում, դրանք տեղական, հայկական ծագում ունեն և սերվում են մեր նախահայրերի բնաճանաչողական և բնապաշտական ընկալումների հիման վրա առաջացած խորհրդաբանական պատկերացումներից, որոնք էլ իրենց չընդհատվող հետքն են թողել հայ մշակույթի և մասնավորապես ճարտարապետության վրա:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

Մենագրություններ՝

1. **Ալիշան հայր Ղևոնդ** Հին հասարք կամ հեթանոսական կրոնը Հայոց: Վենետիկ, Սր Ղազար: 1895: 522 էջ:
2. **Թորամանյան Թ.** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 14-18:
3. **Գրիգորյան Ա. Հ.** Հայ քրիստոնեական ճարտարապետությունը և նախաքրիստոնեական մշակույթի ներգործությունը, «Չանգակ-97» ՍՊԸ: Երևան: 2023: 440 էջ:
4. **Պետրոսյան Ս.** Հայկական ժայռապատկերներ 2005: Երևան: 245 էջ:
5. **Սահինյան Ալ.** Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը: Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: Երևան: 262 էջ, 68 թերթ նկար:
6. **Потровский Б.** Ванское царство (Урарту), М., 1959
7. **Потровский Б.** История и культура Урарту, Ереван, 1944, 364 с.
8. **Тревер К.** Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953.

Ժողովածուներ՝

9. Հայկական համառոտ հանրագիտարան, 4 հատորով, հատոր 1, Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1990, 768 էջ:
10. Հայկական համառոտ հանրագիտարան, 4 հատորով, հատոր 3, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1999, 896 էջ:

References

Monographs:


1. **Father Ghevond Alishan** The Old Faith or Pagan Religion of the Armenians {*Hin havatk' kam hayeri het'anosakan kron*}, Venice, St. Lazarus, 1895, 522 p.. (in Armenian)
2. **Toramanyan, T.** Materials on the History of Armenian Architecture {*Nyut'er haykakan chartarapetut'yan patmut'yan veraberya*}, Yerevan, 1942, 14-18 pp.. (in Armenian)
3. **Grigoryan, A.** Armenian Christian Architecture and the Influence of Pre-Christian Culture {*Haykakan k'ristoneakan chartarapetut'yuny yev nakhak'ristoneakan mshakuyt'i azdets'ut'yuny*}, "Zangak-97" LLC, Yerevan, 2023, 440 p. (in Armenian)
4. **Petrosyan, S.** Armenian Rock Paintings {*Haykakan zhayrrapatkerner*}, "YEGEA", Yerevan, 2005, 243 p.. (in Armenian)
5. **Sahinyan, A.** The Architecture of the Ancient Structures of Garni [*Garnii antic ka ruycneri chartarapetut-yun@*] Publish. Hous of the AS of the Armenian. Yerean, 1983, 262 p. 66p. ill /in Armenian/
6. **Piotrowsky, B.** The Van Kingdom (Urartu) { *Vanskoye tsarstvo (Urartu)*}, М., 1959, (in Russian)
7. **Piotrowsky, B.** History and culture of Urartu { *Istoriâ i kul'tura Urartu*}, Yerevan, 1944, 364 p.
8. **Trever, K.** Essays on the cultural history of ancient Armenia { *Ocherki po istorii kul'tury drevney Armenii*}, М.--Л., 1953. (in Russian)

Collections:

9. Armenian Concise Encyclopedia, 4 volumes, volume 1, Main Editorial Office of the Armenian Soviet Encyclopedia {*Haykakan hamarrot hanragitaran, 4 hator, hator 1, Haykakan khorhrdayin hanragitarani glkhavor khmbagrut'yun*}, 1990, 768 p., (in Armenian)
10. Armenian Concise Encyclopedia, 4 volumes, volume 3, Main Editorial Office of the Armenian Encyclopedia, {*Haykakan hamarrot hanragitaran, 4 hatorov, hator 3, Haykakan hanragitarani glkhavor khmbagrut'yun*} Yerevan, 1999, 896 p. (in Armenian)




Նկ. 1 Գառնիի տաճարը հարավից




Նկ. 2 Գառնիի ամրոցի ընդհանուր հատակագիծը




Նկ. 3 Գառնիի տաճարի հյուսիսային ճակատը
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 4 Գառնիի տաճարի հատակագիծը
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 5 Տաճարի ընդլայնական կտրվածքը,
թաղակապ առաստաղը և երդիկն
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 6 Տաճարի ընդերկայնական կտրվածքն
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 7 Տաճարի թաղածածկը և երդիկն
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 8 Տաճարի առաստաղն
ըստ Ա. Սահինյանի




Նկ. 9 Տանարի ընդլայնական կտրվածքը, թաղակապ առաստաղը, երդիկը և Արև աստծու տեղադրման խորշն ըստ Ա. Սահինյանի



Նկ. 10 Տանարի հոնիական սյունակարգն ըստ Ա. Սահինյանի



Նկ. 11 Մուսասիրի տաճարը, 714 թ. մ.թ.ա.



Նկ. 12 Գառնիի և Մուսասիրի տաճարների համեմատական սխեման, աշխարհի եռադաս բաժանման համակարգի հիման վրա՝ ըստ Ա. Գրիգորյանի




Նկ. 13 Աստղաբլուրի եռանկյուն ճակտոնով տաճարի կավե մանրակերտը, մ.թ.ա. VI դար




Նկ. 14 Հռոմեական հաղթապան վրա պատկերված եռանկյուն ճակտոնով տաճարը Հայաստանից




Նկ. 15 Հունական սյունակարգի խոյակը




Նկ. 16 Խոյի պատկերներ Հայկական Լեռնաշխարհի ժայռապատկերներից




Նկ. 17 Գառնիի տաճարի առյուծ-արևների շարքը



Նկ. 18 Խոյի ժայռապատկերը և նրա դրսևորումները հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձանների խոյակներում




Նկ. 19 Նմուշներ Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներից



Նկ. 20 Օրինակներ խոյի պաշտամունքի դրսևորումներից հայկական տարածաշրջանում




Նկ. 21 Զվարթնոցի տաճարի խոյակները և խոյի քանդակները հայկական ճարտարապետությունում



Նկ. 22 Մարդ-արև փորագրություններ ժայռապատկերներում



Նկ. 23 Հայկական մուֆլոնը և խոյը



Նկ. 24 Հայկական ժայռապատկերներում և հետագա դարերի դեկորատիվ արվեստում հանդիպող մարդ, արև, խաչ, հավերժ, չորս կողմ, կեռ խաչ և այլ խորհրդանշանների երկրաչափական պատկերները

Ընդունվել է / Received on: **10. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **28. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Աշոտ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ալ.Թամանյանի անվ. ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, Երևան, ՀՀ, Էլ. հասցե՝ ashothaykazun@gmail.com / ORCID.org/0009-0007-6467-9672

Ashot HAYKAZUN GRIGORYAN: Doctor of Architecture, Professor, National University of Architecture and Construction of Armenia, National Museum-Institute of Architecture after Al. Tamanyan, Yerevan, RA, e-mail: ashothaykazun@gmail.com / ORCID.org/0009-0007-6467-9672

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARCHITECTURE

ՀՏԴ՝ 728

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -205

ՆՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԵԹ
ՎԵՑԱԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Դավիթ Ս. Նահատակյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան: Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ եկեղեցին կարևոր դեր է խաղում քաղաքի ճարտարապետական կերպարի և բազմաշեռ հայկական ճարտարապետության բացահայտման գործում: Իրականացված դաշտային աշխատանքի և հետազոտում կատարված վերլուծությունների հիման վրա առաջ են քաշվում որոշ ճարտարապետական դիտարկումներ, որոնք դրսևորվում են հատակագծային, ծավալատարածական, հարդարանքային և այլ լուծումների մեջ: Մեթոդներ և նյութեր: Աշխատանքում կիրառվել են ճարտարապետական տիպի համեմատական, ինչպես նաև սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Վերլուծություն: Իրականացվել է կառույցի հատակագծային, ծավալատարածական, հարդարանքային և այլ լուծումների համեմատական վերլուծություններ՝ ինչպես Անիում առկա նմանատիպ կառույցների հետ, այնպես էլ պատմական Տայք նահանգի բազմախորանների հետ: Կատարվել է Աբուխանըմի որմնաշարի շերտագրական վերլուծություն՝ հիմնված դաշտային աշխատանքի արդյունքների վրա: Արդյունքներ: Դիտարկումների և համալիր վերլուծությունների հիման վրա առաջարկվում են կառույցի ճարտարապետական առնվազն երկու շերտեր՝ Բազրատունիների և Զաքարյանների շրջանների: Այս ամենի համար հիմք են հանդիսանում նաև կառույցի շինարարական ոճերի համեմատական վերլուծությունները: Կարևոր բացահայտում է նաև կառույցի վրա առկա վարպետների նշանները: Հոդվածը գրվել է հեղինակի դաշտային աշխատանքի, նաև հետդաշտային ճարտարապետական վերլուծությունների հիման վրա:

Բանալի բառեր՝ Անի մայրաքաղաք, Բագրատունյաց և Զաքարյանների շրջան, Աբուխանրի եկեղեցի, կենտրոնագմբեթ բազմախորան, համեմատական վերլուծություն, ճարտարապետական շերտագրություն:

Ինչպես հղել. Նահատակյան Դ. Նոր դիտարկումներ Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցու ճարտարապետության շուրջ://ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2(28): 205-213 էջեր:

DOI:10.52971/18294316-2025.28.2-205

NEW OBSERVATIONS ABOUT THE ARCHITECTURE OF THE CENTRAL-DOMED, SIX-APSE CHURCH OF THE CITADEL OF ANI

Davit S. Nahatakyan

Shirak Center of Armenological Studies NAS, Gyumri,
National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

Abstract

Introduction: The central-domed church of the Ani citadel plays an important role in revealing the architectural image of the city and its multi-layered Armenian architecture. Based on the field work carried out and subsequent analysis, some architectural observations are put forward, which are manifested in planning, volumetric-spatial, relational and other solutions. **Methods and materials:** In this study, comparative architectural typology, as well as methods of correlation and analysis of primary sources, have been employed. **Analysis:** A comparative analysis has been carried out of the building's planimetric, spatial, compositional, and other architectural solutions-both with similar structures preserved in Ani and with the multi-apse churches of the historical province of Tayk. A stratigraphic analysis of Abukhan's masonry has also been conducted, based on the results of the field research. **Results:** Based on observations and comprehensive analysis, at least two architectural layers of the structure are assumed: the Bagratuni and Zakaryan periods. The basis of all this is also a comparative analysis of construction styles. A significant finding is the presence of craftsmen's marks on the structures. The article is based on the author's fieldwork and subsequent post-field architectural analyses.

Keywords:. *The capital of Ani, Bagratuni and Zakaryan periods, Abukhanm church, multi-apse central-dome, comparative analysis, architectural stratigraphy..*

Citation: Nahatakyan D. *New Observations about the Architecture of the Central-domed, Six-Apse Church of the Citadel of Ani.* // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025. Vol. 2(28). 205-213 pp. DOI:10.52971/18294316-2025.28.2-205

ՆԱԽԱԲԱՆ. Անի մայրաքաղաքը մեծ դեր ու նշանակություն է ունեցել հայկական մշակույթի զարգացման ճանապարհին, և պահպանված բազմաթիվ նյութական ժառանգությունները այդ ամեն ինչի լուր վկաներն են: Անին բազմաշերտ հայկական մշակութային հանգույց է, որտեղ ձուլվում են մինչմայրաքաղաքային, Բագրատունյաց մայրաքաղաքային, ինչպես նաև Զաքարյանների շրջանները: Հիմնական դիմագծերի վրա էական ազդեցություն են թողել վերջին երկու շրջանները: Բագրատունյաց շրջանում դառնալով մայրաքաղաք՝ նա հետագայում իր շուրջը ձևավորեց Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցը, որտեղ

ստացված նվաճումները տարածվեցին ոչ միայն Հայկական լեռնաշխարհի վրա, այլ նաև նրա սահմաններից դուրս: Զաքարյանների շրջանում հիմնականում պահպանվեցին կենտրոնական Բագրատունյաց շրջանի ճարտարապետական ձեռքբերումներն ու հիմնական կերպարները, սակայն գուգահեռաբար առաջացան նոր մոտեցումներ և դրսևորումներ, որոնցից մի քանիսի մասին ներկայացվում է սույն աշխատանքում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՇԱՐԽՈՒՄՆԵՐ. Անի Բագրատունյաց մայրաքաղաքի միջնաբերդի և ներքին բերդի միջև է տեղակայված կենտրոնագմբեթ բազմախորան տիպի եկեղեցին, որը Օրբելու մոտ հիշատակվում է «Աբուխանըմ Իշխան» անունով [8, էջ 17]: Աբուխանըմ իշխանը հավանաբար Պահլավունիների կամ Ապիրատյանների ցեղից է եղել, որտեղ նմանատիպ այլ անձնանուններ նույնպես առկա են. ինչպես, օրինակ՝ Ապլ-ջահասպ, Հասան Մազիստրոս, Ապիրատ, Ապուղամր և այլն [3, էջ 110]:

Կենտրոնագմբեթ բազմախորան տիպի եկեղեցու բեմից դեպի հարավ պահպանվել է միջնադարյան արձանագրությունը: Ըստ Օրբելու նյութի և Դիվան վիմագրության 1-ին պրակի՝ նշված է ևս մեկ արձանագրություն, որտեղ առկա է «Ապուխանըմ իշխանի» մասին հիշատակությունը, որն այժմ բավականին վնասված է, իսկ պահող քարերը ամեն պահ կարող են վայր թափվել [1, էջեր 33-34]:

Կառույցի չափագրությունները և առաջնային դիտարկումներն իրականացրել է Թ. Թորամանյանը, և ցայսօր այդ նյութերից ենք օգտվում [2, էջեր 386-387]: Կառույցի ճարտարապետությանը անդրադարձել են մի շարք հեղինակներ. ինչպես Տ. Մարությանը, Մ. Հասրաթյանը, Վ. Հարությունյանը, Կ. Մաթևոսյանը, Ա. Ղազարյանը և այլք:

Եկեղեցին տեղադրված է բարձրադիր, սակայն թեք տեղանքի վրա: Հիմնախարսիսը հատակագծում տրոհված է տասնմեկ նիստերի, որը բավականին տարօրինակ լուծում է, սակայն պատկերն ավելի է պարզվում, եթե բազմախորանի հատակագծային տրոհումներով ենք դիտարկում: Հատակագծում եռանկյուն խորշերով կառույցը վեց հիմնական մասի է տրոհվում՝ համապատասխանաբար ներառելով մեկական խորան, սակայն հյուսիսարևելյան և հարավարևելյան խորաններից դուրս եկող ավանդատները, ներառված լինելով վերոնշյալ խորանների ծավալի մեջ, արևելյան ճակատում ստեղծում են ուղիղ ճակատ, որը տրոհում են երկուական հայկական խորշերը: Այսպիսի լուծումը բավականին հետաքրքիր է և բավականին հարցեր է առաջացնում: Հատակագծային ներքին լուծումները հիմնականում ընկալելի են և համակարգված: Միակ մուտքը հարավ արևմուտքի խորանի հատվածից է: Հատակագծում եռանկյունի խորշերը միմյանց հավասար չեն, անկյունները շեղ են ու սրված: Ըստ տիպի՝ դասական կենտրոնագմբեթ բազմախորան է:

Ծավալատարածական լուծումներում նույնպես առկա են հետաքրքիր դրսևորումներ: Հիմնական տպավորությունը՝ դասական Անի-Շիրակյան ոճ, սակայն ավելի մանրամասն դիտարկումները հետաքրքիր լուծումներ են բացահայտում: Որմնաշարի տարբերությունները, ստորին և վերին շարերի մշակման և իրականացման տարբերությունները: Ստորին մասը ավելի բաց գույնի տուֆից է կառուցված և համեմատաբար ավելի խոշոր քարերից է, նկատվում են քարերի եզրերին առկա 1,5-2 մմ հաստությամբ շրջանակաձև տաշված շուրթերը: Ի հակադրումն վերոնշյալի՝ կառույցի միջնամասից վերև ընկած հատվածների որմնաշարն ավելի քառակուսիանման և մանր քարերից է

շարված, որտեղ հաջորդում են ավելի մուգ ու բաց քարերի հաջորդական որմնաշարերը: Քարերի արտաքին եզրերի վրա չի նկատվում շրջանակաձև տաշված բարակ շուրթերի առկայությունը: Վերին որմնաշարում հաճախ որմնաշարի հորիզոնական գծերը ընդհատվում են, ինչը չկա ստորն շարվածքում: Հայկական խորշերի և բացվածքների կամարաձև բարավորները նույնպես անհավասար են իրականացված:

Նմանատիպ երևույթներ նկատում ենք նաև կառույցի ներքին հատվածներում: Որոշակի տարբերություններ կան նաև մուտքի բարավորի, արտաքին խորշերի վերնամասերի, ներքին խորանների գմբեթադային ծածկերի շարվածքներում և այլն: Հստակ երևում են շարվածքների տարբերությունը թմբուկի ներքին և արտաքին մասերի՝ համեմատությամբ ստորին շարվածքի: Ինչպես հայտնի է, Անիի երկրորդ ծաղկման՝ Ջաքարյանների շրջանում՝ հայկական որմնաշարի մշակույթում ի հայտ եկավ «շախմատաձև» շարվածքը՝ որոշակի շերտագրական դրոշմ թողելով իր շրջանի ճարտարապետության վրա: Այդպիսի դրսևորումներ տեսնում ենք նաև Աբուխանըմի եկեղեցու վերին շարվածքներում, որտեղ գրեթե հաջորդաբար կրկնվում են մուգ ու բաց երանգի տեղական սրբատաշ քառակուսիանման տուֆ քարերը: Մինչդեռ ստորին հատվածներում քարերը ավելի բաց են, ուղղանկյունաձև: Ծավալատարածական համաչափությամբ կառույցը բնորոշ է հատկապես Ժ-ԺԱ դարերի պաշտամունքային ճարտարապետության ընդհանուր գծերին:

Հարդարանքի և խորհրդանշանային մտածողությամբ կառույցը առանձնապես աչքի չի ընկնում: Արտաքինից ոչ բոլոր հայկական խորշերն են հարդարված: Որմերի վերնամասը հավաքող քիվը պարզ է:

Ինչպես հայտնի է, կենտրոնագմբեթ բազմախորան, մասնավորապես՝ վեցախորան եկեղեցիները մեզ հայտնի են դեռևս վաղքրիստոնեության շրջանից՝ ինչպես օրինակ Սբ Շուշանը և Արագածի Գրիգորաշենը: Ճիշտ են նկատել մի շարք հետազոտողներ՝ Աբուխանըմի եկեղեցին նմանեցնելով Արագածի Գրիգորաշենի հետ [5, էջ 31]: Հատակագծային լուծումներով վաղ քրիստոնեական շրջանի օրինակը ավելի կանոնիկ է, ավելի մեծ քարերով և իր շրջանին բնորոշ շարվածքով է իրականացված, սակայն ակնառու են հիմնական նմանությունները: Հիմնական նմանությունները ներքուստ՝ ծավալատարածական լուծումներում են երևում: Խորանները կրկնակի խորությամբ են իրականացված՝ լուծում, որը միայն այս երկու կառույցներում ենք հանդիպում:

Հատակագծային համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ ընդհանուր լուծումներով կառույցը հարիր է զարգացած միջնադարի այլ հայկական կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցիներին: Հատակագծով ավելի մոտ է Ապուղամրենց Սբ Գրիգոր եկեղեցուն, երբ խորանների նիստերը ուղղված են դեպի արևելք: Աբուխանըմի եկեղեցու գլխավոր խորանի երկու կողմերում էլ առկա են փոքր չափերի ավանդատներ, որոնք արևելքից խորանաձև են ավարտվում: Նմանատիպ լուծումով են նաև Անիի Ապուղամրենց Սբ Գրիգորը և պատմական Տայք նահանգի Բերդացիոր գավառի Կաղամախիքի նմանատիպ եկեղեցին, ինչպես նաև XI դարով թվագրվող Կախեթի Քորեպիսկոպոսությունում կառուցված Կացխին: Իր մանրամասներով, ավելի անկանոն նիստավոր ստիլոբատով Ապուխանըմ իշխանի եկեղեցին տարբերվում է Անիի և ընդհանրապես Ջարգացած միջնադարի հայկական նմանատիպ օրինակներից: Այս առումով հնա-

գիտական պեղումներ են անհրաժեշտ պարզելու ստիլոբատեսի այսպիսի լուծումը: Չենք բացառում նաև նրա վաղբրիստոնեական ծագումը՝ Կամսարականների շրջանում:

Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ Զարգացած միջնադարից մեզ հասած կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցիների հատակագծային լուծումները համընկնում են միայն կենտրոնագմբեթության սկզբունքով, իսկ մնացյալ առումներով ճարտարապետները որոշակի ստեղծագործելու հնարավորություններ են ունեցել: Անիի Աբուղամրենց Սբ Գրիգոր և Զաքարյանների շրջանում կառուցված Կուսանաց վանքի Սբ Հռիփսիմե, Գուգաք նահանգի Արտահանի Սբ Գևորգ եկեղեցիներում արտաքին և ներքին «կանոնիկություն» է նկատվում, այսինքն՝ խորանները հավասար են թե՛ ներսից, թե՛ դրսից: Հայկական խորշերը հավասարապես թեթևացնում են մինչխորանային տարածությունները: Նշվածներից միայն Աբուղամրենց Սբ Գրիգոր եկեղեցու մոտ գլխավոր խորանի հյուսիս և հարավ կողմերում առկա ավանդատները բացառել են արտաքինից հատակագծում եռանկյուն խորշերի կիրառությունները: Այս վերջին հանգամանքով է պայմանավորված նաև Աբուխանըմի եկեղեցու լուծումը, երբ անկյունային ավանդատները գլխավոր խորանի հետ ուղիղ գիծ են կազմել, այսպիսով ստեղծելով նիստերի որոշակի անհավասարություն: Սակայն ստիլոբատեսի և ուղղահայաց որմերի նիստերի «շեղումը» միայն այսքանով չի ավարտվում:

Վեցախորանների մյուս ենթախումբը, որը բնորոշ է Տայք-Գուգարքի ճարտարապետական դպրոցին, արտաքինից դուրս եկող խորանի հատվածով օրինակներն են՝ Կաղամախիքի և Օլթիի (Ուլթիք) եկեղեցիներն են՝ հավանաբար Ժ դար, Աբխազական թագավորության շրջանում կառուցված Կացխին և Կախեթի Բոչորման (ոչ շուտ, քան ԺԲ դար) [4, էջեր 83-93]:

Ծավալատարածական և ընդհանուր համաչափական լուծումներում Աբուխանըմի եկեղեցին ավելի շատ համընկնում է Բագրատունյաց շրջանի ճարտարապետական լուծումների հետ: Գմբեթատակ բազմանկյունից դեպի շրջանաձև թմբուկին անցումը կազմակերպվել է տրոմպի և առագաստ համակցման մեթոդով, որը վաղ քրիստոնեության շրջանից հայտնի էր մեր ճարտարապետությանը. ինչպես, օրինակ՝ կանգուններից Հռիփսիմեի տաճարը, ըստ Տ. Մարությանի՝ հավանաբար Ավանի տաճարը և այլն [6, էջեր 50-78]: Սակայն զարգացած միջնադարում այն ավելի լայն տարածում գտավ հատկապես Տայք-Գուգարքի հայկական ճարտարապետական դպրոցի մեջ: Տրոմպի և առագաստ համակցված եղանակով են կառուցված Կաղամախիքի և Արտահանի Սբ Գևորգ կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցիները, վերջինս այժմ կանգուն չէ: Տայք-Գուգարքում, բացի կենտրոնագմբեթ վեցախորաններից, համակցված մեթոդով են իրականացված նաև նշանավոր Օշկ, Բշխան, Խախու, Կումբուրդո, Միջնաձոր և այլ պաշտամունքային կառույցները [7, էջեր 46-51]: Այս ամենին զուգահեռ՝ ծավալային լուծումների մեջ, ավելի վերին հատվածներում ԺԳ-ԺԴ դարին բնորոշ լուծումներ ենք տեսնում, որոնք նկարագրված են վերևում:

Եթե դիտակենք ԺԳ դարի Անիի Կուսանաց վանքի Սբ Հռիփսիմեն և Արագածի Գրիգորաշեն եկեղեցու ծավալատարածական համաչափությունների համեմատությունը, ապա իր ուղղահայաց համաչափություններով (ուղղահայաց ծավալի հարաբերությունը հորիզոնական հատակագծայինի հետ) Կուսանաց վանքի Սբ Հռիփսիմե եկեղեցին կրկնակի անգամ

ավելի է Ջ դարի բազմախորանից: Այսպիսով, համաչափական լուծումներով Աբուխանըմի եկեղեցին միջին օղակ է հանդիսանում վաղքրիստոնեական շրջանի և Ջաքարյանների շրջանի կենտրոնագմբեթ բազմախորան, մասնավորապես՝ վեցախորան եկեղեցիների մեջ՝ այդպիսով հստակորեն ինտեգրվելով այս տիպի զարգացման շղթային:

Հարդարանքի առումով կառույցում միմյանցից տարբերվող երևույթներ են նկատվում: Նախ որմերին առկա հավասարաթև խաչերի փորագրությունները, որոնց իրականացման ոճը բավականին բնորոշ է Անիի Ժ-ԺԱ դդ., ինչպես որ ճշմարտացիորեն նշում են Ա. Ղազարյանը, Կ. Մաթևոսյանը, և այլք: Մյուս կողմից՝ պարզ քիվագոտիները, մուտքի բարավորի պարզ հարդանքը, որտեղ հիմնական դերակատարն են համեմատաբար անհավասար պարանաձև հյուսվածքով գոտին, պատուհանների կամարունքերի տրամատավորված հարդարանքը և հայկական խորշերի վերնամասերի կամարի անհավասար փորագրությունները և այլն, կարծես թե ԺԳ-ԺԴ դարեր են հիշեցնում:

Այսպիսով հստակորեն նկատվում են շերտագրական որոշ խնդիրներ, որոնք դրսևորվում են կառույցի ինչպես հատակագծային, ծավալատարածական, այնպես էլ հարդարանքային լուծումներում: Մեր դիտարկումները ցույց են տալիս՝ մի կողմից վիմագիր նյութում նշված է Իշխան Աբուխանըմը և 1026 թվականը, հարդարանքում առկա հավասարաթև խաչերը, ընդհանուր համաչափությունը, ստորին շարվածքը, մեր կողմից հայտնաբերված վարպետի նշանները և այլն, որ ցույց են տալիս կառույցի Բագրատունյաց շրջանի պատկանելությունը, իսկ մյուս կողմից՝ «շախմատաձև» վերին շարվածքը, ավելի մանր քարերով իրականացված որմնաշարը, Անի մայրաքաղաքին ոչ բնորոշ որմնաշարի որակական «շեղումները» ցույց են տալիս Ջաքարյանների շրջանը: Հարցը բարդացնում է նաև այն փաստը, որ Աբուխանըմի 1026 թ արձանագրությունը գտնվում է «շախմատաձև» իրականացված վերին շարվածքի մեջ: Այսպիսով որոշակի խառնաշփոթ է մտնում ընդհանուր շերտագրական պատկերում:


Այս ամենը համադրելով՝ առաջարկում ենք հետևյալ ուղղահայաց ճարտարապետական շերտագրությունը. Բագրատունյաց շրջանին է պատկանում հիմնականում ստորին որմնաշարը, որը ավելի բաց գույնի քարերով է շարված, վերջիններս ավելի խոշոր են, շարված են համեմատաբար կանոնիկ՝ պահպանելով հորիզոնական որմնագծերը, քարերի շուրթերը մոտ երկու միլիմետր շրջանակաձև տաշված են, առկա են հավասարաթև խաչերով հարդարանքներ և այլն: Այս երևույթը նկատվում է կառույցի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հատվածներում: Իսկ Ջաքարյանների շրջանին է պատկանում ավելի վերին հատվածները՝ «շախմատաձև» որմնաշարը, մանր քարերի կիրառությունը, որոշ պատուհանների կամարունքերը, հայկական խորշերի հարդարանքը, ոչ կանոնիկ որմնաշարը և այլն: Սակայն Ջաքարյանների շրջանի վարպետները հավանաբար մեծ հարգանք են ունեցել իրենց նախորդող վարպետների ու եկեղեցին կառուցողի հանդեպ, երբ վերականգնել են եկեղեցին՝ պահպանելով, ինչ հնարավոր է: Հին որմնաշարի որոշ քարեր, առձանագրությունը, հավասարաթև խաչերով քարերը և այլն վերստին վերաշարել են՝ ներառելով իրենց իրականացրած որմնաշարի մեջ, այդպիսով մեզ համար առաջացնելով որոշակի շերտագրական խնդիրներ: Արդյունքում՝ կառույցը վերականգնվել է իր առաջնային համաչափությամբ, հատակագծով և հիմնական ծավալատա-

րաձական լուծումներով՝ բնորոշ ԺԱ դարին, սակայն իր մեջ կրելով նաև Զաքարյանների շրջանի շինարարական դրոշմը:

Ե Զ Ը Մ Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Այսպիսով գալիս ենք հետևյալ եզրահանգումների.

- Անիի Աբուխանըմի եկեղեցու ճարտարապետական լուծումները ենթարկվել են համեմատական վերլուծությունների՝ հատակագծային, ծավալատարածական, հարդարանքային, որոնք պարզաբանում են կառույցի առանձնահատկություններն ու ոճական դրսևորումները:
- Պարզաբանվել է կենտրոնագմբեթ բազմախորան, մեր դեպքում՝ վեցախորան տիպի ժառանգորդությունը հայկական ճարտարապետության պատմական զարգացումների ընթացքին (Զ-ԺԳ դդ.)
- Առաջ են քաշվել կառուցվածքային, հարդարանքային և այլ լուծումներում առկա խնդրահարույց երևույթներն ու լուծումները, որոնք բարդացնում են կառույցի ճիշտ ընկալմանը:
- Առաջարկվում ենք ճարտարապետական ուղղահայաց շերտագրական սխեմա-առաջարկ, որով փորձ ենք անում պարզաբանել և լուծել կառույցում առկա տեսական հիմնախնդիրները, սակայն համոզված ենք, որ առավել ամբողջական պատկեր կստացվի հնագիտական պեղումներից հետո, և առաջարկվող ուղղահայաց շերտագրությունը կօգնի հորիզոնականին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.



Գծ. 1. Հատակագիծը՝ ըստ Թ. Թորամանյանի:



Նկ.1. Հայտնաբերված Վարպետի նշան:



ԲԱԺԱՆԱՐԱՐ ԳԻԾ՝ ԺԱ և ԺԳ-ԺԴ ԴԴ



ԺԳ-ԺԴ ԴԴ ՎԵՐԱՇԱՐՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐ՝
ԺԱ ԴԱՐԻ ԶԱՐԵՐԻ ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՍԲ

Գծ. 2. Ճարտարապետական շերտագրական առաջարկ

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Դիվան Հայ վիճագրության, Պրակ 1, Անի քաղաք: կազմ. Օրբելի Հ. ՀՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1965: 136 էջ:
2. Թորամանյան Թ. Նյութեր հայկական ճարտարապետության: Երևան: Արմֆան: 1942: 404 էջ:
3. Մաթևոսյան Կ, Անի. Եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը: Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տպարան: 1997: 443 էջ:
4. Նահատակյան Դ., Ակոպով Ա. Տայք նահանգի Բերդացիոր գավառի Կախանախիքի եկեղեցի. պատմաճարտարապետական նոր ուսումնասիրություններ // «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում»: Միջազգային գիտաժողովի նյութեր: Գյումրի: ՀՀ ԳԱԱ ԾՀՀԿ հրատ.: 2023: 259 էջ:
5. Асратян М. Армянская архитектура раннего христианства. М. Инкомбук. 2000. 400 с.
6. Марутян Т. Архитектурные памятники. Звартноц, Аван, Собор Анийской Богоматери..., Хорурд. Грох, Ереван. 1989. 272 с.
7. Наатакян Д. О некоторых конструктивных особенностях Тайкских и Гугаркских церковных построек в X-XI вв. // Сборник научных трудов ЕГУАС. Ереван. -2013. Том III (50). 46-51 сс..
8. Орбели И. Краткий путеводитель по городищу Ани. СПб. 1910. 103 с.

References

1. "Corpus of Armenian Epigraphy" [*Divan Hay vimgraut'yan, Prak 1, Ani k'aghak'*], Volume I, by Orbeli, O. Yerevan: Publ. House of the Academy of Sciences, 1965, 136 p.. (in Armenian)
2. **Toramanian, T.** "Materials of the History of Armenian Architecture". [*Nyuter haykakan chartarapetut'yan*] Yerevan: Armfan, 1942. 404 p.. (in Armenian)
3. **Matevosyan, K.** "Ani: The Ecclesiastical Life and Manuscript Heritage" [*Ani: Yekeghets'akan kyank'y yev dzeragrakan jarangut'yuny*]. Etchmiadzin. Mother See of Holy Etchmiadzin Press. 1997. 443 p.. (in Armenian)
4. **Nahatakyan, D., Akopov, A.** "The Church of Kakhamakhik in the Berdats'por District of the Tayk Province: New Historical-Architectural Studies" [*Tayk nahanghi Berdats'por gavar'i Kakhamakhik'i yekeghets'i: patmurchartarapetakan nor usumnasirut'yunner*]. Northern Armenia at the Crossroads of History: Proceedings of the Second International Conference. Gyumri: Shirak Armenologicle Center of the NAS RA Press, 2023. 259 p.. (in Armenian)
5. **Asratyan, M.** "Armenian Architecture of Early Christianity" [*Armyanskaya arkhitektura rannego khristianstva*]. Moscow: Incombook, 2000. 400 p.. (in Russian)
6. **Marutyan, T.** "Architectural Monuments: Zvartnots, Avan, Cathedral of the Mother of God of Ani..." [*Arkhitekturnye pamyatniki: Zvartnots, Avan, Sobor Aniyskoy Bogomateri...*]. Yerevan: Khorhrd. Grogh. 1989. 272 p.. (in Russian)
7. **Nahatakyan, D.** "Some Constructive Features of the Tayk and Gugark Church Buildings in the 10th–11th Centuries" [*O nekotorykh konstruktivnykh osobennostyakh Taykskikh i Gugarskikh tserkovnykh postroek v X–XI vv.*]. In *Collection of Scientific Works of YSUAS*. Yerevan, 2013. Vol. III (50), pp. 46–51. (in Russian)
8. **Orbeli, I.** "A Short Guide to the Ani Settlement" [*Kratkiy putevoditel' po gorodishchu Ani*]. St. Petersburg, 1910. 103 p.. (in Russian)

Ընդունվել է / Received on: **18. 08. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **08. 09. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12.2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Դավիթ Սամվելի ՆԱՀԱՏԱԿՅԱՆ՝ ճարտարապետության թեկնածու, ՃՀՀԱՀ ճարտարապետության տեսության և ժառանգության ամբիոնի ասիստենտ, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, էլ. հասցե՝ davit.nahatakyan@gmail.com / [ORCID.org/0000-0003-1149-7262](https://orcid.org/0000-0003-1149-7262)

Davit Samvel NAHATAKYAN: PhD in Architecture, Assistant Professor at the Chair of Theory, History, and Heritage of Architecture in NUACA, Yerevan, Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA, e-mail: davit.nahatakyan@gmail.com / [ORCID.org/0000-0003-1149-7262](https://orcid.org/0000-0003-1149-7262)

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ARCHITECTURE

ՀՏԴ՝ 72.02

DOI: 10.52971/18294316-2025.28.2 -214

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՌԱՆԿՅՈՒՆ ՀՈՐ ԱՇՏԱՐԱԿՆԵՐԸ.
ՄՈՆՈԻՄԵՆՏԱԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԻ
ՓՈԽԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Լևոն Ա. Մկրտչյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի
ԿԳՄՍ նախարարություն պահպանության ծառայություն ՂՈԱԿ

Անփոփում

Նախաբան. Քառանկյուն հոծ աշտարակները հայկական մոնումենտալ ճարտարապետության եզակի հուշարձանային տեսակ են, որոնք արտացոլում են երկաթիդարյան ժամանակաշրջանի ծիսապաշտամունքային և աշխարհայացքային համակարգերը: Հողվածը նպատակ ունի բացահայտել այս կառույցների տարածական, կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Մեթոդներ և նյութեր. Հետազոտությունը հիմնված է դաշտային ուսումնասիրությունների, հնագիտական վերլուծության և թվայնացման մեթոդների վրա՝ ներառելով օդալուսանկարահանում, GIS քարտեզագրում և արբանյակային տվյալների մշակում: Քննարկվում են Արագածի, Արտենիի, Արայի, Գուրանասարի և Հատիսի լանջերին հայտնաբերված հուշարձանները: Վերլուծություն և արդյունքներ. Հոծ աշտարակները տեղակայված են բարձրադիր լանդշաֆտներում՝ կապ ունենալով ամրոցների և դամբարանադաշտերի հետ: Դրանք գուրկ են պաշտպանական գործառնության և հանդես են գալիս իբրև խորհրդանշական կենտրոններ: Խանջյան 1 հուշարձանի C14 տվյալները (մ.թ.ա. IV–II դդ.) վկայում են այս տիպի կառույցների երկարատև գործառնության մասին: Հեղինակն իրականացրել է թեմայի գիտական մեկնաբանություն, դաշտային հանգամանակի ուսումնասիրություններ, նոր հուշարձանների հայտնաբերում ու տեղայնացում, ինչպես նաև թվային և քարտեզագրական մշակումներ: **Բանալի բառեր՝** մշակութային լանդշաֆտ, երկաթիդարյան աշխարհայացք, աշտարակատիպ կառույցներ, երկաթիդարյան ճարտարապետություն, մոնումենտալ կառուցապատում, ծիսապաշտամունքային նշանակություն, քառանկյուն հոծ աշտարակներ:

Ինչպես հղել՝ Մկրտչյան Լ. Հայաստանի քառանկյուն հոծ աշտարակները. մոնումենտալ ճարտարապետության և աշխարհայացքի փոխկապակցություն // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի: 2025: Հ. 2 (28): 214-225 էջեր:
DOI:10.52971/18294316-2025.28.2-214

QUADRANGULAR SOLID TOWERS OF ARMENIA: INTERRELATION OF MONUMENTAL ARCHITECTURE AND WORLDVIEW

Levon A. Mkrtchyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, Service for the Protection of Historical Environment and Cultural Museum Reservation MESCS, Yerevan, RA.

Abstract

Introduction. Rectangular solid towers represent a unique type of Armenian monumental architecture, reflecting the symbolic and ritual systems of the Iron Age. The study aims to reveal their spatial distribution, architectural characteristics, and functional significance. **Methods and Materials.** The research is based on field surveys, archaeological analysis, and digital documentation methods, including drone aerial photography, GIS mapping, and satellite data interpretation. The main examined examples are located on the slopes of Aragats, Arteni, Ara, Gutanasar, and Hatis mountains. **Analysis and Results.** Solid towers are situated in elevated landscapes, often associated with fortresses and burial fields. Lacking defensive functions, they served as symbolic and ritual centers. The C14 data from the Khanjyan 1 monument (4th–2nd centuries BCE) indicate the continued use of this architectural type over several centuries. The author supervised the research, conducted field investigations, discovered and localized new monuments, and performed all digital and cartographic processing.

Keywords: Cultural landscape, Iron Age worldview, tower-type structures, Iron Age architecture, monumental construction, ritual significance, rectangular solid towers.

Citation: Mkrtchyan L. *Quadrangular Solid Towers of Armenia: Interrelation of Monumental Architecture and Worldview*. // "Scientific Works" of SHCAS of NAS of RA, Gyumri. 2025. Vol. 2 (28), 214-225 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.2-214

Ն Ա Խ Ա Ք Ա Ն. Ներկայացվող հոդվածը կենտրոնացած է քառանկյուն աշտարակների մի տեսակի՝ հոծ աշտարակների վրա՝ նպատակ ունենալով վերլուծել դրանց ճարտարապետական առանձնահատկությունները, ժամանակագրական սահմանները և ֆունկցիոնալ նշանակությունը: Հայաստանի հնագույն ճարտարապետական ժառանգության մեջ աշտարակները հանդես են գալիս իբրև ինքնատիպ և բացառիկ հուշարձանային տեսակ, որոնք ոչ միայն համալրում են մեր պատկերացումները հին հասարակությունների ծիսապաշտամունքային համակարգերի մասին, այլև կարևոր նշանակություն ունեն նրանց տարածքային կազմակերպման և աշխարհընկալման առանձնահատկությունների բացահայտման գործում:

Քառանկյուն աշտարակների տարածման աշխարհագրական պատկերը ընդգրկում է Պատմական Հայաստանի զգալի հատվածները՝ հյուսիսում հասնելով մինչև Գուգարք, հարավում ընդգրկելով Վանա լճի ավազանը և Պարսկահայքը: Հայաստանի Հանրապետու-

թյունում քառանկյուն աշտարակների տարածական խտությունը առավել արտահայտված է Արագածի արևմտյան, հարավարևմտյան և հարավային լանջերին, Արայի հարավային լանջերին՝ ընդգրկելով Արայի դաշտը, ինչպես նաև Գութանասարի և Հատիսի լանջերին: Սակավաթիվ, բայց նշանակալի օրինակներ արձանագրված են Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում, ինչպես նաև Արցախի Հանրապետության տարածքում:

Հատկապես հոծ աշտարակները ներկայումս հայտնի են չափազանց սակավ թվով. դրանցից շուրջ մեկ տասնյակ են հավաստված հնագիտական հետազոտություններով և դաշտային ուսումնասիրություններով: Դրանք հիմնականում կենտրոնացած են Արագած, Արտենի, Գութանասար և Հատիս լեռնային համակարգերի լանջերին՝ հաճախ գտնվելով դժվարամատչելի, ժայռոտ բարձրադիր գոտիներում: Այս փաստը ոչ միայն պայմանավորում է դրանց պահպանվածության աստիճանը, այլև բացատրում է, թե ինչու նախորդ ուսումնասիրություններում դրանք հաճախ չեն զանազանվել այլ աշտարակատիպ կառույցներից:

Այս գոտիները բացառիկ են հուշարձանային խտությամբ, կիկլոպյան ամրոցների, դամբանաթմբերի, «վիշապ» քարակոթողների, մեգալիթյան քարաշարերի և կոթողների համակեցությամբ՝ ստեղծելով մշակութային հզոր ու բազմաշերտ համատեքստ:

Քառանկյուն հոծ աշտարակները՝ որպես մոնումենտալ ճարտարապետության յուրօրինակ դրսևորում, առանձնանում են կառուցվածքային ամբողջականությամբ և հստակ ճարտարապետական ձևով: Դրանք կառուցված են կոպտատաշ բազալտ քարերով՝ առանց շաղախի, ունեն հստակ քառանկյուն հատակագիծ և զուրկ են բաց ներսույթներից: Տեղակայվելով իշխող դիրք ունեցող քարքարոտ բլրակների գագաթներին կամ ժայռային ելուստներով հարուստ բարձրադիր տարածքներում՝ հոծ աշտարակները դառնում էին լանդշաֆտի մշակութային ձևավորման վիզուալ առանցքը՝ պահպանելով տեսողական կապ ինչպես կիկլոպյան ամրոցների, այնպես էլ դամբանաթմբերի և պաշտամունքային կոթողների հետ:

Նրանց մոնումենտալությունն ու կառուցվածքային խստությունը արտահայտում են երկաթիդարյան հասարակության աշխարհայացքային վերափոխումները: Ի տարբերություն բրոնզի ուշ փուլի՝ այս նոր փուլում պաշտամունքային և խորհրդաբանական գաղափարները սկսում են մարմնավորվել ճարտարապետական ձևերի միջոցով՝ դառնալով ոչ միայն տարածքային ինքնագիտակցության, այլև խորհրդանշական ուժի արտահայտություն: Հոծ աշտարակները՝ իրենց տեղադրությամբ և ծավալային ամբողջականությամբ, վեր են հանում այն անցումը, որը տեղի է ունեցել հասարակության նյութական մշակույթի և հոգևոր համակարգերի փոխհարաբերության մեջ:

Հողվածի նպատակն է ամբողջականացնել այս հուշարձանային խմբի ուսումնասիրությունը՝ համադրելով հնագիտական, ճարտարապետական և միջմասնագիտական մեթոդաբանությունները, ինչպես նաև բացահայտել քառանկյուն հոծ աշտարակների դերը հին Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության և ծիսապաշտամունքային համակարգի զարգացման համատեքստում:

Ուսումնասիրության պատմություն

Հայաստանի աշտարակատիպ կառույցների վերաբերյալ առաջին վկայությունը հանդիպում է դեռևս անտիկ շրջանի գրավոր աղբյուրներում: Քսենոփոնը իր «Անաբասիս»

աշխատության մեջ հիշատակում է, որ Արևմտյան Տիգրիսի շրջանում հայկական գյուղերի տներն ունեցել են աշտարակներ [7, էջ 93]: Թեև այս տեղեկությունը զուրկ է ճարտարապետական մանրամասն նկարագրությունից, այն արժեքավոր է իր վաղ հիշատակման համար՝ վկայելով նման կառույցների առկայության մասին Հայաստանի պատմական լանդշաֆտի ձևավորման վաղ փուլերում: Նմանատիպ հիշատակություններ հանդիպում են նաև այլ աղբյուրներում, որոնք անուղղակիորեն հաստատում են աշտարակային տների կամ կառույցների գոյությունը հին հայկական միջավայրերում [3, էջեր 357-365]:

Աշխարհագրորեն Քսենոփոնի հիշատակած շրջանները համապատասխանում են ներկայիս Վանի ավազանի հյուսիսային և արևմտյան հատվածներին, որտեղ հետագայում արձանագրվել են մի շարք նմանատիպ հուշարձաններ: Այդ մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Օ. Բելլին, որի ուսումնասիրությունները նվիրված էին Վանա լճի ավազանի հուշարձաններին: Վերջինս նկարագրում է տեղացիների կողմից «հսկաների տուն» անվանվող շինությունները, որոնք առանձնանում են քառանկյուն հատակագծով և մոնումենտալ կառուցվածքով [9, էջեր 350-351]: Նույն ավազանի հարավային շրջաններում հետագայում ուսումնասիրություններ իրականացրեց Շ. Կոշկուն-ը, որը փաստագրեց նմանատիպ կառույցների առկայությունը Շրնաք երկրամասում՝ Տիգրիսի ափերին [10, pp 29-66]:

Կարևոր է նաև անդրադառնալ պատմական Գուգարքի տարածքում գտնվող օրինակներին: Քառանկյուն աշտարակներ արձանագրված են ինչպես Արդահանի [Patatci, 2015, 469-479], այնպես էլ Զավախքի շրջաններում, որտեղ դրանք հիշատակվում են մի շարք հետազոտողների կողմից [12, pp. 229,233, 305, 330, 350]: Նշված աշխատանքներում, ի տարբերություն Արդահանի օրինակների, աշտարակների ճարտարապետական մանրամասները լիարժեքորեն չեն նկարագրվել, և միայն հեղինակների ներկայացրած պատկերային նյութերից կարելի է ենթադրել, որ դրանց մի մասը, ըստ ամենայնի, եղել է հոծ բնույթի:

Սկսած XX դարի սկզբից՝ հայ գիտական շրջանակներում հետաքրքրություն առաջացավ քննվող կառույցների նկատմամբ: Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեն հուշարձանների վկայագրման նպատակով կազմակերպեց գիտարշավներ դեպի Արագածի հարավային լանջեր: Այս աշխատանքների շնորհիվ խնդրո առարկա կառույցներն առաջին անգամ ճարտարապետորեն ուսումնասիրեց հայ ճարտարապետության երախտավոր Թորոս Թորամանյանը [3, էջեր 218-220]: Հնագիտորեն դրանք շրջանառության մեջ դրեց Աշխարհբեկ Քալանթարը՝ մեզալիթյան հուշարձանների համատեքստում [6, էջեր 202-203]: Սակայն այս փուլում հայտնի էին հիմնականում բոլորաձև աշտարակներ:

Ս. Սարգսյանը, ուսումնասիրելով Ծիծեռնակաբերդի, Գառնիի և Դաշտադեմի աշտարակները, հիշատակում է նաև Փոքր Արտենի լեռան (Արտենի I) հուշարձանը [5, էջեր 443-445]: Չնայած նա այն դիտարկել է մյուս օրինակների համատեքստում, առանց առանձնացնելու հատակագծային առանձնահատկությունը՝ հետագա ուսումնասիրություններով պարզ դարձավ, որ գործ ունենք քառանկյուն հատակագծով աշտարակի հետ:

Ուսումնասիրության կարևոր փուլ է նաև հուշարձանների վկայագրումը և դրանց ներառումը պետական պահպանության ցանկերում [4, էջ 108]: Եթե բոլորաձև աշտարակները հարաբերականորեն ավելի լայնորեն են ընդգրկվել նման ցանկերում, ապա

քառանկյուն աշտարակները վկայագրվելուց հետո քիչ են ներկայացված պահպանության ցուցակներում: Մա ևս մեկ անգամ ընդգծում է դրանց եզակիությունը և հետագա նպատակային ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Կառույցների ուսումնասիրության հաջորդ փուլը կապված է արդեն պեղումային գործունեության հետ, որը հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել աշտարակների կառուցապատական առանձնահատկությունների և դրանց ֆունկցիոնալ նշանակության մասին: Պեղումային տվյալները փաստում են, որ ուղղանկյուն հատակագծով աշտարակների որոշ նախատիպեր գոյություն են ունեցել դեռևս մ.թ.ա. III հազարամյակում: Այդպիսին է Մոխրաբլուր հնավայրը, որտեղ բացված տաճարային համալիրի կազմում հայտնաբերվել է ուղղանկյուն հատակագծով քարաշեն աշտարակ [8, էջեր 5–9; 13, pp. 71–88]:

Արդի ուսումնասիրություններ

Աշտարակների նպատակային ուսումնասիրությունները սկսվեցին 2013 թ. վերջերից: Առաջին փուլում կազմվեց տեղեկությունների բազա, որը ներառում էր «աշտարակներ» (այդ թվում՝ դիտակետ-աշտարակներ) անունով հուշարձանները, որոնք ընդգրկված էին Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի պետական ցանկերում: Սկզբնական փուլում հավաքագրվեց շուրջ 70 հուշարձան Խորհրդային Հայաստանի Աբովյանի, Աշտարակի, Էջմիածնի, Թալինի, Հոկտեմբերյանի և Նաիրիի շրջաններից: Այնուհետև ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արխիվներում հավաքագրված տեղեկությունները համադրվեցին դաշտային հետազոտությունների արդյունքների հետ: Դրանց արդյունքում հնարավոր եղավ ոչ միայն տեղայնացնել և նույնականացնել վկայագրված հուշարձանները, այլև նորահայտումներ արձանագրել՝ ընդլայնելով տվյալների բազան մինչև ավելի քան 200 աշտարակ:

Դաշտային աշխատանքները նոր որակ ստացան 2017 թ.-ից սկսած, երբ կազմակերպվեցին նպատակային պեղումներ: Առաջին պեղումները կատարվեցին Ուջանի «Ատամի արտեր» տեղամասում՝ Ուջան-6 հուշարձանում: Հետագա տարիներին՝ 2023 և 2025 թթ., պեղումներ իրականացվեցին ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան 1 հնավայրում, որը առանձնահատուկ արժեք ունի, քանի որ ներկայացնում է քառանկյուն նորահայտ աշտարակ [12, pp. 57-72]: Այս պեղումները կարևոր դեր խաղացին ոչ միայն կառույցի տիպաբանական առանձնահատկությունների հստակեցման, այլև քառանկյուն աշտարակների հնագիտական հետազոտության մեթոդաբանական հենքի ձևավորման գործում:

Ժամանակակից միջմասնագիտական մեթոդաբանությունների ներգրավումը ապահովեց նոր որակի արդյունքներ: Հնագիտական, աղբյուրագիտական և պատմական հետազոտություններին զուգահեռ՝ կիրառվեցին թվայնացման և մոդելավորման գործիքներ՝ ներառելով դրոնով օդալուսանկարահանում, GIS տեխնոլոգիաներ և արբանյակային պատկերների վերլուծություն: Այս մեթոդաբանությամբ ստեղծվեցին ոչ միայն առանձին աշտարակների, այլև դրանց տեղակայման բնական և մշակութային լանդշաֆտների եռաչափ մոդելներ: Արբանյակային որոնումների հիման վրա նախանշված կոորդինատները հետագայում ստուգվեցին դաշտային աշխատանքներով, ինչի արդյունքում հնա-

րավոր եղավ նույնականացնել աղբյուրներում հիշատակված և նոր հայտնաբերված հուշարձանների զգալի մասը:

Մասնավորապես, թվայնացման գործընթացները հնարավորություն տվեցին բացահայտելու և փաստագրելու մի շարք կարևոր քառանկյուն հոծ աշտարակներ՝ Մաստարա 1, Արագածավանի, Բազմաբերդի, Արտենի 1 և այլ օրինակներ: Զուգահեռ իրականացվեց նաև նախորդ դարերի ցուցակագրումներում հիշատակված քառանկյուն հիմքով աշտարակների տեղայնացում և նույնականացում՝ Կոտայքի բարձրադիր վայրերում (Գուրանասարի և Հատիսի լանջեր): Ստացված օրթոֆոտոպլանները և մակերեսների թվային մոդելները (DSM, DEM) թույլ տվեցին վերակազմել հուշարձանների հատակագծերը և տեղահանությունները՝ 1 մ հորիզոնական բարձրությունների ճշգրտությամբ:

Այսպիսով, արդի ուսումնասիրությունները ոչ միայն զգալիորեն ընդլայնեցին քառանկյուն հոծ աշտարակների տվյալների բազան, այլև նոր մեթոդաբանական հիմք ապահովեցին դրանց ուսումնասիրության համար: Վերջիններս, թվայնացման և դաշտային հետազոտությունների համադրմամբ, հնարավոր դարձավ դիտարկել ոչ միայն որպես առանձին կառույցներ, այլև որպես հինհայաստանյան մշակութային լանդշաֆտի և ծխապաշտամունքային համակարգի կարևոր բաղադրիչներ:

Տարածությւն և համատեքստ

Քառանկյուն հոծ աշտարակները տարածված են բացառապես Հայաստանի կենտրոնական հատվածներում՝ կազմելով հնագիտական մի գոտի, որն ընդգրկում է Արագածի, Արտենիի, Արայի, Գուրանասարի և Հատիսի լանջերը: Այս տարածքային համակենտրոնացումը պատահական չէ. նշված լեռնային զանգվածները ձևավորում են մշակութային և աշխարհայացքային մի ամբողջություն, որտեղ երկաթիդարյան շրջանի բնակչությունը կառուցել է իր սրբազան և խորհրդանշական լանդշաֆտը: Բոլոր հայտնի օրինակները տեղակայված են բարձրադիր վայրերում՝ բլրաշղթաների գագաթների կամ ժայռային ելուստների վրա, ինչը ոչ միայն ընդգծում է դրանց տարածքային տիրապետությունը, այլև խորհրդանշում է երկնային և երկրային աշխարհների կապը:

Արագածի հարավային և հարավարևմտյան լանջերը համարվում են քառանկյուն հոծ աշտարակների ամենախիտ կուտակման գոտին: Այստեղ, կիկլոպյան ամրոցների խտությամբ հարուստ միջավայրում, առանձնանում են մի շարք կարևոր օրինակներ: Դրանցից են Մաստարա 1 և Բազմաբերդ 3 աշտարակները, որոնք բացահայտվել են վերջին տարիների դաշտային հետազոտություններով: Մաստարա 1 աշտարակը (6,65x4,90 մ) գտնվում է Մաստարա գյուղից 1.7 կմ հարավ-արևելք, Արագածի հարավային ստորոտներից իջնող ժայռոտ բլրաշղթայի գագաթին՝ շուրջ 1982 մ բարձրության վրա (նկար 1): Այն գտնվում է տեսողական կապի մեջ Մաստարայի նույն լեռնահովտի այլ աշտարակների՝ Մաստարա 2 և Մաստարա 3 կառույցների հետ: Հուշարձանը, լինելով մեկուսի և բարձրադիր դիրքում, իր մոնումենտալ ծավալով ու փակ կառուցվածքով տպավորություն է ստեղծում սրբազան կենտրոնի մասին, որը միավորում է լանդշաֆտային տիրապետությունն ու գաղափարական նշանակությունը:

Բազմաբերդի հատվածում պահպանված աշտարակները կազմավորում են առանձին խմբավորում: Դրանցից Բազմաբերդ 3 քառանկյուն հոծ աշտարակը (6.60x4.40

մ) գտնվում է Ներքին Բազմաբերդ գյուղից մոտ 2 կմ հարավ՝ Երևան-Գյումրի մայրուղու ձախ կողմում՝ 1394 մ բարձրությամբ բլրի վրա (նկար 2): Թեև այն անմիջականորեն չի կապված ամրոցային համակարգերի հետ, սակայն ընդգրկված է մի միջավայրում, որտեղ արձանագրված են բազմաթիվ աշտարակատիպ կառույցներ, դամբարանադաշտեր և պաշտամունքային հուշարձաններ: Այդ առումով Բազմաբերդ 3-ը հանդես է գալիս որպես ծիսապաշտամունքային համատեքստի բաղադրիչ, որն իր տարածքային դիրքով միավորում է Բազմաբերդի և Պարտիզակի համալիրները՝ ձևավորելով սրբազան լանդշաֆտի կառուցվածքային առանցք:

Այս շարքին մոտ է կանգնած նաև Խանջյան 1 քառանկյուն աշտարակը, որտեղ 2023 թ. իրականացված պեղումները բացահայտեցին ամբողջական հատակագիծը: Աշտարակը գտնվում է բլրի ամենաբարձր հատվածում՝ մոտ 20 մ հարաբերական բարձրության վրա, և չի ներառված ամրոցի պաշտպանական համակարգում: Դրա մեկուսացված և գերիշխող դիրքը վկայում է, որ այն գործել է որպես մոնումենտալ սրբավայր՝ ընդգծելով ամբողջ բլրի սակրալ բնույթը (նկար 3):

Քառանկյուն հոծ աշտարակների հաջորդ կարևոր կենտրոնը Արտենիի լեռնային զանգվածն է: Այստեղ հայտնի է Արտենի 1 քառանկյուն աշտարակը (7,60x6,80 մ), որը գտնվում է Փոքր Արտենի լեռան գագաթին՝ մոտ 1863 մ բարձրության վրա (նկար 4): Աշտարակը մեկուսացված է՝ առանց տեսանելի ամրոցային կամ բնակավայրային հետքերի: Այս հանգամանքը ենթադրում է, որ այն գործել է որպես ինքնուրույն սրբավայրային կետ, որը ոչ թե ծառայել է ռազմական նպատակների, այլ արտահայտել է տարածքի խորհրդանշական տիրապետությունը: Լեռան բնական կազմը՝ քարքարոտ եզերքներով ու գագաթային հարթությամբ, ստեղծել է իդեալական միջավայր հոծ ծավալային կառույցի ձևավորման համար՝ դարձնելով Արտենի 1-ը լանդշաֆտի սրբազան առանցք:

Արագածավան 1 (8,90x7,40 մ) քառանկյուն աշտարակը, որը տեղակայված է Արտենիի արևելյան ստորոտի բարձրադիր բլրին՝ մոտ 1410 մ բարձրության վրա, ամրոցային և ծիսապաշտամունքային համատեքստերի միահյուսման (նկար 5) հետաքրքիր օրինակ է: Այստեղ պահպանվել է դեպի աշտարակ բարձրացող քարապատ ուղի, որը ոչ միայն ապահովել է հաղորդակցությունը, այլև ունեցել է խորհրդանշական նշանակություն՝ որպես սրբավայրի ճանապարհ:

Քառանկյուն հոծ աշտարակների տարածման շղթան շարունակվում է դեպի արևելք՝ ընդգրկելով Արայի լեռան հարավային լանջերը (չեն նույնականանում դաշտային աշխատանքներով), ինչպես նաև Գուրանասարի (Կապուտան 4, 7.50x7.50 մ) և Հատիսի լեռնային զանգվածները (Հատիս 1, 5,2x4,4 մ): Թեև այս հատվածներում արձանագրված օրինակները սակավաթիվ են, սակայն դրանց տեղադրությունը բացառապես գագաթային կամ բարձունքի եզերքային դիրքերում վկայում է նույն գաղափարական համակարգի տարածման մասին: Հատկապես Գուրանասարի լանջերին հայտնաբերված կառույցները գտնվում են բրոնզ-երկաթիդարյան հուշարձանների հարևանությամբ՝ ընդգծելով սրբազան միջավայրի շարունակականությունը և հին պաշտամունքային ավանդույթների ժառանգական կապը (նկար 6):

Այս շարքին կարելի է դասել նաև այն աշտարակները, որոնք ուղղակիորեն կապված են բնակավայրերի հետ՝ ձևավորելով բնակավայր-սրբավայր տարածական կապ: Այդպիսի օրինակ է Զառ 2 աշտարակը (8.30x8.30), որը մի կողմից տեղադրված է բնակավայրի ծայրամասի ամենաբարձրադիր կետում (1876 մ), իսկ մյուս կողմից կապվում է հարևանությամբ գտնվող դամբանադաշտերի համալիրի հետ: Զառ 2-ի նման կառուցվածքային և տարածքային դիրքը վկայում է, որ նման աշտարակները գործել են ոչ միայն իբրև համայնքային խորհրդանշական կենտրոններ, այլև որպես միջնորդող օբյեկտներ՝ միավորելով աշխարհիկ և սակրալ տարածքները (նկար 7):

Այսպիսով, քառանկյուն հոծ աշտարակների տարածական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հանդես են եկել որպես սրբազան լանդշաֆտների առանցքային տարրեր, որոնց կառուցվածքային և գաղափարական ներկայությունը պայմանավորված էր ոչ թե ռազմական կամ բնակելի գործառույթներով, այլ ծիսապաշտամունքային և խորհրդանշական նպատակներով: Դրանք վեր են խոյանում որպես լանդշաֆտի վիզուալ և սրբազան առանցքներ, որոնք մարմնավորում են երկաթիդարյան շրջանի աշխարհայացքային մտածողությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Քառանկյուն հոծ աշտարակները ներկայացնում են հնագույն հայկական ճարտարապետության ինքնատիպ շերտերից մեկը՝ միավորելով մոնումենտալությունը, գաղափարական բովանդակությունը և տարածական կազմակերպվածությունը: Դրանք հանդես են գալիս որպես յուրօրինակ միջնորդ ամրոցաշինական և ծիսապաշտամունքային միջավայրերի միջև՝ արտահայտելով հինհայաստանյան հասարակությունների աշխարհայացքային համակարգի նյութական դրսևորումը:

Շինարարական տեխնիկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Մաստարա 1 և Արագածավան 1 աշտարակները էականորեն չեն տարբերվում իրենց համատեքստի ամրոցների կառուցապատական տեխնիկայից. կիրառվել են նույն տիպի կոպտատաշ բազալտ քարեր և նմանատիպ շարվածքային սկզբունքներ: Այս տվյալները, համադրված վերգետնյա հնագիտական նյութերի հետ, վկայում են, որ քառանկյուն հոծ աշտարակները ձևավորվել են մ.թ.ա. VIII–VI դդ. ընթացքում՝ որպես երկաթիդարյան հասարակությունների խորհրդանշական և ծիսական կառույցներ: Միաժամանակ, Խանջյան 1 հուշարձանի պեղումներից ստացված ածխածնի-14 (C¹⁴) վերլուծության տվյալները (մ.թ.ա. IV–II դդ.) փաստում են, որ այս կառույցները պահպանվել և գործել են նաև հետագա դարերում՝ հարմարվելով փոփոխվող մշակութային ու ճարտարապետական միջավայրին: Այդ ժամանակաշրջանում քառանկյուն հոծ աշտարակները արդեն ներառվում էին ամրոցների ներքին կառուցվածքում՝ դառնալով դրանց կենտրոնական և սիմվոլիկ առանցքը:

Այսպիսով, քառանկյուն հոծ աշտարակները ոչ միայն արտացոլում են հնագույն հայկական ճարտարապետական մտածողության բարձր մակարդակը, այլև բացահայտում են այն գաղափարական շարունակականությունը, որի միջոցով վաղ երկաթիդարյան սրբավայրերը վերածվեցին ուրարտական և հետագա շրջանների ամրոցային կենտրոնների:



նկ. 1



նկ. 2



նկ. 3



նկ. 4



նկ. 5



նկ. 6



նկ. 7

Նկարների ցանկ

(լուսանկարները՝ հեղինակի)

- Նկար 1 Մաստարա 1, օդայուսանակար
- Նկար 2 Բազմաբերդ 3, օրթոֆոտոպլան
- Նկար 3 Խանջյան 1, օրթոֆոտոպլան
- Նկար 4 Արտենի 1
- Նկար 5 Արագածավան 1, օդայուսանակար
- Նկար 6 Կապուտան 4 օրթոֆոտոպլան
- Նկար 7 Չառ 2, օրթոֆոտոպլան

Քր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Արեշյան Գ. Մոխրաբլուր բնակավայրի ստորին շերտերի բնութագրման շուրջ, Հայագիտական հետազոտություններ, Երևան: 1979: 147 էջ:
2. Թորամանյան Թ. Հայկական նարտարապետություն II, Երևան 1948: 142 էջ: 221-222
3. Մկրտչյան Լ. Հայաստանի աշտարակատիպ շինությունների ուսումնասիրության պատմությունից, // Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, N 3, 357-365 էջեր:
4. Մկրտչյան Լ. Հայաստանի Հանրապետության տարածքի աշտարակատիպ հուշարձանների հաշվառումը և բնութագրիր, // Հայագիտության հարցեր: 2018: N 3: 108-119 էջ:
5. Սարգսյան Ս. Հայաստանի քաղաքակրթության օրրան, Երևան: 2004: 496 էջ:
6. Քալանթար Ա. Քարե դարը Հայաստանում, Հայաստանի քարե դարից՝ միջնադար, Երևան: 2007: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
7. Քսենոփոն, Անաբասիս, IV, 4, Երևան: 1970: 93 էջ:
8. Areshyan G. Early Bronze Age Settlements in the Ararat Plain and its Vicinity, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Bd. 37, Berlin. 2005. 71-88 pp..
9. Belli O. Archaeology in Turkey 1932-2000, Istanbul. 2001.350-351pp.
10. Coşkun N., Kuvanc R., Ayaz G., Ayman I., The Mountainous Şirnak Region survey (Se Anatolia) 2017-2018 seasons. First observations on 'dirhes' (tower-shaped buildings), Anatolica XLVI (2020), 29-66 pp..
11. Davtyan R., Mkrtchyan L., Arnhold S., 2024. Erste archäologische Untersuchungen in Khanjyan (Armenien), Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft 156. 57-72 pp..
12. Narimanishvili D. Cyclopean Fortresses in Georgia, Tbilisi. 2019. 493 p..
13. Арешян Г. Искусство Куро-аракской культуры (II Международный симпозиум по армянскому искусству, Ереван.1978. 5-9 сс..

References

1. **Areshyan, G.** On the Characterization of the Lower Layers of the Mokhrablur Settlement [*Mokhrabluri bnakavayri storin shert'eri bnuthagrman shurj*] // Studies in Armenian Studies, Yerevan, 1979, 147p. (in Armenian)
2. **Tořamanyan, T.** Armenian Architecture [*Haykakan chartarapetut'yun*], Vol. II, Yerevan, 1948. 142, 221–222 pp.. (in Armenian)
3. **Mkrtchyan, L.** On the History of the Study of Tower-Type Structures in Armenia [*Hayastani ashtarakatip shinut'yunneri usumnasirut'yan patmut'yunits'*] // Herald of Social Sciences, 2018, No. 3, 357–365 pp. (in Armenian)
4. **Mkrtchyan, L.** Registration and Description of Tower-Type Monuments in the Territory of the Republic of Armenia [*Hayastani Hanrapetut'yan taratsqi ashtarakatip i hashvarrumn yev bnuthagrman*] // Issues of Armenology, 2018, No. 3, 108–119 pp.. (in Armenian)
5. **Sardaryan, S.** Armenia — The Cradle of Civilization [*Hayastan – qaghaqac'ut'yan orran*], Yerevan, 2004, 496 p. (in Armenian)
6. **Kalantar, A.** The Stone Age in Armenia [*Kare dar@ Hayastanum*] // Armenia from the Stone Age to the Middle Ages, Yerevan: NAS RA “Gitutyun”, 2007, 202–203 p.. (in Armenian)
7. **Ksenophon.** Anabasis, Book IV, 4, Yerevan, 1970, 93 p. (in Armenian)
8. **Areshyan, G.** Early Bronze Age Settlements in the Ararat Plain and its Vicinity. Archäologische Mitteilungen aus Iran und Turan, 37, Berlin, 2005, 71–88 pp..
- 9–12 (տե՛ս հայերեն գրականության ցանկում)
- 13 **Areřyan, G.** The Art of the Kura–Araxes Culture [*Arvest@ Kuro-Araksyan mshakut'yan*] // II International Symposium on Armenian Art, Yerevan, 1978, 5 – 9 pp.. (in Armenian)

Ընդունվել է / Received on: **16. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **24. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Լևոն Ալբերտի ՄԿՐՏՉՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» հուշարձանների պահպանության բաժնի գլխավոր մասնագետ էլ. huugle՝ levoncultur@gmail.com // orcid.org/ 0000-0003-2221-4766

Levon Albert MKRTCHYAN, Junior Researcher at Shirak Center for Armenological Studies NAS RA, Chief Specialist, Department of Monument Preservation, “Service for the Protection of Historical Environment and Historical-Cultural Reserve-Museums” E-mail: levoncultur@gmail.com // orcid.org/ 0000-0003-2221-4766

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՏՈՂԵՐԻ ՆՈՐ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկանուշ Ա. Հովհաննիսյան

ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, ՀՀ

*«Տենչայր Սաթենիկ տիկինն տենչանս
Ջարտախոր խաւարտ և գտից խաւարծի
Ի բարձիցն Արտաւանայ...»
Մովսէս Խորենացի*

Ամփոփում

Նախաբան. Ուսումնասիրության նպատակ է հետապնդում վերլուծության ենթարկել Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց» մեծարժէք աշխատության մեջ տեղ գտած մի քանի վիճահարույց տողի, բառերի բուն իմաստն ու նշանակությունը, վեր հանել, ճշգրտել այդ տողերի արտահայտած միտքը և բառերի նշանակությունը համատեքստում, ներկայացնել դրանց նոր մեկնաբանություններ, օգնել ընթերցողներին ճիշտ հասկանալու գրվածը: Մեթոդներ և նյութեր. Ուսումնասիրությունը հիմնված է բառերի համեմատական քննության, ժողովրդական ստեղծագործության նյութերի վրա՝ կատարելով լեզվաբանական վերլուծություններ: Ներկայացված վիճահարույց բառերի ճիշտ մեկնաբանությունը տալու համար օգտվել ենք հին մատենագրության բազմաթիվ աղբյուրների վերաբերյալ հայերենի համեմատական քննությամբ հրապարակված նյութերից, Աստվածաշնչի, հին ու նոր շրջանների գրականության, մեծարժէք բառարանների, նույնիսկ ժողովրդական մշակույթի, բանավոր ստեղծագործությունների ընձեռած հնարավորություններից: Վերլուծություն. Իրականացվել է Խորենացու «Պատմություն Հայոց»-ի առաջուր բազմաթիվ հակասական մեկնությունների տեղիք տվող ներկայացված հատվածի մի քանի բառերի իմաստային քննություն; Չի անտեսվել նաև գրիչների կողմից թույլ տրված հնարավոր սխալների առկայության փաստը: Առաջարկվել են հիմնավորված մեկնաբանություններ, որոնք միանգամայն նոր խոսք են Պատմահոր մեծարժէք գրական ժառանգության տվյալ հատվածի ճշգրիտ ընթերցման մեջ:

Բանալի բառեր՝ *Մովսէս Խորենացի, «Հայոց պատմություն», տենչալ. տիկին, Հայոց աշխարհ, Սաթենիկ, արքունի, ազգագրական:*

Ինչպես հղել՝ Հովհաննիսյան Հ. Մովսես Խորենացու տողերի նոր մեկնաբանություն, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ. 2 (28): 226-237 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-226

A NEW INTERPRETATION OF MOVSES KHORENATSI'S LINES

Haykanush A. Hovhannisyan

The Institute of Language after H. Acharyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The aim of the research is to analyze the true meaning and significance of the controversial lines and words in Movses Khorenatsi's valuable work "History of the Armenians", to uncover and clarify the thought expressed by those lines and the meaning of the words in context, to present new interpretations of them, and to help readers correctly understand the text. **Methods and Materials:** The study is based on a comparative examination of words and materials from folk works, performing linguistic analyses. In order to provide the correct interpretation of the presented controversial words, we have used the opportunities provided by numerous sources of ancient literature, both domestic and foreign, the Bible, modern literature, valuable dictionaries, even folk culture, and oral works. The fact of the existence of possible errors made by writers has not been ignored. **Analysis:** Within our capabilities, we have tried to give a new interpretation of the controversial lines of Movses Khorenatsi, based on the data of ancient bibliography. **Results:** Well-founded interpretations have been proposed, which offer new insights into the precise reading of this particular passage of Movses Khorenatsi's Heritage.

Key words: *Movses Khorenatsi, "History of Armenian", Sathenik, ethnographical.*

Citation: Hovhannisyan H. *A New Interpretation of Movses Khorenatsi's Lines*/"Scientific Works" of SCAS, Gyumri, 2025, Vol. 2 (28), 226- 237 pp.. DOI:10.52971/18294316-2025.28.2-226

Ն Մ Խ Մ Մ Մ Ն Բազմաթիվ քննարկումների, հակասական մոտեցումների ու մեկնաբանությունների առիթ է եղել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» մեծարժեք աշխատության մեջ տեղ գտած վերը մեջբերված հատվածը, հատկապես այնտեղ եղած մի քանի բառերի իմաստային քննության և նրանց նշանակության վերաբերյալ:

Ելնելով վիճահարույց հատվածի երկրորդ տողի՝ «Զարտախուր խաւարտ և գտից խաւարծի»՝ մեջ եղած **խաւարծի** և **խաւարտ** բառերի արտահայտած բուն իմաստից, **զարտախուր** բառն էլ համարելով բույս, միտքը բացատրվել է որպես **բույսերի փունջ**, **տրցակ՝ գտից**, որ տենչում էր Սաթենիկ տիկինը Արտավանի **բարձերից**, /միջի՝ց, տակի՝ց/: Մի՞ թե կարելի է կարծել, թե արքային համարյա հավասար մարդու բարձերը կարող էին լցված լինել վայրի բույսերով: Եվ կամ նրա իշխանական տարածքի՝ Մաայացոտնի **բարձունքներից**, որտեղ շատ կային թվարկված բուսատեսակները՝ /Մասնո լեռներում՝ **բարձրեքում** չկայի՞ն/ դրան ավելացնելով միջտողյա կանխակալ ենթադրություններ այդ բույսերի հրաշագործ, կախարդական հատկանիշների և դրանց հետ Սաթենիկի հետագա վարվելակերպի մասին: Կարծես Պատմահոր կողմից արդեն պարզաբանված, հաստատված է նրանց այդ որակային հատկությունները, և հայտնի են Սաթենիկի հետագա մտադրու-

թյունները: Այդ կարծիքը հաստատվել է տողի նախավերջին տառախմբի՝ **գտից**–ի որպես **փունջ, տրցակ** մեկնաբանությամբ: Չենք ասում բառ, քանի որ նա այդ գրության տեսքով մինչ այժմ բառարաններում էլ դեռևս չի ստացել իր ճշգրիտ բացատրությունը որպես բառ: Նախքան մերժելը կամ հաստատելը եղած կարծիքները, տեսնենք, թե գրականության մեջ ինչպես են ներկայացվում այս բույսերը, որոնց միախառն **փունջը**, ըստ ոմանց կարծիքի, տենչում էր ունենալ տիկինը:

Բառահոգվածում տեղ գտած **արտախուր, խաւարտ, խաւարծի** բառերն իրենց բացատրություններն ունեն «Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» և Հրաչյա Աճառյանի «Արմատական» բառարաններում: **Խաւարտ**–ը ՆԲՀԼ–ում մեկնաբանված է որպես **հագար**, բազմաթերթ բույս՝ «խաւարտ, որ կոչի հագար»:¹

Իսկ նրա հատկությունների ու կիրառման մասին մանրամասն տեղեկություններ է տալիս Խորենացուց առաջ հանդես եկած Եզնիկ Կողբացին, որի գրչի ծայրին այդ բույսի հատկությունների մասին մեկնաբանությունն ավելի վաղ է հայտնվել աղանդները հերքող նրա «Եղծումն աղանդոց» փիլիսոփայական մեծարժեք երկասիրության մեջ, քան Սաթենիկի մասին եղած ժողովրդական բանահյուսությունը կարճանագրվել Խորենացու կողմից, և հետագայում էլ, գուցե և գրիչների ձեռքով բառը եղծվեր և ստանար տվյալ տեսքը: Մեջբերենք այդ հատվածը.

«Եւ զհագար /որ է մատու/ եթէ ի տօթ ժամու ուտիցէ ոք /քանզի զովացուցիչ է/ զտապս ի փորոյն փարատէ, և եթէ ի հով ժամանակի ուտիցք ոք, վնասէ. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք՝ սատակի և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ»:² Բազմակողմանիորեն բնութագրում է Եզնիկը **խաւարտ**–հագար–մատու բույսը՝ ներկայացնելով նրա և՛ բուծիչ, և՛ սատակիչ հատկությունները:

Իսկ **խաւարծի/լ** բույսը ահա թե ինչպես է նկարագրել հայրենի՝ Սասնո բնաշխարհին քաջածանոթ գրող Խաչիկ Դաշտենցը:

«Դա /խավրծիլը. Հ.Հ/ քաղցրաթթու, հյութալի մի բույս է, որ իր բնի մոտ լայն տերևներ է արձակում շուրջը: Նրա ցողունը բարձրանում է մարդահասակ՝ զլիսին կապելով զինարբուկի ծաղիկներ հիշեցնող մի փունջ»:³

Սա վկայում է մեկը, որն իր վաղ մանկության տարիներն անց է կացրել Սասնո լեռներում և շատ հաճախ է տեսել ու ճաշակել խավրծիլը: Ուշադրություն պետք է դարձնել բույսի ծավալի ու չափերի վրա, և որ առավել կարևոր է, ցողունի՝ **մարդահասակ** /բարձրաձիգ, դալար, ճկուն/ լինելուն: Այս բնութագրմանը կարելի է ավելացնել բառարաններում տրված՝ բույսի խավոտ հատկանիշը ևս:

Եթե **խավրծիլն** այդքան խոշորկեկ բույս է, ինչպե՞ս կարող էր Սաթենիկը տենչալ նրա և **խաւարտի**, որը ևս տարողունակ է, **փունջը**, ինչպես բացատրվում է **գտիցը**: Չէ՞ որ այդ դեպքում բույսերի հավաքածուն կկազմեր ոչ թե մի փունջ, այլ մի խորոմ: Եվ եթե դրան էլ ավելացնենք որոշ հեղինակների կողմից **արտախուրն** էլ մեկնաբանված որպես բույս, ապա փունջը կդառնա մի խուրձ, որն անկրելի կլիներ՝ իր մեծ ծավալի ու ծանրու-

¹ Տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի. հատոր 1–ին, էջ՝ 935. 1979 թ. Երևան:

² Եզնիկայ Կողբացույ. «Եղծումն աղանդոց». էջ՝ 58. 1762 թ. Կոստանդնուպոլիս:

³ Խաչիկ Դաշտենց. «Խողեղան». էջ՝ 31, 1960թ. Երևան:

թյան պատճառով և նկատելի՝ ուրիշների /նաև արքայի/ աչքին: Այդ քա՞նի խրճանոց էին Արգավանի բարձերը, որ նրանցից մի խուրձ հանվեք, և դեռ աննկատ մնար կատարվածը: Այլ է, թե տենչանքը լինեք այդ բույսերի չորացած խառնուրդի փշրանքները և ոչ թե **փունջը**: Բայց հայտնի է, որ **գտիցը** բույսերի փռչացված խառնուրդ չէ:

Միաբանը՝ Գաբրիել Այվազովսկին, սրբագրելով **գտից** տառախումբը **զ/ս/տից** ձևով, **արտախույրը** մեկնաբանել է որպես **գատերի ծածկոց**: Եվ այս խմբագրված օրինակն է տեղ գտել Աճառյանի բառարանում:⁴ Բայց, ներեցեք, գատերի ծածկոցը տիկնոջ ինչի՞ն էր պետք, ուր մնաց, թե դեռ տենչար էլ այն ձեռք բերելու համար: Կամ ինչու՞ է **գատից** հատկացուցիչը հեռացել **գարտախույր** հատկացյալից: Եթե ընդունենք, որ **գատից** է, ապա **խաւարծի**-ն կամ **խաւարտ**-ը ինչի՞ հետ կապել, կամ ինչպե՞ս: Առաջանում է անիմաստություն. «Զարտախույր խաւարտ և զ/ս/տից խաւարծի»/՝. և՛ շաղկապը ու՞ր տեղավորենք: Այս դեպքում էլ առաջ են ընկնում գատերը, և ծածկոցի մասին խոսք անգամ չկա: Բացի այդ, մի՞թե հզոր Արտաշիսյան հարստության օրոք թագավորից հետո երկրորդ դեմքը վայրի ցեղի ներկայացուցչի նման՝ գատերի ծածկոցով էր շրջում:

Ուրեմն **գտիցը** չպետք է մեկնաբանել որպես բույսերի **փունջ**, կամ **գատերի ծածկոց**, առավել ևս՝ **արտախույրը**, որպես **բույս**:

Արտախույր բառի բացատրությունը բառարաններում տրված է որպես խույրի, թագի եզրերը բոլորող բազմաձև ծածկոց: Աստվածաշնչում և շատ մատենագիրների մոտ բառը լայն գործածություն ունի: Կարելի է մի օրինակ բերել Ագաթանգեղոսից.

«Զթագաւորս շքեղացուցանէ ի նմանութիւն արտախայրն պսակի ի վերջաւորն փողփողելոյ»:⁵

Այդպիսի արտախույրով, ընդելուզված թանկարժեք քարերով, առաջին դարում հռոմեական կայսր Ներոնը օծել է Հայոց թագավոր Տրդատ Առաջինին, ինչպես վկայում է 1-2-րդ դարի պատմիչ Սվետոնիոսը:

Հիմք ընդունելով 5, 10, 12-13դ.դ. որոշ պատմիչների գործերում տեղ գտած և հրատարակիչների կողմից «անիմանալի» համարված վրիպումներն ու տարընթերցումները, այսինքն, որ արտագրությունների ժամանակ ձեռագրերում կարող են սպրդել անճշտություններ՝ մեզ թույլ ենք տալիս **գտից** տառախումբը սրբագրել **զ/ս/տից**, կամ ուղղակի **ոտից** ձևերով, որով, կարծում ենք, պարզություն կմտնի մտքի մեջ: Եվ թարգմանելիս մի քիչ պետք է հեռանալ ավանդական թարգմանված ձևից, այն է՝ «Տենչալով, տենչում էր Սաթենիկ տիկինը» և թարգմանել. «Տենչում էր Սաթենիկ տիկինը տենչանքներ», ինչպես որ հայցական հոլովով գոյականն է տրված՝ **տենչանս**, և այն չդարձնել դերբայ: Իսկ ի՞նչ տենչանքներ էին դրանք:

Եթե **խաւարտը** «որ կոչի հազար» /Ն.Բ.Հ.Լ./, իսկ հազարը բազմաթերթ բույս է, գուցադրենք **արտախույրի**՝ թագի եզրերը պսակող ապարոշի հետ, որը նուրբ ծալքերով պատում է գլուխը՝ ծածկելով պարանոցը, /հին դրամների վրա քանդակված արքաների գլուխներին երևում են դրանք./ ապա Սաթենիկը տենչում էր ո՛չ թե խոտեր ու բույսեր, այլ Արտավանի գլխադիրը՝ թագը, որը բոլորած էր խավարտի նման բազմաձև արտա-

⁴ Հր. Աճառյան. «Արմատական բառարան» 4-րդ հատոր, 1973 թ. Երևան:

⁵ Ագաթանգեղեայ «Պատմութիւն Հայոց». Էջ՝ 12, 1983 թ. Երևան:

խույրով, որը կհագեցներ նրա փառատենչության տապը, հավասարը՝ հավասարին սկրունքով: Միրել, սիրել, բայց ինչ-որ երկրորդական մարդու չէր տենչում, այլ թագավորության երկրորդ՝ շատ հզոր դեմքին: Կամ գուցե տիկնոջը հմայել էր նրա գլխադիր կրե-լու ձևը, նա շատ էր գեղեցիկ ու առնական այդ հանդերձավորմամբ:

Սա տենչանքներից մեկն է:

Իսկ եթե **խաւարծին**, որը քիմքին հաճելի նուրբ համ ունեցող, խավոտ, դալար ու հյութեղ, մարդահասակ, բարձրացողուն բույս է, համեմատենք Արտավանի թավոտ ոտ-քերի հետ, ըստ մեր սրբագրության՝ **գտիցը** կարդալով **գոտից**, կամ **ոտից** ձևով, որոնք պետք է որ լինեին թավոտ, ճկուն ու ձիգ, քանի որ գերել էին Սաթենիկի միտքը, ապա այդ բույսերը կարող են լույս համեմատության եզրեր հանդիսանալ Արտավանի դիրքի ու բարեմասնությունների համար: Այսինքն տիկինը ձգտում էր Արտավանի սիրույն, նրա ան-ձին՝ ավելացրած իշխանական բարձր դիրքը: Հակառակ դեպքում, բույսեր ձեռք բերելն ինչ մի դժվարություն հարուցող տենչանք էր, որ տվայտանքի մեջ գցեր արքայատիկնո-ջը: Նա կարող էր, չէ՞, ուղղակի հրամայել իր ենթականերին, և նրանք ոչ թե մի փունջ՝ **գտից** կբերեին, այլ մի ամբողջ դեզ: Ի վերջո, մի՞թե նա իր թշնամին էր, որ տենչար ձեռք բերել այնպիսի դեղամիջոցներ, ինչպես փորձում են ներկայացնել շատ բանախոսներ, որ ոչ թե բորբոքեին իր սերը, կիրքը, այլ ընդհակառակը՝ գցեին ցանկությունից, Եգնիկի խոս-քով ասած՝ «ի ցանկութենէ արկանէ» և նույնիսկ «սատակէին» իրեն: Երբ սիրում ես, սի-րեցյալիդ վերաբերող ամեն մի մանրուք սիրելի ու ցանկալի է դառնում: «Բախճի սիրուն բախճի պաղ կը պակին» ասում է Մշո ժողովրդական ասացվածքը: /Մեր պրոֆեսորներից մեկը պատմել է մի միջադեպ, երբ մեկի սիրո առարկան կաղ է եղել, և նրա ուշադրու-թյունը հրավիրել են այդ թերության վրա, սիրահարվածը հմայված պատասխանել է. «Տե-սեք, ինչպե՞ս է կաղում»/:

Եթե թագուհի Սաթենիկին հմայել էր Արտավանի թագակիր գլուխը՝ եզերված արտախույրով, ապա ազգագրական երգի ռամիկ աղջիկն էլ պատրաստ է չսիրած հա-րուստ խոջային «խուրբան» անել իր «Կիկոյի ծակ քոլոզին, գլխի մագին, հերգեն վըզին, չարխի թելին»: Սա է սիրո անբացատրելի էությունը:

Արագավազ, ճկուն ոտքերը միշտ էլ գովերգվել են թե՛ հունական, և թե՛ մեր էպոս-ներում ու ժողովրդական բանահյուսության մեջ: Այստեղից էլ՝ **արագոտն**, **թեթնոտն** բա-ռերի գոյությունը: Իսկ տղամարդու մաշկածածկույթի թավամազ լինելը միշտ էլ հարգի է եղել: Որը սակայն չի նպաստել, որ Հայոց թագուհի Փառանձեմը սիրեր Արշակին /դրա համար կային անձնական պատճառներ/, թեև «նա թաւ էր և թուխ էր գունով»⁶ - մեկնա-բանում է Փավստոս Բուզանդը: Շատ հնարավոր է, որ **ոտից** բառածնից **ո** տառը դուրս ընկած լինի գրիչների աչքից, կամ աղճատված, անընթեռնելի **ո**-ն սխալմամբ կարդացվեր **զ**, և բառն ստանար **գտից** տեսքը: Որը **տի**՝ այսինքն տարիք իմաստով անհնար է մեկնա-բանել, իսկ եղած ձևով էլ թողնվել է որպես «անիմանալի», անբացատրելի:

Նմանատիպ անիմաստություններ, տարընթերցումներ ու հավելագրումներ շատ կան 10-րդ դարի պատմիչ Ռիստանէս Եպիսկոպոսի երկերի՝ 1871թ հրատարակու-թյան մեջ, որոնց հանդիպել ենք հեղինակի գործերի Համաբարբառների կազմության ժա-

⁶ Փաուստոսի Բիւզանդացւոյ «Պատմութիւն Հայոց», էջ՝ 192, 1987թ. Երևան:

մանակ և ուղղումներ ու բացատրություններ տվել Համաբարբառների առաջին հատորի Առաջաբանում, կամ ծանոթագրություններում: Կարելի է դրանցից թեկուզ երկուսը նշել. «Տիտոս **նորտի նորտի** պարշարեաց զԵրուսաղեմ», կամ «դայեկան իւրով **Գայիստնի**»:⁷ Վերջին օրինակը Հր. Աճառյանի «Անձնանունների բառարան»-ում հենց այդպես էլ տրված է, բայց **Գայանէ** անվան տակ: Մենք ձեռագրերի ուսումնասիրությամբ ուղղել ենք բառի ճիշտ գրությունը՝ **Գայիայնի**:

Նման որոշ երևույթներ արձանագրել է նաև Հր. Աճառյանը:

Դե ե՛կ ու զլուխ ցավեցրու, որ հասկանաս, թե ի՞նչ է ուզում ասել առաջին բառախումբը՝ **նորտի նորտի**, մակբա՞յ է, թե ուրիշ բան, կամ **Գայիայնի**–ը ինչպե՞ս է դարձել **Գայիստն** և ապա Հռիփսիմեի դայակը: Մեկ ուրիշ տեղ էլ, հենց Խորենացուց մեջբերման մեջ, անձը նույնացվել է քաղաքի հետ, և ստացվել է թե՛ իմաստային, և թե՛ պատմագիտական խաթարում: Դեռ լավ է, որ քննարկվող հատվածում միայն անորոշություն է մնում, պատմությունը չի խաթարվում:

Հնարավոր է, որ **գտիցն** էլ նման բախտի է արժանացել, և մի գրիչի սխալը փոխանցվել ու պահպանվել է մյուս ձեռագրերում: Չե՞ որ գրիչը կարող էր լինել ընդամենը գրագետ մեկը և խորամուխ չլինել քերականական կառույցների մեջ և ջնջված, վնասված ձեռագիրը մի կերպ սվաղեր, առաջ անցներ: Իսկ նման դեպքեր մատենագրության մեջ որքան ուզեք: Երբ առնչվում ես Համաբարբառների կազմության աշխատանքներին, անուրանալի մի գործ, որ հիմնել ու երկար տարիներ ղեկավարել է մեծավաստակ գիտնական, ակադեմիկոս արժանափառ Արարատ Ղարիբյանը, նույն բառին անդրադառնում ես բազմաթիվ անգամ և տարբեր տեսանկյուններից, հնարավոր է դառնում, թեև դժվարությամբ, հասու լինել տեղ գտած վրիպումներին:

Մի գրիչի կողմից թույլ տրված անփութությունն էլ հետագայում ուսումնասիրողին գցում է տարակուսանքի մեջ: Այդպես է և Ղազար Փարպեցու, Ուխտանէս Եպիսկոպոսի, Մխիթար Այրիվանեցու, գործերում, որոնց Համաբարբառները մենք ենք կազմել, և նրանց վերաբերյալ ուսումնասիրությունների որոշ արդյունքներ տրված են մեր կողմից:

Ուրեմն Սաթենիկի տենչանքներից մեկն էլ կարելի է համարել Արտավանի խավրժիլի նման ձիգ ու ճկուն գեղեցիկ ոտքերը: Այստեղ խնդիրը դրված է ոչ թե հայցական հոլովով, որի դեպքում կունենար **գոտս** ձևը, այլ բացառականով՝ ստանալով **զ** նախդիրը, որն ինչպես գիտենք, ընդունված կառույց էր գրաբարում և կրում էր պատմական, կամ վերաբերական բացառական անվանումը: Նոր գրական լեզվում ևս նման կիրառությունը պահպանվել է: Հիշենք Մեծն Հովհաննես Թումանյանին.

«Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմիր,

Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից»:

Կամ

«Խոսում են Լոռու հին հին քաջերից»:⁸

Ահա այս բացառականի մասին է խոսքը: Այսինքն Սաթենիկը տենչում էր Արտավանի **ոտքերի մասին**:

⁷ Ուխտանէսի Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց». էջ՝ 92. 1971թ. Վենետիկ:

⁸ Հ. Թումանյան. «Ընտիր երկեր». Հատոր 1-ին, էջ՝ 183, 190. 1985թ. Երևան:

Ուրեմն նա տենչում էր Արտավանի նուրբ ծալքերով ապարոշված պսակը՝ թագը, և նրա խավրծիլի ընձյուղի նման ճկուն ու խավոտ, ձիգ **ոտքերի մասին**, եթե տառացի թարգմանելու լինենք: Երկու իշխանություն միասին՝ իշխանական և մարմնական, տվյալ դեպքում՝ առնական: **Խաւարտը արտախուր** բառի համար պետք է համարել գոյական որոշիչ, իսկ **խաւարծին**՝ ոտքերի: Մանավանդ որ, ինչպես նկատել է Հր.Աճառյանը, այդ չորս բառերն իրար հետ կապվել են մեկ և շաղկապով, և երկու բառ, որպես խնդիր, կրում են **զ** նախդիրը, միայն թե մեկը հայցական, մյուսը բացառական հոլովների իմաստով: Եթե ավելացնենք նաև, որ գրաբարում որոշիչը հիմնականում գործածվում էր հետադաս, ավելի համոզիչ կլինի մեր դիտարկումը: Աճառյանն էլ բերելով տարբեր հեղինակների բացատրություններ, գտել է, որ նշված բառերից երկուսը պետք է որ ածականի դեր կատարեն: Միայն թե ոչ թե ածական, այլ գոյական որոշիչ:

Ազգագրական երգում էլ հնչում է.

«Կարմիր խնձորը խխճրգները, կանանչ վարդը տղեզները...»

Խնձորն ու վարդը ածական լինել չեն կարող, նրանք գոյական են:

Կարելի է այս համեմատությունը նմանեցնել վերը նշված **զ/ո/տից խաւարծի** բառակապակցության հետ: Նկատի է առնվում երիտասարդությունը, գեղեցկությունը, ճկունությունը:

Իսկ քանի որ այս հատվածը հենց Խորենացու վկայությամբ վերցված է ժողովրդական բանահյուսությունից, որ ականջի կողքով լսել է ինքն անձամբ, շատ բնական է որ այնտեղ տեղ գտնեն ժողովրդական պարզ, անպաճույճ մտածելակերպը: Չէ՞ որ ժողովրդական օրհնանք, խնդրանք էլ կա. «Ողներո՛ւ տ մեռնիմ»:

Շատ հեռու չգնանք, այլ նորից դիմենք Պատմության» Երկրորդ գրքի ԾԱ. գլխում, դարձյալ նույն Արգամի առիթով, «Որ յառասպելին Արգաւանն անուանի»⁹ հիշատակվում է նրա գեղեցկուհի հարճի մասին.

«և գհարճ նորին /Արգամի. - Հ.Հ./ որ կարի չքնաղ էր գեղով և մնացեալ /ծն.՝ մանրաքայլ/ գնացիւք ոտից, զոր կոչէին Մանդու»:¹⁰

Ինչպես երևում է, այս հատվածում էլ գովերգվում են գեղեցիկ, մանրաքայլ ոտքերը՝ այստեղ արդեն՝ կանացի: Կարծես այս փաստը գալիս է հաստատելու մեր կարծիքը: /Իսկ հիմա՞ ով է անտարբեր անցնում կանանց գեղեցիկ ոտքերի կողքով, եթե դեն նետենք պատահողոված տաբատները:/

Ուշադրություն դարձնենք բառի նույնանման հոլովաձևին՝ **ոտից և զտից**:

Այս հատվածում ևս առկա է վրիպումը՝ **մանրաքայլ** -ը կարդացվել է **մնացեալ**: Մեկ այլ տեղում հանդիպում ենք. «...տեսեալ Տրդատայ /Բագրատունի.- Հ.Հ./ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ, որում անուն էր Նազենիկ»¹¹ Կամ «... ի խնջոյս ուրախութեան Խոսրով Գարդմանացի ի գինուջ գեղխեալ առաջի Շափոյ, զօրէն սեղեխի տոփացելոյ զհետ ջնարահար քաջամասն կնոջ կրթէր»:¹²

⁹ Մովսիսի Խորենացույ «Պատմութիւն Հայոց»։ Էջ՝ 181. 1913թ. Թիֆլիս։

¹⁰ Նույն տեղը, գիրք Երկրորդ, Գլ. ԾԱ. Էջ՝ 180։

¹¹ Նույն տեղը, Գլ. ԿԳ, էջ՝ 195։

¹² Նույն տեղը, Գլ. ԾԽ. Էջ՝ 331։

Երեք տեղում էլ գովերգվում են կանացի ձեռքերն ու ոտքերը, անգամ՝ մատները, և այն էլ՝ հարձերի: Իսկ տղամարդու՝ ինչու ոչ, այն էլ՝ արքայահավասարին:

Հովհաննես Դրասխանակերտցին էլ իր սիրելի պատմական դեմքին՝ Արծրունյաց Գրիգոր Դերենին այսպես է ներկայացնում.

«Եւ էր նա /Դերենը. Հ.Հ/ այր սէգ և զգաստ և սօս ի գնացս ոտից»:¹³

Եվ ինչու՞ խորշել նման մոտեցումից, եթե մի քիչ տեղյակ լինենք, թե նախաքրիստոնեական, հեթանոսական շրջանում ինչպես էին պաշտվում մարդն ու բնությունը՝ որպես ներդաշնակ գոյություն: Եվ պատահական չէ, որ սև սքեմի ձեռքերից անգամ առկայծում էին այդ պաշտամունքի շողերը քրիստոնեական ժամանակաշրջանում՝ վերագրվելով առ կինն աստվածամայր:

«Աչքերն ծով ծիծաղախինդ...», «Յայտէն նոնենի...» մրմնջում էին աստվածախոս Նարեկացի Գրիգորի շուրթերը, և այդ էլ ա՛յն ժամանակ, երբ Եվրոպայում մոլեգնում էր ինկվիզիցիան, իսկ մեզանում, քրիստոնեական պաշտամունքն ու անձնատեցությունն անհեթեթության աստիճանի էին հասել՝ խուլ անապատակեցության կամ սյունակեցության դրսևորումներով /Սիմոն Սյունակյաց/:

Նույն հեթանոսական պաշտամունքը չէ՞, որ Հայոց Էպոսում մղում է գովերգելու Խանդութ Խաթունի մարմնական բարեմասնությունները: Եվ դա ամոթ չի համարվել երևի, ինչպես մեր սերնդի մարդիկ անհարմար են զգում հասարակության մեջ բարձրաձայն Քուչակ կարդալ, որն ընդամենը ասում է.

«Ծոցիկն եմ ժամտուն արել,
ծըծերուն եմ խոստովաներ»:¹⁴

Իսկ որքա՛ն հարուստ նյութ է տալիս մեր ազգագրական մշակույթը: Բավարարվենք մեջքերելով մի փոքրիկ հատված այդ անսպառ գանձարանից:

Մըդեր իս հէկին հաղորդ կը քաղիս,
Շամամ ծծերով շակար կը մաղիս,
Ալմաստ փիջախով իմ սիրդ կը դաղիս ...

Կամ

Ծձերտ ուռերը, հե՛յ, ես կըսենք նուռ էր,
Ձեռ թալի որ քաղենք, դու ըսիր ժուռ ը.
Թե ժուռ, թե հասուգ, ընձի խաբուլ ը.
Քու լեզվի՛ն մեռնիմ, անուշ բըլբուլ ը:

/Այս տողերը լսել ենք հայ ազգագրական մշակույթի քայլող հանրագիտարան, պատմական գիտությունների դոկտոր Հայկազ Պողոսյանից/:

Կարծում ենք, ավելորդ կլինի մակդիրների մեկնաբանություններ տալը:

Հիմա ո՞վ կհամարձակվի այսպիսի մտքեր բարձրաձայն ասել հասարակության մեջ, առանց պիտակավորման վախի: Իսկ երևի այն հեռավոր ժամանակներում ասվել են, որ նման հրաշալի ժողովրդական մշակույթ է ստեղծվել:

¹³ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ «Պատմություն Հայոց». էջ՝ 136, 1912թ. Թիֆլիս.

¹⁴ Նահապետ Քուչակ. «Հարյուր ու մեկ հայրեն». էջ 140, 1988թ. Երևան.

Ի վերջո, Խորենացին, որ երբեմն ընդհատելով պատմական նյութի շարադրանքը՝ տալիս է որևէ երևույթի կամ բառի բացատրությունը, ինչպես **շիկափոկ պարանի**, թեկուզ և հենց նույն **Արգամ- Արգավանի** հանգամանքում, լինելով այդքան խստապահանջ իր նկատմամբ, ինչպե՞ս կարող էր նման անորոշակիություն թույլ տալ և ընթերցողին գցել թյուրիմացության մեջ: Չէ՞ որ գիրքը գրվում էր ո՛չ միայն հետագա եկողների, այլ և հենց առաջին հերթին ի՛ր ժամանակակիցների և մասնավորաբար Սահակ Բագրատունու՝ իր պատվիրատու- մեկենասի համար, ու պետք է այնպես գրվեր, որ հասկանալի լիներ կարդացողին, և ոչ թե գլուխկոտրուկ առաջարկեր: Նա կարող էր, չէ՞, մի փոքրիկ բացատրություն տալ այդ բույսերի հատկությունների և նրանց հետ Սաթենիկի հետագա վարվելու մասին, ինչպես արվել է Շամիրամի առիթով, որ «ակն ուներ դիթորթեամբ՝ վիկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ»: ¹⁵ Կամ հաճախ դիմելով իր մեկենասին՝ կարծիքներ ու բացատրություններ է տալիս:

Այս հարցի մասին՝ որպես ապացույցի վերջին ակորդ, մեջբերենք Աստվածաշնչից մի հատված, որում ո՛չ թե մենք, այլ Երուսաղեմի դուստրն է հաստատում մեր կարծիքը: «Սրունք նորա սինք մարմարեայք հաստատեայք ի վերայ ոսկի խարըսխաց, տեսիլ նորա որպէս զընտիր եղնափայտից Լիբանանու»: ¹⁶

Ինչու Երուսաղեմի դստեր հանգամանքում սիրելի մարդու տեսքը կարելի է համեմատել եղնափայտի հետ, այսինքն բարձրահասակ, ուղղաձիգ, ոտքերը մարմարիոն սյուների՝ հենված ոսկեխարխսխ թաթերի վրա, Սաթենիկի դեպքում դրանք չի կարելի համեմատել խավրձիլի հետ: /Իմիջիայլոց, պետք է ասել, որ «Երգ երգոց»-ը կազմված է ճիշտ այն դարսվածքով, ինչը նախորդում է հայկական պատմականորեն ավանդական հարսանիքներին՝ հարս- աղջիկների, փեսայի հարց ու պատասխան երգ – գովերգների ձևով:/

Սաթենիկի տենչանքները բացահայտելով, հասնում ենք ոչ պակաս վիճահարույց **ի բարձիցն** բառային միավորին, որի համար գրքում ծանոթագրություն է տրված՝ **և բարձիցն** ձևը՝ առանց **ի** նախդիրի: Բացառական հոլովի **ի**-ն փոխարինվել է **և** շաղկապով:

Կարծիքներ կան այն և՛ **բարձ**՝ գլխի տակ դրվելիք փափկություն, կամ բարձ՝ նստելիք, աստիճան, պատիվ, և՛ բարձ՝ մարմնի մաս, և բարձր՝ բարձունք, սար, լեռ համարելու մասին:

Միանգամից պետք է մերժել **ի բարձիցն** ձևը որպես **բարձունք**, սարավանդ մեկնաբանությունը, քանի որ Սաթենիկի նման բարձրաստիճան տիկնոջ համար, ինչպես վերը նշվեց, մեծ դժվարություն չէր ներկայացնի իր բազմաթիվ սպասավորներից մի քանիսին ուղարկելու, այժմյան ոճով ասած՝ գործուղելու Արտավանի իշխանական տիրության բարձունքները՝ Մասյացոտն, իր տենչած բույսերը բերել տալու համար: Այդ ի՛նչ մի անիրականանալի տենչանք էր, որ նա չկարողանար հագեցնել, իրականացնել:

Մերժելի է նաև որպես **մարմնի մաս** բացատրությունը: Սաթենիկը ինչու՞ պետք է տենչար Արտավանի մարմնաթմբերը:

Նախքան հատվածի մեկնաբանությանն անցնելը, պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, թե ինչի՞ց էին պատրաստված թագավորական, իշխանա-

¹⁵ Մովսիսի Խորենացույ «Պատմութիւն Հայոց». էջ՝ 50. 1913թ. Թիֆլիս.

¹⁶ Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց. Երգ երգոց. Գլ. Ե. տող 15. Էջ՝ 704, 1929թ. Վիեննա.

կան բարձերը Արտաշիսյան հարստության շրջանում: Արդյո՞ք հնարավոր է, որ նրանք լցված լինեին վայրի խոտաբույսերով, այն էլ այդքան խոշոր կեկ ցողունավոր, ինչպես վերը ներկայացրինք այդ բույսերի բնութագիրը, որոնց վրա անհնար կլինեի նստելն անգամ, ու՞ր մնաց թե գլուխը, երեսը դնել:

Ուրեմն պետք է եզրակացնել, որ խոսքը բարձերից բույսեր, մանավանդ թե փունջ հանելու մասին չէ, այլ մեկ ուրիշ նուրբ իմաստ է ներառում իր մեջ **ի բարձիցն** բառաձևը:

Մենք ևս համամիտ ենք **բարձ**՝ գլխի տակ դնելիք փափկություն բացատրությանը, որոշակի նրբերանգներով և մերժում **բարձ**՝ որպես աստիճան մեկնաբանությունը: Որովհետև եթե Սաթենիկի տենչանքներից մեկը և առաջնայինը Արտավանին և՛ որպես գեղեցիկ տղամարդու, և՛ որպես բարձրադիր իշխանավորի տիրանալու, հասնելու ձգտումն էր, ապա **ի բարձիցն**՝ որպես աստիճան նա չէր կարող տենչալ, քանի որ արդեն ուներ Առաջին տիկնոջ բարձը՝ թագուհու անենաբարձր աստիճանը: Ուրեմն մնում է ենթադրել որ նա տենչում էր ո՛չ թե փառք ու բարձունք, մեծություն, ոչ էլ Արտավանի բարձերից բույսերի համախառն **փունջ** ձեռք բերելը, այլ իր սիրելի, տենչալի տղամարդու հետ **գլուխը մի բարձի դնելը**:

Դարձյալ հիշենք ազգագրական երգի տողերը.

«Խուրբան էղնիմ էն ավուր
Գլոխս առնը քու բառծին»:

Եվ

«Էս անտեր բառծի վրա էլ
Առանց յարի քուն չի գա»:

Կամ ժողովրդական խորիմաստ օրհնությունը՝ «Մի բառծի ծերանաք»:

Ի դեպ բնագրի ծանոթագրության մեջ նշված **և բարձիցն** ձևը նույնպես հաստատում է մեր կարծիքը: Այստեղ ևս խնդիրը դրված է բացառական հոլովով, բայց վերաբերակա և ո՛չ անջատական իմաստով՝ **բարձերի մասին**, և ոչ թե **բարձերից** /հանած/:

Սաթենիկն էլ էր երևի երագում, վերին երկու տողերի ցաված սրտի նման, Արտավանի հետ գլուխը դնել մի բարձի:

Մերժելով **բարձունք** մեկնաբանությունը և հաստատելով **բարձ**՝ գլխի տակ դնելիք փափկություն բացատրությունը՝ ելնում ենք նաև ոչ միայն արտահայտված իմաստից, այլև նրանց հոլովական պատկանելիությունից: **Բարձր** բառը հոլովվում է **Ու-Ա** խառն հոլովմամբ՝ **բարձր – բարձու – բարձանց**, իսկ **բարձը**՝ **Ի** պարզ հոլովմամբ՝ **բարձ- բարձի – բարձից**: Եթե մի կողմ դնենք իմաստային արժեքը և համարենք, որ **ի բարձից** ձևը **բարձր**, կամ հոգնակի՝ **բարձունք** բառն է, ապա այն բացառականում պետք է ունենար **ի բարձանց** ձևը և ոչ թե **ի բարձից**:

Այսպիսով քննարկվող նյութի վերջնական բառացի թարգմանական տեսքը կլինի այսպես.

Տենչում էր Սաթենիկ Տիկինը տենչանքներ՝
Արտավանի արտախույրը խավարտ, խավարծիլ ոտքերը,
Եվ նրա բարձերի մասին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Մեր հնարավորությունների սահմաններում փորձեցինք տալ Մովսես Խորենացու վիճահարույց տողերի նոր մեկնաբանություն՝ հիմք ունենալով

հին մատենագրության, Աստվածաշնչի, նույնիսկ 1-2-րդ դ.դ. պատմիչ Սվետոնիուսի, նոր շրջանի գրականության տվյալները, ինչպես նաև հայ ազգագրական մշակույթի գանձարանի, ժողովրդական ստեղծագործությունների օգնությամբ, օգտվելով նաև մեծարժեք բառարաններից՝ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ, կատարելով նաև լեզվաբանական վերլուծություններ: Կարծում ենք՝ այս մանրակրկիտ ուսումնասիրությունը կօգնի պարզելու մութ, մինչև այժմ չպարզված մնացած մտքերը, և պետք կգա այդ հարցով հետաքրքրվողներին իրենց ուսումնասիրությունների ժամանակ:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ագաթանգեղեայ «Պատմություն Հայոց». Երևան: 1983: 552 էջ:
2. Ղարիբյան Ա. Ռուս – հայերեն բառարան. Երևան: 1968: 1423 էջ:
3. Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց. Վիեննա: 1929: 991+ 280 էջ:
4. Եզնկայ Կողբացույ «Եղծումն աղանդոց». Կոստանդնուպոլիս: 1762: 293 էջ:
5. Դաշտենց Խ. «Խոդեդան», Երևան. 1960: 583 էջ:
6. Հայ – ռուսերեն բառարան. Երևան: 1984: 724 էջ:
7. Թումանյան Հ. «Ընտիր երկեր», հատոր 1: Երևան: 1985: 464 էջ:
8. Աճառյան Հ. «Արմատական բառարան». հատոր 4: Երևան: 1973թ.: 688 էջ:
9. Ղազարայ Փարպեցույ «Պատմություն Հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան». Տփղիս: 1904: 204 էջ:
10. Մխիթարայ Այրիվանեցույ «Պատմություն Հայոց»: Մոսկվա: 1860: 75 էջ:
11. Մովսիսի Խորենացույ «Պատմություն Հայոց»: Թիֆլիս: 1913: 486 էջ
12. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ «Պատմություն Հայոց»: Թիֆլիս: 1912: 427 էջ:
13. Նահապետ Քուչակ «Հայրուր ու մեկ հայրեն». Երևան: 1988: 272 էջ:
14. Նոր Բազմիրք Հայկազեան Լեզուի. Հատոր 1: Երևան: 1979: 1141 էջ:
15. Սասունցի Դավիթ. Հայ ժողովրդական Էպոս.: Երևան: 1939: 385 էջ:
16. Սվետոնիոս. «Տասն երկու կայսրերի կյանքը»: Երևան: 1986: 520 էջ:
17. Ուխտանէսի Եպիսկոպոսի «Պատմություն Հայոց»: Վաղարշապատ: 1871: 230 էջ:
18. Փառուստոսի Բիզանդացույ «Պատմություն Հայոց»: Երևան: 1987: 456 էջ:

References

1. Agathangeghos, "History of Armenia", [Agatangelea Patmuthivn Hayoc] 1983, Yerevan. 552p.(in Armenian)
2. Kharibyn, A. Russian-Armenian Dictionary. [Rus - hayeren bararan]. 1968. Yerevan, 1423 p. (in Armenian)
3. The Holy Bible, Old and New Testaments. [Astuacashunch matean Hine ev Nor ktataranac] 1929. Vienna. 991+280 p. /in Armenian/
4. Desecration of Sects by Yeznik Koghbatsi [Eznka Kokhbachvo «Excumn agandoc», 1762. Kostandnupolis. 293 p. /in Armenian/
5. Dashtents, Kh: "Khodedan"/ [«Khodedan»], 1960. Yerevan. 583 p. (in Armenian)
6. Armenian-Russian dictionary/ [Hay – ruseren bararan]. 1984. Yerevan. 724 p. (in Armenian)
7. Tumanyan, H. "Selected Works", Vol. 1. [Hovhannes Thumanyan, Entir erker] 1985. Yerevan. 464 p. (in Armenian)
8. Acharyan, Hr. "Etymological Dictionary". Vol. 4. [Hr. Acharyan, Armatakan bararan]. 1973. Yerevan. 688 p. (in Armenian)
9. Ghazar Pharbetsi "History of the Armenians" and "Letter to Vahan Mamikonian." [Ghazara Pharpheecvoy «Patmutivn Hayoc» ev «Thukhth ar Vahan Mamikonean»] 1904, Tpkhis. 204 p.(in Armenian)

10. **Mkhitar Ayrivanetsi**, "History of the Armenians" [*Mkhithara Ayrivanecvoy «Patmutivn Hayoc»*]. 1860. Moskva. 75 p. (in Armenian)
11. **Movses Khorenatsi** "History of the Armenians" [*Movsisi Khorenacvo «Patmutivn Hayoc»*]. 1913. Tpkhis. 486 p. (in Armenian)
12. **Hovhannes Draskhanakertsi** "History of the Armenians" [*Yovhannu katholikasi Draskhanakertecvoy «Patmutivn Hayoc»*]. 1912. Thiflis. 427 p. (in Armenian)
13. **Nahapet Kuchak**, "One Hundred and One Homelands" [*Nahapet Quchak, «Haryr u mek hayren»*]. 1988. Yerevan. 272 p. (in Armenian)
14. New Dictionary of the Haigazian Language: Vol. 1 [*Nor Bargirq Haykazeen Lezui. Hator 1-in*]. 1979. Yerevan. 1141 p. (in Armenian)
15. David of Sasun [*Sasunci Davit*] 1939. Yerevan. 385 p. (in Armenian)
16. **Suetonius**, "Lives of the Twelve Emperors" [*Svetonios, «Tasnerku kesarneri kyanqe»*]. 1986. Yerevan. 520 p. (in Armenian)
17. **Bishop Ukhtanes** "History of the Armenians" [*Ukhtanesi Episkoposi Patmutivn Hayoc*]. 1871, Vagarshapat. 230 p. (in Armenian)
18. "History of the Armenians" by **Faustus Byuzabdatsi**. [*Faustosi Bivzandacvo Patmuthivn Hayoc*]. Yerevan. 456 p. (in Armenian)

Ընդունվել է / Received on: **16. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **24. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Հայկանուշ Անուշավանի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ԳԱԱ Հր. Անառյանի
անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ,
Էլ hsuugե՝ hajkanush@list.ru / ORCID: 0009-0003-2531-2182

Haykanush Anushavan HOVHANNISYAN: Researcher
at the Institute of Language after Hr. Acharyan of NAS, Yerevan, RA,
e-mail: hajkanush@list.ru / ORCID: 0009-0003-2531-2182

ԱՍՏՎԱԾԱՇՆՁՅԱՆ ՄԻՍՏԵՐԻԱՅԻ ԱՐԴԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼՅԱՆԻ «ՄՐՋՆԱՆՈՑ»
ՎԵՊՈՒՄ

Արա Ս. Զարգարյան

ԳԱԱ Ս.Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Հոդվածում ուսումնասիրության նյութ է դարձել Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպը, որն առանձնանում է իր սիմվոլիկ շերտով և մոդեռնիստական մտայնությամբ: Այն դուրս է գալիս իրադարձությունների պարզ նկարագրությունից և վերածվում է փիլիսոփայական-գեղարվեստական ալեգորիայի: Մրջունների աշխարհը ներկայացվում է որպես հասարակական, սոցիալ-քաղաքական և էկզիստենցյալ թեմաների խորհրդանիշ: Վեպը անուղղակի քննադատություն է համակարգերի ու ամբոխային մտածողության, որտեղ մրջունների կազմակերպված կյանքը մոդել է անհատականության կորստի համար: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են գուգադրական, հոգեբանական, հոգեվերլուծական և կենսագրական մեթոդներ: Իրականացվել է նաև տարբեր ստեղծագործությունների միջև համեմատություն: Վերլուծություն. Աշխատանքում աստվածաշնչյան պատմությամբ ընդգծվում է արդի ժամանակների քառտիկ վիճակն ու մարդկային մոդելում անհատականության կորստի իրողությունը: Արդյունքներ. Վեպը անուղղակի քննադատություն է՝ ուղղված համակարգերին, ամբոխին: Վեպը մի աշխարհ է, որտեղ մրջունների կազմակերպված կյանքը դառնում է անհատականության կորստի մոդել: Մրջունը այստեղ ընդամենը միջատ չէ, այլ մարդու վիճակի, նրա հոգեբանական և քաղաքակրթական սահմանափակումների ալեգորիկ պատկերման գործիք: Այստեղ ակնհայտ է անհատի և համակարգի կոնֆլիկտը: Սա հիշեցնում է կաֆկայական իրավիճակներ, երբ մարդը կանգնած է անանուն, անշոշափելի, բայց ամենակարող համակարգի դեմ:

Բանալի բառեր՝ Աստվածաշունչ, միստերիա, ամբոխ, մարդ, մրջուն, համակարգ, աշխարհ, Հայաստան:

Ինչպես հղել՝ Զարգարյան Ա. *Աստվածաշնչյան միստերիայի արդի գեղարվեստականացումը Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպում* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 2 (28): 238 - 246 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-238

THE MODERN ARTISTIC INTERPRETATION OF THE BIBLICAL MYSTERY IN NORAYR ADALYAN'S NOVEL "THE ANTHILL"

Ara S. Zargaryan

Institute of Literature named after M. Abeghyan, NAS RA, Yerevan, Armenia

Abstract

Introduction: The subject of this article is Norayr Adalyan's novel "The Anthill", which stands out for its symbolic layers and modernist outlook. It goes beyond a mere description of events and transforms into a philosophical and artistic allegory. The world of ants is presented as a symbol of social, socio-political, and existential issues. The novel serves as an indirect critique of systems and mass mentality, where the organized life of ants becomes a model for the loss of individuality.

Methods and materials: The study applies comparative, psychological, psychoanalytic, and biographical methods. It also involves comparison between different literary works. **Analysis:** Through biblical narratives, the work highlights the chaotic state of modern times and the reality of losing individuality within the human model. **Results:** The novel is an indirect critique directed at systems and the crowd. It portrays a world where the organized life of ants becomes a model for the loss of individuality. The ant here is not merely an insect, but a tool for allegorical representation of the human condition, its psychological and civilizational limitations. The conflict between the individual and the system is evident. This recalls Kafkaesque situations, in which man faces an anonymous, intangible, yet omnipotent system.

Key words: Bible, mystery, crowd, man, ant, system, world, Armenia.

Citation. Zargaryan A. *The Modern Artistic Interpretation of the Biblical Mystery in Norayr Adalyan's Novel "The Anthill"* // "Scientific Works" of SCAS NAS RA, Gyumri, 2025. Vol. 2 (28). 238-246 pp. DOI:10.52971/18294316-2025.28.2-238

Ն Ա Խ Ա Բ Ա Ն . 1990-ական թվականների վերջն ու 2000-ական թվականների սկիզբը Նորայր Ադալյանի ստեղծագործական ամենաբեղուն շրջաններից մեկն էր: 20-րդ դարից դեպի 21-րդ դար անցումը կարողացավ իր հետքը թողնել նաև Ադալյանի գեղարվեստական-գաղափարական աշխարհի վրա, որն ակնհայտ երևում է գրողի 21-րդ դարում տպագրված ստեղծագործություններում: 2006 թվականին լույս տեսավ Նորայր Ադալյանի «Մրջնանոց» [1] վեպը: Վեպի մասին առաջին կարծիքներն ու արձագանքները չուշացան: Վեպի տպագրությունից շաբաթներ անց գրական մամուլում առաջին գրախոսականը տպագրեց գրականագետ Աելիտա Դոլուխանյանը, որն ընդգծեց արձակագրի գաղափարական աշխարհի փոփոխությունը. «*Երբեմնի իրապաշտ գրողը լիովին փոխել է իր գրական ուղղությունը և որդեգրվել գերիրապաշտությանը՝ հատկապես արձակում, մասամբ դրամատուրգիայում: Նրա հրապարակախոսությունը շարունակում է մնալ Միքայել Նալբանդյանի բացած քննական ու քննադատական սթափ տիրույթներում, իսկ գեղարվեստական մտածողությունը լիովին ձևափոխված է երկակի՝ և՛ իրականության*

այլաբանական ընկալումներով, և՛ մետաֆորային վերացարկման երբեմն գլուխկոտրուկի հասցնող առաջադրանքներով» [3, էջ 3]:

Գրական ու գաղափարական ուղղության փոփոխությունը միանգամից ակնառու է դառնում հենց դարասկզբում տպագրած Նորայր Աղայանի առաջին վեպում: Գեղարվեստական գրականության թեմատիկ և սյուժետային փոփոխությունները տիրում էին այդ շրջանի հայ գրականությունում գրեթե ամենուր: 1990-ականների գրական դաշտի քայքայվածության ֆոնին, ինչը պայմանավորված էր նաև ժամանակի ազգային և աշխարհաքաղաքական խնդիրներով, 2000-ականները վկայեցին գրականության որոշակի փոփոխությունների մասին: 2000-ականների հայ գրականությունը կարելի է բնութագրել որպես որոնումների և նոր բանաձևերի ձևավորման ժամանակաշրջան: Եթե 1990-ականները գրեթե լիովին կորցրել էին գրական համակարգի ինստիտուցիոնալ հենքերը, ապա 2000-ականները փորձեցին դրանք վերակազմակերպել՝ նոր տեխնոլոգիաների, գեղագիտական այլաբանությունների և գրաքննադատական վերանայումների ճանապարհով: Փոփոխությունները տեղի էին ունենում ինչպես թեմատիկ, այնպես էլ ժանրային հարթություններում: Անցումային շրջանի սոցիալ-քաղաքական և մշակութային գործընթացները ուղիղ անդրադարձան գրական միջավայրի ձևավորման վրա: Այդ փոփոխությունների կրողը դարձավ նաև Նորայր Աղայանը, իսկ փոփոխությունների հիմքը դարձավ հենց «Մրջնանոց» վեպը: «Մրջնանոց»-ը կառուցվածքային առումով դասական սյուժե չունի: Վեպը չունի գլուխներ, այն կազմված է ընդհանրական, միաշունչ կառուցվածքով: Այն ձևավորված է որպես ազատորեն զարգացող մտածողության հոսք՝ միախառնելով իրականը, երազը, խորհրդանշականը: Վեպի կերպարները ապրում են փակ, գրեթե լաբիրինթոսային տարածության մեջ: Այն ցույց է տալիս մշակութային և սոցիալ-փիլիսոփայական համակարգը: Վեպի վերնագիրը հանդես է գալիս որպես կոդ՝ խորհրդանշելով զանգվածային հասարակության մեխանիկական, անանուն, անկարգապահ և փակ կառուցվածքը: Այն միաժամանակ նաև հեղինակ-մարդու մտավոր խռովքն է, անհատի ճգնաժամային տարածքը: Վեպում արտացոլվում է մարդ-հասարակություն հարաբերության քայքայումը: Աղայանը ցույց է տալիս՝ ինչպես է մարդը կորցնում իր անհատականությունը՝ դառնալով համակարգի անանուն մասնիկ: «Մրջնանոց»-ը կարելի է դիտարկել որպես փիլիսոփայական վեպ, որը նաև հարցադրում է այդ ժամանակի հայ իրականությանը, մարդուն: Այս առումով՝ «Մրջնանոց»-ը մաս է կազմում այն փոփոխությունների, որոնք սկսեցին բնութագրել հայ գրականությունը 2000-ականներին՝ հեռանալով խորհրդային ավանդույթից դեպի փիլիսոփայական և գոյաբանական հարցադրումներ: Խոսելով վեպի վերնագրի և վեպում անընդհատ պտտվող, շարժման մեջ գտնվող մրջյունների մասին, նախ պետք է հասկանալ վեպի վերնագիր բանալին:

Կենդանական աշխարհի խորհրդանշանները կարևոր տեղ են գրավում տարբեր դարաշրջանների և մշակույթների գրականության մեջ: Այդ պատկերների շարքում առանձնահատուկ դիրք ունի մրջյունը: Նրա խորհրդանշական իմաստները պարադոքսալ են: Դա պայմանավորված է ստեղծագործության կոնտեքստից, մշակույթից ու հեղինակային հայացքից: Այն միաժամանակ մարմնավորում է աշխատասիրություն, կոլեկտիվություն, իմաստություն ու կարգապահություն, սակայն կարող է ներկայացվել նաև որպես անհատականության կորուստ, սոցիալական մեքենայացման խորհրդանիշ: Մրջյու-

նի խորհրդանիշի բազմիմաստությունը գրականության մեջ ունի տարբեր դրսևորում՝ սկսած խրատական առակներից մինչև փիլիսոփայական արձակ և գիտաֆանտաստիկ ստեղծագործություններ: Մրջյունի կերպարի ամենահին և կայուն դրսևորումներից է առակի ավանդույթը: Հնագույն հունական գրականության մեջ, հատկապես՝ Եզոպոսի առակներում, մրջյունը ներկայացվում է որպես աշխատասեր, հեռատես և պատասխանատու էակ: Մրջյունի պուժեն հետագայում զարգանում է ռուսական և ֆրանսիական գրականությունում: Այստեղ մրջյունը դառնում է բարոյական կերպար՝ ընդգծելով աշխատանքի արժեքը և զվարճանքի մերժումը: Սակայն այս ամենին զուգընթաց մրջյունի խորհրդանշային իմաստներից կարևորը տեսնում ենք հենց Աստվածաշնչում. *«Գնա մրջյունի մոտ, ծուլ մարդ, և նայիր նրա ուղիներին ու իմաստուն եղիր»* [2, էջ 659]:

Նոր ժամանակների գրականության մեջ մրջյունի կերպարը սկսում է կորցնել իր միանշանակ դրական հնչողությունը: Այն վերածվում է սոցիալական կառուցվածքի փոխաբերության, որտեղ անհատը ենթարկվում է հավաքականի շահերին: Այս մեկնաբանությունն առավել ցայտուն է դրսևորվում 20-րդ դարի գրականության մեջ, որտեղ մրջյունը խորհրդանշում է հասարակությանը: Ամենացայտուն օրինակն է Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխություն» [5] վեպը: Մարդը ներկայացվում է որպես անանուն արարած, որը կորցնում է անհատականությունը և դառնում մեխանիկական մաս՝ մեծ ու անհասկանալի համակարգում: Մյուրեքալիստական արվեստում արդեն մրջյունը երբեմն հանդես է գալիս որպես խանգարված իրականության, դիսկոմֆորտի խորհրդանիշ: Ընդհանրացնելով նշենք, որ մրջյունի կերպարը գրականության մեջ անցել է հարուստ ու բազմաշերտ զարգացման ուղի՝ խրատական կերպարից վերածվելով փիլիսոփայական, սոցիալական և նոր ժամանակներում դարձել ապոկալիպտիկ խորհրդանիշ: Այն հիշեցնում է վտանգների մասին՝ անհատականության կորուստ, համակարգի մեջ ձուլում, մարդկային և բարոյականության մարում: Այսպիսով, մրջյունը միայն կերպար չէ, այլ մշակութային արխետիպ, որն օգնում է մարդուն ընկալել և բացահայտել սեփական տեղն ու դերը տիեզերքում: Մրջյունի խորհրդանշային այս ամբողջական համակարգի մի շարք դրսևորումներ տեսնում ենք Ն. Ադալյանի վեպում: Վերնագիր-բանալին արդեն իսկ ընդգծում է այն ամբողջական այլաբանությունը, որ առկա է վեպում: Վեպում մի շարք այլաբանական կերպարների ընդհանրացման մասին է ընդգծվում նաև վեպի առաջին գրախոսականում. *«Նորայր Ադալյանի նոր վեպը այլաբանական, մետաֆորային, գերիբալաշտական բնույթի է ամբողջովին: Սովորական ընթերցողին այն բավականին անհասկանալի է, իսկ մասնագետ և զարգացած մարդու համար ուղեղի կենտրոնացում է պահանջում՝ նրանում եղած գրողի ասելիքը ճիշտ հասկանալու համար»* [3, էջ 3]:

Ն. Ադալյանի «Մրջանոց» վեպում մրջյունը կրում է նոր ժամանակների գրական խորհրդանիշը՝ անհատականությունը կորցրած հասարակություն, որի մարդկային և բարոյական դիմագիծն արդեն մարել է խանգարված իրականությունում, որը տանում է դեպի քայքայում և կործանում: Մրջանոցը դառնում է քառտիկ իրականության վայրը՝ նոր ժամանակների հայկական ու համաշխարհային իրականությունը: Դա վեպում ընդգծվում է պատումի աշխարհագրության լայն տարածությամբ՝ հեռավոր ԱՄՆ-ից մինչև Հայաստան: Վեպի գլխավոր և միակ կերպար-հերոսը Սահակ Պարթևյանն է, ում իրա-

կան լինելու մասին շեշտում է նաև հեղինակը. «Նա, որը շուտով կգա մասնակցելու այս պատմությանը՝ միակ հերոսի կարգավիճակով, մի օր լեռան ամառանոցից իջավ գոգահովիտ և հաշվեց քսանմեկ տեսակի երկու հարյուր յոթանասուն կակտուս» [1, էջ 5]: Սահակի՝ վեպի միակ իրական կերպար-հերոսի ներկայացմանը նախորդում է մեծ հրդեհի տեսարանը, որն իր հետ սրբել և տարել է ամեն ինչ: Հրդեհից հետո նոր իրականության մեջ մնացել էր Սահակը, միակ մարդը, ում շուրջն արդեն պտտվում են մնացյալ կերպարները, որոնք վեպում մե՛րթ թվում են իրական, մե՛րթ ուղղակի Սահակի երևակայության արդյունքներն են: Սահակին ներկայացնելով՝ հեղինակը հաջորդիվ խոսում է նաև մեծ հրդեհից հետո ողջ մնացած մյուս կերպարների մասին. «Օձը սողում, կծիկ էր դառնում նրանից հեռու: Մողեսը տաքանում էր շիկացած քարին, վախենալով թե՛ օձից և թե՛ կակտուսներից: Իսկ մրջյունները, որոնց հնարավոր չէր հաշվել, երբեմն խիտ կուտակումներով ամբոխվում էին կակտուսների վրա, սակայն վերջիններս նրանց նկատմամբ էլ էին սառն ու անտարբեր...» [1, էջ 6]: Վեպի էջերում հետագայում տեսնում ենք նաև շան, արտույտի այլաբանական կերպարների գործողությունները: Վերոնշյալ հատվածից անմիջապես հետո վեպում ներկայացվում է արդեն կնոջ՝ Անահիտի կերպարը: Ն. Ադայանը տալիս է նոր աշխարհի, նոր ժամանակի պատմությունը: Համաշխարհային ջրհեղեղից հետո տեղի է ունենում աշխարհի նոր կործանումը՝ աստվածաշնչյան իրողությամբ՝ կրակով: Տրվում է նոր ժամանակների մարդու և աշխարհի սկզբնավորման ընթերցումը: Այս կետում աշխարհի՝ կրակով քանդման ու վերականգման հիմքում 20-րդ դարի փակման ու 21-րդ դարի սկզբնավորման իրողությունն է: Այն մեր դեպքում նաև երկակի խորհրդանիշ ունի՝ խորհրդային կարգերի փլուզումից հետո անցումը դեպի անկախություն: Վեպի գլխավոր կերպարը Սահակն է, ով ունի Պարթևյան ազգանունը: Սահակ Պարթևյանի գաղափարական հիմքով Ադայանը հղում է անում Հայոց 10-րդ կաթողիկոս և գրերի գյուտի հիմքում կանգնած երևելի հային: Նրանով ընդգծվում է նոր ժամանակներում ընդունելի նախահիմքային կերպարը: Անահիտի կերպարով հղում է արվում Անահիտին՝ ռազմի և պտղաբերության աստվածուհուն: Աշխարհակործան հրդեհից հետո մնացել են հայկականության գաղափարական հենքի կրողները, սակայն նրանք ողջ են մնացել և վեպում իրենց գոյության պայքարը մղում են հենց մրջնանոցում: Տղամարդկին գաղափարական այս գիծը վեպում ուրվագծում է նաև մահ և կյանք խորհրդանիշը: Կյանքի և մահվան այս սիմվոլիկ համակարգի մասին վեպում պարբերաբար խոսում է նաև հեղինակ-պատմողը. «...Մահը տղամարդուն է, կինն է պատկանում կյանքին, հողը, ջուրն ու երկինքը գտնվում են նրա դաշտում, որտեղ փչում են բուրավետ-գովաշունչ քամիներ» [1, էջ 89]: Ապոկալիպսիսից հետո աշխարհի կազմավորման և առաջին մարդկանց միստերիայի մասին պատմելով՝ Ն. Ադայանը շարունակում է Ավետիք Բսահակյանի «Լիլիթ» [4, էջ 185] ստեղծագործության նոր ժամանակների ավանդույթը: Երկու ստեղծագործություններում թեմատիկ զուգահեռները հստակ ընդգծվում են մի շարք հատվածներում [1, էջ 106]: Եթե Բսահակյանի մոտ տղամարդու և կնոջ սիրային պատությունը եղեմական միջավայրում էր տեղի ունենում, ապա Ադայանի մոտ Սահակի և Անահիտի սիրո պատմության վայրը քառտիկ Հայաստանն էր, որում եղեմական միջավայրին փոխարինում էր դժոխայինը: Լիլիթ-Ադամ և Սահակ-Անահիտ զուգահեռները

նկատում ենք վեպի մի շարք հատվածներում, որոնցում կա օձի ամենատես ներկայությունը: Կին-տղամարդ հարաբերության կենտրոնում է կանգնած օձը, որն աշխարհի կործանումից հետո ողջ մնաց: Վեպում օձն իր էության մեջ աստվածաշնչյան օձն է, որը ժամանակ չի ճանաչում, հավիտենական է և պատմության նախահիմքից հայտնվում է և հասնում նոր ժամանակներ, նոր դարաշրջան: Կործանարար հրդեհից հետո օձը փրկվում է, հասնում Հայաստան և իր կործանարար գործունեությունը շարունակում արդեն նոր օրերում, որով և հաստատվում է նրա հավիտենական վիճակը. *«Օձն ամբողջ բնության մեջ միակն է, որ սառն է ողջ-առողջ և տաք՝ մեռած ժամանակ: Մրան անմիջապես հետևեց հարցը. որտե՞ղ է օձը, մեռնելուց առաջ, թե՞ հետո: Պատասխան չեղավ»* [1, էջ 24]: Օձը գրականության մեջ ամենահին և բազմիմաստ սիմվոլներից է: Նրա կերպարը գրողներին հնարավորություն է տալիս արտահայտելու հակասական զգացողություններ և խորքային գաղափարներ: Տարբեր մշակույթներում ու գրական ավանդույթներում օձը կարող է միաժամանակ մարմնավորել և՛ իմաստություն, և՛ խաբեություն, և՛ կյանք, և՛ մահ: Նախ և առաջ, օձը հաճախ ընկալվում է որպես գայթակղության և մեղքի խորհրդանիշ: Քրիստոնեական ավանդույթի մեջ օձը հայտնի է որպես այն արարածը, որն Եվային գայթակղեց՝ բերելով մարդու անկումը դրախտից: Այս պատկերով օձը դառնում է չարիք, սատանայական խաբեություն խորհրդանիշը: Միևնույն ժամանակ, օձը նաև վտանգի և մահվան խորհրդանիշ է: Նրա լուռ շարժումը, թունավորությունը և հանկարծակի հարձակման ունակությունը դարձնում են նրան սարսափի քողարկված սպառնալիք, մութ ուժերի մարմնացում: Այս համատեքստում օձը հանդես է գալիս որպես սարսափազդու ենթագիտակցություն՝ դրսից անտեսանելի, բայց ներսում՝ վտանգավոր: Այս ամենի գաղափարական հանրագումարն է կրում վեպում օձը: Վեպի տարբեր հատվածներում նկատում ենք այս դրսևորումները, վարքագիծն ու չարիքի ամենատես խորհուրդը: Նա Սահակի և Անահիտի սիրային հարաբերությունների կենտրոնում է կանգնած, երբեմն նաև մասնակիցն է դառնում, տեղ-տեղ նաև նա է գայթակղում, հարաբերվում Անահիտի հետ: Օձի գայթակղությունը վեպում Անահիտին հետապնդում է գրեթե ամենուր: Օձ-Սահակ-Անահիտ եռանկյունու վերջնակետը դառնում է այն, որ Անահիտը, ի տարբերություն աստվածաշնչյան միատերիայի, չի գայթակղվում, այլ ինչ-որ պահի Սահակին կոչ է անում սպանել նրան. *«Ազատիր ինձ նրանից, -ավելի վախեցած, խնդրեց կինը: Բնչպե՞ս: Սպանիր: Ո՛ւմ: Պարզ չի՞, ոչ թե ինձ, այլ նրան»* [1, էջ 111]: Հենց այս կետով է տրվում հեղինակի կողմից օձի՝ չարիքի բացակայությունը մեր կյանքում: Նրա գայթակղությունն ամենուր է, կա, հատկապես նոր դարում և նոր օրերում, ինչից փախուստ չկա, միակ հաղթահարումը դա չարիքի ոչնչացումն է ու հաղթանակը չարիքի նկատմամբ, ինչը փաստում է և գրականագետ Աելիտա Դոլուխանյանը. *«Հեղինակի որոշումը հստակ է, օձը, այսինքն՝ սատանան ու նրա նյութած չարիքը, չպետք է լինեն կյանքում: ...Հեղինակը այլաբանորեն հավաստում է՝ չարի նահանջը, այն էլ թվացյալ, ժամանակավոր է, չարը միշտ լինելու է մարդու կողքին»* [3, էջ 3]: Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպը որքան էլ աստվածաշնչյան առասպելի նորօրյա ընթերցում է, Սահակ-Անահիտ սիրային պատմություն, այն նաև կրում է սյուժետային կարևոր գիծ ևս՝ Հայաստանն իր ժամանակի քառուխի իրականության մեջ: Թեև նմանատիպ հատվածները քիչ են, սակայն կողային բա-

ռերը, վերնագիրը, մի քանի նախադասությունները բավական են, որպեսզի այդ ամենը հստակ ընկալի ընթերցողը: Ն. Աղայանը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում և ընդգծում անկախության կործանարար ազդեցությունը: Խորհրդային շրջանում անկախությունը, որ անհաս երազանք էր թվում, դարձավ իրականություն, սակայն այդ իրականությունը նոր քառս ու արժեհամակարգերի փլուզման ժամանակաշրջան բերեց իր հետ միասին: Այդ մասին նշվում է վեպի սկզբում՝ ցույց տալով մրջնանոցի գոյության պատճառահետևանքային կապը: Դա ակնառու է նաև Սահակ Պարթևյանի կենսագրական մանրամասնությունների մասին ներկայացվող հատվածներում, երբ ընդգծվում է, որ նա խորհրդային ժամանակաշրջանում լրագրող էր, իսկ անկախության Հայաստանում ոչ ոքի պետք չէ, հասարակությունից մեկուսացած անձ է, որն իր գոյությունն է քարշ տալիս մրջնանոցում, փորձում գտնել փրկության պարանները: Խորհրդային շրջանից անցումը դեպի անկախության շրջան բնութագրվում է որպես թավշյա հեղափոխություն. *«Թավշյա հեղափոխությունից հետո (իսկ իրականում՝ բավականին արյունալի ու ողբերգական), որի փլատակների տակ մնաց աշխարհի մեկ-վեցերորդ մասն՝ ավելի քան հարյուր միլիոն այլազան բնակչությամբ, բոլոր վանդակներն արագորեն կործանվեցին, անկախություն հռչակվեց, այժմ և միշտ ամեն մարդ ու զազան ազատ էր մոնչալու իր սրտի ուզածը...»* [1, էջ 30-31]: Պատմական ընթացքի գեղարվեստականացումից հետո տրվում է արդեն գնահատական այդ ամենին, ներկայացվում է հետանկախության շրջանի իրականությունը, հասարակությունն ու իրողությունները, մրջնանոցի այլաբանությամբ ներկայացնելու մանիֆեստը. *«Անկախությունը ոսկետառ թուղթ է, ոչ հոգու բառ, այլ բառարանի, որ ամեն մեկն արտագրում էր իր բնավորության ձեռագրով, գողը՝ գողավարի, ստախոսը՝ ստապաճույճ, ճարպիկ խորամանկներից անառակը (զարմանալ պետք չէ) մի բարձրագահ սրբի պես, խաբեբան էլ՝ անբասիր ազնվականի ոճով...»* [1, էջ 31]: Իր ժամանակի իրականության այլաբանական ներկայացմանը զուգահեռ՝ վեպում պարբերաբար տրվում է նաև իրողությունների իրական պատկերը: Նմանատիպ հատվածները քիչ են, սակայն կոդային նախադասություններն այնքան դիպուկ են, որ հաջորդող Սահակ Անահիտ սիրային հարաբերությունների գեղարվեստական տեսարաններն անգամ չեն փոշիացնում ժամանակի իրողության մասին քննադատական հատվածները [1, էջ 30, 58, 63, 145, 196]: Այս վեպում ևս շարունակվում է Նորայր Աղայանի արձակին բնորոշ մեկ դիմագիծ ևս, վեպի սյուժետային ժամանակաշրջանի Երևանի նկարագրությունը: «Մրջնանոց» վեպում սակայն կարողում ենք քաղաքի դիմագծի կորստի մասին էջեր, երբ պատմականությանը փոխարինում է հյուրանոցների և անդեն շենքերի շինարարությունը, սակայն այս կետում դրանք նպատակին չեն հասնում, և ինչպես օձի պարագայում է չարիքը ոչնչացվում, այստեղ ևս վեպի ամբողջ ընթացքում հյուրանոցի կառուցումը ի վերջո ձախողվում է, և այն քանդվում է [1, էջ 190]: Վեպի ավարտին արդեն Անահիտը հեռանում է Սահակից, և Սահակը նկատում է, որ մրջնանոցի ազդեցությունը դառնում է կործանարար. *«Փորձում են ինձ ստրկացնել, -մտածում էր Սահակը, -ուզում են ես դառնամ մի հսկայական մրջյուն, իմ հոգին են ցանկանում խժոեղ»* [1, էջ 209]: Աշխարհի և Հայաստանի կործանարար իրականության պայմաններում լուծումը կրակով անընդունելի համակարգի ոչնչացումն է: Սահակը կա՛մ պիտի դառնար մրջնանոցի մաս, կա՛մ ընթանար

ինքնակործանման ճանապարհով՝ այդպիսի պահպանելով իր մարդկային դիմագիծը: Ինչպես վեպի հենց սկզբում ներկայացվեց հրդեհից ու կրակից հետո առաջացած նոր իրականությունը, այնպես էլ վեպի ավարտին նորից տեսնում ենք կրակի խորհրդանիշը: Սահակը այրում է մրջնանոցը, իր տունն ու արդյունքում ինքնահրկիզվում է: Կրակը դառնում է մեկ իրողությունից անցումը դեպի այլ իրողություն: Կրակը դառնում է անընդունելի աշխարհի ու իրողության կործանման խորհրդանիշ: Վիպական սյուժեն հավիտենական շրջապտույտ է կատարում և կանգնում սկզբնական կետում: Այդ ամենից հետո մնում է Սահակի մարմինը, ում հուղարկավորում են, սակայն մրջյունները նոր մրջնաբույս են շինում Սահակի գերեզմանաթմբի վրա: Իսկ վեպի ավարտին արդեն տեսնում ենք ժամանակի մարդու և բարոյական արժեքները կործանող աշխարհի քննադատությունը, որը վեպում առկա խոհափիլիսոփայական հատվածների հանրագումարն է, ընդհանրական գաղափարական կուլմինացիան. *«Ճշմարիտ է ասված, մենք մարդուց վերածվում ենք մեքենայի, մարդկությունը դառնում է մի ահռելի-սարսափազդու գործարան, որ տալիս է միայն նյութեղեն արտադրանք, սա ավելի մեծ համաճարակ է, քան հին ու նոր բոլոր ժանտախտները միասին վերցրած»* [1, էջ 214]:

ԵԶՐԱՆԱԳՈՒՄ. Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպը ժամանակակից հայ գրականության մեջ աչքի ընկնող գործերից է՝ թե՛ իր սիմվոլիկ շերտով և թե՛ մոդեռնիստական մտայնությամբ: Վեպը դուրս է գալիս պարզ հղումների և իրադարձությունների սահմաններից և վերածվում է փիլիսոփայական-գեղարվեստական ալեգորիայի, որտեղ մրջյունների աշխարհը դառնում է հասարակական, սոցիալ-քաղաքական և էկզիստենցյալ թեմաների խորհրդանիշ: Վեպը անուղղակի քննադատություն է՝ ուղղված համակարգերին, ամբոխին: Վեպը մի աշխարհ է, որտեղ մրջյունների կազմակերպված կյանքը դառնում է անհատականության կորստի մոդել: Մրջյունը այստեղ ընդամենը միջատ չէ, այլ մարդու վիճակի, նրա հոգեբանական և քաղաքակրթական սահմանափակումների ալեգորիկ պատկերման գործիք: Այստեղ ակնհայտ է անհատի և համակարգի կոնֆլիկտը: Սա հիշեցնում է կաֆկայական իրավիճակներ, երբ մարդը կանգնած է անանուն, անշոշափելի, բայց ամենակարող համակարգի դեմ: Ադալյանի լեզուն զուսպ է, բայց խիտ է, հաճախ՝ մետաֆորիկ: Կառուցվածքը ալեգորիկ-սիմվոլիկ է, վեպն ընթերցվում է միաժամանակ որպես պատմություն ու որպես գաղափարների շերտ: Այն հակաուտոպիստական է, բայց չունի հուսահատ տոնայնություն: Այն չի փորձում քարոզել, այլ առաջադրում է հարցեր, որոնք ընթերցողը պետք է ինքնուրույն վերլուծի: Նորայր Ադալյանի «Մրջնանոց»-ը հայ գրականության այն վեպերից է, որտեղ ներկայացվում է մարդու և հասարակության, ազատության և հարմարվողականության հակադրությունը: Վերջնարդյունքի հիմքը դառնում է ընտրությունը՝ կա՛մ դառնալ մրջնանոցի համակարգի մաս, կա՛մ պահպանել մարդկային դիմագիծը, որը, սակայն կարող է լինել ինքնակործանման ճանապարհով:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ադալյան Ն.** «Մրջնանոց», Երևան, ՀԳՄ հրատ., 2006, 220 էջ:
2. **Աստուածաշունչ** Էջմիածին: Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն հրատ.: 2016: 1501 էջ:

3. «Գրական թերթ» Երևան, ՀԳՄ հրատ., 2006, N 5, 60 էջ:
4. Իսահակյան Ա. *Երկերի ժողովածու*, հատոր 3-րդ, Երևան, «Հայաստան» հրատ., 480 էջ:
5. Կաֆկա Ֆ. «Կերպարանափոխություն», Երևան, «Անտարես» հրատ., 408 էջ:

References

1. **Adalyan, N.** Ant-Hill [*Mrchnanoc*], Yerevan, Writers' Union of Armenia Publishing, 2006, 220 p. (in Armenian)
2. **Astvacashunc** Bible, [*Astwatsashunch*] Ejmiacin, Hayastani Astvacashnchyan yunkerutyun hrat., 2016, 1501p. (in Armenian)
3. **Grakan tert** [*Literary Newspaper*], Yerevan, Writers' Union of Armenia Publishing, 2006, N 5, 60 p. (in Armenian)
4. **Isahakyan, A.** Collected Works, [*Erkeri joxovacu*], Vol. 3, Yerevan, "Hayastan" Publishing, 480 p. (in Armenian)
5. **Kafka, F.** The Metamorphosis [*Kerparanpoxutyun*], Yerevan, "Antares" Publishing, 408 p. (in Armenian)

Ընդունվել է / Received on: **20. 08. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **24. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արա Սմբատի ԶԱՐԳԱՐՅԱՆ՝ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, ՀՀ,
էլ.հասցե՝ zargaryanara1994@gmail.com / ORCID id: 0000-0002-0087-5232

Ara Smbat ZARGARYAN: Junior Researcher at the Institute of
Literature named after Manuk Abeghyan of NAS, Yerevan, RA,
e-mail: zargaryanara1994@gmail.com / ORCID id: 0000-0002-0087-5232

ՄԻ ՔԱՆԻ ԱՐՔԵՏԻՊՈՍՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՄՈՒՇԵՂ ԳԱՆՇՈՑԱՆԻ
«ՄԱՄՓՐԵ ԱՐՔԱՆ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Գազիկ Վ. Խաչիկյան

Արեգնազ Վ. Մելիքսեթյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Անվտվում

Նախաբան. Սույն հոդվածով վերլուծում ենք Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքը՝ բացահայտելով պատմվածքում առկա արքետիպային պատկերացումները, որոնք մինչ այժմ չեն շոշափվել գրականագետների կողմից: Պատմվածքի հիմքում ընկած է հայոց ցեղասպանության թեման և դրա ազդեցությունը Մամփրեի կյանքում: Կարևոր ենք համարում արքետիպերի մեկնաբանությունը համաշխարհային մշակույթի խորհրդանիշների համատեքստում: Մեթոդներ և նյութեր. Որպես գրականագիտական վարկած՝ մենք ներկայացրել ենք «Մամփրե արքան» պատմվածքում դրսևորված արքետիպային պատկերացումները: Ուսումնասիրությունը հիմնված է գրականության մեջ արքետիպերի դերակատարության վրա: Հոդվածում անդրադարձել ենք Ա. Յու. Բոլշակովայի տեսակետին: Մեր կողմից տրված մեկնաբանությունները կատարվել են հաշվի առնելով նաև ԵՊՀ-ի ուսումնական ձեռնարկում առկա վերլուծությունները: Վերլուծություն. Հատկապես առանձնացվել է Մամփրեի կերպարը՝ որպես արքետիպային պատկերացումներ խտացնող հերոս: Նա ձգտում է ճշմարտությունն ու արդարությունը հաստատել գրի միջոցով՝ ութսուն տարեկանում մեսրոպյան այբուբենը սովորելու շնորհիվ: Հոդվածում քննարկվում են Մամփրեի՝ այբուբենը սովորելու կենսական անհրաժեշտություն դարձած ձգտման պատճառները: Աշխատանքում կարևորվում են թե՛ Մամփրեի կերպարը՝ որպես ստեղծագործության սուբյեկտի ֆիգուրայի արքետիպ, թե՛ Մարիամ Աստվածածնի պաշտամունքը և ջրհեղեղի արքետիպային իմաստը՝ որպես շրջադարձային իրադարձությունների խորհրդանիշ: Արդյունքներ. Մաշտոցյան այբուբենի իմացությունը Մամփրեի համար դառնում է ազգային ինքնությունը պահպանելու և կենսական ճշմարտությունները բացահայտելու միջոց:

Նրա համար տառերը «կարմիր են», քանի որ Մաշտոցի սրտից են ծնվել և մասնակցել սրբազան կոիվների՝ ազատության համար: Հեղինակների ներդրումը. Հոդվածի հեղինակ Գագիկ Խաչիկյանը մտահղացել և ղեկավարել է հետազոտությունը, մշակել հիմնական տեսական հիմքերը և կատարել հոդվածի հիմնական շարադրանքն ու վերջնական խմբագրումը: Արեգնազ Մելիքսեթյանը կատարել է պատմվածքի գրականագիտական ուսումնասիրություն, հավաքագրել ու համակարգել անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև մասնակցել արդյունքների մեկնաբանմանը և հոդվածի նախնական տարբերակի պատրաստմանը: Երկու հեղինակներն էլ համատեղ քննարկել են վերլուծության արդյունքները և հաստատել հոդվածի վերջնական տարբերակը:

Բանալի բառեր՝ Մուշեղ Գալշոյան, «Մամիրե արքան» պատմվածքը, ստեղծագործական գործընթացի սուբյեկտի ֆիգուրայի արքեսիպային պատկերացումը, մաշտոցյան այբուբենը, գրողը և կենսական, պատմական ճշմարտությունն ու արդարությունը:

Ինչպես հղել՝ Խաչիկյան Գ., Մելիքսեթյան Ա. Մի քանի արքեսիպային պատկերացումներ Մուշեղ Գալշոյանի «Մամիրե արքան» պատմվածքում, // ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025թ., 2(28): 247-258 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-247

SOME ARCHETYPAL REPRESENTATIONS IN MUSHEGH GALSHOYAN'S SHORT STORY "KING MAMPRE"

Gagik V. Khachikyan

Aregnaz V. Meliksetyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: The article analyzes Mushegh Galshoyan's short story "King Mampre" and reveals its archetypal representations that may have been overlooked by other literary scholars. The story centers on the Armenian Genocide and its consequences in Mampre's life. We emphasize the importance of interpreting archetypes within the context of world cultural symbols. **Methods and Materials:** As a literary hypothesis, we have presented several archetypal representations manifested in Mushegh Galshoyan's short story "King Mampre". The study is based on the role of archetypes in literature. We referred to the viewpoint of A. Yu. Bolshakova, according to which, archetypes are "basic concepts that serve as reference points for people". Our interpretations also considered the notions expressed in the YSU educational manual. **Analysis:** Particular attention is paid to the character of Mampre as a variant of the archetypal representation of a creative individual. He seeks to affirm truth and justice through written word, thanks to learning the Mesropian alphabet at the age of eighty. The story also discusses Mampre's vital issues related to learning the alphabet. In the work, both the character of Mampre, as an archetype of the figure of the subject of creation, and the cult of the Virgin Mary, and the archetypal meaning of the flood as a symbol of pivotal events are emphasized. **Results:** Mampre's knowledge of the Mashtotsian alphabet becomes a means of preserving national identity and revealing vital truths. For him, the letters are "red" because they were created from Mashtots' heart and participated in sacred battles for freedom. Mampre considers the alphabet to be the king of his people. His character becomes a vivid manifestation of the archetypal representation of a creative individual. **Authors'**

Contributions: Gagik Khachikyan conceptualized and supervised the research, developed its main theoretical framework, and performed the primary composition and final editing of the article. Aregnaz Meliksetyan conducted literary study of the short story, collected and systematized the necessary materials, and participated in the interpretation of the results and the preparation of the initial draft of the article. Both authors have jointly discussed the results and approved the final version of the article.

Key words: *Mushegh Galshoyan, "King Mampre" short story, archetypal representation of the figure of the subject of the creative process, Mashtotsian alphabet, historical truth and justice.*

Citation: Khachikyan G., Meliksetyan, A. *Some Archetypal Representations in Mushegh Galshoyan's Short Story "King Mampre".*/"Scientific Works" of SCAS, NAS RA. Gyumri, 2025, 2 (28). 247 – 258 pp. DOI:10.52971/18294316-2025.28.2-247

Ն Ա Ն Ա Բ Ա Ն. Մուշեղ Գալշոյանի /1933-1980/ «Մարութա սարի ամպերը» /1981/ ժողովածուի պատմվածքներից յուրաքանչյուրը արքետիպային պատկերացումների ուրույն դրսևորումներ է պարունակում իր գեղարվեստական համակարգում: Մասնավորապես «Մամփրե արքան» պատմվածքում հեղինակը արքետիպային պատկերացումների ինքնատիպ փունջ է կիրառել, որի բացահայտումն ու մեկնաբանությունն իբրև գրականագիտական վարկած ներկայացվում է սույն հոդվածում: Այստեղ նախ ուզում ենք նշել հետևյալի մասին: Արքետիպի տեսության համբավավոր հիմնադիր հոգեբան, փիլիսոփա Կ.Գ.Յունգը /1875-1961/, ոգևորվելով իր տեսության կարևոր նշանակությամբ հոգեբանական գիտությունների, գրականության և արվեստների ուսումնասիրության մեջ ընդհանրապես, արտահայտել է նաև այսպիսի մի ուշագրավ միտք, ըստ որի՝ գրողներն իրենց ստեղծագործություններում պետք է շարունակ մտածեն արքետիպեր բացահայտելու մասին: Գրականագիտական վերլուծություններ կատարելիս այս մտքին մենք հաճախ ենք անդրադառնում, և, կամա թե ակամա, մեր ուշադրությունը սևեռվում է տվյալ երկում արքետիպային մոտիվներ կամ արքետիպային պատկերացումների դրսևորումներ գտնելու վրա: Ինչ խոսք, նման մոտեցումը պայմանավորված է նաև տվյալ գրական երկը առավել խորքային բացահայտումներով վերլուծելու անհրաժեշտությամբ:

Մեր ուսումնասիրության մեջ կիրառել ենք գրական վերլուծության **արքետիպային մեթոդը**՝ հիմնված Կարլ Գուստավ Յունգի հոգեվերլուծական տեսության վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս խորքային քննության ենթարկել Մուշեղ Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքը՝ բացահայտելով նրա՝ որպես հերոսի, անգիտակցականի շերտերն ու այդտեղ ամրակայված համամարդկային խորհրդանիշերը: Մենք նպատակ ունենք բացահայտելու պատմվածքում դրսևորված արքետիպային պատկերացումները՝ դրանք դիտարկելով համամարդկային մշակույթի և խորհրդանիշերի լայն համատեքստում:

Հոդվածի **նպատակն է** խորացված վերլուծության միջոցով լուսաբանել Մամփրեի կերպարի յուրահատուկ դրսևորումը՝ որպես արքետիպային պատկերացումներ կրողի մարմնացում: Մենք ձգտում ենք ցույց տալ, թե ինչպես է սասունցի գաղթականը, ութսուն տարեկանում այբուբեն սովորելով, դառնում ճշմարտության և արդարության աննկուն ջատագովը: Սույն աշխատանքը կհարստացնի Գալշոյանի ստեղծագործության ըմբռնումը և կխրախուսի նոր ընթերցումներ:

Մեր ուսումնասիրության **խնդիրն** է բացահայտել և համակարգել պատմվածքում առկա արքետիպային կերպարներն ու պատկերացումները, մասնավորապես՝ Մամփրեի բազմաշերտ կերպարը: Կարևոր է նաև վերլուծել հայոց ցեղասպանության թեմայի արտացոլումը արքետիպային շերտի միջոցով՝ ցույց տալով, թե ինչպես է հերոսի անձնական պայքարը դառնում ազգային տոկունության և ինքնության պահպանման խորհրդանիշ: Այս խնդիրների լուծումը թույլ կտա խորությամբ ըմբռնել պատմվածքի գեղարվեստական և գաղափարական արժեքը:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է անցյալի (հայոց ցեղասպանության) և ներկայի անքակտելի կապով, ինչպես նաև՝ պատմվածքում ներհյուսված համամարդկային արժեքներով: Այն շեշտում է ինչպես պատմական ճշմարտությունը հիշելու և փոխանցելու անհրաժեշտությունը, այնպես էլ կեղծիքի դեմ անհատի հերոսական պայքարի կարևորությունը: Մուշեղ Գալշոյանի պատմվածքը մնում է արդիական՝ որպես հավերժական հիշեցում ազգային ինքնության, տոկունության և արդարության հանդեպ ձգտման մասին:

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ. Արքետիպային պատկերացումների դրսևորման առանձնահատկությունները Մ.Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքում: Արքետիպերի դրսևորումների դիտանկյունից պատմվածքի ուսումնասիրումը պայմանավորված է ընդհանրապես գրականության մեջ դրանց դերակատարության հետ: Մեզ համար ընդունելի է արքետիպերի մասին ռուս գրականագետ և տեսաբան Ա.Յու. Բոլշակովայի հետևյալ տեսակետը: «Մենք կարող ենք հատուկ կերպով առանձնացնել մշակութային անգիտակցականը իբրև այնպիսի ոլորտ, որտեղ նիքիում են նախնական՝ արքետիպային կերպարները, գաղափարները, մոտիվները, որոնք հետագայում գործուն դերակատարություն են ունենում գեղարվեստական ստեղծագործության մեջ» [4,48]: Նա սահմանում է նաև արքետիպերի մասին իր պատկերացումը. «Արքետիպերը հիմնային /բազային/ կոնցեպտներ են /ընդհանուր հասկացություններ, պատկերացումներ-Գ.Խ./, որոնք մարդկանց համար հանդիսանում են հենակետեր, ուղղորդում են կյանքի ճանաչողության գործընթացներում և ունեն անվանումներ»[4,48]: Գրականագետը առաջարկում է արքետիպերը համակարգելու այսպիսի մոտեցում: Նրա կարծիքով արքետիպերը կարելի է երեք մեծ խմբի բաժանել՝ ա/աստվածային արքետիպեր, բ/կենսափիլիսոփայական արքետիպեր և գ/մարդկային արքետիպեր: Ժամանակակից որոշ ռուս մասնագետների շրջանում տարածված է այն տեսակետը, որ արքետիպային պատկերացումները լինում են ունիվերսալ և ամեն մի ազգի մշակույթի մեջ յուրովի, անփոփոխ փոփոխված կերպով արտահայտվող էթնոմշակութային իրողություն: Մեզ համար, ընդհանուր առմամբ, ընդունելի են նաև արքետիպերի մասին այն պատկերացումները, որոնք արտահայտվել են ԵՊՀ-ի հրատարակչության տպագրած բուհական ուսումնական ձեռնարկում [2]: Արքետիպերի մասին վերոհիշյալ և այլ ուսումնասիրություններում արտահայտված տեսակետների հաշվառմամբ էլ մենք գրականագիտական մեկնաբանության ենք ենթարկել պատմվածքի գեղարվեստական համակարգում արքետիպային պատկերացումների հետ առնչվող մի շարք մշակութային-գրական, սիմվոլիկ դրսևորումները:

Ունիվերսալ արքեպիսկոպոսի մեջ առանձնահատուկ հզոր դրսևորումներ ունի մասնագետների վկայությամբ Անիմա-Անիմուս /կանացի սկիզբ-տղամարդկային սկիզբ/ արքեպիսկոպոս իր բազմազան անհատականացման տարբերակներով: Պատմվածքում դրա ուշագրավ արտահայտություններից մեկը, անշուշտ, Մարիամ Աստվածածնի պաշտամունքի հետ է առնչվում: Վերջինիս նկարը փակցված է Տեր Հարությունի դասասենյակի պատին, մետրոպոլիտայի աթոռների կողքին, այդպես կարծես ընդգծվում է տառերի աստվածային հովանու ներքո գտնվելու հանգամանքը: Մարիամ Աստվածածնի սրբապատկերը քրիստոնեական կրոնի խորհրդանշաններից է, որն այս դեպքում կարևորվել է ժողովրդի քրիստոնեական մշակույթի հետ կապվածության հանգամանքը ընդգծելու համար:

Արքեպիսկոպոս թեև կենսահոգեբանական երևույթներ են, սակայն բանահյուսության մեջ, արվեստում, գրականության մեջ անհատականացման և փոխակերպման հետևանքով տարբերակային դրսևորումներ ունեն, ինչի շնորհիվ հոգեբանական նախօրինակը՝ սկզբնագաղափարը, ներկայանում է անփոփոխ /ինվարիանտ/ փոփոխված /վարիատիվ/ կերպով, իբրև մշակութային երևույթ: Իսկ գրականության մեջ արքեպիսկոպոսի պատկերացման հետ առնչվող կերպարն իր մեջ խտացնում է գրողի տվյալ երկում արտահայտվող գլխավոր գաղափարներից մեկը: Այս առումով պատմվածքում ուշագրավ է իմաստուն ծերունի-իմաստուն ծեր կին արքեպիսկոպոսի գույգի դրսևորման մեկնությունը: Պատմվածքում իմաստուն ծերունի արքեպիսկոպոսի պատկերացման հետ առնչությունների մեջ են հանդես գալիս գլխավոր հերոսը՝ Մամփրեն, Տեր Հարությունը: Իսկ ծեր կնոջ արքեպիսկոպոսի կերպարի հետ է առնչվում հեղինակային խոսքով անորոշ ներկայացված ժողովրդի ներկայացուցիչ այն ծեր կինը /մամիկ/, որի պատմելով է մատուցվում Տեր Հարությունի երազում Սուրբ Սարգսի պատմածը ջրհեղեղ լինելու մասին: Ջրհեղեղը արքեպիսկոպոսի պատկերացում է: Այն լայնորեն հայտնի է Աստվածաշնչյան ջրհեղեղի հետ կապված պատմության շնորհիվ: Ջրհեղեղի արքեպիսկոպոսի իմաստն այն էր, որ աշխարհում, մարդկության կյանքում տեղի էին ունենալու շրջադարձային իրադարձություններ: Իսկ երազին հաջորդած դեպքերը վկայում են, որ այն իսկապես աշխարհաքաղաքական, շրջադարձային իրադարձությունների մասին էր խորհրդանշում /ինչը հետագայում դրսևորվեց ինչպես հայտնի է Առաջին աշխարհամարտի տեսքով /1914-1918 թթ./, հայկական Ցեղասպանությամբ /1915/, նոր պետական-քաղաքական աշխարհակարգի ստեղծմամբ /Խորհրդային Միության առաջացում/ և այլն: Երազի միջոցով շրջադարձային իրադարձությունների մասին պատկերացումների հետ կանխագագամբ առնչվելը ևս արքեպիսկոպոսի միջոցով կենսական երևույթների ճանաչողության ինտուիտիվ եղանակ էր, որը տարածաշրջանի միջազգային իրադարձությունների բուն քաղաքական պատճառներից հեռու գտնվող հասարակ մարդկանց աշխարհաճանաչողության մատչելի ձև էր: Վերոհիշյալ տեսանկյունից պատմվածքում ուշագրավ է նաև այն, որ Մետրոպոլիտ Մաշտոցին, նրա կողմից հայկական այբուբենի ստեղծման նշանակությունը մեր ժողովրդի պատմական ճակատագրում հեղինակը արժևորելու յուրօրինակ դիտանկյուն է ընտրել: Հայ գրականության մեջ հայկական այբուբենը ստեղծած նշանավոր գործչին նվիրված չափածո ավարտուն, բարձրարժեք գեղարվեստական հայտնի երկերում՝ Սիամանթոյի «Սուրբ Մետրոպոլիտ», Պարույր Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմներում և այլ երկերում մաշտոցյան գյուտը գնա-

հատվում և իմաստավորվում է իբրև հեղինակ հանդես եկող կրթված, զարգացած, գրական բարձր օժտվածություն ունեցող հայ մտավորականների կողմից: Այս պատմվածքում Մուշեղ Գալշոյանը նույն խնդիրը բացահայտում է երիտասարդ տարիքում գրաճանաչություն ձեռք բերել չհասցրած, սակայն ժողովրդի իմաստությամբ օժտված սասունցի հասարակ շինական, թուրք ջարդարարների դեմ կռված, գաղթի ճանապարհներով անցած Մամփրեի միջոցով: Նրան դիտարկելով իբրև պատմող-նարատոր՝ հեղինակը նրա աշխարհայեցողության, երևակայության, նրա վերհուշի, մտածողության մեջ արքետիպային պատկերացումների ուրույն դրսևորումների բացահայտումներով է ներկայացնում ու արժևորում մեսրոպյան այբուբենի նշանակությունը: Եվ ահա իր ժողովրդի դեմ ցեղասպանություն իրականացրած իրենց բազում անգամներ գերազանցող թշնամու դեմ գլուխ չխոնարհած, յուրաքանչյուրի հետ նրանց դեմ կռված Մամփրեին բնականաբար պիտի թվար, որ Մաշտոցը հայոց տառերը իր սրտից է դուրս բերել, և որ դրանք կարմիր են: Տառերը այդպիսի գույն պետք է ունենային, քանի որ մեր ժողովրդի դարավոր պատմության ընթացքում նպաստել են, որ ժողովուրդը կռվի թշնամու դեմ իր ինքնությունը պահպանելու և ազատ ապրելու համար: «Հայոց տառերը կարմիր են, բացատրում էր Տեր Հարությունը, քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կոիվների են մասնակից եղել: Եվ ասեղնագործում էր հանդարտիկ, հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ իրենց թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են, և Տեր Հարությունն է ստեղծողը»[1,382]: Կարմիրը արյան և հատկապես արեգակ-կրակի գույնն է, իսկ վերջինս աշխարհի չորս տարրերի մասին հնագույն պատկերացման բաղկացուցիչներից մեկն է /հող, ջուր, օդ, կրակ/, որոնց առանձին բաղադրիչների հետ /հող, ջուր-առու/ համեմատությունների հերոսը հաճույքով է դիմում հայկական այբուբենը սովորելիս: Հասարակ գյուղացի Մամփրեի համար հող ու ջրի-առվի հետ գուգահեռ անցկացնելով այբուբենը սովորելը ևս նրա սոցիալական վիճակի ու զբաղմունքի հետ էր կապված:

Գրողը աստիճանաբար խորացնում է հայոց այբուբենի նշանակության մասին պատկերացումների շրջանակը, այդ թվում Մամփրեի աշխարհընկալման մակարդակով: Այբուբենը նրա պատկերացմամբ ստեղծվել էր, որ տառերով ժողովրդի համար կարևոր գաղափարների մասին գրվեին, և որ այն տարածվեր նաև Մելքոն վարժապետի հորինած այբուբենի երգի /«Ռանչպարների կանչը»/ միջոցով: Իր սովորած տառերի մի մասը այդ երգի տեքստի պատառիկների շնորհիվ էին նրա հիշողության մեջ մնացել: Այս հանգամանքն իր հերթին վկայում էր տղամարդու/Մամփրեի/ մեջ անիմայի, այս դեպքում ստեղծագործական սկզբի, արվեստի նկատմամբ հակում ունենալու մասին: Ինչը ութսունամյա հասակում արթնացավ նրա մեջ մի նոր հզոր բռնկմամբ, որին դեռ կանդիդատանք:

Պատմվածքում ուշագրավ են նաև երկրի դեկավարի արքետիպային պատկերացման վերաբերյալ արծարծումները: Մեծահասակ Օհանը համագյուղացիների հետ զրուցելիս դատապարտում էր Օսմանյան կայսրության տիրակալին՝ սուլթանին, որը սեփական, ազգայինը չունենալով՝ ուրիշ ազգի ստեղծած տառերով արյունոտ հրամաններ է արձակում: Այդպիսի մի հրամանով էր նա մահապատժի ենթարկվել նաև Մելքոն վարժապետին: Իսկ հայ ժողովուրդը թեև թագավոր չունեի, սակայն իր սեփական, ազ-

գային տառերն ուներ: Քաղաքակրթական-մշակութային այս արժեքը ունենալու առավելությունը, օրինական հպարտության զգացում էր առաջ բերում Օհանի մեջ: Ուստի մեսրոպյան այբուբենը նրա ընկալմամբ դարձել էր մեր ժողովրդի արքան, որին հնագանդվում էին հայերը: Սա արդեն երկրի ղեկավարի արքեպիսկոպոսական պատկերացման մի նոր տարբերակ էր հասարակ ժողովրդի ներկայացուցչի ընկալմամբ, ինչը հարստացնում էր այբուբենի գնահատման ժողովրդական ընկալումն ու մոտեցումը: Այսինքն՝ արքայի կամ երկրի ղեկավարի գաղափարը զուգակցվում էր քաղաքակրթական արժեքի ստեղծման ու գնահատման ընդունակության և ոչ թե դաժան հրամաններ հրապարակելու հետ: Պատմվածքում ֆաբուլայի զարգացման առումով գլխավոր տեղ է զբաղեցնում Մամփրեի կողմից հանդես բերված վճռականությունը՝ թոռան օգնությամբ հայկական այբուբենի իմացությունը իր համար լիարժեք դարձնել, տարիների իր երազանքը իրականացնել ութսուն տարեկան հասակում: Այս մտասկզբումն այնքան հզոր էր նրա մեջ, որ հեղինակն այն դարձնում է ընդհանրապես գրավոր խոսքով ստեղծագործական աշխատանքի խորքային ու կարևոր կողմեր բացահայտելու միջոց: Մանավանդ որ այդ խնդիրները արծարծում է հասարակ մարդու, սակայն ժողովրդական իմաստությամբ օժտված Մամփրեի նման ծանր ճակատագիր ունեցած սասունցու հայացքով: Տառաձանաչությունն իր համար մատչելի դարձնելու համար նա դրանց ձևերը համեմատում է իր համար ծանոթ ու հասկանալի բնաշխարհի տեսարանների հետ, առունների հոսանքների, շարժման ուղղության ու միմյանց հետ կապվելու հետ: Եթե նախապես մանկան բնագործ էր ընկալել «Ռանչ-պարների կանչ»-ի երգային ներդաշնակության, խաղաղ աշխատանքի դրվատման հետ միահյուսված, ապա աստիճանաբար խորանում է նրա հոգում այբուբենի իմացության կարևորությունն ու նշանակությունը իր և իր ժողովրդի համար: Նա գիտակցում է, որ Մաշտոցի ստեղծած այբուբենը եղել է մեր ազգային ինքնությունը պահպանելու կարևոր գրավականներից մեկը: Ուստի այբուբենի ստեղծման գործընթացը Մամփրեն պատկերացնում էր իբրև այն ստեղծողի հոգու, սրտի այնպիսի բխվածք, որի շնորհիվ հայոց գիրը դարձել է պատմության ընթացքում մեր ժողովրդին պաշտպանելու միջոց: Այդ պատկերացումը փոխանցվել էր տառերի մյուս սովորեցնողներին, այս դեպքում նաև Տեր Հարությունին. դրանք նա այնպես էր սովորեցնում, կարծես ինքն էր նորից ստեղծում՝ իր հոգեաշխարհից հանելով դրանց պատկերները: Իսկ ժողովրդին պատուհասած արհավիրքի ժամանակ էլ նա այբուբենի ուսուցման ավանդույթը պահպանելու համար խորհրդանշական կերպով հեռանում է դեպի Արարատ լեռը: Նրա արքեպիսկոպոսական հավերժ ու անսասան գոյության իմաստի մեջ պահպանելու քաղաքակրթական այդ ձեռքբերումը՝ կոտորածների, վայրենի պատերազմական իրադարձությունների ժամանակ: Լեռան արքեպիսկոպոսական պատկերացումները պատմվածքում ազգային արժեքների, ինքնության պահպանման խորհրդանշան են, հովանավոր: Դա է պատճառը, որ տառերը սովորելու Մամփրեի ուխտը սասունցիների համար սուրբ լեռ Մարաթուկին ուխտ անելու հետ է կապված, որպեսզի երդմանը հավատարիմ մնա: Եվ ահա Մամփրեն տարրականում սովորող թոռնուհու հսկողությամբ այբուբենն է սովորում՝ անտեսելով համազրուդացիներից ունեց հեգնոտ վերաբերմունքը, ունենալով նաև խրախուսող համերկրացի: Մակայն ամենակարևորն այն էր, որ, դժվարությամբ սովորելով տառերը, Մամփրեն աստիճանաբար ավելի ու ավելի էր ներթափանցում տառաձա-

նաչության ու գրի իմացության բարձր ու կարևոր իմաստի մեջ: Արդեն Տեր Հարությունը պատկերավոր կերպով իր սաներին սովորեցրել էր, որ Մաշտոցը տառերը իր սրտից է հանել, դրա համար էլ դրանք կարմիր են: Ու վարժապետն ինքն էլ այնպես էր տառերը սովորեցնում կարմիր թելով հյուսելով, որ աշակերտներին թվում էր, թե նա էլ իր հերթին է այդ տառերը ինքնուրույն հորինում: Այլ կերպ ասած՝ տառերը սովորելու ընթացքը Մամփրեի մեջ առնչվում է ստեղծագործական աշխատանք կատարելու անհատական մեծագույն արարչական ջանքերի հետ: Ու այս պատկերացումը նրա մեջ գնալով խորանում է՝ տառերի իմացությանն ու գործածությանը վերագրելով բարձրագույն, քաղաքակրթիչ իմաստ ու նշանակություն թե՛ իր ազգի և թե՛ մարդկության համար:

Տառերի գործածության մեջ նա տեսնում է կենսական ճշմարտությունը գրի առնելու և բարձրաձայնելու հնարավորություն: Ահա մտածողության այս մակարդակին հասնելու շնորհիվ է, որ, մեր կարծիքով, Մամփրեի կերպարը լիարժեք բացահայտելու համար նրա մեջ պետք է տեսնել «ստեղծագործական գործընթացի սուբյեկտի ֆիգուրայի» [3, էջ 167] արքեսիպային պատկերացման առնչությամբ տարբերակի դրսևորման արտահայտություն: Ժողովրդի և իր ծանր ճակատագրի բերումով նա հասել էր այն ինքնագիտակցությանը, որ տառաճանաչությունը պետք է օգնի բացահայտելու կենսական ճշմարտությունները, որոնք տարբեր պատճառներով մնում են անհայտ կամ կեղծվում են անարդար, միտումնավոր կերպով, այդ թվում՝ օտար նվաճողների մեղքով: Իր կենսափորձի ու կենսագագացողության չափով Մամփրեն հասնում է ստեղծագործող անհատի, արվեստագետի, հրապարակախոսի, գրողի համար այն պարտադիր ստեղծագործական օժտվածության ըմբռնմանը, որ գրելու ընդունակությունը պետք է ծառայեցվի կենսական ճշմարտության իմացությանն ու բարձրաձայնելուն, այդ մասին գրածը հրապարակելու միջոցով: Մտածողության այս մակարդակին հասնելու շնորհիվ է, որ նա մաշտոցյան տառերը համարում է զինվորներ, իսկ իրեն նրանց առաջնորդող արքա՝ Մամփրե արքա: Ինքն իր այդ զինվորներով պետք է մարտնչի մեր ժողովրդի հանդեպ պատմական անցյալում եղած անարդարությունների բացահայտման դեմ, աշխարհին պատմել պատմական ճշմարտության մասին: Անհրաժեշտ էր բացահայտել նաև կեղծիքը, որը կատարվում էր իր շուրջը, խորհրդային տարիներին բնորոշ ժամանակաշրջանի արատավոր լրագրողական ստի ու երեսպաշտության միջոցով: Այս երկու ուղղությամբ էլ կյանքի վերջին օրերին նրա գործադրած ջանքերը գտարյուն ճշմարտության համար մարտնչող, ստեղծագործող անհատին վայել բարձր պահվածքի արտահայտություն էր: Եվ հեղինակը Մամփրեի վերհուշերի ու մտածողության միջոցով հղկում է նրա կողմից մաշտոցյան գրերի նշանակության մասին գաղափարը: «Մաշտոցի գրերը, կարդում ենք պատմվածքում, - զինվորներ են: Գեղեցկադեմ, մաքուր և զուլալ և արի զինվորներ: Զինվորներ: Ոչ թե ասկյարներ, այլ զինվորներ: //Երկրի սահմանները պաշտպանող զինվորներ: //Արդարության, ճշմարտության համար կռվող զինվորներ: //Գեղեցիկն ու բարին պաշտպանող զինվորներ: //Եվ հայոց երկրի թշնամոց դեմ կռվող հերոս զինվորներ» [1, էջ 396]: Տառերը լրիվ ճանաչելուց և գրել կարողանալուց հետո ուշագրավ վերաիմաստավորում է կատարում Մամփրեն հայկական գրերի մասին՝ իր մանկության շրջանում ստացած տպավորությունների մեջ: Ազգային այբուբեն ունենա-

լը, ինչ խոսք, ազգի համար քաղաքակրթական ձեռքբերում է, սակայն պակաս կարևոր չէ այն, թե ինչպիսի նպատակների համար է այն ծառայեցվում: Թուրքական սուլթանն, օրինակ, օտարի գրատեսակը/արաբական գիրը/ օգտագործելով անարդար, արյունոտ հրամաններ էր արձակում՝ հայ մարդկանց դեմ, Մելքոն վարժապետին մահապատժի ենթարկելու համար: Հետևաբար . «Եվ Տեր Հարությունն էր ճիշտ, ոչ թե Օհանը: Ճիշտ չէր Օհանը. Էրզրի իրենց գյուղի ամենատարեց մարդը, նա, որ հզոր ընկուզենի ուներ և իր ընկուզենու հասակակիցն էր, ճիշտ չէր, որ ասում էր, թե հայոց գիրը հայոց թագավորն է, արքան է: Հայոց գրերը հայոց զինվորներն են: Իսկ թագավորը, թագավորը Մամփրեն է, Մամփրեն է արքան, այսինքն նա, ով այդ զինվորներն ունի իր հրամանի տակ և նրանց կռիվ է տանում՝ հանուն հայրենիքի, հանուն արդարության, հանուն ճշմարտության, հանուն գեղեցիկի» [1, էջ 396]: Այնուհետև իր օրինակը ինքնաքննադատաբար օգտագործելով՝ Մամփրեն պարզհոգի, արդարամիտ մարդու անմիջականությամբ, տառերով ստեղծագործական աշխատանք կատարելու, դրանք կյանքում կիրառելու մասին իր նոր տեսակետն է արտահայտում: Նրա պարզունակ թվացող մտորումներում արտահայտվում է համագային ու համապետական, ընդհանրապես համամարդկային նշանակություն ունեցող մտահոգություններ: Ութսունամյա սասունցի գյուղացին գրավոր խոսքի միջոցով կենսական ճշմարտությունն ու արդարության բացահայտման բարձրագույն պահանջն է կարևորում իր օրինակով ներկայացնելով իրեն իր կարգավիճակում չարդարացնող երևակայական մի Մամփրե արքայի. «Իսկ Մամփրե արքան կարող է հանկարծ փախչոտի մեկը լինել և զինվորներին հիմար հրամաններ տալ, այդ դեպքում նա արդեն արքա չէ, այլ սովորական մի փախչոտ և հրաման տալու իրավունք չունի, այլ ամենաշատը, պետք է հետևի, թե իսկական արքայի հրամանի տակ զինվորներն ինչպես են շարժվում, դեպի ուր են շարժվում և ինչ են անում և, եթե կարող է, թող մաքրի իր փախչոտը: Այդ Մամփրե արքան կարող է հանկարծ նենգ մի ավազակ լինել, իսկ ավազակն արդեն արքա չէ, ավազակ է ու կա, և նրա պիղծ հրամանի տակ այդ զինվորները կարող են դառնալ ասկյարներ: Այսպես»[1, էջ 396]: Եվ ամփոփելով իր մտորում-ասելիքը՝ գրուցընկերոջ հետ խոսելիս Մամփրեն հավելում է. «-Ամեն հացակեր հայոց գրերի գլխին հարկ չէ, որ արքա դառնա»[1, էջ 396]:

Իր գեղջկական պարզ տրամաբանությամբ, տառաճանաչության և հեզելով կարդալու նախնական կարողությամբ Մամփրեն հասնում է մտածողության այն մակարդակին, որ տառերը ստեղծագործական աշխատանքում իրենց բարձրագույն գերխնդրին պետք է ծառայեն, այն է՝ գրավոր խոսքով անհրաժեշտ է կենսական ճշմարտությունը բացահայտել, բարձրաձայնել հատկապես կորսված արդարության մասին, կյանքում եղած իսկապես արդարը, գեղեցիկը ի հայտ բերել և արձանագրել: Ու Մամփրեն փորձում է իր ուժերի ներածին չափով զբաղվել այդ գործով: «Որքան բան կա գրելու: Որքան և որքան ճշմարտություններ ունի ասելու Մամփրեն»[1, էջ 401]: Առաջին տպավորիչ միջադեպը իրենց հարևանուհի կթվորուհի Ծաղիկի մասին թերթում տպագրված ակնարկի հետ է կապված: Քանի որ ինքը լավ էր ճանաչում Ծաղիկին դեռ մանկուց, ուստի Մամփրեն աղաղակող կեղծիք է համարում այն, որ թերթի թղթակիցը նրա մասին գրելիս ընդգծել էր, որ Ծաղիկը իբրև թե մանկուց երազել է կթվորուհի դառնալ:

Ժամանակի խորհրդային մամուլին բնորոշ իրականությունը արտաքուստ գեղեցկացված ներկայացնելու, արատավոր սկզբունքը, կենսական բուն ճշմարտությունը թաքցնելու, կեղծելու հակումը զայրացնում է Մամփրեին: Բնքը գիտեր, որ Ծաղիկը փոքր հասակում աշխույժ, կենսասեր, խելացի աղջիկ էր և երագում էր ուսուցչուհի, բժշկուհի կամ նման մի ոլորտում հայտնվել, բարձր կրթություն ստանալ, սակայն ամուսնանալուց հետո երեխաներ են հայտնվում և նրա երագանքները չեն իրականանում: Նա հարկադրված էր կթվորուհի աշխատել, որ կարողանար ընտանիքում երեխաներին պահել: Այս ամենն իմանալու շնորհիվ է, որ Մամփրե արքան կատարում է իր առաջին սուր քննադատական գրառումն ուղղված Ծաղիկի մասին ակնարկի հեղինակի դեմ. «Տղա, փորի համար հոգին չեն ծախի: Դու հոգի չունես, տղա, սուրբ Մաշտոցի արդար զինվորներին անարդար հրաման մի արձակե: Դու արքա չես ու գրեթե հրաման արձակելու իրավունք չունես: Քու հարամ աջը քեզ քաշե, տղա: Թե կրնկնիս իմ ձեռք...» [1, էջ 400]: Արդարամիտ ու ճշմարտասեր Մամփրեն անելիք շատ ուներ, իր տեսած ու գիտեցած բազում ճշմարտությունների մասին էր հարկավոր գրել: Ափսոս որ շատ ուշ ճանաչեց հայկական տառերը: Կյանքի վերջին օրերին Մամփրեի մեջ արթնանում է նաև պատմական անարդարությունը բարձրաձայնելու պահանջը: Մանկության, պատանեկության շրջանում էր նրա հոգու վրա ծանրացել հարևան թուրք Օսմանի լամուկի Օսմանի հոխորտանքը իրենց տան վերևի Մեհրեաղբյուրի անունը թուրքերեն՝ Աթաբունար անվանելու կապակցությամբ: Ճիշտ է նրան մի լավ տրորեց, սակայն վերջինս փախավ ու հեռվից քարով խփեց գլխին, արնոտեց գլուխը՝ շարունակելով կանչել Աթաբունար, այսինքն՝ աղբյուրի անունը Մեհրե չէ, այլ Աթաբունար, այսինքն աղբյուրը Մամփրեինը չէ, այլ իրենն է: Ութսունամյա իմաստուն ծերունու ուժերը նվազում էին և նա օգնության կանչեց «Էրգրի սարերի շունչը, տրորեց աչքերը և օգնության կանչեց սարերին փլված ճանանչ եկեղեցիների գործությունը, և մատիտը ձեռքն առավ... Հիմա, հիմա... Ահա թե ինչի համար, թե ինչի համար սովորեց հայոց գրերը» [1, էջ 400]: Մամփրեի՝ պատմական ճշմարտությունը պաշտպանելու, իշխողի կեղծարարությունը մերկացնելու և հերքելու այսպիսի ներշնչման իրական ու հոգևոր աղբյուր-ազդակները իսկական մտավորական գրողին համակած զգացողություններ են, որին նա հաղորդակից էր դարձել իր կյանքի մայրամուտին: Եվ կյանքի գնով կատարած իր վերջին գրառումը, դառնում է նրա դժվար կյանքի ընթացքում ձևավորված, պատմական անարդարությունը հերքելու և պատմական ճշմարտության սկզբունքը պաշտպանելու մասին հայ բոլոր սերունդների ընթերցողին ուղղված պարզ, սակայն պատկերավոր ու փոխաբերական իմաստով շարադրված, կոթողային, արդիաշունչ, անմոռաց պատգամ: «Օսման, թալանչի Օսման,- իր վերջին ուժերով գրել էր Մամփրեն,- ուրեմն որպես ավագակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է, հա՞: Քու թալանչի ձեռքն, որ դռան դիպավ, էդ տունը քոնն է, հա՞: Քու հարամ շունչն որ աղբրակին դիպավ էդ աղբուրն քոնն է, հա՞... Աթաբունար... Մամփրեն ճար չունեցավ, թե քեզ տրորեր, տրորեր ու տրորեր, ու դու հասկանայիր, թե Տալվորիկի սարերում ու ողջ Մասնա սարերում Աթաբունար հարամանուն աղբյուր չկա: Չկա ու չկա: Աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե կմնա՝ Մեհրեաղբյուր: Պատմություն կա, արարիչ կա ու հնուց եկած գրույց. Առյուծ Մեհրն էդտեղ,

հենց էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել առյուծին ու ճղել զառյուծն ու, կամոք արարչի, տեղն ու տեղն աղբյուր է բխել: Եվ արարիչն ինքն է կնքել՝ Մեհրեաղբյուր: Արարիչն է ծնել ու արարիչն է կնքել: Օսման, Թալանչի Օսման, ես էլ մեռնեմ, դու էլ մեռնես, աղբյուրի անունը Մեհրե էր ու Մեհրե էլ կմնա: Մամփրե արքա»[1, էջ 403]: Կենսական ու պատմական ճշմարտությունը նման աննահանջ համարձակությամբ բարձրաձայնելու Մամփրեի պահանջը նրան լիիրավ պահում է ստեղծագործական գործընթացի սուբյեկտի ֆիգուրայի արքետիպի տարբերակային մի կերպարի մեջ: Այս տիրույթում նա հաղորդակից է նաև իմաստուն ծերունու, մաշտոցյան այբբուբենի արքայի խորհրդանշանական արքետիպային պատկերացումների հետ և այդ ամբողջի յուրօրինակ մարմնացում է դառնում Մուշեղ Գալշոյանի պատմվածքների տիրույթում: Այդ յուրահատկությամբ հանդերձ, ազգային նկարագրով, սասունցու պահվածքով նա նաև ձեռք է բերում համամարդկային նշանակություն ամեն կերպ ճշմարտությունը բացահայատելուն միտված արդարամտության և կեղծիքի հետ չհաշտվելու ազնվամտության շնորհիվ: Իսկական գրողին վայել բարոյական ու գեղագիտական այսպիսի սկզբունքներով առաջնորդվող կերպարին բնորոշ հատկանիշներ է ձեռք բերում Մամփրե արքան /այս դեպքում «արքա»-ն դարձել էր նրա ցանկությամբ գրական ծածկանուն/:

Ե Զ Ը Ա Ն Ա Ն Գ ՈՒ Մ. Արքետիպային պատկերացումների դրսևորումների դիտանկյունից Մ.Գալշոյանի «Մամփրե արքան» պատմվածքի գրականագիտական վերլուծությունը նպաստում է երկի բովանդակությունը նոր խորքերով ներկայացնելուն: Գլխավոր հերոս Մամփրեի կերպարի միջոցով բացահայտվում է հասարակ սասունցու կողմից մաշտոցյան այբբուբենի գնահատման յուրօրինակ մի դիտանկյուն, որի շնորհիվ ընդգծվում է, որ ութսունամյա ծերունին հանդես է գալիս իբրև ստեղծագործական սուբյեկտի ֆիգուրայի արքետիպային պատկերացման դրսևորման, այս դեպքում ճշմարտասեր և արդարության համար պայքարող գրողի հոգեկերտվածք ունեցողի մի ինքնատիպ տարբերակ:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Գալշոյան Մ.** *Չորի Միրոն*, Երևան, «Սովետական գրող», 1983, 382 էջ:
2. *Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ*, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ:
3. **Авасянянц О.** *Архетипы культуры в романе Б.Л.Пастернака «Доктор Живаго»*. Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук. Владикавказ, 2013, 167с.
4. **Большакова А.** *Имя и архетип: к постановке проблемы*. // Вестник УлГТУ. 2012, N 1. 48-55 сс.

References

1. **Galshtoyan, M.** *Miro of the Canyon [Dzori Miron]*, Yerevan, "Soviet writer" Publ. House, 1983, 382 p. (in Armenian)
2. *Current Issues in Literary Teory[Grakanutyanyan tesutyany ardi khndirner: Usumnakan dzerrnark]*, Yerevan, YU Publ. House, 2016, 330 p.. (in Armenian)

3. **Avasapyants, O.** Archetypes of Culture in B.L.Pasternaks Nowel “Doktor Zhiwago” {*Arkhetipy kul'tury v romane B.L. Pasternaka "Doktor Zhivago."* Disertatsiya na soiskanie uchenoy stepeni kandidata *filologicheskikh nauk*}. Vladikavkaz, 2013, 167 p. (in Russian)
4. **Bol'shakova, A.** Name and Archetype: Towards the Formulation of Problem [*Imya i arkhetip: k postanovke problemy*]. // Vestnik ULGTU. 2012, N 1, 48-55 pp. (in Russian)

Ընդունվել է / Received on: **16. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **19. 10. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակների մասին

Գագիկ Վահեի ԽԱՉԻԿՅԱՆ՝ բան. գիտ. դոկտոր, ԾՊՀ-ի
հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ gagikkhachikyan@gmail.com / ORCID.Id/0009-0008-8797-7442

Gagik Vahe KHACHIKYAN: Doctor of Philological Sciences,
Professor at the Chair of Armenian Language and Literature, SUSH, Gyumri, RA.
e-mail: gagikkhachikyan@gmail.com / ORCID.Id/0009-0008-8797-7442

Արեգնազ Վահրիճի ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ՝ ԾՊՀ-ում «Նորագույն
շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ հայցորդ, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ aregnaz.manukyan.1997@mail.ru / ORCID.Id/0009-0002-5102-4718

Aregnaz Vahrich MELIKSETYAN: Post-graduate student by the Specialty "Modern
Armenian Literature" at SUSH, Gyumri, RA.
e-mail: aregnaz.manukyan.1997@mail.ru / ORCID.Id/0009-0002-5102-4718

ՀԱՄԱՐԱՐԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ԲՆՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ «ՄՇԵՑԻ ԱՌԱՔԵԼԸ ԵՎ
ՈՒՐԻՇՆԵՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Գայանե Հ. Ավետիսյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Անվտիում

Նախաբան. Հեղինակն անդրադարձել է Գ. Մահարու կյանքի շուրջ տասնյոթ տարի տևած մի հատվածին, գրողի, որի անվան և գործի շուրջ այսօր էլ շարունակվում են գրական բանավեճերն ու քննարկումները: Դժվարին կյանք էր վիճակված նրան՝ որբություն, որբանոցից որբանոց, կրկնակի աքսոր, հրատարակչական դժվարություններ և մշտական հալածանքներ: Այս ամենով հանդերձ՝ նա կարողացել է դժվարին պայմաններում անգամ ստեղծել հոգևոր հարուստ արժեքներ պարունակող գեղարվեստական ինքնատիպ գործեր: Մեթոդներ և նյութեր. Հետազոտության ընթացքում կիրառել ենք նկարագրության, վերլուծության և համադրության մեթոդներ: Քննության ենք առել Գ. Մահարու «Մշեցի Առաքելը և ուրշները» պատմվածքի գեղարվեստական առանձնահատկությունները, որի շրջանակներում փորձել ենք ներկայացնել **սիբիրյան տաժանակրության, աքսորի տարիների պատկերները: Վերլուծություն**. Գրողն առաջին անգամ փորձում էր մտնել արգելված գոտի՝ բանտ, բարաք, ճամբար, մենախուց, ներկայացնել անվանի և շարքային մարդկանց, տարբեր ազգերի քրեականների, որոնք չէին կորցրել իրենց բարոյական կերպարը: Վավերագրական-փաստագրական այս պատմվածքը պատկերում էր խորհրդային իշխանության տարիներին բռնադատվածների հալածական կյանքը սիբիրյան հեռավոր ճամբարներում: Ինքնակենսագրական հիմք ունեցող «Մշեցի Առաքելը և ուրշները» պատմվածքը «Միբիրյան պատմվածքներ» շարքից է, որի հերոսները մատնվել են բախտի քմահաճույքին Սիբիրի հեռավոր տայգաներում: **Հեղինակը շարքի այս և մյուս ստեղծագործություններում ցույց է տալիս տաժանակրության անմարդկային պայմանները, անմեղ դատապարտված բանտարկյալների ամենօրյա ջանքը իրենց մարդկային նկարագիրը չկորցնելու համար:**

Արդյունքներ. Քննարկվող թեման արդիական և հետաքրքիր է, քանի որ այն վավերագրական-ինքնակենսագրական հիմք ունեցող ստեղծագործություն է, որը վեր է հանում խորհրդային տարիների բռնադատության, ճամբարային կյանքի և մարդկային արժանապատվության պահպանման խնդիրները, իսկ առաջադիր խնդիրը՝ մանկավարժական մտքի արդի պահանջների համապատկերում դրանք ընթերցողներին ներկայացնելը: Սույն հոդվածի նպատակը Գ. Մահարու պատկերաստեղծման և գրական նոր կերպարների յուրահատկությունների, գաղափարական և գեղարվեստական շերտերի բացահայտումն է՝ ճամբարային կյանքի իրողությունների համատեքստում: Ուսումնասիրվում են պատմվածքում կերտված կերպարների բարոյահոգեբանական վերափոխումները, բռնաճնշումների պայմաններում մարդկային արժեքների պահպանման հնարավորությունները:

Բանալի բառեր՝ բռնադատված, հալածանք, համակենտրոնացման ճամբար, մարդկային նկարագրեր, ճակատագիր, հիշողություն, վերափոխություն:

Ինչպես հղել՝ Ավետիսյան Գ. Միբիդյան տարիների նկարագրությունը Գուրգեն Մահարու «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքում.//ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025: Հ. 2(28): 259-267 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-259

REFLECTION OF THE CHARACTERISTICS TYPICAL OF CAMP LIFE IN GURGEN MAHARI'S STORY “ARAKEL FROM MUSH AND OTHERS”

Gayane H. Avetisyan

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

Abstract

Introduction: This article addresses a significant and challenging period in the life of the distinguished and respected writer Gurgun Mahari, which lasted about seventeen years. Mahari remains a subject of ongoing literary debate and discussion. The writer endured a difficult life marked by orphanhood: from one orphanage to another, repeated exile, publication difficulties, and constant persecution. Despite all these hardships, he was able to create artistically unique works containing profound spiritual values, even in the harshest conditions. *Methods and Materials:* In this research we have applied methods of description, analysis and comparison. We examined the literary features of Gurgun Mahari's story “Arakel from Mush and Others,” focusing particularly on the portrayal of the Siberian penal years and exile. *Analysis:* For the first time, the writer attempted to enter a forbidden zone — prison, barracks, camp, solitary confinement — and depicted both renowned and ordinary people, criminals of various nationalities who had not lost their moral character. This documentary-literary story reflects the persecuted lives of the repressed during the Soviet era in distant Siberian camps. The semi-autobiographical “Arakel from Mush and Others” belongs to the “Siberian Stories” series, whose protagonists were left to the whims of fate in the remote Siberian taiga. In this and other works in the series, the author portrays the inhuman conditions of forced labor and the daily struggle of unjustly convicted prisoners to retain their human dignity. *Results:* The topic under discussion is both relevant and interesting, as it concerns a work based on documentary and autobiographical foundations that brings to light the issues of repression

during the Soviet era, camp life, and the preservation of human dignity. The primary objective is to present these themes to readers in the context of contemporary pedagogical thought and its current demands.

The aim of this article is to reveal the features of Guren Mahari's imagery and the uniqueness of his new literary characters, as well as to explore the ideological and artistic layers of the work within the context of camp life realities. The study examines the moral and psychological transformations of the characters depicted in the story and the possibilities for preserving human values under conditions of repression.

Key words: *Repressed, persecution, concentration camp, human character, destiny, memory, transformation.*

Citation: Avetisyan G. *Reflection of the Characteristics Typical of Camp Life in Guren Mahari's Story "Arakel from Mush and Others" // "Scientific Works" of the Shirak Center for Armenological Studies of NAS RA, Gyumri, 2025, Vol. 2(28), 259-267 pp..*
DOI:10.52971/18294316-2025.28.2-259

ՆԱԽԱԲԱՆ. Գ.Մահարին իրապաշտական գույներով է ներկայացնում սիբիրյան բանտերն ու ճամբարները, բարաքներն ու մենախցերը, աքսորավայրերն իրենց անվանի ու շարքային մարդկանցով, քրեականներին, ովքեր օր ու արև չեն տալիս մյուսներին: Հեռավոր Սիբիրում «Ազատ աքսորում» մնալով՝ Գ. Մահարին չկորցրեց գրելու կարողությունը և հումորի նուրբ զգացողությունը: Այդ ամենի արտահայտությունն են այդ տարիների Վաղարշակ Նորենցին, Աշոտ Սանամյանին, Վահրամ Ալազանին, մյուս հարազատներին և օգնողներին գրած նամակները, որոնք ի մի են բերվել «Սիբիրական»-ում [6, էջ23]: Ի դեպ, նշենք, որ Աշոտ Սանամյանը նույն Աշոտ դային է, ում հանդիպում ենք «Մշեցի Առաքելը և ուրիշները», «Սև մարդը», «Հայկական բրիգադ» պատմվածքներում, «Ծաղկած փշալարեր» վիպերգում, ուրիշ գործերում ևս:

Տաժանակրության տարիների արտացոլումն են «Ծաղկած փշալարեր» (1965) վիպակը, «Սև մարդը» (1960), «Հայկական բրիգադ» (1964), «Գիշեր» (1964), «Մշեցի Առաքելը և ուրիշները» (1965) պատմվածքները: Միայն Ստալինի մահից հետո ավարտվեց գրողի սիբիրյան փշոտ ճանապարհը: 1965թ. միայն նրան հնարավորություն ընձեռվեց գրելու սիբիրյան վիպերգությունը, որի մեջ առանձնանում է «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքը: Առաջին անգամ տպագրվել է 1967թ. Բեյրութում: Այս ստեղծագործությունը ներկայացնում է տաժանակրության դատապարտվածների տառապալի գոյությունը, իրավագուրկ բռնատատվածների «շեքսպիրյան ողբերգությունը», մարդու ամենօրյա, ամեն պահի ստորացումն ու ոչնչացումը: Ճամբարային դժոխքի մասին գրողի նկարագրություններում հայտնվել են անմեղ, հանիրավի պատժված մարդիկ: Մասնավորապես՝ Աղաջանյանը, անդրադառնալով թեմային, նշում է, որ յուրաքանչյուր հերոսի ճակատագիրը, տաժանակրության կյանքի ամեն մի դրվագը մի ողբերգություն է [3, էջ 82]: Մահարին այս և շարքի մյուս պատմվածքներում ևս վավերական պատմող է, նրա կերտած կերպարներն ունեն իրենց նախակերպարները: Համակենտրոնացման ճամբարում միայն աքսորականներն են և նրանց վերահսկիչները: Մահարին ամենայն մանրամասնությամբ նկարագրում է դեպքերն ու դեմքերը, ինչի արդյունքը կենդանի միջավայրն է՝ կա տարածություն, կա օդ ու շնչառություն, և կան մարդիկ՝ իրենց ճակատագրի դատապարտվածությամբ[6, էջ 342]:

Գ. Մահարու և՛ պատմվածքները, և՛ վեպերն ու վիպակները մի ամբողջ կենսապատում-ինքնապատում են՝ ձուլված ժամանակի պատմությանը: Աքսորականներն իրենց Սիբիրում գտնվելը արդարացնում էին այսպես. «Սիբիրը մեղավոր չէ, որ բոլոր ժամանակների բռնակալներն ամեն տեսակ հանցագործներին և ոչ հանցագործներին զենքի ու ծով քշել են այս տայգաները, ցրտի ու քաղցի բերանը: Եթե մերկ ես, պիտի մրսես, եթե չես սնվում, պիտի քաղցես, ուր էլ որ լինես. Սիբիրը չէ մեղավորը...» [8, էջ 19]:

Գրողի աքսորի տարիները ներկայացնող պատումներում նկարագրությունները համահունչ են հերոսների ապրումներին, արտացոլում են նրանց հուզերն ու ապրումները հայրենիքից և ընտանիքից կտրված անձանոթ միջավայրում: Դժվարին պայմաններում անգամ մարդիկ չեն կորցնում ապրելու բերկրանքը, հոգու կորուվը և ուժ են գտնում մխիթարելու իրենք իրենց. «Լավ, ծուռ նստենք, շիտակ խոսենք, ինձի էլ ի՞նչ պիտի անեն: Տաս տարիս տասնհինգ պիտի անեն... Է՛, թող անեն...» [8, էջ 240]:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն. Գ. Մահարու «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքը բացահայտում է աքսորի ծանր իրականությունը, որտեղ մարդու ճակատագիրը դառնում է հոգեբանական և բարոյական դիմակայության դաշտ: Աքսորը ոչ միայն ֆիզիկական հեռացում է հայրենիքից, այլև ներքին պայքար՝ մարդ մնալու, մարդկային արժեքները պահպանելու: Մշեցի Առաքելը մյուս աքսորականներից տարբերվում է իր պարզությամբ, անկեղծությամբ և բարության: Դժվարին պահերին անգամ չի կորցնում հումորի նուրբ զգացողությունը. «Մեր մեծ հայրը չի թողնի, որ մենք սիբիրներում կորենք գնանք... և մի օր կարժանանանք իրար տեսության» [8, էջ 216]:

Անդրադառնալով սիբիրյան թեմատիկային՝ Ս. Բողոսյանը նշում է. «Մահարու արձակը ոչ միայն հուշագրություն է կամ փաստագրություն, այլև բարոյական ուսուցման բարձր արվեստ. նա ճշգրտությամբ և գեղարվեստական դիպուկությամբ կարողացել է վերապրող հոգու մաքրման ճանապարհը ցույց տալ, այն վերափոխումը, որին ենթարկվում է անհատը՝ անգամ ճնշման պայմաններում» [5, էջ 129]:

Այս առումով ուշագրավ է նաև Լ. Հախվերդյանի այն դիտարկումը, թե. «Մահարու արձակում դաժան իրականությունը երբեք չի վերածվում մերկ փաստի շարադրանքի: Նրա տեքստերում անգամ ամենածանր ապրումների ու ցավի մեջ ներկա է ներքին լուսավորումը, վերապրումի հույսը, մարդուն՝ որպես արժեքի, պաշտպանությունը» [7, էջ 45]:

Իսկ ովքե՞ր են «ուրիշները»: Նրանք մարդիկ են, ովքեր կորցրել են իրենց հավատը, դարձել են սառն ու հեզնական, անտարբեր մարդկային ճակատագրերի հանդեպ: Նրանք չեն հասկանում մշեցի Առաքելի պարզ ու մարդկային լեզուն: Բարաքի բնակիչները երբեմն ծաղրում են, չեն ընդունում նրան: Անգամ այս պայմաններում նա մնում է իր գաղափարների կրողը. «... Խշտիկի վրա նստի, երկիր կը կառավարե. խշտիկի վրա նստե՛լ կլինի, օդու՛լ... շատ էլ... որ Անդրանիկի մոտ ծառայեր եմ, շատ էլ, որ ըսեր եմ Վանն ու Մուշ հայերին է եղե...» [8, էջ 219]:

«Ուրիշները» շարքում էր նաև կալանավոր Իվան Պետրովիչ Բրյուխովը. «... Ոչ մի տեղ չի աշխատում, ապրում է կուշտ կյանքով... Թեև նրա աչքը չի տեսնում, բայց կան պնդողներ, որ նա իր ծոծրակին անգամ աչք ունի, աչք, որը ոչ ոք չի տեսնում, բայց որն

ամեն ինչ տեսնում է ...»[8, էջ 223]: Կամ՝ Եֆրեմին Ալեքսանդր Վլադիմիրովիչը՝ մոսկովյան պրոֆեսորը, ով հիմա տեխերիզացիայում է, ցախավել է կապում [8, էջ 224]:

Բանասարկությունների, երկչոտների, հարյուր գրամ սև հաց ավելի ստանալու համար իրենց ընկերոջը բրյուխովներին ծախելու միշտ պատրաստ թաբունի մեջ է ազգությամբ հայ Բեկլար Քալանթարովը. «Հաստ ապակիներ է կրում Բեկլար Քալանթարովը, կապույտ աչքեր ունի և աշխարհին ու մարդկանց նայում է կկոցած դժգոհ աչքերով: Նրա դեմքը սպիտակ է, անգամ բաց վարդագույն, կարճ կտրած մազերը շեկ են» [8, էջ 227]: Նա նախկինում եղել է Բերիայի հատուկ հանձնարարություններ կատարողը. պարտականությունը եղել է Խանջյանի տակ փորելը: Կալանթարովը նա դարձյալ նույն գործին է:

Թեև պատմվածքի գլխավոր հերոսը մշեցի Առաքելն է, բայց գործողությունների կենտրոնում Աշոտ դային է, որը Մահարու բնորոշմամբ ամեն ինչ գիտե. «Հիսունից անց է Աշոտ դային, խիտ մազերն ալեխառն են, սև հոնքերի տակից նայում են մի քիչ թախծոտ, մի քիչ ժպտուն աչքերը» [8, էջ 250]: Նրան տեսնում ենք ոչ միայն այս պատմվածքում, այլև «Միբիրական» շարքի մյուս պատմվածքներում և «Ծաղկած փշալարեր» վիպակում: Նա իր շուրջն է համախմբել աքսորական հայերի և բրուտանոցի միջոցով փորձում է նրանց փրկել փորձություններից և սիբիրյան տաժանակրությունից: Առաջին իսկ հանդիպման ժամանակ մշեցի Առաքելը Աշոտ դայուն պատմում է իր որդիների, հայրենիքի, Անդրանիկի զինվորը լինելու մասին: Աշոտ դայու զայրուքին ժպտով պատասխանում է. - Դուրսը պիտի վախճանի, լեզուս ինձի քաշեի, հիմա, որ ընկեր եմ, ինչի՞ց պիտի վախճամ: Տաս տարի են տվե, ապա ինչի՞ են տվե... [8, էջ 221]:

Վերջին էտապով Չիտայից եկած մշեցի Առաքել Ութուճյանը նշանակված է հինգերորդ բարաքի օրապահ. «Դննալնի եմ... հաստակը լվալ, մաքրել, թափել... իշտե՛... իմ հերն ու մերը ինձ աշխարհ բերին, որ գամ էս սիբիրներ դննալնի դառնամ... երթանք, երթանք, դուրս նստենք, քիչըմ ժղենք» [5, էջ 217]: Կալանթարովն է, որովհետև խոսքի մեջ ասել է, որ վեց ամիս եղել է Անդրանիկի զինվորը: Հիմա հեղինակի մոտ զարմանում է, որ Անդրանիկին գովելու համար իրեն բռնել են ու աքսորել:

Նա աչքի է ընկնում «իր պարզ նկարագրով ու Մուշի բարբառով, կիսատ-պոստոսերենով, նրա արմատները հեռավոր Մուշից էին. «Կարճահասակ էր, նեղ ճակատով, նեղ աչքերով, մի քիչ չեչոտ, Նապոլեոնի քրի նման կեռ քթով, մոտ վաթսու տարեկան, դանդաղաշարժ...» [8, էջ 214]:

Առաջին իսկ ծանոթությունից հետո Առաքելը հեղինակին խնդրում է իր համար նամակ գրել կնոջը՝ Անթառամին. «Անթառամ ջան, իմ մասին մի մտածեք... Թող աստված անպակաս անի մեր մեծ հոր օրն ու արևը: Ես շատ լավ եմ, մենակ կակուղ հացից զահլաս գնացել է, մի երկու կիլո չոր սուխարի ուղարկի, ջրով կակղցում, ուտեմ: Թե ուժդ կպատի՛ շաքար, սխտոր, մի խոսքով, տես...» [8, էջ 214]:

Մշեցի Առաքելը ամեն տեղ իր հայրենասիրական ճառերն է ասում ու փորձում իր ասածն հիմնավորել. «Աշխարհ գիտի, որ Անդրանիկ հերոս էր, աշխարհին հայտնի է, որ Ղարս, Արդահան Հայաստանի քաղաքներն են եղել, թուրքերն եկան զավթին ժողովրդին էլ մորթին, քշին...» [8, էջ 218]:

Այս ընթացքում Բեկլար Քալանթարովը, որի հետ հասցրել էր ծանոթանալ ու զրուցել Առաքելը, իր սև գործն է անում: Նրա հերթական գոհը մշեցի Առաքելն է: Նա պետիկ է ներկայացնում Առաքելի հայացքները և կապը Անդրանիկի հետ. «...Որ Անդրանիկ հերոս էր, աշխարհին հայտնի է, որ Ղարս, Արդահան Հայաստանի քաղաքներն են եղել, թուրքերն էկան զավթին, ժողովրդին էլ մորթին, քշին...» [8, էջ 218]: Բեկլար Քալանթարի զեկուցումով Առաքելը ձևակերպվում է ազիտատոր, հակահեղափոխական մտքերի քարոզիչ: Զրկվում է Առաքելը տաքուկ աշխատանքից և տեղափոխվում է պահեստային բրիգադ:

Պատմվածքում հեղինակը ակամայից հիշում է վերափոխված Սանասարին, ում հանդիպում ենք «Սև մարդը» ստեղծագործության մեջ: Նա կամավոր էտապ է գրվում և մեկնում բևեռային Դուդինկա. «Չեմ կարող, դայի, ամեն տեղ աչքիս Լյայլան է, ուժ չունեմ... զնամ հեռու տեղ, գուցե մոռանամ. -մեկնելուց առաջ ասել էր Աշոտ դայուն...» [8, էջ 220]:

Պատմվածքում հպանցիկ խոսում է աբասթումանցի Մամոյի և Լյուդմիլա Շարթի մասին՝ խոստանալով հետո առավել հանգամանորեն ներկայացնել բրուտանոցն ու նրանց պատմությունը. -Ու՞ր են մտքերդ աբեղա, ... Այս վերջին տիտղոսը ես ստացա երկու շաբաթ առաջ, կալանավորուհի Լյուդմիլա Շարթի կապակցությամբ: Նա հայտնվեց բրուտանոցում, որպես... բայց այս մասին մի ուրիշ անգամ...» [8, էջ 219]:

«Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքը որոշ պոմեոտային գծերով և կերպարներով նման է «Ծաղկած փշալարեր» ինքնակենսագրական վիպերգին, որտեղ **ամբողջական ներկայացվում են ճամբարային կյանքի պատկերները**: Այդպիսի պայմաններում մարդիկ չեն կորցնում իրենց դեմքը, պահպանում են քնքուշ զգացմունքները, սիրած կնոջ համար իրենց զրկելու ընդունակությունը: Մարդկային հոգիները իրենց ջերմությամբ կարող են անգամ փշալարերը կենդանացնել. «Ես գիտեի, որ սերը փոքրատառ մարդուն դարձնում է մեծատառ. բայց այսքա՞ն մեծատառ: Ճի՛շտ, ճի՛շտ, ես այդ չէի սպասում» [8, էջ 415]:

Ճամբարականները խորհրդային բազմազգ պետության տարբեր ներկայացուցիչներ են (կարգադրիչ Սիդորով, պահեստապետ Կաց, հիվանդանոցի տնտեսվար Մավրին, Մերպերտ, Մեսրոպ Ուզունյան և ուրիշներ), որոնց մեջ է նաև ազգությամբ հայ Վահան Ոսկանյանը. «Բարձրահասակ, թիկնեղ, թուխ, մոտ քառասուն տարեկան մի անձնավորություն էր, երկար ձեռներով և ոտներով, թավ հոնքերի տակից նայող, զննող և այնուամենայնիվ չհավատացող աչքերով» [8, էջ 225]:

Իր աշխատանքի բերումով հաճախ էր լինում մյուս ճամբարային կետերում և երեկոները զալիս էր ու Աշոտ դայուն պատմում զանազան կարևոր և անկարևոր նորություններ:

Պատմվածքում Մահարին ներկայացնում է քրեականների, որոնք ունեն իրենց օրենքները, հատուկ լեզուն և վարքագիծը: Նրանց կերպարը ներկայացված է որպես աքսորական միջավայրի յուրահատուկ ու վտանգավոր մի շերտ: Քրեականները ձևավորել են փակ մի աշխարհ, որտեղ իշխում է ուժի և վախի օրենքը: Նրանք հասարակության այն հատվածն են, որ չունի բարոյական արժեքներ: Մահարին նրանց ներկայացնում է որպես հոգեպես կոտորված ու խեղված էակներ, որոնք իրենց տեսակը ձևավորել են հալածանքների, կյանքի դաժան պայմանների արդյունքում:

Քրեականներին ու քաղաքականներին տանում են ճամբարից հեռու՝ մահացած ճամբարականների համար գերեզման փորելու: Իր քաղաքական դիրքորոշման համար որպես պատժված՝ այս խմբի մեջ է նաև Առաքելը և գրող-հեղինակը: Քրեականները ոչինչ չեն անում: Սիրիայան ցրտաշունչ ձմեռ է: Նրանք, վերահսկիչից չվախենալով, վառում են երկու ձիասայլերի տախտակները և տաքանում: Սրանք սանձարձակ են և անպատժելի: Երգում են, թոչկոտում և իրենց պահվածքով խանգարում Առաքելին և մյուսներին, որպեսզի արագ փորեն գերեզմանը: Առաքելը մրսում է, հիվանդանում, օրեր անց մահանում: Առաքելը տիպիկ մշեցի է, ով անգամ ամենածանր իրավիճակներում չի կորցնում համարձակությունը՝ բարձրաձայնելու իր արդարացի լինելը. «*Գնա՛ք ու վասականոց... գնա ըսե՛ք տուռաթըսզ նաչալնիկին ... ալվազակ, մարդասպաններ, պատիվ ունեն, անմեղ մարդ՝ ոտի տակ կերթա... Անդրանիկի անվան լե մեռնիմ, Մշու դաշտի սառ ջրերին լե... գնա ասա քո... ծո՛, Մու՛շ լե Հայաստան է, Վա՛ն լե, Երզրու՛մ լե... Ես չեմ տեսնի, զիմ թոռ կտեսնի, զիմ թոռ չի տեսնի՝ զիմ թոռան թոռ կտեսնի...*» [8, էջ 240]:

Գրականագետ Դ. Գասպարյանը նկատում է, որ պատմվածքում առկա են լեզվական արտահայտության տարբեր շերտեր՝ մաքրախոսությունից մինչև գունեղ բարբառախոսություն, բաց ու համարձակ սրախոսություն. «*Բառի թրթիռը, որ անմիջապես հոգու արձագանքն է, դառնում է զգացմունքներով խորապես ներծծված խոսք*» [6, էջ 338]:

Այսպես՝ «...*Է՛՛՛՛, լառ, Վանն ուր, Միբիրն ու՛ր...*» [8, էջ 217]:

«...*Ի՛նչ մի պատվավոր բան է յարալու ժողովրդի՝ վրա թագավորելը...*» [8, էջ 219]:

Աշոտ դայու այն հարցին, թե ում հետ է ընկերություն անում, Առաքելը պատասխանում է. «...*ո՛վ կա, որ ընկերություն անեմ... մեկ-մեկ Բեկլար կուգա, կնստի, սարից-ձորից կժղկենք...*» [8, էջ 222]:

Ի հավելումն ասվածի՝ հետաքրքիր է նաև Գր. Աճեմյանի հետևյալ դիտարկումը. «Ճամբարային գրականությունը ոչ միայն ֆիզիկական տառապանքի վկայությունն է, այլ հոգևոր գոյատևման անժխտելի փաստաթուղթ: Այնտեղ, որտեղ մարդու կյանքը չունի գին, նրա արժանապատվության պահպանումը դառնում է ներքին հաղթանակ» [4, էջ 87]:

Հեղինակային սովորական նկարագրությունները, որոնք պայմանավորված են լեզվառձական առանձնահատկություններով, ներքին ինչ-որ լարում, անհանգստություն են ստեղծում՝ ապահովելով զգացմունքի և համատարած թախժի առկայությունը. «*Միբիրի վրա Երմակը թափ է տալիս իր ձերմակ վերմակը, և տայգաներում բզզացող միլիոնավոր, անթիվ անհամար մժեղներն ասես երկինք են համբառնում ու սպիտակած, համբացած իջնում են աշխարհի ու ճամբարի վրա ...*» [8, էջ 228]:

Մշեցի Առաքելի խոսքում հաճախ հանդիպում ենք **ժողովրդական ասացվածքների**, ինչպես. «*Երեք տարվա մեջ մի անգամ պիտի աղոթեինք, այն էլ սատանան չթողեց*» [8, էջ 231], **հումորային արտահայտությունների**: Պարզ ու կենսական լեզու, ինչը ոչ միայն ընդգծում է նրա Մշո արմատները, այլև պատմվածքին հաղորդում է **ավանդական, ազգային շունչ**. «...*Առաքելը Մշո դաշտի բոլոր առաջավոր հայեցողներով զինված, մի կողմ՝ շարտեց պետական բաշլուղը և ապավինած իր հնամաշ շինելին, սկսեց աշխատել մերթ-ընդմերթ խաչակնքելով. երևի այդ մշեցի գերեզմանափորների սովորությունն է եղել:*

Մակայն ազգագրագետ լինելու կարիք չկար՝ գուշակելու, որ Առաքելի հայիտյանքները չէին մտնում գերեզմանափորների ավանդություններում...» [8, էջ 233]:

Ե՛վ «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքում, և՛ «Ծաղկած փշալարեր» վիպակում նկատում ենք, որ հալածանքների, անվերջ նվաստացումների մեջ անգամ մարդկային արժեքները պահպանելու ուժն է, և այդ ճանապարհով արդարության որոնումն է հերոսներին ուժ տալիս դիմանալու. «...Հիվանդ արդարության կենացը իմենք, ծանր է նրա դրությունը, բայց նա չի մեռնի: Երբ հիվանդ է արդարությունը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկերեսանի, չար, եսամոլ, ստորաքարշ...» [8, էջ 326]:

Ա. Պապոյանն իր «Ծաղկած փշալարերի հայ արձակը» ուսումնասիրության մեջ խորությամբ անդրադառնում է բռնադատվածների ու ճնշման զոհ դարձած մարդկանց թեմատիկային, որը հնչում է որպես ազգային հիշողություն: Հենց այսպիսի միջավայրում են ծնվում մտորումներ մարդկային անարդարության և տարբեր հոգեվիճակների մասին. «Մահարու հերոսների գոյությունն այդ անսահման սպիտակության մեջ միաժամանակ տարրալուծվում է: Սիբիրը նրանց համար միայն տեղանք չէ, այլ ժամանակից ու ազգությունից վեր մի տարածություն, ուր ամեն բառ պիտի կշռվի, ամեն լռություն պիտի հնչի» [9, էջ 45]:

Պատմվածքն ունի խորհրդանշական ավարտ: Մահացած Առաքելի մոտից գտնվում է թրծված, ամուր, շեկ մի սալ, փորված ծուռումուռ, անծանոթ տառերով. «ԱՌԱՔԵԼ ՈՒԹՈՒՃՅԱՆ ՄՇԵՅԻ//զինվոր գորավար Անդրանիկի//ես չտեսա, իմ թոռները կտեսնեն» [5, էջ 244]: Սա հայի տեսակի, անկոտրում կամքի, հայ մարդուն՝ մշեցուն բնորոշ իր արմատներով, բնիկ ու տեղացի լինելը, բոլորին ի ցույց դնելու խորհուրդն է ու պատգամը գալիք սերունդներին:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Գ ՈՒ Մ. Պատմվածքի ուսումնասիրությունը մեկ անգամ ևս ընդգծում է ստալինյան բռնապետության տարիներին բնորոշ իրականությունը, թաքնված հույզերից ու զգացողություններից ծնված մարդկային ողբերգությունն ու համատարած տխրությունը: Դա պատմություն է մարդկային ուժեղ բնավորությունների ու դժբախտ աքսորականների կյանքում մեծ դերակատարություն ունեցող անհատների մասին:

Պատմվածքում հատուկ ուշադրության են արժանի գեղարվեստական պատկերավորման առանձնահատկությունները:

«Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքում կերտված են մարդկային ուժեղ բնավորություններ՝ օժտված հուզականությամբ, մարդկային ողբերգություններից ծնված տխուր հիշողություններով, համատարած թախծի մեջ անգամ ծիծաղելու, կատակելու կարողությամբ: Սա վկայում է ուժեղ, արդարախոս, համառ, տոկուն կամքի տեր մարդկային ողբերգական ճակատագրերի մասին, ովքեր տաժանակրության մեջ անգամ համարձակորեն բարձրաձայնում են կորուսյալ հայրենիքի, հայրենանվեր հերոսների մասին, թեկուզև փոխհատուցում են կյանքով:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Աղաբաբյան Ս. Գուրգեն Մահարի: Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1959: 150 էջ:
2. Աղաբեկյան Կ. Գուրգեն Մահարի: Երևան: ԵՀ հր.: 1975: 270 էջ:
3. Աղաջանյան Ս. Գուրգեն Մահարու արձակի պոետիկան: Երևան: ԵՀ հրատ.: 2011: 304 էջ:
4. Աճեմյան Գ. Գուրգի և աքսորի կեռնաններով: /Մահարի Գ.: Երկերի լիակատար ժողովածու 15 հատորով: Հ. 8, Երևան: 2016: 560 էջ:
5. Բոդոսյան Ս. Գուրգեն Մահարի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1981: 225 էջ:
6. Գասպարյան Դ. Գուրգեն Մահարի: Երևան: Զանգակ: 2013: 446 էջ:
7. Հախվերդյան Լ. Գուրգեն Մահարու արձակի նոր գիրքը: Երևան: Սովետական գրականություն հրատ.: 1963: 120 էջ:
8. Մահարի Գ. Սիրիական: Երևան: ԵՀ հրատ.: 2009: 842 էջ:
9. Պապոյան Ա. Ծաղկած փշալարերի հայ արձակը: Երևան: Մանկավարժ հրատ.: 1999: N3: 160 էջ:

R e f e r e n c e s

1. Aghababyan, S. Gurgen Mahari [*Gurgen Mahari*]. Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1959. 150 p. (in Armenian)
2. Aghabekyan, K. Gurgen Mahari [*Gurgen Mahari*.] Yerevan: YU Publishing House, 1975. 270 s. (in Armenian)
3. Aghajanyan, S. The Poetics of Gurgen Mahari's Prose.[*Gurgen Maharu arcaki poetikan*] Yerevan: YU Publishing House, 2011. 304 p. (in Armenian)
4. Achemyan, G. With the Curvatures of the Gulag and Exile. // In: Mahari, G. Complete Collection of Works in 15 Volumes.[*Gulagi eu akhsori kermannerow*,] Vol. 8, Yerevan, 2016. 560 p. (in Armenian)
5. Bodosyan, S. Gurgen Mahari. [*Gurgen Mahari*]Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1981. 225 p. (in Armenian)
6. Gasparian, D. Gurgen Mahari. [*Gurgen Mahari*].Yerevan: Zangak publish., 2013. 446 p. (in Armenian)
7. Hakhverdyan, L. A New Book of Gurgen Mahari's Prose. [*Gurgen Maharu arcaki nor girkh@*]Yerevan: Soviet Literature publish., 1963. 120 p. (in Armenian)
8. Mahari, G. Siberian. [*Sibirakan*],Yerevan: YU Publishing, 2009. 842 p.. (in Armenian)
9. Papoyan, A. Armenian Prose of the Barbed Blossoms[*Tsakhkats phshalareri hay arcak@*]. Yerevan: Mankavarzh publish., 1999, No. 3. 160 p. (in Armenian)

Ընդունվել է / Received on: 20. 09. 2025

Գրախոսվել է / Reviewed on: 16. 11. 2025

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: 10. 12. 2025

Տեղեկություններ հեղինակի մասին

Գայանե Հովհաննեսի ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ մանկ. գիտ. թեկնածու,

ԾՊՀ-ի գրադարանի վարիչ, Գյումրի, ՀՀ,

Էլ. հասցե՝ gayaneavetisyan2@gmail.com / ORCID.org/0009-0003-0773-439X

Gayane Hovhannes AVETISYAN: PhD in Pedagogy,

Head of the Library of SUSH, Gyumri, RA,

e-mail: gayaneavetisyan2@gmail.com / ORCID.org/0009-0003-0773-439X

ԴԱՎԻԹ ՄՇԵՅՈՒ «ԱՅԼԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ»
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Նարինե Հ. Կարախանյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղ, ՀՀ

Ամփոփում:

Նախաբան. Մեր ուսումնասիրության առարկան ժամանակակից բանաստեղծ Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» (2020թ.) բանաստեղծական ժողովածուն է: Նպատակն է գիտականորեն արժևորել ժողովածուն՝ ի ցույց դնելով նրա արդիականությունը: Մեթոդներ և նյութեր. Հոդվածը գրելիս հիմնականում առաջնորդվել ենք վերլուծական արժեքանական և հերմենևտիկայի մեթոդներով: Ուշադրություն ենք դարձրել գրքում առկա խորհրդապատկերներին, հեղինակի ասելիքի արտահայտման ձևին: Վերլուծություն. «Այլա-գրություն» գրքում Մշեցին կողմնորոշվել (գաղտնագրել) է իր ասելիքը՝ գործածելով պատկերավորման ինքնատիպ եղանակներ ու միջոցներ, արտահայտելով իր քաղաքացիական դիրքորոշումը, սրտի խռովքն ու պոռթկումը: Արտասովոր վերնագրով գիրքը ենթադրում է այլ/ուրիշ գիր/գրություն, ինչը հեղինակը ներկայացրել է գեղարվեստական պատկերավորման ինքնատիպ ձևերով ու միջոցներով: «Այլա-գրություն» բանաստեղծական ժողովածուի մեջ հեղինակը գործածել է ինքնատիպ խորհրդապատկերներ: Հետաքրքրական են գունային խաղարկումները՝ կարմիր, դեղին, սև և այլն: Մշեցու պոետիկայում ծառայատկերումը ևս ինքնատիպ խորհուրդ ունի: Հայոց բազմադարյա մշակույթը ներկայացված է հաստատուն կաղնու օրինակով, որը պայքարում է հանուն թփերի: Բանաստեղծը հավատում է ճղատված ծառի ճյուղավորվելուն և պտղավորվելուն՝ արմատը ամուր պահելու դեպքում: Ազգին հասած պատուհասները ներկայացվել է ձմռան՝ մահվան խորհրդանշի միջոցով, որի հակադրությունը կյանքն է՝ հառնումը: Արդյունքներ. Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» վերնագրով ժողովածուն ձևի ու բովանդակության կուռ միասնություն է, և հեղինակը լավագույն ձևով կարողացել է իր ասելիքը հաղորդել ընթերցողին:

Բանալի բառեր՝ այլագրություն/այլագրում, ռեֆրեն, խորհրդապատկեր, ծառապատկեր-
ման խորհրդանիշ, զունային խորհրդապատկեր, նշանագիտական իմաստ, բանարվեստ:
Ինչպես հղել՝ Կարախանյան Ն. Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» բանաստեղծական
ժողովածուն. // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2025:
Հ. 2(28): 268-276 էջեր: DOI:10.52971/18294316-2025.28.2-268

COLLECTION OF POEMS BY DAVID MSHETSI “AYLA-GRUTYUN”

Narine H. Karakhanyan

National Polytechnic University of Armenia, Gyumri, RA

Abstract

Introduction: The subject of our study is the poetry collection “Ayla-grutyun” (“Alter-writing”) (2000) by a contemporary poet, Davit Mshetsi. The aim of the paper is to value the collection scientifically by highlighting its relevance. **Methods and materials:** We have been guided by the methods of analytical value-based analysis and hermeneutics. We paid attention to the symbolic imagery and the ways in which the author conveyed his message in the book. **Analysis:** In the book “Ayla-grutyun” (“Alter-writing”) Mshetsi encodes his message, using original imaging methods and techniques, expressing his civic position, emotional intensity, and the impulse of his heart. The book with the unusual title suggests a different kind of writing, which the author has presented through original methods and forms of artistic imagery. In the mentioned poetry we have used unique symbols. The colour combinations are of interest: red, yellow, black, etc. Mshetsi has skillfully used the poetics of colour. In Mshetsi's poetics, the depiction of trees also takes on a unique symbolic meaning. The centuries-old Armenian culture is represented by the example of a thick-trunked oak tree that fights for the sake of the bushes. The poet believes in the ability of a broken tree to branch out and bear fruit again if the roots are kept strong. The calamities that befell the nation are represented through the symbol of winter//death, the opposite of which is life//resurrection. **Results:** The collection is a solid unity of form and content, and the author has managed to convey his message to the readers in the most effective way.

Key words: *Alter-writing, referent, symbolic imagery, symbol of tree painting, colour symbolism, semiotic meaning, art of speech.*

Citation: Karakhanyan N. *Collection of Poems by David Mshetsi “Ayla-grutyun”* // “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2025, Vol. 2(28), 268-276 pp.. DOI:10.52971/18294316-2025.28.2-268

Ն Ա Խ Ա Ք Ա Ն. Ժամանակակից քննադատությունը Դավիթ Մշեցու ստեղծագործությանը դեռևս վերապահ մոտեցում է ցուցաբերում: Ըստ Սուրեն Աբրահամյանի՝ «Այլա-գրություն» գիրքը «...որոնումների ճանապարհի իսկական անակնկալն է» [1, էջ 717]:

Մշեցին խոստովանում է՝ ուզում է դառնալ հայ մարդու խղճի արթուն երակը կամ «արթնացնող ժամացույցը» [9, էջ 74], որի գլխին հաճախ են բամփում:

Մինչև խաչելը մեկընդմիջտ հիշեք.

....ես վաստակել եմ

Այլագրելու

Իմ իրավունքը... [5, էջ 14]

Հիմնական մաս: Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» գիրքը հաստատում է բանաստեղծի գրական հավատամքը՝ ուսումնասիրել նախորդներին՝ Չարենց, Ռիլկե, Եսենին, Էյլուար, Ցվետանա, պոստմոդերնիզմ, Հոմերոսից Թովմաս ու Սարոյան Գագիկ, այն է՝ անցյալի ամբողջ գրական ժառանգությունն ու ժամանակակից գրականությունը, բայց ստեղծել իր *ուրույն/այլ* բանաստեղծությունը, այս դեպքում՝ «Այլ-ագրությունը»:

Գրքում նկատելի են ոճական և գաղափարական նմանություններ Պարույր Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի հետ: Դավիթ Մշեցին ևս ստեղծում է իր «Եղիցի լույս»-ը՝ լույսի պաշտամունքը, սակայն «ընդունելով լույսի գերիշխանությունը՝ //այդուհանդերձ հեշտիվ տրվում ենք մթին» [5, էջ 17]: Ու շարունակվում է երկվությունը՝ կյանքի մարմնական վայելքի, հեթանոս էգի, նաև այգու չհավաքած մրգի, այն է՝ կեղծ բարեպաշտության ու պոետների մասին.

.... ասում են 21-րդ դարում պոետներ
չկան այլևս, ու եթե ուզում են լինել,
պիտի հաշվի առնեն, որ, մեղմ ասած,
կոռեկտ չէ լինել, ինչպես ժողովուրդն է ասում՝
անթրաշ-անպլաշ, թոքախտավոր ու բոմժ.
դե, եթե իրապես այդպես է,
որին ես, մեր մեջ ասած, համաձայն չեմ մասամբ,
ուրեմն թող տեղա ձյունը... [5, էջ 19]

«Թող տեղա ձյունը» արտահայտության կրկնությունը հանգեցնում է նրան, որ կյանքն ընդունի այնպես, ինչպես կա. «...թող եղև կյանքն ինչպես որ է...» [5, էջ 19]: Ո՛չ թախիծը, ինչի արձագանքն է «թող տեղա ձյունը» ռեֆրենը, ո՛չ էլ բողոքը իմաստ չունի. թող կյանքն ընթանա իր հունով: Իսկ կյանքը ստիպում է, որ ճշմարտությունը պարզապես ակնարկվի. «.... որովհետև հաճախ սարսափելին ոչ թե ուղիղ են ասում, //այլ ակնարկում են լոկ, //ինձ ոչինչ չի մնում, //քան երգելը մաշկով» («Եվ հիմա, երբ այլևս...») [5, էջ 21]:

Ապա մեղավոր սիրո երգից բանաստեղծը անցում է կատարում մեղավոր քաղաքի պատկերմանը, որ բացվել է պոռնկուհու ցոփությամբ: Ժամանակին Չարենցը Ստամբուլը («Ստամբուլ») կոչել էր «միջազգային պոռնիկ» [6, էջ 224]: Չկան «.... արևելքի գույները բոբբ, (արևելքը՝ ողջ տեղային իմաստով)», ոչ էլ արևմուտքը, քանզի «...թռչունները ոչ թե թռչում, այլ թաքտում են լոկ» («Ցավոք, այլևս ոչ կարդացած գրքերը...») [5, էջ 28]: Այնտեղ, ուր արգելված է թոհչքը, ամեն ինչ կորցնում է իր արժեքը: Իսկ դա վաղուց էին զգուշացրել հանճարները, սակայն «.... ոչ աչք եղավ, և ոչ ականջ» [5, էջ 29], և մերկ ու բացված, անամոթ քաղաքը հեգնում, ծաղրում է իր ցոփությամբ:

Ռիմա մայրիկին նվիրված բանաստեղծությանը («Ռազմուհու պես հպարտ՝ նա պառկած է հիմա...») հաջորդող «Եվ հիմա, երբ արդեն առաջնորդներ չկան» սկսվածքով բանաստեղծությունում ներկայացված են հեղինակի տազնապները՝ աշխարհաքաղաքական որոշումներ առանց մեզ, հիասթափություններ, փոքր պետությունների «անգորություն», ինչը, սակայն, Մշեցին ժխտում է. բազմիցս են փորձել ոչնչացնել մեզ, որ մեր նավերը հանգրվանեն «անտերության ծոցում» և կամ «անսերության խութում» [5, էջ 31]:

Բառը Մշեցու գրչի տակ նոր խորհուրդ, խորհրդանիշ ու նշանագիտական իմաստներ է ստանում: «Խորհրդանիշը.... գրողի հիշողության մեջ ընկնում է մշակույթի հիշողության խորքերից և կենդանություն է առնում նոր տեքստում, ինչպես նոր հերկի մեջ ընկած սերմնահատիկը» [11]: Ուշարժան է հիշյալ բանաստեղծության մեջ *ծառապատկերման խորհրդանիշը*.

.... մի հազարամյա, հաստաբուն կաղնի,
թեև ճղատված ու փտած մասամբ,
դեռ պայքարում է հանուն թփերի.... [5, էջ 31]

Հազարամյա հաստաբուն կաղնին հայոց հազարամյա մշակույթն է, հայոց ինքնությունը, որ վտանգված է, ինչի մասին ժամանակին նաև Չարենցն էր զգուշացրել.

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ գորավոր
Բացիլ էր՝ ոգու ցեց խոցե,
Որ այդքան հեշտ սղոցեց
Նաիրյան ոգին գորավոր....

Ինքնությունն հազարամյա.... [7, էջ 63]

«Մի արդարացված ֆիդայություն կա» բանաստեղծությունը ոգեղեն ու իրական արժեքները պահելու մասին է. «...հողի կորուստը հետքերելի է, //ոգունը՝ դժվար. //գուցե թե մի օր //Էրգիրը կրկին մերը կլինի» [5, էջ 60]: Հեղինակը սպասում է իր ազգի համախմբմանը, որը դարձյալ ներկայացնում է ծառի խորհրդապատկերով.

.... ճղատված ծառը կճյուղավորվի,
թե առողջ պահենք արմատը նրա.
դեռ ինչքա՛ն, ինչքա՛ն արյուն կխմի
համախմբումի ծառը մեր նվազ,
որ պտուղներ տա... [5, էջ 61]

Պատմության արհավիրքներին դիմակայած *հայոց ծառը//հազարամյա հաստաբուն կաղնին* մի կերպ դիմանում է դժվարություններին: Բանաստեղծը հավատում է մեր հոգևոր ընթացքին՝ «կաթացող լույսին», «խաղացող հույսին՝ քո մույթ աչքերում», «զավակի[ս]խաղին՝ քո ընդերքներում» [5, էջ 31]: Բայց դրա համար ոչ թե սոսկ երազել է պետք, այլ սթափ նայել իրականությանը. «.... պետք չէ արևներ շոշափել մթնում //և հակառակը...» [5, էջ 31]:

Ընդհանրապես, Մշեցու բանարվեստում գույնի գեղագիտությունը նշանագիտական և խորհրդաբանական հետաքրքիր լուծումներ է ստանում: Մշեցին հմտորեն օգտագործել է *գույնի պոետիկան*: Այսպես դեղինը ընկալվում է որպես *կուրացնող լույս* [5, էջ 31] *//ոսկի//արև//արևագալ*. «ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ» [4, էջ 86] և ոչ թե որպես արնաքամվող դիակ Վահագն (Եղ. Չարենց, «Վահագն»): Սակայն այն ավելի հաճախ ընկալվում է որպես մատնության ու դավաճանության գույն, ինչը, սկսած 12-13-րդ դարերից, քրիստոնեության մշակույթում իմաստային հստակ նշանակություն է ստացել: Հուդան հիմնականում պատկերված է դեղին շորերով [14]: Օրերը դեղին են («Օրերի մեջ բազմանում է ցավը»), «դեղին ձյունը», այն է՝ մատնությունը, դավաճանու-

թյունը, ժամանակավորապես քողարկում է «... ախտերը բոլոր, //իսկ մենք, մենք լավ գիտենք ուժը ձնհալի...» [5, էջ 31]:

«Մենք բոլորս նպաստեցինք դեղին ծխին...» բանաստեղծությունը գունային խորհրդապատկերների շղթա է: Դեղին ձյունը փոխարկվում է դեղին ծխի՝ մատնության ու դավաճանության, իսկ «...կարմիր ամպերը հերթապահում են, //որ էլ չհավի *ճերմակ* ապակու *կապույտ* փեշերին //մեր զավակը պիղծ...» [5, էջ 34]: Բանաստեղծության մեջ գույների նշանագիտական խորհուրդը գեղագիտական հետաքրքիր ենթաշերտեր է բացում: *Կարմիրը//արնագույնը* երկակի նշանակություն ունի: Կարմիրը արյան գույնն է, իսկ մարդուն արյունը փոխանցվել է իր Արարչից, կարմիրը միաժամանակ նաև մեղքի խորհրդանիշն է [10]: Կարմիր ամպերը *մայրամուտի/մահվան* տագնապն են գուժում: Կարծում ենք, որ բանաստեղծը նկատի ունի այն, որ մենք պղծել ենք մեր արարչական արյունը, այլապես մեր զավակը պիղծ չէր լինի: Իսկ *ճերմակն* ու *կապույտը* սրբության ու խաղաղության խորհրդանիշեր են: Այնուհանդերձ, բանաստեղծի տրամադրությունը փոխվում է մակալնթացության ու տեղատվության նման. նա մե՛կ բոցավառվում է, մե՛կ մարմնող պատրույգի հույսն է բերում, մե՛կ էլ դառնում է անհույս. «... կարմիր ամպերը կիռզեն մի օր անպտուղ խաղից» [5, էջ 34]:

Ինքնաճանաչման հասած բանաստեղծը գիտակցում է, որ մրցել ենք կրակի, քամու, օդի դեմ, մրցել ենք երևացող ու չերևացող ուժերի դեմ, դրանք ենթարկեցրել մեր կամքին. հիմա չենք հաշտվելու «մեր խավարմանը՝ մեր իսկ ամպերով...» [5, էջ 32]: *Սնի//խավարի* և *ճերմակի//ամպի* նշանագիտական իմաստն այն է, որ Կոսմոսը վերածվում է Քառսի, Լուսը՝ Խավարի, քանի որ.

Ցանկացած ազգի կործանման համար
իշխանությունը տուր ժողովրդին.
(արնագույն են դեմոկրատական
բոլոր նավերի առագաստները)... [5, էջ 36]

Հեղափոխությունը լափում է ամեն ինչ՝ հաղթանակ, արժեքներ: Այս դառը խոհերն են ներկայացված «Միայնակ գայլի շիրիմի մոտ» բանաստեղծությունում: Առանց մեր հաղթանակի գնահատության՝ մենք պարզապես մեր լեշն ենք քարշ տալիս, իսկ «... գիշանգոյի համար բացարձակ մեկ է //լեշը մարդո՞ւ է, թե՞ անտեր մի շան» [5, էջ 37]: Կեղծ ժողովրդավարության փոխարեն բանաստեղծը տեսնում է ժողովրդական տաղիկներ ու հեքիաթներ, ուզում է վերադառնալ *Տուն*, ինչպես Թումանյանը կասեր՝ «Թոչում է հոգիս, թոչում դեպի տուն» [3, էջ 82]: Տունը իրական արժեքների խորհրդանիշն է՝ ընտանիք, մայր, հայ գրականության գազաթներ, այն վայրը, «... ուր վառարանի ռոքի ներքո, //Թլկուրանցի ու Քուչակ էր կարդում //Մայրս, որ քնեմ»: Ու ծնում է բանաստեղծի *այլ/ուրույն* օքսիմորոնը. «...լեռներ կան, որոնց ստորոտները բարձր են ավելի, քան գազաթները...» («Հիմա, երբ ամենից շատ ցանկանում ես») [5, էջ 53]:

«Իմ մանկությունը» բանաստեղծության քնարական հերոսը հեղինակն է՝ պեպե-նոտ մի տղա, որ սինձ, ծաղիկ ու շուշան էր հավաքում, տիրապետում էր գենքերի լեզվին: Նրա համար մանկությունը տատի գոգնոցն էր, մոր թխած թեժաթուխ լավաշը, հոր աչքերի կարմիրը, որը տարին մի օր հիշում էր իրենց. «...զավակը թանկ էր, Արցախն՝ ավելի...»:

Մանկությունը շոկոլադն էր, որ գյուղի կանայք բաժանում էին քառասուն մասի: Մահյանական կարոտ կա բանաստեղծության մեջ և անհուն տրտմություն, որովհետև.

.... Բմ մանկությունը
գերեզմանատան ճամփան քարքարոտ
հասունացրեց ինձ... [5, էջ 39]

Բանաստեղծը կարմիրը ներկայացնում է մերթ որպես արյան ու մահվան գույն (ժողովրդավարական կոչված հեղափոխությունը արնագույն է), մե՛րթ մայրամուտի, մերթ է՛լ՝ որդան կարմիրի գույն, որ թագավորական գույն էր: Բանաստեղծի հոր աչքերը միշտ վառվում են կարմիր կրակով, որ ընկալվում է որպես ազատության խորհրդանիշ [13], քանի որ նա պայքարում էր Արցախի ազատագրման համար:

Հոգևոր արժեքներին և ոգեղենությանը ձգտող հեղինակը ցավով է նկատում, որ «կենցաղախեղդին ոգով չես փրկի» [5, էջ 75]: Բանաստեղծի համար կան իրական արժեքներ: Ահա «Տղերքը».

Կյանքում կան բաներ,
որ կարևոր են, քան նույնիսկ կյանքը.
նրանք զոհվեցին սահմանի վրա,
որ մի բուռ հողն այս
հայրենիք մնա... [5, էջ 93]

Միրուն կամ հայրենիքին *փարվելիս/գրկելիս* բանաստեղծը հասու է լինում *լույսին/ճշմարտությանը* («Ես հասու եղա մի՞ն աշխարհի...»): «Տիգրան Մե՞ծն էր Մե՞ծ, //թե՞ Արտավազդը». տարբեր են ընկալումները *հոգու և գլխի, հոգու և մտքի* նույն *ծաղկի/արմատի/հողի/ժողովրդի* հանդեպ: Բանաստեղծը մթագնումի մեջ փորձում է փնտրել «արթնացումը»՝ չնայած յուրաքանչյուրի ընկալումները տարբեր են «թոնրի ու փռի՝ /աշխարհի հանդեպ...» [5, էջ 49]:

Արթնացումը զգացած բանաստեղծը տառապում է անորոշ ներկայի համար: Մերթ հարբած Կալիգուլան է պարում [5, էջ 36], մերթ՝ նախորդ օրվա հոգեհանգստից հետո խրախճանք է [5, էջ 50]: Ասել է թե՛ խրախճանք ժանտախտի ժամանակ: Ու շարունակվում է *տազնապը/խավարումը*.

Գիշերը քամեց հյութերը վերջին,
ինչպես նոր խփված գազանի արյուն.
տե՛ս, բարձրանում է արեգակը ջինջ՝
քնատ անտառի մագերն է սանրում.
ճերմակաթն բուն թող քնի հանգիստ...

Ժամանակները խառն են ու խրթին
և անգամ ձյունն է վախենում իջնել
պատշգամբների արնոտ քաղաքիս [5, էջ 50]:

Իրավիճակն անհասկանալի է ու հակասական. գիշերային թռչունը՝ բուն, քնում է գիշերը [5, էջ 50], իսկ խավարը ցերեկին է տիրում [5, էջ 52], մանուշակի բույրը վերածվում է ցեղակլան անապատի դեղին փոշու. դարձյալ մատնության գույնը: Արթնացում զգացած բանաստեղծը պահանջում է զգաստանալ. «....ով մեղանչել է երբևէ քնով, //թող չբողոքի, որ ժամանակը հոսել է արթուն» [5, էջ 52]: Իրականությունը անհեթեթ է, քաջ-

նազարականությունը՝ հավերժական. «...սև հագած մարդիկ ձերբակալում են» [5, էջ 55], իսկ ժողովուրդը հծծում է հարկերից: Բանաստեղծը հեզնում է. «...պիտի հաստատենք //արևածագի ու մայրամուտի //ծամերը ստույգ //և պիտի հարկենք Մշեցու գրքից //խելագարության ամեն մի սանտիմ...» («Երեկ ըմբոստ էիր իմ Զառեթի դեմ») [5, էջ 59]: Հեզնանքն ավելի է կոնկրետանում «Օրվա լրահոս» բանաստեղծության մեջ. «ՀՀ նախագահը, ձյուն չկայի պատճառով //ցեխագնդի է խաղացել երեխաների հետ, //ՀՀ առաջին տիկինը սպաս է կերել, //ՀՀ վարչապետը՝ քալլա...» [5, էջ 76]: Ցավոք, այս իրականության վերջը ողբերգությունն է. «...խաղաղ պայմաններում կրկին //զինվոր է մահացել. //նախնական վարկածը՝ //ինքնասպանություն...» [5, էջ 77]:

Գրքում տեսանելի է բանաստեղծի ըմբոստ ու այլախոհ կերպարը: Սևակն ասում էր. «Առաջներում մերպեսներին // այրում էին խարույկի մեջ...» [8, էջ 77], իսկ Մշեցին գրում է. «...հիմա, երբ այլևս ոչ ոք չի հավատում ինձ //ու ինձպեսներին, //հիմա, երբ բոլորը մեզ համարում են որդ՝ որ փորձում է մտնել առողջ պտղի մեջ, //հիմա, երբ սեռ ունենալը նույնքան հետամնաց է, //ինչքան սերը Հայրենիքի հանդեպ... //մեզ ոչինչ չի մնում, քան Պանթեոն գնալ՝ //հետո՝ Եռաբլուր»: Որովհետև բանաստեղծի երդումները «ֆիդայերեն են» [5, էջ 75]: Իսկ ապրելու իրավունքը հեշտ չի նվաճվում.

...ու թե ուզում ենք թռչել անկաշկանդ
պիտ հրաժարվենք ծանր ոտքերից,
որ վախերն են մեր.
ուրեմն՝ ի գե՛ն... [5, էջ 57]:

Խղճի ու խղճմտանքի տարբերակման մեջ պոետը համարձակվում է ասել.

....չէ՞ որ բնության զույգ արցունքներն են
Պոետն ու Տերը.
Մեղա՛քեզ, Աստված... [5, էջ 52]:

Մշեցին երգում է իր անմահությանը երգը, որ նաև իր ազգի հավերժության երգն է: «Ես չեմ մահանա» սկզվածքով բանաստեղծության յուրաքանչյուր տան առաջին տողի փոփոխությունը հավերժության հավատով է լցնում՝ ես չեմ մահանա, ես չեմ չորանա, ես չեմ կորանա:

.... ես չեմ կորանա,
զի իմ ճկումը տեսնելու համար
նախ պիտի քանդեք
ձեր տաճարների ու մզկիթների
զգալի մասը, որը չեք անի... [5, էջ 70]

Սա ասես Սարոյանի «Հայր և հայր» պատմվածքի նորօրյա արձագանքն ու կրկնությունը լինի. «Փորձեք կործանել այս ցեղը: Կործանեցեք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք: Քեցեք տներից անապատ, մի՛ մոռացեք իսկև ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի մատնեցեք նրանց տներն ու եկեղեցիները: Տեսեք դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսեք ցեղը դարձյալ պիտի չհառնի՞...» [12]: Սարոյանի նման Մշեցին ևս հավատում է իր ազգի հառնումին.

.... գուր մի ջանացեք.

հավերժությունը կանխելու համար

նախ պիտի կանխեիք հառնումն առաջին... [5, էջ 70]:

Որքան էլ ձմեռներ ու սառնամանիքներ են եղել մեր ազգի համար, այնուամենայնիվ, «.... ձմռան զենքերից դեռ ոչ մի տերև // հոգին չի տվել. // չէ՞ որ փտումը սաղմն է փթթումի» [5, էջ 66], «հորդ հորդանների» արշավանքների ժամանակ. «մենք վարարել ենք - անկման մեջ թռիչք...» [5, էջ 100]:

Ե Զ Ը Ա Հ Ա Ն Գ Ռ Ի Մ: «Այլա-գրություն» (2020թ.) բանաստեղծական ժողովածուն ինքնության համար պայքարի մասին է: Այն սթափության կոչ և ըմբոստացում է ներկայիս դառն ու անհեթեթ իրականության դեմ: Հեղինակը ծառայատկերման խորհրդանշանների, Լուսիսի ու խավարի, ստվերի գունային խաղարկումների, գույնի նշանագիտական ինքնատիպ ընկալումների միջոցով ստեղծել է իր *այլ/ուրիշ* բանաստեղծությունը:

Դավիթ Մշեցին ուրույն ձեռագիր ունեցող հեղինակ է: «Այլա-գրություն» գրքով Մշեցին ստեղծում է իր առանձնահատուկ աշխարհը՝ *այլաշխարհը*, որ գաղտնագրումների, խորհրդապատկերների մի ուրույն աշխարհ է: «Այլա-գրություն» բանաստեղծական ժողովածուի շնորհիվ Մշեցին արարում է իր/հեղինակի՝ *արտատեքստային ժամանակը* և *ընթերցողի/ընդունողի* հոգում թողնում *այլ/ուրիշ* «մշակութային արձագանք»:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Աբրահամյան Ս.** *Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը*, Եր: «Արմավ» հրատ.: 2020: 739 էջ:
2. **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.** *Բառագիտություն*, Երևան: 2007: 264 էջ:
3. **Թումանյան Հ.** *Երկերի լիակատար ժողովածու, տաս[ը] հատորով, հ. 3*, Երևան: 1989: 542 էջ:
4. **Խորենացի Մ.** *Մովսիսի Խորենացույ Պատմության Հայոց*, Տփղիս: 1913: 463 էջ:
5. **Մշեցի Դ.** *Այլա-գրություն*, Երևան, Արմավ հրատ.: 2020, 128 էջ:
6. **Չարենց Ե.** *Երկերի ժողովածու, վեց հատորով, հ. 2*, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.: 1963, 400 էջ:
7. **Չարենց Ե.** *Նորահայտ էջեր [Պոեմներ, բանաստեղծություններ, հոդվածներ և այլն]*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1996, 634 էջ:
8. **Սևակ Պ.** *Եղիցի լույս: Բանաստեղծություններ*, Երևան, Նաիրի, 1992, 400 էջ:
9. **Սևակ Պ.** (Պարույր Սևակ 100), Երևան, Մագաղաթ պլուս, 2024, 328 էջ:
10. **Григорьева Э.** *Анализ развития цветовой символики в христианской культуре*, стр. 1477-1478. //Известия Самарского научного центра Российской академии наук, т. 13, №2(6), 2011.
11. **Լուսման Յու.**, *Խորհրդանշիչը մշակույթի համակարգում*// https://granish.org/khorhrdanish-evmshakyut/#_edn1/%D4%BC%D5%B8%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6 (29.09.2025)
12. **Սարգսյան Վ.** *Հայր և հայր* // <https://www.grakanter.am/archives/15087> (29. 09.2025)
13. **Коперенкова О.** *Символика цвета в культуре*. <https://cyberleninka.ru/article/n/simvolika-tsveta-v-kulture> (29.09.2025)
14. *Поцелуй Иуды: картина предательства.* // <https://dzen.ru/a/WsRebak29HBzHy9T> (29.09.2025)

References

1. **Abrahamyan, S.** The Artistic System of Modern Armenian Poetri [*Ardi hay poyeziayi gegharvestakan hamakargy*], Yerevan, "Arman" Publ. House, 2020, 739 p. /in Armenian/
2. **Zakaryan H., Avetisyan, Yu.** Grammar [*Barragitutyun*], Yerevan, 2007, 264 p. /in Armenian/

3. **Tumanyan, H.**, Complete Collection of Poems, ten volumes [*Yerkeri liakatar zhoghovatsu, tasy/hatorov, h. 3*] Yerevan, 1989, 542 p. /in Armenian/
4. **Khorenatsi, M.** The History of the Armenians [*Movsisi Khorenacvo Patmutyun Hayots*], Tprghis, 1913, 463 p. /in Armenian/
5. **Mushetsi, D.** Alter-writing[*Ayla-grutyun*], Yerevan, “Armav“Publ. House, 2020, 128 p. /in Armenian/
6. **Charents, Ye.** Collection of Poems six wolumes[*Yerkeri zhoghovatsu, vets hatorov, h. 2*], Yerevan, ASSRR GA Publ House, 1963, 400 p. /in Armenian/
7. **Charents, Ye.** New Pages: Poems, poems, articles etc[*Norahayt ejer:poyemner, banasteghtsutyunner, hodvatsner yev ayln*], Yerevan, YU Publ. Hous, 1996, 764 p. /in Armenian/
8. **Sevak, P.** Let There Be Light [*Yeghitsi luys: Banasteghtsutyunner*], Yerevan, “Nairi“ Publ. House, 1992, 400 p. /in Armenian/
9. **Sevak, P.** (Paruyr Sevak 100), Yerevan, “Magaghat plyus“, 2024, 328 p. /in Armenian/
10. **Grigoreva, E.** Analysis of the Dewelopment of Color Symbolisme in Cristian Culture[*Analiz razvitvetovoj simboliki vhristsanskoj kulture.*// Izvestia Samarskogo nauznogo centra (naucnogo centra) Rossijskoj akademii nauk, t. 13], №2(6), 2011 /in Russian/
11. **Lotman, Yu.** Symbol in the System of culture[*Khorhrdanishy mshakuyti hamakargum*] [//granish.org/khorhrdanishakuyti/#_edn1/%D4%BC%D5%B8%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6](https://granish.org/khorhrdanishakuyti/#_edn1/%D4%BC%D5%B8%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B6) /in Armenian/ (29.09.2025).
12. **Saroyan, V.** The Armenian and the Armenian [*Hayy yev hayy*] <https://www.grakanter.am/archives/15087/29.09.2025/> /in Armenian/
13. **Koserenkova, O.** [*Similika cveta v kulture*]. <https://cyberleninka.ru/article/n/simvolika-tsveta-v-kulture/29.09.2025/> /in Russian/
14. Judass Kiss: The picture of Bectrayal [*Poceluj Iudy: kartina predatelstva*] <https://dzen.ru/a/WsRebak29HBzHy9T/29.09.2025/> /in Russian/

Ընդունվել է / Received on: **17. 09. 2025**

Գրախոսվել է / Reviewed on: **09. 11. 2025**

Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **10. 12. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե Հարությունի ԿԱՐԱԽԱՆՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու,
Ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Գյումրու մասնաճյուղ,
հայոց լեզվի և գրականության դասախոս, Գյումրի, ՀՀ,
Էլ. huughe@narinekarhanyan@gmail.com / ORCID.org /0009-0008-3768-0325

Narine Harutyun Karakhanyan: PhD in Philology
National Polytechnic University of Armenia, Gyumri Branch
Lecturer of Foreign Armenian Language and Literature, Gyumri, RA
e-mail:narinekarhanyan@gmail.com / ORCID.org /0009-0008-3768-0325

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
BOOK REVIEW

ԲԱՐԴԱԿԱԶՄ/ԲԱԶՄԱՇԵՐՏ ՊԱՏԵՐԱԶՄ.
ՎԻՍԵՐՆԴԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Արծրուն Հովհաննիսյան



Հայ իրականության մեջ քիչ են ռազմական, ռազմատնտեսական կամ քաղաքագիտական գիտակարգերի այն գիտնականներն ու հետազոտողները, ովքեր կձեռնարկեին, կամ նույնիսկ անգամ փորձ են կատարել ձեռնարկելու *նոր սերնդի պատերազմի* մտահորինվածքի տեսապատկերումը: Արծրուն Հովհաննիսյանի վերջերս լույս ընծայված գիրքը հաճելի անսպասելիությամբ գալիս է որոշ չափով լրացնելու այդ բացը: Այն մասին, որ հին և նոր, այս պարագայում և հեղինակի խոսքերով՝ 6-րդ սերնդի պատերազմի տեսության միտումների մասին դատողություններ անելիս չի կարելի սահմանափակվել լոկ մեկ կամ նույնիսկ մի քանի գիտակարգերում կուտակած գիտելիքներով, հեղինակը հստակ նշում է աշխատության հենց սկզբում: Նրա

խոսքերով, «*պատերազմը անորոշությունների և բարդ անհայտների ամբողջություն է, որտեղ միմյանց գումարվում են ինչպես ճշգրիտ գիտության ու հստակ չափումների գործոնները, այնպես էլ դժվար չափելի, սոցիոլոգիական, հոգեբանական և այլ բարդ հանգամանքներ*»: Հետևապես՝ «*ռազմական գիտությունը միջգիտակարգային է, այսինքն՝ բոլոր գիտությունների և մասամբ մշակութային ժառանգության հանրագումարը*» (էջեր 18, 26):

2022թ. փետրվարին սկսված և առայսօր շարունակվող ռուս-ուկրաինական, 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմի և ոչ վաղ անցյալի այլ ռազմական բախումների դրվագների համեմատական վերլուծության արդյունքում հեղինակը դուրս է բերում արդեն իսկ հասունացման փուլում գտնվող և մոտակա ապագայում իր թերեր լիարժեք պարզելուն պատրաստ նոր՝ 6-րդ սերնդի պատերազմավարության իր տեսությունը, որին տալիս է «*Բարդակազմ/բազմաշերտ պատերազմ*» անվանումը: Այս տեսությունը զագաթնակետն է աստիճանական կարգով բարդացող մտահայացների այն հիերարխիայի, որի տարրերի

մասին հեղինակի կողմից օրիգինալ մշակված սահմանումներ են պարունակում ինչպես իր նախորդ աշխատությունները, այնպես էլ սույն գիրքը: Մասնավորապես, Ա. Հովհաննիսյանը նոր տեսության հիմքում դնում է 4-րդ արդյունաբերական հեղափոխությունը, որի դարաշրջանում *«ուղղահայաց ինստիտուտներին գալիս են առնվազն լրացնելու, եթե ոչ փոխարինելու փոխադարձ կապվածության ինստիտուտները»* (էջ 13):

Դեպի նոր պատերազմի տեսություն տանող մտավոր աստիճանակարգում հաջորդ կառուցվածքային տարրը էլեկտրակրակային մարտն է, որն *«իր կառուցվածքով համագործակցին, նույնիսկ համահարթակային մարտ է, որին մասնակցում են պատերազմավարման բոլոր հարթությունները (ցամաք, օդ, ծով, տիեզերք, կիբեր, իմացական կամ կոգնիտիվ), բոլոր գորատեսակները, դա անելով էլեկտրոնային հիմքով, առաջանցիկ տրամաբանությամբ և ցանցային կապով»* (էջ 38): Էլեկտրակրակային մարտի խոցման միջոցների կիրառման համար հետախուզական տվյալների հայթայթումը, որոշումների ընդունումը և մարտի կառավարումն ու ղեկավարումը դարձնում է Ցանցակենտրոն պատերազմավարման միջոցներով, որ առաջնահերթ ամերիկյան ռազմական մտքի ու տեխնոլոգիաների ծնունդ է և ըստ հեղինակի՝ հիմքում ունի կառավարման ցանցեր, *«որոնք զուտ կառավարումից վերաճել են մտածողության, գործողությունների, միջոցների ցանցերի»* (էջ 75): Զարգացնելով միտքը և որպես պատերազմի նոր տեսությանը տանող վերջին քայլ, հեղինակը տալիս է իր յուրօրինակ Ցանցահարթակակենտրոն եզրույթի սահմանումը, որը հարվածային միջոցների, հարթակների և ղեկավարման ու կառավարման նոր մոդելի միասնությունն է, *«որը բազմաշերտ/բարդակազմ պատերազմի կոնվենցիոնալ ու բարձրորակ գործիքակազմի ամբողջությունն է»* (էջ 108):

Նշված ենթատեսությունները հեղինակին թույլ են տալիս բյուրեղացնել Բարդակազմ/բազմաշերտ պատերազմի տեսության սահմանումը, որը, ըստ նրա, հանգում է կոնվենցիոնալ, կիբերդային (կիբերի և հիբրիդայինի միաձուլումը) պատերազմների, կանոնավոր և անկանոն գորքերի, մարտավարության, գծային և ոչ գծային լուծումների, ռոբոտացված համակարգերի և բարոյապես հնացած զինատեսակների (օրինակ՝ Մոսին հրացանի), սովորական արկերի ու գերձգրիտ օդային հարձակման միջոցների (ՕՀՄ) միաժամանակյա կիրառման սիմբիոզին՝ այդ սիմբիոզի մանրակրկիտ պլանավորման, ողջ հասարակությանը դրան մասնակից դարձնելու և ռազմագործողությունների բարդագույն կառավարում իրականացնելու մշակույթով հանդերձ (էջ 188):

Չափազանց արժեքավոր է հեղինակի կողմից նոր տեսության համար առաջարկվող քաղաքականությունների, ռազմավարությունների, օպերատիվ արվեստի ու մարտավարության յուրօրինակ կառուցակարգը: Մասնավորապես, արժեքավոր նորույթ է պետական քաղաքականության, մեծ ռազմավարության, ռազմական ռազմավարությունների (ընդ որում, տաբերակում է դրվում միջին ռազմավարության և թատերաբեմի ռազմավարության միջև), օպերատիվ արվեստի և մարտավարության փոխհարաբերությունների մասին դիագրամը, որտեղ հատկանշական է օպերատիվ արվեստի սերտաճումը ռազմական ռազմավարությունների և մարտավարության հետ (էջ 12):

Ռազմավարությունների և քաղաքականությունների այս ամբողջության մեջ հեղինակը հանդես է գալիս մի հակասական պնդումով, ըստ որի՝ քաղաքականությունը չպետք է խառնվի ռազմագործողությունների իրականացման մեթոդներին և ձևերին (էջ 17), այսինքն, ըստ էության, քաղաքական ղեկավարությունը պետք է ասի թե ինչ անել, իսկ զինվորականները կորոշեն թե ինչպես դա անել: Մակայն ռազմական գիտության միջգիտա-

կարգային բնույթի և պատերազմի բազմաթիվ փոփոխականների մասին նախորդիվ նշված կանխադրույթի հիմա վրա, հեղինակը մեկ այլ տեղ իրավացիորեն փաստարկում է, որ «բարձրագույն զինվորական ղեկավարները միայն զուտ ռազմական գիտելիքներով ու կրթությամբ հաճախ չեն կարողանում ղեկավարել ռազմավարական օղակը և ցանկալի է նրանք լինեն համակողմանի կրթված ու զարգացած (էջ 20)։ Բայց եթե զինվորականները պետք է լինեն համակողմանի կրթված ու զարգացած, այսինքն՝ ունենան ռազմագիտությունից անդին սփռվող գիտելիքների պաշար, ապա, նույն տրամաբանությամբ՝ քաղաքական գործիչները նույնպես կարող են ժամանակի ընթացքում գիտելիքներ ձեռք բերել ռազմական գործից։ Իմ կարծիքով, քաղաքական ղեկավարությունը, որպես նվազագույն միջամտություն, պատերազմավարման և դրան նախորդած բանակաշինության հարցերում հստակ պետք է սահմանի կաշկանդող հանգամանքները՝ այսինքն՝ ինչ պետք է պարտադիր անել, և սահմանափակումները, այսինքն՝ ինչ չանել ցանկացած պարագայում։ Բանակի վերակազմավորման փուլում որպես կաշկանդող հանգամանքների օրինակներ կարող են լինել այս կամ այն ռազմական կարողությունը կամ կառուցվածքային միավորը, ենթակառուցվածքը պահելն ու չլրճատելը, իսկ պատերազմի ժամանակ՝ այս կամ այն ուղղությամբ հարձակվելը կամ այս կամ այն տեղամասը ամեն գնով պահելը։

Հեղինակի ամենագործուն տեսական ներդրում արդի փուլի ՀՀ բանակաշինության մեջ, «արևմտյան» և «խորհրդային» ռազմական դպրոցների համադրումն ու հակադրումն է։ Մասնավորապես, ըստ հեղինակի, *Խորհրդային դպրոցը մեծ տեղ էր տալիս օպերատիվ արվեստին և շատ հարցեր կոնկրետացնում հստակ ալգորիթմներով, մինչդեռ արևմտյան դպրոցը դրան ավելի շատ նայում էր որպես արվեստ և խուսափում մաթեմատիկական կոնկրետություններից*։ Հայկական ռազմագիտական դպրոցը ևս, ըստ հեղինակի, ընտրելով է *արևմտյան* մոտեցումը։ Այս պնդման համար հեղինակի բերած պատճառներից ինձ համար ամենահամոզիչն այն է, որ, ըստ նրա, մեր ազգային մտածելակերպն ավելի ազատ է, որը մեզ առաջնորդում է իրական կյանքում (էջեր 14-15)։ Ի տարբերություն կառավարման ոլորտում խորհրդային «*ցույց տուր-թույլատրիր-վերահսկիր*» սխեմայի, Արևմուտքում գործել է և շարունակում է գործել «*ստիմուլացրու-վստահիր-հետևիր*» փիլիսոփայությունը (էջ 30)։ Այս փոխհարաբերությունների բանալին փոխվստահությունն է, և դրա բացակայությունը բերում է միկրոկառավարման, որը կապի բացակայության դեպքում դուրսին կերպով կարող է խաթարվել՝ կառավարումը վերածելով քառսի։ Միաժամանակ՝ խիստ վերահսկողության համար գործում են մի շարք լրացուցիչ կառավարման օղակներ, որոնց գործառնությունը լրացուցիչ, շատ անգամ զգալի նյութական ռեսուրս է պահանջում։

Մեծ տեղ հատկացնելով հայկական բանակաշինության գործում օդուծի զարգացմանը, Ա. Հովհաննիսյանը իրավամբ նշում է, որ ռազմավարական և օպերատիվ մակարդակում օդային գերակայություն ստանում են ոչ թե ԱԹՄ-ներով, այլ առաջնահերթ կործանիչ ինքնաթիռներով (էջ 58)։ Միաժամանակ, ռազմագործողությունների ցամաքային տիրույթում հեղինակը առանձնացնում է վերգետնյա զինուծի հետևյալ երեք շերտերը. «*հակառակորդի տարածքում կռվող հատուկ նշանակության ուժեր, յուրային տարածքի խորքում հակառակորդին հալածող աշխարհագոր և վերջապես՝ պետության սահմանին կամ կարևոր հանգուցային կետերում կռվող կանոնավոր զորք։ Ընդ որում, դասական մարտավարական կառուցվածքային մեծ միավորները պետք է կարողանան կիսվել և առանձին-առան-*

ձին գործել նաև անկանոն մեթոդներով, իսկ հավաքական դառնալու դեպքում՝ արագ անցնել դասական մարտերի» (Էջեր 83, 101):

Բանակաշինության և պաշտպանության կառավարման ոլորտներում կարծրատիպային մտածելակերպից ձերբազատվելու համար հեղինակը հիմնավոր փաստարկներ է բերում այն մասին, որ «փոփոխությունների արագ դինամիկան, հզոր և ինքնուրույն անհատառաջնորդները պահանջում են ռազմավարական քայլերի արագություն ու ճկունություն, որը բնորոշ չէ դասական պետական համակարգերին: Եթե ավանդական մեթոդներով կատարվեն պետության ՁՈՒ-ի կամ անվտանգության համակարգի բարեփոխումները կամ որևէ զինատեսակի ստեղծման ու կիրառման բոլոր քայլերը, ապա գրեթե միշտ դրանք ուշացած կլինեն, քանի որ պետական համակարգերը սովոր են դանդաղ ու ուղղահայաց աշխատանքի» (Էջեր 87-88): Հակառակ գործելակերպ կարող են որդեգրել, շատ ավելի ճկուն կարող են լինել բաց հասարակությունները միայն, որտեղ անհատներն ու կազմակերպությունները կարող են շղթայազերծել իրենց ողջ ստեղծարար ներուժը, և այդպիսի հասարակություններ ունենալը հատուկ է ժողովրդավարական հասարակարգերին: Մինչդեռ, դժվար կլինի չհամաձայնել հեղինակի հետ առ այն, որ «ռուսական, չինական, պարսակական և ավտորիտար այլ համակարգերը չեն կարող զինված ուժերի մեծ զարգացում ապահովել» (էջ 93):

Սրա հետ մեկտեղ, ՀՀ պարագայում հարկավոր է հնարավորինս ապակենտրոնացնել կառավարումը, շատ որոշումներ ԱԺ և Կառավարության հաստատման մակարդակից իջեցնելով մեկ-երկու մակարդակ ներքև և թողնելով պաշտպանության նախարարի և ՁՈՒ ԳՇ պետի հացեցողությանը: Միաժամանակ, պետության անվտանգության համակարգի կենսունակության կարևորագույն ցուցիչներից մեկը պահեստագորային համակարգի ճկունությունը և կայունությունն է: Պետությունը պարտավոր է մշտապես ապահովել որակյալ պահեստագոր՝ տարբեր խնդիրների կատարման համար նախատեսված ամենաբազմազան ստորաբաժանումներ, սակայն նման պահեստագոր կարելի է ապահովել միայն համապարփակ համակարգի միջոցով, երբ քաղաքացին կամավոր հոգում է իր զենքի խնդիրը և մարտական նվազագույն պատրաստությունը» (Էջեր 87-88, 93, 95, 99-100):

Կարծում եմ, որ ռազմաքաղաքացիական հարաբերությունների տիրույթին վերաբերող և վերոնշյալ երկու պարբերություններում հիշատակված փաստարկները կարճաժամկետ հեռանկարում հանդիսանում են ՀՀ անվտանգության և պաշտպանության ոլորտների բարեփոխման հարցում այս գրքում բերված ամենաարժեքավոր դրույթները: Եվ եթե տեխնոլոգիական լուծումները պահանջելու են նյութական միջոցների զգալի ներդրումներ, ապա ՀՀ ՁՈՒ ռազմական և ՀՀ ՊՆ կորպորատիվ մշակույթի փոփոխությունը կարելի է իրականացնել առանց լուրջ ֆինանսական ծախսերի: Եղած սահմանափակ ռեսուրսներով ՀՀ ՊՆ անվտանգության և պաշտպանության համակարգերի ՕԳԳ-ի և ռազմական արդյունավետության բարձրացմանն ուղղված այս գործնական առաջարկություններն են, որ կազմում են Արծրուն Հովհաննիսյանի հեղինակած «Բարդակազմ/բազմաշերտ պատերազմ. VI սերնդի պատերազմի համառոտագիր» գրքի ամենամեծ ներդրումը դեռևս սաղմնային վիճակում գտնվող հայկական ռազմական գիտության մեջ:

Ժիրայր Ամիրխանյան

պահեստագորի գնդապետ,

քաղաքագիտության թեկնածու (ԱՄՆ),

ՀՀ ՊՆ խորհրդական, zhirayr.amirkhanyan.am@nps.edu

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ
SCIENTIFIC NEWSLETTER

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ 2025 թ. ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»


հոդվածների պարբերական ժողովածու /Հայագիտություն և հասարակական գիտ.:

Գյումրի: Հատոր 1(28): 2025: - 226 էջ:

Հիմնադրվել է 1998 թ. ԾՀՀ Կ գիտությունների որոշմամբ:

Ընդգրկված է ԿԳՄՄԸ ԲՈԿ-ի ընդունված պարբերականների ցանկում:

ISSN1829-4316, eISSN2953-8076, DOI:10.522971/18294316-2025.28.1



2025թ. հունիսին լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» հոդվածների պարբերական ժողովածուի 28-

րդ հատորի առաջին պրակը՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Սերգո Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ, 14 տպամուկ ծավալով: Ժողովածուում զետեղված 20 գիտական հոդվածները, հաղորդումները, հրապարակումները վերաբերում են հայագիտության տարբեր ոլորտների և արժարժույթի և արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդիրներ: Պարբերականը կարդում են մեր երկրի և եվրոպական մի շարք բուհերի գրադարաններում, նրան նաև թղթակցում են արտերկրի գիտնականներ՝ հնագետներ, պատմաբաններ, բանագետներ, ազգաբաններ ու հայերենագետներ: Այս պրակը բացվում է պատմագիտության մեթոդաբանության հարցերին նվիրված արժեքավոր հոդվածով՝ «Հույն պատմագիր Պոլիբիոսը պատմագիտության մեջ քննական և վերլուծական մեթոդների սկզբնավորող», որի հեղինակը ակադեմիական ոլորտի պատմաբան, գիտ. դոկտոր Ա.Հակոբյանն է: Առանձնակի հետաքրքրությամբ է ընթերցվում Ռ. Յականյանի «Միջինասորեստանյան պե-

տության վարչաքաղաքական և տնտեսական կառավարման համակարգերը» ծավալուն հոդվածը, որ տալիս է Միջին Ասորեստանի /Ք.ա. XV դարավերջ – X դարասկիզբ/ հասարակությունը բնութագրող սոցիալ տնտեսական ու վարչական նորամուծությունների, քաղաքական դինամիկայի սպառնալից պատկերը:

Պատմագիտական արժեքավոր հետազոտություն է վանաձորցիներ Ա.Մելիքյանի և Ի.Չատինյանի գիտական աշխատանքը՝ «Արտաշես Երկրորդի հակահռոմեական դիրքորոշումը աղբյուրագիտական և դրամագիտական տվյալների քննահամեմատական լույսի ներքո» հոդվածը: Նորագույն պատմության ոլորտից հայտնի իրադարձություններից մեկի՝ պաղեստինյան հակամարտության նկատմամբ տարածաշրջանային քաղաքականության օբյեկտիվ համեմատական վերլուծություն է ՇՊՀ դոցենտ Ա.Հովհաննիսյանի անգլերենով հոդվածը: Հայաստանի վիմագրական ժառանգության նորոշյալ խնդիրներին է վերաբերում ՀԱԻ ազգագրագետ Ս. Աղամյանի՝ Ծաղկունք գյուղի հին գերեզմանատների խաչքարերից ու տապանաքարերից իր նորովի հավաքած կամ ընդօրինակած, հիշատակագրային բնութային վիմագրերի ուսումնասիրությունը:

Շիրակի հայագիտականի առաջատար գիտաշխատող, գիտ. դոկտոր Ս. Պետրոսյանի և կենտրոնի գիտաշխատող Լ. Պետրոսյանի համատեղ բանագիտական հետազոտության նյութը դրախտային ծառերի գույզի, վերջինիս պահապան առասպելական ոգիների, նաև սրանց առնչվող տեղանունների /Կարբի, Ուշի, Փարպի/ արժեքավոր ստուգաբանությունն է: Ի դեպ, ինչպես միշտ, պարբերականի սույն հատորը ևս հարուստ է բանագիտական, բանահյուսական ու ազգագրական հաջողված հետազոտություններով: Դրանցից են՝ Հ.Հարությունյանի և Հ.Մատիկյանի /ՇՀՀ կենտրոն/ կողմից ժամանակակից միջավայրի փոխադրությունների համատեքստում հայկական պարբերգի ժանրային առանձնահատկությունների մասնագիտական բարձրարժեք բնութագրումը, ՀԱԻ գիտաշխատող Լ.Սահակյանի՝ հրաշապատում հեքիաթներում կերպարանա-

փոխությունների մոգական բնության, դրսևորման ձևերի, դերի հարցերի քննությունը հայ և համաշխարհային առասպելաբանության համատեքստում, նաև ՇՀՀ գիտաշխատող, ՇՊՀ դոցենտ Հ. Մատիկյանի սպառնալից տակումները՝ հրաշագործ հեքիաթներում Հագարան բլրույի հմայական կերպարի գործառնությունների և դրանցից, ըստ հոդվածագրի, «առանցքային»՝ իր երգով անշունչը շնչավորելու, անհավանական վերակենդանացնելու նրա դերի մասին:

Ազգագրական բնության հետաքրքիր հոդվածներ են ՀԱԻ կրտսեր գիտաշխատող Ռ. Գաբրիելյանի՝ դարավանդային երկրագործության և բնակավայրերի առանձնահատկությունների քննությունը Գանձակի շրջանի հայկական գյուղերի օրինակով և Երևանի պետ-համալսարանի դոցենտ Հ. Հարությունյանի կողմից հայ ժողովրդի հավատալիքային արժեհամակարգում այսօր էլ իր պատվավոր տեղն ունեցող կաթնատնտեսության բնագավառի շուրջ ձևավորված և՛ հեթանոսական, և՛ քրիստոնեական պատկերացումների հանգամանակի ներկայացումը և մեկնաբանումը: Ազգագրական բնության մեկ այլ աշխատանք է Հայաստանի Ժողովրդական արվեստների թանգարանի գիտաշխատող Դ. Աբրահամյանի հրապարակումը, որում ներկայացվում և քննության են առնվում հայոց տնտեսության մեջ կավե կանացիակերպ աղամանների պատմական զարգացման դինամիկան, թանգարանի հավաքածուի օրինակով հստակեցնում դրանց տիպաբանական բնութագիրը, բացահայտում դրանց ոճա-տեխնոլոգիական առանձնահատկությունները, տարբերակում դրանք ըստ ազգագրական կամ դեկորատիվ արժեքի ու գործառնության:

Փորձաշատ ազգագրագետ, Շիրակի հայագիտականի ավագ գիտաշխատող, դոցենտ Կ.Բազեյանի հոդվածը մի կողմից ընդհանուր գծերով ներկայացնում է 1926-30-ական թթ. լեռնականյան կյանքը, 26-ի երկրաշարժի պատճառած վնասներն ու վերականգնման ընթացքը, մյուս կողմից՝ կարևորում և ընդգծում այն հսկայական ազդեցությունը, որ


ունեցավ աղետը քաղաքի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման, նրա նոր արդյունաբերական դիմագծի, այնպես էլ՝ նոր սոցիալիստական կենցաղի ու նոր լեռնականյան մշակույթի ձևավորման վրա: Ազգագրագետ Կ.Ասատրյանի հաղորդումը վերաբերում է Հայոց ազգագրության թանգարանում/Մարդարապատի հուշահամալիր/պահպանվող շուրջ երկուհարյուրամյա ծագմամբ պարսկական կենցաղային առարկաների/սափոր, բաժակներ և սկուտեղ/ համալիրին, որը կրում է դարերի պատմություն ունեցող պարսկական մետաղամշակության հզոր ավանդույթներն ու լավագույնս ներկայացնում այն գործածող ժողովրդի գեղագիտական ճաշակը:

ԳԱԱ գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ա. Զարգարյանի՝ «Աստվածային ցասման ու մարդկային վախի ընկալումներն Աստվածաշնչում» հոդվածը ընթերցվում է մեկ շնչով. և՛ թիմայան վախի փիլիսոփայություն կա նրանում, և՛ գրականագիտական սուր միտք: 20-րդ դարասկզբի հայ նշանավոր գրաքննադատ, գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ Լևոն Մանվելյանին, նրա՝ իբրև մտավորականի ձևավորման ու կայացման գործում Ա.Արամյանյանի «Մուրճ»-ի էական դերակատարության վերլուծությանն է նվիրված Բ.Գ.Թ., ԳԱԱ գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Ս. Փարսադանյանի անգլերենով հոդվածը: Բսկ նույն ինստիտուտի մեկ այլ կրտսեր գիտաշխատող՝ Ա.Խաչատրյանը, իր հոդվածում քննության նյութ է դարձրել «Կարոտ» վիպակի հեղինակային պատկանելության խնդիրը, որ տասնամյակներ շարունակ հայ նորագույն գրողական միտքը զբաղեցնող հանգամանք էր: Խոսքը վերաբերում էր շնորհալի ու քիչ ճանաչված գրող Կարպիս

Մուրենյանի վիպակի ուղղակի սեփականաշնորհմանը սովետահայ արձակի ազդեցիկ դեմքերից մեկի՝ Հր. Քոչարի կողմից: Իր դրամաներում տառապանքի մեջ հերոսների դիմակայության սահմանը Վ.Մարտյանը համարում է թշվառության ու խեղճության հորձանքին չհանձնվելը: Նրան հիացնում էր մարդու հերաշխարհի թոփաթը: Գոյության այս խորհրդի քարոզիչն է մեծ գրողը Այս է Բ.Գ.Թ., Մ.Խորենացի համալսարանի դասախոս Ն. Գալստյանի՝ Մարտյանի դրամաներին նվիրված հոդվածի նպատակը՝ ապրելու դատապարտվածությունից կեցության իմաստավորման հասնելու ներապրումի գրական-փիլիսոփայական դրսևորումների բացահայտումը: Այս անգամ գյումրեցի անվանի արվեստաբան, Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի դոցենտ Ա. Մարգարյանի հրապարակումը նվիրված էր Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ նկարիչներ Հակոբ Հակոբյանին, Պետրոս Կոնտուրաջյանին և Նվեր Մաֆյանին: Հեղինակը հանգել է այն ճիշտ եզրահանգման, որ Լենինականն իր խիստ սահմանափակ հնարավորություններով հանդերձ եղավ այն վայրը, որտեղ նրանք իրավամբ գտան իրենց սեփական ուղին ու ձեռագիրն արվեստի մեջ: Պարբերականի այս պրակն ավարտվում է 2024-ին լույս տեսած «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» խորագրով ակադեմիական մեծարժեք ժողովածուի նույնքան արժեքավոր գրախոսությամբ, որն հեղինակել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի և Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Հ. Գալստյանը:

«ԳՈՐԾՎԱԾՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՇԻՐԱԿՈՒՄ (19-20-րդ դդ.)»

հեղինակ՝ Կարինե Ռազմիկի ԲԱԶԵՅԱՆ
<< ԳԱՎՇԻՐԱԿԻ հայագիտական հետազոտություն
ների կենտրոնի հրատ.: Գյումրի, 2025.- 388 էջ:



Աշխատությունը նվիրված է Շիրակի գործվածքի մշակույթին, որը, թեև մասամբ ներկայացվել է գեղարվեստական գործվածքի առանձին ճյուղերին վերաբերող տարբեր հեղինակների ալբոմներում ու հոդվածներում, սակայն համալիր և ամբողջական քննարկման չի ենթարկվել: Առաջին անգամ գործվածքը դիտարկվել է նաև որպես ոչ նյութական մշակույթի կրող, ինչը դրսևորվել է շիրակցիների ընտանեկան, համայնական հարաբերությունների մեջ և տոնածիսական կյանքում: Հետազոտությունն ընդգրկում է 19-20-րդ դարերը՝ ներկայացնելով գործվածքի հետ կապված մասնագիտական զբաղմունքների զարգացման գործընթացն ավանդական արհեստներից ու տնայնագործությունից մինչև խորհրդային արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումն ու գործունեությունը:

Հարկ է նշել, որ մինչ օրս հայոց մշակույթում գործվածքն ու դրա հետ կապված արհեստներն ամբողջական ձևով ուսումնասիրված ու ներկայացված չեն, և այս աշխատությունն ամփոփում է գործել-հյուսելու հետ կապված բոլոր արհեստներն ու զբաղմունքները, որոնք խմբավորվել են ըստ աշխատանքի գործընթացի հերթականության՝ հումքի մշակման, թել մանելու, բուն գործվածք հյուսելու, գեղարվեստական գործվածքի պատրաստման և գործելու հետ կապված այլ արհեստների: Չնայած ուսումնասիրությունը նվիրված է Շիրակին, սակայն այն կարող է նաև վերաբերել այլ պատմագրական շրջաններին, քանի որ հայոց գործվածքի մշակույթը, իր տեղային յուրահատկություններով հանդերձ, ավելի ընդհանուր է, քան տարբեր:


Հետազոտությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, վերջաբանից, բառարանից, ընդարձակ սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և համապատասխան լուսանկարներից, ունի անգլերեն և ռուսերեն ամփոփումներ: Հետազոտության ընթացքում օգտագործվել են բազմաթիվ ձեռագիր ու տպագիր սկզբնաղբյուրներ, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Կարծում ենք, որ մենագրությունն օգտակար կլինի ինչպես գործվածքով զբաղվողների, ուսումնասիրողների, այնպես էլ թանգարանների աշխատողների և ուսանողների համար:

Մենագրությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ու Հովհ. Շարամբեյանի անվ. ժողովրդական արվեստների թանգարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ և Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհով:

**"CHILDBEARING AND CHILDBEARING TRADITIONS
OF THE SIRAK REGION OF ARMENIA"**

/«ՇԻՐԱԿԻ ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ՄԱՆԿԱՍԱԾՈՒԹՅՈՒՆ»/

*հեղինակ՝ Հասմիկ Համիկի ՄԱՏԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի հրատ.: Գյումրի, 2025,- 192էջ:*




Լույս տեսավ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտաշխատող, Բ.Գ.Թ., դոցենտ Հասմիկ Մատիկյանի *Շիրակի տղաբերք և մանկատածություն* հայերեն գրքի անգլերեն տարբերակը, որը նվիրված է Շիրակի մանկական բանահյուսության արդի և ավանդական դրսևորումներին:

Ներկա աշխատանքի նպատակն է շիրակյան մանկական բանահյուսական նմուշները ներկայացնել ինչպես հայալեզու, այնպես էլ անգլալեզու միջավայրերում: Յուրաքանչյուր մանկախնամ և մանկախաղաց երգ մեջբերվում է հայերեն բնագրով, ՀՄԲ միջազգային գիտական տառադարձությամբ և անգլերեն տողացի թարգմանությամբ: Անգլախոս ընթերցողին ներկայացվել է նաև այն միջավայրը, որում զարգացել և կենցաղավարել է տարածաշրջանի ավանդական կենցաղի, սովորությունների, ծեսերի և հավատալիքների վրա ձևավորված բանավոր խոսքի մշակույթը, որն ազդեցություն է ունեցել հղիության և մանկատածության վրա: *Հավելված* բաժնում ամփոփվել են շիրակյան օրորներ՝ նոտագրված նմուշներով:

Գիրքը նախատեսված է բանագետների, ազգագրագետների, բանասերների, մշակութաբանների, թարգմանիչների և ընթերցող լայն շրջանակների համար: Հարկ է կարևորել այս հրատարակությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շիրակի մանկական բանահյուսությանը նվիրված անգլերեն համահավաք մենագրություն մինչ այժմ չի եղել տպագրված: Գիրքը հրատարակվում է ԳԱԱ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհով:

«ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»

12-րդ միջազգային գիտաժողովի նյութեր,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն:
Խմբ. խորհուրդ՝ Ս.Հայրապետյան /բ.գ.դ.,գլխ.
խմբագիր/ևայլք: Գյումրի:2025:-376 էջ:



12-րդ միջազգային գիտաժողովի նյութերի եռալեզու /հայերեն, անգլերեն, ռուսերեն/ ստվար ժողովածուն լույս տեսավ գիտաժողովի նախաշեմին, և սեպտեմբերի 26-ի առավոտյան այն ստացան երկար սպասված և Գյումրիում վաղուց մեծ հեղինակություն վայելող այդ միջազգային գիտական միջոցառման բոլոր մասնակիցները՝ հանրապետության և արտերկրի հարյուրից ավելի մասնագետներ՝ հայագիտության տարբեր ոլորտների՝ պատմագիտության ու ժողովրդագրության, ազգաբանության ու բանագիտության, հնագիտության ու մարդաբանության, ճարտարապետության ու արվեստագիտության հիմնախնդիրներին վերաբերող գիտական հաղորդումներով:

Ժողովածուն ավանդաբար բացվում է հնագիտության ու մարդաբանությանը նվիրված եռալեզու հաղորդումներով, որոնք ինն են, վերաբերում են Հայաստանի տարածքում վերջին տասնամյակներին ուսումնասիրվող պեղավայրերին /Բենիամինի վերջին երեք տարիների դաշտային աշխատանքների արդյունքների, վաղբրոնզիդարյան հուշարձաններում հանդիպող կենդանակերպ առարկաների վերաբերյալ, Սևանա լճի մակարդակի տատանումներին վերաբերող նորահայտ երկրաբանական տվյալներ՝ ավազանի բնապատմական միջավայրի և շրջակա հնագիտական հուշարձանների հետ փոխկապակցվածության հիմքի վրա/, նաև նվիրված են համեմատաբար նոր հետազոտվող տարածքներին /գուշակության ծիսակարգի հետ կապված Լեռնակերտյան նորահայտ ուշ բրոնզի շրջանի դամբարանի, Ջրաձորի ամրոցում ուրարտական շինարարական և գաղափարական ազդեցությամբ կառուցված պաշտամունքային կառույցի մասին/, կա՛մ հնագիտական մշակույթային նորահայտ օջախներին /Թեղության մշակույթի հետքեր Գետահովտում, Խանջյան գյուղի ծիսապաշտամունքային համալիր, Գեղարքունիքի Վարսեր գյուղի վիմագրական հարուստ ժառանգության նորօրյա ուսումնասիրություն/ և այլն:

Պատմագիտական հաղորդումները ժողովածուում քսանհինգն են, աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ, արդիականությամբ և գիտական վերլուծականությամբ, վերաբերում են տարածաշրջանային հարցերի/Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական դրություն, Խրիմյան կաթողիկոսին ուղղված՝ Շիրակում գաղթականների վերաբնակեցմանը վերաբերող նամակներ, Ալեքսանդրապոլի փոխանորդություն, Շիրակի հոգևոր

թեմի ստեղծում/, կա՛մ հայ և հարևան ժողովուրդների հին և նոր պատմության մի շարք, հաճախ վիճահարույց դրվագների գիտական նորովի մեկնաբանություններ են /թուրքական գործոնը հայ քաղաքական կյանքում, ասորիների ցեղասպանության թուրքական ուրացումը, Կարսի նկատմամբ ադրբեջանական հավակնությունները, Ջավախքի միգրացիոն գործընթացները XIX–XX դդ., 44-օրյայի ռազմագիտական կորսված հնարավորությունները, ուղիների պատմությունը և ներկա իրավիճակը Հայաստանում/, կա՛մ նվիրված են հայ հասարակական-քաղաքական շարժումների ու կազմակերպությունների պատմության ու ներկայի հարցերին /Բուրայելի հայ համայնքի ներկայիս դրությամբ, Կովկասի մասով Բրեստ-Լիտովսկի խաղաղության բանակցությունների լուսաբանմանը, հայ կուսակցությունների պատմության հարցերին, բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների համագործակցության պատմությամբ/ և այլն:

Ազգագրական հաղորդումները գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ տասնյոթն են. ներկայացնում են հայոց ազգագրական մշակույթի տարբեր ոլորտներ՝ սկսած մի մենապարի վերաբերյալ կամ Հին Երևանի ունիվերսալ խանութների մասին պատմական հիշողությունից, Անդրկովկասի մոլոկանների ազգագրական տարեգրությունից ու Ջ.Քանաքեռցու՝ հայոց երկրագործական մշակույթի սկզբնաղբյուր հանդիսացող «Պատմագրության» նորովի արժևորումից, Մորդովիայի հայերի ավանդական մշակույթի և Կարապետ Կոստանյանի «Գյումրին և յուր բարքերը» չիրատարակված հուշագրության ներկայացումից մինչև հայոց ավանդական մշակույթում մահվան կրոնաառասպելաբանական պատկերացումներն ու «Ջարդի ձոր» մշակութային տարածքի մասին պատմական հիշողության թարմացումը, Հայոց մեջ կարագի ստացման ժողովրդական եղանակների բնութագրումն ու «Բանվոր» թերթի՝ որպես վաղխորհրդային Լենինականի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուրի գիտական գնահատանքը և այլն:

Միջազգային գիտաժողովում մեծ ուշադրությամբ լսվեց և աշխույժ քննարկում ունեցավ ժողովածուում զետեղված բանագիտության ոլորտի տասնչորս գիտական հաղորդումների մեծ մասը: Դրանք Հայոց ավանդական խաղիկների նկարագրություն են կա՛մ բանաձևային մտածողության արտահայտություններ շիրակյան խաղիկներում, մեր ավանդագրույցներում կկվի ու բվեճի առասպելաբանական կերպարների բնութագրումներ են, կա՛մ ուժեղ կնոջ մոտիվ վրացական և հայկական ժողովրդական հեքիաթներում, սպառիչ հաղորդումներ են տարածաշրջանային մականունների բնութագրիչների ու հրաշապատում հեքիաթների առանձնահատկությունների, հայ վիպական բանահյուսության մեջ մոլեխաղերի ծիսական գաղտնիմաստի մասին, Կարսի և Շիրակի քնարական բանահյուսության համեմատական քննություն է, կա՛մ հայոց պատմագրական աղբյուրներում Երդման խորհուրդի և դրա դերի ուսումնասիրություն և այլն:

Բանասիրական բնույթի բոլոր ինը հաղորդումներն էլ ժողովածուի մեջ գիտական որոշակի արժեք ունեն, այնուհանդերձ թեմատիկ թարմությամբ ու քննվող խնդիրների ինքնատիպությամբ առանձնանում են «Գյումրու կերպարի կերտման չափումները արդի հայ գրականության կենսափիլիսոփայության ծիրում», «Մովսես Խորենացու տողերի նոր մեկնաբանություն», «Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» բանաստեղծական ժողովածուն», «Թարգմանության համարժեքության մասին» գիտական աշխատանքները:

Արվեստների ու ճարտարապետության հարցեր են արծարծում գիտաժողովի նյութերի ժողովածուի տասանհինգ հրատարակումներ: Դրանք գիտական արժեքավոր հաղորդումներ են Պատմական Տայքի փայտի ճարտարապետության հիմնական լուծումների, նրա Բողիսա և Ոքաղե գավառների տարածաշրջանական հիմնական սկզբունքների և զուգահեռների, Ընկուզեք ամրոցի ճարտարապետական լուծումների և Տայքում նրա զուգահեռների մասին, Գյումրու Սբ Ամենավիրկիչ եկեղեցու նկարագրողումների թեմատիկ և ոճական առանձնահատկությունների, Հայաստանի զարգացած միջնադարի քանդակի համատեքստում Մարմաշենի կաթողիկե եկեղեցու բեմառեջքի ձևավորման, Լենինականում 1960-70-ական թթ. քանդակագործության զարգացման նախադրյալների և քանդակի նշանավոր վարպետների գործերի, գիտության մեջ Ազգային նվագարանների կոնցեպտի, բալետում ազգային տարրերի և դրանց դերի մասին Գ. Տիգրանյանի մոտեցումների, հայրենասիրական հայ կինոերաժշտության առանձնահատկությունների և այլ հարցերի վերաբերյալ:


Ժողովածուի հրատարակմանը ֆինանսապես աջակցել են "Hi Am" բարեգործական միությունը (ԱՄՆ) և Գիտության ու մշակույթի Ռուսաստանյան կենտրոնի Գյումրու մասնաճյուղը (Հայաստան):

ՀՀ ԳԱՄ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ «ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

հոդվածների պարբերական ժողովածու /Հայագիտություն և հասարակական գիտ.: Գյումրի: Հատոր 2(28): 2025: - 301:

Հիմնադրվել է 1998 թ.՝ ԾՀՀ գիտխորհրդի որոշմամբ:

ISSN1829-4316, eISSN2953-8076, DOI:10.52297/18294316-2025.28.2



2025 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակին լույս տեսավ Կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերական ժողովածուի 28-րդ հատորի երկրորդ պրակը՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բան. գիտ. դոկտոր Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ, 19 տպ. մամուլ ծավալով: Ժողովածուում զետեղված են 24 գիտական հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, որոնք վերաբերում են հայագիտության տարբեր ոլորտների և արծարծում են արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդիրներ: Տեղ են գտել նաև մեկ ծավալուն գրախոսություն և Գիտական լրատուն՝ 2025 թ. Կենտրոնի հրատարակումների և կազմակերպած միջազգային գիտական միջոցառումների մասին սեղմ տեղեկատվությամբ

ՀՀ ԳԱԱ ԾՀՀ ԿԵՆՏՐՈՆԻ 2025 թ. ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԵՐԻՏԱՍԱՐԳ ՀՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԳՊՐՈՑ» - 2025

Շիրակի մարզ, Ջրաձորի պեղավայր, 14-20 հուլիսի 2025 թ.
Մասնակից երկրներ՝ Հայաստան, ԱՄՆ, Վրաստան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2025 թ. հուլիսի 14-20-ն ընկած ժամանակահատվածում Ջրաձորի պեղավայրում իրականացվեց երիտասարդ հնագետների թվով երրորդ ամառային միջազգային դպրոցը: Մա գիտակրթական և ակադեմիական մի ծրագիր է, որի նպատակն էր համալսման հնագիտությամբ և հարակից գիտակարգերով հետաքրքրված ուսանողներին՝ ապահովելով նրանց տեսագործական գիտելիքների և դաշտային փորձի ձեռքբերում:

Այս տարվա ծրագրին մասնակցեցին Երևանի և Շիրակի պետական համալսարանների, Վրաստանի Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի, ինչպես նաև ԱՄՆ SRAS-ի (The School of Russian and Asian Studies) ուսանողները:

Դպրոցի ընթացքում ուսանողները ներգրավված էին Ջրաձորի բրոնզ-երկաթի դարյան հնավայրի պեղումներում: Հիմնական աշխատանքները կենտրոնացան Ք.ա. VII-V դդ. վերաբերող մշակութային շերտերի վրա:



Դաշտային աշխատանքների ընթացքում բացահայտվեցին մի շարք արժեքավոր գտածոներ՝ քառանկյուն մոնումենտալ կառույցի հատվածներ, գետնաթաղ կավե կարասներ, թոնիրներ, ձիթաձրագներ և կենցաղային այլ առարկաներ, որոնք լրացուցիչ տվյալներ են հաղորդում տարածաշրջանի վաղ պետական կազմավորումների բնակեցման և նյութական մշակույթի մասին:



Ամառային դպրոցի ուսումնական բաղադրիչը ներառում էր մի շարք վարպետության դասեր և թեմատիկ դասախոսություններ, որոնք կազմակերպվեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Փորձարարական հնագիտության լաբորատորիայի հետ համագործակցությամբ (մասնագետ՝ պ.գ.թ. Իվան Սեմյան): Դրանց շրջանակում ուսանողները գործնականորեն սովորեցին օբսիդիանի մշակման, քարե և բրոնզե գործիքների պատրաստման տեխնոլոգիաները, ձուլեցին բրոնզե նետասլաքներ, ինչպես նաև ծանոթացան ուշ բրոնզիդարյան և վաղ երկաթիդարյան զինատեսակների՝ գուրգերի, նիզակների, սրերի, աղեղների և այլ հնագույն գործիքների պատրաստման և կիրառման ձևերին:

Ծրագրի մշակութային բաղադրիչը ներառեց ուսումնական այցեր Գյումրու պատմական կենտրոն, Շիրակի երկրագիտական թանգարան, Հոդմիկի և Հոռոմի հնավայրեր: Այցերի ընթացքում մասնակիցները ծանոթացան հնավայրերի պատմական շերտերին, ճարտարապետական առանձնահատկություններին, ինչպես նաև նախորդ տարիների պեղումների արդյունքներին: Դասախոսությունները նվիրված էին բրոնզիդարյան և երկաթիդարյան վերակազմված հագուստներին, հնագույն երաժշտական գործիքների (վարզան, ալլոս) կիրառությանը և հին խաղերի վերակենդանացմանը («Շներ և շնագայլեր», «Ինը պարոդ զինվորներ» և այլն):



Ամառային դպրոցում ուսանողները ոչ միայն ստացան տեսական գիտելիքներ և դաշտային հմտություններ, այլև ձևավորեցին մասնագիտական հաղորդակցման, թիմային աշխատանքի և գիտական հետազոտության կազմակերպման կարողություններ: Դպրոցը նպաստեց Հայաստանի, ԱՄՆ-ի և Վրաստանի երիտասարդ հնագետների միջև համագործակցության խորացմանը, տարածաշրջանի ազգագրական մշակույթին առնչվելուն, մտերմության և ընկերական ջերմ հարաբերությունների հաստատմանը: Թող այն երկար ապրի մասնակիցների հիշողություններում:

Ծրագրի կազմակերպիչները վստահ են, որ ամառային դպրոցի շրջանակում ձեռք բերված փորձը և գիտական արդյունքները հիմք կհանդիսանան հետագա համատեղ հնագիտական հետազոտությունների ու միջազգային ծրագրերի իրականացման համար:

«ԱԶԳԱՊԱՐԱԿԱՆ-ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

*Հանրապետական 5-րդ գիտաժողով
Գյումրի, Հայաստան, 15 օգոստոսի 2025*

Հակառակ ամառվա անսովոր տապին՝ Գյումրու ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գրադարանը օգոստոսի 15-ին մարդաշատ էր: Ուսանողներ էին, գիտաշխատողներ, դասախոսներ տարբեր տեղերից, նրանց մեջ նկատելի էին շատ դրսեկ հյուրեր: Հավաքվել էին ազգագրական-բանագիտական ընթերցումների, որոնք Կենտրոնում կազմակերպվում են ամեն տարի՝ օգոստոսին: Կենտրոնի տնօրեն Ա.Հայրապետյանի հակիրճ, բայց ջերմ ողջույնի խոսքին հաջորդեցին առաջին նիստի զեկուցումները, որոնց մեջ Ալեքսանդրապոլի զինագործության վերաբերյալ ՀԱԻ գիտաշխատող Գ.Աղանյանի հաղորդումը ընդունվեց առանձնահատուկ հետաքրքրությամբ և ընդմիջվում էր բազմաթիվ հարցերով: Նույնպիսի վերաբերմունքի արժանացան Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Թ.Մարտոյանի «Ցեղասպանություն հյուժման միջոցով» հաղորդումը՝ նվիրված Արցախի կանանց ու մանկանց անգն ղիմադրությանը 2023-ի շրջափակման օրերին, Շիրակի հայագիտականի գիտաշխատող Հ.Մատիկյանի՝ Կարսի և Շիրակի աշխատանքային ու սիրո երգերի համեմատական քննության վերաբերյալ խոսքը, Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի ու Ախալքալակի գավառներում 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի էթնոժողովրդագրական գործընթացների մասին ՇՊՀ-ի դոցենտ, ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող Ա. Բոյաջյանի հաղորդումը, ԵՊՀ-ից Ս.Մարտյանի ելույթը՝ նվիրված Սառնաղբյուր գյուղի 19-րդ դ. պատմությանը և ազգագրությանը: Այս թվարկումը կարելի է երկար շարունակել: Ընթերցումներն անցան գիտամեթոդական բարձր պատրաստվածությամբ, քննարկված հարցերի արդիականությամբ ու նորությամբ:

**«ՇԻՐԱԿԻ ՊԵՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ.
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ»**

*12-րդ միջազգային գիտաժողով
Գյումրի, Հայաստան, 26-27. 09. 2025*

Այն, որ սեպտեմբերը Գյումրիում հայագիտության ամիս է, Հայաստանի շատ բարեկամներ գիտեն և ձգտում են նրա վերջին տասնօրյակում կրկին լինել աշնանային շքեղ գույներով զօծված քաղաքում, որտեղ սեպտեմբերի 26-27-ին տեղի էր ունենում հերթական միջազգային հայագիտական ֆորումը՝ արդեն 12-րդը: Իսկ գիտաժողովին մասնակցելու հրավեր էին ստացել հանրապետության յոթ տասնյակից ավելի և արտերկրի 25 հայագետներ: Նրանցից շատերն իրար ճանաչում ու մտերմացել էին երեք տարի կամ ավելի առաջ՝ նախորդ գիտաժողովների օրերին ու հիմա անցյալն ուրախությամբ վերհիշելով՝ սեղանների առջև գրանցվում էին նորի լիագումար նիստին մասնակցելու համար: Համաժողովն ավանդաբար սկսվեց ԳԱԱ Շիրակի հայագիտական հետա-

գոտությունների կենտրոնի տնօրեն պ.գ.թ., դոցենտ Ա. Հայրապետյանի ողջունի խոսքով, որում նաև հաստատ հավատ կար, որ 12-րդն էլ, նախորդների նման, կանցնի հաջող ու արդյունավետ: Ողջունի կարճառոտ խոսքով հանդես եկան մարզի ու քաղաքի ղեկավարներ, հյուրերից՝ Գիտության ու մշակույթի ռուսաստանյան կենտրոնի Գյումրու մասնաճյուղի ղեկավար Ա.Բերյանը, Վրաստանի Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ռեկտոր Մ. Բերիձեն: Գիտաժողովի շրջանակներում համագործակցության հուշագրեր կնքվեցին «Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի» ու Ռուսական «Գիտելիք» ընկերության հետ:



Լիագումար նիստում ուշադրությամբ լսվեցին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա.Ղամբարյանի գիտական զեկույցը Հայաստանի առաջին Հանրապետության առաջին դիվանագիտական քայլերի, ռուսաստանցի հայագետ Տ.Յանգայկինայի զեկույցը՝ ռուսաստանաբնակ հայերի և տեղացիների միջև մշակութային արդյունավետ երկխոսության, ԵՊՀ-ի դասախոս Ա. Մխիթարյանի խոսքը՝ ակադեմիկոս Մերգել Աբրահամյանի հրապարակախոսական գործունեության մասին:

Կարճ ընդմիջումից հետո ելույթները շարունակվեցին Հնագիտության, Պատմագիտության, Ազգագրության, Բանագիտության, Լեզվաբանության, Գրականագիտության, Արվեստաբանության և Ճարտարապետության մասնաճյուղերի նիստերում, որոնք աշխատեցին մինչև ուշ երեկո:



Ինչպես երեք տարի առաջ, հիմա էլ հնագետների մասնաճյուղում կրկին ականայտ էր արտասահմանցի գործընկերների, մասնավորաբար՝ գերմանացի գիտնականների ակտիվությունը: Ավելին, եթե նախորդ գիտաժողովում հաղորդումների արեալը հիմնականում Հարավային Կովկասն էր, ապա ներկայիս գիտական զեկույները գերազանցա-

պես վերաբերում էին շիրակյան նորահայտ պեղավայրերին, որտեղ մեր հնագետների հետ 2025-ի գարուն-ամառ ժամանակահատվածում նրանք աշխատեցին ջանադրությամբ: Առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին ու քննարկվեցին հայ-գերմանական միացյալ հնագիտական արշավախմբի կողմից հերկայացված հաղորդումները Խանջյան գյուղի ծխապաշտամունքային համալիրի, գուշակության ծխական պատկերացումների հետ կապված ուշերոնգիդարի մի նորահայտ շիրակամուտյան դամբարանի, երկաթիդարյան Ջրաձորի, Բենիամինի նոր պեղումների արդյունքների մասին:



Աշխույժ քննարկումներով անցավ պատմագրության, ազգագրության, բանասիրության և մյուս մասնաճյուղերի նիստերում լավող զեկույցների մեծ մասը: Ուշադրությամբ լսվեցին և քննարկվեցին Մեհրաբ Բերիձեի՝ հայկական Ջավախքում 19-20-րդ դարերում տեղի ունեցած միգրացիոն գործընթացների մասին գիտական հաղորդումը, առաջին Հանրապետության տարիներին Շիրակի հոգևոր թեմի հիմնադրման վերաբերյալ Աշոտ Մանուչարյանի խոսքը, բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների 20-րդ դարասկզբի համագործակցության մասին Ա.Հայրապետյանի զեկույցը, ծանոթացան, Գ.Աղանյանի ներկայացմամբ, Կարապետ Կոստանյանի՝ Գյումրուն նվիրված անտիպ հուշագրությանը, գիտաշխատողներ Հ.Հովհաննիսյանի և Ս.Հայրապետյանի՝ գրաբարից իմ քանի թարգմանությունների շտկման անհրաժեշտության մասին հաղորդումները, Ն.Կարախանյանի ելույթը ժամանակակից հայ բանաստեղծության մեջ Դավիթ Մշեցու չափածոյի առանձնահատկությունների մասին, մի քանի դրսեկ և տեղացի ճարտարապետների և երաժիշտների ակտուալ ելույթներ՝ նվիրված Տայքի մի շարք շինությունների ճարտարապետական լուծումներին, Փոքր Ասիայի և Բալկանների 5-6-րդ դդ. եկեղեցական ճարտարապետության մեջ արևելյան /հայկական/ տարրին, Տայքում փայտի ճարտարապետության լուծումներին, արվեստում ցեղասպանության արձարձման տարբեր խնդիրներին, գիտության մեջ ազգային նվազարանների կոնցեպտին, շիրակյան հեքիաթների բնութագրիչներին, հեքիաթներում թոչունների մասին առասպելական պատկերացումներին, շիրակյան մականունների հարցին: Ապա դրսեկ բազմաթիվ մասնակիցների ցանկությամբ՝ օրն ավարտվեց երեկոյան քաղաքի պատմական կենտրոնում՝ եկեղեցիների, թանգարանների, պատկերասրահների, հուշարձանների, սրճարանների ու շատրվանների անմոռանալի միջավայրում:

Աշխատանքային երկրորդ օրը նույնքան արդյունավետ ընթացք ունեցավ: Որոշ մասնաճյուղերում շարունակվեցին նախորդ երեկոյան ընդհատված քննարկումներ, լսվեցին նույնքան հետաքրքիր հաղորդումներ առավելապես Շիրակի տարածաշրջանի արհեստ-արվեստների, ազգագրական սովորույթների, բանահյուսական ժառանգու-

թյան նոր նմուշների, շիրակյան հեքիաթների, մականվանության առանձնահատուկ կողմերի, Տայքի ու Շիրակի տարածաշրջանական սկզբունքների, քաղաքի նորոգյա քանդակագործության, քաղաքային ժողովրդական երգերի ու պարային երաժշտության մասին և այլն:



Միջազգային հայագիտական գիտաժողովն ավարտվեց լիագումար նիստով, որի մասնակիցները քննարկեցին ու գնահատականի արժանացրին գիտաժողովի արդյունքները, լսվեցին մասնաճյուղերի նախագահների հաղորդումները մասնաճյուղերի աշխատանքի մասին, ընդունվեց գիտաժողովի բանաձև՝ միաձայն հավանություն տալով գիտաժողովն ամենաբարձր մակարդակով, ամենաարդյունավետ ընթացքով անցկացնելու կազմակերպիչների գործադրած ջանքերին: Որոշվեց նաև ամենաարժեքավոր 40 գիտական զեկույցները մասնաճյուղերի երաշխավորությամբ հոդվածների ձևով հրատարակել Կենտրոնի «Գիտական աշխատություններ» պարբերականի առաջիկա հատորներում: Ավանդույթը պահպանելով՝ որոշեցին նաև, որ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից հաջորդ՝ 13-րդ հայագիտական միջազգային կոնֆերանսը գումարել 2028 թվականի սեպտեմբերի 26-27-ին՝ Կենտրոնի ստեղծման հոբելյանական 30-րդ տարում, այն կենտրոնի, որտեղ հիմնվել ու նրա հետ արդեն երեք տասնամյակ պատվախնդրորեն շարունակվում է այս կարևոր միջազգային ֆորումի պատմությունը: Շատերը բաժանվելիս հույս էին հայտնում, որ երեք տարի հետո կրկին կվերադառնան մեր հյուրասեր ու աննման քաղաքը այն կրկին վայելելու և 13-րդ միջազգայինին մասնակցելու համար:

Գիտական լրատուն կազմեց՝
բան. գիտ. դոկտոր Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Պ Ա Տ Մ ՈՒԹ Յ ՈՒՆ

Պետրոսյան Սարգիս Գ.

Տայոց կենաց ծառի, Թինա դիցուհու և հայերեն խառն արմատի մասին.....5

Յակոբյան Ռուսան Ա.

Գյուղատնտեսական բնակավայրերի համակարգը
միջինաստրեստանյան ժամանակաշրջանում17

Ակոպով Արկադի Ա., Հայրապետյան Արմեն Ս.

Ժողովրդագրական պատկերի դիմախեղումը Տայքում 16-17-րդ դդ.
(Թորթումի գավառի օրինակով)30

Ավագյան Բեգա Էդ.

Ալեքսանդրապոլի փողոցային լուսավորության զարգացումն
ըստ 1884-1895թթ. արխիվային փաստաթղթերի.....45

Ղամբարյան Արմենուհի Վ.

Հայաստանի առաջին Հանրապետության
դիվանագրական ներկայացուցչությունն ԱՄՆ-ում 1919 թ.վերջին – 1920 թ. սկզբին.....54

Հայրապետյան Արմեն Ս., Ադամյան Նինեստա Ս.

Դրվագներ բրիտանական և հայկական բարեգործական կազմակերպությունների
համագործակցության պատմությունից (1915-1917թթ.).....66

Գրիգորյան Արկադի Ս.

Օոցի 41-օրյայից մինչև Արցախյան 44-օրյան.
ռազմագիտական կորսված հնարավորություններ.....80

Բոյաջյան Արտաշես Գ.

Էթնոժողովրդագրական գործընթացները
Հարավային Կովկասի քաղաքներում (1886-1916 թթ.).....98

Բ Ա Ն Ա Գ Ի Տ ՈՒԹ Յ ՈՒՆ

Սահակյան Կարինե Ա., Հովհաննիսյան Ռոզա Պ.

Հիշողությունը և տրավման տապանագրային ու սգերգային
ժառանգության համատեքստում.....112

Խենյան Մարինե Հ.

ATU 707 տիպի դրսևորումները Կարս-Շիրակ տարածաշրջանի
հրաշապատում հեքիաթներում124

Սահակյան Լիլիթ Ա.

Երգիծանքի դերը և դրսևորումները հայ ժողովրդական
կենդանապատում հեքիաթներում.....133

Մատիկյան Հասմիկ Հ., Հարությունյան Հասմիկ Հ.

Շիրակյան խաղիկների որոշ առանձնահատկություններ.....143

Անանյան Հայարիկ Գ.

Կլոր պար-յալի-գյովնդ-հալայ. հայկական, թուրքական և քրդական
պարային ավանդույթների համեմատական-տեսական դիտարկում
ազգագրական նյութերի հիման վրա (մաս I).....153

Խեմյան Էսթեր Հ.

Կարս-շիրակյան տարածաշրջանի մականունները և դրանց բնութագրիչները167

Ա Ր Վ Ե Ս Տ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պետրոսյան Լուսինե Պ.

Որմանակարչությունը Հայաստանի հասարակական և այլ շինություններում
XX դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը.....177

Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գրիգորյան Աշոտ Հ.

Պաշտամունքային կառույցների նախատիպերի մի շարք հարցեր
Գառնիի և Մուսասիրի տաճարների օրինակով.....189

Նահատակյան Դավիթ Ս.

Նոր դիտարկումներ Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ
վեցախորան եկեղեցու ճարտարապետության շուրջ.....205

Մկրտչյան Լևոն Ա.

Հայաստանի քառանկյուն հոծ աշտարակները . մոնումենտալ
ճարտարապետության և աշխարհայացքի փոխկապակցություն.....214

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հովհաննիսյան Հայկանուշ Ա.

Մովսես Խորենացու տողերի նոր մեկնաբանություն.....226

Ջարգարյան Արա Ս.

Աստվածաշնչյան միտերիայի արդի գեղարվեստականացումը
Նորայր Ադալյանի «Մրջնանոց» վեպում.....238

Խաչիկյան Գագիկ Վ., Մելիքսեթյան, Արեգնազ Վ.

Մի քանի արքեոտիպային պատկերացումներ Մուշեղ Գալշոյանի
«Մամփրե արքան» պատմվածքում.....247

Ավետիսյան Գայանե Հ.

Ճամբարային կյանքին բնորոշ իրողությունների արտացոլումը Գուրգեն Մահարու
«Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքում.....259

Կարախանյան Նարինե Հ.

Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» բանաստեղծական ժողովածուն.....268

Գ Ր Ա Ն Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արծրուն Հովհաննիսյան

Բարդակազմ/բազմաշերտ պատերազմ. VI սերնդի պատերազմի համառոտագիր277

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Լ Ր Ա Տ Ո Ւ281

Contents

HISTORY

Petrosyan Sargis G.

To “The Tree Of Life” of the Tayk, to the Goddess Tina and to the Armenian Root Khav.....5

Tsakanyan Ruslan A.

The Agricultural Settlement System in the Middle Assyrian Period.....17

Akopov Arkadi A., Hayrapetyan Armen S.

Distortion of the Demographic Landscape in Tayk in the 16th–17th Centuries
(A Case Study of the District of Tortum).....30

Авагян Инга Эд.

Архивные документы о развитии уличного освящения города Александрополя в 1894 -1895 гг.....45

Ghambaryan Armenuhi V.

Diplomatic Representation of the First Republic of Armenia in the Usa in Late 1919 - Early 1920.....54

Hayrapetyan Armen S., Adamyan Ninet S.

Excerpts From the History of Cooperation Between British and
Armenian Charitable Organizations (1915–1917).....66

Grigoryan Arkadi S.

From Gulf 41 Day War to Artsakhian 44 Day War: Lost Military-Scientific Capabilities.....80

Boyajyan Artashes G.

Ethno-Demographic Processes of the Urban Population of the South Caucasus (1886–1916).....98

FOLKLORE STUDIES

Sahakyan Karine A., Hovhannisyan Roza P.

Memory and Trauma in the Context of the Graphic and Funerary Heritage.....112

Khemchyan Marine H.

Manifestations of Atu 707 Type in the Tales of Magic of Kars-Shirak Region.....124

Sahakyan Lilit A.

Երգիծանքի դերը և դրսևորումները հայ ժողովրդական
կենդանապատում հեքիաթներում.....133

Matikyan Hasmik H., Harutyunyan Hasmik H.

Some Characteristics of Shirakian Songs (Khaghiks).....142

Ananyan Hayarpi G.

Round Dance–Yalli–Gyovand–Halay: Comparative-Theoretical Observation of Armenian, Turkish,
and Kurdish Dance Traditions Based On Ethnographic Materials (Part I).....153

Khemchyan Ester H.

Nicknames of the Kars-Shirak Region and Their Characteristics167

ART STUDIES

Petrosyan Lusine P.

Mural Painting in Public Buildings and Other Structures in Armenia
From the Second Half of the 20th Century to the Present Day.....177

ARCHITECTURE

Grigoryan Ashot H.

A Number of Questions of Prototypes of Religious
Buildings, on the Example of the Temples of Garni and Musasir.....189

Nahatanyan Davit S.

New Observations About the Architecture of the
Central-Dome Six-Apse Church of the Citadel of Ani.....205

Mkrtchyan Levon A.

Quadrangular Solid Towers of Armenia:
Interrelation of Monumental Architecture and Worldview.....214

PHILOLOGY

Hovhannisyan Haykanush A.

A New Interpretation of Movses Khorenatsis Lines.....226

Zargaryan Ara S.

The Modern Artistic Interpretation of the Biblical
Mystery in Norayr Adalyan's Novel the Anthill238

Khachikyan Gagik V., Meliksetyan Aregnaz V.

Some Archetypal Representations in Mushegh Galshoyan's Short Story "King Mampre".....247

Avetisyan Gayane H.

Reflection of the Characteristics Typical of Camp Life
in Gurgen Mahari's Story "Arakel From Mush and Others".....259

Karakhanyan Narine H.

Collection of Poems by David Mshetsi "Ayla-Grutyun".....268

BOOK REVIEW

Artsrun Hovhannisyan

Complex / Multi-Layer War: A Brief Overview of Sixth-Generation Warfare277

SCIENTIFIC NEWSLETTER281

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 2 (28) 2025

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ. 2 (28) 2025

Shirak Centre for Armenological Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

SCIENTIFIC WORKS. 2 (28) 2025

Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ **Լ. Կոստանյանի**
Խմբագրումը և սրբագրումը՝ **Ս. Հայրապետյանի, Հ. Մատիկյանի**

Ստորագրված է տպագրության՝ 10. 12. 2025թ.

Ծավալը՝ 300 էջ, թուղթը՝ A4, տպաքանակը՝ 100, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<http://shirakcenter.sci.am/>. E-mail: scient.works@shirakcenter.sci.am

